ՍԱԿ ՁԵՌՆԱՐԿ ԹՐԱՍԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԻՆ

ՈՒՂՂԱԿԻ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

IOM International Organization for Migration

Cooperazione Italiana allo Sviluppo
Ministero degli Affari Esteri

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը հետևում է այն սկզբունքին, որ մարդասիրական նորմերին համապատասխանող և կանոնավոր միգրացիան օգուտ է բերում միգրանտներին և հասարակությանը:

Որպես միջկառավարական կազմակերպություն՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը հանդես է գալիս իր գործընկերների հետ միջազգային ասպարեզում, որպեսզի աջակցի միգրացիայի աշխատանքային մարտահրավերների հաղթահարմանը, նպաստի միգրացիային վերաբերող խնդիրների ընկալմանը, խրախուսի սոցիալական և տնտեսական զարգացումը միգրացիայի միջոցով և պահպանի միգրանտների արժանապատվությունն ու բարօրությունը:
Սույն ձեռնարկի գլուխներում արտահայտված են հեղինակների կարծիքները, որոնք անպայման չէ, որ արտացոլեն Միգրացիայի միջազգային կազմակերպության տեսակետը:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն
Մորիյոնզ փ. 17
1211 Ժնև 19
Շվեյցարիա
Հեռ.՝ + 41 22 717 91 11
Ֆաքս.՝ + 41 22 798 61 50
Էլ-փոստ՝ hq@iom.int
Վեբ կայք՝ http://www.iom.int

ISBN 978 92 9068 371 1

© 2007 International Organization for Migration (IOM)

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակի և հրատարակչի նախնական գրավոր թույլտվության:

Ձեռնարկի հայերեն տարբերակը հրատարակվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ ՄՄԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում կրթության միջոցով թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդում» ծրագրի շրջանակներում:
Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության պաշտոնական տեսակետների հետ:

ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՁԵՌՆԱՐԿ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

IOM International Organization for Migration

Cooperazione Italiana allo Sviluppo
Ministero degli Affari Esteri

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Նախաբան	v
Գլուխ 1	**Անվտանգություն և անձնական ապահովություն**	1
Գլուխ 2	**Թրաֆիքինգից տուժած անձանց նախնական զննում**	17
Գլուխ 3	**Ուղղորդում և աջակցություն վերաինտեգրման հարցում**	67
Գլուխ 4	**Ուղեցույց ապաստարանների վերաբերյալ**	135
Գլուխ 5	**Առողջություն և թրաֆիքինգ**	227
Գլուխ 6	**Համագործակցություն իրավապահ մարմինների հետ**	345
	Հավելվածներ	391

Նախաբան

Նպատակներ

Միգրացիայի միջազգային կազմակերպությունն ունի 13 տարվա փորձ թրաֆիքինգի հակազդման ոլորտում և աջակցություն է մատուցել թրաֆիքինգից տուժած ավելի քան 14 000 անձանց աշխարհի բոլոր մասերում: Հաշվի առնելով կազմակերպությունների և հատկապես հասարակական կազմակերպությունների աճող թիվը, որոնք մատուցում են կամ մտադիր են մատուցել աջակցություն թրաֆիքինգից տուժած անձանց՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը ցանկանում է կիսվել իր փորձով և քաղված դասերով: Սույն ձեռնարկն ամփոփում և կանոնավոր կերպով ներկայացնում է այս փորձը: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը ճանաչում է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տուժած անձ եզակի է և պահանջում է իր նկատմամբ տարբեր մոտեցում աջակցության հարցում: Բացի այդ, թրաֆիքինգը տարբեր կերպ է դրսևորվում աշխարհում և միշտ զարգանում է՝ պահանջելով նոր մոտեցումներ: Ուստի, սույն ձեռնարկը նախատեսված չէ որպես թրաֆիքինգից տուժած անձանց մատուցվող աջակցության մեթոդաբանության միակ աղբյուր, այլ կոչված է ուղղորդում և առաջարկություններ ներկայացնել՝ հիմք ընդունելով Միգրացիայի միջազգային կազմակերպության բազում տարիների փորձը: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը հույս է հայտնում, որ այն օգտակար կլինի այն բոլոր կազմակերպությունների համար, որոնք նման աջակցություն են մատուցում թրաֆիքինգից տուժած անձանց և, հատկապես այն կազմակերպությունների համար, որոնք նոր են սկսում մշակել տուժածների աջակցության ծրագրեր և կարող են օգուտ քաղել Միգրացիայի միջազգային կազմակերպության փորձից:

Սույն ձեռնարկն առաջարկում է ուղղորդում ու խորհրդատվություն, որոնք անհրաժեշտ են թրաֆիքինգից տուժած անձանց արդյունավետ կերպով աջակցության ամբողջական փաթեթ մատուցելու համար՝ առաջին շփման և նախնական զննման պահից մինչև համապատասխան անձանց արդյունավետ վերաինտեգրում հասարակությունում: Չնայած նրան, որ այս ձեռնարկն անդրադառնում է անչափահասներին մատուցվող աջակցության հարցերին, այստեղ տվյալ խնդիրը չի

լուսաբանվում անհրաժեշտ մասնագիտական խորությամբ: Այս առնչությամբ մասնագետները պետք է անդրադառնան ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի պատրաստած ուղեցույցին թրաֆիքինգից տուժած երեխաների պաշտպանության վերաբերյալ:

Ձեռնարկի կառուցվածքը

Սույն ձեռնարկը նախատեսված է ամբողջական ընթերցանության համար, սակայն կարող է օգտագործվել առանձին գլուխներում բերված կոնկրետ թեմաների մեջբերման համար: Այս ձեռնարկի բոլոր գլուխները և հավելվածները սերտորեն փոխկապակցված են: Նման բարդ խնդիրներին առավել արհեստավարժ կերպով անդրադառնալու համար հարկավոր է որդեգրել ամբողջական մոտեցում: Այս ձեռնարկից առավելագույն օգուտ քաղելու համար ընթերցողին խորհուրդ է տրվում կարդալ ձեռնարկի ողջ բովանդակությունը և ձևավորել հիմնական գիտելիքներ դրա շուրջ:

Ձեռնարկը բաժանված է յոթ հատվածների, որոնք նկարագրված են ստորև: Գլուխները ներկայացված են հերթականությամբ: Ընթերցողին խորհուրդ է տրվում առաջ ընթանալ կանոնավոր կերպով և լավ ծանոթանալ յուրաքանչյուր գլխի բովանդակությանը: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ որևէ կոնկրետ թեմայով ուղղորդում է անհրաժեշտ, հնարավոր է յուրաքանչյուր գլխին անդրադառնալ առանձին:

Գլուխ 1	**Անվտանգություն և անձնական ապահովություն**
Գլուխ 2	**Թրաֆիքինգից տուժած անձանց նախնական զննում**
Գլուխ 3	**Ուղղորդում և աջակցություն վերաինտեգրման հարցում**
Գլուխ 4	**Ուղեցույց ապաստարանների վերաբերյալ**
Գլուխ 5	**Առողջություն և թրաֆիքինգ**
Գլուխ 6	**Համագործակցություն իրավապահ մարմինների հետ**
Հավելված I	**Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ**
Հավելված II	**Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ**
Հավելված III	**Բառացանկ**

Տարբեր գլուխներում անդրադարձ է կատարվում հետևյալ թեմաներին և առանցքային հարցերին.

Գլուխ 1 **Անվտանգություն և անձնական ապահովություն**

Այս գլխում ամրագրվում են անվտանգության և անձնական ապահովության հիմնական սկզբունքները, ինչպես նաև արծարծվում են ռիսկերի գնահատման, բարձր ռիսկայնության դեպքերի, ռիսկերի կառավարման, գաղտնի տեղեկությունների ապահովության, անվտանգության լավագույն ընթացակարգերի, ինչպես նաև աշխատակիցների և շահառուների անձնական ապահովության հարցերը:

Այս գլխի կենտրոնական թեման թրաֆիքինգից տուժած անձանց աջակցություն և պաշտպանություն մատուցելիս աշխատակազմի անդամներին սպառնացող ռիսկերի մեծացումն է, ինչպես նաև նման ռիսկերի նվազեցման և կառավարման տարրական անվտանգության չափանիշների որդեգրումը և համապատասխան ընթացակարգերը:

Գլուխ 2 **Թրաֆիքինգից տուժած անձանց նախնական զննում**

Այս գլխում ներկայացվում է մի բանաձև, որը կազմակերպություններին հնարավորություն կտա ավելի լավ տարբերակել մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծման հանցագործությունները՝ ներկայացնելով համապատասխան մեթոդաբանություն աջակցության դիմած անձանց զննելու և որպես թրաֆիքինգի զոհ նույնականացնելու համար: Այստեղ ներառված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ համապատասխան միջազգային իրավական չափանիշներ, նախնական զննման բուն գործընթաց, գնահատման ցուցանիշներ և գնահատման հստակ հարցեր, տուժածների պատասխաններ և բուժում, լրացուցիչ ապացույցների նյութեր և վերջնական որոշումների կայացման ընթացակարգեր:

Այս գլխի հիմնական նպատակն է ուղեցույց դառնալ կազմակերպությունների համար, որպեսզի նրանք կարողանան ճշգրտորեն նույնականացնել թրաֆիքինգի զոհերին և հնարավորություն ունենան արդյունավետ կերպով անդրադառնալ նրանց կարիքներին՝ մատուցելով նրանց աջակցություն և պաշտպանություն:

Գլուխ 3 **Ուղղորդում և աջակցություն վերաինտեգրման հարցում**

Այս գլխում քննարկվում է զոհերի ուղղորդման և մի շարք աջակցային միջոցառումների հետագա մատուցման ողջ ոլորտը, ընդհուպ մինչև և, ներառյալ՝ արդյունավետ վերաինտեգրում: Այստեղ ընդգրկված են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ թրաֆիքինգից տուժած անձանց աջակցված կամավոր վերադարձի իրականացում, վերաինտեգրման աջակցության հարցում գնահատում և պլանավորում, ինչպես նաև վերաինտեգրման հարցում աջակցության մատուցում:

Այս գլխի կենտրոնական թեման է արդյունավետ և պատշաճ աջակցության ու պաշտպանության մատուցումը թրաֆիքինգից տուժած անձանց՝ ելնելով առանձին դեպքերի առանձնահատկություններից և նրանց կարիքներից և մարդու հիմնարար իրավունքներից:

Գլուխ 4 **Ուղեցույց ապաստարանների վերաբերյալ**

Այս գլխում անդրադարձ է կատարվում թրաֆիքինգից տուժած անձանց համար ապաստարանների ստեղծման, ապաստարանների կառավարման և դրանց աշխատակազմի ձևավորման, ապաստարանում բնակվող անձանց աջակցության ընթացակարգերին, ապաստարանում բնակվող անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի և ապաստարանում մատուցվող ծառայությունների և աջակցության հարցերին:

Այս գլխի կենտրոնական թեմաներն են ապահով ապաստարանների ստեղծումը և պատշաճ ու արդյունավետ աջակցության մատուցումը, ինչպես նաև ապաստարաններում տեղակայված թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանությունը:

Գլուխ 5 **Մարդկանց թրաֆիքինգ և առողջություն**

Առողջությանը նվիրված գլխում ներառված են համալիր հրահանգներ և խորհուրդներ, որոնք առնչվում են առողջապահության և մարդու իրավունքների հարցերին, օրինակ՝ գաղափարային դաշտ, էթիկայի և անվտանգության սկզբունքներ, բուժօգնության հարցեր, հատուկ առողջապահական նկատառումներ, բժշկաիրավական հայեցակետեր, կլինիկական ընթացակարգեր և տնօրինում, առողջապահական հարցերի պլանավորում և աշխատակազմի անդամների առողջական հարցեր:

Այս գլխի կենտրոնական թեմաներն են խնամքի մատուցման նվազագույն չափանիշների մշակումը և մասնագիտացված բուժծառայությունների մատուցումը՝ ըստ թրաֆիքինգից տուժած անձանց կարիքներ: Այս գլխում շեշտը դրվում է ծառայությունների մատուցման վրա ոչ միայն մարդու իրավունքների առումով, այլև ելնելով ծագման, տարանցիկ և նպատակակետ երկրների հանրային առողջապահության շահերից:

Գլուխ 6 **Համագործակցություն իրավապահ մարմինների հետ**

Այս վերջին գլխում մանրամասն հրահանգներ և խորհուրդներ են ներկայացվում մի այնպիսի նրբանկատ հարցի շուրջ, ինչպիսինն է համագործակցությունն իրավապահ մարմինների հետ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում: Այս գլխում ներկայացվում է նման համագործակցության դաշտը, ռիսկային գործոնները և ընդհանուր տրամաբանությունը, ինչպես նաև ընդգրկվում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ թրաֆիքինգից տուժած անձանց իրավական պաշտպանության հնարավորություններն ու իրավունքները, իրավապահ մարմինների հետ փոխըմբռնման հուշագրերի ձևավորումը, ոստիկանության բաժանմունքների հետ կապի հաստատումը, տեխնիկական համագործակցությունը և կարողությունների ձևավորումը, տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաև վկաների փոխանցումը քրեական հետաքննության և դատավարության շրջանակներում:

Այս գլխում ընդգրկված հիմնական թեմաներն են՝ (1) ինչպես ապահովել թրաֆիքինգից տուժած անձանց իրազեկվածությունը քրեական օրենսդրության շրջանակներում նրանց ընձեռված հնարավորությունների առումով և նման հնարավորություններից օգտվելու կարողությունը, ինչպես նաև (2) էթիկայի կանոններին համապատասխանող և արհեստավարժ փոխադարձ այնիպիսի համագործակցության ձևավորումը ծառայություններ մատուցող կազմակերպությունների և իրավապահ մարմինների միջև, որը կոչված կլինի ապահովել տուժածների իրավունքների ավելի լավ պաշտպանությունը քրեական արդարադատության համակարգի ներքո՝ հիմք ստեղծելով միջնաժամկետ ռազմավարության համար, որը կոչված կլինի մեծացնել մարդավաճառների հայտնաբերման և հետապնդման հնարավորությունները և վերջ կդնի նրանց գործելակերպի անպատժելիությանը:

Հավելված I **Թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ**

1-ին հավելվածում ներկայացված են տարրական հրահանգներ առ այն, թե ինչպիսի վարքագիծ պետք է դրսևորի աշխատակազմի յուրաքանչյուր անդամ՝ հարգելով թրաֆիքինգից տուժած անձանց համապատասխան իրավունքները և ստեղծված իրավիճակը:

Հավելված II **Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ**

2-րդ Հավելվածում ներկայացվում է այն հարցերի ստուգման ցանկը, որոնք պետք է հաշվի առնվեն, և որոնց պետք է անդրադարձ կատարվի ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների և որպես թրաֆիքինգի զոհ նրանց աջակցության դիմած անձանց միջև յուրաքանչյուր հարցազրույցի սկզբում:

Հավելված III **Բառացանկ**

Ներկայացված բառացանկը նպատակ ունի պարզաբանել այն հիմնական եզրույթները, որոնք օգտագործվում են սույն ձեռնարկում, ինչպես նաև թրաֆիքինգից տուժած անձանց նույնականացման և նրանց աջակցության մատուցման ողջ գործընթացի շրջանակներում:

Հիմնական սկզբունքներ

Սույն ձեռնարկում բերված հրահանգներն ու խորհուրդներն իրենց հերթին հիմնված են թրաֆիքինգի հակազդման գործողությունները կառավարող հետևյալ սկզբունքների վրա.

- Մարդկանց թրաֆիքինգը կրճատելու և թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքները պաշտպանելու, ինչպես նաև նրանց մարդկային արժանապատվությունը և բարօրությունը հարգելու և ապահովելու պատրաստակամություն:
- Փաստացի և հնարավոր թրաֆիքինգից տուժած զոհերի պաշտպանությունը, անվտանգությունը և նրանց մարդու իրավունքների պահպանումը հանդիսանում են այն ղեկավար սկզբունքները, որոնց հարկավոր է մշտապես հետևել:
- Թրաֆիքինգի զոհերին բոլոր ծառայությունները մատուցվում են իրազեկված համաձայնության հիման վրա, իսկ աջակցված

կամավոր վերադարձի ծրագրի շրջանակներում նման օգնությունը մատուցվում է միայն այն տուժածներին, ովքեր սեփական կամքով որոշել են հայրենիք վերադառնալ:

- Այս ձեռնարկում արտացոլվում են ՄԱԿ-ի մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրության մեջ զետեղված չափանիշները:
- Այս ձեռնարկում արտացոլված են նաև այն չափանիշները, որոնք ամրագրված են Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից պատրաստած «Մարդկանց թրաֆիքինգի և մարդու իրավունքների սկզբունքներ և հրահանգներ» ձեռնարկում:
- Թրաֆիքինգից տուժած երեխաներին աջակցություն մատուցելիս կազմակերպությունները պետք է միշտ գործեն երեխայի լավագույն շահերից ելնելով:

Հիմնական ուղեցույց

- **Չպատճառել վնաս:** Վնաս չպատճառելը բժշկական էթիկայի կանոնների առաջնային սկզբունք է: Թրաֆիքինգի հետ կապված ծայրահեղ ռիսկերի, զոհերի խոցելի վիճակի, ավելի մեծ տրավմայի ենթարկվելու հնարավորության պայմաններում այս տարրական սկզբունքի նշանակությունը չի կարելի թերագնահատել: Թրաֆիքինգից տուժած անձանց աջակցություն մատուցող յուրաքանչյուր կազմակերպություն էթիկական պատասխանատվություն է կրում գնահատելու նրանց առաջարկվող ցանկացած գործողության հնարավոր վնասը, իսկ եթե կան որևէ հիմքեր կարծելու, որ հարցազրույցի կամ զննման անցկացումը կամ համապատասխան ընթացակարգը տվյալ անհատին վնաս կպատճառի, ապա նման գործողություն տվյալ պահին չպետք է ձեռնարկվի:
- **Անհատականացված բուժում և խնամք:** Թեպետև թրաֆիքինգից տուժած անձիք ունեն որոշ ընդհանրություններ, իսկ նրանց հանգամանքները նմանվում են միմյանց, կազմակերպությունները պետք է ճանաչեն և հարգեն զոհերի անհատականությունը և մատուցեն նրանց հնարավորինս անձնականացված խնամք և աջակցություն: Աջակցության ողջ ընթացքում աշխատակազմի անդամները պետք է ձգտեն ապահովել առավել պատշաճ

պաշտպանություն, աջակցություն և օգնություն՝ տվյալ տուժած անձի կարիքներին և հանգամանքներին համապատասխան:

- **Շարունակական և համալիր խնամք:** Սույն ձեռնարկի 3-րդ և 4-րդ գլուխներում ներկայացված ծառայությունների շարքը նախատեսված է ապահովելու թրաֆիքինգից տուժած անձանց վերականգնմանը նպաստելու ամբողջական մոտեցում՝ դրանով իսկ համալիր շարունակական հիմք ստեղծելով խնամքի համար՝ զոհերի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վիճակին համապատասխան:
- **Հարցազրույցներ զոհերի հետ և իրազեկված համաձայնություն:** Աջակցության ողջ ընթացքում՝ առաջին շփումից և նախնական զննումից մինչև վերջնական վերաինտեգրում հասարակությունում, գոյություն ունեն մի շարք առիթներ, երբ թրաֆիքինգից տուժած անձանց հետ անցկացվում են հարցազրույցներ տարբեր թեմաներով, ինչպիսիք են՝ նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույց, դեպքի պատմության ի հայտ բերման նպատակով անցկացվող հարցազրույց, մի շարք առողջապահական նկատառումներով անցկացվող հարցազրույցներ և այլ ընթացակարգեր: Ավելին, այս հանդիպումներից շատերի ընթացքում տուժած անձը պետք է որոշումներ կայացնի և իր գրավոր համաձայնությունը տա մի շարք գործողություններին կամ ընթացակարգերին: Հարցազրույցի ընթացքում որդեգրվող մոտեցման վերաբերյալ և տուժած անձի իրազեկված համաձայնությունը ստանալու վերաբերյալ ուղեցույցը ներկայացված է 1-ին և 2-րդ հավելվածներում՝ աշխատակիցներին հնարավորություն տալով անցկացնել հարցազրույցներն արդարացի և արհեստավարժ եղանակով, ինչպես նաև հարգելով համապատասխան տուժածների մարդու իրավունքները: Աշխատակազմի անդամները պետք է նշված հավելվածները ուշադիր ուսումնասիրեն նախքան որևէ հարցազրույց անցկացնելը:
- **Ինքնորոշում և մասնակցություն:** Ճանաչեք տուժածների սեփական ընտրությամբ գործելու և որոշումներ կայացնելու իրավունքն ու անհրաժեշտությունը՝ խրախուսելով նրանց հնարավորինս մեծ չափով մասնակցել որոշումների կայացման գործընթացին: Համագործակցելով զոհերի հետ՝ աշխատակիցները պետք է ձգտեն վերականգնել տուժածների ինքնուրույնությունը և նրանց մոտ ձևավորել իրենց անդրադարձող հարցերում որոշումներ կայացնելու

կարողություն: Նման համագործակցությունը թույլ կտա տուժածներին վերագտնել հսկողությունը սեփական կյանքին անդրադարձող որոշումների նկատմամբ և մեծացնել սեփական ինքնավստահությունը հետագա քայլերի որոշման առումով:

- **Անխտրականություն:** Աշխատակիցները պետք է հնարավորինս լավ աջակցություն մատուցեն թրաֆիքինգից տուժած անձանց առանց խտրականության, օրինակ՝ գենդերային պատկանելիության, տարիքի, հաշմանդամության, մաշկի գույնի, սոցիալական խավի, ռասայական պատկանելիության, կրոնի, լեզվի, քաղաքական հայացքների կամ կարգավիճակի հատկանիշով:
- **Գաղտնիություն և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք:** Թրաֆիքինգի վերաբերյալ գաղտնի տվյալները չպետք է բացահայտվեն առանց զոհի նախնական իմացության և գրավոր իրազեկված համաձայնության: (Տես 5-րդ գլուխն այն տվյալների բացահայտման վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են իրավապահ մարմիններին դեռևս մարդավաճառների վերահսկողության տակ գտնվող այլ զոհերի կամ թրաֆիքինգի սպառնալիքի տակ գտնվող անձանց անվտանգությունն ապահովելու համար):

Եզրութաբանական ակնարկ

«Զոհ» եզրույթը մեծ բանավեճ է առաջացրել կանանց դեմ ուղղված բռնության համատեքստում, քանի որ շատերը բերում են այն փաստարկը, որ նման եզրույթը ենթադրում է անզորություն, այլ ոչ թե տուժածի դիմադրություն և, հետևաբար, նախընտրում են «տուժած» եզրույթը: Այդուհանդերձ, մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում «զոհ» եզրույթն օգտագործվում է անարդարության ենթարկված որևէ մեկին նկարագրելու համար, ընդ որում այդ անարդարության համար պատասխանատու է հանցագործը: «Զոհ» եզրույթը նշանակում է, որ մարդու իրավունքների խախտումներին ենթարկված անձը կամ անձինք ունեն պաշտպանության, աջակցության և փոխհատուցման իրավունք (Billings et al., 2005): Այս զեկույցի շրջանակներում, որը կենտրոնացած է պաշտպանության և աջակցության հարցերի շուրջ, մենք կարող ենք օգտագործել «զոհ» եզրույթը վերոնշյալ պարզաբանմամբ՝ ընդգծելու տուժածի պաշտպանություն ստանալու իրավունքը, ինչպես նաև կառավարության և քաղաքացիական հասարակության կողմից նման պաշտպանություն ապահովելու պատասխանատվությունը:

Օգտագործվող եզրույթների առումով մեծ բանավեճ է ծավալվել «մարմնավաճառություն» եզրույթի փոխարեն «առևտրային հիմունքներով մատուցվող սեռական բնույթի ծառայություններ» արտահայտության շուրջ, ընդորում նման եզրույթները հաճախ արտացոլում են օգտագործողի գաղափարախոսական դիրքորոշումը: Այս զեկույցի շրջանակներում մենք օգտագործելու ենք «մարմնավաճառություն» և «մարմնավաճառներ» եզրույթները: Այդուհանդերձ, նման ձևակերպումների ընտրությունը չի ենթադրում որևէ գաղափարախոսական դատողություն ՄՄԿ-ի կողմից, ուստի «մարմնավաճառ» կամ «մարմնավաճառություն» բառերի գործածումը չպետք է դիտարկվի որպես որևէ բացասական դատողություն նման գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ:

Շնորհակալական խոսք

ՄՄԿ-ն ցանկանում է իր երախտագիտությունը հայտնել բազմաթիվ այն գործընկերներին, ովքեր ներդրում են ունեցել սույն ձեռնարկի ստեղծման գործում: Առանձին հարկ է նշել սույն ձեռնարկի ներքին օգտագործման համար նախատեսված բնօրինակի հեղինակներին. Փոլ Հոլմս՝ 1-ին, 2-րդ և 6-րդ գլուխներ, Ֆրեդ Լարսոն՝ 3-րդ գլուխ, Պամելա Սամներ-Քոֆրի՝ 4-րդ գլուխ և Քեթի Ցիմերման՝ 5-րդ գլուխ:

Ռութ Ռոզենբերգը ջանք չի խնայել այս վերանայված խմբագրության վրա աշխատելիս՝ թարմացնելով դրանում ընդգրկված նյութերը և հարմարեցնելով այն ընթերցողների ավելի լայն շրջանակի համար: ՄՄԿ-ն իր հատուկ երախտագիտությունն է հայտնում Ռութին այս ծավալուն և սպասված ձեռնարկը կյանքի կոչելու համար:

Անա Բարբոսան, Սեգունդո Դել Կրուսը կրտս. Աքրամ Էլթոնը, Մարկո Գրամենյան, Դարիո Մուհամուդոն, Հելեն Նիլսոնը, Իլսե Պինտոն, Քարոլին Սան Միգելը, Ռեբեկա Սուրտիսը, Թեոդորա Սաթերը, Քաթարինա Թոմոլովան, Քրիենք Թրիումհավոնգը և Շայլա Վոհրան իրենց կարևոր ներդրումն են ունեցել սույն ձեռնարկի ստեղծման գործում: Սարա Ստեֆեն Ջեյմսը, Ջյոթի Կանիքսը, Կարոլինա Լինդհոլմ-Բիլինգը, Դենիզե Մարշալը և Բանդանա Փաթանայքը ժամանակ են գտել սույն ձեռնարկը ընթերցելու համար՝ ներկայացնելով իրենց արժեքավոր մեկնաբանություններն ու առաջարկությունները:

Ռիչարդ Դանցիգեր
ՄՄԿ-ի թրաֆիքինգի հակազդման ծառայության տնօրեն

1

Անվտանգություն և անձնական ապահովություն

Գլխի բովանդակություն

Հիմնական սկզբունքներ
Անվտանգության հարցեր և ռիսկերի գնահատում
1.1 Ռիսկերի գնահատում
1.2 Գաղտնի անձնական և թրաֆիքինգին վերաբերող տեղեկությունների մշակում և ապահովություն
1.2.1 Թրաֆիքինգի զոհերի գաղտնի անձնական տվյալներ
1.2.2 Անձնական և թրաֆիքինգին վերաբերող տվյալների մշակում և ոչնչացում
1.3 Անվտանգության լավագույն ընթացակարգեր՝ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամներ
1.3.1 Լավագույն ընթացակարգեր՝ առաջնային շփում զոհի հետ
1.3.2 Լավագույն ընթացակարգեր՝ հարցազրույց զոհի հետ
1.3.3 Անձնական անվտանգություն

Ձեռնարկի սույն գլխի նպատակն է զոհերի աջակցության գործընթացի յուրաքանչյուր փուլում ծագող անվտանգության հարցերում ուղեցույց դառնալ ծառայություն մատուցող կազմակերպությունների համար: Այս հարցերը ներկայացված են այստեղ մեկ համալիր բաժնով: Ընթերցողը կտեսնի, որ այստեղ հիշատակվող հարցերից շատերը կրկնվում են ձեռնարկի համապատասխան բաժիններում: Դա արված է մտադրաբար, քանի որ երբեք ավելորդ չէ կրկին ընդգծել անվտանգության ճիշտ ընթացակարգերը:

Հիմնական սկզբունքներ

- Մարդկանց թրաֆիքինգը հաճախ վերահսկվում է միջազգային կազմակերպված հանցավոր ցանցերի կողմից, ուստի և՝ այն ռիսկերի աստիճանը, որոնց ենթարկվում են թրաֆիքինգի զոհերը և նրանց հետ առնչվող և աջակցություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցները, պետք է դառնան լուրջ ուսումնասիրության առարկա:
- Առանց վտանգի աստիճանը չափազանցնելու՝ նման իրավիճակները տնօրինելու սկզբունք է յուրաքանչյուր դեպքում մանրակրկտորեն գնահատել անվտանգության ռիսկերը, ինչպես նաև անխտիր հետևել անվտանգության պահպանման լավագույն տարրական ընթացակարգերին:

- Լիարժեք անվտանգությունը չի կարող երաշխավորվել որևէ իրավիճակում, և թեպետ շատ դեպքերում ծառայություն մատուցող կազմակերպությանը որևէ վտանգ չի սպառնում, սակայն անվտանգության ապահովման լավագույն ընթացակարգերի հիմնարար սկզբունք է յուրաքանչյուր դեպքն ի սկզբանե դիտարկել որպես անվտանգության հնարավոր վտանգ՝ գնահատելով և կառավարելով ռիսկերն ըստ յուրաքանչյուր դեպքի հայտնի հանգամանքների:

Անվտանգության հարցեր և ռիսկերի գնահատում

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց աջակցություն մատուցելն իր էությամբ ռիսկային գործունեություն է, և որևէ անվտանգության համակարգ, որքան էլ կատարելագործված և սպառազինված լինի, չի կարող լիովին բացառել ռիսկային գործոնը: Գոյություն ունեն մարդավաճառների ճիրաններից դուրս պրծած կամ նրանց դեմ ցուցմունք տված զոհերի դեմ պատժամիջոցներ կիրառելու մասին վկայող բազում փաստեր: Ուստի, չի կարելի թերագնահատել թրաֆիքինգի զոհերին իրենց շահագործած անձանց կողմից սպառնացող վտանգը:

Թրաֆիքինգից տուժած անձանց միշտ վտանգ է սպառնում, ինչպես և վտանգ է սպառնում նրանց աջակցություն մատուցողներին, թեպետև այս վտանգի աստիճանն ավելի ցածր է: Ակնկալվում է, որ նման վտանգը կաճի, եթե ծառայություն մատուցող կազմակերպություններն օգնեն փրկվել թվով ավելի շատ զոհերի, ովքեր ցուցմունք կտան իրենց թրաֆիքինգի ենթարկած չարագործերի դեմ:

Զոհերին աջակցություն մատուցելու պարտավորությունը, որը դրված է ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցների վրա, կայանում է նրանում, որ ռիսկերը պետք է ըստ հարկի որոշվեն և գնահատվեն աջակցության գործընթացի յուրաքանչյուր փուլում, ընդ որում այդ ռիսկերի արդյունավետ կառավարման ուղղությամբ պետք է ձեռնարկվեն իրատեսական ու ողջամիտ անվտանգության ապահովման քայլեր: Այս գլխում ներկայացված ուղեցույցը նախատեսված է որպես այդ գործընթացի բացատրություն:

1.1 Ռիսկերի գնահատում

Սպառնալիքին արձագանքելու առաջին քայլն է ըստ հարկի սահմանել և գնահատել ռիսկի աստիճանը: Ռիսկերի արդյունավետ գնահատումը

ենթադրում է ընդհանրական ռիսկերի գնահատում տվյալ երկրում, ռիսկերի գնահատման շարունակական վերանայում, ինչպես նաև կոնկրետ իրադարձություններին ի պատասխան ռիսկերի գնահատում: Նման գործընթացը դյուրացնելու համար հարկավոր է յուրաքանչյուր ստորև ներկայացված դեպքում դիտարկել մի շարք ռիսկային ցուցիչներ: Այդուհանդերձ, հարկ է մտապահել, որ այստեղ բերված ցանկը սպառիչ չէ, և կախված յուրաքանչյուր երկրի և յուրաքանչյուր դեպքի հանգամանքներից՝ կարող են ի հայտ գալ այլ ռիսկեր և ռիսկային ցուցանիշներ, որոնք պետք է գնահատվեն տեղի աշխատակազմի կողմից՝ հիմք ընդունելով տեղի հանգամանքների նրանց իմացությունն ու փորձագիտությունը: Այն դեպքերում, երբ ծառայություն մատուցող կազմակերպությունների և տեղի համապատասխան իրավապահ մարմինների միջև հաստատվել է ամուր համագործակցություն, ռիսկերի գնահատման գործընթացը պետք է իրականացվի սերտ խորհրդակցության պայմաններում:

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Անհրաժեշտ կլինի պարբերաբար վերանայել այն ընդհանրական ռիսկերը, որոնք ներկայացնում է թրաֆիքինգով զբաղվող անձանց գործունեությունը: Այստեղ նկարագրված գործընթացը կոչված է չափագրել նման ռիսկային գործոնները հենց սկզբից: Ռիսկային գնահատման առաջնային փուլն է գնահատել տվյալ երկրում գերակայող հանգամանքները: Հարկավոր է հաշվի առնել հետևյալ ցուցիչները:

Ընդհանրական ռիսկերի գնահատման ցուցանիշներ

- Թրաֆիքինգի տարածման աստիճանն ու ազդեցությունը տվյալ երկրում:
- Արդյո՞ք տվյալ երկիրը ծագման, տարանցիկ, թե՞ նպատակակետ երկիր է, թե՞ իրենից ներկայացնում է վերոհիշյալի համադրությունը:
- Որքա՞ն է կազմում թրաֆիքինգից տուժած անձանց ակնկալվող թիվը, ովքե՞ր օգնության կդիմեն ծառայություն մատուցող կազմակերպություն:
- Ի՞նչ աստիճանով է վերահսկվում թրաֆիքինգը կազմակերպված հանցավոր խմբերի կողմից:
- Զոհերի և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցների դեմ ուղղված պատժամիջոցներ ծրագրելու և

իրագործելու հայտնի և գնահատվող կարողություն:
- Տեղի իրավապահ մարմինների կարողություններ:
- Կոռուպցիայի տարածման աստիճանը և դրա նպաստումը ռիսկային գործոններին:
- Մարդանց թրաֆիքինգի դեմ պայքարելու կառավարության պատրաստակամությունը և այդ ուղղությամբ ցուցաբերվող աջակցությունը:

Նշում

Այն առանձին կազմակերպությունները, որոնք չունեն կարողություններ կամ ռեսուրսներ ընդհանրական ռիսկերի ինքնուրույն գնահատման համար, կարող են ձեռք բերել համապատասխան տեղեկատվությունը ոստիկանությունից, տեղի կամ միջազգային հասարակական կազմակերպություններից, Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակներից, այլ միջկառավարական կազմակերպություններից, արտասահմանյան դեսպանություններից կամ այլ աղբյուրներից:

ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

Խիստ կարևոր է ընդհանրական ռիսկերի գնահատման գործընթացն իրականացնել շարունակաբար: Բավարար չէ իրականացնել գնահատումը մեկ անգամ, քանի որ նման միջոցառումը կհամարվի անվտանգության ապահովման արդյունավետ միջոց, միայն եթե այն պարբերաբար վերանայվի և թարմացվի: Նման վերանայումների միջև ընկած ժամանակահատվածը կախված է տվյալ իրավիճակում գերակայող հանգամանքներից:

- Ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման ծրագրի պատրաստումը յուրաքանչյուր ծառայություն մատուցող կազմակերպության պատասխանատվությունն է:
- Ռիսկերի գնահատումը պետք է վերանայվի առնվազն ամեն ամիս: Կախված դեպքի հանգամանքներից՝ ռիսկերի գնահատումը կարող է վերանայվել ամեն շաբաթ կամ ամեն օր՝ բարձր ռիսկայնության ժամանակահատվածներում:

ԿՈՆԿՐԵՏ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔ

Թեև ռիսկերի ընդհանրական վերանայումը կարևոր բաղադրիչ է ցանկացած ռիսկերի գնահատման գործընթացում՝ ռիսկերի կոնկրետ վերանայումը պահանջվում է յուրաքանչյուր այն դեպքում, երբ որևէ կոնկրետ իրադարձություններից առաջանում է լրացուցիչ կամ ավելի մեծ սպառնալիք: Յուրաքանչյուր դեպքում ի հայտ են գալիս տարբեր հատուկ մարտահրավերներ և ռիսկեր, ուստի և յուրաքանչյուր դեպք պետք է գնահատվի առկա տեղեկությունների և ցուցիչների հիման վրա:

Ստորև ներկայացված ցանկը միշարք այն հատուկ իրադարձությունների օրինակ է, որոնք պետք է կոնկրետ ռիսկերի գնահատման առարկա դառնան: Հարկ է նշել, որ այս ցանկը նմուշ է, և չպետք է որպես սպառիչ դիտարկվի: Այս օրինակներից յուրաքանչյուրից բացի հարկավոր է գնահատման մեջ ներառել հետևյալ ռիսկային գործոնները.

- Փախուստի դիմած և փրկված բոլոր զոհերին սպառնում է պատժամիջոցների վտանգը իրենց թրաֆիքինգի ենթարկած չարագործների կողմից, անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրանք համագործակցում են իրավապահ մարմինների հետ, թե ոչ:
- Այս ռիսկերը միանգամից աճում են այն դեպքերում, երբ զոհերը համագործակցում են իրավապահ մարմինների հետ, քանի որ այդ դեպքում նրանք մարդավաճառների ազատության համար էլ ավելի մեծ վտանգ են ներկայացնում:
- Յուրաքանչյուր այն դեպքում, երբ հաստատվում է, որ մարդավաճառներն արդեն տեղյակ են իրավապահ մարմինների հետ զոհի համագործակցության կամ նման մտադրության մասին, ռիսկերի աստիճանն աճում է, իսկ վտանգը դառնում է ավելի անմիջական:

Հատուկ ռիսկային իրադարձությունների օրինակներ

- Այն պահը, երբ զոհն առաջին անգամ ուղղորդվում է ծառայություն մատուցող կազմակերպություն աջակցություն ստանալու համար, հատկապես եթե կարելի է կանխատեսել, որ աջակցության փաթեթը ներառելու է տեղակայում ապաստարանում կամ համագործակցություն իրավապահ մարմինների հետ:
- Զոհերի ցանկացած աջակցված տեղաշարժում այն դեպքերում, երբ նրանք արդեն ցուցմունք են տվել իրավապահ մարմիններին,

կամ էլ երբ կա որևէ հիմք կարծելու, որ մարդավաճառները տեղյակ են այս հանգամանքի մասին:

- Ապաստարաններում խնամք ստացող զոհերի պարագայում՝ խոսքը կարող է գնալ ապաստարանից դուրս նախատեսված բոլոր տեղաշարժումների մասին՝ հիվանդանոցներ, բուժարաններ կամ սոցիալական ապահովության և աջակցություն ստանալու նպատակով այցելվող այլ վայրեր:
- Ծառայություն մատուցող կազմակերպությունում որևէ զոհի խնամքի պարագայում, եթե նա ներկայումս համագործակցում է իրավապահ մարմինների հետ, ցանկացած տեղաշարժում այդ համագործակցության շրջանակներում հանդիպումներին ներկա գտնվելու համար, օրինակ՝ այցելություն հանցագործության վայր և ցուցմունք հանցագործության վայրում, կասկածյալին մատնացույց անելու նպատակով անցկացվող միջոցառումներ կամ բժշկական զննումներ ոստիկանությունում:
- Դատարանի շենքում անցկացվող միջոցառումների ներկա գտնվելը, հատկապես մարդավաճառների դատավարությանը ցուցմունք տալու համար ներկայանալը, մասնավորապես եթե հանցագործները տեղյակ են այդ մասին, քանի որ նրանք իրենց մեղադրյալի կարգավիճակում իրավունք ունեն տեղեկանալու այդ մասին:
- Զոհի կամ աշխատակազմի անդամի ցանկացած տեղաշարժում, որը կապված է զոհին մի երկրից մյուսը տեղափոխելու հետ՝ նպատակ ունենալով հնարավորություն տալ տուժողին վկայությամբ հանդես գալ մարդավաճառների դեմ այդ երկրում: Նման պարագայում կրկին ռիսկի աստիճանը կարող է շատ բարձր լինել, քանի որ մարդավաճառներն ամենայն հավանականությամբ կկարողանան կանխատեսել տեղաշարժման ժամկետները և երթուղին՝ ինչպես ծագման, այնպես էլ նպատակակետ երկրում:
- Ցանկացած միջադեպ, որը կարող է մեկնաբանվել որպես զոհի կամ աշխատակազմի անդամի ահաբեկման փորձ, օրինակ՝ անանուն հեռախոսազանգեր սպառնալիքներով կամ շարունակական զանգեր, երբ զանգահարողը կախում է հեռախոսափողն առանց խոսելու, անհայտ անձանց կամ ավտոմեքենաների շարունակաբար և երկար ժամանակ ներկա գտնվելն ապաստարանների մոտակայքում, ինչպես նաև զոհից կամ աշխատակազմի անդամից որոշակի տարածության վրա:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Յուրաքանչյուր ռիսկերի գնահատում, լինի այն ընդհանրական բնույթի, վերանայման տեսքով կամ որևէ հատուկ իրադարձությանն ի պատասխան, պետք է ուղեկցվի ռիսկերի կառավարման ծրագրով, որը կոչված կլինի անդրադառնալ այն ռիսկային ոլորտներին, որոնք հայտնաբերվել են գնահատման գործընթացի շրջանակներում.

- Առաջնային ընդհանրական վերանայումը պետք է ուղեկցվի ռիսկերի կառավարման ծրագրով, որում կներկայացվեն անվտանգության նվազագույն չափանիշները և նշված ռիսկերը նվազեցնելու և արդյունավետ կերպով կառավարելու համապատասխան ընթացակարգերը:
- Առաջնային ընդհանրական վերանայումն իրականացվում է շարունակական ծրագրի շրջանակներում, և նոր ռիսկերի կառավարման ծրագիրն անհրաժեշտ է լինում միայն, եթե ռիսկային գործոնն աճել է, կամ հայտնաբերվել են նոր ռիսկեր:
- Այն դեպքերում, երբ անմիջական վերանայումն իրականացվել է ի պատասխան որևէ կոնկրետ սպառնալիքի կամ իրադարձության, այն պետք է ուղեկցվի ռիսկերի կառավարման թարմացված ծրագրով, որը կոչված կլինի անդրադառնալ նոր ռիսկային գործոնին:

Ծրագրերը պետք է լիովին փաստագրված լինեն և ընդգրկեն նոր ռիսկերի գնահատում, ինչին պետք է հաջորդի լրացուցիչ անվտանգության միջոցառումների իրագործման ծրագիրը՝ ուղղված նոր ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

Ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման ծրագրերի մշակումն անհրաժեշտ են ծառայություն մատուցող կազմակերպություններին՝ դրանցում սպասարկվող զոհերի և նրանց աջակցող աշխատակիցների պաշտպանությունն ապահովելու նպատակով: Յուրաքանչյուր ընթացակարգ պետք է լիովին փաստագրված լինի, և բոլոր փաստաթղթերը, էլեկտրոնային կամ այլ տեսքով, պետք է պահպանվեն գաղտնիության պայմաններում՝ անձնական, գաղտնի բնույթի և թրաֆիքինգին վերաբերող տվյալների մշակման և նրանց ապահովության լավագույն ընթացակարգերին համապատասխան:

1.2 Գաղտնի անձնական և թրաֆիքինգին վերաբերող տեղեկությունների մշակում և ապահովություն

Խիստ կարևոր է զոհին, թրաֆիքինգի գործընթացին, ինչպես նաև ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներին վերաբերող գաղտնի տեղեկությունների հետ վարվել անվտանգության նկատառումների և կանոնների պատշաճ պահպանմամբ:

- Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ թրաֆիքինգի զոհերը լիարժեք իրազեկված լինեն իրենց վերաբերյալ հավաքագրվող տվյալների և դրանց գործածման եղանակների մասին, ինչպես նաև պետք է տեղեկացված լինեն նման տվյալներին մուտք գործելու իրավունքների մասին:
- Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ թրաֆիքինգից տուժած զոհերին վերաբերող որևէ անձնական տվյալ չհրապարակվի առանց տուժած անձի գրավոր և լիարժեք իրազեկված համաձայնության, որով կլիազորվի նման անձնական տվյալների հրապարակումը կոնկրետ նպատակների և գործածման համար:
- Հաշվի առնելով կազմակերպված հանցավորության աճող վտանգը թրաֆիքինգի զոհերի և նրանց աջակցող աշխատակազմի համար՝ ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է մշտապես և ամենայն ջանասիրությամբ տնօրինեն և վերացնեն գաղտնի անձնական տվյալները:

Գաղտնի անձնական և թրաֆիքինգին վերաբերող տվյալների նրբանկատ բնույթը և նման տվյալների հետ անհրաժեշտ զգուշությամբ վարվելու կարևորությունը չի կարելի թերագնահատել: Հարկավոր է զոհերին վերաբերող դեպքերի նյութերի հետ մշտապես վարվել ամենայն շրջահայացությամբ և գաղտնիության պահպանմամբ:

Ստորև բերված ուղեցույցն իրենցից ներկայացնում է զգուշության և պատշաճ հոգատարության այն նվազագույն չափանիշը, որը պետք է կիրառվի անձնական տվյալների պարագայում: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները մշակեն իրենց սեփական չափանիշները, որոնք կհամապատասխանեն այս նվազագույն

պահանջներին, իսկ այդ կազմակերպությունների անձնակազմը պետք է ուղղորդում ստանա սահմանված պահանջներին հետևելու հարցում: Լրացուցիչ հրահանգներ կարելի է գտնել Եվրոպայի Խորհրդի Անհատների պաշտպանության մասին կոնվենցիայում, որն առնչվում է անձնական տվյալների ավտոմատ մշակման հարցերին:[1]

1.2.1 ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԻ ԳԱՂՏՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Հաջորդիվ ներկայացված ուղեցույցի շրջանակներում զոհին վերաբերող գաղտնի անձնական տվյալները սահմանվում են որպես.

> Ցանկացած անձնական տվյալ, գրառում առողջության մասին կամ նկարագիր, որը կարող է բացահայտել թրաֆիքինգի զոհի ինքնությունը կամ գտնվելու վայրը, կամ էլ որևէ մասնավոր կամ անձնական տվյալ կազմակերպության խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգից տուժած անձի վերաբերյալ:

1.2.2 ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՈՉՆՉԱՑՈՒՄ

Հաշվի առնելով ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատանքի նրբանկատ բնույթը՝ խիստ կարևոր է պահպանել լավագույն ընթացակարգեր անձնական տվյալների և տեղեկատվության հարցում: Բացի այդ, թրաֆիքինգից տուժած անձին անմիջապես վերաբերող տեղեկությունները պետք է պահվեն գաղտնի:

Տվյալների հետ վարվելու առաջարկվող կարևոր սկզբունքներ

- Զոհերին և թրաֆիքինգին վերաբերող գաղտնի, ինչպես նաև ավելի ընդհանուր բնույթի տվյալների պարագայում կիրառվող հիմնական սկզբունքն այն է, որ դրանք պետք է տրամադրվեն միայն ըստ անհրաժեշտության:
- Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցները պետք է բոլոր դեպքերում հետևեն այս կանոններին և հայտնեն տեղեկություններ ներքին և արտաքին օգտագործման համար միայն այն անձանց, ովքեր ունեն նման տեղեկատվություն ստանալու հաստատված կարիք և իրավունք:
- Յուրաքանչյուր ծառայություն մատուցող կազմակերպության

շրջանակներում միայն ըստ անհրաժեշտության տեղեկություններ ստանալու սկզբունքը պետք է կիրառվի նաև նույն կազմակերպության տարբեր ստորաբաժանումների մակարդակով, ասել է թե՝ որևէ գաղտնի տեղեկություն չպետք է տարածվի թրաֆիքինգի հակազդման բաժնից դուրս, և անվտանգության պահպանման սկզբունքները պետք է ջանասիրաբար կիրառվեն ինչպես ծառայություն մատուցող կազմակերպության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

- Մասնավորապես, թրաֆիքինգի զոհին վերաբերող գաղտնի անձնական տվյալները չպետք է ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից բացահայտվեն որևէ մեկին առանց համապատասխան զոհի նախնական գրավոր և իրազեկված համաձայնության:
- Նույնիսկ այն դեպքերում, երբ զոհը տվել է իր գրավոր համաձայնությունը գաղտնի անձնական և (կամ) թրաֆիքինգին վերաբերող տվյալների բացահայտման համար, ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցները միևնույն է պարտավոր են գնահատել նման տվյալների բովանդակությունը՝ ապահովելով, որ նման բացահայտումը չմեծացնի զոհին կամ նրա ընտանիքի անդամին կամ որևէ այլ զոհին կամ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամին սպառնացող վտանգը:
- Եթե նման հնարավորություն կա, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է իրեն իրավունք վերապահի զերծ մնալ նման տվյալների բացահայտումից՝ զոհի կամ որևէ այլ կողմի շահերից ելնելով, եթե որոշվել է, որ նման տեղեկատվության բացահայտումը վտանգ կներկայացնի:

Գաղտնի տվյալների թղթային օրինակներ

Աջակցության մատուցման ընթացքում գոյանում են տպագիր և ձեռագիր փաստաթղթերի օրինակներ: Հավանական է, որ անխուսափելի կլինի գաղտնի անձնական և թրաֆիքինգին վերաբերող տվյալների տպագրումը: Նման դեպքերում Միգրացիայի միջազգային կազմակերպությունն առաջարկում է հետևել վերոնշյալ գաղտնի տեղեկություններ պարունակող բոլոր տպագիր նյութերի հետ վարվելու ստորև բերված հրահանգներին.

- **Բոլոր չօգտագործվող փաստաթղթերի օրինակները պետք է պահվեն ապահով վայրում՝ կողպեքի տակ, իսկ համապատասխան բանալին պետք է գտնվի կամ ծառայություն մատուցող կազմակերպության գրասենյակում կամ ապաստարանում:**
- **Նման փաստաթղթերի օգտագործման դեպքում՝ դրանք չպետք է թողնվեն առանց հսկողության, օրինակ՝ գրասեղանների վրա, աշխատասենյակներում կամ այլ մարդկանց համար հասանելի վայրերում:**
- **Երբ թղթային օրինակներն այլևս չեն պահանջվում, դրանք պետք է ոչնչացվեն՝ կտոր-կտոր պատռվելու միջոցով կամ նմանատիպ այլ եղանակով:**
- **Այդ նպատակով բոլոր ծառայություն մատուցող կազմակերպությունները, որոնք մասնակցում են թրաֆիքինգից տուժած անձանց աջակցության գործընթացին, պետք է փորձեն ապահովել պատռող սարքի առկայությունն իրենց տարածքում:**

1.3 Անվտանգության լավագույն ընթացակարգեր՝ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամներ

Ստորև ներկայացված ուղեցույցն առաջարկվում է թրաֆիքինգի զոհերի հետ առաջնային շփման համար: Աշխատակազմի բոլոր այն անդամները, ովքեր զբաղվում են նման գործունեությամբ, պետք է մտապահեն, որ արձանագրվել են հաստատված դեպքեր, երբ չարագործները թաքուն ներթափանցել են զոհերին աջակցություն մատուցող ծրագրեր: Ուստի, աշխատակազմի անդամները պարտավոր են մշտապես զգոն լինել այս սպառնալիքի հանդեպ:

Չի կարելի ոչ մի պարագայում բացահայտել որևէ գաղտնի անձնական կամ թրաֆիքինգին վերաբերող տվյալ որևէ մեկին, ում ինքնությունը կամ լիազորությունները հայտնի չեն:

1.3.1 ԼԱՎԱԳՈՒՅՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ. ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՓՈՒՄ ԶՈՀԻ ՀԵՏ

Ուղղակի հեռախոսային շփում զոհի հետ

- Ստացեք լիարժեք տեղեկություններ և մանրամասներ այն հարցի շուրջ, թե ինչպես կապվել զոհի հետ, հաստատեք նրա հետ կապը պահելու համակարգ, տվեք նրան համապատասխան հեռախոսահամար Ձեր կազմակերպությանը դիմելու համար, սակայն մի բացահայտեք Ձեր հասցեն կամ գտնվելու վայրը:
- Եթե զոհը համագործակցում է, նրանից հեռախոսահամար վերցրեք և անմիջապես ետ զանքեք դեպքը հաստատելու և իրավիճակը քննարկելու համար:
- Գրանցեք հեռախոսազանգի ժամը և նշեք Ձեզ մոտ զանգողի տված հեռախոսահամարը:
- Հեռախոսով խոսելիս ուշադրություն դարձրեք, թե ով է գտնվում լսողության դաշտում:

Կապ զոհի հետ մեկ այլ ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով

- Պարզեք զոհին և դեպքին վերաբերող բոլոր մանրամասները:
- Խոսեք զոհի հետ և նրա հետ հարցազրույց նշանակեք:
- Զոհին տվեք միայն վերոնշյալ կոնտակտային հեռախոսահամարները:
- Համոզվեք, որ կազմակերպության աշխատակազմի անդամները չեն բացահայտում վերոնշյալ տվյալներից բացի որևէ այլ տվյալներ:

1.3.2 ԼԱՎԱԳՈՒՅՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ՝ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԶՈՀԻ ՀԵՏ

Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամներից կարող է պահանջվել առնչվել թրաֆիքինգից տուժած անձանց կազմակերպության գրասենյակում կամ այլ վայրերում, ինչպես օրինակ՝ ոստիկանության բաժանմունքներում, կալանքի կենտրոններում, իրավաբանական գրասենյակներում կամ այլ գործընկերների մոտ: Հարկավոր է պահպանել հետևյալ ընթացակարգերը.

Ծառայություն մատուցող կազմակերպության գրասենյակում անցկացվող հարցազրույցներ

- Այն դեպքերում, երբ անվտանգության նկատառումները թույլ են տալիս, նախընտրելի է թրաֆիքինգից տուժած անձանց հետ հարցազրույցներն անցկացնել գրասենյակից դուրս՝ սահմանափակելով այն անձանց թիվը, ովքեր կարող են իմանալ կազմակերպության գրասենյակի գտնվելու վայրը:
- Հարցազրույցները պետք է նշանակվեն և կազմակերպվեն նախնական համաձայնությամբ:
- Եթե կապը հաստատվել է գործընկեր կազմակերպության միջոցով, իսկ զոհը ցանկանում է ուղեկցվել տվյալ կազմակերպության աշխատակազմի որևէ անդամի կողմից, ապա անձի ինքնությունը պետք է հաստատվի համապատասխան կազմակերպության կողմից:
- Գրասենյակ ժամանելուն պես զոհը պետք է նկարահանվի դռան մուտքի մոտ՝ հեռադիտարկման համակարգով կամ դռան վրա տեղադրված դիտանցքով:
- Հարցազրույցը պետք է անցկացվի կազմակերպության գրասենյակի առանձին տարածքում, սակայն առնվազն աշխատակազմի մեկ այլ անդամ պետք է տեղյակ լինի, որ նրա գործընկերն այդ պահին հարցազրույց է անցկացնում, որպեսզի կարողանա պարբերաբար հետևել հարցազրույցի ընթացքին և անցկացման կարգին:

Գրասենյակից դուրս անցկացվող հարցազրույցներ

Տարրական անվտանգության նկատառումներից ելնելով՝ ծառայություն մատուցող կազմակերպության գրասենյակից դուրս անցկացվող հարցազրույցները պետք է սովորաբար իրականացվեն աշխատակազմի երկու անդամների կողմից: Այդուհանդերձ, միշտ չէ, որ դա հնարավոր կլինի, և նման դեպքերում առաջարկվում է հետևել ստորև բերված հրահանգներին:

- Եթե զոհը դիմել է ծառայություն մատուցող կազմակերպություն աջակցություն ստանալու համար մեկ այլ հասարակական կազմակերպության միջոցով, ապա հարցազրույցը պետք է կազմակերպվի ուղղորդող կազմակերպության տարածքում:
- Այն դեպքերում, երբ նման հարցազրույցը կարելի է ապահով

պայմաններում անցկացնել ուղղորդող կազմակերպության տարածքում, ուղղորդող կազմակերպության առնվազն մեկ անդամ պետք է ներկա գտնվի հարցազրույցի ողջ ընթացքում:

- Եթե հարցազրույցը պետք է տեղի ունենա ոստիկանության բաժանմունքում, կալանքի կենտրոնում կամ այլ պետական կառույցի տարածքում, ապա տվյալ հաստատության աշխատակիցներից առնվազն մեկ հոգի պետք է ներկա գտնվի հարցազրույցի անցկացման ողջ ընթացքում: Հարցազրույցի անցկացման պահին այլ կազմակերպության աշխատակազմի անդամի ներկայությունը չի թույլատրվում, եթե զոհը ինքը հատուկ չի պահանջում տվյալ անձի ներկա գտնվելը:

Հարցազրույցներ չեզոք վայրերում

- Ոչ մի դեպքում չի կարելի հարցազրույցն անցկացնել զոհի կողմից նշված որևէ հասցեում:
- Հանդիպումները պետք է տեղի ունենան միայն չեզոք վայրում, որը կընտրվի ծառայություն մատուցող կազմակերպության կողմից:

1.3.3 ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հարկ է նշել հետևյալ կետերը.

- Գոյություն չունի լիարժեք անվտանգություն:
- Անձնական անվտանգությունը կարելի է ամրապնդել՝ համադրելով ռիսկերի գնահատումն ու կառավարումը և ստանձնելով պատասխանատվություն դրա համար:
- Թեպետև ռիսկի աստիճանը չափազանցնելով՝ կարելի է աշխատակիցների մոտ առաջացնել անհանգստության զգացում, սակայն այն աշխատակիցները, ովքեր գործ ունեն թրաֆիքինգից տուժած անձանց հետ, պետք է լիովին գիտակցեն համապատասխան ռիսկերը:
- Իրենց մասնագիտական պարտականությունները ստանձնելիս աշխատակազմի բոլոր նոր անդամները պետք է մանրամասն տեղեկացվեն թրաֆիքինգի և անվտանգության հարցերի շուրջ:
- Անձնական անվտանգության նկատառումներից ելնելով՝

թրաֆիքինգից տուժած անձանց հետ գործունեցող աշխատակազմի անդամները պետք է մշտապես զգոն լինեն իրենց անմիջական շրջապատի և իրավիճակի առումով, մասնավորապես, երբ հանդիպումը տեղի է ունենում չեզոք վայրում:

- Թրաֆիքինգին առնչվող հարցեր քննարկելիս հարկավոր է միշտ զգոն լինել և ուշադիր հետևել, թե ով կարող է գտնվել լսողության դաշտում:

Տեղեկությունները կոնկրետ անվտանգության նկատառումների և ընթացակարգերի վերաբերյալ թրաֆիքինգից տուժած անձանց ապաստարանների մասով ներկայացված են 4-րդ գլխում, բաժին 4.2.6:

Նշում՝

[1] http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/108.htm

Թրաֆիքինգի զոհերի նախնական զննում

Գլխի բովանդակություն

2.1 Ներածություն
2.1.1 Ուղղորդում դեպի ծառայություն մատուցող կազմակերպություն
2.1.2 Նախնական զննման նպատակ
2.1.3 Նախնական զննման գործընթացի սահմանափակումներ
2.1.4 Մարդկանց թրաֆիքինգի երևույթի ընկալում
2.1.4.1 Իրավական դաշտ
2.1.4.2 Հանցավոր տարր
2.1.4.3 Զոհ
2.1.4.4 Թրաֆիքինգի երևույթը
2.2 Հարցազրույցից առաջ գնահատման ցուցիչներ
2.3 Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույց
2.3.1 Անչափահասների հետ հարցազրույցների անցկացման հատուկ նկատառումներ
2.3.2 Զոհի պատասխան ռեակցիան և վերաբերմունքը նրա նկատմամբ
2.3.3 Թրաֆիքինգի զոհերի խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկայի սկզբունքներ
2.3.4 Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձևի օգտագործում
2.3.4.1. Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ
2.3.4.2. Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձևի լրացում
Հավելված I Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձև

2.1 Ներածություն

Սույն բաժինը նպատակ ունի աջակցել ծառայություն մատուցող կազմակերպություններին թրաֆիքինգից տուժած անձանց նույնականացման և աջակցման հարցում՝ գործածելով օգնության դիմած անհատների նախնական զննման չափանիշային համակարգ: Այս ուղեցույցը նախատեսված է այն բոլոր դեպքերի համար, երբ խոսքը գնում է թրաֆիքինգից տուժած անձանց դեպի ծառայություն մատուցող կազմակերպություններ ուղղորդման մասին՝ անկախ նրանից, թե այդ կազմակերպությունները գտնվում են ծագման, տարանցիկ թե նպատակակետ երկրներում: Այս ուղեցույցը հավասարապես կիրառելի է իգական և արական սեռի անհատների նկատմամբ, ովքեր աջակցության են դիմում որպես թրաֆիքինգից տուժած անձինք, և հատկապես կարևոր է անչափահասների պարագայում՝ հաշվի առնելով վերջիններիս հատուկ խոցելիությունը և կարիքները:

2.1.1 ՈՒՂՂՈՐԴՈՒՄ ԴԵՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգից տուժած անձինք կարող են հայտնվել ծառայություն մատուցող կազմակերպության ուշադրության կենտրոնում մի շարք տարբեր շահագրգիռ կողմերի միջամտությամբ, այդ թվում՝

- Հանրային մարմիններ, ինչպիսիք են՝ ոստիկանությունը, առողջապահական հաստատությունները, սոցիալական ծառայությունները,
- Գործընկեր միջկառավարական և հասարակական կազմակերպությունները,
- Այլ կազմակերպություններ, ինչպիսիք են՝ դեսպանությունները, եկեղեցիները, կրոնական կազմակերպությունները և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող փաստաբանները,
- Անհատներ, ինչպիսիք են՝ այլ զոհերը, նրանց ազգականները կամ ընկերները,
- Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված անձանց հաճախորդները:

Նշում.

Եթե կազմակերպությունն առնչվում է թրաֆիքինգից տուժած անձի հետ և ի վիճակի չէ նրան աջակցություն մատուցել կամ հոգալ նրա բոլոր կարիքները, ապա հարկ է ամեն ջանք գործադրել նրան նույնականացնելու և այնպիսի կազմակերպություն ուղղորդելու համար, որտեղ նրան կկարողանան անհրաժեշտ աջակցություն մատուցել:

2.1.2 ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Որպես թրաֆիքինգի զոհեր դեպի ծառայություն մատուցող կազմակերպություններ աջակցություն ստանալու համար ուղղորդված անձանց պարագայում կարևոր է պատշաճ նախնական զննում անցկացնել՝ համոզվելով, որ նրանք իրականում հանդիսանում են թրաֆիքինգի զոհեր, այլ ոչ մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած կամ այլ տեսակի ապօրինի միգրանտներ, կամ էլ այնպիսի անձինք, ովքեր գտնվում են չարաշահման կամ խոցելի դրության մեջ և կարող են աջակցության և (կամ) պաշտպանության կարիք ունենալ: Ավելին, հարկ է ջանք գործադրել պարզելու, թե արդյոք ենթադրյալ զոհն իրականում հանդիսանում է

թրաֆիքինգից տուժած անձ կամ աջակցության կարիք ունեցող անձ, թե որևէ մեկը, ով փորձում է գաղտնի ճանապարհով ներթափանցել ծառայություն մատուցող կազմակերպություն այլ շարժառիթներով:

Ինչու՞ է կարևոր պատշաճ կերպով նույնականացնել թրաֆիքինգից տուժած անձանց

- **Բազում նպատակակետ երկրներում թրաֆիքինգից տուժած անձանց կարող են սխալմամբ ապօրինի միգրանտ համարել և արտաքսել նրանց երկրից արագացված կարգով կամ էլ տեղակայել կալանքի կենտրոններում՝ առանց պատշաճ նույնականացման:**
- **Աջակցության դիմած տարբեր կատեգորիաների անձանց համար պահանջվող աջակցությունն ու պաշտպանությունն ամենայն հավանականությամբ տարբերվում է թրաֆիքինգից տուժած անհատների կարիքներից:**
- **Թրաֆիքինգից տուժած զոհերն ամենայն հավանա-կանությամբ կունենան անմիջական և սուր ֆիզիկական, սեռական և հոգեբանական բնույթի խնդիրներ, որոնք սովորաբար առկա չեն մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած կամ այլ ապօրինի միգրանտների մոտ:**
- **Թրաֆիքինգից տուժած անձինք հանդիսանում են լուրջ հանցագործությունների զոհեր, ուստի պահանջվում են առանձնակի անվտանգության միջոցառումներ և ընթացակարգեր, քանի որ ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները, ովքեր նման զոհերին աջակցություն են տրամադրում հենց իրենք են ենթարկվում առանձնակի վտանգի:**
- **Կան տվյալներ, որ կազմակերպված հանցավոր խմբերը փորձում են գաղտնի կերպով ներթափանցել միջկառավարական և հասարակական կազմակերպությունների աջակցություն և օգնություն տրամադրող ծրագրեր՝ այն զոհերի գտնվելու վայրն իմանալու նպատակով, ովքեր փախել են իրենցից, ցուցմունք տվել իրենց դեմ, կամ էլ պատրաստվում են անել այդ:**

Զոհերի հետ աշխատելիս համապատասխան գործակալություններն ամենայն հավանականությամբ կստանան ուղղորդումներ այնպիսի անձանց վերաբերյալ, ովքեր թրաֆիքինգից տուժած անձ չեն հանդիսանում, սակայն ունեն աջակցության կարիք, օրինակ՝ ընտանեկան բռնության կամ սեռական բնույթի հարձակումների զոհեր, հղի երիտասարդ կանայք կամ ապօրինի միգրանտներ: Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունները չեն կարող օգնել այս կարգի անձանց, ապա նրանք կարող են ուղղորդել նրանց այլ կազմակերպություններ, որոնք կոչված են վերջիններիս աջակցություն մատուցել: Ուղղորդման գործընթացը դյուրացնելու նպատակով՝ լավ կլինի ձեռքի տակ ունենալ այն գործակալությունների թարմացված ցանկը, որոնք նման աջակցություն են մատուցում:

2.1.3 ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

Նախնական զննման գործընթացի մանրամասներին անդրադառնալուց առաջ ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն հետևյալը.

- **Այս գործընթացն ինքնին կատարյալ չի և չի կարող սխալներից զերծ լինել՝ ենթադրյալ թրաֆիքինգի զոհի գնահատման առումով:**
- **Ստորև բերված գործընթացը հիմնված է մարդկանց թրաֆիքինգի և զոհերի նույնականացման հարցում ընդհանրացված մոտեցման վրա:**
- **Կախված ազգային, տարածաշրջանային և միջազգային համատեքստից՝ կարող են ի հայտ գալ հակասություններ և բացառություններ ստորև ներկայացված բազում ընդհանուր բնույթի կետերում: Ուստի, կարևոր է, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները հարմարեցնեն և շտկեն այդ ընդհանուր մոտեցումները՝ ելնելով տեղի պայմաններից:**
- **Այս գործընթացը պետք է դիտարկվի որպես նույնականացման ընդհանուր բանաձև, որը կարող է կատարելագործվել տեղի ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից՝ ելնելով տվյալ երկրում թրաֆիքինգի հետ կապված իրավիճակի վերաբերյալ ունեցած փորձից և գիտելիքներից, ինչպես նաև թրաֆիքինգից տուժած անձի հետ ունեցած շփման փորձից:**

- **Այս շրջանակային բանաձևը նմուշ է հանդիսանում տեսական պայմաններում զոհերի նույնականացման համար:**
- **Այդուհանդերձ, գործնական աշխատանքի փորձը վկայում է այն մասին, որ տեսական պայմանները հազվադեպ են պատահում:**
- **Շատ դեպքերում առկա տվյալները կարող են բավարար չլինել նախնական հարցազրույցի ցուցիչները գնահատելու համար, տվյալ անհատը կարող է պատրաստակամ կամ ի վիճակի չլինել պատասխանելու որևէ կամ բոլոր հարցերին, իսկ լրացուցիչ ապացույցների նյութերը կարող են բացակայել:**
- **Թրաֆիքինգի զոհերի նախնական զննումը և նույնականացումը վերջին հաշվով կախված է լինելու տեղի ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի փորձից և դատողություններից, որոնք հիմնված կլինեն բոլոր առկա տեղեկությունների նրանց հանրագումարային գնահատականի վրա:**

2.1.4 ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Արդյունավետ կերպով զոհերի նախնական զննում իրականացնելու համար ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է ի վիճակի լինեն տարբերակել այն անհատներին, ովքեր դարձել են մարդկանց թրաֆիքինգի զոհ և նրանց, ովքեր մաքսանենգ ճանապարհով ներթափանցել են երկիր, կամ ովքեր չարաշահում կամ խախտում են անհատի իրավունքները (օրինակ՝ ընտանեկան բռնություն): Թեև այս դեպքերը նման են մի շարք առումներով, նրանք վերաբերում են քրեական արդարադատության շատ տարբեր ոլորտներին: Թրաֆիքինգի զոհի նախնական զննման և նույնականացման արդյունավետ մեթոդը կայանում է նրանում, որպեսզի գնահատել բոլոր հանգամանքները և առկա տեղեկությունները և յուրաքանչյուր առանձին վերցված դեպքում դիտարկել այդ հարցը երեք տարբեր հայեցակետերից.

- Իրավական դաշտ
- Հանցավոր տարրեր
- Զոհ

2.1.4.1 Իրավական դաշտ

Որևէ անհատի՝ իրականում թրաֆիքինգից տուժած անձ լինելու հանգամանքը որոշելու համար անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է իրենից ներկայացնում մարդկանց թրաֆիքինգի իրավական սահմանումը: Նույնականացման գործընթացին աջակցելու համար ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է հաշվի առնեն թրաֆիքինգի միջազգային հենանիշային սահմանումը, որն ամրագրված է «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը: ՄԱԿ-ի արձանագրության 3-րդ հոդվածում (Անդրազգային կազմակերպված հանցավորության մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն):[1] Որոշ տարածաշրջաններում կարող են գործել իրենց սեփական առանձին կոնվենցիաները, ինչպես օրինակ, Եվրոպայի Խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի հակազդման մասին կոնվենցիան:

Ազգային մակարդակով՝ տարբեր երկրներ արդեն հարմարեցրել են իրենց օրենքները մարդկանց թրաֆիքինգի խնդրին անդրադառնալու նպատակով: Այդուհանդերձ, թրաֆիքինգի հակազդման ուղղությամբ շատ երկրներում գործող օրենսդրությունը դեռևս չի համապատասխանում ՄԱԿ-ի հենանիշային չափանիշներին: Թեև ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է միշտ հաշվի առնեն ազգային օրենսդրության դրույթները, որոնցով սահմանվում է «թրաֆիքինգի զոհ» հասկացությունը, այնուամենայնիվ, նրանք կարող են հիմք ընդունել Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան արձանագրության մեջ զետեղված սահմանումը՝ սեփական չափանիշները մշակելու նպատակով: Այն դեպքերում, երբ ազգային մակարդակով թրաֆիքինգի հակազդման մասին որևէ օրենք գոյություն չունի, ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են օգտագործել Միավորված ազգերի կազմակերպության վերոնշյալ արձանագրության մեջ զետեղված սահմանումը որպես հենանիշ: Անկախ նրանից, թե իրավական ինչպիսի սահմանում է գործածվում, վերջնական նպատակը կայանում է նրանում, որպեսզի հաշվի առնել յուրաքանչյուր առանձին վերցված դեպքի հանգամանքները և համեմատել դրանք իրավական դաշտի հետ:

Միավորված ազգերի կազմակերպության վերոնշյալ արձանագրության մեջ տեղ գտած սահմանման համաձայն՝ հանցագործության փաստ գրանցվելու համար պետք է առկա լինեն հանրագումարային երեք փոխկախյալ տարրեր, որոնք մենք անվանելու ենք հետևյալ կերպ՝ (1) գործողություններ, (2) միջոցներ, (3) նպատակ:

- **Գործողություններ**՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը:
- **Միջոցներ**՝ ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ ուրիշ անձին վերահսկող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:
- **Նպատակ**՝ շահագործել անձին հոդվածում նշված եղանակներով:

Այս երեք տարրերից յուրաքանչյուրը պետք է առկա լինի Արձանագրության խախտում գրանցելու համար, ասել է թե՝ գործունեությունը պետք է իրականացվի նշված որևէ միջոցներից մեկով կամ երկուսով, որոնք պետք է ուղղված լինեն շահագործական նպատակին: Եթե երեք նշված տարրերից որևէ մեկը բացակայում է, ապա թրաֆիքինգի հանցատեսակի սահմանման համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվել՝ ելնելով Պալերմոյի արձանագրության 3-րդ հոդվածի դրույթներից: (Հատուկ բացառություն են կազմում մանկական տարիքի զոհերի դեպքերը՝ Արձանագրության «Գ» ենթակետով, որը միանշանակ բացառում է «միջոցներ» տարրի առկայության անհրաժեշտությունը արձանագրության խախտում գրանցելու առումով):

Միավորված ազգերի կազմակերպության թրաֆիքինգի հակազդման արձանագրության սահմանում

ՄԱԿ-ի մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրության մեջ զետեղված չափանիշները:

ա) «Մարդկանց թրաֆիքինգ» նշանակում է շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը թաքցնելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ ուրիշ անձին վերահսկող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով:

Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ստրկության և համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերի կորզելը,

բ) Մարդկանց թրաֆիքինգի զոհի համաձայնությունը այնպիսի պլանավորված շահագործմանը, որի մասին խոսվում է սույն հոդվածի (ա) ենթակետում, հաշվի չի առնվում, եթե օգտագործվել է (ա) ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկը,

գ) Շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, պարտակելը կամ ստանալը համարվում է «մարդկանց թրաֆիքինգ» նույնիսկ այն դեպքում, երբ դրանք կապված չեն սույն հոդվածի (ա) ենթակետում նշված ներգործության միջոցներից որևէ մեկի հետ,

դ) «Երեխա» նշանակում է ցանկացած անձ, որի 18 տարին չի լրացել:

Հետևյալ կետերն օգտակար են մաքսանենգ ճանապարհով երկիր մարդկանց ներմուծումը և մարդկանց թրաֆիքինգը տարբերակելու համար.

Գործողություններ՝ ինչպես թրաֆիքինգով, այնպես էլ մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողները տեղափոխում և փոխանցում են մադկանց, ուստի, երկուսն էլ իրականացնում են ՄԱԿ-ի արձանագրությամբ սահմանված հանցագործության առաջին փուլը:

Միջոցներ՝ մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողները սովորաբար չեն կիրառում 3-րդ հոդվածում նշված միջոցները. բացակայում է անձի ազատ կամքի խախտման տարրը կամ ուժի գործադրման, խաբեության կամ իշխանության չարաշահման տարրերը: Այսպիսով, այս պայմանը, որն անհրաժեշտ է թրաֆիքինգի հանցագործության փաստն արձանագրելու համար, չի բավարարվում և տարբերակում է մարդկանց մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծելու և թրաֆիքինգի դեպքերը:

Նպատակ՝ նույնիսկ, եթե երբեմն բերվում է այն փաստարկը, որ մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողներն իրականում չարաշահում են իրենց հսկողության տակ գտնվող անձանց խոցելի դիրքը, նրանք այդպես չեն վարվում միգրանտներին 3-րդ հոդվածով սահմանված եղանակով շահագործելու նպատակով: Մարդկանց

մաքսանենգությամբ զբաղվողի և մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցող միգրանտների միջև եղած հարաբերությունը հիմնված են միայն մի երկրից դուրս գալու և մեկ այլ երկրի սահմանը վճարի դիմաց հատելու շուրջ ունեցած պայմանավորվածության վրա, ընդ որում այդ հարաբերությունը հարատևում է այդ երկու կետի միջև՝ մինչև ապօրինի ճանապարհով երկիր ներթափանցելու պահը: Այն, ինչ անում է միգրանտն այդ պահից հետո, չի հետաքրքրում մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողին՝ ի տարբերություն մարդավաճառի:

.....

Մարդկանց մաքսանենգության և թրաֆիքինգի միջև եղած կապը

Թրաֆիքինգի զոհ դառնալու սկզբնական փուլում տվյալ անձը հաճախ հանդես է գալիս որպես իր կամքով մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած միգրանտ: Այդուհանդերձ, եթե մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողի և միգրանտի միջև փոխհարաբերությունները չեն ավարտվում արտասահմանյան երկիր մուտք գործելու պահին, և մաքսանենգը շարունակում է հսկողություն սահմանել ապօրինաբար երկիր ներթափանցած միգրանտի նկատմամբ և ստիպում է նրան աշխատել շահագործական պայմաններում՝ գործածելով վերոնշյալ միջոցները, ապա նման իրավիճակն այլևս չի սահմանվում որպես մաքսանենգություն, այլ դրանում արձանագրվում են թրաֆիքինգի տարրեր: Բացի այդ, մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած ապօրինի միգրանտները հաճախ խոցելի են թրաֆիքինգի նկատմամբ նպատակակետ երկիր մուտք գործելուն պես: Մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած ապօրինի միգրանտը կարող է այնուհետև հավաքագրվել, տեղափոխվել և շահագործվել մի անձի կողմից, ով որևէ առնչություն չունի ի սկզբանե նրան երկիր ներմուծած մարդկանց մաքսանենգությամբ զբաղվողի հետ: Օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգներում մեքսիկացիները հաճախ մաքսանենգ ճանապարհով ներմուծվում են երկիր, որտեղ մարդավաճառներն օգտվում են նրանց խոցելի դիրքից, հավաքագրում նրանց և տեղափոխում երկրի այլ տարածաշրջան՝ հարկադիր աշխատանքի նպատակով:

.....

Թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծված միգրանտների միջև տարբերակելու համար օգտակար է նաև ուսումնասիրել միջազգային իրավագետների տարբեր մոտեցումները, որոնք ամրագրվել են մաքսանենգության վերաբերյալ արձանագրությունը կազմելիս: Այս իրավական եզրույթների որոշակի տարբերությունն ընդգծվում է, երբ մաքսանենգության մասին արձանագրությունը հակադրվում և համեմատվում է թրաֆիքինգին առնչվող արձանագրության հետ: Ինչպես երևում է, մաքսանենգության վերաբերյալ արձանագրության դրույթներում շեշտը դրվում է ոչ թե զոհերի, այլ մասնակից պետության իրավունքների խախտման վրա: «Զոհ» բառն ի հայտ չի գալիս մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցելու հարցերին վերաբերող արձանագրությունում: Իրականում, հենց պետությունն է դիտարկվում որպես «տուժող կողմ»: Հարկ է նաև նշել, որ թրաֆիքինգը կարող է իր բնույթով լինել միջազգային կամ ներքին և կարող է ներառել մարդկանց ինչպես օրինական, այնպես էլ ապօրինի տեղաշարժ: Մյուս կողմից՝ մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցելը միշտ ենթադրում է միջազգային սահմանի ապօրինի հատում:

.....

ՄԱԿ-ի մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծման մասին արձանագրության սահմանում

ՄԱԿ-ի արձանագրություն «Ցամաքով, օդով և ծովով միգրանտների անօրինական ներմուծման դեմ», հոդված 3

ա) «միգրանտների անօրինական ներմուծում» նշանակում է՝ որևէ Մասնակից պետություն որևէ անձի, որը չի հանդիսանում նրա քաղաքացին կամ մշտապես չի բնակվում նրա տարածքում, անօրինական ներմուծման ապահովում՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական շահ ստանալու նպատակով

բ) «անօրինական մուտք» նշանակում է՝ սահմանների հատումը առանց ընդունող պետություն օրինական մուտքի համար անհրաժեշտ պահանջների պահպանման

.....

2.1.4.2 Հանցավոր տարր

Երկրորդ քայլը թրաֆիքինգով և մարդկանց մաքսանենգ ներմուծմամբ զբաղվողներին տարբերակելն է՝ հանցագործությունն իրականացնողի տեսանկյունից, ասել է թե՝ պատասխանել այն հարցին, թե ո՞րն է տվյալ արարքի հիմքում ընկած մտադրությունը:

Մարդկանց թրաֆիքինգը տարբերվում է մարդկանց մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծելու դեպքերից նրանով, որ մարդավաճառի նպատակն է շահագործել զոհին սեփական օգտի համար երրորդ երկիր նրա մուտք գործելուց կամ ներքին տեղափոխումից հետո՝ շահագործական կամ հարկադրական հարաբերությունների շրջանակներում, որոնք մարդավաճառի կողմից հնարավորինս երկար կպահպանվեն: Մարդկանց մաքսանենգության դեպքերում մաքսանենգի և երկիր մաքսանենգ ճանապարհով ներթափանցած ապօրինի միգրանտի հետ ունեցած հարաբերությունը սովորաբար ավարտվում է, հենց որ միգրանտը վճարում է համապատասխան գումարը, և նրա ապօրինի մուտքը երկրի տարածք ավարտված է: Ուստի, այս երկու հանցատեսակների հիմնական տարբերությունը հարկադրման տարրն է՝ անկախ դրա գործադրման միջոցներից: Այսպիսով, թրաֆիքինգի զոհերը չեն կարող սեփական կամքով դադարեցնել մարդավաճառի հետ ունեցած իրենց հարաբերություններն առանց լուրջ հետևանքների ենթարկվելու վտանգի:

2.1.4.3 Զոհ

Երրորդ մեթոդը կայանում է նրանում, որպեսզի դիտարկել խնդիրը զոհի տեսակետից՝ որոշելով նրա կրած վնասը: Թեպետև մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած ապօրինի միգրանտների պարագայում խոսքը կարող է գնալ վնասվածք ստանալու, չարաշահումների ենթարկվելու կամ նույնիսկ մահանալու լուրջ վտանգի մասին, սակայն մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցելու ընթացքում, այնուամենայնիվ, հանցավոր մաքսանենգի հետ ունեցած հարաբերության ապօրինի հարկադրման կամ խաբեության տարրը բացակայում է:

Թեպետ ունեցած տվյալները վկայում են այն մասին, որ մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած ապօրինի միգրանտները հաճախ ենթարկվում են լուրջ վտանգի փոխադրման փուլում, սակայն նրանց համար հատկանշական չէ սեռական բնույթի ծառայությունների ոլորտում կամ ապօրինի աշխատաշուկայում երկար ժամանակի ընթացքում պարբերաբար ֆիզիկական, սեռական և հոգեբանական չարաշահումների և շահագործման ենթարկվելը կամ ազատությունից զրկվելը: Այդուհանդերձ, այս հատկանիշների մեծ մասը, եթե ոչ բոլորն ամենայն հավանականությամբ ներկա են թրաֆիքինգին առնչվող դեպքերում:

Երկրի ներսում թրաֆիքինգի որոշ դեպքերում կարող է բավականին դժվար լինել թրաֆիքինգը տարբերել ավանդական կամ ընդունված սովորույթներից, և հետևաբար դժվար կլինի նույնականացնել մարդավաճառին կամ նրա զոհին: Օրինակ, Աֆղանստանում կանայք և աղջիկները կարող են փոխանակվել պարտքերի դիմաց կամ երկու ընտանիքների միջև թշնամությունը դադարեցնելու նպատակով:[2] Փոխանակվող կինը կամ աղջիկը չի կարող կարծիք հայտնել տվյալ հարցում և գտնվում է իր նոր ամուսնու և նրա ընտանիքի հսկողության և լիազորության ներքո՝ հաճախ ընդունող ընտանիքում արժանանալով տնային ծառայի և սեռական ծառայություններ մատուցող ստրուկի վերաբերմունքի: Ինդոնեզիայում նույնպես գոյություն ունի ավելի հարուստ ազգականների տուն երեխաներին որպես տնային ծառա ուղարկելու ավանդույթը:[3] Այս երեխաները սովորաբար շատ երիտասարդ են, և կախված նրանց գործատուից՝ կարող են ենթարկվել ֆիզիկական և սեռական չարաշահումների, ունենալ երկար աշխատանքային ժամեր, ստանալ անբավարար կամ չստանալ առհասարակ որևէ վարձատրություն, սնվել անբավարար կամ բնակվել վատ պայմաններում՝ չունենալով կրթություն ստանալու կամ խաղալու հնարավորություն: Շատ դեպքերում ավանդական սովորույթներն այնքանով են ընդունված հասարակությունում, որ չարաշահումները և շահագործումը որպես այդպիսիք այլևս չեն ճանաչվում: Այս սովորույթները պետք է վերանայվեն տուժող կողմի տեսանկյունից և ՄԱԿ-ի համապատասխան արձանագրության շրջանակներում: Յուրաքանչյուր դեպք պետք է արժանանա առանձին վերլուծության՝ որոշելու, թե արդյոք այն իրենից ներկայացնում է մարդկանց թրաֆիքինգի դեպք, թե ոչ:

2.1.4.4 Թրաֆիքինգի երևույթը

Ենթադրյալ զոհերի հետ հարցազրույցին պատրաստվող անձինք պետք է հասկանան թրաֆիքինգ հանցատեսակը կազմող տարրերի որոշման եղանակները: Հաջորդիվ բերված կետերում արտացոլվում է առկա գիտելիքների այն ներկայիս մակարդակը, որն առնչվում է մարդկանց թրաֆիքինգի բարդ քրեական հանցատեսակին և դրա հետ կապված միտումներին: Հարկ է նշել, որ այս միտումները տարբերվում են՝ կախված տարածաշրջանից և երկրից, իսկ ժամանակի ընթացքում նաև փոխվում են, քանի որ մարդավաճառները ձևափոխում են իրենց գործելաոճը՝ հայտնաբերումից խուսափելու համար: Հետևաբար,

բերված ընդհանուր բնույթի դիտողությունները ներկայացվում են որպես այս հանցատեսակի նախապատմություն և պետք է ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից ուսումնասիրվեն և հարմարեցվեն տեղի պայմաններին՝ արտացոլելով ազգային և տարածաշրջանային առանձնահատկությունները:

Թրաֆիքինգի տարածման աստիճանը

Թրաֆիքինգի տարածման իրական աստիճանը երբեք ճշգրտորեն չի գնահատվել մի շարք տարբեր պատճառներով, ինչպիսիք են ի թիվս այլոց՝ այդ հարցով զբաղվող գործակալություններում ընդունված սահմանումների տարբերությունները, այն ոլորտներում պատշաճ մոնիթորինգի պակասը, որտեղ իրականացվում է շահագործումը, ինչպես նաև մարդավաճառների կողմից գործի դրած քողարկման ռազմավարությունները: Հետևաբար, զոհերի գնահատվող թիվը զգալիորեն տարբերվում է: Օրինակ, 2005 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգների Պետդեպարտամենտի Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ պատրաստված զեկույցում թրաֆիքինգի ենթարկված անձանց թիվը, որոնք ամեն տարի հատում են միջազգային սահմանները, ողջ աշխարհում կազմում է 600000–800000 հոգի (հաշվի չառնելով տարբեր երկրների ներքին թրաֆիքինգը)[4]: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի գնահատականներով յուրաքանչյուր տարի ամբողջ աշխարհում թրաֆիքինգի է ենթարկվում 1,2 միլիոն երեխա,[5] թեև Աշխատանքի միջազգային կազմակերպության տվյալներով ամբողջ աշխարհում 12,3 միլիոն մարդ է ենթարկվում բռնի աշխատանքի, այդ թվում՝ 2,4 միլիոնը որպես մարդկանց թրաֆիքինգի զոհ:

Շահագործման տեսակներ

Հայտնի չէ, թե արդյոք թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը հայտնվում են սեռական շահագործման, թե հարկադիր աշխատանքի պայմաններում, սակայն սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգը ներկայումս այս երևույթի առավել ճանաչված ձևն է: Պարզ է դառնում, որ այս երևույթն առավել շահութաբեր է մարդավաճառների համար, իսկ ֆիզիկական և հուզական առումով առավել վնասարար է զոհի համար, քանի որ այն ամեն օր ուղեկցվում է պարբերական ֆիզիկական, սեռական և հոգեբանական չարաշահումներով:

Այն հարցը, թե նշված կատեգորիաներից որն է գերակայում քանակային առումով, չի կարող ճշգրիտ պատասխան ստանալ և

կախված է տվյալ վայրից: Օրինակ, Եվրամիությունում թրաֆիքինգը սեռական շահագործման նպատակով ներկայումս կազմում է առավել տարածված կատեգորիան: Աշխարհի այլ մասերում, հատկապես ծագման երկրներում, ինչպիսիք են՝ Կենտրոնական և Հարավարևելյան Ասիայի, Հարավային և Արևմտյան Աֆրիկայի, ինչպես նաև Հարավային և Կենտրոնական Ամերիկայի երկրները, իրավիճակը պակաս հստակ է, և ամենայն հավանականությամբ այդ երկրներում գերակայում են գյուղատնտեսությունում և ընդհատակյա արտադրամասերում շահագործական աշխատանքի, փողոցային մուրացկանության կամ առևտրի նպատակներով թրաֆիքինգի դեպքերը: Համաշխարհային մակարդակով, ինչպես նաև հաշվի առնելով ներքին և արտաքին թրաֆիքինգը՝ հավանաբար ավելի ճիշտ կլինի աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգը դիտարկել որպես ամենամեծ առանձին վերցված կատեգորիա: Հենց այս ազգային և տարածաշրջանային տարբերություններով ընդգծվում է ծառայություն մատուցող կազմակերպությունների՝ նախնական զննման ձևաչափը տեղի հանգամանքներին համապատասխանացնելու անհրաժեշտությունը:

Թրաֆիքինգի զոհերը

Նմանապես, չի կարելի ճշգրտորեն պնդել, թե արդյոք կանայք, թե տղամարդիկ են թրաֆիքինգի զոհ դարձած անձանց շարքում մեծամասնություն կազմում: Միակ բանը, որ կարելի է պնդել, թերևս, այն է, որ աշխարհում թրաֆիքինգից տուժում են թվով ավելի շատ կանայք և երեխաներ, թեև այս պնդումը կարող է չվերաբերել որոշ տարածաշրջաններին և երկրներին, որտեղ երիտասարդներն ու տղաները հաճախ թրաֆիքինգի են ենթարկվում ստրկական աշխատանքում ներգրավվելու կամ որպես մանկահասակ զինվոր ծառայելու նպատակով:

Ազգային և տարածաշրջանային տարբերություններն ու հատկանիշներն ընդգծում են ծառայություն մատուցող կազմակերպությունների՝ նման տարբերությունների մասին իրազեկված լինելու և հարցազրույցից առաջ գնահատման այն ցուցիչներն ուսումնասիրելու անհրաժեշտությունը, որոնք կազմում են նույնականացման երկու փուլից բաղկացած և ստորև ներկայացված գործընթացի առաջին փուլը:

2.2 Հարցազրույցից առաջ գնահատման ցուցիչներ

Նախնական զննման գործընթացը բաղկացած է երկու փուլից.

- Մի շարք ցուցիչների ուսումնասիրություն, որոնք կարող են գնահատվել նախքան տվյալ անհատի հետ ունեցած փաստացի հարցազրույցը:
- Հարցազրույցի տվյալ անհատի հետ բաղկացած է մի շարք հարցերից և կենտրոնացած թրաֆիքինգի շրջանակներում հավաքագրման, տեղափոխման և շահագործման փուլերի վրա:

Նախնական զննման և նույնականացման գործընթացը սկսվում է նրանով, որ դիտարկվում են յուրաքանչյուր առանձին դեպքի հանգամանքները, իսկ **այնուհետև** տվյալ անձին արվում են կոնկրետ հարցադրումներ՝ կապված թրաֆիքինգի հետ: Ստորև բերված թեմաների շուրջ տեղեկություններն ամենայն հավանականությամբ կարող են ներկայացվել ուղղորդող գործակալության կողմից, իսկ այն դեպքերում, երբ տվյալ անհատն անկախ է օգնության դիմում ծառայություն մատուցող կազմակերպություն, նման տեղեկությունները կարող են ձեռք բերվել նախնական ընդհանուր բնույթի հարցադրումների միջոցով:

Զգուշություն ցուցիչների հարցում

Հարկ է նշել, որ ստորև բերված ցուցիչները նախատեսված են ընդհանուր գնահատման գործընթացին նպաստելու համար, իրենցից ներկայացնում են ընդհանրություններ, և բոլորն էլ ենթադրում են որոշակի բացառություններ: Տեղի հանգամանքները և փորձը կարող են վկայել լրացուցիչ ցուցիչներ կիրառելու կամ դրանք հարմարեցնելու անհրաժեշտության մասին: Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է համապատասխանաբար հարմարեցնեն և ընդլայնեն այս գործընթացը: Բոլոր ցուցիչները պետք է դիտարկվեն հանրագումարային առումով, քանի որ դրանցից ոչ մեկն առանձին չի կարող որևէ պատասխան ապահովել:

Հարկավոր է հաշվի առնել հետևյալ ցուցիչները.

Տարիք

Բոլոր առկա ցուցիչները վկայում են երեխաների և շատ երիտասարդ անձանց թրաֆիքինգի աճի մասին: Ուստի, որքան ավելի մեծ է անհատը, այնքան առհասարակ պակաս է այն հավանականությունը, որ տվյալ դեպքում խոսքը գնում է թրաֆիքինգի մասին:

Սովորաբար սեռական շահագործման կամ հարկադիր աշխատանքի նպատակով իրականացվող թրաֆիքինգի կենտրոնում հայտնվում են երիտասարդ զոհեր, քանի որ մարդավաճառները և նրանց հանցակիցները գիտեն, որ ծանր ֆիզիկական աշխատանքի համար ստրկության պայմաններում պահանջվում են ավելի երիտասարդ և ֆիզիկապես ավելի պինդ մարդիկ: Նույնը կարելի է ասել սեռական շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգի մասին, քանի որ հաճախորդները նախապատվությունը տալիս են երիտասարդ զոհերին, ովքեր այսպիսով ավելի շահութաբեր են, քան տարիքով ավելի մեծ զոհերը: Օրգանների կորզման պարագայում որքան ավելի երիտասարդ և ֆիզիկապես առողջ է դոնորը, այնքան շահութաբեր է գործարքը մարդավաճառի և հնարավոր գնորդի համար: Բացի այդ, կան տվյալներ, որ երիտասարդ տարիքի անձինք կարող են առավել հեշտությամբ խաբվել, հարկադրվել և վերահսկվել մարդավաճառների կողմից, ինչը նրանց ավելի մատչելի զոհ է դարձնում:

Այդուհանդերձ, տարիքով ավելի մեծ անհատները նույնպես կարող են թրաֆիքինգի ենթարկվել, օրինակ, Հարավարևելյան Ասիայում, որտեղ տարեց անձինք թրաֆիքինգի են ենթարկվում և բերվում Թաիլանդ փողոցում մուրացկանությամբ զբաղվելու համար: Տարիքը նույնպես նշանակալի գործոն չի հանդիսանում, երբ թրաֆիքինգն իրականացվում է տնային ծառայության կամ որպես դերձակուհի աշխատելու համար, երբ խոսքը կարող է գնալ տարբեր տարիքի կանանց մասին:

Այնուամենայնիվ, տարիքը կարող է թրաֆիքինգի մասին վկայող ցուցիչներից մեկը լինել, ընդ որում կա զոհերի երիտասարդացման միտում: Թրաֆիքինգի ենթարկված անչափահասների թիվը տարեցտարի աճում է, և նման անձինք հատկապես խոցելի են, քանի որ կարող են շահագործվել բազում տարբեր եղանակներով, օրինակ՝ սեռական ծառայությունների ոլորտում, ապօրինի աշխատանքի շուկայում, զինվորական ծառայությունում, ավազակային հարձակումների կամ այլ տեսակի հանցավոր գործողությունների համար, ինչպես նաև կարող են օգտագործվել որպես տնային ծառաներ, կամ էլ ներքին օրգանների դոնորներ:

Սեռական շահագործում

Թրաֆիքինգը սեռական շահագործման նպատակով հիմնականում անդրադառնում է կանանց և աղջիկների վրա, քանի որ հետերոսեքսուալ մարմնավաճառությունը շարունակում է լինել մարմնավաճառության առավել տարածված և շահութաբեր ձևը: Այնուամենայնիվ, արական

սեռի զոհերի, մասնավորապես պատանիների և տղաների թրաֆիքինգը մարմնավաճառության նպատակով, նույնպես աճում է, և չպետք է բացառվի: Վերջին տվյալների վրա հիմնված գնահատականները վկայում են այն մասին, որ կա աճի միտում երեխաների ներքին և արտաքին թրաֆիքինգի ոլորտում, ընդ որում նրանք թրաֆիքինգի են ենթարկվում մանկապղծական չարաշահումների, սեռական զբոսաշրջության, ինչպես նաև առևտրային և ոչ առևտրային մանկական պոռնկագրության արտադրության նպատակով, և այն մասին, որ նման վտանգը կարող է հավասարապես սպառնալ ինչպես աղջիկներին, այնպես էլ տղաներին:

Սեռական շահագործման դերն ու կարևորությունն աշխատանքային շահագործման համար իրականացվող թրաֆիքինգի պարագայում կախված է համապատասխան աշխատանքի տեսակից, ասել է թե՝ եթե աշխատանքային շահագործումը պահանջում է ծանր ֆիզիկական աշխատանք հանքերում, դաշտերում կամ ձկնորսական նավերի վրա, ապա այն ավելի կտարածվի արական, այլ ոչ իգական սեռի անձանց վրա: Եվ հակառակը՝ եթե աշխատանքը պահանջում է թեթև գյուղատնտեսական գործունեություն, օրինակ՝ բերքահավաք, աշխատանք ընդհատակյա արտադրամասերում, կամ տնային ծառայություն, ապա առավել հավանական է, որ զոհը կլինի իգական սեռի: Բոլոր տարիքի տղամարդկանց, կանանց կամ երեխաների հարկադիր աշխատանքի նպատակով շահագործումը հաճախ տեղի է ունենում որևէ առանձին տարածաշրջանում և սովորաբար ընդգրկում է տղաների և տղամարդկանց ծանր ֆիզիկական աշխատանքը հանքավայրերում, ձկնորսական նավերի վրա, բերքահավաքի ժամանակ, ինչպես նաև կանանց և աղջիկների աշխատանքն ընդհատակյա արտադրամասերում և տնային ճորտություն:

Ազգություն կամ էթնիկական պատկանելիություն

Զոհերի մատակարարման շղթան կախված է մի շարք գործոններից, ինչպիսիք են՝ աղքատությունը, խտրականությունը և հնարավորությունների բացակայությունը: Թեև չի կարելի բացառել նման հնարավորությունը, սակայն պակաս հավանական է, որ թրաֆիքինգի զոհը ծագումով լինի հարուստ արդյունաբերական երկրից: Այնուամենայնիվ, լինում են բացառություններ: Մասնավորապես, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկվող երեխաների վերաբերյալ առկա տեղեկությունները վկայում են այն մասին, որ աճող թիվ է կազմում թրաֆիքինգն

այնպիսի հարուստ արդյունաբերական երկրներից, ինչպիսիք են, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգները, ընդ որում խոսքը հաճախ գնում է թրաֆիքինգի ներքին հոսքերի մասին: Բացի այդ, որոշ տարածաշրջաններում որոշակի էթնիկական փոքրամասնություններ կարող են ավելի խոցելի լինել թրաֆիքինգի նկատմամբ, քան ազգաբնակչության այլ խմբերը:

Տեղի, տարածաշրջանային կամ ազգային պայմանների, ինչպես նաև թրաֆիքինգի միտումների իմացությունն օգտակար է այս համատեքստում: Երկրի ներսում և տարածաշրջանում ծավալվող թրաֆիքինգի օրինաչափությունները հաճախ պայմանավորված են ձգողականության գործոնով, որն առաջանում է այս կամ այն երկրի որոշակի քաղաքներում կամ որոշ երկրների միջև: Տնտեսական աճը և հաճախորդների պահանջարկն այն նշանակալի գործոններն են, որոնք անդրադառնում են թրաֆիքինգի ուղղությունների, աստիճանի և բաղադրության վրա՝ անկախ այն բանից, թե այն տեղի է ունենում տեղական, տարածաշրջանային, թե միջազգային մակարդակով:

Փաստաթղթեր

Թրաֆիքինգի շղթայի աշխարհագրական տարածումն անդրադառնում է համապատասխան փաստաթղթերի օգտագործման և կարևորության վրա: Պարզ է, որ երկրի ներսում իրականացվող թրաֆիքինգի պարագայում անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը միշտ չէ, որ նույն նշանակությունն ունի, ինչ արտաքին թրաֆիքինգի պարագայում: Այդ հարցը կարող է նույնիսկ չառաջանալ, եթե չկա որևէ իրավական պահանջ անձը հաստատող փաստաթուղթ միշտ իր մոտ ունենալու վերաբերյալ, ինչպես նաև այն դեպքերում, երբ մարդավաճառները խլում են անձը հաստատող փաստաթղթերն իրենց զոհերից՝ վերջիններիս վերահսկելու և հնազանդության հարկադրելու նպատակով: Տարածաշրջանային համատեքստում իրական կամ կեղծ փաստաթղթերի օգտագործումը կարող է պակաս տարածված լինել, քանի որ զոհերը և մասնավորապես, երեխաները հաճախ չունեն որևէ անձը հաստատող փաստաթուղթ և ապօրինաբար հատում են «թափանցիկ» սահմանները: Այստեղ կրկին իրավիճակը տարբերվում է՝ կախված երկրից և տարածաշրջանից և պայմանավորված է սահմանային կետերում իրականացվող վերահսկողությամբ, ինչպես նաև կեղծ փաստաթղթերի ձեռքբերման հեշտությամբ կամ դժվարությամբ:

Փաստաթղթերի օգտագործումն ավելի տարածված է

միջմայրցամաքային թրաֆիքինգի պարագայում, քանի որ այդ դեպքերում ավելի հավանական է օդանավերով, գնացքներով կամ նավերով ճանապարհորդելը, իսկ ապօրինի մուտքն իրականացվում է բացահայտ, և դրա համար պահանջվում է անձը հաստատող և ճամփորդական փաստաթղթերի առկայությունը: Փաստաթղթերը կարող են իրական լինել, դրանցում կարող են զոհի վերաբերյալ ճիշտ տվյալներ բերված լինել, կամ էլ նման փաստաթղթերը կարող են կեղծված լինել, ընդ որում դրանցում նշվեն մտացածին անուններ կամ քաղաքացիություններ, և ինչու չէ՝ նաև կեղծ ծննդյան տարեթվեր՝ անչափահասների տարիքն ավելացնելու նպատակով: Նման դեպքերում մարդավաճառները կարող են զոհին տրամադրել անձնագրեր կամ ճամփորդական փաստաթղթեր՝ նրան անցկացնելով ներգաղթային կամ ոստիկանության հսկիչ կետերով և այնուհետև դրանք հետ վերցնելով:

Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի համատեքստում տարածաշրջանային և միջմայրցամաքային մակարդակով փաստաթղթերի խլումը վերահսկողության և հարկադրման մեխանիզմների տարածված տեսակ է հանդիսանում, որին դիմում են մարդավաճառները. այսպիսով, զոհի մոտ փաստաթղթերի բացակայությունը նույնպես կարող է թրաֆիքինգի փաստի հիմնավոր ցուցիչ հանդիսանալ: Այդուհանդերձ, հարկ է մտապահել, որ նույնը վերաբերում է ապաստան հայցողների և մաքսանենգ ճանապարհով երկիր մարդկանց ներմուծման որոշ դեպքերին, ուստի և այս ցուցիչը պետք է դիտարկվի ըստ արժանվույն և ելնելով յուրաքանչյուր դեպքի համատեքստից և հանգամանքներից:

Վերջին գտնվելու վայրը

Դեպի ծառայություն մատուցող կազմակերպություն ուղղորդված զոհի վերջին գտնվելու վայրը միշտ կարող է որպես կարևոր ցուցիչ ծառայել: Օրինակ, եթե անձը հայտնաբերվում է հանքավայրում, գյուղատնտեսական աշխատանքների իրականացման վայրում, ընդհատակյա արտադրամասում, որևէ ռեստորանի խոհանոցում, ձկնորսական նավի վրա, տնային ծառայության մեջ կամ որևէ այլ վայրում, որը հայտնի է սեռական շահագործման առնչությամբ, օրինակ՝ հասարակաց տներում, պատվերով մարմնավաճառներ մատակարարող գործակալություններում, բարերում, հյուրանոցներում և նմանատիպ վայրերում, ապա այդ հանգամանքը հիմնավոր վկայություն է այն մասին, որ տեղի է ունեցել թրաֆիքինգի դեպք,

քանի որ նման պարագայում սերտ կապ կա շահագործման և (կամ) ապօրինի գործունեության համար առկա պայմանների միջև:

Համատեքստ

Ուղղորդման հիմքում ընկած հանգամանքները նույնպես կարող են որպես հիմնական ցուցիչներ ծառայել, իսկ ուղղորդող գործակալությունը կարող է ըստ պահանջի ներկայացնել այդ հանգամանքների մասին հնարավորինս շատ տեղեկություններ: Օրինակ, ոստիկանության կողմից հասարակաց տներից մարմնավաճառների բերման ենթարկման դեպքերը կամ այսպես կոչված «հաճախորդի փրկության» միջոցառումները, օրինակ՝ ներգաղթային ծառայության կամ իրավապահ մարմինների անակնկալ այցելություններ գործարան կամ ագարակ, միշտ կարող են այս առումով կարևոր լինել: Այն դեպքերը, որոնք ընդգրկում են թրաֆիքինգի զոհերի նույնականացումը և փրկությունն այլ գործընկեր հասարակական կազմակերպությունների կողմից, նույնպես կօգնեն դյուրացնել նախնական զննման գործընթացը:

Չարաշահումների նշաններ

Ֆիզիկական վնասի ցանկացած նշաններ կարող են վկայել թրաֆիքինգի մասին: Հատկանշական է, որ մարդավաճառներն իրենց զոհերին ենթարկում են շարունակական ֆիզիկական և հոգեբանական չարաշահումների, ինչը սովորաբար տեղի չի ունենում մարդկանց մաքսանենգությամբ զբաղվող անձանց պարագայում: Այստեղ գնահատվող հիմնական հարցը, որը կախված է նման տեղեկությունների առկայությունից, այն է, թե արդյոք չարաշահումները շարունակվում են: Ինչպես երևում է նախկին դեպքերի ուսումնասիրությունից, մաքսանենգ ճանապարհով երկիր ներմուծված անհատները ենթարկվում են չարաշահումների ու վտանգների և նույնիսկ մահանում են փոխադրման փուլում, սակայն հարկավոր է տարբերակել այս դեպքերը՝ որոշելով, թե արդյոք խոսքը գնում է թրաֆիքինգի, թե մաքսանենգ ճանապարհով մարդկանց երկիր ներմուծման դեպքերի մասին: Այս հարցին պատասխանելու համար պետք է որոշել նոր վայր ժամանելուց հետո չարաշահումների աստիճանն ու հաճախականությունը, ինչպես նաև՝ մարդավաճառների հետ ունեցած հարկադրման, խաբեության և շահագործման վրա հիմնված հարաբերությունները:

Ուղղորդող գործակալության գնահատական

Ուղղորդմամբ զբաղվող այս ոլորտի այլ մասնագետների, ինչպիսիք են՝ իրավապահ մարմինների, ներգաղթային ծառայությունների և այլ ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցների կարծիքներն ու գնահատականները միշտ կարևոր են նախնական զննման գործընթացի համար և պետք է ընդգրկվեն ընդհանուր գնահատականում:

Ծառայություն մատուցող կազմակերպության ունեցած ներկայիս գիտելիքներն ու փորձը

Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է գնահատեն վերոնշյալ բոլոր տարրերն այն հարցադրումով, թե արդյոք որևէ առանձին դեպքի վերաբերյալ առկա տեղեկությունները համապատասխանում են թրաֆիքինգի գործողություններին և տվյալ տարածաշրջանին բնորոշ գործելակերպի վերաբերյալ նրանց ունեցած գիտելիքներին և փորձին, թե ոչ:

Յուրաքանչյուր ցուցիչ կարող է մեկնաբանվել մի քանի տարբեր եղանակներով: Ուստի, որոշում կայացնելիս կարևոր է գնահատել դրանք իրար հետ միասին:

2.3 Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույց

2.3.1 ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ[7]

Հետևյալ ուղեցույցն առաջարկվում է կիրառել անչափահասների (18 տարին չլրացած ցանկացած անձ) հետ անցկացվող հարցազրույցների պարագայում: Անչափահասների հետ հարցազրույցների անցկացման և խնամքի վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում կարելի է գտնել 5-րդ գլխի 5.6 բաժնում:

- Միայն աշխատակազմի այն անդամները, ովքեր ուսուցում են ստացել երեխաների հատուկ կարիքների և իրավունքների վերաբերյալ, կարող են հարցազրույց անցկացնել մանկահասակ զոհերի հետ:

- Հնարավորության դեպքում՝ մանկահասակ զոհերի հետ պետք է հարցազրույց անցկացնեն նույն սեռի աշխատակազմի անդամները:
- Հարկավոր է հնարավորինս շատ բան իմանալ երեխայի մասին նախքան հարցազրույցը՝ ներկայանալով պարզ և բարեհամբույր եղանակով (խոսելով երեխային ծանոթ բաների մասին՝ նրա հետ կապ հաստատելու նպատակով):
- Ստեղծել մի տարածք, որն ապահով և հարմար կլինի զրույցի համար (տեղադրել այնտեղ խաղալիքներ, գրքեր, խաղեր և այլն՝ հուզական կապ հաստատելու նպատակով):
- Հուզական կապ հաստատեք՝ խոսելով այնպիսի թեմաների շուրջ և անելով այնպիսի բաներ, որոնք կապված չեն թրաֆիքինգի արդյունքում ունեցած ապրումների հետ (օրինակ՝ քննարկեք երեխային ծանոթ հարցեր, խաղացեք նրա հետ):
- Քննարկումների համար բավարար ժամանակ հատկացրեք և մի շտապեք:
- Մթնոլորտը զրույցի ընթացքում պետք է լինի պարզ և ոչ պաշտոնական (օրինակ՝ հարցաքննող տեսք մի ընդունեք և մի պնդեք, որ Ձեզ անպայման պատասխանեն):
- Օգտագործեք պատշաճ և երեխայի համար հեշտ ըմբռնելի ձևակերպումներ (կրկնեք և օգտագործեք երեխայի նույն արտահայտությունները):
- Բացատրեք իրողություններն այնպես, որ երեխան կարողանա դրանք հեշտությամբ ընկալել (հնարավորության դեպքում՝ օգտագործեք պատկերավոր միջոցներ):
- Հարցերը հարկավոր է հարմարեցնել՝ հաշվի առնելով երեխայի տարիքը և մտավոր կարողությունները:
- Սկսեք բաց հարցերից՝ թույլ տալով երեխային ներկայացնել իր պատմությունը:
- Խուսափեք ակնարկող հարցերից, օրինակ, «Արդյո՞ք տվյալ անձը չարաշահումներ է գործադրել» և տվեք ավելի բաց հարցեր, օրինակ, «Ի՞նչ է արել տվյալ անձը»:
- Մի փորձեք մանրամասներ կորզել երեխայից, երբ նշաններ կան, որ նա ասել է իրեն հայտնի ամեն բան:
- Այնուամենայնիվ, հարկավոր է մտապահել, որ երեխաները հակված են բաց թողնել որոշ տեղեկություններ, եթե նրանց

չի տրվում համապատասխան հարց, ինչպես նաև հակված են տալու այն պատասխանը, որն ըստ նրանց ցանկանում է լսել հարցազրույց անցկացնող անձը:

- Անչափահասների հետ հարցազրույցները պետք է անցկացվեն ծնողի ներկայությամբ:
- Այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, ծնողի բացակայության պարագայում կամ այն դեպքերում, երբ կան կասկածներ կամ հայտնի փաստեր, որ ընտանիքը ներգրավված է թրաֆիքինգի գործընթացում, պատրաստված խնամակալի, հոգեբանի կամ սոցիալական աշխատողի ներկայությունը պարտադիր է:
- Ավարտեք հարցազրույցն այնպես, որ երեխան զգա, որ ինքը ճիշտ է վարվել, և հայտնեք նրան, որ պատրաստ կլինեք խոսել նրա հետ, եթե նա կրկին ունենա դրա կարիքը:

2.3.2 ԶՈՀԻ ՊԱՏԱՍԽԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ

- **Անկախ այն բանից, թե արդյոք տվյալ անհատը դարձել է մարդավաճառների զոհ, մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած կամ ապօրինի միգրանտ, ով շահագործման և չարաշահումների է ենթարկվել կամ այլ առումներով խոցելի է, միևնույն է տվյալ անհատի նկատմամբ պետք է ցուցաբերվի նրբանկատ վերաբերմունք՝ հարգելով նրա մարդու իրավունքները:**
- **Թրաֆիքինգի զոհերի հետ հարցազրույցների անցկացման առաջարկվող ուղեցույցը ներկայացվում է «Թրաֆիքինգից տուժած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ» բաժնում, որը բերված է ստորև:**

Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցներն ամենայն հավանականությամբ դժվար խնդիր կդառնան ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի այն անդամների համար, ովքեր գործ ունեն մի անհատի հետ, ով կարողացել է կենդանի մնալ և փախուստի դիմել միայն իր շրջահայացության, բոլորի նկատմամբ կասկածամիտ և տեղեկատվություն հայտնելու առումով խիստ զգույշ լինելու շնորհիվ: Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ընթացքում հաճախ պատահում է, որ թրաֆիքինգի զոհ

դարձած անձինք արձագանքում են հարցազրույց անցկացնող անձի գործողություններին կրած տրավմայով պայմանավորված թշնամական, կասկածամիտ, ագրեսիվ կամ պաշտպանողական վարվելակերպով, կամ էլ դրսևորում են վերոնշյալի համադրությամբ պայմանավորված վարքագիծ: Նախնական հարցազրույցի ընթացքում շատ բարդ կլինի բավարար տեղեկություններ ստանալ՝ վերջնականապես որոշելու, թե արդյոք տվյալ անձն իրականում հանդիսանում է թրաֆիքինգից տուժած անձ, թե ոչ:[9]

Հնարավոր է, որ տվյալ անձն ի վիճակի կամ պատրաստակամ չլինի հարցազրույց անցնել և պատասխանել այն հարցերին, որոնք կապված են կրած տրավմայի կամ ցավագին իրադարձությունների հետ: Նման անկարողությունը կամ դժկամությունը կարող է բազում պատճառներ ունենալ: Բացի հաճախ հիմնավորված մտավախություններից և անհանգստությունից, որոնք կապված են նրանց կամ նրանց ընտանիքի անդամների համար հնարավոր հետևանքների հետ, նման անձինք կարող են իրականում տառապել թույլ կամ սուր արտահայտված հիշողության կորստից, որը պայմանավորված է իրենց կրած տրավմայով: Հիշողության կորուստն առանձնապես սուր է դրսևորվում սկզբնական տրավմատիկ շրջանում կամ այն ժամանակահատվածում, երբ տվյալ անձն առաջին անգամ է գիտակցում այն վտանգավոր իրավիճակը, որում նա հայտնվել է, և որը, իհարկե, հենց այն ժամանակահատվածն է, որը հետաքրքրում է պաշտոնատար անձանց և այլ շահագրգիռ անձանց: Այդուհանդերձ, մանրամասներ կորզելը մի անձից, ով չի կարող կամ չի ցանկանում վերհիշել դրանք, կամ էլ հարցադրումներն այնպիսի իրադարձությունների կամ ժամանակահատվածների վերաբերյալ, որոնք տվյալ անձը դուրս է մղել իր հիշողությունից, կարող են մեծացնել նրա անհանգստությունը և խափանել այլ թեմաների շուրջ տեղեկատվություն ձեռք բերելու կարողությունը:

Մանրամասներ հայտնելու դժկամություն

Թրաֆիքինգի զոհերը կարող են հիմնավոր պատճառներ ունենալ իրենց վերապրած փորձը դժկամությամբ քննարկելու համար, հատկապես՝ նախնական հարցազրույցների շրջանակներում: Այդ հիմնավոր պատճառներից մի քանիսը բերված են ստորև: Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցները պետք է տեղյակ լինեն այս պատճառների մասին՝ զոհերի նկատմամբ համբերատար և դատողություններից զերծ վերաբերմունք դրսևորելու նպատակով:

- **Վախ մարդավաճառներից:** **Հնարավոր է, որ զոհերը մտավախություններ ունենան իրենց կամ իրենց ընտանիքի անդամների նկատմամբ հնարավոր պատժամիջոցների առնչությամբ:**
- **Վախ իրավապահ մարմիններից:** **Հնարավոր է, որ զոհերն օրենքի խախտման համար ձերբակալվելու մտավախություն ունենան՝ պետական սահմանն ապօրինաբար հատելու, առանց թույլտվության աշխատելու կամ թրաֆիքինգի հետ կապված ապօրինի գործողություններով (մարմնավաճառություն, թմրամիջոցների օգտագործում և այլն) զբաղվելու համար:**
- **Հավատարմության զգացում մարդավաճառի նկատմամբ:** **Զոհերը կարող են անձնական հարաբերություններ ունենալ այն մարդկանց հետ, ովքեր իրենց թրաֆիքինգի են ենթարկել: Նման կապերի առկայությունը չպետք է ենթադրաբար վկայի այն մասին, որ տվյալ անձը զոհ չի հանդիսանում, կամ, որ նա գործել է սեփական կամքով:**
- **Վստահության բացակայություն:** **Թրաֆիքինգի ենթարկվելու ընթացքում զոհերի վստահությունը մարդկանց նկատմամբ խիստ նվազում է: Ինքնապաշտպանական բնազդը կարող է նրանց մոտ անվստահության զգացում առաջացնել այլոց նկատմամբ՝ դարձնելով նրանց կասկածամիտ ծառայություն մատուցող կազմակերպությունների շարժառիթների հանդեպ:**
- **Հիշողության կորուստ:** **Կրած տրավմայի կամ այլ պատճառներով (օրինակ, թմրամիջոցների կամ ալկոհոլի չարաշահում) զոհերը կարող են ի վիճակի չլինել վերհիշել իրենց հետ պատահած իրադարձությունների բոլոր մանրամասները: Նրանք փորձում են լրացնել իրենց հիշողությունից ջնջված դրվագները: Զոհերի պատմությունների մանրամասների փոփոխությունները կարող են պայմանավորված լինել հիշողության կորստով, և չպետք է մեկնաբանվեն այն իմաստով, որ զոհը դիտավորյալ խուսափում է համագործակցությունից:**

Եթե տվյալ անձը ցուցաբերում է սուր անհանգստության նշաններ, ապա հարցազրույցը պետք է դադարեցվի կամ կասեցվի այնքան ժամանակով, մինչև հնարավոր լինի շարունակել այն: Կարևոր է հարցազրույցի ընթացքում վերահսկել հաղորդակցման ոչ բառային դրսևորումները, ինչպիսիք են՝ վախի, անհանգստության կամ

գերհոգնածության նշանները: Ցանկացած պարագայում, երբ կան հիմքեր կարծելու, որ տվյալ հարցաքննվող անձը տառապում է սուր տրավմայից, հարկավոր է նախքան շարունակելը դիմել հոգեբանի օգնությանը:

Ստորև ներկայացված հարցազրույցների անցկացման ուղեցույցի շրջանակներում ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի հարցազրույց անցկացնող անդամը պետք է ըմբռնում դրսևորի և բացատրի, որ հարցազրույցի անցկացման նպատակն է որոշել, թե ինչպես իրենց կազմակերպությունը կարող է առավել արդյունավետ կերպով օգնել և պաշտպանել զոհին, ընդ որում դա կարելի է անել միայն զոհի վերաբերյալ համապատասխան տեղեկությունների առկայության դեպքում: Նախնական զննման գործընթացի նպատակն է որոշել, թե արդյոք անհատն իրականում ենթարկվել է թրաֆիքինգի, և ստորև բերված հարցերը կոչված են աջակցելու այս գործընթացին:

Հարկավոր է ամեն ջանք գործադրել տվյալ անհատին հանգստացնելու համար, օրինակ՝ ապահովելով հարցազրույցի անցկացման սենյակում հարմարավետ կահույք և միջավայր, ինչպես նաև բավարարելով տվյալ անձի տարրական կարիքները, ասել է թե՝ ստուգելով, թե արդյոք նա քաղցած չէ կամ ծարավ կամ չի ցանկանում օգտվել զուգարանից:

Հարկավոր է հարցեր տալ խոցելի դիրքում գտնվող և հավանաբար տրավմա կրած զոհի և ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամ հանդիսացող և հարցազրույց անցկացնող անձի միջև առաջին հանդիպման ընթացքում: Այն, թե ինչպես է հարցազրույց անցկացնող անձն իրականացնում սկզբնական հարցազրույցը, կախված է իրավիճակի նրա գնահատականից, երբ ի թիվս այլ իրողությունների՝ նա պետք է հաշվի առնի տվյալ անձի հոգեվիճակը և արձագանքելու պատրաստակամությունը: Ակնհայտ է, որ հարցաշարի ձևաչափը չի հանգստացնի թրաֆիքինգից տուժած անձին, ուստի և հարկավոր է հնարավորինս խուսափել այս մեթոդից: Հարցազրույց անցկացնող անձը կարող է որոշել, թե ինչպիսի հարցադրումներ են համապատասխանում յուրաքանչյուր առանձին վերցված դեպքին, և համապատասխանաբար շտկել հարցազրույցի ընթացքը:

Հաշվի առնելով հարցազրույցի նշանակությունը նախնական զննման գործընթացի շրջանակներում՝ խիստ կարևոր է, որ հարցաքննվող անձն իրականում հասկանա ասվածը: Եթե կա որևէ կասկած առ այն, որ տվյալ անձը չի հասկանում հարցազրույցի համատեքստը կամ

մանրամասնները, ապա հարկավոր է հնարավորության դեպքում ապահովել թարգմանչի ներկայությունը:

Հարցազրույց անցկացնող անձը պետք է մտապահի, որ այս բաժնում բերված ցուցիչներն ու հարցերը նախ և առաջ կոչված են օգնելու նախնական զննման գործընթացում, և ամենևին էլ պարտադիր չէ, որ դրանք անշեղորեն կիրառվեն յուրաքանչյուր առանձին դեպքում: Հարկավոր է հնարավորինս հարմարեցնել հարցազրույցի անցկացման ոճը տվյալ զոհի առողջական և հոգեկան վիճակին:

2.3.3 ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Նախքան թրաֆիքինգից տուժած անձանց հետ հարցազրույց անցկացնելը կամ նրանց աջակցելը, ծառայություն մատուցող բոլոր կազմակերպությունների աշխատակիցները պետք է ուշադիր կարդան և ուսումնասիրեն սույն ձեռնարկի 1-ին հավելվածը թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքների վերաբերյալ:

2.3.4 ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս գլխի վերջում (Հավելված I) բերված նախնական զննման շրջանակներում հարցազրույցի անցկացման ձևի օրինակը նախատեսված է թրաֆիքինգից տուժած անձանց նույնականացման գործընթացին նպաստելու համար: Նշված կամ նմանատիպ ձևը կարելի է լրացնել այն անհատների հետ հարցազրույց անցկացնելիս, ում որպես նույնականացված թրաֆիքինգի զոհ կազմակերպություն են ուղղորդում այլ գործակալությունները, օրինակ՝ հասարակական կազմակերպությունները կամ ոստիկանությունը: Անկախ ուղղորդող գործակալության գնահատականից՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը կարող է որոշել շարունակել տվյալ ընթացակարգը՝ հաստատելու սկզբնական նույնականացման արդյունքները և պաշտոնապես բացելու տվյալ անհատի անձնական գործը:

2.3.4.1 Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ

Ստորև բերված հիմնական ստուգման ցանկը ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամների համար ծառայում է որպես հարցազրույցների անցկացման հնարքների ամփոփ ուղեցույց: Թրաֆիքինգից տուժած անձանց հետ հարցազրույցի անցկացմանը վերաբերող մանրամասն տեղեկությունները ներկայացված են 1-ին հավելվածում: Հարցազրույցն սկսելուց առաջ պետք է ուշադիր կարդալ թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկայի սկզբունքները:

Պայմաններ

- Հնարավորության դեպքում՝ ապահովեք, որ հարցազրույցն անցկացվի առանձին փակ տարածքում, որտեղ կողմնակի անձինք չեն կարող պատահաբար լսել խոսակցությունը կամ ընդհատել այն:
- Թույլատրվում է միայն զոհի, հարցազրույց անցկացնող անձի (անձանց), այն է՝ թարգմանչի և որակավորված աջակցող անձի (օրինակ՝ երեխայի խնամակալի, իրավախորհրդատուի կամ հոգեբանի) ներկայությունը՝ անհրաժեշտության դեպքում:
- Եթե կասկածներ կան, որ անհատը չի հասկանա հարցազրույցի անցկացման լեզուն, ապա հարկ է ամեն ջանք գործադրել թարգմանչի ծառայություններ ապահովելու համար:
- Հարկավոր է անջատած պահել բջջային հեռախոսները:
- Փակ տարածքի առկայության դեպքում դռան վրա հարկավոր է փակցնել «Չխանգարել» կամ նմանատիպ բովանդակությամբ մի ցուցանակ՝ հարցազրույցի ընդհատումներից զերծ մնալու համար:
- Եթե անհնար է առանձին փակ տարածք գտնել, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է փորձի գտնել հնարավորինս առանձնացված տարածք, որտեղ կողմնակի անձինք չեն կարողանա պատահաբար լսել խոսակցությունը:
- Հարցազրույց անցկացնելիս հարկավոր է զերծ մնալ դատողություններից կամ հարցական ոճից:
- Փորձեք այնպիսի կապ հաստատել անհատի հետ, որպեսզի նա ինքն իրեն զգա հարգված, քանի որ իր ասածներն արժանահավատ են համարվում:

Ներկայացում

- Հարցազրույց անցկացնող անձը պետք է ներկայանա անհատին և պատմի տվյալ կազմակերպությունում իր ունեցած դերակատարման մասին:
- Համոզվեք, որ անհատն իրեն զգում է անվտանգ և հարմարավետ:
- Պարզեք, թե արդյոք նա քաղցած չէ կամ ծարավ կամ չի ցանկանում օգտվել զուգարանից:
- Համոզվեք, որ տվյալ անհատը լավ է զգում իրեն, հանգիստ է և չունի շտապ բուժօգնության կարիք:
- Եթե անհատը հայտնում է որևէ անհապաղ բուժօգնության խնդրի մասին, ապա հարցազրույցը պետք է ընդհատել և շարունակել միայն բուժաշխատողի այցից և անհատի բուժզննումից հետո:

Նկարագրություն

- Համառոտ ներկայացրեք հարցազրույցի նպատակը և տվյալ կազմակերպության դերը թրաֆիքինգի ենթարկած անձանց աջակցության կազմակերպման և տրամադրման գործում:
- Բացատրեք, թե ինչ նպատակով են գործածվելու հարցազրույցի ընթացքում հայտնած տեղեկությունները:
- Բացատրեք, որ զրույցի ընթացքում կարող են տրվել հարցեր տվյալ անհատին պատահած դեպքերի վերաբերյալ, իսկ որոշ թեմաներ կարող են վիշտ ու ցավ պատճառել և արթնացնել տհաճ հիշողություններ:
- Ասեք հարցազրույցի մասնակցին, որ նա կարող է որոշ ժամանակ մտածել նախքան հարցերին պատասխանելը, իսկ անհրաժեշտության դեպքում կարող է ցանկացած պահին ընդմիջում խնդրել:
- Ապահովեք, որ թրաֆիքինգի զոհը հասկանա, որ հարցազրույցը կրում է կամավոր բնույթ, և ինքը պարտավոր չէ պատասխանել որևէ հարցի:
- Այդուհանդերձ, բացատրեք նրան, որ որքան շատ տեղեկություններ տրամադրվեն, այնքան ավելի մեծ օգնություն կկարողանա ցուցաբերել կազմակերպությունը:
- Բացատրեք ծառայություն մատուցող կազմակերպության հնարավոր աջակցության սահմանափակումները (օրինակ՝ եթե

աջակցությունը նախատեսված է միայն թրաֆիքինգից տուժած անձանց, ապօրինի միգրանտների, երեխաների համար և այլն):

- Բացատրեք այն իրողությունը, որ եթե կազմակերպությունն ի վիճակի չլինի տրամադրել ուղղակի աջակցություն, քանի որ տվյալ անհատը չի բավարարում սահմանված պայմաններին, ապա կազմակերպությունը կօգնի գտնել համապատասխան որակավորում ունեցող անձ կամ խումբ, որը կկարողանա մատուցել անհրաժեշտ աջակցությունը:

Նախքան հարցազրույցի սկիզբը պարզաբանվող վերջնական հարցեր

- Տեղեկացրեք հարցազրույցի մասնակցին, որ բոլոր պատասխանները կպահվեն խիստ գաղտնի: Հստակ ասեք, թե ինչպես են գործածվելու տրամադրված տեղեկությունները, ինչպես և ում են դրանք փոխանցվելու:
- Բացատրեք, որ հարցազրույց տվող անձը կարող է ցանկացած պահին հարցեր տալ կամ ճշտել կամ խնդրել կրկնել այն, ինչն արդեն ասվել է:
- Համոզվեք, որ անհատը հստակ հասկացել է այն ամենը, ինչ բացատրվել է:
- Հարցրեք անհատին, թե արդյոք նա ունի հարցեր տվյալ փուլում:
- Հարցրեք անհատին, թե արդյոք նա համաձայն է մասնակցել հարցազրույցին:

2.3.4.2 ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՁԵՎԻ ԼՐԱՑՈՒՄ

Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձևը (տե՛ս Հավելված I) բաղկացած է հետևյալ վեց մասից.

- Գրանցում և դեպքերի տվյալներ
- Հավաքագրման փուլ
- Տեղափոխման փուլ
- Շահագործման փուլ
- Լրացուցիչ ապացույցների նյութ
- Որոշում

Թեև յուրաքանչյուր բաժին պետք է լրացվի, սակայն լրացված նյութի ծավալը կախված է անհատի համագործակցելու պատրաստակամության աստիճանից: Հարցազրույց անցկացնող անձը պետք է հիշի, որ անհատները կարող են դրսևորել մի շարք տարբեր արձագանքներ (օրինակ՝ բացահայտ թշնամանքի դրսևորում կամ տրավմայի վերապրում), ինչպես նաև այն հանգամանքը, որ անհրաժեշտության դեպքում պետք է ըստ հարկի շտկել հարցազրույցի անցկացման ձևը և ժամանակը:

.....

Նախքան հարցազրույցի սկիզբն անհատին պետք է հայտնել հետևյալը.

- **Ծառայություն մատուցող կազմակերպությունը բոլոր պատասխանները պահպանելու է խիստ գաղտնի պայմաններում:**
- **Անհրաժեշտ է պատասխանել հարցերին, որպեսզի ծառայություն մատուցող կազմակերպությունը կարողանա ընտրել տվյալ դեպքում առավել հարմար աջակցության տեսակը:**
- **Հարցերին պատասխանելուց հրաժարվելը կարող է խոչընդոտել ծառայություն մատուցող կազմակերպության կողմից ցանկացած աջակցության տրամադրումը, քանի որ նման կարգի աջակցությունը կարող է նախատեսված լինել միայն թրաֆիքինգից տուժած անձանց համար:**
- **Հարցազրույցի ավարտին տվյալ անձը կտեղեկանա իրեն հասանելի ծառայությունների և աջակցության և այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են տրամադրել դրանք, համապատասխան իրավական աջակցության տեսակների մասին, ինչպես նաև այն մասին, թե երբ և ինչ կարգով կարող է հայտնել իր դեմ գործած քրեորեն պատժելի արարքների մասին:**

.....

Ստորև բերված հարցերը համապատասխանում են այս գլխին հաջորդող 1-ին հավելվածում բերված նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձևի հարցերին: Հետևյալ մեկնաբանությունները ներկայացվում են շատ ընդհանուր, և կարող են ունենալ բացառություններ: Որևէ առանձին հարցի պատասխան, ըստ էության, չի կարող բերել խնդրի լուծմանը. փոխարենը՝ բոլոր պատասխանները պետք է դիտարկվեն համադրմամբ՝ հարցազրույցին նախորդող գնահատման վերոնշյալ ցուցիչների հետ մեկտեղ:

Հավաքագրման փուլ

1. Ինչպե՞ս է հաստատվում կապն անհատի և հավաքագրողի միջև:

Նման կապը հաստատում է կամ թրաֆիքինգով զբաղվող չարագործն իր անձնական կամ ընտանեկան կապերով, կամ ինքը թրաֆիքինգի ապագա զոհը, օրինակ եթե արձագանքում է արտասահմանում աշխատելու մասին հայտարարությանը:

Մասնավորապես հարկադիր աշխատանքի նպատակներով երկրի ներսում կամ տարածաշրջանում իրականացվող թրաֆիքինգի պարագայում հավաքագրումը հաճախ կատարվում է բավականին պարզ եղանակով, օրինակ՝ անհատի կամ նրա ընտանիքի անդամների հետ անմիջական անձնական կապ հաստատելու միջոցով: Երեխաների թրաֆիքինգի պարագայում կարիքավոր ծնողները շատ դեպքերում վաճառում են նրանց կամ թողնում են «հավաքագրողին» (ում դերում կարող է հանդես գալ մոտ կամ հեռու բարեկամ) տանել նրանց՝ կարծելով, որ դրանով նպաստում են իրենց երեխայի բարեկեցիկ կյանքին: Ծնողները հաճախ ակնկալում են, որ որոշակի գումար վաստակելուց և օգտակար հմտություններ ձեռք բերելուց հետո իրենց երեխան տուն կվերադառնա: Հարցազրույց անցկացնող անձը պետք է ուշադիր լինի և իրեն թույլ չտա պարսավանք ինչեցնել նման երեխաների ծնողների հասցեին, ովքեր կարող էին իրականում մեծ հոգատարությամբ վերաբերվել իրենց երեխային և նրան արտասահման ուղարկել միայն այլընտրանք չտեսնելու պատճառով:

Որոշ տարածաշրջաններում աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգը երկար պատմություն ունի և դարձել է տեղական կենսակերպի մի մասը: Շատ հավանական է, որ նման դեպքերում գոյություն չունի հավաքագրման որևէ ֆորմալ կամ ճանաչելի կառույց: Փոխարենը՝ թրաֆիքինգով զբաղվող անձինք կարող են համապատասխան պայմանավորվածություն ձեռք բերել իրենց անձնական կապերի միջոցով այնպիսի գյուղերում կամ քաղաքներում, որտեղ հավաքագրումը կարող է կրել սեզոնային բնույթ՝ պայմանավորված գյուղատնտեսական աշխատանքների կատարման ժամանակով: Որոշ դեպքերում, մասնավորապես՝ հարկադիր աշխատանքի նպատակով իրականացվող թրաֆիքինգի պարագայում, ապագա զոհը կարող է հավաքագրվել միայն բանավոր պայմանավորվածությամբ: Անհատը կարող է արտասահման տեղափոխվել իր կամքով: Այլ դեպքերում կարող են գործել աշխատանքային միգրացիային նպաստող շատ համակարգված

մեխանիզմներ, որոնց հետևում կարող է թաքնված լինել թրաֆիքինգի նպատակով հավաքագրումը:

Սեռական շահագործման և անդրազգային տեղաշարժերի պարագայում հավաքագրումը երբեմն կատարվում է տպագիր մամուլում, ռադիոյով, համացանցով կամ հեռուստատեսությամբ հայտարարությունների միջոցով: Որպես կանոն, նման հայտարարություններն առաջարկում են արտասահման գնալու տարբեր հնարավորություններ, օրինակ՝ աշխատանքի առաջարկներ, լեզվի դասընթացներ կամ զբոսաշրջություն: Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ երիտասարդ կանանց հավաքագրում է մի տղամարդ, ով որոշ ժամանակ է ծախսում և ջանք գործադրում նրանց ընկերը ձևանալու համար նախքան նրանց թրաֆիքինգի ենթարկելը: Ինչպես տղամարդ, այնպես էլ կին հավաքագրողները կարող են ընկերություն հաստատել ապագա կին զոհերի հետ՝ ձևանալով ոչ թե որպես նրանց ընկերը կամ ընկերուհին, այլ՝ պարզապես բարի մարդ, ով պատրաստակամ է օգնել աղջիկներին հաղթահարել ընկճվածությունը (օրինակ՝ տնտեսական խնդիրների կամ բարդ ընտանեկան հարաբերությունների պարագայում): Նման հավաքագրողները խաբում են իրենց զոհերին շռայլ կյանքի պատմություններով (որոնց հերոսները ենթադրաբար ամեն ինչի հասել են ապագա զոհերին առաջարկվող աշխատանքի շնորհիվ) և հավաստիացնում են նրանց, որ իրենք էլ կարող են նման կյանք վարել:

2. Ինչ աշխատանք էին Ձեզ խոստացել, կամ ինչ աշխատանք էիք Դուք ակնկալում Ձեր երկրի մեկ այլ բնակավայրում կամ արտասահմանում: Ինչպիսի՞ վարձատրություն և աշխատանքային պայմաններ է գործատուն խոստացել կամ նշել նպատակակետ երկրում:

Թրաֆիքինգը ենթադրում է շահագործման հետ կապված մի շարք իրավիճակներ, և այն հարցը, թե արդյոք տվյալ անհատը նախապես քաջատեղյակ էր աշխատանքի բնույթին կամ աշխատանքային պայմաններին, կախված է տվյալ դեպքի հանգամանքներից և թրաֆիքինգով զբաղվող չարագործների գործելաոճից: Հաստատ պարզ է միայն այն, որ անհատին խաբել են աշխատանքի բնույթի, կամ պայմանների և (կամ) վարձատրության վերաբերյալ: Հնարավոր է նաև, որ թրաֆիքինգի զոհերին խաբեն աշխատանքի կամ գործունեությանն առնչող բոլոր հարցերի կամ միայն մի քանի հարցի վերաբերյալ: Օրինակ, հնարավոր է, որ ապագա զոհերն իմանան ակնկալվող աշխատանքի մասին, սակայն սխալ պատկերացում ունենան

աշխատանքային պայմանների կամ վարձատրության չափերի մասին: Այդպես, հավաքագրողները կարող են ասել կանանց և աղջիկներին, որ իրենք աշխատելու են որպես մատուցողուհիներ կամ պարուհիներ, սակայն չասել, թե ինչպիսի «ծառայություններ» պետք է մատուցեն իրենց հաճախորդներին: Քիչ չեն այն դեպքերը, երբ թրաֆիքինգի ապագա զոհերին հայտնի է իրենց աշխատանքի բնույթը, սակայն հայտնի չէ, որ իրենք պահվելու են ստրկանման պայմաններում՝ ցածր վարձատրությամբ կամ առհասարակ առանց վարձատրության:

Որոշ դեպքերում ինչպես ծագման, այնպես էլ նպատակակետ երկրներում տեղական իշխանությունները կամ կազմակերպությունները կարող են տեղյակ լինել որոշ աշխատանքի խոստումների կամ գործածված հավաքագրման ռազմավարությունների մասին: Տեղի հետախուզական մարմինները կարող են օգտակար լինել որոշակի թրաֆիքինգի ցանցեր հայտնաբերելու գործում:

3. Արդյո՞ք հավաքագրողը նախապես որոշակի գումար է ստացել:

Ֆինանսական պայմանավորվածությունները հաճախ հույժ կարևոր են, քանի որ հանցագործությունը սովորաբար կատարվում է նյութական շահի համար: Այդուհանդերձ, հարկավոր է հաշվի առնել, որ թրաֆիքինգն իրականացվում է նաև այլ դրդապատճառներով, օրինակ՝ թրաֆիքինգ զինվորական ծառայության, հարկադրողական ամուսնության կամ տնային ճորտության նպատակով:

Շատ անգամ թրաֆիքինգը ստանում է պարտքային ճորտության որևէ դրսևորում, որի դեպքում զոհին պահում են ճորտության պայմաններում և ստիպում մարել պարտքը թրաֆիքինգ իրականացնող անձի կողմից պահվող գումարների հաշվին:

4. Արդյո՞ք տվյալ անձին շահագործման նպատակով իր ծագման երկրից տեղափոխել են արտասահման կամ նույն երկրի մեկ այլ բնակավայր՝ բռնություն գործադրելով:

Որոշ դեպքերում թրաֆիքինգի զոհ դարձած անձանց, մասնավորապես՝ երեխաներին կամ չափահաս երիտասարդներին առևանգում են: Անձի առևանգման փաստը գրեթե միանշանակ վկայում է թրաֆիքինգի դեպքի մասին:

Տեղափոխման փուլ

5. Ո՞վ է հոգացել ճանապարհածախսը:

Ինչպես սեռական, այնպես էլ աշխատանքային շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգի ապագա զոհերը սովորաբար անապահով են և հաճախ ի վիճակի չեն հոգալ իրենց ճանապարհածախսը: Որոշ դեպքերում, թրաֆիքինգով զբաղվող չարագործները վճարում են այդ ծախսերն իրենց հավաքագրման ռազմավարության շրջանակներում: Այդուհանդերձ, նպատակակետ երկիր ժամանելուց հետո չարագործները վերցնում են թրաֆիքինգի զոհերի վաստակած գումարը և վերահսկում նրանց այդ պարտքի միջոցով: Յուրաքանչյուր նման պատմություն գրեթե միանշանակ վկայում է թրաֆիքինգի դեպքի մասին: Հարկ է նաև նշել, որ մարդկանց մաքսանենգության հետ կապված շատ դեպքերում, մաքսանենգությամբ զբաղվող չարագործները վճարում են այդ ծախսերը, իսկ նրանց զոհ դարձած միգրանտները մեծ պարտքերի մեջ են ընկնում, որոնք պետք է վճարեն մաքսանենգին նպատակակետ երկրում իրենց վաստակած գումարից: Պարտքի վերադարձման պայմաններից և նպատակակետ երկրում միգրանտին պահելու պայմաններից կախված՝ մաքսանենգությանը նմանվող դեպքերը կարող են իրականում լինել թրաֆիքինգի դեպքեր, եթե «մաքսանենգի» իրական մտադրությունն էր պարտքային ճորտության մեջ դնել իր զոհին և շահագործել նրան նպատակակետ երկրում:

Շատ կարևոր է նշել նաև, որ թրաֆիքինգով զբաղվող չարագործները կարող են վճարել իրենց զոհերի ճանապարհածախսը նաև ներքին թրաֆիքինգի դեպքերում: Այլ դեպքերում, մասնավորապես՝ ներքին կամ տարածաշրջանային թրաֆիքինգի պարագայում, երբ տեղափոխման հետ կապված ծախսերը մեծ չեն, ապագա զոհերը երբեմն իրենք են հոգում իրենց ճանապարհածախսը՝ նպատակակետ երկրում իրենց ենթադրյալ զբաղվածության հնարավորությունների հիման վրա: Թրաֆիքինգով զբաղվող չարագործներն իրենց զոհերի՝ նպատակակետ երկիր ժամանելուց անմիջապես հետո օգտվում են նրանց խոցելիությունից՝ նրանց «հավաքագրելու» և վերահսկողության ու շահագործման վիճակի մեջ դնելու համար:

6. Արդյո՞ք թրաֆիքինգի զոհը հատել է որևէ պետության սահման, և եթե այո, ապա արդյո՞ք նա սահմանը հատել է գաղտնի, թե բացահայտորեն: Եթե բացահայտորեն, ապա արդյո՞ք սահմանը հատելու

համար գործածվել են թրաֆիքինգի զոհի անձը հաստատող իսկական, թե՞ կեղծ մուտքի արտոնագրով փաստաթղթեր:

Թեև թրաֆիքինգի ապագա զոհերից շատերը սահմանները հատում են գաղտնի՝ ոտքով կամ մեքենաների մեջ թաքնված, սակայն քիչ չեն նաև նրանք, ովքեր հատում են իրենց իսկական փաստաթղթերով, որտեղ կարող են լինել իսկական կամ կեղծ մուտքի արտոնագրեր, կամ էլ՝ կեղծված կամ գողացած փաստաթղթերով:

Փոխադրման ընթացակարգերը մեծամասամբ կախված են թրաֆիքինգի համատեքստից և նպատակակետից: Մոտակա երկիր կամ տվյալ երկրի ներսում տեղափոխման պարագայում ավելի դյուրին է դիմել գաղտնի միջոցներին, մինչդեռ ավելի հեռավոր երկրների պարագայում ավելի հավանական է օգտվել բացահայտ միջոցներից և ներկայացնել իսկական փաստաթղթերը, քանի որ սովորաբար անհրաժեշտություն է առաջանում թրաֆիքինգի զոհերին փոխադրել ինքնաթիռով, գնացքով կամ նավով և սահմանային ստուգման անցակետերով:

Ավելին, թրաֆիքինգի ապագա զոհերին խաբեությամբ հավաքագրելու պարագայում չարագործները շահագրգռված են նրանց փոխադրել օրինական ճանապարհով իրենց իսկական փաստաթղթերով՝ որևէ կասկած չհարուցելու համար: Սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի դեպքերում, մասնավորապես՝ Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, զոհերը հիմնականում տեղափոխվում են բացահայտորեն իրենց իսկական փաստաթղթերով, քանի որ թրաֆիքինգով զբաղվող հանցագործները կարող են ավելի շատ շահագործել նրանց, եթե կարողանան ազատ փոխադրել նրանց նպատակակետ երկրի տարածքում, քան եթե ստիպված լինեն նրանց գաղտնի պահել որպես ապօրինի ներգաղթյալների:

7. Այժմ ու՞մ մոտ են փաստաթղթերը:

Որպես կանոն, թրաֆիքինգի զոհ դարձած անձանց թույլ չեն տալիս իրենց մոտ պահել իրենց փաստաթղթերը, քանի որ այդ դեպքում նրանք կարող են փախուստի դիմել: Փաստաթղթերի առգրավումը հատկանշական վերահսկողության միջոց է, որին թրաֆիքինգ իրականացնող չարագործները դիմում են իրենց զոհերին ահաբեկելու և ինազանդության հարկադրելու նպատակով: Սակայն ինչպես արդեն նշվել է, պետք է հիշել, որ անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը հատկանշական է նաև ապաստանի որոնման և մաքսանենգության հետ կապված դեպքերում:

Այդուհանդերձ, կան տվյալներ, որ նման միտումները փոխվում են, և որոշ համատեքստում թրաֆիքինգի զոհերի փաստաթղթերը մնում են իրենց մոտ, սակայն նրանց հարկադրում կամ սպառնում են մնալ ստրկանման վիճակում այլ միջոցներով: Այդ իսկ պատճառով, եթե որևէ մեկի մոտ պահպանվել են իր փաստաթղթերը, պետք չէ ենթադրել, որ նա աշխատում է իր ազատ կամքով:

8. Արդյո՞ք թրաֆիքինգի զոհը որոշակի ժամանակ մնացել է տարանցիկ երրորդ երկրներում, և եթե այո, ապա արդյո՞ք նա որևէ գործունեություն է ծավալել այդ երկրներից որևէ մեկում: Ինչպիսի՞ գործունեություն է ծավալվել:

Թրաֆիքինգի զոհերին միշտ չէ, որ տեղափոխում են անմիջապես իրենց վերջնական նպատակակետ երկիր: Շատ դեպքերում այդ գործընթացը կարող է տևել որոշակի ժամանակ, անգամ շաբաթներ և ամիսներ՝ ներառելով մի շարք տարբեր տարանցիկ երկրներ, որտեղ զոհերին կարող են հարկադրական շահագործման ենթարկել: Նման դեպքի պատմության առկայությունը կարող է վկայել թրաֆիքինգի մասին:

Շահագործման փուլ

9. Ինչ գործունեությամբ է զբաղվել անհատը վերջնական նպատակակետ երկիր ժամանելուց ի վեր:

Մարդկանց թրաֆիքինգն իրականացվում է որևէ ձևով մարդկանց հարկադրաբար շահագործելու նպատակով, օրինակ՝ սեռական, աշխատանքային կամ շահագործման որևէ այլ ձևով: Ուստի, ապացույցներն առ այն, որ թրաֆիքինգի զոհը ստիպված զբաղվել է հարկադրական աշխատանքով, փողոցային մուրացկանությամբ կամ առևտրով կամ տնային ճորտական աշխատանքով, գրեթե միանշանակ վկայում են թրաֆիքինգի, ներառյալ՝ երկրի ներսում իրականացվող թրաֆիքինգի դեպքի մասին (կամ մարդկային մարմնի մասերի կորզման նպատակով ենթադրյալ թրաֆիքինգի մասին, եթե թրաֆիքինգի զոհի մարմնի որևէ մաս հեռացված է):

Քանի որ թրաֆիքինգի առաջնային նպատակը շահույթ ստանալու համար զոհի շահագործումն է, վերջնական նպատակակետ երկիր ժամանելուց հետո զոհի աշխատանքի դիմաց նախատեսված վարձատրության մեծ մասի առգրավումը թրաֆիքինգի մասին վկայող հիմնական ցուցիչն է:

10. Վերջնական նպատակակետ ժամանելուց որքա՞ն ժամանակ անց է մեկնարկել գործունեությունը:

Ժամկետները կարևոր ցուցիչ են հանդիսանում: Թրաֆիքինգի դեպքերում շահագործման փուլը, որպես կանոն, սկսվում է ժամանելուց անմիջապես հետո կամ կարճ ժամանակ անց, քանի որ մարդավաճառը շահագրգռված է հնարավորիս շուտ սկսել իր զոհի միջոցով շահույթ ստանալ կամ ծառայություններ կորզել: Փոխարենը՝ այն դեպքերը, երբ ենթադրյալ զոհի ժամանման և շահագործման գործունեության միջև զգալի ժամանակ է անցնում, կարող են վկայել շահագործման պայմաններում ապօրինի աշխատանքով զբաղվող ապօրինի միգրանտի մասին, ով ի վիճակի չէր մշտական աշխատանք գտնել առանց փաստաթղթերի: Այդուհանդերձ, նման դեպքերը կարող են վկայել նաև այն մասին, որ տվյալ անձին թրաֆիքինգի են ենթարկել նպատակակետ երկրի ներսում այլ մարդիկ, այլ ոչ թե նրան նպատակակետ երկիր մաքսանենգ ճանապարհով բերած չարագործները:

Օրինակ՝ կինը կարող է օրինական կամ ապօրինի ճանապարհով մուտք գործել որևէ երկիր ինքնուրույն կամ մաքսանենգների օգնությամբ և այնուհետև զբաղվել մարմնավաճառությամբ իր սեփական կամքով առանց մաքսանենգների միջամտության: Նման դեպքը թրաֆիքինգի հատկանիշ չի պարունակում: Այդուհանդերձ, եթե կնոջ՝ նպատակակետ երկիր ժամանելուց հետո նրան հավաքագրի կավատը՝ իրեն այլ վայր տեղափոխելու կամ հարկադրական շահագործման նպատակով, ապա տվյալ դեպքը վկայում է թրաֆիքինգի մասին:

11. Արդյո՞ք անձին հարկադրել են զբաղվել որևէ գործունեությամբ: Եթե այո, ապա ինչպե՞ս:

Թրաֆիքինգի հանցատեսակի առաջնային հատկանիշներից է հարկադրական հարաբերությունների առկայությունը: Որևէ գործունեությամբ զբաղվելու անձի հարկադրանքի չափը հավանաբար կտարբերվի՝ կապված այն հանգամանքից, թե արդյոք զոհին առևանգել են, թե հավաքագրել են խաբեությամբ: Առևանգման դեպքերում զոհի նկատմամբ հարկադրանք է գործադրվել հանցագործության իրականացման առաջին իսկ պահից: Աշխատանքի բնույթի վերաբերյալ բացարձակ խաբեության պարագայում ամենայն հավանականությամբ անմիջապես առաջանում է հարկադրանքի գործոնը: Օրինակ՝ թրաֆիքինգի զոհ դարձած կինը, ով անկեղծ հավատացած էր, որ աշխատելու է որպես պարուհի կամ մատուցողուհի, մարդավաճառների

իսկական մտադրությունները պարզելուց անմիջապես հետո ստիպված կլինի զբաղվել հարկադրական մարմնավաճառությամբ:

Կարող է պատահել նաև այնպես, որ եթե զոհերը նախապես տեղյակ են ապօրինի աշխատանքով զբաղվելու կամ սեռական բնույթի ծառայություններ մատուցելու պահանջի մասին, ապա նրանք կարող են ենթարկվել հարկադրանքի միայն իսկական աշխատանքային պայմաններին ծանոթանալու և (կամ) իրենց վարձատրության պահումների ժամանակ:

Մարդկանց հնազանդության հարկադրելու համար մարդավաճառները դիմում են տարբեր մեթոդների, որոնց միջոցով ոչ միայն ճնշում են իրենց զոհերի արժանապատվությունը և ազատ կամքը, այլև կանխում նրանց փախուստը: Նման միջոցներից են զոհերի, նրանց ընտանիքի անդամների կամ բարեկամների դեմ ուղղված ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության գործադրումը կամ սպառնալիքը, սոցիալական և լեզվական մեկուսացումը, բացահայտման, խարանավորման և մերժվածության վախի առաջացումը, ոստիկանության նկատմամբ անվստահության և կասկածամտության առաջացումը և ցանկացած իշխանությունների կամ կազմակերպությունների նկատմամբ խոր անվստահության առաջացումը: Հնարավոր է նաև, որ մարդավաճառներն իրենց զոհերի մոտ առաջացնեն կախվածություն ալկոհոլից կամ թմրամիջոցներից և սահմանափակեն նրանց սնունդը և ջուրը: Մարդավաճառներն իրենց զոհերին կարող են հսկել և վերահսկել նաև զենքի, տեսահետևման համակարգի կամ շների միջոցով: Եթե հարցազրույցի մասնակցի նկատմամբ գործադրվել են նշված միջոցները, ապա դա վկայում է թրաֆիքինգի դեպքի մասին:

12. Որքան գումար է անհատն աշխատել նման գործունեությամբ:

Վաստակած գումարների չափը կախված է իրականացվող գործունեության տեսակից: Օրինակ, մարմնավաճառությամբ զբաղվելու նպատակով թրաֆիքինգի ենթարկված կինը մեկ օրում կարող է վաստակել ավելին, քան հարկադրական աշխատանքի նպատակով թրաֆիքինգի զոհ դարձած անձն ամբողջ շաբաթում: Այդուհանդերձ, ճիշտ է նաև այն, որ տվյալ անձը կարող է երբեք չստանալ իր վաստակած գումարը կամ ստանալ դրա միայն չնչին մասը, քանի որ այդ գումարները հաճախ պահում են մարդավաճառները և նրանց հանցակիցները՝ տալով կեղծ խոստումներ, որ ամբողջ

վաստակած գումարը կվճարեն աշխատանքի կամ ծառայությունների մատուցման ժամկետի ավարտից հետո:

Ավելին, որոշ իրավիճակներում վարձատրությունն առհասարակ չի նախատեսվում, օրինակ՝ տնային ծառայության, երբ զոհն աշխատում է սննդի և կացարանի դիմաց, կամ զինվորական ծառայության նպատակով թրաֆիքինգի պարագայում, երբ զոհին բաժին է հանվում թալանից կամ կողոպուտից, կամ էլ վարձատրության փոխարեն տրվում է սնունդ և թմրամիջոց:

13. Արդյո՞ք անհատին թողել են իր վաստակած գումարը:

Թրաֆիքինգի զոհերին զրկում են իրենց վաստակած գումարից հիմնականում ենթադրյալ պարտքերը մարելու համար կամ այլ պահումների պատրվակով, կամ նրանք առհասարակ չեն ստանում այդ գումարները: Ի հակադրություն նման դեպքերի՝ մաքսանենգ ճանապարհով երկիր ներթափանցած միգրանտները կարող են գումար աշխատել ժամանելու պահից: Նրանք կարող են տնօրինել իրենց վաստակած գումարը՝ ծախսելով այն տվյալ երկրում կամ մի մասն ուղարկելով իրենց ծագման երկրում մնացած ընտանիքի անդամներին:

Այդուհանդերձ, անգամ այն ապացույցների առկայությունը, որ թրաֆիքինգի զոհը գումար է ուղարկում իր տնեցիներին, հիմք չի հանդիսանում մերժելու այն հավանականությունը, որ տվյալ անձն ընկել է թրաֆիքինգով զբաղվող չարագործների թակարդը, քանի որ նրանք կարող են չնչին գումարներ վճարել իրենց զոհերին՝ նրանց մոտ գոհունակություն առաջացնելու և փախչելու փորձերը կանխելու համար կամ բացել կեղծ հաշիվներ զոհի ընտանիքի անդամներից մեկի անունով իրենց եկամուտների գումարները լվանալու համար:

14. Արդյո՞ք մարդավաճառությամբ զբաղվող չարագործները կամ նրանց հանցակիցները ստիպել են զոհին մարել որևէ պարտք: Եթե այո, ապա որքա՞ն էր կազմում պարտքի գումարը և ինչի՞ դիմաց էր պարտքը:

Ինչպես արդեն նշվել է այս բաժնում, պարտքային ճորտությունը թրաֆիքինգի բոլոր ձևերի ընդհանուր առանձնահատկությունն է, որի դեպքում զոհերն ընկնում են խիստ ուռճացված գումար կազմող պարտքերի մեջ՝ իրենց փաստաթղթերի պատրաստման, մուտքի արտոնագրի, ճանապարհածախսի և այլ ծախսերի դիմաց: Զոհերի պարտքերը կարող են նաև մեծանալ նպատակակետ երկիր ժամանելուց հետո, որտեղ նրանք շատ մեծ գումարներ են վճարում սննդի, հագուստի

կամ կացարանի համար, հարկադրված են իրենց գումարով գնել աշխատանքի համար անհրաժեշտ պարագաներ, կամ նյութական վնաս պատճառելու կամ գողություն կատարելու մեղադրանքով, ինչը գրեթե զրոյացնում է այդ «պարտքերը» երբևէ մարելու հավանականությունը:

Ամբողջ աշխարհում արձանագրված նման դեպքերը մեծ թիվ են կազմում: Օրինակ՝ Արևմտյան Աֆրիկայում և Թաիլանդում ընդունված է, որ կանանց վրա դրվում է շուրջ 30000–50000 ԱՄՆ դոլարին համարժեք պարտավորություն, որը պետք է մարմնավաճառությունից ստացված գումարից վերադարձվի թրաֆիքինգով զբաղվող անձանց: Լատինական Ամերիկայի երկրներում, թրաֆիքինգի զոհերին կարող են կանխավճարով որոշակի գումար տալ տեղափոխման հետ կապված ծախսերի կամ այլ ծախսերի համար, օրինակ՝ փոխառություն ընտանիքի անդամի առողջության հետ կապված ծախսերի կամ տուն գնելու համար: Այնուհետև նման պարտքները ծառայեցվում են կանանց դեմ՝ որպես նրանց շահագործման պայմաններում պահելու միջոց: Եթովպիայում ընդունված է, որ տնային աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի շրջանակներում արտասահման տեղափոխված կանայք պետք է մարդավաճառներին վերադարձնեն ճամփորդության, անհրաժեշտ փաստաթղթերի և «աշխատանք» գտնելու համար ծախսած գումարները: Նպատակակետ երկիր ժամանելուց հետո թրաֆիքինգի զոհերը տեղեկանում են իրենց գործատուներից, որ նրանք որոշակի գումար են մուծել միջնորդի (մարդավաճառի) ծառայությունների դիմաց՝ դրանով իսկ հարկադրելով զոհերին աշխատել անվճար այնքան ժամանակ, մինչ գործատուն որոշի, որ գումարը փոխհատուցվել է ծառայությունների տեսքով: Եթովպիայում արձանագրվել են նաև այնպիսի դեպքեր, երբ հարկադրական մարմնավաճառությամբ զբաղվելու կամ շահագործման պայմաններում տնային աշխատանք կատարելու նպատակով թրաֆիքինգի ենթարկված կանանցից պահանջել են չափազանց մեծ գումարներ վճարել իրենց աշխատավայրում ենթադրաբար կոտրված, վնասված կամ գողացված իրերի համար, ինչն ավելի է ծանրացրել արդեն իսկ առկա պարտքային ճորտությունը:

15. Ինչպիսի՞ն էին աշխատանքային պայմանները:

Որքան անմարդկային և անբարեհաջող են աշխատանքային պայմանները, այնքան ավելի հավանական է, որ գործ ունենք թրաֆիքինգի դեպքի հետ: Ծայրահեղ շահագործման պայմաններում զոհերի շարունակական վերահսկողությունը թրաֆիքինգի հիմնական հատկանիշն է:

16. Ընտրություն կատարելու և տեղաշարժվելու ինչպիսի՞ ազատությունից է օգտվել անհատը:

Աշխատանքի բնույթի, աշխատանքային ժամերի կամ անհրաժեշտ ծառայությունների առումով թրաֆիքինգի զոհերն ունեն ազատ ընտրություն կատարելու շատ չնչին հնարավորություն կամ առհասարակ չունեն նման հնարավորություն:

Ավելին, նրանք որպես կանոն չեն կարող օգտվել ազատ տեղաշարժման իրավունքից և հաճախ պահվում են այնպիսի պայմաններում, որոնք համարժեք են ազատազրկման, քանի որ նրանք կարող են դուրս գալ միայն մարդավաճառներից մեկի կամ մի քանիսի ուղեկցությամբ:

Լրացուցիչ ապացույցների նյութ

Զոհի պատմածն ապացույցներով հաստատելու և որոշումների կայացմանը նպաստելու համար՝ կարելի է օգտագործել լրացուցիչ օժանդակ նյութեր: Անհրաժեշտ փաստաթղթերը կամ այլ օժանդակ նյութերը կարելի է ստանալ ոստիկանությունից կամ գործընկեր հասարակական կազմակերպությունից կամ անմիջապես զոհերից:

Օժանդակ նյութերի օրինակներ.

- Ոստիկանության կամ ներգաղթի մասին տեղեկանք
- Որևէ ճամփորդական փաստաթուղթ կամ տոմս
- Ներգաղթային ծառայության՝ ժամանելու կամ մեկնելու ստուգիչ կտրոններ
- Տեղեկանքներ ցանկացած վնասվածքների հետ կապված ցանկացած բժշկական միջամտության մասին՝ ինչպես ուղղորդումից առաջ, այնպես էլ աջակցության գործընթացի ժամանակ ցուցաբերվող բուժման վերաբերյալ
- Աշխատանքային պայմանագրի կամ նախնական հայտարարության պատճեններ,
- Զոհի օրագրի նշումներ և գրված նամակներ
- Վկաների ցուցմունքներ
- Շահագործական իրավիճակի լուսանկարներ
- Բժշկական կամ հոգեբանական վերլուծություն

Որոշում

Զրույցի վերջում հարցազրույց անցկացնող անձը պետք է հանրագումարային առումով գնահատի վերը ներկայացված երեք կատեգորիաներին առնչվող բոլոր առկա նյութերը:

- Հարցազրույցից առաջ գնահատման ցուցիչներ (տե՛ս վերոնշյալ 2.2 բաժինը)
- Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ընթացքում ստացած պատասխաններ
- Լրացուցիչ ապացույցների նյութ (ինչպես ներկայացված է նախորդ հատվածում)

Այս ամենից հետո անհրաժեշտ է տվյալ հանգամանքներում առկա բոլոր տեղեկությունների հիման վրա հնարավորության սահմաններում ճշգրիտ որոշել, թե արդյոք հարցազրույցի մասնակիցը թրաֆիքինգի զոհ է, մաքսանենգների կողմից երկիր ներթափանցած միգրանտ, տնտեսական վիճակը բարելավելու նպատակով տվյալ երկիր սեփական կամքով ներթափանցած ապօրինի միգրանտ կամ մեկ այլ կատեգորիային պատկանող և աջակցության կարիք ունեցող շահագործման ենթարկված կամ խոցելի վիճակում հայտնված անձ: Այս որոշման կայացումից հետո ծառայություն մատուցող կազմակերպությունը կորոշի՝ արդյոք այն կարող է աջակցել տվյալ անձին իր ծրագրի շրջանակներում թե կարող է նրան ուղղորդել մեկ այլ գործակալություն:

Եթե նախնական զննման արդյունքում որոշվի, որ տվյալ անձը որպես թրաֆիքինգի զոհ չի բավարարում աջակցության համար անհրաժեշտ պայմանները կամ հրաժարվում է առաջարկվող աջակցությունից, ապա խորհուրդ է տրվում, որ հարցազրույց անցկացնող անձը «Դիտողություններ» բաժնում ամփոփի նման որոշման պատճառները: Նման գործելաոճը հանդիսանում է հետագայում հնարավոր բողոքից խուսափելու ինքնապաշտպանության միջոց, ինչպես նաև ծրագրային ընթացակարգերը բարելավելու միջոց:

Ամեն դեպքում, հարցազրույցի մասնակցին պետք է տեղեկացնել այն աջակցության և ծառայությունների տեսակների մասին, որոնք նա կարող է ստանալ պայմաններին բավարարելու դեպքում, և այն կազմակերպությունների մասին, որոնք կարող են տրամադրել դրանք, ինչպես նաև այն մասին, թե տվյալ անձը երբ և ինչ կարգով կարող է հայտնել իր դեմ գործած քրեորեն պատժելի արարքների մասին, և հասանելի իրավական աջակցության կամ պաշտպանության

տեսակների մասին:

Լրացուցիչ հարցեր

Ձևի վրա նշված վերջին աղյուսակը նախատեսված է գրառումների համար և ցանկացած այլ առնչվող տեղեկությունների համար, որոնք նշված չեն ձևի որևէ այլ հատվածում:

.....

Նշում.

«Կիրառելի չէ» պատասխանը նշված է որպես մի շարք հարցերին պատասխանելու տարբերակ: Այս համատեքստում «Կիրառելի չէ» պատասխանը նշանակում է, որ տվյալները բացակայում են: Ուստի, եթե տվյալ հարցի մոտ նշվում է, որ անհատը «չգիտի» դրա պատասխանը, կամ եթե հարցը «կիրառելի չէ» տվյալ անձի համար կամ հանգամանքներում, կամ որ անհատը «չի պատասխանել» հարցին, ապա պետք է ընտրել «կիրառելի չէ» ընդհանուր պատասխանը:

.....

Նշումներ

1 http://www.uncjin.org/Documents/Conventions/dcatoc/fi nal_documents_2/convention_eng.pdf; http://untreaty.un.org/English/notpubl/18-12-a.E.doc

2 IOM (2003). *Trafficking in Persons: An Analysis of Afghanistan.* International Organization for Migration, Kabul, Afghanistan.

3 Rosenberg, R. (Ed.) (2003). *Trafficking of Indonesian Women and Children.* International Catholic Migration Commission and the Solidarity Center: Jakarta, Indonesia.

4 U.S. State Department (2005). *Trafficking in Persons Report:* June 2005. United States Department of State, Washington, DC.

5 UNICEF (n.d.) Fact Sheet:Trafficking. UNICEF. Downloaded from http://www.unicef.org/protection/fi les/trafficking.pdf

6 ILO (2005). *A Global Alliance Against Forced Labour: Global Report under the Follow-up to the ILO Declaration on Fundamental Principles and Rights at Work 2005.* International Labour Office, Geneva, Switzerland.

7 Անչափահասների հետ հարցազրույցների անցկացման և աջակցության վերաբերյալ տե՛ս նաև՝ *Guidelines on the Protection of Child Victims of Trafficking:* Provisional Version. 2006. UNICEF, Child Protection Section, NY; *UNICEF Reference Guide on Protecting the Rights of Child Victims of Trafficking in Europe.* 2006, UNICEF Regional Office for CEE/CIS http://www.unicef.org/ceecis/protection_4440.html; United Nations Convention on the Rights of the Child: General Comment on Treatment of Unaccompanied and Separated Children Outside their Country of Origin: http://www.unhchr.ch/tbs/doc.nsf/(symbol)/CRC.GC.2005.6.En? OpenDocument; *Let's Talk: Developing Effective Communication with Child Victims of Abuse and Human Trafficking.* September 2004.UNICEF: Kosovo.

8 Home Office, Crown Prosecution Service, et al. (2001). *Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance for Vulnerable or Intimidated Witnesses, Including Children.* London: Crown copyright.

9 Նման դեպքերում անձին պետք է համարել ենթադրյալ զոհ, ժամանակ տալ ապաքինվելու և մտորելու, իսկ հետո մատուցել անհրաժեշտ ծառայությունները, մինչ կայացվի վերջնական որոշումը:

Հավելված I Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձև

International Organization for Migration

IOM-ՕՄ

Նախնական զննման շրջանակներում անցկացվող հարցազրույցի ձև

ՄՄԿ-ի ներկայացուցչություն՝ _____ **Գաղտնի**

Գրանցման տվյալներ՝ ՄՄԿ անհատական համար՝

Անուն՝	Ազգանուն՝	Ազգություն՝	
Սեռ (Ա/Ի)՝		Ծննդյան երկիր՝	
Ծննդյան ամսաթիվ (**օր/ամիս/տարի**)		Ծննդավայր՝	
Դեպքի տվյալներ			

Ուղղորդող կազմակերպության տեսակը՝ (ՀԿ/10/ իրավապահ մարմիններ/դեսպանություն/ՄՄԿ ներկայացուցչություն/Ինքնուրույն ներկայացում/այլ/ կիրառելի չէ)

նշել- անունը

վայրը՝

Զննման ամսաթիվ՝ (**օր, ամիս, տարի**)

Զննման անցկացման վայր՝

ՄՄԿ ԹՀ հարցազրուցավարի անունը՝

Հարցազրույցի մասնակցի մայրենի լեզուն՝

Թարգմանչի ներկայություն (**այո/ոչ**)

Թարգմանչի անունը՝

ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՓՈՒԼ

Ինչպե՞ս է հաստատվում կապն անհատի և հավաքագրողի միջև:

(անձնական հաղորդակցում/ հայտարարություն թերթում/ հայտարարություն ռադիոյով/հայտարարություն համացանցում/ հայտարարություն հեռուստատեսությամբ/ վաճառվել է ընտանիքի անդամի կողմից/առևանգվել է/ այլ)

Եթե ՏԱՐԲԵՐ է վերոնշյալից, ապա նշեք այն:

Ինչ աշխատանք էին Ձեզ խոստացել կամ ինչ աշխատանք էիք Դուք ակնկալում Ձեր երկրի մեկ այլ բնակավայրում կամ արտասահմանում:

(տնային խնամք (au pair) /դայակ/ գյուղատնտեսական աշխատանքներ/ տնայնագործական աշխատանք/ աշխատանք ընդհատակյա արտադրամասերում/ վաճառք/ մուրացկանություն/ ցածրակարգ հանցավոր գործունեության այլ ձևեր/պարուհի կամ ժամանցային միջոցառումների կազմակերպիչ/ սեռական բնույթի ծառայությունների աշխատող/ մատուցողուհի/ այլ/ կիրառելի չէ)

Ինչպիսի՞ վարձատրություն և աշխատանքային պայմաններ է գործատուն խոստացել կամ նշել նպատակակետ երկրում:

(ամսական կտրվածքով ամերիկյան դոլարին համարժեք)

Արդյո՞ք հավաքագրողը նախապես որոշակի գումար է ստացել: (**այո/ոչ**):
Եթե ԱՅՈ, ապա որքա՞ն (ամերիկյան դոլարին համարժեք)
Արդյո՞ք տվյալ անձին շահագործման նպատակով իր ծագման երկրից տեղափոխել են արտասահման կամ նույն երկրի մեկ այլ բնակավայր՝ բռնություն գործադրելով:

Եթե ԱՅՈ, ապա արդյո՞ք տվյալ անձին առևանգել են և բռնի ուժով տեղափոխել այլ վայր իր ծագման երկրի տարածքում (**Այո/Ոչ**):
Արդյո՞ք տվյալ անձին առևանգել են և իր ծագման երկրից բռնի ուժով տեղափոխել **արտասահման** (**Այո/Ոչ**):

ՄՄԿ-ի ներկայացուցչություն՝ _____ **Գաղտնի**

Գրանցման տվյալներ՝ ՄՄԿ անհատական համար՝

ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՓՈՒԼ

Ո՞վ է հոգացել ճանապարհածախսը:

Նշել փոխադրման միջոցը՝ (ոտքով/մեքենայով/ լաստանավով/ գնացքով/օդանավով /այլ փոխադրամիջոցով /կիրառելի չէ)

Արդյո՞ք տվյալ անձը սահմանը հատել է պաշտոնական անցակետերում:
(**Այո/ Ոչ**):

Եթե ՈՉ, ապա ինչպե՞ս և ո՞ր հատվածում է հատել սահմանը:
Եթե ԱՅՈ, ապա նշեք մանրամասն:
Արդյո՞ք թրաֆիքինգի զոհը հատել է որևէ պետության սահման, և եթե այո, ապա արդյո՞ք նա սահմանը հատել է գաղտնի թե՞ բացահայտորեն:
Եթե բացահայտորեն, ապա արդյո՞ք սահմանը հատելու համար գործածվել են թրաֆիքինգի զոհի անձը հաստատող իրական փաստաթղթերը, թե՞ կեղծ մուտքի արտոնագրով փաստաթղթեր:
Արդյո՞ք պահանջվել է մուտքի կամ ելքի արտոնագիր:
Մուտքի արտոնագիր (**Այո/ Ոչ**)
Ելքի արտոնագիր (**Այո/ Ոչ**)

Այժմ ու՞մ մոտ են փաստաթղթերը:
(Տվյալ անձի մոտ/Գործատուի մոտ/ոստիկանությունում/ մարդավաճառի մոտ/կիրառելի չէ):

Արդյո՞ք թրաֆիքինգի զոհը որոշակի ժամանակ մնացել է տարանցիկ երրորդ երկրներում, և եթե այո, ապա արդյո՞ք նա որևէ գործունեություն է ծավալել այդ երկրներում:
Եթե ԱՅՈ, ապա նշեք, թե որ երկրում:
Եթե ԱՅՈ, ապա ինչպիսի՞ գործունեություն:
(տնային խնամք (au pair) /դայակ/ գյուղատնտեսական աշխատանքներ/ տնայնագործական աշխատանք/ աշխատանք ընդհատակյա արտադրամասերում/ վաճառք/ մուրացկանություն/ ցածրակարգ հանցավոր գործունեության այլ ձևեր/պարտադիր զինվորական ծառայություն/պարուհի կամ ժամանցային միջոցառումների կազմակերպիչ/ սեռական բնույթի ծառայությունների աշխատող/ մատուցողուհի/ այլ/ կիրառելի չէ):

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ

Ի՞նչ գործունեությամբ է զբաղվել անհատը վերջնական նպատակակետ երկիր ժամանելուց ի վեր:

(տնային դաստիարակչուհի (au pair), /դայակ/ գյուղատնտեսական աշխատանքներ/ տնայնագործական աշխատանք/ աշխատանք ընդհատակյա արտադրամասերում/ վաճառք/ մուրացկանություն/ ցածրակարգ հանցավոր գործունեության այլ ձևեր/պարտադիր զինվորական ծառայություն/պարուհի կամ ժամանցային միջոցառումների կազմակերպիչ/ սեռական բնույթի ծառայությունների աշխատող/ մատուցողուհի/ այլ/ կիրառելի չէ):
Եթե անձն ԱՅԼ գործունեություն է ծավալել, ապա նշեք այն:

Վերջնական նպատակակետ երկիր ժամանելուց որքա՞ն ժամանակ անց է մեկնարկել գործունեությունը:
(**ժամանման շաբաթվա ընթացքում/ ժամանումից մեկ շաբաթ անց**):

Արդյո՞ք անձին հարկադրել են զբաղվել որևէ գործունեությամբ: (**Այո/Ոչ**):
Եթե ԱՅՈ, ապա ինչպե՞ս (սպառնալիքներ/ֆիզիկական բռնություն):

Որքա՞ն գումար է անհատն աշխատել նման գործունեությամբ (ամսական կտրվածքով):
Արդյո՞ք անհատին թողել են իր վաստակած գումարը: (**Այո/ Ոչ/ Մասամբ**):
Արդյո՞ք մարդավաճառությամբ զբաղվող չարագործները կամ նրանց հանցակիցները ստիպել են զոհին մարել որևէ պարտք:
Եթե այո, ապա որքա՞ն էր կազմում պարտքի գումարը (**ամերիկյան դոլարին համարժեք/ամսվա կտրվածքով**) **և ինչի՞ դիմաց էր պարտքը:**
Արդյո՞ք տվյալ անձը որոշ չափով օգտվել է ազատ տեղաշարժվելու իրավունքից (**ամենևին չի օգտվել/ միայն այլոց ուղեկցությամբ/ անսահմանափակ/ կիրառելի չէ**)
Ինչպիսի՞ էին աշխատանքային պայմանները
Հավելյալ աշխատաժամեր
Ընտրություն կատարելու և տեղաշարժվելու ինչպիսի՞ ազատությունից է օգտվել անհատը:

ՄՄԿ-ի ներկայացուցչություն՝ _____ **Գաղտնի**

Գրանցման տվյալներ՝ ՄՄԿ անհատական համար՝

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ

Լրացուցիչ ապացույցների նյութերն են.

Ոստիկանության և ներգաղթի ծառայության զեկույցները, ցանկացած այլ փաստաթղթեր կամ ուղեցույցներ, ներգաղթի ծառայության՝ ժամանելու կամ մեկնելու ստուգիչ կտրոններ, բժշկական եզրակացություն թրաֆիքինգի հետևանքով վերապրածչարաշահումների վերաբերյալ, կեղծ աշխատանքային պայմանագրերի պատճեններ կամ բուն հայտարարությունների պատճեններ, տվյալ անձի կողմից գրված նամակները

ՈՐՈՇՈՒՄ

Արդյո՞ք տվյալ անձը ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀ է: (Այո/ Ոչ):

Եթե ՈՉ, (մաքսանենգ ճանապարհով տվյալ երկիր բերված միգրանտ/այլ հանցատեսակի զոհ/ապօրինի միգրանտ/ հանցագործների կողմից տվյալ կազմակերպություն նենգաբար մուտք գործած լրտես)

Արդյո՞ք նա ցանկանում է վերադառնալ հայրենիք: (Այո/ Ոչ):
Արդյո՞ք նա կարող է օգտվել ՄՄԿ Աջակցության ծրագրից: (Այո/ Ոչ):

Եթե՝ ՈՉ, ապա ինչու՞: (հրաժարվել է ՄՄԿ աջակցությունից, ունի արտաքսման հրաման, հանցագործների կողմից տվյալ կազմակերպություն նենգաբար մուտք գործած լրտես է կամ որևէ այլ պատճառ):
Նշել ԱՅԼ պատճառը:
Անհրաժեշտության դեպքում նշել՝ ինչու է ՀՐԱԺԱՐՎԵԼ ՄՄԿ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ.
(ահաբեկված է, ցանկանում է մնալ տվյալ երկրում, չի վստահում Միգրացիայի միջազգային կազմակերպությանը կամ հասարակական կազմակերպություններին/ այլ պատճառ):
ԱՅԼ պատճառի առկայության պարագայում նշել այն:

Դիտողություններ

3

Ուղղորդում և աջակցություն վերաինտեգրման հարցում

Գլխի բովանդակություն

Ներածություն

3.1 Ուղղորդում և տեղափոխում աջակցություն ստանալու համար

3.1.1 Միջազգային ուղղորդումներ

3.1.1.1 Միջազգային ճանապարհորդության նախապատրաստական ընթացակարգեր

3.1.1.2 Միջազգային հաղորդակցման ընթացակարգեր

3.1.1.3 Միջազգային ճանապարհորդության ընթացակարգեր

3.1.2 Ուղղորդումներ երկրի ներսում

3.1.2.1 Նախապատրաստական ընթացակարգեր երկրի ներսում

3.1.2.2 Երկրի ներսում հաղորդակցման հաստատման ընթացակարգեր

3.1.2.3 Երկրի տարածքում կիրառվող ճամփորդական ընթացակարգեր

3.1.3 Ժամանումից հետո մատուցվող աջակցություն

3.1.4 Դեպքի վարում

3.2 Վերաինտեգրում

3.2.1 Վերաինտեգրման գնահատում և պլանավորում

3.2.1.1 Անհատական վերաինտեգրման գնահատում

3.2.1.2 Իրավիճակային վերաինտեգրման գնահատում

3.2.1.3 Վերաինտեգրման ծրագիր

3.2.2 Վերաինտեգրման գործընթաց

3.2.2.1 Վերաինտեգրման աջակցության տրամադրման մեխանիզմներ

3.2.2.2 Ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող նախնական աջակցություն

3.2.2.3 Երկարաժամկետ վերաինտեգրման աջակցություն

3.2.2.4 Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված պետական աջակցություն

3.2.3 Վերաինտեգրման աջակցության տեսակներ

3.2.3.1 Բժշկական և (կամ) առողջապահական ծառայություններ

3.2.3.2 Խորհրդատվություն

3.2.3.3 Ֆինանսական աջակցություն

3.2.3.4 Իրավական աջակցություն

3.2.3.5 Վերաինտեգրում կրթական համակարգում

3.2.3.6 Մասնագիտական ուսուցում

3.2.3.7 Փոքր ձեռնարկատիրություն և եկամուտի գոյացմանն ուղղված գործունեություն

3.2.3.8 Աշխատանքի տեղավորում, վարձատրության սուբսիդավորում և աշակերտության ծրագիր

3.2.3.9 Կացարան և ապաստան

3.2.4 Անչափահասների վերաինտեգրման աջակցություն

3.2.5 Վերաինտեգրման գործընթացի հետ կապված աշխատանքային անվտանգություն

3.2.6 Վերաինտեգրման մոնիթորինգ

3.2.7 Գնահատում

3.2.7.1 Գնահատում զոհի կողմից

3.2.7.2 Ինքնագնահատում

3.2.7.3 Արտաքին գնահատում

Հավելված I. Մոնիթորինգի զեկույց

Ներածություն

Այս բաժնի նպատակն է ծառայություն մատուցող կազմակերպությունների համար քայլ առ քայլ ուղեցույց սահմանել այն հարցի վերաբերյալ, թե ինչպես լավագույնս աջակցել նախնական զննում և նույնականացում անցնող թրաֆիքինգի զոհերին՝ առաջին նախնական զննման և որպես թրաֆիքինգի զոհ նրանց կարգավիճակի որոշման տեսակետից, ուղղորդման և վերահինտեգրման գործընթացի միջոցով՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ զոհը գտնվում է ծագման, նպատակակետ թե որևէ երրորդ երկրում:

.....

Զոհերի նախապատվությունների և պաշտպանության կարիքների ապահովում

Վերադարձը ծագման երկիր կամ համայնք միշտ չէ, որ լավագույն կամ ցանկալի լուծում է հանդիսանում զոհի համար: Հետևաբար, զոհերի շահերը պաշտպանող կազմակերպությունները պետք է հաշվի առնեն, որ թրաֆիքինգի զոհ դարձած անձինք կարող են հետապնդման ենթարկվելու հետ կապված մտավախություն ունենալ, կամ էլ իրենց կյանքի կամ ազատության համար սպառնալիքներ ստանալ ծագման երկրներում՝ այսպիսով չկարողանալով կամ պատրաստկամ չլինելով հայրենիք վերադառնալ: Այն զոհերը, ովքեր հայտնում են իրենց վերադառնալու անկարողության կամ անպատրաստակամության մասին, պետք է ուղղորդվեն ապաստարաններ կամ էլ ուղղորդվեն տարանցիկ և նպատակակետ երկրներում թրաֆիքինգից տուժած անձանց պաշտպանությունն ապահովող այլ մեխանիզմներ տրամադրող հաստատություններ: Կազմակերպությունները կարող են նաև պաշտպանել զոհի շահերը, եթե նա ցանկանա ավելի երկար մնալ նպատակակետ երկրում կամ ստանալ որևէ երրորդ երկիր տեղափոխվելու թույլտվություն: Աջակցություն մատուցողները պետք է նաև մտապահեն, որ վերադարձը ծագման երկիր չպետք է զոհից պահանջի վերադարձ ծագման համայնք, եթե այդպիսինը չէ նրա նախապատվությունը: Հնարավորության դեպքում՝ հարկավոր է համապատասխան ծառայություններ մատուցել՝ աջակցելու զոհին իր ընտրած համայնք տեղափոխվելու համար:

.....

Սույն գլուխը ներկայացված է երկու փոխկապակցված բաժնով:

- Ուղղորդում և տեղափոխում
- Վերաինտեգրման աջակցություն

Այս երկու բաժիններում ներկայացված են աջակցության տարբեր հնարավորությունների ընդլայնված նկարագրեր, ինչպես նաև բերվում են հրահանգներ և համալիր բացատրություններ այն հարցի շուրջ, թե ինչպես օգտվել յուրաքանչյուր բաժնից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով մարդկանց թրաֆիքինգի բնույթը՝ հարկ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպք պետք է արժանանա անհատական մոտեցման՝ ելնելով իրավիճակի հանգամանքներից, ուստի չի կարելի պնդել, որ այս բաժինը սպառիչ է և ընդգրկում է այն հնարավոր տարբերակները, որոնք կարող են ընձեռվել առանձին անհատին որևէ կոնկրետ երկրում:

Ավելին, ճանաչվում է այն հանգամանքը, որ վերաինտեգրման որոշ տեսակներ կարող են անհասանելի լինել որոշ դեպքերում, թերևս ֆինանսական սահմանափակումների կամ ազգային առանձնահատկությունների պատճառով: Նաև քիչ հավանական է, որ որևէ առանձին վերցված կազմակերպություն կարողանա միայնակ մատուցել զոհին անհրաժեշտ աջակցության ամբողջ փաթեթը կամ ի վիճակի կլինի աջակցել տվյալ զոհին նույնականացման, ուղղորդման, վերադարձի և վերաինտեգրման ողջ ընթացքում: Այդուհանդերձ, սույն ձեռնարկը նախատեսված է բոլոր այն կազմակերպությունների համար, որոնք գործում են պաշտպանության և աջակցության գործընթացի բոլոր փուլերում՝ նպատակակետ, տարանցիկ և ծագման երկրներում:[1] Հետևաբար, ոչ բոլոր բաժիններն են հավասարապես վերաբերում տարբեր կազմակերպություններին: Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցներին խորհուրդ է տրվում ընթերցել ողջ գլուխը՝ լրիվ գործընթացը հասկանալու և կազմակերպությունների միջև համակարգման մեխանիզմները կատարելագործելու նպատակով: Այնուամենայնիվ, հարկավոր է մտապահել, որ բաժիններից միայն մի քանիսն են վերաբերելու նրանց մատուցած ծառայություններին:

Ապաստարանների և ուղղակի աջակցություն մատուցող այլ հաստատությունների թեման առանձնապես բարդ և նրբանկատ հարց է, որը ենթադրում է կարևոր իրողություններ՝ կապված ուղղորդման և վերաինտեգրման գործընթացի հետ: Համապատասխանաբար, ապաստարանների տնօրինման հատուկ հարցերն առանձին քննարկվում են 4-րդ գլխում:

Արդյունավետ ուղղորդման և վերահինտեգրման համար անհրաժեշտ հարցերը, ինչպիսիք են՝ հոգեկան առողջությունը և դրա հետ կապված մոտեցումները, պետք է հաշվի առնվեն բոլոր փուլերում, ուստի կարևոր է այս գլուխը կարդալ առողջապահության հարցերին նվիրված 5-րդ գլխի հետ միասին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՂՂԱԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Ծառայություն մատուցող կազմակերպությունների կողմից ձեռնարկվող բոլոր աջակցության և պաշտպանության միջոցառումները, այդ թվում՝ ապաստարանների աշխատանքը, պետք է ուղղորդվեն համապատասխան մարդու իրավունքների չափանիշների և Միավորված ազգերի կազմակերպության Պալերմոյի արձանագրության վրա հիմնված հետևյալ առանցքային սկզբունքներով.

Մարդու իրավունքների պահպանում և պաշտպանություն

Քանի որ թրաֆիքինգն ինքնին հանդիսանում է լուրջ խախտում և հաճախ բերում է թրաֆիքինգի զոհերի իրավունքների հետագա խախտումների, ուստի բոլոր օգնության և աջակցության միջոցառումները պետք է կենտրոնացած լինեն զոհերի իրավունքների և հետագա խախտումների կանխարգելման վրա: Մարդու իրավունքներն ընկած են մարդասիրական աշխատանքի բոլոր հայեցակետերի հիմքում: Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է աշխատեն հարգել աջակցություն ստացող զոհերի մարդու իրավունքները, որոնք արտացոլված են մարդու իրավունքներին նվիրված համաշխարհային և տարածաշրջանային հիմնական փաստաթղթերում, այն է՝ Մարդկանց և հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխելու, կասեցնելու և պատժելու մասին ՄԱԿ-ի արձանագրությունում, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայում և այլ համապատասխան միջազգային փաստաթղթերում և չափանիշներում, այդ թվում՝ մարդու իրավունքների մոնիթորինգով զբաղվող մարմինների ընդհանուր մեկնաբանություններում և Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզբունքներում և ուղեցույցում: Թրաֆիքինգի զոհերը պետք է տեղեկացվեն նշված փաստաթղթերի շրջանակներում իրենց վերապահված իրավունքների և պատասխանատվությունների մասին:

Իրազեկված համաձայնություն

Ամբողջ աջակցությունը թրաֆիքինգի զոհերին տրամադրվում է զոհի լիարժեք և իրազեկված համաձայնությամբ: Ծառայություն մատուցող կազմակերպության ծրագիր թրաֆիքինգի զոհի նախնական ընդունման պահից մինչև նրա լիարժեք ինտեգրումը հասարակությունում՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը և գործընկերները պարտավոր են բացատրել նրանց համապատասխան գործողությունները, քաղաքականությունները և ընթացակարգերն այնպես, որ տուժած անձինք կարողանան ընկալել դրանք որևէ առաջարկի կամ գործողության համար իրենց համաձայնությունը տալուց առաջ:

Եթե ենթադրենք, որ զոհը գրագետ է, ապա խորհուրդ է տրվում աջակցության գործընթացի որոշ փուլերում զոհին խնդրել իր համաձայնությունը տալ գրավոր տեսքով: Եթե աշխատակիցները չեն կարող հաղորդակցվել զոհի համար հասկանալի լեզվով, ապա հարկավոր է ամեն անհրաժեշտ ջանք գործադրել՝ ապահովելու թարգմանչի ծառայությունները գրավոր և բանավոր հաղորդակցման համար:

Մանկահասակ տարիքի զոհի պարագայում՝ հարկավոր է բոլոր հարցերով դիմել նրա խնամակալին և ստանալ վերջինիս համաձայնությունը նախքան որևէ գործողություն ձեռնարկելը: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածով հարկավոր է հարցնել և հաշվի առնել երեխայի կարծիքներն ու ցանկությունները: Նման կարծիքների և ցանկությունների լավ իրազեկված արտահայտումն ապահովելու համար անհրաժեշտ է երեխաներին տրամադրել համապատասխան բոլոր տեղեկությունները, օրինակ, իրենց իրավունքների, առկա ծառայությունների, այդ թվում՝ հաղորդակցվելու միջոցների, ապաստանի գործընթացի, ընտանիքի գտնվելու վայրի և ծագման երկրում նրանց դրության որոշման վերաբերյալ (ԵԻԿ, հոդվածներ՝ 13, 17 և 22 (2)).

Խնամակալության, խնամքի մատուցման, բնակության տեղավորման, ինչպես նաև շահերի իրավական ներկայացման հարցերում հարկավոր է նույնպես հաշվի առնել երեխայի կարծիքները: Նման տեղեկությունները պետք է տրամադրվեն երեխայի հասունության և ընկալման մակարդակին համապատասխան եղանակով: Քանի որ մասնակցությունը կախված է հուսալի հաղորդակցման հնարավորությունից, ոստի անհրաժեշտության դեպքում հարկավոր է ապահովել թարգմանիչների ներկայությունն այս ընթացակարգի բոլոր փուլերում:[2]

Անխտրականություն

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները գրավոր քաղաքականություն ունենան անխտրականության վերաբերյալ՝ ապահովելու, որ իրենց աշխատակազմի անդամները հնարավորինս լավ աջակցություն մատուցեն թրաֆիքինգի ենթարկված անձանց առանց որևէ խտրականության՝ գենդերային պատկանելիության, սեռական կողմնորոշման, տարիքի, հաշմանդամության, մաշկի գույնի, սոցիալական խավի, ռասայական պատկանելիության, կրոնի, լեզվի, քաղաքական հայացքների կամ որևէ այլ կարգավիճակի հատկանիշով: Ծառայություն մատուցող կազմակերպությունները և իրենց գործընկեր կազմակերպությունները, ինչպես նաև այն կազմակերպությունները, որտեղ ուղղորդվում են զոհերը, պետք է ստանձնեն թրաֆիքինգի զոհերի նկատմամբ այս նույն պարտավորությունները:

Գաղտնիություն և անձնական այանքի անձեռնմխելիության իրավունք

Զոհի վերաբերյալ բոլոր տեղեկությունները և հաղորդագրությունները պետք է փոխանցվեն՝ հարգելով նրա գաղտնիության և անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Զոհի հետ ունեցած առաջին հանդիպման պահից մինչև աջակցության գործընթացի ավարտն աշխատակազմի անդամները պետք է ապահովեն, որ զոհին վերաբերող բոլոր անձնական բնույթի տեղեկությունները պահվեն գաղտնի: Գաղտնի տեղեկություններ են համարվում, ի թիվս այլոց՝ զոհի տրամադրած տեղեկատվությունը, առողջապահական և այլ ծառայությունների տրամադրած տվյալները, ինչպես նաև տեղեկությունները զոհի իրավական կարգավիճակի մասին: Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ապահովեն, որ զոհին վերաբերող տվյալների հետ առնչվող բոլոր աշխատակիցները վարվեն ամենայն պատասխանատվությամբ՝ հավաքագրելով և փոխանցելով զոհին վերաբերող տեղեկությունները միայն ըստ անհրաժեշտության և զոհի իրազեկված համաձայնությամբ: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս բոլոր կազմակերպություններին ունենալ ամրագրված քաղաքականություն առ այն, որ ոչ մի տվյալ չպետք է հրապարակվի առանց համապատասխան զոհի նախնական իմացության և իրազեկված համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը գնում է զոհի և այլ անձանց անվտանգության մասին: Անձնական տվյալների պահպանման ընթացակարգերի

վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և առաջարկություններ կարող եք գտնել 1-ին գլխի 1.2 բաժնում և 5-րդ գլխի 5.17 բաժնում:

Մանկահասակ թրաֆիքինգի զոհերի առնչությամբ Երեխայի իրավունքների հարցերով կոմիտեն իր թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության 29-30 կետերում նշել է, որ մասնակից պետությունները պետք է պաշտպանեն առանց ուղեկցության երեխայի կամ ծնողներից առանձնացված երեխայի վերաբերյալ ստացված տեղեկությունների գաղտնիությունը, ինչը համապատասխանում է երեխայի իրավունքները, այդ թվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը պաշտպանելու պարտավորությանը (հոդված 16): Այս պարտավորությունը կիրառվում է բոլոր պայմաններում, այդ թվում՝ առողջապահական և սոցիալական հաստատությունների շրջանակներում: Գաղտնիությունը տարածվում է նաև այլոց իրավունքների պահպանման վրա: Օրինակ, առանց ուղեկցության կամ ծնողներից առանձնացված երեխաների վերաբերյալ հավաքագրված տեղեկություններ ձեռք բերելիս, փոխանցելիս և պահպանելիս հարկ է առանձնակի ջանք գործադրել՝ երեխայի ծագման երկրում դեռևս գտնվող անձանց, հատկապես նրա ընտանիքի անդամներին վտանգից զերծ պահելու նպատակով: Ավելին, երեխայի գտնվելու վայրի մասին տեղեկությունները կարող են չփոխանցվել նրա ծնողներին այն դեպքերում, երբ դա պահանջվում է երեխայի անվտանգության կամ այլ լավագույն շահերի նկատառումներով:

Ինքնորոշում և մասնակցություն

Ճանաչելով սեփական իրազեկված որոշումների և ընտրությունների իրավունքը՝ ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է խրախուսեն թրաֆիքինգի զոհերին հնարավորինս շատ մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացում: Աշխատակազմի անդամները պետք է զոհերի հետ միասին ձգտեն դեպի վերջիններիս սեփական անձի նկատմամբ հարգանքի և ինքնավարության վերականգնումը՝ ամրապնդելով նրանց վստահությունը և թույլ տալով վերագտնել հսկողությունը սեփական կյանքի և ապագայի նկատմամբ: Երեխաների հատուկ իրավունքների և կարիքների վերաբերյալ տե՛ս իրազեկված համաձայնության հարցին նվիրված համապատասխան բաժինը:

Անհատականացված վերաբերմունք և խնամք

Ճանաչելով այն հանգամանքը, որ թրաֆիքինգի զոհերն ունեն որոշ ընդհանրություններ իրենց փորձի և հանգամանքների առումով՝ աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն զոհերի անհատականությունը, այդ թվում՝ նրանց անձնական, մշակութային, գենդերային և տարիքային տարբերությունները և զանազան ապրումները թրաֆիքինգի ենթարկվելուց առաջ և հետո՝ մատուցելով նրանց հնարավորինս անհատականացված խնամք և աջակցություն: Աջակցության ողջ ընթացքում աշխատակազմի անդամները պետք է ձգտեն ապահովել առավել պատշաճ պաշտպանություն, աջակցություն և օգնություն, որը կհամապատասխանի տվյալ տուժած անձի կարիքներին և հանգամանքներին:

Խնամքի շարունակական բնույթ

Ծառայությունները պետք է մատուցվեն ամբողջական մոտեցման շրջանակներում՝ նպաստելով թրաֆիքինգի զոհերի վերականգնմանը և ապահովելով նրանց համար շարունակական համալիր խնամք՝ նրանց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վիճակին համապատասխան: Թրաֆիքինգի զոհերին մատուցվող աջակցության պատշաճ բնույթն ու որակն ապահովելու, ինչպես նաև նրանց կարիքները հնարավորինս բավարարելու նպատակով՝ ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է համագործակցեն այլ փորձառու աջակցություն մատուցողների հետ՝ կնքելով նրանց հետ համագործակցության պայմանագրեր և ձևավորելով զոհերի ուղղորդման և նրանց պատշաճ և համալիր ծառայություններ մատուցելու մեխանիզմներ:

Ռեսուրսների արդարացի բաշխում

Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ձգտեն բաշխել և մատուցել բոլոր ծառայությունները, նյութերը և ռեսուրսներն արդարացի կերպով՝ զոհերի կարիքներին համապատասխան: Ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամները պետք է մտապահեն, որ զոհերին կարող են հասանելի լինել նաև այլ ծառայություններ, և պետք է աջակցեն նրանց բոլոր առկա ռեսուրսների և ծառայություններից օգտվելու հարցում, այդ թվում այն ծառայություններից, որոնք մատուցվում են հասարակական, միջկառավարական և պետական կազմակերպությունների կողմից:

Երեխայի լավագույն շահերը

Երեխաներին տրամադրվող բոլոր աջակցության և պաշտպանության ծառայությունները պետք է հիմնված լինեն այն սկզբունքի վրա, որ առաջնահերթ նշանակություն պետք է ունենան երեխայի լավագույն շահերը: Անչափահասներին տրամադրվող օգնության հարցերն արծարծվում են սույն գլխի ողջ ընթացքում: Երեխաներին խնամք մատուցելու և նրանց հետ հարցազրույցներ անցկացնելու վերաբերյալ լրացուցիչ ուղղորդում կարելի է գտնել 5-րդ գլխի 5.6 բաժնում:

3.1 Ուղղորդում և տեղափոխում աջակցություն ստանալու համար

Անվտանգ և արժանապատիվ ուղղորդումը, ինչպես նաև զոհերի առաջնային աջակցությունը, անկախ նրանից, թե այն տեղի է ունենում արտերկրում, թե հայրենիքում, ներկայացված են սույն գլխի այս մասում:

3.1.1 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՒՂՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Նպատակակետ և տարանցիկ երկրներում թրաֆիքինգի զոհերին առնչվող չորս հիմնական սցենարներ:

- Զոհն ուղղորդվում է ծառայություն մատուցող կազմակերպություն կամավոր վերադարձի շրջանակներում, որն իրականացվում է մեկ այլ գործակալության, օրինակ՝ ոստիկանության կամ գործընկեր հասարակական կազմակերպությունների կողմից:
- Զոհն ուղղակիորեն դիմել է ծառայություն մատուցող կազմակերպություն՝ հայրենիք վերադառնալու հարցում աջակցություն ստանալու համար, կամ ուղղորդումն իրականացվել է նրա ընտանիքի անդամների կամ մտերիմների կողմից, կամ էլ որևէ հաճախորդի միջնորդությամբ:
- Զոհը վերադարձվում է մեկ այլ կազմակերպության, օրինակ՝ հասարակական կազմակերպության կամ պետական հաստատության միջնորդմամբ, իսկ ծառայություն մատուցող կազմակերպությունն աջակցություն է մատուցում միայն տարանցիկ և ծագման երկրներում:
- Զոհը դիմում է նպատակակետ կամ տարանցիկ երկրում հիմնական կամ ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար:

Առաջին երեք սցենարների դեպքում ուղղորդող կազմակերպությունը[3] նպատակակետ կամ տարանցիկ երկրում պետք է կազմակերպի զոհի աջակցված կամավոր վերադարձը, ինչպես նաև մեկնումից առաջ տրամադրվող անմիջական աջակցությունը՝ ծրագրելով վերաինտեգրման հարցում տրամադրվող օգնությունը, օրինակ՝ բժշկական, հոգեբանական և իրավական խորհրդատվությունը, որը պետք է տրամադրվի ընդունող կազմակերպության կողմից ծագման երկրում:

Այն դեպքում, երբ օտարերկրացի թրաֆիքինգի զոհը փորձում է կացության թույլտվություն ստանալ նպատակակետ կամ տարանցիկ երկրում, ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ուղղորդի զոհին և օգնի նրան կապ հաստատել տվյալ երկրում համապատասխան մարմինների, այդ թվում՝ ապաստանի հարցերով զբաղվող կազմակերպությունների, օրինակ, Փախստականների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ, եթե զոհը մտավախություն է հայտնում հայրենիք վերադառնալու կապակցությամբ:

3.1.1.1 Միջազգային ճանապարհորդության նախապատրաստական ընթացակարգեր

Զոհերի իրավունքները պաշտպանելու նպատակով՝ կազմակերպությունները պետք է համոզվեն, որ զոհի վերադարձը կամավոր է և իրականացվում է նրա իրազեկված գրավոր համաձայնություն հիման վրա: Այս նպատակով ծառայություն մատուցող կազմակերպությունները, որոնք աջակցություն են տրամադրում վերադարձի հարցում, կարող են պահանջել զոհերից ստորագրել կամավոր վերադարձի հայտարարագիր:

Աջակցված կամավոր վերադարձը կազմակերպելու համար պահանջվող ժամանակը կախված է յուրաքանչյուր երկրում առկա հանգամանքներից և յուրաքանչյուր անհատի առանձնահատկություններից: Իհարկե, բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստելու համար ժամանակ է հարկավոր, սակայն որոշակի ժամանակ է պահանջվելու նաև զոհերի հոգեբանական և բժշկական վիճակի կայունացման, ինչպես նաև զոհերին հասանելի տարբերակների շուրջ անվտանգ և ապահով միջավայրում խորհելու հնարավորության համար՝ նախքան որևէ նշանակալի որոշում կայացնելը:

Այս ժամանակային գործոնը նշանակալի դեր կունենա զոհի վերադարձին նախորդող ծառայությունների մատուցման հարցում: Շատ անգամ ծագման երկիր վերադարձի գործընթացի համար մի քանի օր կամ շաբաթ կպահանջվի, ընդ որում դրանից էլ կախված կլինի, թե ինչ ծառայություններ կմատուցվեն այդ ժամանակահատվածում: Զոհի անմիջական բարօրությունը մեկնումից առաջ առանցքային նկատառում է հանդիսանում, ուստի սովորաբար առաջնահերթությունը տրվում է անվտանգության և առողջական հարցերին, սակայն կարող են տրամադրվել այլ ծառայություններ՝ ժամանակի առկայության և դրանց հասանելիության պարագայում:

Զոհի հետ առաջնային հանդիպման ընթացքում և որևէ այլ հրատապ կարիքների բացակայության պայմաններում զոհին հարկավոր է առաջին օրվա ընթացքում վերականգնվելու ժամանակ տրամադրել՝ հայտնելով նրան, որ աշխատակազմի որևէ անդամ կքննարկի նրա հետ աջակցության հնարավոր տարբերակներն ավելի ուշ՝ հավանաբար հաջորդ օրը:

Բուժծառայություններ մեկնումից առաջ

Մեկնումից առաջ մատուցվող բուժծառայությունները, որպես կանոն, սահմանափակվում են առաջնային կամ անհետաձգելի բուժօգնությամբ և հիմնական բժշկական գնահատմամբ: Հիմնական բժշկական գնահատման ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել այնպիսի առողջական վիճակի վրա, որը կարող է լինել խիստ վտանգավոր վարակի տեսանկյունից (օրինակ՝ թոքախտ) և ազդել այլ զոհերի կամ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների առողջության վրա կամ բնակության հաստատման և ճամփորդության ընթացքում վտանգ ներկայացնել հանրային առողջության համար:

Զոհի առողջական վիճակի գնահատումը միտված է այնպիսի առողջական խնդիրների վերհանմանը, որոնք կարող են խափանել նրա անվտանգ ճամփորդությանը կամ բժշկական աջակցության կարիք առաջացնել վերադարձի ճամփորդության ցամաքային և (կամ) օդային հատվածներում:

Այս հարցն ուշադրություն է պահանջում, և ցանկացած բժշկական միջամտություն պետք է ուղղված լինի միայն ֆիզիկական կամ հոգեկան առողջության անհետաձգելի կարիքների բավարարմանը: Այս հանգամանքներում կարող են առաջանալ ռիսկեր՝ կապված

զոհին երկարաժամկետ բուժման կուրս նշանակելու և (կամ) այնպիսի դեղորայք նշանակելու հետ, որը չի կարելի շարունակել վերադարձի երկրում, օրինակ՝ բուժման կարգերի տարբերությունների պատճառով, ուստի՝ նման ռիսկերից պետք է խուսափել: Եթե զոհն ունի հրատապ բուժօգնության կարիք, որը չի կարելի հետաձգել մինչ նրա վերադարձը ծագման երկիր, ապա բուժումը պետք է նշանակի ծառայություն մատուցող կազմակերպության կամ պետության կողմից վարձված համապատասխան որակավորում ունեցող բուժաշխատողը: Եթե հայտնի է, որ որոշակի հիվանդության բուժումը չի կարող իրականացվել ծագման երկրում, ապա պետք է ջանք գործադրել նպատակակետ կամ երրորդ երկրում նման աջակցություն մատուցելու համար:

Ընդունող կազմակերպության աշխատակիցներին պետք է հայտնել ցանկացած հիվանդության մասին, որը կարող է որևէ ազդեցություն գործել ժամանումից հետո ցուցաբերվող աջակցության տեսակի և ծավալի վրա:

Ժամանակավոր կացարան

Կախված այն ժամանակից, որն անհրաժեշտ է ապահով աջակցված կամավոր վերադարձը կազմակերպելու և համակարգելու համար (հաշվի առնելով առողջության և անվտանգության հարցերը), կարող է անհրաժեշտություն առաջանալ միջանկյալ ժամանակաշրջանում զոհին ապահովելու անվտանգ կացարանով: Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունը չունի իր սեփական ապաստարանը, ապա կացարանը կարելի է գտնել տեղական միջկառավարական և հասարակական կազմակերպությունների կամ պետական կառույցների միջոցով:

Ժամանակավոր փաստաթղթեր և(կամ) մուտքի արտոնագրեր

Հնարավոր է, որ զոհը չունենա անձը հաստատող կամ ճամփորդական փաստաթուղթ, քանի որ մարդավաճառներն առգրավում են դրանք:

Ժամանակավոր ճամփորդական փաստաթղթերի և (կամ) անձը հաստատող փաստաթղթերի տրամադրմանը նպաստելու համար անհրաժեշտ է դիմել համապատասխան երկրի դեսպանություն կամ հյուպատոսարան՝ փոխարինող ճամփորդական փաստաթղթեր ստանալու համար, ինչն իրենից ներկայացնում է ժամանակատար թղթաբանական գործընթաց: Այդուհանդերձ, եթե զոհն ապաստան հայցելու ցանկություն է հայտնել, կամ եթե ապաստանի տրամադրման

ընթացակարգերը մեկնարկել են, ապա դեսպանություն կամ հյուպատոսարան դիմելու կարիք չկա: Որպես կանոն, խորհուրդ է տրվում դիմել նպատակակետ երկրում համապատասխան դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցներին՝ ծառայությունների մատուցման ծրագիրը պարզաբանելու համար և պարզել, թե արդյոք դրանք կարող են դյուրացնել զոհի վերադարձի գործընթացը:

Խորհուրդ է տրվում նաև ժողովներ կազմակերպել ծագման երկրում ընդունող կազմակերպության աշխատակազմի անդամների հետ, ովքեր կարող են տրամադրել հանդիպման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ:

.....

Անվտանգության զգուշացում

Թրաֆիքինգից տուժած անձանց անվտանգությունն ապահովելու լավագույն միջոցն է գաղտնի պահել տեղեկությունները, որպեսզի դրանք հասանելի լինեն հնարավորինս քիչ թվով մարդկանց: Անգամ բարի մտադրություններ ունեցող վստահելի անձը կարող է պատահաբար տեղեկություններ տրամադրել որևէ մեկին, ով ձգտում է վնաս պատճառել զոհին կամ աջակցություն մատուցող կազմակերպության անձնակազմին: Ուստի, որևէ մեկի, այդ թվում՝ դեսպանության կամ դիվանագիտական ներկայացուցչության աշխատակիցների հետ հաղորդակցվելիս հարկավոր է զգուշություն դրսևորել և տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերի կամ աջակցություն ստանալու համար պահանջվող միայն նվազագույն անհրաժեշտ տեղեկությունները: Պետք չէ դիմել դեսպանություններ կամ դիվանագիտական ներկայացուցչություններ թրաֆիքինգի այն զոհերի հարցով, ովքեր, վախենում են հայրենիք վերադառնալուց և ապաստան հայցելու ցանկություն են հայտնել:

.....

Անչափահասների վերադարձ

Թրաֆիքինգի ենթարկված անչափահասների կամավոր վերադարձի աջակցությունն իրենից ներկայացնում է բարդ և նրբանկատ հարց: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության 84-րդ կետում ամրագրված է, որ «Ծագման երկիր վերադարձը չի կարող դիտարկվել որպես հնարավոր տարբերակ, եթե կա «մեծ ռիսկի» հավանականություն, որ այդ վերադարձի արդյունքում կխախտվեն երեխայի հիմնարար մարդու իրավունքներ և

մասնավորապես, եթե կիրառելի է հարկադրական հայրենադարձումից հրաժարվելու սկզբունքը: Ըստ էության ծագման երկիր վերադարձը պետք է կազմակերպել միայն այն դեպքում, եթե այն բխում է երեխայի լավագույն շահերից»: Ծառայություն մատուցող կազմակերպության կողմից վերադարձի աջակցությունը կիրառելի է այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անչափահասը վերադառնալու ցանկություն հայտնի կամ հոժարակամ ընդունի օրինական խնամակալի խորհուրդն օգտվել հայրենիք վերադառնալու աջակցությունից, և եթե ռիսկերի գնահատման արդյունքում հաստատվի, որ վերադարձը որևէ վտանգ չի ներկայացնի երեխայի համար: Առանց ուղեկցողի անչափահասներին իրենց հայրենիք կամ որևէ երրորդ երկիր վերադառնալու աջակցություն տրամադրելիս հարկավոր է ապահովել հետևյալ պայմանները:

- **Երեխայի լավագույն շահը (նշված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում և, որպես կանոն, ուղղորդող երկրի ազգային օրենսդրության կամ քաղաքականության մեջ և (կամ) գործելակերպում), որը պետք է լինի ողջ գործընթացին մասնակցող բոլոր կողմերի ուշադրության կենտրոնում:**
- **Երեխայի մասնակցության և իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնություն:**
- **Ընտանիքի անդամների որոնում (եթե ընտանիքի անդամների որոնումը չի վտանգում երեխայի լավագույն շահերը կամ չի խախտում տվյալ անհատների իրավունքները)[5], երեխային և (կամ) խնամակալին բավականաչափ տեղեկությունների կամ խորհրդատվության տրամադրում, ընտանիքի անդամների գնահատում, որի միջոցով որոշվում է, թե արդյոք ընդունող երկրում երեխան կստանա ընտանեկան աջակցություն (ընտանիքի անդամների՝ երեխայի մասին հոգ տանելու համաձայնությունը և կարողությունը) կամ կօգտվի համապատասխան աջակցություն մատուցողների ծառայություններից և վերաինտեգրման մեխանիզմներից:**
- **Ուղղորդող երկրի օրենքներից կախված՝ երեխայի պաշտպանությունը պետք է ստանձնեն ծնողների դերում հանդես եկող սոցիալական ծառայության հաստատությունները:**
- **Նմանատիպ դեպքերում նախքան անչափահասին**

երկրից հեռացնելը հարկավոր է թույլտվություն խնդրել համապատասխան կազմակերպությունից:

- **Եթե կա որևէ կասկած թրաֆիքինգի դեպքի հետ ընտանիքի անդամների առնչության վերաբերյալ, ապա շատ կարևոր է, որ նման հավանականությունը դիտարկվի պատշաճ ուշադրությամբ, և կատարվի ընտանիքի գնահատում՝ պարզելու, թե արդյոք ընտանիքի անդամների ներգրավումը հանդես է եկել որպես թրաֆիքինգի դեպքի գործոն:**

Անվտանգության գնահատում

Կամավոր վերադարձի գործընթացի մեկնարկից առաջ անհրաժեշտ է կատարել անվտանգության գնահատում: Անվտանգության հետ կապված ռիսկերի գնահատման և նվազեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար անդրադարձեք 1-ին գլխին:

Որոշ համայնքների մշակութային, սոցիալական և իրավական տեսանկյունից ընդունելի է, որ ընտանիքի անդամները խուսափեն այն կնոջից, ով խայտառակել է իրենց ընտանիքը, և անգամ սպանեն նրան: Եթե թրաֆիքինգի զոհը կասկածներ ունի (կամ կասկածելու այլ տեղիք կա), որ նման միջավայր վերադառնալու պարագայում իր նկատմամբ կարող են ձեռնարկել բռնի գործողություններ, ապա հարկավոր է նրա հետ քննարկել այլընտրանքային տարբերակներ և նրա ցանկությամբ ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություններ:

Վերաինտեգրման ծրագրեր մեկնումից առաջ

Մեկնումից առաջ թրաֆիքինգի զոհի վերաինտեգրման պլանավորումը պետք է սահմանափակվի անհատի առանցքային գնահատմամբ (ինչպես ներկայացվում է ստորև), որի կիզակետում են «կարիքները և ցանկությունները», ներառյալ՝ հիմնական բժշկական գնահատումը, ինչպես նաև ընկալվող հավանականությունը և զոհի շարժառիթը (տես՝ ստորև բերված 3.2.1 բաժինը):

Լիարժեք վերաինտեգրման պլանի կազմումը պետք է թողնել զոհի վերադարձի երկրում ընդունող կազմակերպության աշխատակիցներին, ովքեր պատասխանատվություն են կրելու վերաինտեգրման աջակցության համար: Խիստ կարևոր է օգնել թրաֆիքինգի զոհին

իրատեսական պատկերացում կազմել առկա հնարավորությունների և տարբերակների, այլ ոչ թե անիրական ակնկալիքների մասին, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ տվյալ անհատի արդյունավետ վերահինտեգրման վրա:

Ճամփորդական դրամաշնորհ

Վերադարձող զոհերին դրամաշնորհի կամ համապատասխան նյութերի, օրինակ՝ սննդի և ջրի տրամադրումը երբեմն հանդիսանում է նրանց բարեհաջող վերադարձի անհրաժեշտ պայմանը: Դրամաշնորհի կամ համապատասխան նյութերի տրամադրման նպատակն է դյուրացնել զոհի վերադարձը և հոգալ նրա վերադարձի ընթացքում առաջացած բոլոր ծախսերը, կարիքները և սնունդը, մասնավորապես՝ տարանցիկ երկրով անցնելու անհրաժեշտության պարագայում: Զոհին պետք է հնարավորինս տրամադրել ոչ թե կանխիկ գումար, այլ համապատասխան ծառայություններ: Օրինակ, երբեմն ավելի ճիշտ է զոհին կանխիկ գումարի փոխարեն տրամադրել նախնական պայմանավորվածությամբ ձեռք բերված կացարան, տուփերում փաթեթավորված սնունդ կամ դեղորայք: Նման գործելակերպը բառացում է այն հավանականությունը, որ զոհը կարող է կորցնել կանխիկ գումարը կամ անհարկի ծախսեր կատարել ճամփորդության ընթացքում:

Առավել արդյունավետ է կազմակերպել թրաֆիքինգի զոհին մատուցվող աջակցությունը վերջնական նպատակակետ երկիր նրա ժամանելուց անմիջապես հետո: Ծառայություն մատուցող այն կազմակերպությունները, որոնք չունեն մասնաճյուղ տվյալ վայրում, պետք է վստահելի գործընկերներ որոնեն այլ կազմակերպություններում՝ զոհի աջակցությունը կազմակերպելու նպատակով: Այդուհանդերձ, եթե զոհը ցանկություն հայտնի վերադառնալ այնպիսի վայր, որտեղ համապատասխան ծրագրերը չեն գործում, ապա կարող է անհրաժեշտություն առաջանալ մատուցելու այլ տեսակի ուղղակի աջակցություն, օրինակ՝ վերադարձից առաջ բուժօգնության կամ վերաբնակեցման դրամաշնորհի տրամադրում:

Զոհերի հետ տարվող նախապատրաստական աշխատանքներ մեկնումից առաջ

Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ներկայացնեն տրամադրվելիք վերադարձի աջակցության համառոտ նկարագիրը: Որպես կանոն, վերադարձող զոհերին հուզում է այն հարցը, թե իրենցից որքան ժամանակ կպահանջվի հայրենիք վերադառնալու

համար: Հիմք ընդունելով առանձին հանգամանքները (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթերի առկայությունը)՝ հարցազրույց անցկացնող անձը պետք է գնահատի անհրաժեշտ քայլերը և որոշի, թե որքան ժամանակ կպահանջվի տվյալ գործընթացն ավարտին հասցնելու համար: Զոհը պետք է հստակ պատկերացում կազմի վերադարձի գործընթացի և դրա միջին տևողության մասին: Զոհին պետք է տեղեկացնել նաև ցանկացած գործոնի մասին, որը կարող է արագացնել կամ դանդաղեցնել գործընթացը, որպեսզի նա չզարմանա նախատեսվածից ավելի շուտ կամ ուշ ճանապարհ ընկնելու դեպքում:

Զոհերի պատշաճ և անվտանգ վերադարձը դյուրացնելու նպատակով ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է վերադարձից առաջ պատշաճ նախապատրաստական աշխատանք տանի զոհի հետ: Հարկավոր է տեղեկություններ տրամադրել հետևյալ հարցերի շուրջ.

- Առկա իրավունքներ և տարբերակներ, վերադարձի կանոններ և նրանց արդարացումը,
- Ընդունող կազմակերպության հեռախոսահամարը և կոնտակտային անձի անունը,
- Ճամփորդական դրամաշնորհի վճարը (եթե կիրառելի է),
- Ուղևորության ընթացքում ալկոհոլ օգտագործելու արգելք, մասնավորապես՝ դեղամիջոցներ ընդունելու պարագայում,
- Ընդունող երկրում հասանելի աջակցություն:

Վերաինտեգրման տարբեր հնարավորությունների մասին զոհին տեղեկություններ տրամադրելիս շատ կարևոր է շեշտել այն իրողությունը, որ վերաինտեգրման վերջնական ծրագիրը կազմվելու է ընդունող երկրում վերաինտեգրման վերջնական գնահատումից հետո:

Խիստ կարևոր է օգնել թրաֆիքինգի զոհին իրատեսական պատկերացում կազմել ընդունող երկրում առկա հնարավորությունների մասին, քանի որ ուղղորդող անձնակազմի կողմից կեղծ տեղեկությունների հայտնումը բացասաբար կանդրադառնա տվյալ անհատի արդյունավետ վերաինտեգրման վրա:

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է փորձի ապահովել հետևյալ պայմանների բավարարումը նախքան զոհի մեկնումը և (կամ) ուղղորդումը:

- Թրաֆիքինգի զոհի ֆիզիկական և հոգեկան առողջությունը

բավարար է ներկայիս ժամանակավոր կացարանից անվտանգ և կամավոր մեկնումը կազմակերպելու համար:

- Զոհը նշել է, որ հասկացել է մեկնման բոլոր ընթացակարգերը, և տվել դրանց մասնակցելու համաձայնությունը:
- Զոհի հետ համատեղ քննարկումների արդյունքում ընտրվել է անվտանգ և հարմար կացարան, որտեղ զոհը կարող է մնալ առնվազն ժամանակավոր:
- Նախքան մեկնումը պատրաստվել են զոհի անձը հաստատող փաստաթղթերը, ինչպես նաև իրավական, վարչական և ճամփորդական բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
- Զոհին բացատրվել և տրամադրվել են բոլոր համապատասխան ծառայությունների ուղղորդումները և լրացուցիչ խնամքի առաջարկությունները:
- Ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպություն զոհին ուղղորդելիս բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և առկա տեղեկությունները փոխանցվել են ընդունող կազմակերպությանը (մանրամասները ներկայացված են ստորև):
- Տարանցիկ կամ ընդունող երկրում գործընկեր հասարակական կազմակերպություն կամ մեկ այլ ծառայություն մատուցողի մոտ զոհին ուղղորդելիս նախապես կարգավորվել են ճամփորդության և ծառայությունների հետ կապված բոլոր հարցերը, և ապահովվել է գործընկեր հասարակական կազմակերպությանը կամ որևէ այլ ծառայություն մատուցողին համապատասխան հանձնարարականների ուղարկումը և նրանց կողմից ստացումը:
- Թրաֆիքինգի զոհին տրամադրվել են բոլոր անհրաժեշտ անձնական փաստաթղթերի պատճենները, ներառյալ՝ բուժօգնության և դեպքի առաջընթացի փաստաթղթերը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տվյալներ պարունակող փաստաթղթեր:
- Զոհին սպառիչ տեղեկատվություն է տրամադրվել մեկնելու, տեղափոխվելու և հետագա աջակցության բոլոր փուլերի վերաբերյալ:

Տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող զոհեր, ովքեր դիմում են ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար

Թրաֆիքինգի մասին արձանագրության 7-րդ հոդվածը մասնակից պետություններին առաջարկում է ընդունել այնպիսի օրենսդրական

կամ այլ համապատասխան միջոցառումներ, որոնք թույլ կտան թրաֆիքինգից տուժած անձանց համապատասխան դեպքերում մնալ երկրի տարածքում՝ ժամանակավոր կամ մշտական կարգավիճակով: Այն երկրներում, որտեղ գործում է մշտական և ժամանակավոր կացության թույլտվություն (կամ տրվում է ժամանակավոր կամ մարդասիրական մուտքի արտոնագիր) տրամադրելու մեխանիզմ, թրաֆիքինգի զոհերը պետք է տեղեկատվություն ստանան համապատասխան ընթացակարգերի և հետագա քայլերի վերաբերյալ: Ելնելով անձնական հանգամանքներից (օրինակ՝ զոհը մուտքի արտոնագրի իրավունք է ստանում մարդավաճառների դեմ ընթացող դատավարությանը մասնակցելու կամ այլ կարգավիճակ կապակցությամբ) և ծառայություն մատուցող կազմակերպության ունեցած վարչական փորձից (որքան ժամանակ է սովորաբար պահանջվում փաստաթղթեր պատրաստելու և որոշում ստանալու համար, ինչպիսին է հաջողության հավանականությունը և այլն), հարցազրույց անցկացնող անձը պետք է գնահատի անհրաժեշտ քայլերը և գործընթացն ավարտելու համար պահանջվող ժամանակահատվածը: Զոհը պետք է հստակ տեղեկացվի տվյալ գործընթացի մասին, ինչպես նաև դրա իրականացման համար միջինում անհրաժեշտ ժամանակահատվածի վերաբերյալ: Նա պետք է տեղեկացվի ցանկացած իրողության մասին, որը կարող է արագացնել կամ դանդաղեցնել տվյալ գործընթացը՝ դրանով իսկ պատրաստելով տուժած անձին և նվազագույնի հասցնելով տհաճ անակնկալների հավանականությունը: Ծառայություն մատուցողները պետք է իրազեկված լինեն, թե որքան ժամանակ կարող է պահանջել տվյալ գործընթացը՝ ըստ հարկի պլանավորելով առաջարկվող և մատուցվող ծառայությունները:

Տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող զոհերը, ովքեր դիմում են ապաստանի իրավունք ստանալու համար

Ծառայություն մատուցող այն կազմակերպությունները, որոնք աշխատում են թրաֆիքինգից տուժած անձանց հետ, պետք է լավ գիտակցեն, որ որոշ զոհեր կարող են մտավախություններ ունենալ հայրենի երկիր կամ համայնք վերադառնալու առնչությամբ: Այսպիսով, զոհերին պետք է տրամադրվի ապաստանի ընթացակարգերից օգտվելու և (կամ) այլ պաշտպանության մեխանիզմներից օգտվելու հնարավորություն նպատակակետ կամ տարանցիկ երկրներում՝ կախված նրանից, թե որտեղ է նրանց հաջողվել դուրս պրծնել մարդավաճառների ճիրաններից և օգնության դիմել: Այն հանգամանքը, որ թրաֆիքինգի

ենթարկված որոշ անձինք, վտանգի կենթարկվեն հայրենի երկիր վերադառնալու պարագայում, ընդունվում է Թրաֆիքինգի մասին արձանագրության 14–րդ հոդվածի համապատասխան դրույթներով:

Թրաֆիքինգի մասին արձանագրության 14–րդ հոդվածն ամրագրում է, որ «սույն արձանագրության ոչ մի դրույթ չի անդրադառնում միջազգային, այդ թվում մարդասիրական և միջազգային իրավունքների ներքո, մասնավորապես կիրառելի դեպքերում՝ Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի և 1967 թվականի դրա արձանագրության դրույթներով նախատեսված անվերադարձելիության սկզբունքով պետություններին վերապահված իրավունքներին, նրանց վրա դրված պարտավորություններին և պարտականություններին»:

Անվերադարձելիության սկզբունքը հաճախ մեջբերվում է որպես միջազգային պաշտպանության հիմնաքարը: Անվերադարձելիության սկզբունքը, որն ամրագրված է Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի (այսուհետև՝ 1951 թվականի կոնվենցիա) դրույթներով, ձեռք է բերել միջազգային սովորութային իրավունքի կարգավիճակ: Դա նշանակում է, որ ժամանակի ընթացքում այս սկզբունքը դարձել է պարտադիր բոլոր պետությունների համար, այդ թվում՝ այն պետությունների համար, որոնք դեռևս չեն անդամակցել 1951 թվականի կոնվենցիային: Բոլոր պետությունները պետք է հարգեն անվերադարձելիության սկզբունքը, որն ընդգրկում է հետևյալը.

(i) չվերադարձնել ապաստան հայցողներին և փախստականներին մի վայր, որտեղ նրանց կյանքն ու ազատությունը վտանգի կենթարկվի, (ii) չարգելել ապաստան հայցողներին և փախստականներին անվտանգություն փնտրել որևէ երկրում, նույնիսկ եթե նրանք երկիր են ներթափանցել մաքսանենգ ճանապարհով կամ թրաֆիքինգի միջոցով, քանի որ կա հնարավորություն, որ նրանք վերադարձվեն մի երկիր, որտեղ նրանց կյանքը կամ ազատությունը վտանգի կենթարկվեն, (iii) չմերժել հետապնդումից փրկվող և իրենց պետության սահման հասած անձանց մուտքն իրենց տարածք (ապաստանի հնարավորություն):

Անվերադարձելիության պարտավորություններն ամրագրված են նաև միջազգային կամ տարածաշրջանային մարդու իրավունքների փաստաթղթերի դրույթներով, այդ թվում՝ Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածով: Մարդու իրավունքների գծով ստանձնած պարտավորությունները, որոնք բխում են Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 31 Ընդհանուր մեկնաբանության (կետ 12) դրույթներից[6],

նույնպես կարող են առնչվել թրաֆիքինգից տուժած այն անձանց, ովքեր ունեն անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու մտավախություն այդ պետությունը չներկայացնող դերակատարների կողմից իրենց հայրենի երկրում:

Ինչ վերաբերում է երեխաներին, Երեխաների հարցերով կոմիտեն իր թիվ 6 Ընդհանուր մեկնաբանության մեջ հայտարարել է, որ «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները կատարելիս պետությունները չպետք է երեխային վերադարձնեն մի երկիր, որտեղ կան բավարար հիմքեր կարծելու, որ նա կենթարկվի անդառնալի վնասի, այդ թվում՝ առանց սահմանափակման այն վտանգների, որոնք հիշատակվում են կոնվենցիայի 6-րդ և 37-րդ հոդվածներով, կամ դեպի այնպիսի երկիր, որի տարածքից նա կհեռացվի, կամ էլ մի երկիր, որտեղից նա կարող է հեռացվել հետագայում»:[7]

Անվերադարձելիության սկզբունքը կարող է խախտվել թրաֆիքինգից տուժած այն անձանց վերադարձի դեպքում, ովքեր ունեն իրենց ծագման երկրներում հետապնդման կամ այլ լուրջ վնասի ենթարկվելու, օրինակ՝ կրկին թրաֆիքինգի զոհ դառնալու, մարդավաճառների կամ հանցավոր ցանցերի կողմից պատժամիջոցների թիրախ դառնալու և (կամ) հասարակության կողմից մերժվելու, սոցիալական բացառման կամ խտրականության առարկա դառնալու մտավախություն՝ այն աստիճան, որ դա հետապնդում համարվի: Օրինակ, որոշ զոհեր կարող են իրենց ծագման երկրներում կրկին թրաֆիքինգի կամ էլ մարդավաճառների և նրանց հետ կապված անձանց կողմից պատժամիջոցների, հալածանքի, սպառնալիքների կամ ահաբեկման առարկա դառնալու մտավախություն ունենալ: Բացառիկ երևույթ չէ նաև, որ թրաֆիքինգի զոհերը ահաբեկման կամ խտրականության հետ կապված մտավախություններ ունեն իրենց ծագման երկրների իշխանությունների, ընտանիքի անդամների և համայնքի կողմից սոցիալական մեկուսացման և մերժման կապակցությամբ: Թրաֆիքինգի մանկահասակ զոհերը, ովքեր թրաֆիքինգի են ենթարկվել իրենց ընտանիքի անդամների կողմից, կարող են վատ վերաբերմունքի առարկա դառնալու առանձնակի վտանգի ենթարկվել իրենց հայրենի համայնքներում:

Փախստականների կարգավիճակի մասին 1951 թվականի կոնվենցիայի դրույթների համաձայն՝ փախստական է համարվում այն անձը, ով հետապնդման ենթարկվելու հիմնավորված մտավախություն ունի ռասայական պատկանելիության, կրոնի, ազգության, որևէ սոցիալական խմբի անդամության, կամ քաղաքական հայացքների պատճառով,

գտնվում է իր քաղաքացիության երկրի սահմաններից դուրս և ի վիճակի չէ կամ չի ցանկանում օգտվել իր երկրի ընձեռած պաշտպանությունից՝ նման մտավախություն ունենալու պատճառով: Թրաֆիքինգի զոհը, ով իր ծագման երկրում հետապնդման ենթարկվելու հիմնավորված մտավախություն ունի փախստականի սահմանմամբ ամրագրված հինգ հիմքերից որևէ մեկի կամ մեկից ավելի հիմքերի առկայության դեպքում, ունի փախստականի կարգավիճակ ստանալու իրավունք: Թեև թրաֆիքինգի սցենարին բնորոշ փորձն ու մարդու իրավունքների խախտումները միշտ ենթադրում են հետապնդում, պատժամիջոցներ, հալածանք սպառնալիքներ կամ ահաբեկման այլ ձևեր, սոցիալական մեկուսացումը կամ մերժումը կարող են բերել մարդու իրավունքների լուրջ խախտումների և հետապնդման որևէ առանձին տուժած անձի կարծիքների, զգացումների և հոգեվիճակի լույսի ներքո: Հաշվի առնելով մարդու իրավունքների լուրջ խախտումները, որոնք բնորոշ են թրաֆիքինգին, թրաֆիքինգի զոհը կարող է ենթարկվել հետապնդման առանձնապես դաժան ձևերի, որոնք կարող են ազդել հայրենիք վերադառնալու նրա սուբյեկտիվ մտավախության վրա և այսպիսով հիմնավորել փախստականի կարգավիճակ ստանալու նրա պահանջը:

Ապաստան հայցելու այն դեպքերում, որտեղ խոսքը գնում է թրաֆիքինգի մանկահասակ զոհերի մասին, խիստ կարևոր է կիրառել փախստականի սահմանումը՝ հաշվի առնելով տարիքային և սեռական առանձնահատկությունները և ընկալելով երեխաներին բնորոշ հետապնդման ձևերն ու դրսևորումները: Օրինակ, թրաֆիքինգի մանկահասակ զոհերը կարող են ենթարկվել երեխաներին բնորոշ շահագործման ձևերի, ինչպիսիք են՝ մանկական պոռնկագրությունը, երեխաների սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, մասնակցությունը ուղտերի արշավներին և բռնի որդեգրումը: Փախստականների հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գերագույն հանձնակատարի գրասենյակի պատրաստած Փախստականների կարգավիճակի վերաբերյալ 1951 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի «ա» կետի 2-րդ ենթակետի և (կամ) 1967 թվականի արձանագրության դրույթները թրաֆիքինգի զոհերի կամ թրաֆիքինգի վտանգի ենթարկված անձանց նկատմամբ կիրառելու մասին Միջազգային պաշտպանության ուղեցույցն իրենից ներկայացնում է մանրամասն փաստաթուղթ առ այն, թե ինչպես կիրառել փախստականի սահմանումը թրաֆիքինգի զոհերի նկատմամբ:[8]

Թրաֆիքինգի զոհերը, ովքեր հայրենիք վերադառնալու հետ կապված մտավախություն ունեն և չունեն փախստականի կարգավիճակ ստանալու

իրավունք, 1951 թվականի կոնվենցիայի դրույթներով կարող են դիմել ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու այլ ձևերի համար, որոնք նախատեսված են ազգային օրենսդրությամբ (տե՛ս վերևում՝ «Զոհերը տարանցիկ և նպատակակետ երկրներում, ովքեր դիմում են ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու համար»):

Ուստի, հարցազրույց անցկացնող անձինք և խորհրդատուները, ովքեր աշխատում են ծառայություն մատուցող կազմակերպություններում, պետք է զգոն լինեն թրաֆիքինգի այն զոհերին նույնականացնելու հարցում, ովքեր իրենց ծագման երկրներում կարող են ենթարկվել հետապնդման վտանգի: Համապատասխան հարցերն այն հնարավոր սպառնալիքների և ռիսկերի վերաբերյալ, որոնց կապակցությամբ զոհը կարող է մտավախություններ ունենալ, պետք է տրվեն խորհրդատվությունների և նախնական զննման հարցազրույցների շրջանակներում: Բոլոր զոհերը պետք է տեղեկատվություն ստանան ապաստան հայցելու հնարավորությունների վերաբերյալ, և դրանց առկայության դեպքում պետք է տեղեկացվեն կացության թույլտվություն ստանալու թրաֆիքինգի զոհերի համար վերապահված հատուկ ընթացակարգերի մասին:

Թրաֆիքինգի զոհը, ով նույնականացվել է որպես փախստական, կարող է ապաստանի երկրում լրացուցիչ հալածանքների, պատժի կամ կրկին թրաֆիքինգի ենթարկվելու հետ կապված մտավախություններ ունենալ: Եթե փախստականը վտանգի է ենթարկվում ապաստանի երկրում կամ ունի որևէ հատուկ կարիքներ, ապա կարելի է դիտարկել որևէ երրորդ երկրում նրան վերաբնակեցնելու անհրաժեշտությունը:[9]

3.1.1.2 Միջազգային հաղորդակցման ընթացակարգեր

Կարևոր է ապահովել շարունակական և արագ տեղեկատվության հոսքը ուղղորդող և ընդունող ծառայություն մատուցող կազմակերպությունների միջև՝ վերադարձի գործընթացը համակարգելու և անվտանգության սպառնալիքներից զերծ մնալու նպատակով: Ծանուցումների հաջորդիվ ներկայացված տեսակներն առաջարկվում են որպես նվազագույն չափանիշներ և ներառում են՝

- ուղղորդող կազմակերպության աջակցության հայտի ծանուցում,
- ընդունող կազմակերպության աջակցության հայտի հաստատում,
- ուղղորդող կազմակերպության վերաինտեգրման աջակցության հայտ,

- ընդունող կազմակերպության վերահինտեգրման աջակցության հայտի հաստատում,
- ուղղորդող կազմակերպության հաստատում մեկնումից հետո,
- ժամանման հաստատում ընդունող կազմակերպության կողմից:

Անվտանգության զգուշացում

Նշված տեղեկությունները կարող են հայտնվել կողմնակի անձանց ձեռքերում: Ուստի, փոխադրման անվտանգությունն ապահովելու համար հարկ է ապահովել փոխադրման մանրամասների հաղորդման գործընթացի անվտանգությունը: Նման տեղեկությունների հաղորդումը պետք է կատարվի անվտանգության առավելագույն պահմանման մակարդակով, օրինակ՝ էլեկտրոնային հաղորդագրությունների կամ հեռախոսային զանգերի ծածկագրմամբ:

Ուղղորդող կազմակերպության աջակցության հայտի ծանուցում

Ուղղորդող կազմակերպությունից ընդունող կազմակերպությանը տրամադրվող տեղեկությունները պետք է ներառեն.

- Ենթադրյալ զոհի անունը,
- Ծագման երկրում ծննդյան տարեթիվն ու բնակության վայրը (եթե զոհը վերադառնում է ծագման երկիր),
- Նախնական զննման հարցազրույցի ձևը (տե՛ս գլուխ 2, հավելված 1),
- Տվյալ անձի կասկածվող կամ փաստացի առողջական վիճակի կամ խոցելի դիրքի նշում,
- Անվտանգության հարցերի և ռիսկերի գնահատում,
- Մեկնելու ակնկալվող ամսաթիվն ու ժամը, անհրաժեշտության դեպքում,
- Անհրաժեշտ որևէ այլ կարևոր հարցեր:

Թրաֆիքինգից տուժած անձանց նույնականացման և նախնական զննման առաջարկվող ուղեցույցը ներկայացված է 2-րդ գլխի 1-ին հավելվածում՝ «Նախնական զննման հարցազրույցի ձև»:

Յուրաքանչյուր դեպքում, երբ որևէ հասարակական կազմակերպություն կամ մեկ այլ ուղղորդող կազմակերպություն նույնականացնում է հնարավոր զոհին, տվյալ կազմակերպությունը պետք է փորձի իրականացնել նախնական զննման ընթացակարգը՝

որոշելու այն հարցը, թե արդյոք նույնականացված անձն իրականում թրաֆիքինգից տուժած անձ է հանդիսանում Պալերմոյի արձանագրության դրույթներով: Այս ձևը գործիք է հանդիսանում նման գործընթացի իրականացման համար:

Այս տեղեկությունները պետք է փոխանցվեն ընդունող կազմակերպությանը: Այս տեղեկությունների, ինչպես նաև ուղղորդող կազմակերպության ուղղակի խորհրդակցության հիման վրա ընդունող կազմակերպությունը պարտավոր է որոշել այն հարցը, թե արդյոք ուղղորդվող անձն իրավասու է աջակցություն ստանալ տվյալ կազմակերպության առաքելության և ուղեցույցի շրջանակներում:

Աջակցության հայտի հաստատում ընդունող կազմակերպության կողմից

Եթե ընդունող կազմակերպությունը եզրակացնում է, որ նույնականացված անձն իրականում թրաֆիքինգի զոհ է հանդիսանում և (կամ) իրավասու է վերաինտեգրման աջակցություն ստանալ տվյալ կազմակերպության ծրագրի շրջանակներում, ապա վերջինս պետք է ուղղորդող կազմակերպությանը ծանուցի իր համաձայնության մասին և ընդունի զոհին՝ մատուցելով նրան վերաինտեգրման աջակցություն: Եթե կարգավիճակի որոշման արդյունքում տվյալ կազմակերպությունը գալիս է այն եզրակացության, որ տվյալ անձը թրաֆիքինգի զոհ չի հանդիսանում կամ որևէ այլ պատճառներով չի օգտվում աջակցություն ստանալու իրավունքից, ապա ընդունող կազմակերպությունը պետք է ուղղորդող կազմակերպությանը տեղեկացնի այն մասին, որ այն ի վիճակի չի լինի տվյալ անհատին աջակցություն մատուցել, քանի որ տվյալ դեպքը չի բավարարում իրենց ծրագրով ամրագրված նախապայմաններին: Այդ կազմակերպությունը պետք է նաև ուղղորդման առաջարկություն ներկայացնի մեկ այլ կազմակերպություն, որը կարող է մատուցել անհրաժեշտ աջակցությունը:

Հաստատման հաղորդագրությունում պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները.

- Զոհի անունը,
- Ծագման երկրում ծննդյան տարեթիվն ու բնակության վայրը (եթե զոհը վերադառնում է ծագման երկիր),
- Հաստատում առ այն, որ տվյալ զոհը վերաինտեգրման աջակցության իրավունք ունի (կամ չունի նման իրավունք)

նույնականացման և նախնական զննման հրահանգների հիման վրա,

- Հաստատում առ այն, որ տվյալ զոհին կդիմավորեն հանդիպման կետում, ինչպես նաև հանդիպող անձի անունը՝ անհրաժեշտության դեպքում,
- Որևէ լրացուցիչ տեղեկությունների պահանջ՝ անհրաժեշտության դեպքում.
- Ուղղորդում մեկ այլ կազմակերպություն, եթե տվյալ անձը չունի իրենց աջակցությունից օգտվելու իրավունք:

Վերահինտեգրման աջակցության հայտ

Տվյալ անձի կարգավիճակը հաստատելուց և ուղղորդման ընդունվելուց հետո վերահինտեգրման աջակցության հայտը պետք է ուղղորդող կազմակերպության կողմից ուղարկվի ընդունող կազմակերպություն: Այս հայտում պետք է ներկայացվի տվյալ զոհի համար պահանջվող աջակցությունը: Հայտն իրենից չի ներկայացնում վերահինտեգրման ծրագիր: Վերահինտեգրման ծրագրերը պետք է մշակվեն վերահինտեգրման ծառայություններն ընդունող երկրում համակարգող կազմակերպության կողմից: Այդուհանդերձ, եթե զոհն արտահայտել է որևէ հատուկ կարիքներ կամ ցանկություններ, կամ եթե ուղղորդող կազմակերպությունը տեղյակ է նրա հատուկ կարիքների մասին, ապա դրանք նույնպես պետք է հայտնվեն ընդունող կազմակերպությանը:

Վերահինտեգրման աջակցության հաստատում

Ուսումնասիրելով վերահինտեգրման աջակցության հայտը՝ ընդունող կազմակերպությունը պետք է որոշի, թե արդյոք այն կարող է մատուցել առաջարկվող աջակցությունը: Եթե կարող է, ապա անհրաժեշտ վերահինտեգրման աջակցությունը մատուցելու հաստատումը հաղորդվում է ուղղորդող կազմակերպությանը: Եթե պահանջվող աջակցության համար անհրաժեշտ է ֆինանսական օգնություն, ապա այս հանգամանքը պետք է պարզ նշվի:

Հաստատում ուղղորդող կազմակերպության կողմից մեկնումից հետո

Այն դեպքերում, երբ զոհն ընդունվել է աջակցություն ստանալու համար, և նրան աջակցություն մատուցելու համար պահանջվում է միջազգային փոխադրում, մեկնումից հետո պետք է հաստատում

ուղարկվի ուղղորդող կազմակերպություն: Ֆիզիկական մեկնումից հետո պետք է անմիջապես հաստատում ուղարկել ընդունող կազմակերպություն: Եթե վերջին որոպեին որևէ փոփոխություն է տեղի ունենում, ապա այդ հանգամանքը պետք է հատուկ ընդգծվի:

Մեկնումից հետո ուղարկվող ծանուցումը պետք է ընդգրկի հետևյալ տվյալները.

- Զոհի անունը,
- Ծննդյան ամսաթիվը և բնակության վայրը,
- Ճամփորդական տվյալները (փոխադրամիջոցները, փոխադրողի անվանումը և այլն),
- Վերջնական նպատակակետ ժամանելու օրն ու ժամը,
- Ուղղորդողների անուն(ներ)ը,
- Ցանկացած այլ կարևոր տեղեկություններ:

Ժամանման հաստատում ընդունող կազմակերպության կողմից

Ընդունող կազմակերպությունը պետք է ժամանման հաստատում ուղարկի կամ էլեկտրոնային փոստով կամ էլ պետք է հեռախոսով հայտնի տուժած անձի ժամանելու մասին: Ժամանման հաստատումը պետք է ընդգրկի հետևյալ տվյալները.

- Զոհի անունը,
- Ծննդյան ամսաթիվը,
- Հաստատում առ այն, որ զոհը հասել է ժամանման կետ,
- Ցանկացած այլ կարևոր տեղեկություններ:

3.1.1.3 Միջազգային ճանապարհորդական ընթացակարգեր

Ճանապարհորդության պլանավորում

Վերադարձի աջակցության համար համաձայնություն, թույլտվություն և ֆինանսավորում ստանալուն պես և մինչև ճամփորդական փաստաթղթերի և անձը հաստատող փաստաթղթերի տրամադրումը պետք է ձևավորվի ճամփորդության նախնական երթուղի: Անհրաժեշտության դեպքում՝ ճամփորդության ժամանակացույցը պետք է այնպես կազմվի, որ զոհն ընդունող երկիր հասնի հնարավորինս վաղ ժամին և միայն աշխատանքային օրերին: Նախնական երթուղու

հաստատվելուն պես հարկավոր է նախնական ծանուցում ուղարկել ընդունող կազմակերպություն:

Փոխադրամիջոցներ

Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ձգտեն չափանիշներ սահմանել վերադարձի գործընթացի համար՝ ուղղորդող և ընդունող երկրների միջև՝ բարելավելու զոհերի անվտանգ, արժանապատիվ և մարդկային վերադարձի գործընթացը: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ փոխադրման նախընտրելի միջոցը սովորաբար օդային ճանապարհորդությունն է, քանի որ այն առավել կազմակերպված և կանխատեսելի է, քան փոխադրման այլ ձևերը, օրինակ՝ փոխադրումն գնացքով կամ ավտոբուսով: Ուստի, օդային ճանապարհորդությունը նախընտրելի է զոհի անվտանգության տեսանկյունից: Եթե օդային փոխադրումն անհնար է, ապա հարկավոր է ամեն ջանք գործադրել և սահմանել այլընտրանքային երթուղի և փոխադրամիջոց հնարավորինս քիչ տարանցիկ կետերով:

3.1.2 ՈՒՂՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՐԿՐԻ ՆԵՐՍՈՒՄ

Ստորև բերված աշխատանքային ընթացակարգերը պետք է պահպանվեն՝ ապահովելու զոհերի ուղղորդման և վերաինտեգրման անվտանգ ու արժանապատիվ ընթացքը, երբ վերջիններս վերադառնում են հայրենիք սեփական միջոցներով կամ ուղղորդվում են այլ կազմակերպությունների կողմից և ունեն վերաինտեգրման աջակցության կարիք:

Նման դեպքեր կարող են ի հայտ գալ երեք իրավիճակներում.

- Երբ զոհը ժամանել է հայրենիք արտաքսման կամ նպատակակետ երկրի տարածքից վարչական հեռացման հետևանքով և դիմում է կամ ուղղորդվում ծառայություն մատուցող կազմակերպություն աջակցություն ստանալու համար,
- Այն դեպքերում, երբ թրաֆիքինգի զոհը ժամանել է անկախ և դիմում է կամ ուղղորդվում ծառայություն մատուցող կազմակերպություն աջակցություն ստանալու համար,
- Այն դեպքերում, երբ զոհը թրաֆիքինգի է ենթարկվել իր երկրի ներսում:

Գծապատկեր 1՝ Միջազգային ուղղորդումների գծագիր



Անկախ հանգամանքներից՝ ծառայություն մատուցող կազմակերպությունն ընդունող երկրում պետք է անդրադառնա ընդունման և վերաինտեգրման աջակցության բոլոր հարցերին:

3.1.2.1 Նախապատրաստական ընթացակարգեր երկրի ներսում

Բոլոր դեպքերում մատուցվող ամբողջ աջակցությունը պետք է լինի կամավոր և հիմնված լինի զոհի իրազեկված գրավոր համաձայնության, իսկ վերջինիս անգրագետ լինելու պարագայում՝ նրա բանավոր համաձայնության վրա:

Բժշկական աջակցություն

Վերաինտեգրման աջակցություն հայցող հաստատությունը, կազմակերպությունը կամ մարմինը պետք է որոշի զոհի ճանապարհորդելու ընդունակությունը՝ երկրի ներսում ուղղորդման անհրաժեշտության դեպքում: Ծառայություն մատուցող

կազմակերպությունը պետք է մեկնումից առաջ տեղեկատվություն ստանա որևէ իրական կամ ենթադրյալ հիվանդության կամ խոցելիության վերաբերյալ՝ նախքան ճանապարհորդության իրականացումը:

Բուժօգնության տրամադրման հատուկ ուղեցույցը ներկայացված է սույն ձեռնարկի 5-րդ գլխում:

Անվտանգության հարցերի և ռիսկերի գնահատում

Անվտանգության հարցերի և ռիսկերի գնահատումը պետք է իրականացվի յուրաքանչյուր այն անհատի համար, ով պատրաստվում է ընդգրկվել վերահինտեգրման աջակցության ծրագրում: Այս գործընթացը պետք է իրականացվի 1-ին գլխում ներկայացված եղանակով՝ նույնականացման և աջակցության գործընթացի հարկավորինս վաղ փուլում:

Անչափահասների ուղղորդում

Վերոնշյալ 3.1.1 բաժնում ներկայացված միջազգային մակարդակով ուղղորդումների առանցքային նկատառումները վերաբերում են նաև երկրի ներսում կատարվող ուղղորդումներին:

3.1.2.2 Երկրի ներսում հաղորդակցման հաստատման ընթացակարգեր

Միջազգային մակարդակով ուղղորդումների նմանությամբ՝ թրաֆիքինգի զոհի անվտանգ և արդյունավետ ուղղորդման և վերահինտեգրման համար խիստ կարևոր է ապահովել շարունակական, արագ և լիարժեք տեղեկատվական հոսք ուղղորդող և ընդունող կազմակերպությունների միջև:

Արդյունավետ և անվտանգ վերահինտեգրումը հաճախ ավելի դյուրին է կազմակերպել և համակարգել ազգային մակարդակով, քան միջազգային մակարդակով, քանի որ երկու կազմակերպություններն էլ, որպես կանոն, տեղյակ են վերահինտեգրման գործընթացի սահմանափակումներին, հնարավորություններին և մտահոգության տեղիք տվող հնարավոր խնդիրներին: Այդուհանդերձ, երկրի ներսում կատարվող ուղղորդումներում խորհուրդ է տրվում կիրառել նույն կարգի ծանուցումները, հատկապես զոհի փոխադրման կամ տեղափոխման անհրաժեշտության դեպքում: Մանրամասն տեղեկությունների համար տե՛ս վերոնշյալ 3.1.1.2 բաժինը:

3.1.2.3 Երկրի տարածքում կիրառվող ճամփորդական ընթացակարգեր

Թրաֆիքինգի զոհին տեղափոխելու անհրաժեշտության պարագայում խորհուրդ է տրվում, որ ուղղորդող կազմակերպության աշխատակիցներն ուղեկցեն նրան և համոզվեն, որ նա նստել է նախընտրած փոխադրամիջոց, օրինակ՝ ինքնաթիռ կամ գնացք: Եթե զոհին տեղափոխելու անհրաժեշտություն չի առաջանում, ապա խորհուրդ է տրվում, որ ուղղորդող կազմակերպության աշխատակիցները նրան ուղեկցեն ընդունող կազմակերպության աշխատակազմի անդամների հետ առաջին հանդիպմանը:

3.1.3 ԺԱՄԱՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Զոհի անվտանգ վերադարձը և (կամ) ուղղորդումն ապահովելու առանցքային պայմանն է նրա ժամանումից հետո համապատասխան աջակցության կազմակերպումը: Արձանագրվել են նաև այնպիսի դեպքեր, երբ հայրենիք վերադարձած զոհերին դիմավորել են նրանց թրաֆիքինգի ենթարկած չարագործները և կրկին գցել իրենց թակարդը, մինչ աջակցող կազմակերպության կողմից օգնության տրամադրումը:

Զոհերի պաշտպանությունն ուժեղացնելու նպատակով Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս կազմակերպություններին համառորեն խրախուսել զոհերին վերադարձի աջակցության փաթեթի շրջանակներում օգտվել ժամանումից հետո մատուցվող աջակցությունից: Հարկավոր է խրախուսել հայրենիք վերադառնալու համար աջակցություն ստացող թրաֆիքինգի զոհին օգտվել նաև ժամանումից հետո մատուցվող աջակցությունից: Նշում. այս խորհուրդը չի նշանակում, որ հայրենիք վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհերը կարող են դիմել շարունակական բնույթ կրող աջակցության, այլ փոխարենը ենթադրում է միայն ժամանումից հետո մատուցվող աջակցություն:

Եթե ուղղորդող կազմակերպությունն ունի մասնաճյուղ ընդունող երկրում, ապա ժամանումից հետո տրամադրվող աջակցությունը կարող են կազմակերպել այդ մասնաճյուղի աշխատակիցները: Հակառակ դեպքում կարելի է ընտրել ամենայն հավանականությամբ առկա մի շարք այլ տարբերակներից մեկը, այդ թվում՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցության մեխանիզմների մշակումը:

Կազմակերպությունները պետք է ձեռք բերեն համապատասխան պայմանավորվածություն նախքան զոհերի վերադարձը:

Նույն ընդհանուր կանոնները կիրառելի են նաև երկրի ներսում զոհերի ուղղորդման պարագայում, ընդ որում՝ ժամանումից հետո պետք է տրամադրվի անհրաժեշտ աջակցությունը:

3.1.4 ԴԵՊՔԻ ՎԱՐՈՒՄ

Այն դեպքերում, երբ թրաֆիքինգից տուժած անձին ուղղորդել են շարունակական ծառայություններ ստանալու համար, ընդունող կազմակերպությունը պետք է ամեն ջանք գործադրի տվյալ անձի կարգավիճակի և առողջական վիճակի մասին ուղղորդող կազմակերպությանը հայտնելու համար (տե՛ս նաև ստորև բերված 3.2.6 բաժին, «Վերաինտեգրման մոնիտորինգ»): Ուղղորդող կազմակերպությանը խորհուրդ չի տրվում անմիջական կապ հաստատել անհատի հետ: Նման հաղորդակցումը զոհի թույլտվությամբ պետք է համակարգի ընդունող կազմակերպությունը, որը պատասխանատու է նրա վերաինտեգրման աջակցության համար:

3.2 Վերաինտեգրում

Սույն գլխի այս մասի նպատակն է ուղեցույցներ տալ ծառայություն մատուցող կազմակերպություններին, որպեսզի նրանք իմանան՝ ինչպիսի աջակցություն տրամադրել թրաֆիքինգի ենթարկված անձանց ընդունող կազմակերպության հետ նրանց առաջին հաղորդակցումից սկսած և վերաինտեգրման ողջ ընթացքում: Նշված ուղեցույցները համապատասխանաբար կիրառելի են ինչպես միջազգային, այնպես էլ ազգային մակարդակով զոհերի ուղղորդման դեպքերում: Դրանք հավասարապես կիրառելի են ինչպես այն զոհերի համար, ովքեր վերադառնում են իրենց ծագման երկիր, այնպես էլ նրանց համար, ովքեր իրավունք են ստացել մնալու նպատակակետ, տարանցիկ կամ որևէ երրորդ երկրում:

Այս բաժնում մանրամասն ներկայացվում են թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված աջակցությունը և վերաինտեգրման տարբեր հնարավորությունները: Հարկ է մտապահել, որ թրաֆիքինգից տուժած անձանց համար նախատեսված վերաինտեգրման ծառայությունները տարբերվում են երկրից երկիր և ծրագրից ծրագիր, և վերաինտեգրման հնարավորությունները հաճախ

սերտորեն փոխկապակցված են ծրագրի արդյունավետ զարգացման և ֆինանսավորման հետ:

Վերաինտեգրման գործընթացի նպատակն է ապահովել թրաֆիքինգի զոհի անվտանգ, արժանապատիվ և կայուն վերաինտեգրումը հասարակության բնականոն կյանքում: Համապատասխանաբար, թրաֆիքինգից տուժած անձանց մատուցվող վերաինտեգրման աջակցությունը կարող է ներառել ծառայությունների մի ամբողջական փաթեթ, այդ թվում՝ աջակցություն ապաստարան կամ որևէ այլ կացարան գտնելու հարցում, բժշկական և հոգեբանական օգնություն, սոցիալական և իրավական խորհրդատվություն, ընդհուպ մինչև վերաինտեգրման համար հատկացված դրամաշնորհներ, վերաինտեգրում դպրոցում և մասնագիտական ուսուցում: Որոշակի աջակցություն մատուցվելու է ուղղակիորեն ընդունող կազմակերպության կամ զոհի վերաինտեգրումը դյուրացնող բուն կազմակերպության կողմից: Այդուհանդերձ, շատ ծառայություններ ամենայն հավանականությամբ տրամադրվում և կառավարվում են զոհի բնակության վայրում այլ հասարակական կազմակերպության և գործընկեր պետական կառույցի կողմից:

Բոլոր տեսակի ծառայությունները և վերաինտեգրման աջակցությունը պետք է զոհին տրամադրվեն բացառապես կամավոր հիմունքներով: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս ծառայություն մատուցող կազմակերպություններին որդեգրել այնպիսի քաղաքականություն, որի պարագայում աշխատակազմի անդամները թրաֆիքինգի զոհերին կներկայացնեն տրամադրվող աջակցության բոլոր տեսակների հնարավոր հետևանքներն ու արդյունքները: Ծառայությունները պետք է մատուցվեն միայն թրաֆիքինգից տուժած անձի իրազեկված համաձայնությամբ, նրա անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի պատշաճ պահպանմամբ և հույժ գաղտնիության պայմաններում:

3.2.1 ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Թրաֆիքինգից տուժած յուրաքանչյուր անձի համար անհատական վերաինտեգրման ծրագիր մշակելու գործում առանցքային

դերակատարում ունի վերաինտեգրման գնահատումը: Յուրաքանչյուր զոհի պարագայում պետք է անցկացնել երկու տեսակի գնահատում.

- Անհատական գնահատում, որի կիզակետում են զոհի հետ ուղղակիորեն առնչվող գործոնները,
- Իրավիճակային գնահատում, որի կիզակետում է զոհից չկախված միջավայրի իրավիճակը, օրինակ՝ զոհի վերադարձի երկրին և (կամ) տարածաշրջանին բնորոշ սոցիալ-տնտեսական վիճակը և վերաինտեգրման աջակցության ենթակառուցվածքը:

Ցավալի է, բայց փաստ, որ ցանկացած աջակցող կազմակերպություն միշտ չէ, որ ունի անհրաժեշտ հնարավորությունները թրաֆիքինգի զոհի կարիքները հոգալու համար: Ուստի, խիստ կարևոր է զոհին իրատեսական պատկերացում տալ առկա տարբերակների և հնարավորությունների մասին, որպեսզի նրա մոտ չառաջանան ոչ իրատեսական ակնկալիքներ, որոնք կարող են վնասակար ազդեցություն գործել վերաինտեգրման գործընթացի վրա:

Վերաինտեգրման ծրագրերը պետք է մշակվեն ոչ թե ուղղորդող երկրում, այլ միայն ընդունող երկրում, քանի որ ուղղորդող երկրում գործող կազմակերպություններն ի վիճակի չեն կատարել ընդունող երկրում տիրող իրավիճակի պատշաճ գնահատում կամ կանխել ուղղորդող դիվանագիտական ներկայացուցչության կամ կազմակերպության աշխատակիցների ասածների սխալ մեկնաբանումը զոհի կողմից որպես հատուկ վերաինտեգրման խոստումնալից տարբերակներ: Փոխարենը, ուղղորդող կազմակերպությունը պետք է տեղեկացնի զոհին, որ վերաինտեգրման վերջնական ծրագիրը կմշակվի ընդունող երկրում: Այդուհանդերձ, ուղղորդող կազմակերպությունը պետք է կատարի զոհի կարիքների և ցանկությունների անհատական գնահատում (ինչպես ներկայացվում է ստորև) և արդյունքները մեկնումին նախորդող ծանուցման հետ մեկտեղ փոխանցի ընդունող կազմակերպությանը:

Վերաինտեգրման ողջ գործընթացի կարևորագույն խնդիրը թրաֆիքինգի զոհի ինքնազգացողությունն է: Ուստի, առաջնահերթությունը սովորաբար տրվում է անվտանգության և առողջության հետ կապված հարցերին, մասնավորապես՝ սահմանափակ մարդկային և ֆինանսական ռեսուրսների և սուղ ժամկետների պարագայում:

3.2.1.1 Անհատական վերաինտեգրման գնահատում

Այս գնահատումը պետք է կատարեն այն անձինք, ովքեր առավելագույնս քաջատեղյակ են թրաֆիքինգի զոհի գործին, օրինակ՝ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցը, սոցիալական աշխատողը, երեխայի խնամակալը, հասարակական կազմակերպության աշխատակազմի անդամը կամ հոգեբանը: Նշված անձինք պետք է հետևյալ չորս չափորոշիչներով գնահատեն վերաինտեգրման տարբերակները, որոնք ուղղված են ապահովելու յուրաքանչյուր զոհի վերաինտեգրումը հասարակության մեջ.

- նախ և առաջ, թրաֆիքինգի զոհի կարիքները, որոնք կարող են ներառել ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրներ, իրավական, սոցիալական և տնտեսական հարցեր, ինչպես նաև հոգեբույժի խորհրդատվության կարիք,
- թրաֆիքինգի զոհի անհատական ցանկությունները, նախապատվությունը այս կամ այն վերաինտեգրման տարբերակին կամ ծառայություններին, որոնց հասանելիությունը հարցականի տակ է,
- տվյալ զոհին հասանելի հնարավորությունները, որոնց վրա կարող են ազդել որոշակի հանգամանքներ, օրինակ՝ տարիք, սեռ, կրթվածության աստիճան կամ աշխատանքային փորձ,
- զոհի շարժառիթի ընկալվող մակարդակ, օրինակ՝ տրամադրված վերաինտեգրման աջակցությանը և (կամ) անձնական հանգամանքներին առնչվող մասնակցության և արդյունքների միջոցով:

Միջազգային մակարդակով ուղղորդման պարագայում անհատական գնահատումը պետք է սկսի ուղղորդող կազմակերպությունը և ամփոփի ծագման երկրում ընդունող կազմակերպությունը:

3.2.1.2 Իրավիճակային վերաինտեգրման գնահատում

Անհատական գնահատմանը զուգահեռ պետք է անցկացնել նաև իրավիճակային գնահատում: Նման գնահատումը պետք է անցկացնեն այն անձինք, ովքեր քաջատեղյակ են ինչպես զոհի գործին, այնպես էլ նրա ծագման երկրում նրա հայրենի տարածաշրջանին: Այդ անձանց շարքին են դասվում՝ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցը, սոցիալական աշխատողը, հասարակական

կազմակերպության աշխատակազմի անդամը կամ հոգեբանը: Նշված մասնագետները պետք է գնահատեն յուրաքանչյուր զոհի վերահինտեգրման տարբերակները՝ հետևյալ երկու իրավիճակային չափանիշների հիման վրա:

- Վերահինտեգրման տարբերակներ, որոնք հասանելի են անհատին, օրինակ՝ տվյալ անհատի ծագման վայրում մասնագիտական ուսուցման որոշ տեսակներ կարող են հասանելի չլինել կամ չտրամադրվել անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով: Նմանապես, հնարավոր է, որ զոհի բնակության վայրում չլինեն ապաստարաններ, չմատուցվեն բուժծառայություններ, չգործեն կրթական կամ սոցիալական ապահովության պետական ծրագրերը:
- Առաջարկվող վերահինտեգրման աջակցության համապատասխանությունը զոհի իրավիճակին: Օրինակ, մասնագիտական ուսուցումը պետք է բխի ծագման երկրում զոհի հայրենի տարածաշրջանի աշխատաշուկայում առկա պահանջարկից (օրինակ, հաշվապահության մասնագիտական ուսուցումն անիմաստ կլինի, եթե տվյալ տարածաշրջանում արձանագրվի գործազրկություն հաշվապահների շրջանում, կամ եթե հաշվապահությունը պահանջված աշխատանք չլինի):

3.2.1.3 Վերահինտեգրման ծրագիր

Անհատական և իրավիճակային գնահատումների հիման վրա կարելի է մշակել ամբողջական վերահինտեգրման ծրագիր: Վերահինտեգրման ծրագիր մշակելիս խիստ կարևոր է, որ ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը կամ համապատասխան գործընկեր հասարակական կազմակերպությունը վերահինտեգրման գնահատման հիման վրա օգնի զոհին նախանշել իրատեսական նպատակներ, որոնք համապատասխանեն ոչ միայն նրա անհատական կարիքներին, հմտություններին և որակավորումներին, այլև այն երկրում, տարածաշրջանում և բնակավայրում առկա հնարավորություններին, որտեղ իրականացվելու է նրա վերահինտեգրումը: Ավելին, վերահինտեգրման ծրագրի հիմքում պետք է ընկած լինեն այն ծառայությունները, որոնք տվյալ պահին տրամադրվում են ծառայություն մատուցող կազմակերպության և (կամ) նրա գործընկերների կողմից ընթացիկ ծրագրերի շրջանակներում: Այս ամենը պետք է հաշվի առնել վերահինտեգրման գնահատման ժամանակ:

Նույնիսկ եթե հետագայում փոփոխություններ անելու կարիք առաջանա, խորհուրդ է տրվում, որ աջակցող կազմակերպությունը (օրինակ՝ միջկառավարական և հասարակական կազմակերպությունները, պետական իշխանությունները) զոհի հետ համատեղ գրավոր տեսքով մշակի վերաինտեգրման ծրագիրը: Թեև նման ծրագրի յուրահատուկ ձևաչափը տարբերվում է երկրից երկիր և կազմակերպությունից կազմակերպություն, սակայն որպես կանոն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները (ըստ կիրառելիության).

- ընտանիքի հետ տարվող աշխատանք և (կամ) վերամիավորում, բժշկական և (կամ) առողջության բաղադրիչ,
- ֆինանսական բաղադրիչ (նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհ, ընտանիքի անդամին կամ խնամարկյալ անձին պահելու համար հատկացվող դրամաշնորհներ), իրավական բաղադրիչ,
- կրթության, մասնագիտական ուսուցման կամ աշակերտության բաղադրիչ, եկամուտի գոյացմանն ուղղված գործունեության բաղադրիչ,
- անվտանգություն:

Ինչպես արդեն նշվել է, խիստ կարևոր է, որ ծառայությունները մատուցվեն միայն զոհի լիարժեք իրազեկված համաձայնությամբ: Ուստի, վերոնշյալ բոլոր բաղադրիչներով աջակցություն տրամադրելուց առաջ տվյալ կազմակերպությունը պետք է թրաֆիքինգի զոհի ստորագրության ներկայացնի գրավոր համաձայնության ձևերը (ըստ կիրառելիության): Անչափահասների պարագայում նման ձևերը ստորագրում են ինչպես իրենք՝ թրաֆիքինգի զոհ դարձած անչափահասները, այնպես էլ իրենց ծնողը կամ պաշտոնական խնամակալը:

Նման վերաինտեգրման ծրագիրը վերածվում է նաև մոնիթորինգի և գնահատման գործիքի, ինչպես ներկայացվում է ստորև:

3.2.2 ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Վերաինտեգրման ծրագիրը մշակելուց հետո կարելի է մեկնարկել վերաինտեգրման բուն գործընթացը:

3.2.2.1 Վերահինտեգրման աջակցության տրամադրման մեխանիզմներ

Թրաֆիքինգի զոհերին մատուցվող ուղղակի աջակցությունը կարող է ներառել ծառայությունների ամբողջական փաթեթ, այդ թվում՝ աջակցություն ապաստարան գտնելու հարցում, բժշկական և հոգեբանական օգնություն, ընդհուպ մինչև սոցիալական և իրավական խորհրդատվություն և մասնագիտական ուսուցում: Որոշակի ուղղակի աջակցություն կարող է ցուցաբերել նաև ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը: Այդուհանդերձ, գործնական նկատառումներով շատ ծառայություններ պետք է մատուցվեն այլ կազմակերպությունների կամ պետության կողմից: Երբեմն պատահում է նաև այնպես, որ տվյալ կազմակերպությունն ի վիճակի չէ մատուցելու բոլոր ծառայությունները կամ մասնաճյուղ չունի թրաֆիքինգի զոհի բնակության վայրում և այդ իսկ պատճառով պետք է օգնության դիմի այլ կազմակերպություններին: Նույն նկատառումներով, շարունակական աջակցությունը և մոնիթորինգը պետք է ապահովի զոհի բնակության վայրի մոտակայքում մասնաճյուղ ունեցող կազմակերպությունը:

Ստորև ներկայացված են թրաֆիքինգի զոհերին վերահինտեգրման աջակցության մատուցման երեք հիմնական մեխանիզմները՝

- **ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող նախնական աջակցություն,**
- **ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող երկարաժամկետ վերահինտեգրման աջակցություն կամ ուղղորդում այլ կազմակերպություն կամ պետական կառույց,**
- **թրաֆիքինգի զոհին մատուցվող պետական աջակցություն (Աշխատանքի նախարարություն, Էկոնոմիկայի նախարարություն և այլն):**

3.2.2.2 Ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպության կողմից տրամադրվող նախնական աջակցություն

Նման աջակցությունը կարող է ներառել ժամանումից հետո մատուցվող աջակցություն, ամբողջական և անհետաձգելի բժշկական

և (կամ) հոգեբանական հետազոտություն և (կամ) օգնություն, կարճաժամկետ կացարան և աջակցություն թրաֆիքինգի զոհի՝ սոցիալական, իրավական և տնտեսական խնդիրների լուծման հարցում: Ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ամեն ջանք գործադրի, որպեսզի իր վերաինտեգրման ծրագրերը չհանգեցնեն կախվածության առաջացմանը, և իր առջև նպատակ դնի օգնելու թրաֆիքինգի զոհին վերականգնել հավատը սեփական ուժերի նկատմամբ և վերաինտեգրվել բնականոն կյանքում: Այդուհանդերձ, երկարաժամկետ աջակցությունը պետք է տրամադրվի պետական կամ ոչ պետական աջակցող կառույցների կողմից:

3.2.2.3 Երկարաժամկետ վերաինտեգրման աջակցություն

Թրաֆիքինգից տուժած անձանց վերաինտեգրման գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է նրանց մատուցել երկարաժամկետ աջակցություն: Եթե ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը տրամադրում է համապատասխան ծառայություններ, ապա այն կարող է թրաֆիքինգի զոհին ուղղակիորեն տրամադրել ծառայությունների մեծ մասը: Հակառակ դեպքում անհրաժեշտ ծառայությունները կարող են մատուցել տեղական հասարակական կազմակերպություններից մեկը կամ մի քանիսը: Ի դեպ, հասարակական կազմակերպություններն ի վիճակի են ոչ միայն ուղղակի աջակցություն տրամադրել թրաֆիքինգի զոհերին, այլև կատարել վերաինտեգրման գնահատում, ինչպես նաև մշակել և իրագործել վերաինտեգրման ծրագիր կամ աջակցել այդ գործընթացներին: Ավելին, հասարակական կազմակերպությունները կարող են առանցքային դեր կատարել զոհի վերաինտեգրման առաջընթացի մոնիթորինգում:

Անվտանգության և մարդասիրական մոտեցման սկզբունքներով կազմակերպվող սոցիալական վերաինտեգրմանն ուղղված գործողությունները կարող են պարունակել հետևյալ բաղադրիչները.

- **Բժշկական և (կամ) հոգեբանական հետազոտություն և բուժում և (կամ) խորհրդատվություն թրաֆիքինգից տուժած անձանց համար իրենց բնակության վայրում,**
- **Ընտանիքի հետ տարվող աշխատանք և (կամ) խորհրդատվություն,**

- **Զոհի բնակության վայրում վերահինտեգրման գործընթացի մոնիթորինգ, թրաֆիքինգից տուժած երեխաների կացարանի և խնամքի մոնիթորինգ,**
- **Աջակցություն դպրոցում վերահինտեգրման գործում, մասնագիտական ուսուցման ծրագրերի մշակում, խորհրդատվություն մասնագիտական կողմնորոշման հարցերով և մասնագիտական ուսուցում,**
- **Աշխատանքի տեղավորում և խորհրդատվություն զբաղվածության հարցերով,**
- **Նախկին բնակության վայրում հաստատման և մասնագիտական ուսուցման համար թրաֆիքինգի զոհերին հատկացվող դրամաշնորհներ, աջակցություն կորած փաստաթղթերը, օրինակ՝ անձնագիրը և անձը հաստատող այլ փաստաթղթերը վերականգնելու գործում,**
- **Իրավական աջակցություն քաղաքացիական հարցերի շուրջ (ամուսնալուծություն, գույքի վերադարձում, քաղաքացիական պատասխանատվություն),**
- **Քրեական գործերում որպես վկա հանդես եկող թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված իրավական խորհրդատվության և ներկայացուցչության ծառայություններ (տե՛ս նաև ստորև բերված 3.2.3.4 բաժինը և 6-րդ գլխի 6.5 բաժինը), արագ արձագանքման և տեղեկատվական ծառայության թեժ գծեր,**
- **Թրաֆիքինգի զոհերի անվտանգության ապահովում նրանց հետ պարբերաբար կապ պահպանելու միջոցով, հուզական աջակցության տրամադրում զոհերին ուղեկցելու միջոցով, ինչպես նաև աջակցության տրամադրում անհրաժեշտ ծառայություններից օգտվելու և նրանց իրավունքները պաշտպանելու գործում,**
- **Անվտանգ տեղափոխման ապահովում:**

Ընդունող երկրում ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է աջակցի տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններին և սերտ համագործակցություն հաստատի նրանց հետ: Նման աջակցությունը և համագործակցությունն առանցքային դեր են կատարում ոչ միայն զոհերի արդյունավետ վերաինտեգրումը, այլև վերաինտեգրման մեխանիզմների կայուն աշխատանքն ապահովելու գործում:

Կազմակերպություններին խորհուրդ է տրվում իրենց համագործակցությունը պաշտոնապես ամրագրել փոխըմբռնման հուշագրերում և (կամ) այլ պայմանագրերում, ինչի շնորհիվ յուրաքանչյուր կողմ կգիտակցի իր և մյուս կազմակերպության գործառույթները և պարտականությունները:

Ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է վերահսկի այն կազմակերպությունների գործունեությունը, որտեղ նրանք ուղղորդում են թրաֆիքինգից տուժած անձանց, որպեսզի կարողանա ապահովել արդյունավետ և որակյալ ծառայությունների մատուցումը:

3.2.2.4 Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված պետական աջակցություն

Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված վերաինտեգրման աջակցությունը երբեմն տրամադրվում է անմիջապես պետական կառույցների միջոցով: Ինչպես աջակցության մյուս դրսևորումների պարագայում, այնպես էլ տվյալ դեպքում խորհուրդ է տրվում պետական կառույցի հետ ստորագրել փոխըմբռնման հուշագիր, որտեղ հստակ կնշվեն կողմերի միջև համաձայնեցված գործառույթները, պարտավորությունները և մատուցվող ծառայությունները: Պետության կողմից թրաֆիքինգի զոհերին տրամադրվող վերաինտեգրման աջակցությունը հաճախ դրսևորվում է հետևյալ ձևերով՝ խորհրդատվություն սոցիալական և զբաղվածության հարցերի շուրջ, մասնագիտական ուսուցում, բուժօգնություն, պաշտպանության և կրթական հաստատություններում վերաինտեգրման բազում այլ ձևեր:

3.2.3 ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

Թեև յուրաքանչյուր զոհին մատուցվող աջակցությունը կախված է նրա անհատական կարիքներից, թրաֆիքինգի ենթարկած անձինք

առանձնակի հետաքրքրություն են ցուցաբերում ստորև ներկայացված աջակցության տեսակների նկատմամբ.

- **բժշկական և (կամ) առողջապահական ծառայություններ,**
- **խորհրդատվություն**
- **նյութական աջակցություն,**
- **իրավական աջակցություն**
- **կրթական համակարգում վերաինտեգրման աջակցություն,**
- **մասնագիտական ուսուցում,**
- **փոքր ձեռնարկատիրություն և եկամուտի գոյացման գործունեություն,**
- **աշխատանքի տեղավորում, վարձատրության սուբսիդավորում, աշակերտության ծրագիր,**
- **կացարան և ապաստան**

3.2.3.1 Բժշկական և (կամ) առողջապահական ծառայություններ

Որպես կանոն, թրաֆիքինգի զոհերն ունեն որոշակի առողջական խնդիրներ, քանի որ մարդավաճառների ձեռքում գտնվելու ժամանակ ենթարկվել են շահագործման և անմարդկային վերաբերմունքի: Նման առողջական խնդիրներից են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները և հետվնասվածքային սթրեսային խանգարումը: Հայրենիք վերադարձող զոհերն ավելի խոցելի են տարբեր վտանգավոր առողջական խնդիրների նկատմամբ: Վերաինտեգրման գործընթացն արդյունավետ դարձնելու համար պետք է որպես առաջնահերթություն դիտարկել թրաֆիքինգի ենթարկված անձի ֆիզիկական և հոգեկան առողջությունը:

Եթե տվյալ երկրում գործում է վերականգնման կենտրոն, ապա զոհը կարող է համալիր բուժզննում անցնել այդտեղ: Եթե պարզվի, որ թրաֆիքինգի զոհն ունի շարունակական բուժման կարիք, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ապահովի, որպեսզի զոհը կարողանա ըստ հարկի բուժում ստանալ իր բնակության վայրի համապատասխան հաստատություններում, ինչին պետք է նպաստեն նաև տեղական կառույցները կամ կազմակերպությունները:

Ինչպես աջակցության մյուս ձևերի պարագայում, այնպես էլ նման դեպքերում ծառայությունները մատուցվում են թրաֆիքինգի զոհի իրազեկված որոշման հիման վրա: Նախքան թրաֆիքինգի զոհին բժշկական ստուգման կամ որևէ բուժման ուղղորդելը ծառայություն մատուցող կազմակերպությունն անպայման պետք է ստանա զոհի իրազեկված և կամավոր գրավոր համաձայնությունը: Բժշկական միջամտությունը պետք է միտված լինի զոհի ֆիզիկական և հոգեկան առողջության խնդիրների հաղթահարմանը: Հնարավորության դեպքում նման միջամտության շրջանակներում ցանկալի է նաև ըստ անհրաժեշտության որոշակի տեղեկություններ տրամադրել վարակիչ հիվանդությունների, դրանց հնարավոր պատճառների և բուժման, ինչպես նաև վերարտադրողական և հոգեկան առողջության խնդիրների վերաբերյալ:

Ավելին, զոհին պետք է միշտ տրամադրել բոլոր բժշկական հետազոտությունների, անալիզների և դրանց պատասխանների պատճենները: Զոհի համար պատասխանատու բուժաշխատողները պետք է առաջարկեն թրաֆիքինգի զոհի համար նախատեսված հատուկ մշակված բուժման ծրագրեր կամ շարունակական աջակցության ժամանակացույց և զոհի համաձայնությամբ կարող են նաև դրանք փոխանցել զոհերի բնակության վայրում գործող հասարակական կազմակերպություններին, որպեսզի վերջիններս աջակցեն զոհին այդ ծրագիրն իրագործելու ընթացքում:

Բժշկական աջակցության մատուցման հատուկ ուղեցույցները ներկայացված են սույն ձեռնարկի 5-րդ գլխում:

3.2.3.2 Խորհրդատվություն

Ստորևներկայացվումենհիմնականտեղեկություններըթրաֆիքինգից տուժած անձանց համար նախատեսված խորհրդատվության տրամադրման վերաբերյալ: Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետները կարող են լրացուցիչ տեղեկություններ գտնել նաև 5-րդ գլխի 5.12.2 բաժնում: Խորհրդատվական ծառայությունները պետք է տրամադրեն միայն պատշաճ որակավորում ունեցող աշխատակիցները: Թրաֆիքինգի ենթարկված երեխաների համար պետք է վարձել երեխաների հետ աշխատանքի ոլորտում հատուկ մասնագիտական պատրաստում անցած խորհրդատուներ:

Նախապատրաստական աշխատանք

Թրաֆիքինգից տուժած անձանց հանդիպելուց առաջ խորհրդատուները պետք է համապատասխան նախապատրաստական աշխատանք կատարեն: Այդ նպատակով յուրաքանչյուր հանդիպումից առաջ նրանք պետք է ուսումնասիրեն տվյալ զոհի գործը: Անհրաժեշտության դեպքում խորհրդատուն կարող է խորհրդակցել ծառայություն մատուցող այլ մասնագետների կամ ապաստարանի աշխատակիցների հետ ապաստարանում բնակվող թրաֆիքինգի զոհերի առաջընթացի և աջակցության հատուկ կարիքների շուրջ (օրինակ՝ թարգմանչական ծառայություններ կամ հատուկ խնամք):

Խորհրդատուն պետք է միշտ որոշակի ժամանակ հատկացնի նման հանդիպումների համար, որպեսզի հնարավորություն տա թրաֆիքինգի զոհերին ազատ քննարկելու իրենց մտահոգող խնդիրները և բացի այդ, որոշակի ժամանակ հատկացնի առաջընթացը գնահատելու, ինչպես նաև առկա խնդիրների գործնական լուծումները և հաջորդ քայլերը վերանայելու համար: Առաջին մեկ կամ երկու հանդիպումների համար հարկավոր է հատկացնել առնվազն մեկ կամ երկու ժամ:

Կարճաժամկետ նպատակների նախանշում

Թրաֆիքինգի զոհի կարիքները, մտահոգությունները և դրանք հաղթահարելու ռազմավարությունները քննարկելուց հետո խորհրդատուն պետք է աշխատանք տանի զոհի հետ՝ վերականգնման և սոցիալական վերաինտեգրման գործընթացներում կարճաժամկետ նպատակներ նախանշելու ուղղությամբ: Պատշաճ կարճաժամկետ նպատակներն իրենցից ներկայացնում են հատուկ թիրախներ, որոնք արագացնում են զոհի կայունացման և վերականգնման գործընթացը և իրագործելի են որոշակի ժամկետում (օրինակ՝ ապաստարանում զոհի մնալու ընթացքում): Թրաֆիքինգի զոհի հետ տարվող աշխատանքի արդյունքում խորհրդատուն պետք է նախանշի հատուկ նպատակները և դրանց իրագործման ժամկետը:

Ռեսուրսների մոբիլիզացում

Թրաֆիքինգի զոհերին մտահոգող խնդիրները վերհանելուց, ինչպես նաև դրանց հաղթահարման կառուցողական մեխանիզմները և կարճաժամկետ նպատակները նախանշելուց հետո խորհրդատուն պետք է մշակի այնպիսի աջակցության ծրագիր, որը կնպաստի թրաֆիքինգի զոհի վերականգնմանը և կարճաժամկետ

նպատակների իրագործմանը: Նման աջակցությունը ներառում է հետևյալ ծառայությունները, սակայն չի սահմանափակվում դրանցով՝ բուժօգնություն, իրավաբանական ծառայություններ, ընտանիքի հետ տարվող աշխատանք, մասնագիտական ուսուցում, աջակցություն զբաղվածության հարցում և վերաբնակեցման կամ վերաինտեգրման հետ կապված այլ ծառայություններ: Խորհրդատուն պետք է թրաֆիքինգի զոհի հետ քննարկի աջակցության հնարավոր տարբերակները և նրա մոտ հետաքրքրություն արթնացնի առաջարկվող ծառայությունների նկատմամբ:

Նախապատրաստում և պլանավորում

Համապատասխան ծառայությունները և աջակցության հաջորդ փուլերը վերհանելուց հետո անհրաժեշտ է մշակել մի ծրագիր՝ ապահովելու նման ծառայությունների և նպատակներն իրագործման միջոցների հասանելիությունը: Այս փուլում խորհրդատու մասնագետը հանձնարարություններ է տալիս ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամներին և թրաֆիքինգի զոհին, այն է՝ աշխատակազմի անդամները պետք է կազմակերպեն զոհի բժշկական հետազոտությունը, իսկ զոհը կարող է վերանայել տեղեկատվական փաթեթում առկա տեղեկությունները բուժօգնության մասին, մտորել բժշկի համար հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ, անցնել բժշկական հետազոտություն և կատարել բժշկի նշանակումները:

Խորհրդատու մասնագետին, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներին և թրաֆիքինգի զոհին առաջադրված հանձնարարությունների քանակը և բնույթը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ զոհի վիճակ, հանգամանքներ և նպատակներ: Աջակցության մատուցման առաջին մի քանի օրվա ընթացքում խորհրդատուն կարող է խրախուսել թրաֆիքինգի զոհին կատարել փոքր հանձնարարություններ, օրինակ՝ ինքնասպասարկման հետ կապված նվազագույն պարտականություններ, ինչպիսիք են՝ կանոնավոր սնունդ, հստակ ժամանակացույցի պահպանում և մարմնամարզություն:

Անհատական խորհրդատվություն

Թրաֆիքինգից տուժած անձանց տրամադրվող անհատական խորհրդատվությունը ենթադրում է համեմատաբար աննշան

միջամտություն, որն ուղղված է նրանց առջև ծառացած խնդիրների գործնական լուծմանը և վարքագծի շտկմանը: Այսպես, անհատական խորհրդատվության նպատակն է օգնել թրաֆիքինգի զոհին սովորել կամ մշակել իրեն ուղղակիորեն առնչվող հանգամանքները հաղթահարելու կամ դրանց հարմարվելու հմտություններ, ինչը կբերի նրա լիարժեք վերականգնմանը:

Հարկավոր է հստակ տարբերակել կարճաժամկետ խորհրդատվությունը և ֆիզիոթերապիան: Խորհրդատվությունն իրենից ներկայացնում է կարճաժամկետ միջամտություն, որի նպատակն է ոչ թե վերափոխել թրաֆիքինգի զոհի անձը, այլ օգնել նրան հաղթահարել կյանքի առանձին իրավիճակներում և վերականգնման գործընթացի հաջորդ փուլերում հնարավոր խնդիրները:

Խորհրդատվական հանդիպումներին բարձրացվող հարցերը

Խորհրդատվական հանդիպումներին քննարկվող հարցերի քանակը և բնույթը պայմանավորված են թրաֆիքինգի զոհի վիճակով, ապրումներով, հանգամանքներով, մշակութային արժեքներով, տարիքով, սեռով և կարիքներով: Սովորաբար նման միջամտությունները կարճաժամկետ են և ուղղված են տվյալ անձի առավել հրատապ և իրատեսական կարիքների բավարարմանը:

Թրաֆիքինգի զոհերի հետ անցկացվող խորհրդատվական հանդիպումների ընթացքում հիմնականում քննարկվում են խնդիրների լուծման ռազմավարությունները և զոհին ուղղակիորեն առնչվող հետևյալ խնդիրների հաղթահարման մեխանիզմները.

- հուզական և ֆիզիկական վիճակի կայունության վերականգնում և ինքնազգացողության բարելավում,
- ընտանիքի անդամների և սեփական անձի անվտանգության ապահովում մարդավաճառներից,
- քրեական պատժից և այլ պատասխանատվությունից խուսափելը,
- համագործակցություն իրավապահ մարմինների հետ թրաֆիքինգով զբաղվող չարագործների դեմ դատավարության շրջանակներում,
- արդյոք պետք է կապ հաստատել ընտանիքի անդամների հետ և վերադառնալ ընտանիք և ծագման համայնք, և եթե այո, ապա ինչպես,

- ընտանիքի անդամների և համայնքի ներկայացուցիչների հավանական արձագանքը թրաֆիքինգից տուժած անձանց բացակայությանը և հնարավոր վերադարձին,
- թղթաբանության, վարչական փաստաթղթերի և համապատասխան իրավական վարույթի համար անհրաժեշտ ժամկետներ,
- որտեղ հաստատել բնակություն և ում հետ,
- աջակցության ֆինանսական միջոցները և կայունությունը:

Այս խնդիրներից ամեն մեկի հնարավոր լուծումները կախված են մասնավոր դեպքից, զոհերի հանգամանքներից և առկա ռեսուրսներից: Վերոնշյալ մի շարք ոլորտներում աջակցության հետ կապված հատուկ հարցերը դիտարկվելու են սույն ձեռնարկի համապատասխան բաժիններում: Այդուհանդերձ, յուրաքանչյուր հարց դիտարկելիս հարկավոր է մտապահել հետևյալ սկզբունքները.

Խորհրդատվության սկզբունքներ

Թրաֆիքինգի զոհերին հարկավոր է աջակցություն մատուցել հետևյալ նպատակներով.

- կառուցել կամ վերականգնել կարողությունները, հաղթող մեխանիզմները և որոշումների կայացման հմտությունները,
- զարգացնել իրենց ռեսուրսները՝ կատարելագործման ներուժն իրագործելու համար,
- մշակել գործնական լուծումներ անհատական կարիքներին և հանգամանքներին համապատասխան:

Երեխաներին խորհրդատվություն տրամադրելիս հարկ է հաշվի առնել այդ երեխաների մայրենի լեզուն, մշակույթը և զարգացման աստիճանը:

Օգնողի և (կամ) խորհրդատուի դերակատարումը

Սոցիալական աշխատանքի ոլորտի փորձագետները խորհուրդ են տալիս որդեգրել մի մոտեցում, որը թույլ կտա բարձրացնել հաճախորդների վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, նրանց դիտարկել որպես «կարողություններ և ունակություններ ունեցող անձինք, այլ ոչ թե հիվանդագին երևույթների կրող և (կամ) աղբյուր»: Նման մոտեցման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ հաճախորդը

բոլորից լավ կարող է հասկանալ իր խնդիրները, ուստի և մշակել և իրագործել այդ խնդիրների լուծման լավագույն ծրագիրը: Այս առումով օգնողի պարտականությունն է օգնել հաճախորդին վերականգնել իր ինքնագնահատականը և ինքնավստահությունը, զարգացնել սեփական ռեսուրսները և օգնել նրան գիտակցել, որ ինքն է իր կյանքի տերը և ընդունակ է կայացնել ինքնուրույն որոշումներ:[11]

Ուստի, օգնողի դերակատարումը կայանում է նրանում, որ ինքն աջակցի հաճախորդին կազմել և իրականացնել այնպիսի ծրագիր, որը կօգնի նրան վերհանել և լուծել առկա խնդիրները, ինչպես նաև բարձրաձայնել և իրագործել նպատակները: Աջակցային գործընթացի հիմնական նպատակն է ինքնօգնության և (կամ) աճի խթանումը, օրինակ՝ խնդրի հաղթահարման հմտություններ և սեփական խնդիրները սեփական ուժերով և ռեսուրսներով լուծելու հնարավորություն:[12] Օգնողները հանդես են գալիս որպես հաճախորդներին իրենց ցանկություններն իրագործելու հնարավորություն տվող անձինք, միջնորդներ և (կամ) պաշտպաններ և ուսուցիչներ:

- Հաճախորդներին իրենց ցանկություններն իրագործելու հնարավորություն տվող անձի կարգավիճակում օգնողն աջակցում է հաճախորդին վերհանել իր կարիքները, բացահայտել ուժեղ կողմերը, գտնել առկա խնդիրների լուծումները և իր նպատակներն իրագործելու միջոցները:
- Միջնորդի և (կամ) պաշտպանի կարգավիճակում օգնողն աջակցում է հաճախորդին վերհանել և գնահատել հնարավոր ռեսուրսները և նպաստել այլ ռեսուրսներ ունեցողների հետ կապի հաստատմանը կամ նրանց մոտ ուղղորդմանը:
- Ուսուցչի կարգավիճակում օգնողը ձևավորում է հաճախորդի հմտությունների և գիտելիքների հիմքը, ինչի արդյունքում մեծանում են նրա՝ իրազեկված որոշումներ կայացնելու, իր խնդիրները լուծելու և նպատակներն իրագործելու կարողությունները:[13]

Օգնողները պետք է միշտ հիշեն, որ օգնության տրամադրման ընթացքում ձևավորվող հարաբերությունները տարբերվում են անձնական հարաբերություններից, քանի որ դրանք մասնագիտական բնույթ են կրում և պետք է ունենա հստակ ուղղություն և նպատակ: Նման մոտեցման շնորհիվ հաջողվում է հստակեցնել հաճախորդի նպատակները, ուժեղ կողմերը և նրա առջև ծառացած խնդիրները, և հաճախորդն ու սոցիալական աշխատողն ավելի հստակ են պատկերացնում արձագանքը:[14] Նման մոտեցումն աջակցության վրա

հիմնված հարաբերությունների նկատմամբ խստություն չի ենթադրում: Իրականում օգնողը պետք է կարեկցանք, ջերմություն և մեծահոգություն դրսևորի իր հաճախորդների նկատմամբ:[15]

3.2.3.3 Ֆինանսական աջակցություն

Վերաինտեգրման ողջ ընթացքում թրաֆիքինգի զոհերը կարող են օգտվել մի քանի տեսակի ֆինանսական աջակցությունից: Հասանելի ֆինանսական աջակցության տեսակները կախված են զոհի վերադարձի և վերաինտեգրման գործընթացում ներգրավված կազմակերպության ծրագրերից: Նման ֆինանսական աջակցության առկայության պարագայում խիստ կարևոր է զոհին բացատրել իրեն հասանելի դրամաշնորհների յուրաքանչյուր տեսակի տարբերությունները և հատուկ նպատակները:

Կանխիկով տրամադրվող դրամաշնորհների մի շարք տեսակները կարող են նպաստել վերաինտեգրմանը:

Հնարավոր տարբերակներն են.

- Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհներ,
- Ընտանիքի անդամներին կամ խնամարկյալ անձանց աջակցության համար հատկացվող դրամաշնորհներ,

Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհներ

Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհը տրամադրվում է այն երկրում, որտեղ իրականացվելու է թրաֆիքինգի զոհի վերաինտեգրումը և ուղղված է զոհի արդյունավետ սոցիալական վերաինտեգրման ապահովմանը: Փորձը ցույց է տալիս, որ նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհների գումարների տարբերությունները վեճերի պատճառ են դառնում տարբեր երկրներից կամ տարբեր ծրագրերի շրջանակներում վերադարձող թրաֆիքինգի զոհերի միջև՝ դրանով իսկ խափանելով ծագման երկրում վերաինտեգրմանն ուղղված արդյունավետ ջանքերը: Թեև դրամաշնորհների գումարները պետք է տարբերվեն երկրից երկիր, քանի որ տարբեր են նաև կենսապահովման նվազագույն ծախսերը, այդուհանդերձ, թրաֆիքինգից տուժած անձանց մի մասի

նկատմամբ արտոնյալ վերաբերմունք չդրսևորելու համար, ավելի նպատակահարմար կլինի, եթե որևէ երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունն իր հովանու ներքո աջակցություն ստացող բոլոր զոհերին հատկացնի նույն գումարը:

Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհի նպատակն է դյուրացնել արդյունավետ և արժանապատիվ սոցիալական վերաինտեգրման գործընթացը և նախնական փուլում (որը սովորաբար տևում է 30–90 օր) հոգալ հիմնական ծախսերը, օրինակ՝ կացության, սննդի, հագուստի և այլ անհրաժեշտ գնումների հետ կապված ծախսերը: Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհը հաճախ կարելի է տրամադրել մաս-մաս, օրինակ, վճարումներ առաջին եռամսյակում՝ այն պահից սկսած, երբ զոհը վերադարձել է հայրենիք կամ բնակություն հաստատել մեկ այլ երկրում: Նոր կամ նախկին բնակության վայրում հաստատվելու համար հատկացվող դրամաշնորհի չափը պետք է որոշի ընդունող երկրում վերաինտեգրման գործընթացի համար պատասխանատու կազմակերպությունը տվյալ երկրի տնտեսական իրավիճակի հիման վրա:

Ընտանիքի անդամների կամ խնամարկյալ անձանց աջակցության համար հատկացվող դրամաշնորհներ

Ընտանիքի անդամների կամ խնամարկյալ անձանց աջակցության համար նախատեսված դրամաշնորհները կարող է հատկացնել ընդունող երկրում ծառայություն մատուցող կազմակերպությունը: Նման դրամաշնորհները տրամադրվում են այն դեպքերի ուսումնասիրության հիման վրա, այսինքն՝ այն դեպքերում, երբ առկա է ակնհայտ կարիք, օրինակ՝ եթե աջակցություն ստացող զոհն ունի հիվանդ կամ խնամարկյալ ծնողներ, նորածին երեխա, ի վիճակի չէ աշխատել հղիության պատճառով և նմանատիպ այլ դեպքեր: Այս պարագայում նույնպես դրամաշնորհի չափը պետք է որոշի ընդունող կազմակերպությունը դեպքի հիման վրա: Տվյալ կազմակերպությունը պետք է հետևողական լինի և խուսափի երկարաժամկետ կախվածությունից: Ընտանիքի անդամի կամ խնամարկյալի աջակցությանն ուղղված դրամաշնորհները պետք է սերտորեն փողկապակցված լինեն գնահատված և առաջադրված վերաինտեգրման ծրագրի արդյունավետ իրագործմանը:

3.2.3.4 Իրավական աջակցություն

Իրավական աջակցության ոլորտում կարելի է առանձնացնել երկու հիմնական բաղադրիչ.

- Իրավական աջակցություն քրեական վարույթում
- իրավական աջակցություն քաղաքացիական վարույթում

Թրաֆիքինգի զոհի առկա կարիքներին անդրադառնալու պատշաճ գործելաոճին համապատասխան՝ նրան հարկավոր է հնարավորինս շուտ տեղեկացնել իրավական պաշտպանության այլ տարբերակների հնարավորության մասին, ներառյալ՝ քաղաքացիական և քրեական դատաքննության շրջանակներում: Թրաֆիքինգից տուժած անձանց հարկավոր է տեղեկացնել իրավապահ մարմինների հետ համագործակցելու և քրեական դատաքննության շրջանակներում գործերով որպես վկա հանդես գալու հնարավորության մասին, որպես վկա հանդես գալու պարագայում նրանց ընձեռվող իրավական պաշտպանության այլ տարբերակների հնարավորության մասին, ինչպես նաև իրենց թրաֆիքինգի ենթարկած մարդավաճառների դեմ քաղաքացիական հայց ներկայացնելու հնարավորության մասին՝ ունեցվածքը վերականգնելու, իրենց կրած վնասները փոխհատուցելու պահանջով: Թրաֆիքինգից տուժած անձանց իրավական պաշտպանության տարբերակների մասին լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար տե՛ս գլուխ 6, բաժին 6.5:

Քանի որ թրաֆիքինգի զոհերը հիմնականում չգիտեն իրենց իրավունքները, խիստ կարևոր է նրանց տեղեկացնել իրավական պաշտպանության առկա տարբերակների մասին, ինչպես նաև գնահատել նրանց հաջողության հնարավորությունները և առնչվող ռիսկերը: Փորձը ցույց է տալիս, որ ժամանակին և պատշաճ կարգով մատուցված իրավական աջակցության շնորհիվ զոհը ձերբազատվում է տագնապի զգացումից և կարողանում է կայացնել իրազեկված որոշում իրավապահ մարմինների հետ համագործակցելու և դատարանում որպես վկա հանդես գալու հարցերի շուրջ: Թրաֆիքինգի զոհը պետք է սպառիչ տեղեկատվություն ստանա իրավական պաշտպանության առկա բոլոր տարբերակների արդյունքների մասին, որպեսզի կարողանա հստակ որոշում կայացնել իրավական աջակցության տեսակն ընտրելու մասին:

Մարդավաճառների դեմ ցուցմունք տվող վկաները կարող են ունենալ լրացուցիչ խորհրդատվության և աջակցության կարիք ցուցմունք տալուն նախորդող և հաջորդող ժամանակաշրջաններում: Այս հարցը

կարգավորելուհամար՝ծառայությունմատուցողկազմակերպությունները կարող են անցկացնել հատուկ խորհրդատվական հանդիպումներ:

Աջակցություն քաղաքացիական դատավարության շրջանակներում

Թրաֆիքինգի զոհերը կարող են հնարավորություն ստանալ քաղաքացիական հայց ներկայացնելու իրենց թրաֆիքինգի ենթարկած մարդավաճառների դեմ՝ պահանջելով վերականգնել իրենց ունեցվածքը և փոխհատուցել վնասները: Որպես կանոն, քաղաքացիական հայցը կարելի է համադրել քրեական դատաքննության հետ: Բացի այդ, թրաֆիքինգի զոհ դարձած անձինք կարող են իրավական աջակցության դիմել այլ հարցերով, օրինակ՝ ամուսնալուծություն, երեխաների խնամակալություն, գույքային վեճեր և այլն, որոնք ուղղակիորեն կապված չեն իրենց թրաֆիքինգի ենթարկվելու դեպքի և մարդավաճառների հետ:

Քաղաքացիական գործերի շրջանակներում իրավական աջակցության կարիք կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- **աջակցություն ամուսնալուծության հետ կապված հարցերում**
- **անձնագրի և (կամ) անձը հաստատող փաստաթղթերի վերականգնում**
- **ունեցվածքի վերականգնում**
- **գույքային պահանջներ**
- **ժառանգություն**
- **ծնողական իրավունքներ**
- **վնասի փոխհատուցում**

3.2.3.5 Վերաինտեգրում կրթական համակարգում

Հաճախ լինում են դեպքեր, երբ թրաֆիքինգի զոհ դարձած անձինք չունեն կրթությունը ավարտելու հնարավորություն, ինչը հետագայում նվազեցնում է աշխատանք գտնելու նրանց հնարավորությունները: Ուստի, հնարավորության դեպքում պետք է առաջնահերթություն տալ թրաֆիքինգի զոհերին իրենց ընդհատված ուսման ավարտման աջակցությանը: Ընդունող երկրում ծառայություն մատուցող

կազմակերպությունը կարող է ազգային իշխանությունների հետ համատեղ դյուրացնել կրթական համակարգում թրաֆիքինգի զոհի վերաինտեգրումը և (կամ) ֆինանսական աջակցություն ապահովել զոհի կրթության համար:

Եթե թրաֆիքինգի զոհի վերաինտեգրման ծրագրի շրջանակներում որոշվի իրագործել կրթական համակարգում նրա վերաինտեգրումը, ապա պետք է նախապատվություն տալ զոհի բնակության վայրում տեղակայված կրթական հաստատություններին:

Հաճախ լինում են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջանում կրթության համար նախատեսված աջակցությունը լրացնել բնակարանային նպաստով: Եթե թրաֆիքինգի զոհի բնակության վայրի շրջակայքում չհաջողվի գտնել համապատասխան կրթություն մատուցող հաստատություն, ապա պետք է քննարկել զոհին որոշ ժամանակով այլ վայր տեղափոխելու տարբերակը:

Բարձրագույն կրթություն

Հաշվի առնելով մեծ ծախսերը՝ ծառայություն մատուցող կազմակերպությունները, որպես կանոն, գումար չեն հատկացնում բարձրագույն կրթությանը: Այդուհանդերձ, նման աջակցությունը մատուցվել է, եթե հատկացվել է համապատասխան ֆինանսավորում, կամ եթե համալսարանական ուսումն ավարտելու համար թրաֆիքինգի ենթարկված անձին մնացել է ավարտել միայն մի քանի դասընթաց, կամ եթե գործատուն համաձայնվել է նրան աշխատանքի ընդունել միայն, եթե նա ունենա բարձրագույն կրթություն: Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները պետք է կատարեն թրաֆիքինգի այն զոհերի գնահատումը, ովքեր բարձրագույն կրթությունն ավարտելու ցանկություն են հայտնել, և որոշեն, արդյոք դա համահունչ է իրենց վերաինտեգրման ծրագրին: Բարձրագույն կրթություն ստանալու արժանի թեկնածուները պետք է դրսևորեն որոշակի ինքնուրույնություն, հուսալիություն, ինչպես նաև դասընթացը հաջողությամբ ավարտելու և աշխատանք գտնելու ներուժ:

Դպրոց և (կամ) տեխնիկում

Թրաֆիքինգի զոհերից շատերի վերաինտեգրման գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ շարունակական կրթությունը կամ մասնագիտական ուսուցումը պատշաճ գործելակերպ են

հանդիսանում տվյալ անձանց համար: Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունն ի վիճակի չէ ինքը վճարել նման ծառայությունների դիմաց, ապա այն պետք է փնտրի նման ծառայություններ գտնելու այլ ուղիներ: Ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են կապ հաստատել ինչպես համապատասխան պետական հաստատությունների հետ (օրինակ՝ զբաղվածության ծառայություն, կրթության նախարարություն), այնպես էլ այլ միջազգային և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների հետ՝ այնպիսի ծրագրերի մասին տեղեկություններ ստանալու համար, որոնք կկարողանան ծառայություններ մատուցել իրենց շահառուներին:

Ֆորմալ կրթություն

Ակադեմիական ուսուցումը հատկապես օգտակար է և հաճախ անգամ առանցքային է թրաֆիքինգի ենթարկված անչափահասների արդյունավետ վերաինտեգրման համար, քանի որ թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով նրանք մեծ բացեր ունեն կրթության մեջ: Այդ իսկ պատճառով, ուսուցումն անչափահասներին կօգնի լրացնել բաց թողնված դպրոցական տարիների հետևանքով առաջացած գիտելիքների պակասը և կդիտարկվի որպես առաջնահերթության: Նման ուսուցումը պետք է դիտարկել նաև որպես դպրոցական համակարգում արդյունավետ վերաինտեգրմանը նպաստող միջոց:

3.2.3.6 Մասնագիտական ուսուցում

Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է օգնեն զոհերին նախանշել այնպիսի զբաղվածության իրատեսական նպատակներ, որոնք համարժեք են նրանց կարողություններին, հմտություններին, կրթության մակարդակին, ինչպես նաև տվյալ բնակավայրում առկա զբաղվածության հնարավորություններին: Այնուհետև անհրաժեշտ է ամեն ջանք գործադրել մասնագիտական ուսուցում տրամադրելու նման նպատակների իրականացման համար: Մասնագիտական ուսուցումը պետք է կազմի վերաինտեգրման ծրագրերի առանցքային բաղադրիչը, քանի որ այն նպաստում է թրաֆիքինգի զոհերի սոցիալական վերաինտեգրման գործընթացի կայունությունը՝ մեծացնելով լավ վարձատրվող աշխատանք գտնելու հնարավորությունը և նրանց վստահությունը, ինչպես նաև զարգացնելով կյանքի ընդհանուր հմտությունները:

Մասնագիտական ուսուցումը պետք է կրի կամընտիր բնույթ, տրամադրի աշխատանք գտնելու համար անհրաժեշտ հմտություններ և հասանելի լինի դեպքերի ուսումնասիրության հիման վրա վերաինտեգրման համալիր գնահատմանը համապատասխան: Մասնագիտական ուսուցումը հաճախ տրամադրվում է հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, բարեգործական և կրոնական կազմակերպությունների կամ գործընկեր պետական հաստատությունների կողմից կամ նրանց մասնակցությամբ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է որոնի առկա ռեսուրսները և ապահովի, որ ուսուցումը համապատասխանի զոհերի վերաինտեգրման ծրագրի բուն նշանակությանը և տեղական պայմաններին:

3.2.3.7 Փոքր ձեռնարկատիրություն և եկամուտի գոյացմանն ուղղված գործունեություն

Հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո թրաֆիքինգից տուժած անչափահասները սովորաբար բախվում են տնտեսական դժվարությունների երկրում տիրող ծանր տնտեսական պայմանների և (կամ) մասնագիտական և գործնական հմտությունների բացակայության պատճառով, ինչը հաճախ ուղեկցվում է ընկճվածությամբ և իրենց դեմ կատարված հանցագործությամբ պայմանավորված սոցիալական խարանավորմամբ: Նման խնդիրները մեծացնում են թրաֆիքինգի կրկնության վտանգը, քանի որ վերադարձող զոհերի առջև ծառանում են նույն խնդիրները, որոնք նախկինում ստիպել էին նրանց հեռանալ հայրենիքից:

Եկամուտի գոյացման գործողությունները և փոքր ձեռնարկատիրություն հիմնելու համար տրամադրվող դրամաշնորհները կարող են վերածվել արդյունավետ միջոցի՝ վերականգնելու զոհերի ինքնուրույնությունը և սեփական ուժերի նկատմամբ հավատը: Այս առումով կարող են օգտակար լինել եկամուտի գոյացման փոքրածավալ նախաձեռնությունները՝ մեծացնելով զոհի հավատը սեփական ուժերի նկատմամբ, ինքնուրույնությունը և ընտանիքի եկամուտը: Եկամուտի գոյացման ծրագրերի արդյունավետությունն ապահովելու համար հաճախ անհրաժեշտ է դրանք ներառել պաշտպանության և վերաինտեգրման այլ բաղադրիչներում, ինչպիսիք են՝ հոգեբանական աջակցությունը և մասնագիտական ուսուցումը:

Փորձագետների խումբը (որը սովորաբար կազմում են վերահինտեգրման համար պատասխանատու ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները և համապատասխան ծառայությունների մատուցողները) պետք է քննարկի նշված գործունեությունը համակարգողի պաշտոնի հնարավոր թեկնածությունները՝ հիմնվելով աշխատանքային փորձի, կրթության, առկա հմտությունների և դրանց պարտադիր վերազինման վրա՝ փոքր ձեռնարկատիրությունը կառավարելու համար, ընդ որում համակարգողը պետք է լինի գործարարության ձիրք ունեցող մասնագետ: Ինչպես բոլոր այլ դեպքերում, հարկավոր է կատարել թրաֆիքինգի զոհի անհատական և իրավիճակային գնահատում, որպեսզի հնարավոր լինի նրա հմտությունները համապատասխանեցնել տեղական աշխատաշուկայում առկա հնարավորություններին:

Զգուշացում. թրաֆիքինգի զոհերից ոչ բոլորն են, որ կարող են դառնալ լավ ձեռնարկատեր: Որպես կանոն, թրաֆիքինգի զոհերը երիտասարդ են և անփորձ և չունեն սեփական գործը սկսելու համար անհրաժեշտ նվիրումն ու պատասխանատվությունը: Պետք չէ չափից շատ ստիպել զոհերին սկսել իրենց սեփական գործը, քանի որ անհաջողությունը կարող է բացասաբար անդրադառնալ նրանց ինքնագնահատականի վրա և հանգեցնել ընկճվածության:

Փոքր ձեռնարկատիրության ծրագրի մշակումը և իրագործումը պահանջում է հատուկ հմտություններ և փորձ: Ծառայություն մատուցող կազմակերպությունների համար խրախուսելի է փնտրել ընդունող երկրում գործող հաջողված ծրագրեր և աշխատել նրանց հետ՝ այդ ծրագրերում թրաֆիքինգի զոհերին ընդգրկելու նպատակով:

Զոհերի մեծ մասից կպահանջվի կապիտալից բացի ավելի շատ միջոցներ՝ հաջողված գործ սկսելու և այն շարունակելու համար: Փոքր ձեռնարկատիրությունների զարգացման համար նախատեսված աջակցությունը սովորաբար տրամադրվում է ստանդարտ քառափուլ մոդելով: Գործընկեր կազմակերպությունները կարող են աջակցություն տրամադրել մեկ կամ բոլոր փուլերում:

- Բիզնես ծրագրի դասընթաց,

- Փոքր ձեռնարկատիրության կառավարում և (կամ) եկամուտի գոյացման դասընթաց,
- Բնաիրային տեսքով տրամադրվող դրամաշնորհների հասանելիություն,
- Գնահատում:

Փոքր ձեռնարկատիրության զարգացման ծրագրերը կարելի է լրացնել նաև աշակերտության կամ մասնագիտական ուսուցման ծրագրով: Եկամտի գոյացման ծրագրի և ուսուցման համատեղումը կարող են լրացնել աշխատանքային փորձի բացակայությունը:

3.2.3.8 Աշխատանքի տեղավորում, վարձատրության սուբսիդավորում և աշակերտության ծրագիր

Վերադարձող զոհերը հաճախ նշանակալի աջակցության կարիք ունեն աշխատանքի տեղավորման առումով: Հաճախ նրանք վերադառնում են այնպիսի երկրներ, որտեղ չկան թափուր աշխատատեղեր, և վարձատրությունը ցածր է, ինչը հավանաբար ընկած է նրանց թրաֆիքինգի ենթարկվելու նկատմամբ խոցելիության պատճառի հիմքում: Բացի այդ, զոհերից շատերը գրեթե անփորձ են աշխատանք փնտրելու, գործատուին ներկայանալու կամ որոշակի ժամանակացույցով ապրելու հարցերում: Ուստի համապատասխան աջակցությունը և խորհրդատվությունը կարող են օգտակար լինել ոչ միայն լավ վարձատրվող աշխատանք գտնելու առումով, այլև դրանից չզկվելու համար գործատուի և գործընկերների հետ բնականոն հարաբերություններ պահպանելու առումով: Կարելի է կազմել հնարավոր գործատուների ցանկը: Հնարավոր գործատուներին վերհանելու և նրանց հետ կապ հաստատելու համար կարելի է օգնության դիմել համապատասխան պետական հաստատությունների աշխատակիցներին:

Պետական հաստատությունները և ընկերությունները տրամադրված չեն աշխատանքի ընդունել աշխատանքային փորձ չունեցողներին կամ հոգալ նրանց վերապատրաստման ծախսերը: Նման դեպքերում աշակերտության ծրագրերը և վարձատրության սուբսիդավորումը կարող են հանդես գալ որպես վերաինտեգրման գործընթացը դյուրացնելու տարբերակներ: Ծառայություն մատուցող կազմակերպությունը կարող է սուբսիդավորել որոշ շահառուների վարձատրությունը առաջին մի քանի ամսվա ընթացքում, երբ

նրանք աշխատում են ընկերությունում և ձեռք բերում օգտակար աշխատանքային փորձ: Որպես այլընտրանք, կարելի է նաև տրամադրել տվյալ կազմակերպությունում աշխատելու համար անհրաժեշտ սարքավորումներ: Այդ դեպքում ծառայություն մատուցող կազմակերպությունը կաջակցի գործատուներին՝ նրանց առաջարկելով նյութական միջոցներ և սարքավորումներ թրաֆիքինգից տուժած անձանց աշխատանքի ընդունելու դիմաց, ինչը կնպաստի նրանց սոցիալական վերահինտեգրմանը և սեփական ուժերի նկատմամբ հավատի վերականգնմանը:

Ակնկալվում է, որ թրաֆիքինգից տուժած անձի աշխատավարձը որոշ ժամանակ վճարելու կամ սուբսիդավորելու մասին պայմանագիր կնքած գործատուն աշխատանքի կընդունի նրան: Սակայն նույնիսկ եթե չընդունի, փորձնակը կանցնի համապատասխան ուսուցում և ձեռք կբերի բավարար փորձ այլ աշխատանք որոնելու և գտնելու համար: Այդուհանդերձ, ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ուշադիր լինի, որպեսզի վերադարձող անձանց վարձատրությունը սուբսիդավորելու միջոցով չառաջացնի կախվածություն, այլ ընդհակառակը ամեն ջանք պետք է գործադրի նրանց ինքնուրույնության և սեփական ուժերի նկատմամբ հավատը վերականգնելու համար:

Վարձատրության սուբսիդավորումը չպետք է գերազանցի տվյալ պաշտոնի համար աշխատաշուկայում նախատեսված աշխատավարձի չափը: Վարձատրության սուբսիդավորման նպատակը չի հանդիսանում զոհերի եկամուտի բարձրացումը, այլ գործատուին խրախուսելը աշխատանքի ընդունել զոհին՝ թույլ տալով նրան սովորական աշխատավարձերի համեմատ ավելի փոքր գումար վճարել և որոշակի ժամանակ չվարձատրվող պրակտիկա ապահովել զոհի համար: Հենց որ զոհն իրեն դրսևորի որպես հուսալի աշխատող, գործատուն կվճարի նրա ամբողջ աշխատավարձը: Աշխատաշուկայում ընդունված գնից ավելի վճարելու պարագայում զոհը մեծ հույսեր կդնի սուբսիդավորման վրա և արդյունքում կհիասթափվի, երբ գործատուն իջեցնի իր աշխատավարձը: Եթե տվյալ աշխատավարձն անընդունելի ցածր է, ապա պետք է դիտարկել զբաղվածության այլընտրանքային հնարավորությունները:

Նշում անձնական կյանքի անձեռնմխելիության և անվտանգության մասին

Հարկավոր է հարգել զոհերի՝ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Գործատուներին կամ հնարավոր գործատուներին պետք չէ պատմել զոհերի թրաֆիքինգի դեպքերի կամ տվյալ աշխատանքին չառնչվող նախկին կյանքի մասին: Հակառակ դեպքում կխախտվի նրանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, և կմեծանան անվտանգության ռիսկերը:

3.2.3.9 Կացարան և ապաստան

Եթե ծագման երկրում կան ապաստարաններ կամ վերականգնման կենտրոններ, ապա թրաֆիքինգից տուժած անձինք որպես կանոն ժամանումից որոշ ժամանակ անց մնում են այդտեղ: Եթե զոհերն ի վիճակի չեն պահպանել իրենց գոյությունը, չեն կարող կամ չեն ցանկանում վերադառնալ տուն և չունեն մշտական բնակության վայր, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է տեղ հատկացնի նրանց համար ապաստարանում կամ վերականգնման կենտրոնում: Նման ապաստարաններ կամ վերականգնման կենտրոններ գտնելու համար պետք է համագործակցության պայմանագրեր կնքել հասարակական կազմակերպությունների և սոցիալական ապահովության ծառայությունների հետ: Որպես կանոն, զոհերը նման հաստատություններում ապրում են մի քանի ամիս, անցնում են մասնագիտական ուսուցում, աշխատանք են փնտրում և այն գտնելու պարագայում դառնում ինքնուրույն: Բացի այդ, դեպքից կախված՝ վերաինտեգրման ծրագրի և դրա բաղադրիչների (օրինակ՝ մասնագիտական ուսուցում) հաջող իրականացման համար կարող է տրամադրվել բնակարանային նպաստ:

Թեև վերականգնման կենտրոնները կարող են ապահովել անվտանգ կացարան, այդուհանդերձ, նման հաստատությունների առաջնային նպատակն է ոչ թե թրաֆիքինգի զոհերին երկարատև բնակարանային աջակցության տրամադրումը, այլ համալիր բժշկական ծառայությունների ապահովումը: Զոհերի առողջական կարիքների բավարարման պես նրանք պետք է վերադառնան ծագման երկրում իրենց հայրենի տարածաշրջան: Որպես կանոն, նրանք միշտ ունեն շարունակական առողջական խնդիրներ, ուստի և պետք է կապ

հաստատել ապաստարանի և վերականգնման կենտրոնների հետ, որոնք կարող են ապահովել երկարաժամկետ աջակցություն:

Բնակարանային նպաստներն ապաստարանների այլընտրանք են հանդիսանում, որոնք օգնում են կայուն վերաինտեգրման և կյանքի կարգավորման գործընթացում: Ցանկացած ծառայություն մատուցող կազմակերպություն պետք է նպատակ դնի իրականացնել զոհի ամբողջական սոցիալական ինտեգրումը հնարավորինս սեղմ ժամկետներում: Համապատասխանաբար, փոքր բնակարանային նպաստը, օրինակ, վարձակալության սուբսիդավորումը սահմանափակ ժամանակահատվածով հաճախ նախընտրելի տարբերակ է, քանի որ ապաստարանը կարող է երբեմն կախվածություն առաջացնել և ձախողել վերաինտեգրման գործընթացը:

Եվ վերջապես, ելնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունից և զոհերին սպառնացող վտանգներից՝ հարկավոր է յուրաքանչյուր զոհի բնակեցման հարցում նրան որևէ այլընտրանք տրամադրել: (Նշում՝ ապաստարանները տնօրինելու վերաբերյալ առաջարկությունները ներկայացված են սույն ձեռնարկի 4-րդ գլխում):

3.2.4 ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայրենիք վերադառնալուն պես թրաֆիքինգի զոհերը, մասնավորապես անչափահասները, կարող են կանգնել լուրջ առողջական խնդիրների և ծանր տնտեսական պայմանների հետևանքով առաջացած նյութական դժվարությունների, մասնագիտական և գործնական հմտությունների բացակայության, ընկճախտի և հոգեբանական խնդիրների, ինչպես նաև սոցիալական խարանավորման խնդրի առջև: Աջակցություն ստանալու համար ուղղորդված անչափահասների ճնշող մեծամասնությունը տառապում է հոգեկան և ֆիզիկական մի շարք տրավմաներով, որոնք ախտորոշման և բուժման կարիք ունեն: Անչափահասների առջև ծառացած առողջական խնդիրները հատկապես բարդ բնույթ են կրում: Վերաինտեգրման աջակցությունը կարող է տրամադրվել այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անչափահաս անձը՝ անկախ իր կարգավիճակից ցանկություն է հայտնում ստանալ աջակցություն կամ համաձայնվում է իրեն առաջարկած օրինական խնամակալի թեկնածությանը՝ գործընկեր հասարակական կազմակերպությունների կամ ընդունող ծառայության մատուցող

ընկերության կողմից առաջարկվող վերաինտեգրման աջակցության տարբերակներից ուղղակի կամ անուղղակի կերպով օգտվելու նպատակով: Ընտանիքի տնտեսական դրությունը նույնպես ազդում է անչափահասի հաջող սոցիալական վերաինտեգրման հավանականության վրա: Աջակցությունը, այդ թվում նյութական օգնությունը և խորհրդատվությունը կարող է տրամադրվել ոչ միայն զոհին, այլև նրա ընտանիքի անդամներին: Հայրենիքում վերաինտեգրման աջակցություն մատուցելուց առաջ հարկավոր է հնարավորինս ապահովել հետևյալ կետերը.[16]

- Ողջ գործընթացի ժամանակ բոլոր մասնակիցները պետք է հաշվի առնեն երեխայի լավագույն շահերը, որոնք ամրագրված են Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում և սովորաբար արտացոլված են տեղի օրենքներում, քաղաքականություններում և (կամ) գործնականում կիրառվող ընթացակարգերում
- Օրինական խնամակալի համաձայնություն
- Երեխայի և (կամ) խնամակալի բավարար տեղեկատվություն և խորհրդատվություն

Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է համագործակցեն և օգտվեն մասնագիտացած գործակալությունների խորհրդատվությունից, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը կամ մասնագիտացած այլ հասարակական կազմակերպությունները և համապատասխան պետական մարմինները, որոնք մասնակցում են անչափահասների վերաինտեգրման գործընթացին:

Ուղղորդող երկրի օրենքներից կախված՝ երեխայի պաշտպանությունն անհրաժեշտության դեպքում պետք է ստանձնեն ծնողների դերում հանդես եկող սոցիալական ծառայության հաստատությունները: (Անչափահասներին մատուցվող ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք գտնել 5-րդ գլխի 5.6 բաժնում):

3.2.5 ՎԵՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հանցավոր տարրերի հետ ուղղակի կամ անուղղակի առնչության վտանգի պատճառով, որն էլ պայմանավորված է թրաֆիքինգի հակազդման ծրագրերի բնույթով, աճում է ռիսկերի աստիճանը վերաինտեգրման գործընթացի շրջանակներում, ինչը պետք է հաշվի

առնվի և համապատասխան արձագանքի արժանանա: Զոհերի վերահինտեգրման հետ կապված անվտանգության հարցերին անդրադառնալու համար զոհերին աջակցություն մատուցող կազմակերպությունները պետք է պարբերաբար հաշվի առնեն իրավիճակի ցանկացած փոփոխություններ, որոնք ահազանգվում են աշխատակազմի, զոհի կամ գործընկեր կազմակերպությունների կողմից, և համապատասխանաբար շտկեն անվտանգության գնահատման իրենց ընթացակարգերը: Ընդունող ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է սերտորեն համագործակցի տեղի ոստիկանության կամ այլ իրականացնող արժանահավատ գործընկերների հետ՝ պաշտպանելու բոլոր շահառուներին և աշխատակազմի անդամներին վերահինտեգրման գործընթացի շրջանակներում:

Առաջարկվող անվտանգության միջոցառումներն ու գործելակերպն աշխատակազմի և շահառուների համար, որոնք ներկայացված են սույն ձեռնարկում, պետք է շտկվեն ըստ անհրաժեշտության՝ անվտանգության սպառնալիքները և խնդիրները կանխարգելելու և դրանց հակազդելու նպատակով: Ռիսկերի գնահատումը պետք է ավելի հաճախ իրականացվի, հարկավոր է դրան գումարել ժամանակավոր անվտանգության միջոցառումներ և անցկացնել դասընթացներ աշխատանքային անվտանգությունը և վերահինտեգրման գործընթացի ամբողջականությունն ամրապնդելու նպատակով: (Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել 1-ին գլխում):

3.2.6 ՎԵՐԱՀԻՆՏԵԳՐՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Զոհերի վերադարձից հետո հարկավոր է պարբերաբար կապ պահպանել նրանց հետ՝ անվտանգության և մոնիթորինգի նկատառումներից ելնելով և ապահովելով նրանց արդյունավետ վերահինտեգրումը: Համապատասխան ուսուցում ստացած գործընկեր կազմակերպությունները, որոնք գործում են զոհի բնակության վայրի մոտակայքում, կարող են ի վիճակի լինել ոչ միայն ուղղակի աջակցություն մատուցել զոհին, այլև պատրաստել և իրագործել վերահինտեգրման ծրագիրը, ինչպես նաև անցկացնել վերահինտեգրման գնահատումը: Վերահինտեգրման գործընթացի մոնիթորինգը շատ կարևոր բաղադրիչ է, որը կոչված է տրամադրելու ստուգելի ցուցիչներ՝ կապված վերահինտեգրման ծրագրի հաջողության հետ: Հարկավոր է մոնիթորինգի ամսեկան զեկույցներ ներկայացնել աջակցություն

ստացող յուրաքանչյուր զոհի համար՝ վերաինտեգրման մոնիթորինգի առաջին երեք ամսվա ընթացքում: Այս գործընթացից հետո պետք է պատրաստվեն և ներկայացվեն առնվազն երկու լրացուցիչ զեկույցներ երեք ամսվա համար՝ վերաինտեգրման մոնիթորինգի մնացած ժամանակահատվածում: Զոհերի վերաինտեգրման առաջընթացի շարունակական ուսումնասիրությունից բացի՝ մոնիթորինգի ընթացակարգով պետք է նաև քննության առնվի այն հարցը, թե արդյոք զոհը կամ նրա ընտանիքի անդամներն սպառնալիքներ են ստացել և (կամ) հալածանքների ենթարկվել: (Տե՛ս մոնիթորինգի զեկույցի նմուշ այս գլխի 1-ին հավելվածում):

Հարկավոր է զերծ մնալ զոհերի (բացառությամբ անչափահասների) մոնիթորինգից մեկ տարին գերազանցող ժամանակահատվածով, քանի որ այս իրողությունը կարող է սրել խարանավորումը և հակառակ հետևանքների հանգեցնել իրավիճակի կարգավորման և արդյունավետ վերաինտեգրման գործընթացի համար: Անչափահասների պարագայում, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամն առաջարկում է մոնիթորինգն իրականացնել մինչև չափահաս տարիքը:[17]

Աջակցության խմբեր

Զոհերի աջակցության խմբերը կարող են շատ արդյունավետ գործիք դառնալ երկարաժամկետ հաջողված վերաինտեգրմանը նպաստելու առումով: Աջակցության խմբի անդամները ոչ միայն օգնում և սատարում են միմյանց, այլև կարող են դիմել ծառայություն մատուցող կազմակերպություն՝ լրացուցիչ աջակցության կարիք ունենալու կամ խնդիրներ առաջանալու պարագայում:

3.2.7 ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է շարունակաբար վերանայի, գնահատի և անհրաժեշտության դեպքում շտկի վերաինտեգրման աջակցության և դրա հետ կապված ընթացակարգերը: Կարող են օգտակար գտնվել հետևյալ գնահատման մեթոդները.

- գնահատում զոհի կողմից,
- ինքնագնահատում,
- արտաքին գնահատում,

- գնահատում դոնոր կազմակերպության կողմից
- գնահատում որպես Ազգային գործողությունների ծրագրի իրականացման մաս:

3.2.7.1 Գնահատում զոհի կողմից

Շահառուների արձագանքը վերաինտեգրման աջակցության գործընթացին կարող է օգտակար ցուցիչ հանդիսանալ՝ վկայելով ծրագրի ուժեղ և թույլ կողմերի մասին և պարզաբանելով այն հարցը, թե արդյոք բոլոր բժշկական, հոգեբանական, ֆինանսական, սոցիալական և իրավական կարիքներն իրականում բավարարվել են կամ այն, թե արդյոք ապագա ծրագրերի շրջանակներում հարկավոր է հաշվի առնել որևէ լրացուցիչ կարիքներ:

Ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են մշակել գնահատման ձև, որը պետք է լրացվի անանուն կերպով (հնարավորության դեպքում) յուրաքանչյուր աջակցություն ստացող զոհի կողմից: Այս ձևում պետք է ընդգրկվեն վերաինտեգրման գործընթացի բոլոր փուլերը, ինչպիսիք են՝ ուղղորդող երկրում ստացված աջակցությունը, մեկնման և ժամանման աջակցությունը, բժշկական և հոգեբանական աջակցությունը, վերաինտեգրման գծով հատկացված դրամաշնորհները, մասնագիտական ուսուցման ծրագրերը, իրավական աջակցությունը և աջակցության որևէ այլ ձև՝ ըստ անհրաժեշտության:

3.2.7.2 Ինքնագնահատում

Շարունակական ինքնագնահատումը երկրի ներսում ընթացիկ վերաինտեգրման իրավիճակի ուժեղ և թույլ կողմերի մոնիթորինգի հնարավորություն կտա՝ լրացնելով կազմակերպության ինստիտուցիոնալ գիտելիքներն առ այն, թե ինչպես լավագույնս պլանավորել և ինչ ընդգրկել ապագա վերաինտեգրման աշխատանքներում:

3.2.7.3 Արտաքին գնահատում

Վերաինտեգրման գործընթացի անկողմնակալ գնահատում ստանալու համար՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը կարող է ներգրավել արտաքին գործակալությունների՝ գնահատելու իր ծրագրերի ուժեղ և թույլ կողմերը և զեկուցելու դրանց մասին՝ առաջարկելով որևէ անհրաժեշտ բարելավումներ:

Նշումներ

1 Երկարաժամկետ վերաինտեգրման աջակցությունը շարունակում է դժվարություններ ներկայացնել: Քանի որ սակավաթիվ են եղել երկարաժամկետ վերաինտեգրման ծրագրերի խորը գնահատականները և զոհերի երկարատև շարունակական դիտարկումները, ուստի և այս գործընթացը դժվար կլինի, քանզի նման աջակցություն ստացած զոհերը շարունակում են իրենց կյանքը և կապը կորցնում են ծառայություններ մատուցողների հետ: Հետևաբար, քիչ բան է հայտնի երկարաժամկետ վերաինտեգրման լավագույն ընթացակարգերի մասին: Ուստի, այս հարցը դուրս է մնում սույն ձեռնարկի շրջանակներից:

2 Committee on the Rights of the Child, General Comment No. 6, CRC/GC/2005/6, 1 September 2005, para. 25.

3 Իրենց ծագման երկիր կամ որևէ երրորդ երկիր վերադառնալու հայտ ներկայացրած զոհերի պարագայում՝ «ուղղորդող կազմակերպություն» եզրույթը վերաբերում է այն կազմակերպությանը, որն օգնում է զոհին այն երկրում, որտեղ նա ի սկզբանե նույնականացվել է՝ կազմակերպելով նրա ճանապարհորդությունը և համակարգելով որևէ կազմակերպության աշխատակցի հետ նրա ժամանումը: «Ընդունող կազմակերպություն» եզրույթը վերաբերում է այն կազմակերպությանը, որն աջակցում է զոհին նրա ժամանելուն պես և վերաինտեգրման աջակցություն է մատուցում կամ ուղղորդում է այլ կազմակերպություն նման աջակցություն ստանալու նպատակով:

4 Այլ կարևոր փաստաթղթեր առանց ուղեկցության անչափահասների վերաբերյալ՝ UNICEF (2006). *Guidelines for the Protection of Child Victims of Trafficking,* UNICEF: NY; *Statement of Good Practice*, Third Edition, 2004, issued by the Separated Children in Europe Programme; European Union, Council Resolution of 26 June 1997 on unaccompanied minors who are nationals of third countries, and Guidelines for the Protection of the Rights of Children Victims of Trafficking in Southeastern Europe, UNICEF, May 2003.

5 UNICEF (2006). *Guidelines for the Protection of Child Victims of Trafficking,* UNICEF: NY, p. 25.

6 General Comment No. 31 [80], The Nature of the General Legal Obligation Imposed on States Parties to the Covenant, adopted on 29 March 2004 (2187th meeting), CCPR/C/21/Rev.1/Add.13.

7 Committee on the Rights of the Child General Comment No. 6,CRC/GC/2005/6, 1 September 2005, para. 27.

8 UNHCR Guidelines on International Protection on the application of Article 1A (2) of the 1951 Convention and/or 1967 Protocol relating to the Status of Refugees to victims of trafficking or persons at risk of being trafficked, HCR/GIP/06/07, 7 April 2006.

9 UNHCR Guidelines on International Protection on the application of Article 1A (2)

of the 1951 Convention and/or 1967 Protocol Relating to the Status of Refugees to Victims of Trafficking or Persons at Risk of being Trafficked, para. 28 and UNHCR, *Resettlement Handbook*, November 2004 edition, Chapter 4.1.

10 Libassi and Maluccio (1986) as sited in DuBois B. and Miley, K.K. (1996). *Social Work: An Empowering Profession*. Allyn and Bacon: Needham Heights, Massachusetts, p. 215.

11 Volpicelli (2004). *Understanding and Counteracting Trafficking in Persons: The Acts of the Seminar for Women Religious.* International Organization for Migration: Rome, Italy.

12 Նույն տեղում:

13 DuBois B. and Miley, K.K. (1996). *Social Work: An Empowering Profession.* Allyn and Bacon: Needham Heights, Massachusetts.

14 Նույն տեղում:

15 Նույն տեղում:

16 Այլ տեղեկատու նյութեր առանց ուղեկցության անչափահասների վերաբերյալ՝ *Statement of Good Practice*, 2000, issued by the Separated Children in Europe Programme; European Union, Council Resolution of 26 June 1997 on unaccompanied minors who are third-country nationals and *Guidelines for the Protection of the Rights of Children Victims of Trafficking in Southeastern Europe,* UNICEF, May 2003.

17 UNICEF (2006). *Guidelines for the Protection of Child Victims of Trafficking,*

UNICEF: NY, pp. 30-31.2

Հավելված I. Մոնիթորինգի զեկույց

Կազմակերպության անվանում

Բաժին 1. Թրաֆիքինգի զոհի անձնական տվյալներ

Անուն՝
Ազգանուն՝
Ծննդյան թիվ՝
Ընտանեկան կարգավիճակ՝
Երեխաներ՝
Փոստային հասցե՝
Հեռախոսահամար՝

Բաժին 2. Վերաինտեգրում

1. Որքա՞ն ժամանակ առաջ է կապ հաստատվել զոհի հետ:

2. Վերջին հանդիպման ամսաթիվ՝

3. Տվյալ ժամանակահատվածում մատուցված աջակցության տարբերակները՝
   - Խորհրդակցություն
   - Դասընթացներ
   - Հոգեբանական աջակցություն
   - Բժշկական աջակցություն
   - Աշխատանք զոհի ընտանիքի անդամների հետ
   - Իրավական աջակցություն
   - Կրթություն
   - Կացարան
   - Տրանսպորտային միջոց / տեղափոխում
   - Այլ

4. Զբաղվածություն՝
   - Ընդունվել է աշխատանքի (հաստատություն, պաշտոն)
   - Գործազուրկ
   - Ուսանող
   - Այլ

5. Արդյո՞ք անձը վարձատրվում է աշխատանքի դիմաց:
   - պարբերաբար
   - մասնակիորեն

6. Ինչպիսի՞ խնդիրների է նա բախվել հայրենիք վերադառնալուց հետո:

7. Արդյո՞ք նրան թրաֆիքինգի ենթարկած չարագործը ահաբեկել և (կամ) սպառնացել է իրեն:
   - Այո
   - Ոչ

8. Եթե «այո», ապա ինչպես: Ու՞մ է նա դիմել պաշտպանության:

9. Արդյո՞ք նրա հետ կապ են հաստատել իրավապահ մարմինների աշխատակիցները:
   - Այո
   - Ոչ

10. Արդյո՞ք նա ցանկություն է հայտնել համագործակցելու իրավապահ մարմինների հետ:
   - Այո
   - Ոչ

11. Ինչպիսի՞ ծրագրեր ունի նա ապագայի համար:

4

Ապաստարանի ուղեցույցներ

Գլխի բովանդակություն

4.1 Ապաստարանի հիմնում
4.2 Ապաստարանի տարածքն ու կառուցվածքը
4.2.1 Ապաստարանի ֆիզիկական հատկանիշներ
4.2.2 Ապաստարանի առավելագույն տարողություն
4.2.3 Տեխնիկական սպասարկում
4.2.4 Սանիտարական պայմաններ և ծառայություններ
4.2.5 Ապաստարանի ընդունելության ժամեր և ընդունելության քաղաքականություն
4.2.6 Անվտանգություն
4.3 Ապաստարանի կառավարում և անձնակազմի ընտրություն
4.3.1 Ապաստարանի անձնակազմ
4.3.2 Ապաստարանի կառավարում
4.3.3 Ուղղակի խորհրդատվություն և (կամ) հոգեբանական աջակցություն
4.3.4 Ապաստարանում բնակվող զոհերի հսկողություն և ընդհանուր խնամք
4.3.5 Ֆինանսների և գնումների վերահսկողություն
4.3.6 Աշխատակազմի այլ անդամներ
4.3.7 Կամավորների ներգրավում
4.4 Ապաստարանի աշխատակազմի ղեկավարում և ուսուցում
4.4.1 Վերապատրաստման և անձնակազմի կարողությունների կատարելագործման ծրագրեր
4.4.2 Ապաստարանի աշխատակիցների վարքագծի կանոնակարգ և (կամ) չափանիշային գործառնական ընթացակարգ
4.4.3 Աշխատակազմի հերթափոխներ
4.4.4 Վերահսկողություն
4.4.5 Աշխատանքային հյուծվածություն
4.5 Թրաֆիքինգի զոհերին ապաստարանում աջակցություն տրամադրելու ընթացակարգեր
4.5.1 Ապաստարանում բնակվող զոհերի հետ տարվող աշխատանքի հիմնական հասկացություններ
4.5.2 Ապաստարան ժամանելը
4.5.3 Առաջին հանդիպման վարողի ընտրություն
4.5.4 Առաջին հանդիպման նշանակում
4.5.5 Առաջին հանդիպումն անցկացնելու կարգը
4.5.6 Առաջին հանդիպման նպատակները
4.5.7 Ապաստարանում բնակվող անձանց իրավունքները և պարտականությունները
4.5.8 Ապաստարանում մատուցվող աջակցությունը և ծառայությունները
4.5.9 Բովանդակալի զրույց թրաֆիքինգի զոհի հետ
4.5.10 Առաջին հանդիպման եզրափակում
4.5.11 Առաջին անհրաժեշտության պարագաներ և նախնական վերականգնման շրջան

4.6 Հատուկ նկատառումներ ապաստարանում բնակվող երեխաների վերաբերյալ
4.7 Ապաստարանում մատուցվող ծառայություններ և աջակցություն
4.7.1 Խորհրդատվություն
4.7.2 Բուժօգնություն
4.7.3 Հոգեբանական խնամք
4.7.4 Հոգեբուժական խնամք
4.7.5 Իրավական աջակցություն
4.7.6 Ժամանցի կազմակերպում
4.7.7 Լրացուցիչ վերաինտեգրման ծառայություններ
4.7.8 Աջակցություն տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող թրաֆիքինգի զոհերին անձը հաստատող փաստաթղթեր և ճամփորդական փաստաթղթեր ստանալու, ինչպես նաև աջակցված կամավոր վերադարձի ծրագրում ընդգրկվելու հարցերում
4.8 Անհատականացված խնամքի ծրագրի մշակում
4.9 Ապաստարանից մեկնելը
4.10 Փաստաթղթերի կառավարում

Հավելված 1 Աշխատակազմի վարքագծի չափանիշների ուղեցույցներ
Հավելված II. Աշխատակազմի անդամների գաղտնիության պահպանման համաձայնագիր
Հավելված III. Ապաստարանի բնակիչների իրավունքներ
Հավելված IV. Ապաստարանի ընդհանուր կանոններ
Հավելված V. Աշխատակազմի անդամների՝ ապաստարանի բնակիչների մեկնումը կազմակերպելու պարտավորություն,
Հավելված VI. Ապաստարանից մեկնող անձանց համար նախատեսված հարցաթերթիկ

Սույն գլխի նպատակն է որպես համալիր ուղեցույց ծառայել թրաֆիքինգից տուժած անձանց համար նախատեսված ապաստարանի ստեղծման և տնօրինման հարցում: «Ապաստարան» բառով նշվում են մի շարք հաստատություններ, որոնք կացարան և աջակցություն են տրամադրում թրաֆիքինգի զոհերին, ինչպիսիք են՝ բժշկական վերականգման կենտրոնները, տարանցիկ կացարաններն ու իջևանատները, եթե այլ բան չի նշվում:

.....

Ինչ է իրենից ներկայացնում ապաստարանը:

Ապաստարանները կարող են լինել տարբեր ձևերի և կախված են բազում գործոններից, ինչպիսիք են՝ ֆինանսավորման առկայությունը, անվտանգության նկատառումները, ծառայությունների առկայությունը, ապաստարանի տարողունակությունն ու պահանջարկը: Արդյունքում,

ապաստարաններում կարող է թվով շատ կամ քիչ մարդ տեղակայվել, ապաստարանները կարող են տեղակայված լինել ժամանակավոր վայրերում կամ կարող են գտնվել մի քանի տարբեր վայրերում:

- **Տներ,**
- **Բնակարաններ,**
- **Հյուրանոցներ,**
- **Սենյակներ հատուկ հաստատություններում (օրինակ՝ հիվանդանոցներում),**
- **Եկեղեցիներ:**

Ապաստարանները կարող են նախատեսված լինել հատուկ թրաֆիքինգի զոհ դարձած անձանց համար, կամ դրանցում կարող են տեղակայվել նմանատիպ աջակցության կարիք ունեցող այլ անձինք, օրինակ՝ այլ հանցատեսակների (օրինակ՝ ընտանեկան բռնություն) զոհերը:

Սույն ուղեցույցում ներկայացված են ապաստարանների տնօրինման հիմնական սկզբունքները՝ որոշ կոնկրետ առաջարկություններով, որոնք նախատեսված են նպատակակետ, տարանցիկ և ծագման երկրներում թրաֆիքինգի զոհերի համար ստեղծված ապաստարաններ շահագործող կազմակերպությունների համար:

4.1 Ապաստարանի հիմնում

Բոլոր ապաստարանները պետք է իրենց առջև դնեն հետևյալ նպատակները.

- **Բավարար, անվտանգ և ապահով ժամանակավոր բնակելի միջավայր թրաֆիքինգի զոհերի համար:**
- **Բավարար, անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր ապաստարանի անձնակազմի համար:**
- **Նպաստել զոհի վիճակի կայունացմանը՝ կանխելով հետագա վնասը և նրան հնարավորություն ընձեռելով առավելագույնս վերականգնվել:**
- **Լավ պատրաստված աշխատակազմ, որն ուղղորդվում է համագործակցային և ծառայությունների միջև**

փոխազդեցության գործելակերպով և մատուցում է զոհերին համալիր շարունակական խնամք:

- **Զոհերի որակյալ պաշտպանություն և աջակցություն՝ անհատականացված ծրագրերի հիման վրա:**
- **Արդյունավետ գործելակերպ թրաֆիքինգի հակազդման, զոհերի աջակցության և պաշտպանության շրջանակներում՝ տարբեր երկրներում և տարածաշրջաններում:**

Ապաստարանը տնօրինող կազմակերպությունը պետք է ամեն ջանք գործադրի, որպեսզի ապաստարանը գործի տեղի սահմանված կանոնակարգին համաձայն: Հաճախ ապաստարանի աշխատանքի համար պահանջվում է համապատասխան գրանցում և (կամ) արտոնագրում պետական սոցիալական ծառայություններում: Նաև կարելի է կնքել փոխըմբռնման հուշագիր ապաստարանի տնօրինության և պետական կառույցների միջև:

Ամեն դեպքում, թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված որևէ առանձին ապաստարանի ստեղծումը և (կամ) տնօրինումը կարող է մանրամասն ձևակերպվել գրավոր տեսքով՝ համապատասխան նախարարության, պետական կառույցի կամ գործընկեր կազմակերպության հետ կնքած փոխըմբռնման հուշագրում, կամ էլ ապաստարանը տնօրինող և ծառայություն մատուցող կազմակերպության գրանցման և արտոնագրման փաստաթղթերում:

Հարկավոր է ուսումնասիրել հաջորդիվ ներկայացված բաժինները և ընդգրկել դրանց բովանդակությունը ապաստարանի ստեղծման գրավոր փաստաթղթերում:

Հիմնարար սկզբունքներ

Գործընկերներ ձեռք բերելուն պես անհրաժեշտ է հստակ ձևակերպել ստորև բերված համագործակցության հիմնարար սկզբունքները և գործնական մանրամասները: Հաջորդիվ ներկայացված են առաջարկվող հիմնարար սկզբունքներից մի քանիսը.

- Նպաստել թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանը ու աջակցությանը՝ համապատասխան գործընկերների միջև արդյունավետ համագործակցության միջոցով:
- Բոլոր կողմերի համար թրաֆիքինգի զոհերի անվտանգությունը և պաշտպանությունը պետք է մշտապես հանդիսանա գերակա նկատառում:

- Աջակցության ողջ գործընթացում պետք է արտացոլվեն միջազգային այն չափանիշները և ուղեցույցները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Պալերմոյի արձանագրությունում, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի Մարդկանց թրաֆիքինգի և մարդու իրավունքների սկզբունքներում ու ուղեցույցում, ինչպես նաև Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում:
- Մասնակցությունը աջակցության ծրագրերին իրականացվում է բացառապես կամավոր հիմունքներով՝ զոհի ազատ և իրազեկված ընտրության հիման վրա:
- Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք չպետք է պահվեն ներգաղթյալների համար նախատեսված կալանքի կենտրոններում կամ հաստատություններում:
- Չի կարելի կազմակերպություններից պահանջել որևէ տվյալ բացահայտել առանց զոհի համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը գնում է մեկ այլ անձի անվտանգության մասին, կամ այն դեպքերում, երբ նման տեղեկատվության բացահայտումը չի բխում զոհի լավագույն շահերից:

Այս հինգ հիմնարար սկզբունքները պետք է ներառվեն նախարարությունների, պետական կառույցների, հասարակական կամ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության մասին ցանկացած պայմանագրում՝ անկախ համագործակցության ոլորտից:

Ապաստարանի նպատակ

Այս կետով ներկայացվում է թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված ապաստարանը հիմնելու և (տնօրինելու) մտադրությունը:

Այս կետում պետք է նշվի այն հարցը, թե արդյոք ապաստարանը նախատեսված է բացառապես կարճ կամ միջին ժամկետով օգտագործվելու համար:

Ենթադրյալ շահառուներ

Թեպետև ապաստարանի նպատակն է կացարան տրամադրել թրաֆիքինգի զոհերի համար, սակայն խորհուրդ է տրվում մասնավորեցնել այն հարցը, թե արդյոք զոհերի բոլոր, թե միայն որոշ կատեգորիաներ են կարող նախատեսվել որպես տվյալ ապաստարանի

ենթադրյալ շահառուներ: Ենթադրյալ շահառուների մասին կետում կարելի է նաև մանրամասնել ենթադրյալ շահառուներին ապաստարան ընդունելու համար նախատեսված պաշտոնական և ոչ պաշտոնական ուղղորդման մեխանիզմները: Այս կետը կարող է օգտակար լինել խնդիրներից զերծ մնալու և ապագայում զոհերի ընդունման հետ կապված որևէ շփոթմունք կանխելու առումով:

Ստորև ներկայացված ցանկում բերված են որոշ կատեգորիաների օրինակներ, որոնք կարող են կամ չեն կարող հանդիսանալ որպես ենթադրյալ շահառուներ:

- Այն անձինք, որոնք թրաֆիքինգի որևէ կոնկրետ տեսակի զոհ են դարձել (օրինակ ի թիվս այլոց՝ սեռական շահագործում, տնային ճորտություն, մանկական աշխատանք, մանկահասակ զինվորների հավաքագրում, գյուղատնտեսական աշխատանքներ),
- Իգական սեռի զոհեր,
- Արական սեռի զոհեր,
- Մեծահասակ զոհեր,
- Մեծահասակ զոհեր երեխաների հետ,
- Մանկահասակ զոհեր,
- Քաղաքացի հանդիսացող զոհեր,
- Օտարերկրացի զոհեր,
- Օտարերկրացի զոհեր, ովքեր ցանկանում են վերադառնալ հայրենիք,
- Օտարերկրացի զոհեր, ովքեր ցանկանում են ստանալ ժամանակավոր կացության թույլտվություն:

Անչափահասների տեղակայում կացարանում

- **Երեխաները պետք է տեղակայվեն ապահով կացարանում իրենց նույնականացումից հետո հնարավորինս սեղմ ժամկետներում:**
- **Երեխաները պետք է կացարանում տեղակայվեն իրենց տարիքին և հասունության աստիճանին համապատասխան պայմաններում:**
- **Երեխաները պետք է տեղակայվեն նույն տարիքի և սեռի այլ երեխաների հետ:**

- **Հարկ է ամեն ջանք գործադրել ընտանիքի անդամներին միասին տեղակայելու համար (երբ դա անվտանգ է տվյալ հանգամանքներում և բխում է երեխայի լավագույն շահերից):**
- **Մանկահասակ զոհերը չպետք է երբևէ տեղակայվեն կալանքի հաստատություններում:**
- **Անչափահասներին ապաստարան տրամադրող կազմակերպությունները պետք է համոզվեն, որ նրանք դիմել են և ստացել համապատասխան թույլտվություն անչափահասին տեղակայելու համար՝ տեղի օրենսդրությամբ սահմանված կարգով:**

(Թրաֆիքինգի մանկահասակ զոհերին մատուցվող ծառայությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և ուղղորդում կարող եք գտնել 5-րդ գլխի 5.6 բաժնում):

Մատուցվող ծառայություններ

Այս կետը կարող է ընդգրկել ապաստարանում մատուցվող ծառայությունների համառոտ ցանկը: Հաջորդիվ ներկայացված պաշտպանությունն ու վերականգնումը սովորաբար ներառում է.

- Ապահով և անվտանգ ժամանակավոր կացարան,
- Մնունդ,
- Բուժօգնություն,
- Հոգեբանասոցիալական աջակցություն և խորհրդատվություն,
- Իրավաբանական խորհրդատվություն,
- Տարրական նյութական կարիքներ:

Կախված այն բանից, թե որտեղ է գտնվում ապաստարանը՝ տարանցիկ, նպատակակետ, թե ծագման երկրում, այս կետը կարող է ենթադրել.

- Կամավոր վերադարձի աջակցություն,
- Վերաինտեգրման աջակցություն, օրինակ.
  - Կրթություն կամ վերականգնում դպրոցում,
  - Մասնագիտական ուսուցում,
  - Աշխատանքի տեղավորում,
  - Ընտանեկան հարաբերությունների կարգավորման միջնորդություն

Ծախսեր

Եթե պայմանագիրը ներառում է որևէ ֆինանսավորող կազմակերպություն, ապա այս կետը կարող է օգտագործվել ապաստարանի բյուջեն և համապատասխան վարձերի մուծման ժամանակացույցը սահմանելու համար՝ ապաստարանի ծախսերի վերաբերյալ կողմերի համաձայնությամբ, օրինակ.

- Դրամական միջոցներ ապաստարանի կառուցման համար,
- Դրամական միջոցներ ապաստարանի վերակառուցման կամ վերանորոգման համար,
- Դրամական միջոցներ ապաստարանի տեխնիկական սպասարկման համար,
- Դրամական միջոցներ կահույքի և սարքավորումների ձեռք բերման համար,
- Դրամական միջոցներ աշխատակազմի անդամների և զոհերի փոխադրման համար,
- Դրամական միջոցներ կացարանում զոհերի տեղակայման, սննդի, բուժօգնության, հոգեբանասոցիալական աջակցության համար,
- Դրամական միջոցներ առաջին անհրաժեշտության պարագաների համար,
- Պետական սուբսիդավորում բնակարանի վարձակալման և այլ ծառայությունների համար:

Ապաստարանի համար տարածքի տրամադրում կամ ձեռքբերում

Անհրաժեշտության դեպքում՝ այս կետը կարող է օգտագործվել ապաստարանի համար տարածք ձեռք բերելու համար պատասխանատու անձի անունը նշելու նպատակով:

Եթե տեղի օրենքներով պահանջվում է ապաստարանի գրանցում, ապա այս կետով կարող է նշվել, թե որ կողմն է պատասխանատու համապատասխան գրանցման համար:

Ապաստարանի համար աշխատակիցների ընդունում և ապահովում

Այս կետով կարելի է նշել նրան, ով պատասխանատու է ապաստարանի աշխատակազմի անդամների ընդունման և ապահովման, ինչպես նաև համապատասխան աշխատավարձերի և ծախսերի մուծման համար: Որոշ դեպքերում համաձայնվող կողմերը կիսում են այս կամ այն աշխատակազմի անդամին ընդունելու և վճարելու պարտավորությունը: Սովորաբար չի պահանջվում նշել աշխատակազմի անդամների թիվը և նկարագիրը: Այս կետում կարող են նշվել աշխատակազմի վերապատրաստման, աշխատակազմի վերահսկման, կարգապահական միջոցների և տեխնիկական աջակցության համար պատասխանատու աշխատակիցները:

Ապաստարանի անվտանգություն

Այս կետում նշվում է ապաստարանի անվտանգության համար պատասխանատու անձը կամ անձինք: Ապաստարանում անվտանգություն ապահովելու պարտավորությունը պետք է ներառի այնտեղ մտնող, բնակվող, այնտեղից դուրս եկող զոհերին և աշխատակազմի անդամներին: (Տե՛ս նաև Գլուխ 1, բաժիններ 1.3 և 1.4.):

Ծառայությունների մատուցման պայմանագրեր այլ կազմակերպությունների կամ հաստատությունների հետ

Այս կետն օգտագործվում է ապաստարանում տեղակայված զոհերին աջակցություն և ծառայություններ մատուցող պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ առկա (կամ պլանավորվող) ծառայության մատուցման կամ համագործակցության պայմանագրերը նշելու համար: Այս կետում կարող են նաև նշվել ծառայության մատուցման նման պայմանագրերի կնքման տարրական չափորոշիչները, այդ թվում՝ խնամքի չափանիշները, ինչպես նաև դրանց համապատասխանությունն ապաստարանի շահագործման սահմանված չափանիշներին և սկզբունքներին:

Ապաստարանի ապահովագրում

Այս կետում պետք է նշվի այն կազմակերպությունը, որը պատասխանատու է ապաստարանի ապահովագրման համար, ինչպես նաև պահանջվող ապահովագրության տեսակ(ներ)ը:

4.2 Ապաստարանի տարածքն ու կառուցվածքը

Ապաստարանում տեղակայված բոլոր բնակիչների և աշխատակազմի անդամների առողջությունն ու անվտանգությունը գերակա նշանակություն ունեն: Բոլոր ապաստարաններում պետք է ապահովվի մաքուր, անվտանգ և հարմարավետ միջավայր՝ նույնչափ անվտանգ և լավ պլանավորված կառույցի ներսում: Բոլոր հարմարությունները և կահույքը պետք է համապատասխանեն տեղի հակահրդեհային, էլեկտրականության և շինարարական անվտանգության կանոններին:

4.2.1 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Ապաստարանի շենքի հստակ հատկանիշները կախված են ապաստարանի համար պատշաճ տարածքի, ֆինանսավորման և աջակցության առկայությունից: Այնուամենայնիվ, ապաստարանների մեծ մասը պետք է շուրջօրյա ծառայություն մատուցեն և ընդգրկեն հետևյալ հարմարությունները.

Խոհանոց և ճաշասենյակ

Մննդի պատրաստման և մատուցման տարածքը պետք է համապատասխանի սննդի ապահով պատրաստման և պահման պահանջներին: Խոհանոցները պետք է հագեցված լինեն կերակրի պատշաճ պատրաստման, մատուցման հարմարություններով և այլ սեղանային պարագաներով:

Ընդհանուր բնակելի տարածք

Հավաքվելու և տարբեր գործունությամբ զբաղվելու բավարար տարածք բնակիչների համար:

Սանհանգույց

Զուգարանները, լվացարանները և լոգարանները պետք է լինեն սարքին վիճակում, մաքուր և բավարար քանակությամբ: Ապաստարանի բնակիչները պարտավոր են սանհանգույցը պահել մաքուր:

Քնելու հարմարություններ

Ապաստարանի բնակիչները պետք է ունենան պատշաճ քննելու

տեղ, սեփական մահճակալ սարքին վիճակում, մաքուր անկողնային սպիտակեղեն, ընդ որում՝ նրանք պետք է ունենան սեփական հագուստն ու անձնական պարագաները պահելու տեղ: Հարկավոր է մտապահել, որ շատ թրաֆիքինգի զոհեր ստիպված են եղել ապրել հարմարավետության նվազագույն պայմաններում կամ նույնիսկ ստիպված են եղել գետնին քնել, կամ էլ ապրել այլ զոհերի հետ խիտ բնակեցված տարածքում: Ուստի, կարևոր է չվերարտադրել նման միջավայրն ապաստարանում նույնիսկ կարճ ժամանակահատվածով: Արտակարգ դեպքերում աշխատակազմի անդամները կարող են որոշել, որ ապաստարանի բնակիչների համար ապահով կլինի քնել ծալովի մահճակալների կամ այլ պատշաճ այլընտրանքային պայմաններում: Նման այլընտրանքային տարբերակներին կարել է դիմել խիստ կարճաժամկետ հիմունքներով՝ մինչև ապաստարանում տեղ ազատվի, կամ էլ համապատասխան քայլեր ձեռնարկվեն զոհերին այլ վայրում տեղակայելու համար:

Խորհրդատվությունների համար հատկացված առանձին սենյակ

Ապաստարանի առնվազն մեկ սենյակ պետք է միշտ ազատ պահվի բնակիչների հետ առանձին և անհատական քննարկումների և խորհրդատվությունների համար: Զոհերի հետ անցկացվող զրույցների և խորհրդատվության շրջանակներում ի հայտ են գալիս նրբանկատ և գաղտնի տեղեկություններ, որոնք չպետք է պատահաբար լսվեն աշխատակազմի այլ անդամների կամ բնակիչների կողմից: Ուստի, խորհուրդ է տրվում նշված սենյակը հատկացնել ապաստարանի ընդհանուր օգտագործման տարածքներից որոշակի հեռավորության վրա:

Գրասենյակ աշխատակազմի անդամների համար

Ապաստարանի սենյակներից մեկը պետք է ծառայի որպես գրասենյակ աշխատակազմի անդամների համար: Այս սենյակը կարող է հատկացվել նաև այնպես, որ ծառայի որպես քնելու կամ հանգստանալու սենյակ ապաստարանում գիշերող աշխատակազմի անդամների համար:

Բժշկական զննումների համար նախատեսված սենյակ

Ապաստարանում կարելի է հատկացնել բժշկական զննումների համար նախատեսված սենյակ՝ կախված ապաստարանի տարածքից և այն հանգամանքից, թե արդյոք մատուցվում են ամբուլատոր կամ

ստացիոնար բուժծառայություններ: Եթե բժիշկը կամ բուժաշխատողը չի գտնվում նշված սենյակում, ապա այն պետք է մշտապես կողպեքով փակված լինի: Առանձնապես կարևոր է այս սենյակում պահվող դեղորայքը պահել կողպեքով փակված պահարաններում:

Յուրաքանչյուր ապաստարանում պետք է լինի առաջին օգնության դեղատուփ և համապատասխան պարագաներ՝ անկախ առանձին բժշկական սենյակի առկայությունից:

Լվացքատուն և լվացք անելու հարմարություններ

Լվացքատունը և լվացք անելու հարմարությունները պետք է անվճար լինեն և գտնվեն ապաստարանի տարածքում:

Ժամանցային տարածք

Հարկավոր է ապահով ժամանցային տարածք նախատեսել ապաստարանի ներսում կամ դրսում, նույնիսկ եթե այն փոքր լինի:

Պահուստավորման տարածք

Խորհուրդ է տրվում յուրաքանչյուր ապաստարանում ունենալ տարբեր իրերի պահման համար նախատեսված հատուկ սենյակ: Ապաստարանի պարագաների, անձնական հիգիենայի առարկաների, ապաստարանի բնակիչների լրացուցիչ հագուստի և այլ պարագաների պահման համար բավականին տեղ է պահանջվելու, ուստի լավ կլինի դրանք պահել մեկ սենյակում: Հաճախ պահանջվում են հետևյալ առարկաները, որոնք պետք է գնվեն, արտացոլվեն գույքային ցուցակում, պահվեն առանձին տարածքում փականքի տակ, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրվեն ապաստարանի բնակիչներին.

- Մաքրելու պարագաներ ապաստարանի համար,
- Անձնական հիգիենայի պարագաներ բնակիչների համար,
- Լրացուցիչ հագուստ և կոշիկ բնակիչների համար (ըստ տարվա եղանակի),
- Ճանապարհորդական պարկեր
- Այլ պարագաներ:

4.2.2 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանի առավելագույն տարողությունը (այն անձանց թիվը, ովքեր կարող են ապահով տեղակայվել ապաստարանում) որոշվում է՝ հաշվի առնելով լրացուցիչ բնակիչների հնարավոր ընդունումը: Ապաստարանի առավելագույն տարողությունը որոշվում է տեղի առողջապահական և անվտանգության կանոններով՝ կախված աշխատակազմի վերահսկիչ կարողությունից, ինչպես նաև ապաստարանում քնելու տեղերի համապատասխան քանակից: Խորհուրդ է տրվում, որ ծառայություն մատուցող կազմակերպությունը և ապաստարանի աշխատակազմը պատրաստեն մի ծրագիր չնախատեսված դեպքերի համար, եթե ապաստարանի տարողությունը հասնի իր առավելագույն սահմանագծին: Պետք է նշվեն ապահով տեղակայման և ծառայությունների մատուցման այլընտրանքային պայմաններ այն զոհերի համար, ովքեր չեն կարող անմիջապես ապաստարան ընդունվել տեղի բացակայության պատճառով:

4.2.3 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ծառայությունների մատուցման պայմանագիր ունենա ընթացիկ և արտակարգ տեխնիկական սպասարկման և վերանորոգման աշխատանքների վերաբերյալ: Հաշվի առնելով ապաստարանի աշխատանքի նրբանկատ և գաղտնի բնույթը՝ աշխատակազմի անդամները պետք է նախօրոք իմանան, թե ում դիմել որևէ տեխնիկական սպասարկման աշխատանքների կամ դրա հետ կապված հարցերի համար: Ապաստարանը պետք է նախապես համաձայնության գա տեխնիկական սպասարկման ծառայությունների վերաբերյալ այն մատուցող ընկերության հետ, որը պետք է հարգի ապաստարանի կանոնները: Ծառայությունների մատուցման պայմանագրում պետք է ներառվեն դրույթներ սպասարկման և վերանորոգման աշխատանքների վերաբերյալ հետևյալ կետերով.

- Շենքի ֆիզիկական կառույց,
- Կոմունալ հարմարություններ (այդ թվում՝ սանհանգույցներ և հոսանքի մատակարարում),
- Կահույք,
- Սարքեր,
- Ավտոմեքենաներ (առկայության դեպքում):

4.2.4 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է համապատասխանի մաքրության և հիգիենայի չափանիշներին՝ տեղի առողջապահական կանոնակարգի և գործնականում ընդունված ընթացակարգերի համաձայն: Ապաստարանի բնակիչները պետք է համագործակցեն և մասնակցեն ապաստարանի սպասարկմանը, ինչպես նաև պատասխանատու լինեն իրենց քննելու տեղը մաքուր պահելու համար: Յուրաքանչյուր ապաստարանում պետք է նշանակվեն մաքրության համար պատասխանատու անձինք՝ աշխատակազմի անդամների և բնակիչների թվից, ում անունները պետք է փակցվեն՝ նշելով նրանց առօրյա պարտականությունները: Աշխատակազմի անդամները պետք է պատասխանատու լինեն մաքրության և հիգիենայի պահանջվող չափանիշների պահպանման համար ապաստարանի ողջ տարածքում: Կախված ապաստարանի չափից, բնակիչների թվից և աշխատակազմի բաղադրությունից՝ կարող է հավաքարար վարձելու անհրաժեշտություն առաջանալ:

Հաջորդիվ ներկայացված է ապաստարանում սահմանված առօրյա պարտականությունների և կանոնների մի օրինակ.

Խոհանոց, սննդի պատրաստման և սննդի ընդունման համար նախատեսված տարածքներ՝

- պետք է հիմնովին մաքրվեն առնվազն օրը երկու անգամ,
- գրավոր հրահանգներ առ այն, որ ապաստարանի բնակիչները ստանան երեք սննդարար և լավ հավասարակշռված կերակրատեսակ կամ լավ հավասարակշռված սննդակարգի բաղադրիչներ, իսկ երեխաները լրացուցիչ միջանկյալ սնունդ ստանան օրը երկու անգամ,
- փակցնել խոհանոցից օգտվելու կանոնները և աշխատանքային ժամերը,
- ողջամիտ սննդակարգի պայմաններ այն բնակիչների համար, ովքեր ունեն հատուկ սննդի կարիք,

Լոգարաններ և զուգարաններ՝

- պետք է հիմնովին մաքրվեն առնվազն օրը մեկ անգամ,
- անհրաժեշտության դեպքում՝ փակցնել սանհանգույցից օգտվելու ժամանակացույցը:

Քնելու տեղեր

- պետք է մաքրվեն օրը մեկ անգամ,
- պետք է պահվեն մաքուր և խնամքով բնակիչների կողմից,
- անկողնային սպիտակեղենը, բարձերն ու ծածկոցները պետք է պարբերաբար լվացվեն,
- գրավոր քաղաքականություններ և ընթացակարգեր բնակիչների ունեցվածքի անվտանգության վերաբերյալ:

Գրասենյակներ և հանդիպումների անցկացման վայրերը՝

- պետք է մաքրվեն օրը մեկ անգամ:

Ապաստարանի ամբողջ տարածքը՝

- հարկավոր է պարբերաբար ավլել և սրբել փոշին,
- ծխելն արգելվում է:

4.2.5 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է մշակի և հրապարակի հստակ քաղաքականություններ ապաստարանի աշխատանքային ժամերի և նոր բնակիչների ընդունելության վերաբերյալ: Այս քաղաքականությունները պետք է ձևավորվեն ուղղորդման աղբյուրների և գործընկեր այլ կազմակերպությունների հետ համատեղ և հրապարակվեն դրանցում: Սովորական աշխատանքային ժամերին նոր բնակիչների ընդունումն ապաստարան թույլ է տալիս աշխատակազմի անդամներին համապատասխան ծառայություններ մատուցել նոր բնակչին՝ նվազագույնի հասցնելով ապաստարանի գործունեության և բնակիչների առօրյա կյանքի բնականոն ընթացքի խանգարումը: Յուրաքանչյուր ապաստարան պետք է քաղաքականություն ունենա նոր բնակչի ընդունելությանը պատրաստվելու և այդ մասին ծանուցելու նվազագույն ժամկետների վերաբերյալ: Նախապատրաստական աշխատանքների համար պահանջվող ժամանակը որոշելիս պետք է հաշվի առնել զոհի անձնական գործը բացելու, անվտանգության նախնական գնահատում անցկացնելու, նրա հետ առաջին հանդիպումն անցկացնող անձին նշանակելու և լրացուցիչ աջակցություն մատուցողների ներկայությունն ապահովելու ժամանակը՝ անհրաժեշտության դեպքում:

Այնուամենայնիվ, կարող է հրատապ անհրաժեշտություն առաջանալ

զոհերին ընդունել սովորական աշխատանքային ժամերից հետո:

Հարկավոր է հաշվի առնել ապաստարանի բնակիչների վրա անդրադարձող հետևանքները, երբ նոր բնակիչներ են ընդունվում գիշերային ուշ ժամերին: Հարկավոր է ամեն ջանք գործադրել, որպեսզի նոր բնակիչն իրեն հարմարավետ զգա՝ միաժամանակ նվազագույնի հասցնելով անհանգստությունը մնացած բնակիչների համար:

4.2.6 ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ընդհանրական ռիսկերի գնահատման գործընթացի (տե՛ս գլուխ 1, բաժին 1.1) միջոցով ի հայտ բերված ռիսկային ոլորտների արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով՝ պետք է մշակվեն և ըստ հարկի իրագործվեն պատշաճ չափանիշներն ու ընթացակարգերը՝ ապահովելու զոհերի և աշխատակազմի անդամների առավելագույն անվտանգությունն ու նվազագույնի հասցնելով համապատասխան ռիսկերը՝

- Ռիսկեր ապաստարանի տարածքում,
- Ռիսկեր ապաստարանից դուրս,
- Ռիսկեր աշխատակազմի անդամների համար,
- Ռիսկեր ապաստարան այցելողների համար,
- Ռիսկեր ապաստարանի բնակիչների համար,
- Գաղտնիության, վարչական և փաստաթղթային ռիսկեր:

Անվտանգության չափանիշներ և ընթացակարգեր՝ ապաստարանի տարածքում

Ստորև ներկայացված ուղեցույցը պետք է ծառայի որպես լավագույն ընթացակարգերի մոդել, որը հիմնված է մինչ օրս Միգրացիայի միջազգային կազմակերպության կուտակած փորձի վրա: Պարզ է դառնում, որ յուրաքանչյուր իրավիճակում լավագույն լուծումը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ հարմար տարածքի, անհրաժեշտ ֆինանսավորման, ինչպես նաև ծրագրի ստացած պետական աջակցության առկայությունը:

Այն դեպքերում, երբ կան ֆինանսական և գործնական հնարավորություններ, հարկավոր է վարձել անվտանգության մասնագետի, ով կանցկացնի առաջարկվող շինության անվտանգության ուսումնասիրությունն ու գնահատումը:

- Հնարավորության դեպքում՝ այդ գործառույթը կարող է իրականացվել ոստիկանության մասնագետի կողմից՝ համագործակցության պայմանագրի շրջանակներում: Հակառակ դեպքում, և եթե ֆինանսական միջոցները թույլ են տալիս, ապա կարելի է վարձել արտաքին անվտանգության մասնագետի, որպեսզի նա իրականացնի այս գործառույթը:
- Յուրաքանչյուր ապաստարան պետք է ունենա հակահիդեհային անվտանգության և էվակուացման պլան: Ներխուժման դեմ ուղղված ցանկացած միջոցառումներ ձեռնարկելիս հարկ է հաշվի առնել արտակարգ իրավիճակներում էվակուացման հնարավորությունը: Ուստի, դռների կամ լուսամուտների վրա տեղադրված ահազանգման և կողպեքավորման համակարգը պետք է ունենա ներսից արագ բացվելու հնարավորություն:
- Որոշ երկրներում ավելի հին ապաստարանները կարող են հրդեհավտանգ լինել, ինչը պայմանավորված է էլեկտրական լարերի կամ կառուցվածքային չափանիշների հնացմամբ, ուստի հարկավոր է ամեն ջանք գործադրել այս ռիսկը նվազեցնելու համար:

Անվտանգության աշխատակիցների ֆիզիկական ներկայությունն ապաստարաններում

Թեև անվտանգության աշխատակիցների ֆիզիկական ներկայությունն ապաստարանի մուտքի մոտ կամ պարագծով կարող է ցանկալի և ողջունելի լինել, սակայն այս իրողությունը հարկավոր է դիտարկել երկու այլ գործոնների ներքո.

- Անվտանգության աշխատակիցների բացահայտ ներկայությունը կարող է նաև մոտակայքում գտնվող յուրաքանչյուր անձին մատնել ապաստարանի գտնվելու վարը:
- Համազգեստով անվտանգության աշխատակիցների ներկայությունը կարող է բացասական հոգեբանական ազդեցություն ունենալ բնակիչների վրա:

Եթե ցանկալի է անվտանգության աշխատակցի ներկայությունը որևէ պետական գործակալության հետ համագործակցող ապաստարաններում, ապա ոստիկանության աշխատակցի շուրջօրյա ներկայությունը ապաստարանի տարածքում հնարավոր է: Այն դեպքերում, երբ նման համագործակցությունը բացակայում է, կարելի

է չնախատեսված դեպքերի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տեղի ոստիկանության հետ և տեղադրել տեղի ոստիկանության բաժանմունքի հետ կապված ահազանգման համակարգեր՝ արտակարգ դեպքերում ոստիկանության անհապաղ արձագանքն ապահովելու նպատակով: Այս միջոցների փաստացի օգտակարությունը կախված է տեղի պայմաններից: Ամրակազմ անվտանգության աշխատակիցների ֆիզիկական ներկայությունը միշտ չէ, որ կարող է առավելություն հանդիսանալ:

Բացի այդ, տարածքի անվտանգությունը կարելի է ապահովել դիմելով ոստիկանության փոխարեն որևէ մասնավոր անվտանգության գործակալություն: Այդուհանդերձ, առկա ֆինանսավորման հարցերից բացի՝ նախքան նման պայմանագիր կնքելն անհրաժեշտ է իրականացնել ամբողջական ուսումնասիրության և ստուգման ընթացակարգ:

Անվտանգության աշխատակիցների ներկայությունը պահանջելու կամ ընդունելու որոշումը կախված է ակնկալվող ռիսկերի աստիճանից և տեղի հանգամանքներից: Որպես լավագույն անվտանգության ընթացակարգ միշտ խորհուրդ է տրվում ապահովել որևէ անվտանգության աշխատակցի ֆիզիկական ներկայությունը:

Կարելի է կատարել տարածքի անվտանգության ամբողջական գնահատում տեղի ոստիկանության ծառայության կամ մասնավոր անվտանգության ընկերության միջոցով:

Անվտանգության չափանիշներ և ընթացակարգեր՝ ապաստարանի տարածքից դուրս

Որոշ վայրերում աջակցություն ստացող թրաֆիքինգի զոհերը կարող են անհատական աջակցություն ստանալ տեղի համայնքային մասնավոր, անկախ կացարաններում, որոնք գործում են լիովին առանձին և ապաստարանի գաղափարի շրջանակներից դուրս:

Այն դեպքերում, երբ նման իրավիճակ է ստեղծվում, աշխատակազմի անդամները պետք է ուսումնասիրեն մի շարք լրացուցիչ ռիսկերի և անվտանգության հարցեր նախքան աջակցության ծառայություններ մատուցելը: Այն դեպքերում, երբ առաջարկվում է աջակցություն ստացող զոհին տեղակայել մասնավոր կացարանում, հարկավոր է հաշվի առնել հետևյալ հարցերը.

- Անմիջական տեղանքի ռիսկերի և աջակցություն ստացող զոհի

համար դրա հարմարության գնահատում տեղակայումից առաջ՝ պատասխանելով այն հարցերին, թե արդյոք տվյալ վայրում արձանագրվում է հանցավորության բարձր գործակից, արդյոք աջակցություն ստացող զոհերը կարող են առնչվել այնպիսի անձանց կամ խմբերի հետ, որոնք կարող են նրանց համար վտանգ ներկայացնել:

- Որևէ տան կամ բնակարանի ռիսկային գնահատումը այնտեղ տեղակայվելուց առաջ, օրինակ՝ մուտքի և ելքի հեշտություն, տվյալ վայրի խմբային և անհատական ապահովություն, տվյալ վայրի հարմարություն այն դեպքում, եթե տվյալ անհատը պետք է այցելի բժշկի և հոգեբանի կամ էլ գնա այլ վայրեր:
- Հեռահաղորդակցման միջոցներ տվյալ վայրում: Արդյո՞ք աջակցություն ստացող անձը կարող է օգտվել ֆիքսված կամ բջջային կապից՝ արտակարգ դեպքերում ահազանգելու նպատակով:
- Տեղի ոստիկանության ծանուցում: Արդյո՞ք տեղի ոստիկանությունը համարվում է արժանահավատ և կոմպետենտ: Արդյո՞ք ոստիկանությունը պետք է տեղեկացված լինի իրենց տարածքում աջակցություն ստացող զոհերի ներկայության մասին, և եթե այո, ապա արդյոք աջակցություն ստացող զոհերը համաձայն են նման առաջարկությանը:
- Արդյո՞ք որևէ անձ պատրաստ է կիսել իր կացարանը աջակցություն ստացող զոհի հետ, և եթե այո, ապա արդյոք այդ անձը (անձինք) որևէ վտանգ է (են) ներկայացնում զոհի անվտանգության համար:

Նման դեպքերում կիրառվում են անվտանգության ստորև բերված ուղեցույցում մեջբերվող և աջակցություն ստացող զոհերի անձական պարտականությունների թեմաները: Աշխատակազմի անդամների կողմից գաղտնի փաստաթղթերի տնօրինման վերաբերյալ ուղեցույցը նույնպես կիրառվում է ամբողջությամբ:

Անվտանգության չափանիշներ և ընթացակարգեր՝ աշխատակազմի անդամներ

Աշխատակազմի ստուգում և պայմանագրային պարտավորություններ

Թրաֆիքինգի զոհերին ապաստարանում տեղեկայելն ու աջակցելը ենթադրում է նաև զգալի վտանգ ապաստարանի բնակիչների և

աշխատակազմի անդամների ֆիզիկական անվտանգության համար: Այս վտանգը երբևէ չի կարելի գնահատել, մասնավորապես այն պատճառով, որ ռիսկային գործոնները միայն կաճեն՝ օգնության դիմած և տեղի իրավապահ մարմինների հետ համագործակցելու որոշում կայացրած զոհերի թվի աճի հետ մեկտեղ:

Ուստի, հաշվի առնելով իրենց աշխատանքի նրբանկատ բնույթը՝ աշխատակազմի անդամներին պետք է աշխատանքի ընդունել միայն խիստ և խորաթափանց նախնական ստուգման ընթացակարգից հետո: Բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ անհատն արդեն լավ հայտնի է ծառայություն մատուցող կազմակերպությանը՝ թեկնածուները պարտավոր են ներկայացնել մանրամասն լրացված դիմումի ձևեր, որտեղ պետք է բերվեն նրանց անձնական պատմությունը, որակավորումները, աշխատանքային փորձը, ինչպես նաև տվյալ կազմակերպությունում կամ ապաստարանում աշխատելու անձնական շարժառիթները: Այս դիմումը պետք է ուղեկցվի հիմնավորող փաստաթղթերով և պետք է խիստ ուսումնասիրության և ստուգման առարկա դառնա: Թեկնանածուները պետք է իրազեկվեն իրենց աշխատանքի նրբանկատ բնույթի, ինչպես նաև իրենց պարտականությունների և հնարավոր ռիսկերի մասին: Հարկավոր է մանրամասն գնահատել թեկնածուների հարմարությունն այս առումով: Ապաստարանի աշխատակազմի բոլոր անդամները պետք է ստորագրեն աշխատանքային պայմանագրեր, որոնցով նրանց վրա դրվելու է մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած բոլոր տեղեկությունների և նյութերի հույժ գաղտնիությունը պահպանելու պարտավորություն, մասնավորապես, երբ խոսքը գնում է անձնական և թրաֆիքինգին վերաբերող տվյալների գաղտնիության մասին: Գաղտնիություն պահպանելու նույն պարտավորությունը պետք է դրվի գործընկեր կազմակերպությունների աշխատակազմի անդամների կամ ապաստարաններում աշխատող կամավորների վրա:

Աշխատակազմի անվտանգության ապահովման համար առաջարկվող ընթացակարգեր

Թեև ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է ապահովել ապաստարանի աշխատակազմի անդամների անվտանգությունը, վերջիններս նույնպես պարտավոր են ամեն ինչ անել սեփական անվտանգությունն էլ ավելի ապահով դարձնելու համար՝ անձնական պատասխանատվություն ստանձնելով իրենց

անվտանգության համար և հետևելով անվտանգության ուղեցույցներին: Աշխատակազմի անդամների անվտանգությունն ապահովելու համար Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս որդեգրել հետևյալ ընթացակարգերը.

- Աշխատակազմի անդամների հետ պարբերաբար կազմակերպել աշխատանքային հանդիպումներ թրաֆիքինգի և անվտանգության հետ կապված իրավիճակի շուրջ, որպեսզի նրանք քաջատեղյակ լինեն ռիսկերի գնահատման նոր տվյալներին:
- Աշխատակիցների միջև տեղեկատվության փոխանակումը պետք է իրականացվի միայն ըստ անհրաժեշտության, ասել է թե՝ փոխանակել տվյալ պահին աշխատանքի պատշաճ կատարման համար միայն խիստ անհրաժեշտ տեղեկություններ:
- Ոչ մի դեպքում չի կարելի հեռախոսազրույցում բացահայտել որևէ գաղտնի անձնական կամ թրաֆիքինգին վերաբերող տվյալ որևէ մեկին, ում ինքնությունը կամ լիազորությունները հայտնի չեն ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակցին:
- Ոչ մի դեպքում չի կարելի բացահայտել ապաստարանի աշխատակազմի անդամների անձնական տվյալները, հասցեները կամ հեռախոսահամարները հիմնական աշխատակազմի անդամ չհանդիսացող կողմնակի անձանց:
- Կացարանում բնակվող անձանց չի կարելի հայտնել աշխատակազմի անդամների որևէ տվյալ՝ բացի անուններից:
- Աշխատակազմի անդամները պետք է միշտ քաջատեղյակ լինեն իրենց շրջապատող մարդկանց մասին:
- Աշխատակազմի անդամները պետք է ամեն ինչ անեն ապաստարանում բնակվող թրաֆիքինգի զոհերի անվտանգությունը և բարեկեցությունն ապահովելու համար:

Անվտանգության հիմնական դասընթաց

Անվտանգության հիմնական միջոցառումների դասընթացը կարող է կրել կամընտիր կամ պարտադիր բնույթ՝ կախված առկա հանգամանքներից: Աշխատակազմի համար նախատեսված անվտանգության հիմնական դասընթացը չի հանդիսանում անձնական անվտանգության լիարժեք դասընթաց, քանի որ այդ մակարդակով դասընթաց անցկացնելն ամենայն հավանականությամբ արդարացված չի լինի և կարող է վստահության փոխարեն անհանգստություն հաղորդել

նրանց: Եթե տեղական իրավապահ մարմինները կարողանան անցկացնել անվտանգության հիմնական դասընթացը, ապա ցանկալի է կազմակերպել կարճաժամկետ ուսուցման դասընթաց, որի ընթացքում կքննարկվեն հետևյալ հարցերը՝ ինքնապաշտանության հիմնական հնարքներ աշխատակազմի անդամների և հավանաբար նաև թրաֆիքինգի զոհերի համար, իրազեկվածություն անվտանգության պահպանման հիմնական միջոցների վերաբերյալ և ռիսկերի գնահատում, իրազեկվածություն անմիջական միջավայրի մասին, հսկողության և հակահսկողության հիմնական հնարքների իմացություն, ինչպես նաև անձնական պաշտպանության հիմնական միջոցներ, օրինակ՝ ահազանգման սարք և գազի սրվակ:

Ապաստարանի տնօրենի և բուժաշխատողներից բացի այլ մասնագետների համար կարող է էական նշանակություն ունենալ նաև առաջին բուժօգնության լրացուցիչ դասընթացը: Բացի այդ, խորհուրդ է տրվում դասընթաց կազմակերպել նաև մարտավարական հաղորդակցության, անձնական վարքագծի ճանաչման, վտանգի նշանների և կոնֆլիկտային իրավիճակների հարթման հնարքների շուրջ, ինչը կարող է մեծապես օգնել աշխատակազմի անդամներին սանձել անկառավարելի զոհերին կամ այցելուներին:

Անվտանգության չափանիշներ և ընթացակարգեր. ապաստարան այցելելու կարգը

Որպես կանոն, ապաստարանները մեծ հետաքրքրություն են ներկայացնում տվյալ ոլորտի մասնագետների, նվիրատու կազմակերպությունների ներկայացուցիչների, գիտնականների և լրագրողների համար, ովքեր կարող են ապաստարան այցելելու ցանկություն հայտնել: Ապաստարանի այցելությունը խիստ նրբանկատ հարց է հանդիսանում, քանի որ առնչվում է այդտեղ բնակվող անձանց և աշխատակիցների անվտանգությանը, բարեկեցությանը և անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Այդուհանդերձ, անխտիր բոլոր դիմումների մերժումը կարող է անիրատեսական թվալ և անգամ հակասել կազմակերպության գործելաոճին: Ուստի, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս ապաստարանների աշխատակիցներին խիստ կանոններ սահմանել այցելուների համար: Հստակ ուղեցույցների առկայությունը կարող է ապահովել բնակիչների բարեկեցության և անձնական կյանքի անձեռնմխելիության առաջնահերթությունը, դյուրացնել ապաստարանի

աշխատակիցների արձագանքը ներկայացված բոլոր դիմումներին, ինչպես նաև օգնել նվիրատուներին և այլ շահագրգիռ կողմերին հասկանալ կազմակերպության քաղաքականությունը և առաջնորդվել դրանով: Քաղաքականության հիմքում պետք է ընկած լինեն հետևյալ նպատակները.

- պաշտպանել ապաստարանի տարածքը,
- պաշտպանել ապաստարանը թրաֆիքինգ իրականացնող չարագործների ներթափանցումից,
- հարգել ապաստարանի բնակիչների անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը՝ գիտակցելով, որ ապաստարանը հանդիսանում է նրանց ժամանակավոր տունը,
- պահպանել ապաստարանի բնակիչների և աշխատակազմի անդամների նույնականությունը,
- ապահովել բնակիչների բարեկեցությունը և լավագույն շահերի պաշտպանությունը:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս կազմակերպություններին ապաստարանի այցելուների համար ուղեցույցներ կազմելիս հաշվի առնել հետևյալ հարցերը.

- Ապաստարանի այցերի և այցելուների թիվը պետք է հասցվի նվազագույնի: Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս սահմանել միաժամանակ ապաստարան այցելողների առավելագույն թիվը, օրինակ՝ միաժամանակ ապաստարան կարող են այցելել միայն երկու անձ:
- Այցելությունների և այցելողների համար պետք է հստակ սահմանվեն որոշակի ժամեր նախնական պայմանավորվածությամբ՝ ապաստարանի բնակիչների հանգստի խանգարումը նվազագույնի հասցնելու նկատառումով:
- Ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ուսումնասիրի և ճշտի ապաստարան այցելելու մասին բոլոր դիմումները:
- Նախքան ապաստարան այցելելու թույլտվության տրամադրումը ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է կացարանի հոգեբանի հետ համատեղ կատարի հոգեբանական գնահատում, որպեսզի համոզվի, որ տվյալ այցելությունը ապաստարանում բնակվող զոհերի համար բացասական հոգեբանական հետևանքներ չի ունենա:

- Այցի դիմումը կբավարարվի միայն այն դեպքում, եթե պարզվի, որ այն որևէ բացասական հոգեբանական ազդեցություն չի գործի ապաստարանի բնակիչների վերականգնման վրա:
- Այցելուին (այցելուներին) չպետք է տրամադրվի ապաստարանի հստակ հասցեն կամ այդտեղ մենակ գալու հնարավորություն: Փոխարենը, այցելուին պետք է ապաստարան ուղեկցի կազմակերպության աշխատակիցներից մեկը:
- Ապաստարան այցի ողջ ընթացքում այցելուին (այցելուներին) պետք է ուղեկցեն ապաստարանի աշխատակիցները:
- Այցելուին (այցելուներին) չի կարելի թույլատրել այցելել և խոսել զոհի հետ առանց տվյալ անձի միանշանակ համաձայնության և ապաստարանի հոգեբանի թույլտվության:
- Հոգեբանի դրական որոշման դեպքում հանդիպման ողջ ընթացքում պետք է ներկա լինի հոգեբանը կամ աշխատակիցներից մեկը:
- Այցելուին (այցելուներին) չի թույլատրվում իրենց հետ ապաստարան բերել լուսանկարչական կամ որևէ այլ տեսաձայնագրող սարքեր: Այցելուն(ները) նման սարքերը պետք է թողնեն ապաստարանի աշխատակիցների մոտ այցելության ողջ ընթացքում:
- Ապաստարանի տնօրենը պետք է հետևողականորեն նշի կողմնակի անձանց բոլոր այցերը և պահպանի բոլոր գրառումները:
- Հարկավոր է մշակել հստակ քաղաքականություն լրատվամիջոցների մուտքը կարգավորելու համար (տե՛ս ստորև):

Լրատվամիջոցների մուտքի կարգավորում

Կազմակերպությունները պետք է շատ զգոն վերաբերմունք որդեգրեն լրատվամիջոցների ներկայացուցիչների նկատմամբ: Որոշ ապաստարաններ կարող են արգելել լրատվամիջոցների մուտքը՝ հանգամանքներից անկախ, մինչդեռ մյուսները կարող են անել որոշակի բացառություններ, օրինակ՝ ծանոթ և վստահելի լրագրողների համար: Ապաստարան մուտք գործելու թույլտվության պարագայում պետք է պահպանել բոլոր վերոնշյալ կանոնները, ներառյալ՝ լուսանկարչական և ձայնագրման սարքավորումների արգելքը և ապաստարանի բնակիչների հետ անցկացվող զրույցի և հարցազրույցի կարգավորումը:

Անվտանգության չափանիշներ և ընթացակարգեր. ապաստարանի բնակիչներ

Ապաստարանի անձնակազմի պարտավորությունները

- Ապաստարանի բնակիչների ապահովությունն ու անվտանգությունն առավելագույնս ապահովելու համար խորհուրդ է տրվում որդեգրել հետևյալ ընթացակարգերը. ապաստարանի բնակիչներին խորհուրդ է տրվում միշտ իրազեկված լինել իրենց շրջապատող միջավայրի մասին:
- Եթե ապաստարանի բնակիչներից որևէ մեկը պետք է դուրս գա ապաստարանից կամ ծառայություն մատուցող կազմակերպության տարածքից (օրինակ՝ ոստիկանություն, բժշկի կամ իրավաբանի մոտ գնալիս), ապա աշխատակիցներից մեկը պետք է անպայման ուղեկցի նրան:
- Ոստիկանություն կամ իրավապահ այլ հաստատություն այցելելիս թրաֆիքինգի զոհին պետք է ուղեկցի իրավական խորհրդատուն:

Ապաստարանի բնակիչների պարտականությունները

ապաստարանում անվտանգության և ապահովության համար:

Այդ նպատակով և ապաստարանի բնականոն աշխատանքին նպաստելու նկատառումներով բնակիչները պետք է պահպանեն որոշակի կանոններ և անվտանգության ընթացակարգեր: Կազմակերպությունները պետք է մշակեն հստակ կանոններ և ընթացակարգեր և համոզվեն, որ դրանք պահպանվում են ապաստարանի բոլոր բնակիչների և աշխատակիցների կողմից: Նշված կանոններով կարող են կարգավորվել այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ անձի պատասխանատվությունը տնային գործերը կատարելու և վարքի կանոնների համար, աշխատակազմի և մյուս բնակիչների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար: Խիստ ցանկալի է, որ նման կանոններով բացարձակապես արգելվի ապաստարանում թմրամիջոցների, ալկոհոլի, զենքի կամ բջջային հեռախոսների օգտագործումը կամ պահելը և համապատասխան թույլտվություն չունեցող այցելուների ընդունումը:

Ապաստարան ընդունվելուց առաջ ապագա բնակիչները պետք է կարդան և ստորագրեն անվտանգության ընթացակարգերը և ապաստարանի կանոններն ամփոփոխ փաստաթղթի պատճենը:

Ապահովություն չափանիշներ և ընթացակարգեր՝ գաղտնիություն, վարչական և փաստաթղթային ռիսկեր

Բոլոր անձնական կամ թրաֆիքինգին վերաբերող գաղտնի տվյալները (էլեկտրոնային կամ թղթային ձևով) պետք է պահպանվեն և ոչնչացվեն պատշաճ խնամքով: Տե՛ս Գլուխ 1, բաժին 1.2 բերված առաջարկվող ցուցումները:

Հարկավոր է հիշել նաև այն հանգամանքը, որ ապաստարանները հանդիսանում են բավականին մարդաշատ և բանուկ վայրեր, քանի որ բնակիչները և աշխատակիցներն անընդհատ հաղորդակցվում են առօրյայում:

Նման հարաբերություններից բխող ավելորդ մտերմությունը կարող է քայքայել հիմնական անվտանգության ընթացակարգերը գաղտնի փաստաթղթերի պահպանման և անվտանգության, ինչպես նաև այլ առումներով:

- **Ապաստարանի անվտանգության առանցքային պայմանն է աշխատակիցների և բնակիչների բոլոր գաղտնի անձնական տվյալների և փաստաթղթերի պահպանումն անվտանգ և ապահով պայմաններում:**
- **Ապաստարանի տնօրենն անձամբ պատասխանատու է բոլոր գաղտնի տվյալների և փաստաթղթերի անվտանգությունն ապահովելու համար:**
- **Ապաստարանի տնօրենը պարտավոր է նաև ապահովել անվտանգության կանոնների և հրահանգների պահպանումը բոլորի կողմից:**

Տվյալ անվտանգության միջոցառման նպատակն է ապահովել հետևյալը.

- Թրաֆիքինգի զոհերի, ապաստարանի աշխատակիցների կամ թրաֆիքինգի հետ կապված որևէ գաղտնի տվյալ չպետք է պատահաբար կամ միտումնավոր հայտնվի որևէ կողմնակի անձի ձեռքում:

- Ապաստարանի բնակիչներին առնչվող բոլոր փաստաթղթերի թիվը հասցվում է նվազագույնի, արդյունքում ապաստարանում պահվում են միայն այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ապաստարանի ծրագիրը կառավարելու և վերահսկելու համար:
- Հետևողականորեն պահպանել միայն անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման սկզբունքը՝ երրորդ անձանց տեղեկությունների տրամադրման հնարավորությունը նվազագույնի հասցնելու համար:

4.3 Ապաստարանի կառավարում և անձնակազմի ընտրություն

4.3.1 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Ապաստարանի աշխատողների թիվը, աշխատանքային նկարագիրը և որակավորումները տարբեր են՝ պայմանավորված յուրաքանչյուր ապաստարանի ընդհանուր կարիքներով, ռեսուրսներով և առաքելություններով: Ապաստարանի համար առավել պատշաճ աշխատակազմ ընտրելիս ծառայություն մատուցող կազմակերպությունը և համապատասխան գործընկերները պետք է հաշվի առնեն հետևյալը.

- ապաստարանի կողմից առաջարկվող ծառայությունների փաթեթ
- արդյոք ծառայությունները մեծամասամբ տրամադրվում են տեղում, թե ծառայություն մատուցող գործընկեր կազմակերպության մոտ ուղղորդման միջոցով
- ապաստարանի աջակցության և կացության կարիք ունեցող անձանց միջին կամ հավանական թիվը
- ապաստարանում մնալու միջին տևողությունը:

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ունենա առնվազն մեկ կամ մի քանի հիմնական աշխատող(ներ), ովքեր կատարում են հետևյալ պարտականությունները.

- ապաստարանի կառավարում,
- ուղղակի խորհրդատվություն և (կամ) հոգեբանական աջակցություն,
- վերահսկողություն և ապաստարանի բնակիչների ընդհանուր խնամք,
- ֆինանսների և գնումների վերահսկողություն:

4.3.2 Ապաստարանի կառավարում

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ունենա մեկ հիմնական աշխատող ապաստարանի տնօրենի պաշտոնում, ով պետք է ընդհանուր պատասխանատվություն կրի ապաստարանի կառավարման համար:

Ապաստարանի տնօրենն ընդհանուր պատասխանատվություն է կրում ապաստարանի առօրյա բնականոն աշխատանքի համար, ներառյալ՝ աշխատակազմին և բնակիչներին տրամադրվող ծառայությունների մատուցման վերահսկողության համար: Ապաստարանի տնօրենը պայմաններ է ապահովում ապաստարանի սկզբունքների և նպատակների իրագործման, ինչպես նաև՝ ապաստարանի բնակիչների և աշխատակիցների անվտանգության, առողջության և բարեկեցության համար:

Ստորև ներկայացվում է ապաստարանի տնօրենի հնարավոր պարտականությունների ցանկի նմուշը.

- վերահսկել ապաստարանի առօրյա աշխատանքը,
- մշակել, իրագործել, համակարգել և գնահատել ապաստարանում բնակվող անձանց կարիքների բավարարմանն ուղղված ծրագրեր,
- հիմնել արդյունավետ վարչական ենթակառույց և վերահսկել դրա աշխատանքը, ղեկավարել և ուղղորդել ապաստարանի աշխատակիցներին և բնակիչներին մատուցվող ծառայությունները,
- ապահովել, որ աշխատակիցները հավատարիմ մնան ապաստարանի սկզբունքներին, նպատակներին և ռազմավարություններին հետևյալ հարցերի առնչությամբ՝ ապաստարանում բնակվող անձանց աջակցություն, գնահատում, միջամտություն, ծառայությունների ուղղորդում և ընդհանուր աջակցություն, այդ թվում աջակցություն անձնական խնդիրների լուծման գործում,
- ըստ անհրաժեշտության՝ նշված աջակցությունը ենթադրում է բժշկական և իրավական աջակցություն, խորհրդատվություն, ինչպես նաև սնունդ, նյութական կարիքներ և գործունեություն,
- որոշում կայացնել ապաստանի բնակիչներին ընդունելու և դուրս գրելու մասին,
- վերահսկել անվտանգության և ապահովության համակարգերի աշխատանքը, ստուգումների և ընթացակարգերի կատարումը,

- ապահովել ծրագրին և հաճախորդներին առնչվող փաստաթղթերի պահպանումը գաղտնի պայմաններում,
- ապահովել անհրաժեշտ փաստաթղթերի ամբողջականությունը,
- մասնակցել ապաստարանի աշխատակիցների և ծառայություն մատուցողների ընտրության, աշխատանքի ընդունման, կողմնորոշման, ուսուցման և աջակցության գործընթացին,
- վերահսկել և գնահատել ապաստարանի անձնակազմի կատարած աշխատանքը, շաբաթական հանդիպումներ անցկացնել աշխատակիցների հետ և մասնակցել անհատականացված խնամքի ծրագրերի վերանայմանը, լսել աշխատակիցների դժգոհությունը և վերացնել դրա պատճառները, ըստ հարկի ձեռնարկել կարգապահական ուղղիչ միջոցներ,
- համակարգել աշխատակիցների օրակարգը՝ շարունակական աշխատանք ապահովելու նպատակով, կարգավորել աշխատակիցների արձակուրդի, առողջական վիճակի պատճառով արձակուրդի և այլ պատճառներով աշխատանքից բացակայելու հետ կապված հարցերը,
- վերահսկել աշխատակազմի անդամների աշխատանքը,
- վարել այցելուների գրանցամատյան,
- ըստ անհրաժեշտության՝ ներկայացնել ամսական հաշվետվություններ,
- բաշխել ծախսերը հաստատած բյուջեին համապատասխան և ներկայացնել բյուջեի փոփոխման առաջարկներ,
- վերահսկել տեխնիկական ծառայողների աշխատանքը՝ ապաստարանի շենքի և սարքավորումների մաքրությունը և բնականոն աշխատանքն ապահովելու նպատակով,
- կապ հաստատել թրաֆիքինգի դեմ պայքարող այլ պաշտոնյաների հետ թրաֆիքինգի դեմ ուղղված գործողությունների, զարգացումների և համագործակցության հետ կապված հարցերի շուրջ,
- ըստ անհրաժեշտության կատարել այլ պարտականություններ:

4.3.3 ՈՒՂՂԱԿԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ (ԿԱՄ) ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ունենա մեկ կամ ավելի աշխատող, որը պատասխանատու է ուղղակի խորհրդատվության և

(կամ) հոգեբանական աջակցության համար: Ապաստարանում բնակվող անձանց նման աջակցություն սովորաբար տրամադրում են սոցիալական աշխատողները, խորհրդատուները կամ հոգեբանները՝ ապաստարանի տնօրենի անմիջական աջակցությամբ և վերահսկողությամբ:

Սոցիալական աշխատող և (կամ) խորհրդատու

Սոցիալական աշխատողը և (կամ) խորհրդատուն ծառայություններ է մատուցում ապաստարանում բնակվող անձանց, ինչպես նաև կազմակերպում և վերահսկում է խնամք մատուցող այլ անձանց հետ համատեղ մշակված անհատական ծրագրերի շրջանակներում առաջարկվող խնամքը և ծառայությունները:

Ստորև ներկայացվում է սոցիալական աշխատողի և (կամ) խորհրդատուի հնարավոր պարտավորությունների ցանկի նմուշը.

- անցկացնել առաջին հանդիպումը թրաֆիքինգի զոհի հետ և ուղղորդել ու բնակեցնել նրան ապաստարանում,
- ապահովել, որ ապաստարանում բնակվող անձը հասկանա և ընդունի ապաստարանում առաջարկվող ծառայությունները,
- վերհանել ապաստարանում բնակվող անձի առաջնային և երկրորդային կարիքները,
- ապաստարանում բնակվող անձի, աշխատակազմի և խնամք տրամադրող այլ անձանց հետ մշակել անհատական ծառայությունների ծրագրերը,
- ըստ հարկի կատարել ծառայությունների ուղղորդում տեղում և հաստատությունում ծառայություն մատուցողներին,
- ապաստարանում բնակվող անձի խնդրանքով անհրաժեշտության դեպքում ուղեկցել նրան ծառայություն տրամադրողների հետ հանդիպմանը,
- կատարել ապաստարանի բնակիչների գործերի և առաջընթացի մոնիթորինգ նրանց՝ ապաստարանում մնալու ընթացքում,
- մասնակցել զոհի՝ ապաստարանից մեկնելու ամսաթվի որոշմանը, ինչպես նաև հետագա ուղղորդման և ծառայությունների ընտրությանը,
- ապաստարանի բնակիչների հետ միասին նախանշել և կազմակերպել նրանց մեկնելու ընթացակարգը և ապահովել, որ նրանք հասկանան այդ ընթացակարգի և ուղղորդման իմաստը,

- տարանցիկ կամ նպատակակետ երկրում գտնվելիս հարկավոր է միշտ պատրաստ լինել հաղորդակցվելու ապաստարանում բնակվող զոհի ծագման երկրում ծառայություններ մատուցող անձանց հետ և զոհի մեկնումից հետո ստանալու եռամսյակային զեկույց,
- ծագման երկրում գտնվելու դեպքում հարկավոր է կատարել առանձին դեպքերի մոնիթորինգ և ապաստարանից զոհի մեկնելուն հաջորդող վեց ամսվա ընթացքում ապահովել համապատասխան հսկողություն,
- կապ հաստատել և նոր տեղեկատվություն փոխանակել զոհի ծագման երկրում ծառայություն մատուցող այլ անձանց հետ,
- մասնակցել աշխատակազմի շաբաթական հանդիպումներին և առանձին դեպքերի քննարկմանը նվիրված ժողովներին:

Հոգեբան

Ապաստարանի հոգեբանը պետք է հարցազրույց անցկացնի ապաստարանի բնակիչների հետ, որպեսզի կարողանա հասկանալ նրանց հոգեվիճակը և գնահատել տվյալ հանգամանքներում և միջավայրում գործելու կարողությունը: Հոգեբանը կարող է նաև նշանակել անհատական կամ խմբային բուժում, մշակել և գործադրել վարքագծի փոփոխության ծրագրեր և խնամք մատուցող այլ անձանց հետ ըստ անհրաժեշտության մշակել և իրագործել ապաստանում բնակվող թրաֆիքինգի զոհերի բուժման և աջակցության ծրագրեր:

Ստորև ներկայացվում է հոգեբանի հնարավոր պարտականությունների ցանկի նմուշը.

- կատարել ապաստարանի բնակիչների վիճակի գնահատում և ախտորոշիչ հետազոտություն,
- խորհուրդներ տալ ապաստարանի բնակիչներին հրատապ խնդիրները և ճգնաժամը հաղթահարելու վերաբերյալ,
- ապաստարանի բնակիչներին տրամադրել խնամք և աջակցություն,
- հայտնաբերել և հոգեբույժի մոտ ուղղորդել ապաստարանի այն բնակիչներին, ում մոտ դրսևորվում են հոգեկան խանգարումների նշանները,
- անցկացնել կասկածելի մտավոր կարողություններով

ապաստարանի բնակչի գնահատում և արդյունքների մասին տեղեկացնել ապաստարանի տնօրենին և համապատասպան այլ ծառայություններ մատուցող անձանց,

- մասնակցել ապաստարանի բնակիչների աջակցության անհատական ծրագրերի մշակմանը,
- մասնակցել դեպքի վարմանը, ներառյալ՝ ապաստարանից թրաֆիքինգի զոհի մեկնումը կազմակերպելու համար ժամկետների սահմանմանը, հանգամանքների գնահատմանը և ծառայությունների ուղղորդմանը,
- նպաստել ապաստարանի ընդհանուր աշխատանքին և ծրագրի մշակմանը,
- մասնակցել դեպքի վարման ժողովներին,
- ըստ անհրաժեշտության մասնակցել աշխատակազմի շաբաթական հանդիպումներին:

4.3.4. ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԶՈՀԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՆԱՄՔ

Ապաստարանի աշխատակազմը պետք է ունենա սպասարկող անձնակազմ՝ ընդհանուր հսկողություն սահմանելու և ապաստարանում բնակվող անձանց շուրջօրյա խնամք տրամադրելու համար: Ապաստարանի սպասարկող անձնակազմի անդամներն իրենց պարտականությունները պետք է կատարեն ապաստարանի կառավարչի հսկողությամբ և աջակցությամբ:

Ապաստարանի սպասարկող անձնակազմ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է ունենա երկու կամ ավելի սպասարկող աշխատակից, որոնք պատասխանատու են ապաստարանում բնակվող անձանց հսկողության և ընդհանուր խնամքի համար: Ապաստարանի սպասարկող անձնակազմի անդամները հսկում են ապաստարանի ցերեկային աշխատանքները, ապահովում են ֆիզիկական ներկայությունը գիշերային ժամերին, ինչպես նաև ապաստարանի կանոնների և անվտանգության ընթացակարգերի կատարումը:

Ստորև ներկայացվում է ապաստարանի սպասարկող անձնակազմի հնարավոր պարտավորությունների ցանկի նմուշը.

- իրականացնել ընդհանուր վերահսկողություն և ապահովել ապաստարանի կանոնների և ընթացակարգերի կատարումը ապաստարանում բնակվող անձանց կողմից,
- կազմակերպել, կատարել և դյուրացնել առօրյա աշխատանքը օրակարգի և ապաստարանի տնօրենի հրահանգներին համապատասխան,
- գրանցել ապաստարանի բնակիչների մուտքի և ելքի ժամերը,
- գրանցել ապաստարանի տնօրենի նախնական թույլտվությունը ստացած բոլոր այցելուների մուտքի և ելքի ժամերը,
- գրանցել ապաստարանում բնակվող անձանց բժշկի այցելությունները և ստացած բուժումը,
- ապահովել, որ ապաստարանում բնակվող անձինք լինեն իրազեկված և ստորագրեն բժշկական և այլ անհրաժեշտ ծառայություններից օգտվելու իրենց համաձայնությունը հաստատող ձևաթուղթը,
- ապահովել, որ ապաստարանում բնակվող անձինք պահպանեն անվտանգության կանոնները և հրահանգները,
- ապահովել, որ աշխատակիցները և ապաստարանում բնակվող անձինք հետևեն ապաստարանը մաքուր և հանգիստ միջավայր պահպանելու մասին կանոններին,
- ապահովել, որ ապաստարանում բնակվող անձինք միմյանց վերաբերվեն պատշաճ հարգանքով և հոգատարությամբ,
- ժամանակին և պատշաճ կարգով ընթացք տալ ապաստարանում բնակվող անձանց միջև ծագող խնդիրներին կամ նրանց կողմից ապաստարանի կառավարչին ուղղված բողոքներին,
- կատարել անհրաժեշտ ընդհանուր մաքրման, լվացքի և սպասարկման աշխատանքները,
- ֆինանսական հարցերով օգնականին և (կամ) գնումների գծով օգնականին հայտնել ապաստարանում սննդամթերքի պաշարների կամ այլ անհրաժեշտ պարագաների պակասի մասին,
- ապաստարանի տնօրենին հայտնել տեխնիկական սպասարկման հետ կապված հարցերի կամ վերանորոգման անհրաժեշտության մասին,
- ապաստարանի տնօրենին հայտնել ցանկացած խնդրի, անվտանգության հետ կապված ռիսկերի կամ արտասովոր դեպքերի մասին,

- գրանցամատյանում նշումներ կատարել առօրյա գործողությունների և իրադարձությունների մասին,
- ներկայացնել շաբաթական զեկույցներ օրվա և հերթափոխի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների մասին,
- մասնակցել աշխատակազմի շաբաթական հանդիպումներին:

4.3.5 ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանի աշխատակազմի անդամներից մեկն (ֆինանսների գծով մասնագետ կամ ֆինանսների և գնումների գծով մասնագետ կամ օգնական) իր հիմնական պարտականությունների շրջանակներում պետք է վերահսկի ապաստարանի ֆինանսական միջոցները և գնումները:

Ֆինանսների և գնումների գծով մասնագետ

Ֆինանսների և գնումների գծով մասնագետը պատասխանատու է ապաստարանի բոլոր ծախսերի գրանցամատյան վարելու, ինչպես նաև ապաստարանի տնօրենի վերահսկողությամբ և աջակցությամբ ապաստարանի բյուջեով նախատեսված միջոցների սահմաններում անհրաժեշտ գնումներ կատարելու համար:

Ստորև ներկայացվում է ֆինանսների գծով մասնագետի հնարավոր պարտականությունների ցանկի նմուշը.

- մանրամասն և հստակ հաշվառել բոլոր ծախսերը,
- ապահովել ապաստարանի ռեսուրսների խելամիտ և արդյունավետ օգտագործումը,
- ապահովել ապաստարանի բոլոր ծախսերի և հաշիվների ժամանակին վճարումը,
- ապահովել, որ ապաստարանի պաշարները համալրվեն թարմ, պահածոյացված և սառեցված սննդամթերքով ընթացիկ սպառման և պահեստավորման համար, ինչպես նաև անհրաժեշտ հագուստով, կոշիկով, հիգիենայի պարագաներով, ճամփորդական պայուսակներով և այլ անհրաժեշտ պարագաներով,
- ապաստարանի տնօրենի հետ խորհրդակցելուց հետո կատարել անհրաժեշտ գնումներ (կամ հանձնարարել որևէ այլ աշխատակցի և վերահսկողություն իրականացնել),

- ամեն շաբաթ ապաստարանի տնօրենին ներկայացել ֆինանսական զեկույցներ՝ բոլոր ծախսերի մանրամասն նկարագրով,
- ըստ անհրաժեշտության մասնակցել աշխատակազմի հանդիպումներին կամ ժողովներին ներկայացնել ապաստարանի վերահսկող մարմինը:

4.3.6 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՅԼ ԱՆԴԱՄՆԵՐ

Ապաստարանի աշխատակիցների կազմը պայմանավորված է տվյալ ապաստարանի ռեսուրսներով, կարիքներով, ծառայությունների մատուցման ձևով (արդյոք հիմնական ծառայությունները մատուցվում են տեղում թե այլ հաստատությունում) և կարող է ներառել հետևյալ մասնագետների՝ բուժաշխատողներ, ուսուցիչներ, աշխատանքի համակարգողներ, թարգմանիչներ և այլ մասնագետներ՝ ըստ անհրաժեշտության:

4.3.7 ԿԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

Ապաստարանում բնակվող անձանց համար օրեցօր շատացող տարբեր ծառայությունների և միջոցառումների շրջանակներում որոշ ապաստարաններ դիմում են կամավորների օգնությանը: Թեև կամավորների օգնությանը կարող են դիմել ապաստարանում մատուցվող ծառայությունների և միջոցառումներին աջակցելու համար, սակայն նրանց, որպես կանոն, չեն ներգրավում մշտական աշխատակազմին վերապահված հիմնական հանձնարարություններում: Որոշ ապաստարաններում կամավորների աշխատանքն արդյունավետորեն գործածվում է հետևյալ ոլորտներում՝

- լեզուների իմացություն, համակարգչային հմտություններ,
- թատերական արվեստ և պարային թերապիա,
- արվեստ և արհեստ:

Կամավորների ներգրավումը կախված է հետևյալ գործոններից՝ անվտանգություն, ռեսուրսներ, վերահսկողության կարողություն, ապաստարանում բնակվող անձանց կարիքներ և կամավորական աշխատանքի օգտակարություն: Ցանկալի է, որ կամավորների կողմից կատարվող բոլոր գործողություններին մասնակցի մշտական աշխատակազմի անդամներից մեկը: Անվտանգության պահպանման

և որակի հսկողության կանոնները պահպանելու համար՝ բոլոր կամավորները պետք է.

- անցնեն անձնական տվյալների և ծագման նախնական ստուգման ընթացակարգը,
- ստորագրեն ապաստարանի կանոնակարգը,
- ստորագրեն գաղտնիության պահպանման մասին համաձայնագիրը,
- անցնեն թրաֆիքինգի դեմ պայքարի ներածական դասընթաց:

Երեխաների հետ աշխատող կամավորները պետք է անցնեն հատուկ ուսուցում և իրազեկվածության մակարդակի բարձրացման դասընթաց թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների հատուկ կարիքների և իրավունքների վերաբերյալ:

4.4 Ապաստարանի աշխատակազմի ղեկավարում և ուսուցում

Ապաստարանի տնօրենի հիմնական պարտականությունն է կատարելագործել և վերահսկել ապաստարանի աշխատակազմի կառավարման հետևյալ հայեցակետերը՝

- Անձնակազմի վերապատրաստում,
- Անձնակազմի վարքագծի կանոնակարգ,
- Անձնակազմի օրակարգի մշակում,
- Անձնակազմի վերահսկողություն:

4.4.1 ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Աշխատակազմի յուրաքանչյուր անդամ աշխատանքի ընդունվելուց հետո առաջին շաբաթների ընթացքում պետք է անցնի ապաստարանի և թրաֆիքինգի դեմ պայքարի ընդհանուր ներածական դասընթաց, որը համակարգելու է ապաստարանի տնօրենը: Նշված դասընթացին զուգահեռ աշխատողին հարկավոր է ներկայացնել նաև աշխատանքի առանձնահատկությունները և տրամադրել նրա փորձով պայմանավորված համապատասխան ուսուցում:

Ստորև ներկայացված են դասընթացների առաջարկվող թեմաները.

- Թրաֆիքինգի երևույթը,
- Հիմնական իրավական նորմեր և թրաֆիքինգի զոհերի իրավունքներ, այդ թվում՝ անդրադարձ Պալերմոյի արձանագրությանը և մարդկանց թրաֆիքինգի կանխման համապատասխան ազգային օրենքների և կանոնակարգերի վերանայում,
- ընդհանուր ուղեցույցներ՝ հոգեկան ցնցում վերապրած թրաֆիքինգի զոհերի բուժմանը և վերականգնմանն աջակցելու համար
- բուժիչ միջոցառումներ կամ աջակցություն՝ ուղղված թրաֆիքինգի զոհերի ապաքինմանը և վերականգնմանը,
- հոգեկան ցնցում վերապրած զոհերի հետ հաղորդակցման հատուկ հմտություններ, բազմակողմ մոտեցումների և թիմային աշխատանքի սկզբունքի որդեգրում ծառայությունների մատուցման ընթացքում, ճգնաժամի կառավարման սկզբունքներ,
- խորհրդատվության հիմնական սկզբունքներ,
- թրաֆիքինգի զոհերի պարագայում կիրառելի հատուկ խորհրդատվական սկզբունքներ, տեղեկատվություն տվյալ տարածքում գործող աջակցություն և մասնագիտացված ծառայություններ տրամադրող կազմակերպությունների մասին,
- անվտանգության և ապահովության դասընթաց, առաջին օգնություն դասընթաց:

Ապաստարանի տնօրենը պետք է կազմակերպի լրացուցիչ մասնագիտացված դասընթացներ՝ ապաստարանի աշխատակիցների կարիքների և թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում արձանագրված նոր զարգացումներին համապատասխան:

4.4.2 ԱՊԱՍՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ԵՎ (ԿԱՄ) ՉԱՓԱՆԻՇԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Յուրաքանչյուր ապաստարանում պետք է մշակվի և կիրառվի աշխատակիցների վարքագծի կանոնակարգ և (կամ) չափանիշային գործառնական ընթացակարգ: Աշխատակիցների վարքագծի կանոնակարգը պետք է մշակվի ծառայություն մատուցող կազմակերպության՝ թրաֆիքինգի հակազդման քաղաքականության

համապատասխան: Առաջարկվող հիմնական սկզբունքները մանրամասն ներկայացվել են սույն ձեռնարկի նախորդ հատվածում: Ի թիվս այլ ընթացակարգերի՝ աշխատակազմի վարքագծի կանոնակարգում հաճախ նշվում է, որ ապաստարանի աշխատակիցները պետք է հետևողականորեն պահպանեն ապաստարանի անվտանգության և գաղտնիության կանոնները («Աշխատակիցների վարքագծի կանոնակարգի ուղեցույցը» և Աշխատակազմի գաղտնիության համաձայնագրի նմուշը տե՛ս սույն գլխի վերջում համապատասխանաբար՝ I և II հավելվածներում):

4.4.3. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԵՐԹԱՓՈԽՆԵՐ

Ապաստարանի տնօրենը պետք է ապահովի այնպիսի օրակարգի մշակումը և պահպանումը, որ աշխատակազմը մշտական շուրջօրյա հերթապահություն սահմանի ապաստանում առանց հանգստյան օրերի: Ապաստարանում մշտական հերթապահություն ապահովելու նպատակով հարկավոր է ներգրավել նաև ոչ մշտական աշխատակազմի անդամներին, որպեսզի նրանք կարողանան փոխարինել այն աշխատակիցներին, ովքեր կարող են բացակայել աշխատանքից հիվանդության կամ արտակարգ միջադեպի պատճառով: Հերթապահությունների արդյունավետ ժամանակացույց կազմելու համար՝ հարկավոր է հաշվի առնել աշխատակիցների և ապաստարանում բնակվող անձանց թվի հստակ հարաբերակցությունը: Այդ հարաբերակցությունը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ ապաստարանի աշխատակիցներ, ապաստարանի տարողություն, տվյալ պահին ապաստարանում բնակվող անձանց թիվ, մատուցվող ծառայություններ, ապաստարանի բնակիչների կարիքներ և ապաստարանի աշխատակիցների՝ հնարավորինս բարձրորակ աջակցություն մատուցելու կարողություն: Հարկավոր է պարբերաբար հետևել աշխատակիցների և բնակիչների թվի հարաբերակցությանը՝ համոզվելու, որ հերթապահության ժամանակացույցն արդյունավետ է:

4.4.4 ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշխատակազմի շաբաթական հանդիպումներ

Աշխատակազմի շաբաթական հանդիպումները նպաստում են աշխատակիցների և ապաստարանի բնակիչների գործունեության պատշաճ մոնիթորինգի և վերահսկողության ապահովմանը:

Աշխատակազմի շաբաթական հանդիպումները թույլ են տալիս քննարկել հետևյալ հարցերը՝

- դեպքի համակարգում,
- դեպքի ընդհանուր առաջընթաց,
- ժամանելու և (կամ) մեկնելու դեպքեր,
- դեպքի հետ կապված ցանկացած խնդիր լուծելու միջոց,
- էթիկայի հարցեր,
- հարաբերությունների ձևավորում ծառայություն մատուցող այլ կազմակերպությունների և թրաֆիքինգի հակազդման ոլորտում այլ դերակատարների հետ,
- ընդհարումներ կամ վիճաբանություններ ապաստարանի բնակիչների և (կամ) աշխատակիցների միջև,
- ապաստարանի քաղաքականության և ընթացակարգերի գնահատում,
- ապաստարանի բնակիչների հարցաթերթիկների վերանայում,
- անհրաժեշտության դեպքում ապաստարանի հետ կապված ցանկացած այլ ընդհանուր հարցերի կամ խնդիրների կարգավորում:

Անհատական հանդիպումներ և վերահսկողություն

Ըստ անհրաժեշտության, ապաստարանի տնօրենը պետք է ժամանակ առ ժամանակ կազմակերպի նաև անհատական հանդիպումներ աշխատակիցների հետ՝ հետևյալ հարցերը քննարկելու և դրանց լուծումն ապահովելու համար.

- **Ուղղվածություն:** Ապաստարանի աշխատակազմի առջև դրված նպատակները պետք է լինեն իրատեսական ու հասանելի և համաչափ դրանց իրագործման համար բարենպաստ պայմաններին և առկա միջոցներին:
- **Ուսուցում:** Ապաստարանի տնօրենը պետք է ապահովի ոչ պաշտոնական շարունակական ուսուցման դասընթաց ապաստարանի աշխատակիցների համար և խրախուսի նրանց աշխատանքը:
- **Հետադարձ կապ:** Հետադարձ կապը թույլ է տալիս գնահատել, հաստատել, խրախուսել կամ քննադատել աշխատակազմի անդամների աշխատանքը, ինչպես նաև տեղեկություններ փոխանակել ապաստարանի աշխատանքի բոլոր հայեցակետերի

վերաբերյալ, բացահայտել բոլոր բարենպաստ պայմանները և կարգավորել ապաստարանի աշխատակազմի անդամների և բնակիչների առջև ծառացած ցանկացած խնդիր:

- **Խորհրդատվություն:** Եթե ապաստարանում որևէ խնդիր առաջանա աշխատակիցներից մեկի վարքագծի կամ աշխատանքի կամ բնակիչներից որևէ մեկի վարքագծի պատճառով, ապա ապաստարանի տնօրենը պետք է տվյալ անձի ուշադրությունը հրավիրի իր վարքագծի խնդրի վրա, օգնի և խրախուսի նրան ուղղել այն:
- **Կարգապահություն:** Եթե որևէ աշխատակից խախտի կամ անտեսի ապաստարանի կանոնները և կանոնակարգը, ապա ապաստարանի տնօրենը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ: Նա պետք է տվյալ աշխատակցի ուշադրությունը հրավիրի գործող կանոնների, դրանց նպատակի և դրանք պահպանելու կարևորության հարցերին: Պետք է առավել լուրջ վերաբերվել այն գործողություններին, որոնք խախտում են անվտանգության կանոնները կամ գաղտնիության պահպանման պարտավորությունը:

4.4.5 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՅՈՒԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հյուծվածությունը ֆիզիկական, հոգեկան և մտավոր հոգնածության վիճակ է, որն առաջանում է ծանր հուզական իրավիրճակների հետ երկարաժամկետ առնչության արդյունքում: Հարկավոր է խրախուսել թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող աշխատակազմի անդամներին խնայել իրենց ուժերը և ապահովության համար սահմանափակել հուզականության այն աստիճանը, որով նրանք կատարում են իրենց աշխատանքը: Ապաստարանի տնօրենը պետք է հաշվի առնի, որ հուզական ցնցում վերապրած անձանց, օրինակ՝ թրաֆիքինգի զոհերի հետ առնչվող աշխատողների վրա ազդող սթրեսը հանգեցնում է զանազան հոգեբանական հետևանքների, որոնք կարող են առաջացնել երկրորդային սթրեսային խանգարումներ և երկրորդային հուզական ցնցում: Եթե շարունակական բնույթ կրող սթրեսը կուտակվի, ժամանակի ընթացքում այն կարող է վերածվել «հյուծվածության»:[1]

Ապաստարանի աշխատակիցներին տրամադրվող աջակցության, ինչպես նաև հյուծվածության հատկանիշների հայտնաբերման և այն կանխելու կամ կարգավորելու միջոցների մանրամասն նկարագրությունը տե՛ս 5-րդ գլուխ, բաժին 5.15:

4.5 Թրաֆիքինգի զոհերին ապաստարանում աջակցություն տրամադրելու ընթացակարգեր

Սույն գլխի այս հատվածի նպատակն է ներկայացնել ապաստարանի աշխատակիցների համար նախատեսված ուղեցույցներ թրաֆիքինգի զոհի ապաստարան ընդունվելու պահից մինչև դուրս գրվելը ձեռնարկվող միջոցառումների մասին: Նշված ուղեցույցների նպատակն է մշակել տարանցիկ, ինչպես նաև նպատակակետ և ծագման երկրներում ապաստարանի հետ կապված ընթացակարգերը: Շատ դեպքերում կիրառելի են նույն ընթացակարգերը, անկախ այն բանից, թե որ երկրում է գտնվում ապաստարանը՝ տարանցիկ, նպատակակետ, թե ծագման: Ստորև կներկայացվեն այդ ընդհանուր ընթացակարգերը:

Ընթացակարգային ուղեցույցների մի մասն անխուսափելիորեն կհամընկնեն ուղղորդման, վերադարձի և վերաինտեգրման ընթացակարգերի հետ և կլրացնեն դրանք: Ուստի ընթերցողին խորհուրդ է տրվում անդրադառնալ այս գլխի սկզբում ներկայացված ուղղորդման, վերադարձի և վերաինտեգրման ուղեցույցներին: Ապաստարանում աջակցության տրամադրման ընթացակարգերը կախված են նաև որոշակի հանգամանքներից, ինչպես նաև յուրաքանչյուր զոհի կարիքներից և անհրաժեշտ աջակցության ծավալից: Այդ ամենի արդյունքում փոփոխված ընթացակարգերը կկարգավորվեն ուղեցույցների միջոցով:

Ուսումնասիրություն-հավելված I. Թրաֆիքինգի զոհերի խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկայի սկզբունքներ

Նախքան թրաֆիքինգից տուժած անձանց հետ հարցազրույց անցկացնելը կամ նրանց աջակցելը, ծառայություն մատուցող բոլոր կազմակերպությունների աշխատակիցները պետք է ուշադիր կարդան և ուսումնասիրեն սույն ձեռնարկի I հավելվածը՝ «Թրաֆիքինգի զոհերի խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկայի սկզբունքներ» և II Հավելվածը՝ «Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ»:

4.5.1 ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԶՈՀԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապաստարանում բնակվող անձանց պատշաճ աջակցությունն և միջամտությունն ապահովելու համար՝ ապաստարանի բոլոր

աշխատակիցները պետք է հստակ ըմբռնեն և հասկանան թրաֆիքինգի երևույթը, ինչպիսի ազդեցություն է այն գործում թրաֆիքինգի զոհերի և ծառայությունների մատուցման վրա: Ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է քաջատեղյակ լինեն թրաֆիքինգի հանցատեսակի և գործընթացի հատկանիշներին:

Թրաֆիքինգի հանցատեսակի և գործընթացի հիմնական հատկանիշները և բաղադրիչները, ինչպես նաև հոգեկան, մտավոր և ֆիզիկական առողջության համար հետևանքները ներկայացվում են սույն ձեռնարկի այլ հատվածներում, ուստի ավելորդ չեն կրկնվում այստեղ: Ցանկալի է, որ ապաստարանի աշխատակազմի բոլոր անդամները ծանոթանան սույն ձեռնարկում ներկայացված ուղեցույցներին:

Հիմնական հասկացություններ՝ աշխատակիցների վերաբերմունք և պահվածք

Վերականգնման և սոցիալական վերաինտեգրման գործընթացում խիստ կարևոր է թրաֆիքինգի զոհերի նկատմամբ ապաստարանի աշխատակազմի վերաբերմունքը և պահվածքը: Զոհերի հետ հաղորդակցվելիս ապաստարանի աշխատակիցները պետք է ուշադրություն դարձնեն հետևյալ հարցերին.

- **Համակրանք:** Համակրանք ասելով՝ հասկանում ենք կարեկցանք ապաստարանում բնակվող անձանց հանդեպ: Այն կարող է արտահայտվել անկեղծ մտահոգությամբ, կարեկցող տեսքով նրանց լսելով, քննադատություն չպարունակող պատասխանով և փոխադարձ վստահության մթնոլորտի խրախուսմամբ: Խիստ կարևոր է, որ զոհն իրեն չզգա մեղավորի կարգավիճակում:
- **Հաստատակամ անհատականություն:** Աշխատակազմի անդամները պետք է փորձեն վերհանել ապաստարանի առանձին բնակչի հատկանիշները: Բնակիչներից յուրաքանչյուրին հասկանալու և նրան ուշադրություն հատկացնելու համար հարկավոր է նրան տալ սեփական զգացումներն ու մտահոգություններն արտահայտելու հնարավորություն:
- **Անկողմնակալ վերաբերմունք:** Աշխատակիցները պետք է փորձեն անկողմնակալ վերաբերմունք դրսևորել քննարկվող իրավիճակների նկատմամբ և ապաստարանում բնակվող անձանց հետ իրենց աշխատանքային հարաբերությունները զերծ

պահել իրենց անձնական կարծիքից և դատողություններից:

- **Թրաֆիքինգի զոհի հոգեվիճակը:** Մասնագիտական միջամտությունը պետք է հարմարեցվի տվյալ զոհի ֆիզիկական և հոգեկան վիճակին: Դա նշանակում է, որ հարկավոր է խուսափել շատ հարցեր տալուց և ուշադիր լսել ապաստարանում բնակվող տվյալ զոհին՝ նրա ասածները հիշելու և ավելորդ կրկնությունից խուսափելու համար:
- **Հուզական աջակցություն:** Ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է նրբանկատորեն հետևեն արտահայտված կամ չարտահայտված զգացմունքներին և մարդկային վարքագծի գիտելիքների հիման վրա դրսևորեն ըմբռնում և համապատասխան արձագանք: Թեև ապաստարանի աշխատակազմի անդամները չպետք է դրսևորեն սառնասիրտ մոտեցում կամ հետաքրքրության պակաս, սակայն միաժամանակ նրանք չպետք է իրենց չափից շատ նույնացնեն իրենց հաճախորդների հետ կամ չափից շատ հուզվեն:

Հիմնական հասկացություններ՝ վստահության վրա հիմնված հարաբերությունների ձևավորում

Ապաստարանի աշխատակիցները պետք է հիշեն, որ թրաֆիքինգի հանցագործության զոհ դարձած անձինք կորցնում են վստահությունը այլոց և սեփական ուժերի նկատմամբ, և այդ վստահության վերականգնումը և տվյալ անձանց հետ բնականոն հարաբերությունների ձևավորումը պահանջում են համբերատարություն, կենտրոնացում և համապատասխան հմտություններ: Վստահության և հուսալիության մթնոլորտ ստեղծելու համար խիստ կարևոր է հոգատարություն դրսևորել և զոհի հետ հաղորդակցվելիս զերծ մնալ ավելորդ ճնշում գործադրելուց: Ապաստարանի աշխատակիցները պետք է ցուցաբերեն կարեկցող վերաբերմունք և զերծ մնան դատողություններից՝ միաժամանակ փորձելով սահմանափակել իրենց մոտեցման հուզականության աստիճանը:

Ապաստարանում բնակվող թրաֆիքինգի զոհերի հետ զրուցելիս կարեկցանքի զգացումն առավել արդյունավետ է դրսևորվում խոսքային և ոչ խոսքային միջոցների համադրությամբ: Ապաստարանում բնակվող զոհերի հետ աշխատանքում կարող են օգտակար լինել հետևյալ հնարքները.

- կենտրոնացեք առանձին իրավիճակի վրա,
- ուշադիր լսեք զրուցակցին,
- տվեք անկեղծ պատասխաններ, դրսևորեք մարդասիրական մոտեցում,
- եղեք հանգիստ, ուշադիր, կենտրոնացած և կարեկից,
- զերծ մնացեք վերահսկող և հովանավորչական մոտեցումից,
- եթե հնարավոր է, օգնություն առաջարկեք զոհին որոշումների կայացման գործընթացը վերահսկելու հարցում,
- ներկայացրեք թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված աջակցության համակարգը, պարզեք թրաֆիքինգի զոհերի համար հասանելի ռեսուրսները,
- դրսևորեք ճկուն մոտեցում՝ անհատական կարիքները բավարարելու համար,
- անհրաժեշտության դեպքում ընդունեք լրացուցիչ օգնություն և աջակցություն զոհի և Ձեր սեփական անձի համար:

Թրաֆիքինգի զոհերի հետ աշխատելու արդյունավետ գործելաոճ մշակելու հետ մեկտեղ ապաստարանի աշխատակիցները պետք է մշակեն նաև միջամտության մեթոդներ՝ պայմանավորված տվյալ զոհի հոգեբանական և ֆիզիկական վիճակով, հանգամանքներով և հետաքրքրության շրջանակով:

4.5.2 ԱՊԱՍՏԱՐԱՆ ԺԱՄԱՆԵԼԸ

Խիստ կարևոր է ավարտել բոլոր նախապատրաստական աշխատանքները, նախքան զոհը ժամանի ապաստարան: Շատ դեպքերում զոհի ժամանումից առաջ կատարվող նախապատրաստական աշխատանքների համար պատասխանատու է ապաստարանի տնօրենը, սակայն անհրաժեշտության դեպքում նա կարող է այդ պարտավորությունը փոխանցել աշխատակիցներից որևէ մեկին: Զոհերի հետ հարցազրույցների անցկացման լավագույն փորձի մասին լրացուցիչ տեղեկությունները ներկայացվում են սույն ձեռնարկի Ի-ին Հավելվածում՝ «Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ»: Թրաֆիքինգի զոհերի հոգեկան առողջության վերաբերյալ լրացուցիչ ուղեցույցների համար հարկավոր է անդրադառնալ նաև 5-րդ գլխի 5.12.2 բաժնին:

4.5.3 ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՎԱՐՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Որպես կանոն, ապաստարանի տնօրենն է որոշում, թե ով է վարելու զոհի հետ առաջին հանդիպումը ապաստարանում: Որոշ ապաստարաններում այդ հանդիպումը վարում է տնօրենը, իսկ մյուսներում՝ ապաստարանի հոգեբանը, սոցիալական աշխատողները և այլն:

Անկախ այն բանից, թե ով է վարելու առաջին հանդիպումը, նա պետք է ունենա հետևյալ կարողությունները՝

- անծանոթ մարդու հետ փոխհարաբերություն հաստատելու հմտություններ,
- լեզուների իմացություն (ըստ անհրաժեշտության),
- հոգեբանական հմտություններ, եթե նախնական տվյալներով հայտնի է, որ զոհն ունի հոգեբանական խնդիրներ,
- երեխաների հետ աշխատելու մասնագիտական փորձ, եթե թրաֆիքինգի զոհը երեխա է:

Ցանկալի է, որ ապաստարանում բնակվող թրաֆիքինգի ենթարկված երեխաների հետ հարցազրույցներն անցկացնեն որակավորված մասնագետները, ովքեր հատուկ դասընթացով ուսումնասիրել են թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների վարքագիծը և նրանց հոգեբանական, հուզական և ֆիզիկական զարգացումը: Հնարավորության դեպքում ցանկալի է, որ այդ փորձագետները խոսեն նույն լեզվով, ինչ երեխան և ունենան նույն կամ համանման մշակութային արժեքները: Զոհի հետ առաջին հանդիպման ժամանակ հանդիպման վարողից բացի ապաստարանում պետք է լինեն նաև այլ աշխատակիցներ:

Քանի որ նախնական հանդիպումը զոհին դիմավորող անձից պահանջում է անմնացորդ ուշադրություն և լիարժեք կենտրոնացում, ուստի և այդ ընթացքում ապաստարանում պետք է հերթապահի ևս մեկ աշխատակից՝ վերահսկողություն սահմանելու և այլ բնակիչներին պատշաճ աջակցություն մատուցելու համար:

4.5.4 ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ

Թրաֆիքինգի զոհի՝ ապաստարան ժամանելու ամսաթիվը, որպես կանոն, որոշում և հաստատում է ապաստարանի տնօրենը: Առաջին հանդիպումն անցկացնող աշխատակիցը պետք է հատկացնի առնվազն մեկ ժամ առանց ընդհատումների: Ուստի, ցանկալի է այնպիսի ժամի նշանակել հանդիպումը, որ այն չանցի տվյալ աշխատակցի հերթափոխի

ժամից: Որպես կանոն, ապաստարան աշխատակիցները պետք է փորձեն անցկացնել անհատական նախնական հանդիպումներ միայն մեկ զոհի մասնակցությամբ: Եթե ապաստարանը պետք է միաժամանակ ընդունի մի քանի զոհ, ապա անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ աշխատակիցների՝ ապաստարանի նոր բնակիչներից յուրաքանչյուրի հետ անհատական հանդիպում անցկացնելու համար:

Եթե կասկածներ կան, որ զոհը վատ է խոսում այն լեզվով, որով խոսում է հանդիպում վարողը, ապա ցանկալի է զրույցը հետաձգել այնքան ժամանակով, մինչ կապահովվեն թարգմանչի ծառայությունները:

Յուրաքանչյուր ապաստարան պետք է զոհի ընդունելության ժամերը համաձայնեցնի ուղղորդող կազմակերպությունների կամ այլ գործընկերների հետ: Հնարավորության դեպքում ապաստարանները պետք է հատուկ աշխատանքային ժամեր սահմանեն նոր ժամանողների ընդունելության համար (բացի արտակարգ միջադեպերի, երբ զոհերը կարող են ընդունվել ցանկացած ժամի): Յուրաքանչյուր ապաստարան պետք է քաղաքականություն մշակի նոր անձի ժամանման մասին նախօրոք նախազգուշացման նվազագույն ժամկետի մասին, որպեսզի բավարար ժամանակ ունենա տվյալ զոհի նախնական գործը կազմելու, նախնական հանդիպման վարողին ընտրելու համար և անհրաժեշտության դեպքում ապահովել աջակցություն մատուցող լրացուցիչ կազմակերպությունների հասանելիությունը:

4.5.5 ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Զոհի հետ առաջին հանդիպումը պետք է անցկացվի ապաստարանի տարածքում գտնվող առանձին փակ վայրում: Այդ սենյակը պետք է լինի ընդարձակ, լուսավոր և հարմարավետ կահույքով: Ցանկալի է, որ ապաստարանում միշտ լինի առնվազն մեկ ազատ սենյակ՝ նախատեսված դռնփակ անհատական հանդիպումների և ապաստարանի բնակիչների խորհրդատվության համար:

Զոհերի հետ առաջին հանդիպման ընթացքում քննարկվում են նրբանկատ և գաղտնի տեղեկություններ, որոնք չպետք է լսեն ապաստարանի այլ աշխատակիցները կամ բնակիչները: Ուստի, ցանկալի է, որ այդ նպատակով հատկացվի ապաստարանի ընդհանուր օգտագործման տարածքից հեռու գտնվող սենյակներից մեկը: Հնարավորության դեպքում առաջին հանդիպումները ցանկալի է անցկացնել ապաստարանի աշխատողի աշխատասենյակում: Հանդիպման վարողը պետք է ամեն ջանք գործադրի նվազագույնի

հասցնելու ուշադրությունը շեղող բոլոր հնարավոր գործոնները, ասել է թե՝ այլ աշխատակիցների ներկայությունը, հեռախոսազանգերը և այլն: Բացի այդ, հանդիպման ընթացքում սենյակում որևէ այլ բնակչի ներկայությունը նույնպես արգելվում է:

4.5.6 ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ապաստարանում զոհի հետ առաջին հանդիպումն ունի չորս հիմնական նպատակ.

- կապ հաստատել զոհի հետ,
- ապահովել նրա անվտանգությունը,
- նախնական տեղեկություններ տրամադրել ապաստարանի մասին,
- տեղեկություններ ստանալ զոհի մասին, որոնց հիման վրա հետագայում որոշվելու են մատուցվող ծառայությունները և կազմվելու է ծառայությունների մատուցման անհատականացված ծրագիրը:

Կապի հաստատում

Ապաստարանում զոհի հետ անցկացվող առաջին հարցազրույցը հիմք է ծառայում նրա հետ նախնական կապ հաստատելու համար: Բոլոր դեպքերում զոհի հետ կապ հաստատելու նպատակն է վստահեցնել զոհին, որ իրեն որևէ վտանգ չի սպառնում, և իրեն շրջապատող մարդկանց նպատակն է աջակցել իր վերականգնմանը: Զոհի հետ առաջին հանդիպումն անցկացնելու ձևը պայմանավորված է հետևյալ գործոններով՝ տվյալ հարցազրուցավարի ոճ, իրավիճակի գնահատում, զոհի հոգեվիճակ և արձագանքելու կարողություն, ինչպես նաև զոհի մասին նախապես հայտնի տեղեկությունների ծավալ:

Շատ անգամ հարցազրույց անցկացնող անձը ներկայանում է, ասում, թե ինչ դեր է կատարում ապաստարանում և առաջարկում է զոհին մի բաժակ ջուր կամ թեյ և հետո միայն անցում է ապաստարանում մատուցվող ծառայությունների ներկայացմանը:

Հանդիպման ընթացքում հարցազրուցավարը պետք է ուշադիր հետևի զոհի ֆիզիկական և հոգեկան վիճակին և հուզական արձագանքին: Հաշվի առնելով սույն ձեռնարկի այլ մասերում ներկայացված թրաֆիքինգի ազդեցությունը զոհերի վրա՝ հարցազրուցավարը պետք է հասկանա իրավիճակը և փորձի շահել զոհի վստահությունը, օրինակ՝ արտահայտել իր մտահոգությունը որևէ

հարցի շուրջ, ինչպես նաև փորձի գիտակցել զոհի համարձակությունը սեփական կյանքը տնօրինելու հնարավորությունը վերականգնելու համար:

Զոհի վստահության վերականգնում

Այս նախնական փուլում խիստ կարևոր է վերականգնել զոհի վստահությունն իր ֆիզիկական և հոգեբանական անվտանգության վերաբերյալ: Վերականգնման գործընթացը սկսելու համար անհրաժեշտ է ապահովել զոհի ֆիզիկական և հոգեբանական անվտանգությունը:

Այդ իսկ պատճառով առաջին հանդիպումը վարող անձը պետք է հավատացնի զոհին, որ ապաստարանը կոչված է ապահովելու բնակիչների և աշխատակիցների անվտանգությունը և կարիքները: Նման կարիքները ներառում են անվտանգություն մարդավաճառներից և նրանց հանցակիցներից, ֆիզիկական և հուզական անկախություն, ինչպես նաև սնունդ, հիմնական կարիքներ, բուժօգնություն և ըստ անհրաժեշտության այլ տեսակի աջակցության մատուցում: Նախնական կապի հաստատումից և զոհին վստահություն հաղորդելուց հետո կարելի է ներկայացնել ապաստարանի ընդհանուր կանոնները:

Զոհին հաղորդել նախնական տեղեկություններ ապաստարանի մասին

Նախնական տեղեկություններ հաղորդելուց և զոհին անվտանգության և հանգստության վերաբերյալ վստահություն հաղորդելուց հետո առաջին հանդիպման երկրորդ մասի նպատակն է տեղեկություններ հաղորդել ապաստարանի և ապաստարանում մատուցվող ծառայությունների մասին:

Քանի որ ապաստարանի հիմնական նպատակներից մեկն է դյուրացնել զոհի վերականգնման գործընթացը, որը ենթադրում է զոհի ինքնավերահսկողության զգացումի վերականգնում, ընտրության հնարավորություն և իրադարձությունների որոշակի կանխատեսելիություն, խիստ կարևոր է նոր ժամանած զոհի հետ քննարկել հետևյալ հարցերը.

- հայտնել զոհին ապաստարանում գտնվելու ժամանակահատվածում իր իրավունքները և պարտականությունները,

- ստանալ զոհի համաձայնությունը, բարձրացնել զոհի իրազեկվածության մակարդակը հասանելի ծառայությունների վերաբերյալ և նպաստել նրա ակտիվ մասնակցությանը որոշումների կայացման գործընթացին՝ անհատականացված խնամքի ծրագիր կազմելու համար,
- տեղեկություններ ստանալ զոհի մասին, որոնց հիման վրա հետագայում որոշվելու են մատուցվող ծառայությունները, և կազմվելու է ծառայությունների մատուցման անհատականացված ծրագիրը:

4.5.7 ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապաստարանում բնակվող անձանց իրավունքներ

Հարկավոր է բացատրել զոհին, որ ապաստարանում բնակվող անձինք ունեն որոշակի իրավունքներ, օրինակ՝ ապաստարանի աշխատակիցների և այլ բնակիչների կողմից հարգալից վերաբերմունքի իրավունք, և որ իրավունքների նկարագրի պատճենը ներառված է տեղեկատվական փաթեթում, որը հանդիպման վերջում կհանձնեն զոհին: Թեև ոմանք նախընտրում են ապաստարանում բնակվող անձի իրավունքների նկարագրի պատճենը տեղեկատվական փաթեթի հետ մեկտեղ զոհին հանձնել հանդիպման սկզբում, սակայն դա կարող է շեղել զոհի ուշադրությունը զրույցի ընթացքում քննարկվող մյուս հարցերից: Ուստի, նախընտրելի է բոլոր փաստաթղթերը զոհին հանձնել առաջին հանդիպման ավարտին:

Հանդիպման ընթացքում նոր ժամանած ապաստարանի բնակիչներին պետք է համառոտ ներկայացնել իրենց իրավունքները՝ շեշտելով համաձայնություն հայտնելու, տվյալների գաղտնիության պահպանման և ինքնորոշման իրավունքները: Ապաստարան ընդունվելու պայման է զոհի բանավոր և գրավոր համաձայնությունը, որը նա արդեն տվել է ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների ներկայությամբ, և համապատասխան պատճենները պետք է կցվեն զոհի գործին և ապաստարանի հետ առնչվող փաստաթղթերի փաթեթին: Այդուհանդերձ, զոհի իրազեկվածության և իր համաձայնությունը հայտնելու իրավունքի լիարժեք գիտակցումն ապահովելու համար՝ հարկավոր է նրան խնդրել հնարավորության սահմաններում և որոշակի պայմաններից կախված՝ իր խոսքերով

հայտնել ապաստարանում մատուցվող բոլոր ծառայություններից օգտվելու իր համաձայնությունը:

Ջոհին հարկավոր է նաև տեղեկացնել ապաստարանում մատուցվող որոշակի ծառայությունների կամ վերաբերմունքի առնչությամբ ապաստարանի աշխատակազմին առկա ընթացակարգով բողոք ներկայացնելու հնարավորության մասին, որի շրջանակներում կարող է կազմակերպվել մասնավոր զրույց ապաստարանի տնօրենի հետ՝ առկա խնդիրները քննարկելու և համապատասխան լուծումներ գտնելու համար:

Հարկավոր է տպագրել և ապաստարանի բոլոր բնակիչներին իրենց մայրենի լեզվով հանձնել ապաստարանում բնակվող անձանց իրավունքների համառոտ նկարագիրը:

Ստորև բերված է ապաստարանում բնակվող անձանց իրավունքների նկարագրի նմուշը, որը ներկայացվում է նաև այս գլխի վերջում՝ III Հավելվածում:

Ապաստարանում բնակվող անձանց իրավունքները

Ապաստարանում բնակվող բոլոր անձինք ունեն հետևյալ իրավունքները.

- պատշաճ հարգալից վերաբերմունք և նրբանկատ մոտեցում պատմական և մշակութային պատկանելությանը,
- անձնական տվյալների գաղտնիության իրավունք,
- անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք,
- մասնակցել մատուցվող ծառայությունների շրջանակներում իրենց նպատակների նախանշման և ծրագրերի մշակման գործընթացին,
- օգտվել ծառայություններից իրենց լիարժեք և իրազեկված համաձայնությամբ,
- իրենց համար հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալ մատուցվող ծառայությունների և դրանց նպատակի մասին,
- ողջամիտ սահմաններում հնարավորություն ունենալ տեսնել իրենց անձնական փաստաթղթերը:

Ապաստարանում բնակվող անձանց հարկավոր է նաև հայտնել, որ եթե որևէ հիմք կա կարծելու, որ նշված իրավունքներից որևէ մեկը խախտվել է, կամ եթե ապաստարանի բնակիչը վիրավորված է

ապաստարանում իր նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքից կամ մատուցվող ծառայություններից, ապա նա կարող է ապաստարանի տնօրենի հետ հանդիպելու դիմում ներկայացնել նման խնդիրները քննարկելու համար:

Այս փուլում հանգամանքներից և զոհի դեպքի և հոգեվիճակի վերաբերյալ հոգեբանի եզրակացությունից կախված՝ հարցազրույց անցկացնող անձը կարող է համառոտ ներկայացնել զոհի՝ օրենքով նախատեսված իրավունքները: Այդուհանդերձ, շատ անգամ նման իրավունքները պարզաբանվում են որոշ ժամանակ անց, երբ զոհն առնվազն մեկ օր հանգստացել է, վերականգնվել և ծանոթացել ապաստարանում մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությանը և ապաստարանի աշխատակիցների հետ քննարկել է ծառայությունների մատուցման ծրագիրը:

Ապաստարանում բնակվող անձանց պարտավորությունները

Խիստ կարևոր է զոհին բացատրել և հասկացնել, որ ապաստարանում բնակվող անձինք ունեն որոշակի պարտավորություններ իրենց սեփական անձի, ապաստարանի աշխատակիցների և այլ բնակիչների նկատմամբ:

Ապաստարան ժամանած թրաֆիքինգի զոհերը նախապես ստանում են ապաստարանում բնակվող անձանց համար նախատեսված կանոնների պատճենը, որը պետք է հանդիպման ընթացքում քննարկեն վարողի հետ: Թեև կարիք չկա մանրամասն դիտարկելու յուրաքանչյուր կանոն, հանդիպման վարողը պետք է ապահովի, որ նոր ժամանած զոհն ընդհանուր պատկերացում կազմի կանոնների և դրանք պահպանելու պարտականության մասին:

Ստորև ներկայացվում է ապաստարանի կանոնների նմուշը.

Ապաստարանի ընդհանուր կանոններն ամփոփոխ փաստաթուղթ.

- Հարկավոր է հարգալից և քաղաքավարի վերաբերվել ապաստարանի այլ բնակիչներին և աշխատակազմի անդամներին:
- Հարկավոր է ընդունել և ըստ հարկի կատարել ապաստարանի աշխատակիցների կողմից առաջադրվող բոլոր կենցաղային և այլ բնույթի հանձնարարությունները:
- Ապաստարանի բոլոր բնակիչները պատասխանատու են

ապաստարանում իրենց քնելու տարածքը մաքուր ու կարգին պահելու համար:

- Ապաստարանի գույքը և ռեսուրսները պետք է օգտագործել պատշաճ խնամքով և հոգատարությամբ:
- Ապաստարանի յուրաքանչյուր բնակիչ ինքն է պատասխանատու այն անձնական իրերի համար, որոնք նա չի հանձնել ապաստարանի աշխատակիցների պահպանությանը:
- Հարկավոր է պահպանել ապաստարանի ժամանակացույցը, ներառյալ՝ արթնանալու և քնելու ժամերը:
- Ապաստարանից դուրս գալու համար հարկավոր է նախապես ստանալ աշխատակիցների համաձայնությունը:
- Հարկավոր է կատարել բուժող բժշկի և հոգեբանի նշանակումները, ինչպես նաև հետևել ապաստարանի այլ աշխատակիցների խորհուրդներին և ընդունել դուրս գրված դեղորայքը նշանակված դեղաքանակով և հաճախականությամբ:
- Ապաստարանի բոլոր բնակիչները պետք է հետևողականորեն պահպանեն անձնական հիգիենայի կանոնները:
- Ապաստարանում արգելվում է աղմկել կամ բղավել:
- Ապաստարանում արգելվում է ծխել:
- Կողմնակի անձանց մուտքն արգելող տարածքներ կարելի է մտնել միայն աշխատակիցների թույլտվությամբ:

Թրաֆիքինգի ենթարկված երեխաների պարագայում հարկավոր է վերանայել ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով նրանց տարիքը և հասունության մակարդակը: Ստորև ներկայացվում է ապաստարանում բնակվող անչափահասների համար կանոնների նմուշը.

- պահպանել անձնական հիգիենայի կանոնները,
- կատարել կենցաղային աշխատանքներ, օրինակ՝ հավաքել անկողինը և կարգուկանոն պահպանել,
- հարգել այլոց իրավունքները և ձեռք չտալ նրանց անձնական իրերը,
- համագործակցել ապաստարանի այլ բնակիչների, աշխատակիցների և ըստ անհրաժեշտության այլ մասնագետների հետ,
- մասնակցել բոլոր ծրագրված միջոցառումներին:

Ընդհանուր կանոնները պարզաբանելուց հետո, հանդիպման վարողը թրաֆիքինգի զոհին պետք է հիշեցնի, որ իր մայրենի լեզվով տպագրված կանոնների պատճենը կցված է իր անձնական գործին, իսկ մեկ այլ պատճեն փակցված է ապաստարանում: Եթե այս կամ այն պատճառով զոհը դեռևս ստորագրությամբ չի ընդունել կանոնները, կամ եթե ապաստարանում բացակայում է ստորագրված պատճենը, ապա հարկավոր է խնդրել նրան նախնական հանդիպման վերջում ստորագրել փաստաթղթի մեկ այլ օրինակ: (Ապաստարանի կանոնների օրինակը ներկայացվում է այս գլխի վերջում IV Հավելվածում):

Ապաստարանի անվտանգության կանոնները

Ընդհանուր կանոնները ներկայացնելուց հետո հարցազրուցավարը պետք է մանրամասն պարզաբանի անվտանգության կանոնները: Խիստ անհրաժեշտ է, որ հարցազրուցավարը զոհի հետ մանրամասն քննարկի անվտանգության բոլոր կանոնները և համոզվի, որ նա հասկացել և պատրաստակամ է պահպանել դրանք:

Ստորև բերված է զոհին ներկայացվող անվտանգության կանոնների օրինակը:

- Ապաստարանում թմրամիջոցներ, ալկոհոլ, զենք կամ մաքսանենգությամբ ներմուծված որևէ այլ ապրանք պահելը խստիվ արգելվում է:
- Ապաստարանում բջջային հեռախոս կամ հաղորդագրություններ ստանալու սարքեր պահելը խստիվ արգելվում է:
- Նշված պարագաները պետք է ապաստարան ժամանելուց հետո հանձնվեն ապաստարանի անձնակազմի պահպանությանը և վերադարձվեն զոհերին ապաստարանից դուրս գրվելուց հետո:
- Նախնական թույլտվություն չունեցող և չպարզված ինքնությամբ այցելուների մուտքն ապաստարան խստիվ արգելվում է:
- Խստիվ արգելվում է տեղական, ներքին կամ միջազգային զանգեր կատարել, բացառությամբ՝ արտակարգ իրավիճակների կամ այն դեպքերի, երբ ստացվել է ապաստարանի տնօրենի հետ խորհրդակցելուց հետո ապաստարանի աշխատակիցների թույլտվությունը:
- Ապաստարանի գտնվելու վայրի մասին տեղեկությունները կամ ապաստարանի որևէ բնակչի կամ աշխատակցի որևէ անձնական տվյալ չպետք է բացահայտվեն որևէ մեկին:

- Թրաֆիքինգի զոհի ամբողջ անուն ազգանունը կամ որևէ այլ անձնական տվյալ չպետք է բացահայտվի ապաստարանի որևէ այլ բնակչի կամ աշխատակցի:
- Պետք է կիրառել միայն անունները, բացառությամբ այն դեպքերի, երբ հստակ նշվում է հակառակը:
- Հարկավոր է հետևողականորեն պահպանել ապաստարանի աշխատակազմի անվտանգության հրահանգները ապաստարանի բնակչի ընտանիքի անդամների, մտերիմ անձնանց կամ ապաստարանից դուրս գտնվող ծանոթների հետ կապ պահպանելու վերաբերյալ:
- Ապաստարանից դուրս գտնվելիս և այլ մարդկանց հետ կապ հաստատելիս հարկավոր է հետևողականորեն պահապանել անձնակազմից ստացած անվտանգության հրահանգները:
- Կասկածելի անձանց կամ դեպքերի մասին հարկավոր է անմիջապես հայտնել ապաստարանի աշխատակազմին:

Անվտանգության կանոնները պարզաբանելուց հետո, հանդիպման վարողը թրաֆիքինգ զոհին պետք է հիշեցնի, որ իր մայրենի լեզվով տպագրված անվտանգության կանոնների ցանկի պատճենը կցված է իր անձնական գործին, իսկ մեկ այլ օրինակ փակցված է ապաստարանում: Եթե այս կամ այն պատճառով թրաֆիքինգի զոհը դեռևս ստորագրությամբ չի ընդունել կանոնները, կամ եթե ապաստարանում բացակայում է ստորագրված պատճենը, ապա հարկավոր է նախնական հանդիպման վերջում խնդրել նրան ստորագրել մեկ այլ օրինակ:

Հենց որ զրուցավարը զգա, որ թրաֆիքինգի զոհը հստակ պատկերացնում է կանոնները և պատրաստակամ է պահպանել դրանք, հարկավոր է պարզաբանել ապաստարանում մատուցվող աջակցությունը և ծառայությունները:

4.5.8 ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով նախնական հանդիպմանը ներկայացվող տեղեկատվության ծավալը և մատուցվող ծառայությունների վերաբերյալ զոհի իրազեկվածությունը, համաձայնությունը և մասնակցությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս առաջին

հանդիպման ընթացքում միայն ներկայացնել նման ծառայությունների համառոտ նկարագիրը՝ ավելի մանրամասն քննարկումը թողնելով հաջորդ օրվան: Հարցազրուցավարը պետք է հիշեցնի թրաֆիքինգ զոհին, որ հասանելի ծառայությունների ցանկը և նկարագիրը ներառված է տեղեկատվական փաթեթում և ավելի մանրամասն կքննարկվի հաջորդ օրը ապաստարանի աշխատակազմի անդամների մասնակցությամբ:

Հասանելի ծառայությունների ցանկը՝ զոհին հասկանալի լեզվով պետք է նաև փակցված լինի ապաստարանում: Ցանկը կարող է տեղեկություններ պարունակել հետևյալ հարցերի վերաբերյալ.

- փոխադրում հայրենի բնակավայր,
- սնունդ,
- առաջին անհրաժեշտության պարագաներ,
- բուժօգնություն,
- խորհրդատվություն,
- հոգեբանական օգնություն,
- իրավական տեղեկատվություն,
- ըստ անհրաժեշտության մասնագիտական խնամք,
- ժամանցի կազմակերպում:

Տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող ապաստարանների աշխատակիցները կարող են նաև օգնել թրաֆիքինգի զոհերին ստանալ ժամանակավոր կացության թույլտվություն և (կամ) ընդգրկվել Կամավոր վերադարձի աջակցված ծրագրերին, ինչպես նաև օգնել հետևյալ հարցերում.

- ստանալ անձը հաստատող և ճամփորդական փաստաթղթեր,
- կազմակերպել փոխադրում հայրենի բնակավայր,
- անվտանգ կացարան տրամադրել ժամանելուց հետո այդտեղ մնալու համար,
- ուղղորդում լրացուցիչ ծառայություններ մատուցող կազմակերպություններ և վերաինտեգրման տարբերակներ:

Ապաստարաններում և ծագման երկրներում մատուցվող վերաինտեգրման ծառայությունների շրջանակներում թրաֆիքինգի զոհերը կարող են նաև աջակցություն և համապատասխան տեղեկատվություն ստանալ հետևյալ ոլորտներում.

- ընտանիքի հետ տարվող աշխատանք և խորհրդատվական ծառայություններ,
- անձը հաստատող փաստաթղթեր և սոցիալական աջակցության փաստաթղթեր,
- բուժօգնություն,
- հոգեբանական օգնություն և հոգեբույժի խորհրդատվություն,
- իրավական աջակցություն,
- կրթություն և մասնագիտական աջակցություն,
- աջակցություն աշխատանքի տեղավորման հարցում,
- փոքր ձեռնարկատիրություն կամ միկրովարկային ծրագրեր,
- գործընկեր հասարակական կազմակերպություններ,
- վերաինտեգրման մոնիթորինգ:

Թրաֆիքինգից տուժած անձանց հետ համատեղ վերաինտեգրման ծրագրերի մշակման և իրագործման մասին մանրամասն տեղեկությունները ներկայացված են 3-րդ գլխում, բաժին 3.2:

4.5.9 ԲՈՎԱՆԴԱԿԱԼԻ ԶՐՈՒՅՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԻ ՀԵՏ

Նախքան թրաֆիքինգի զոհերի հետ հարցազրույց սկսելը կամ նրանց աջակցություն տրամադրելը ծառայություններ մատուցող կազմակերպությունների բոլոր աշխատակիցները պետք է ուշադիր կարդան և վերանայեն սույն ձեռնարկի I հավելվածը՝ «Թրաֆիքինգի զոհերի խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկայի սկզբունքներ» և II հավելվածը՝ «Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ»: Ապաստարանում մատուցվող ծառայությունների ընդհանուր նկարագիրը տալուց հետո պետք է ավելի երկար զրուցել թրաֆիքինգի զոհի հետ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Նախնական հանդիպման այս հատվածն ունի հետևյալ նպատակները.

- ավելի շատ և համակողմանի տեղեկություններ ստանալ զոհի մասին,
- հնարավորություն տալ զոհին պատմելու իր պատմությունը,
- վերհանել զոհի հրատապ կարիքները և խնդիրները:

Ավելի շատ տեղեկություններ ստանալ զոհից

Թրաֆիքինգի զոհի հետ զրուցող անձը պետք է ամեն ջանք գործադրի նրա մասին բոլոր անհրաժեշտ տեղեկությունները ստանալու համար, որպեսզի ապաստարանի աշխատակիցները կարողանան լրացնել և հստակեցնել իրենց մոտ առկա տեղեկությունները: Այս փուլում խիստ կարևոր է մտապահել զոհի տրամադրած տեղեկություններում առկա ցանկացած թյուրիմացություն և հակասություն, ինչպես նաև մինչ այժմ ստացած տեղեկատվության հետ կապված խնդիրները և բացերը: Զոհի վարքագիծը կամ որոշակի հարցերին պատասխանելու կարողությունը և պատրաստակամությունը պայմանավորված են ապաստարան ժամանելու պահին նրա ֆիզիկական և հոգեկան վիճակով: Օրինակ՝ տվյալ անձը կարող է լինել հյուծված, շփոթված կամ հուզված, վախեցած, կամ կարող է դժվարանալ վերհիշել որոշակի մանրամասներ կամ ունենալ ոչ կապակցված խոսք: Նշված նշաններից որևէ մեկի առկայության պարագայում հարցազրուցավարը պետք է որոշի արդյոք շարունակել հարցազրույցը թե հետաձգել այն, որպեսզի թրաֆիքինգի զոհը ժանամակ ունենա ուշքի գալու և հանգստանալու համար:

Հարցազրույց անցկացնող անձը պետք է տեղյակ լինի հնարավոր պատճառներին, որոնց հետևանքով զոհը կարող է չպատասխանել նրա հարցերին կամ դժկամությամբ բացահայտել անձնական տեղեկությունները: Նման պատճառներին շարքին են դասվում.

- ամոթ և շփոթություն,
- վախ ոստիկանության ներգրավումից,
- նախկինում իրավապահ մարմինների հետ առնչվելը:

Հարցազրույց անցկացնող անձը կարող է փորձել վստահություն ներշնչել թրաֆիքինգի զոհին հետևյալ միջոցներով.

- պարզ և նրբանկատ ձևով հիշեցնել զոհին աջակցության նպատակի մասին,
- վստահեցնել զոհին, որ ինքը պաշտպանված է տվյալ հաստատությունում,
- վստահեցնել զոհին, որ իր տրամադրած տեղեկությունները պահվելու են խիստ գաղտնի պայմաններում:

Եթե նշված փորձերն արդյունք չտան, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է ավելի ճկուն մոտեցում դրսևորի և որոշում կայացնի զրույցը մի քանի ժամով կամ մեկ օրով հետաձգելու մասին: Այդ նպատակով նա կարող է խորհրդակցել ապաստարանի տնօրենի կամ հոգեբանի հետ:

Հնարավորություն տալ զոհին ներկայացնելու իր պատմությունը

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և ավելի պարզ պատկերացում կազմելու համար հարցազրուցավարը կարող է առաջարկել զոհին ներկայացնել վերջին իրադարձությունների իր պատմությունը: Զոհի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու հնարավորությունից բացի՝ իր պատմությունը ներկայացնելու հնարավորությունը թույլ է տալիս զոհին պատմել հատկապես կարևոր կամ ցավալի իրադարձությունների կամ մանրամասների մասին:

Սեփական պատմությունը ներկայացնելու գործընթացը պետք է նաև նպաստի թրաֆիքինգի զոհի և հարցազրուցավարի միջև ավելի սերտ և կայուն կապի հաստատմանը, քանի որ այդ հնարքը միտված է կամուրջ կապելու զոհի և նրա զրուցակցի միջև՝ հիմք ծառայելով փոխադարձ կապի և վստահության համար: Կարիք չկա և խորհուրդ չի տրվում զոհին ստիպել մանրամասն պատմել այն ամենի մասին, ինչ ինքը վերապրել է: Մանրամասնությունների քանակը կախված է նրանից, թե քանի անգամ է զոհի հետ հարցազրույց անցկացվել նախքան ապաստարան ժամանելը:

Խիստ կարևոր է հնարավորություն տալ զոհերին սեփական բառերով նկարագրել իրենց հետ պատահածը: Ընդ որում, հարցազրույց անցկացնող անձը պետք է.

- իր վերաբերմունքում արձագանքի արտահայտած զգացումներին,
- հաղորդի զոհին այն զգացումը, որ իրեն սատարում են,
- զերծ մնա դատողություններից:

Զոհի կարիքների վերհանում

Անմիջական կարիքներ

Զոհի նախընտրած միջադեպերի կամ հարցերի մասին ազատ զրույցից հետո հարցազրույց անցկացնող անձը պետք է հայտնաբերի զոհին անմիջապես առնչվող խնդիրները և պարզի անմիջական կարիքները: Նա պետք է կրկին շեշտի զոհի համար մտահոգություն առաջացնող հարցերը բարձրացնելու կարևորությունը և այն հանգամանքը, որ մատուցվող աջակցության և խնամքի ծրագրերը մշակվում և իրագործվում են զոհի մասնակցությամբ՝ իր ցանկություններին և հետաքրքրություններին համապատասխան: Այն դեպքում, եթե զոհն արդեն ներկայացրել է իր առավել հրատապ

անձնական կարիքները և խնդիրները, հարցազրույց անցկացնող անձը պետք է հաստատի դրանց նշանակությունը, օրինակ՝ վերաձևակերպելով դրանք և խնդրելով զոհին հաստատել դրանց կարևորությունը:

Այլ դեպքերում հարցազրույց անցկացնող անձը պետք է շարունակի ներթափանցել զոհի հոգեվիճակի մեջ՝ նրա առաջնահերթ կարիքները պարզելու կամ այդ մասին եզրակացություն անելու համար: Այս գործընթացում հարցազրույց անցկացնող անձին կարող է օգնել իր կուտակած փորձը: Օրինակ, տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող թրաֆիքինգի զոհերը նշում են հետևյալ առաջնահերթությունները. պաշտպանվածությունը իրենց թրաֆիքինգի ենթարկած չարագործներից, քրեական պատասխանատվության չենթարկվելը և հայրենիք վերադառնալու հնարավորությունը: Որպես կանոն, ծագման երկիր ժամանած թրաֆիքինգի զոհերի համար առաջնահերթություն են հանդիսանում հետևյալ հարցերը՝ ընտանիքի անդամների հետ կապ հաստատելը, նրանց արձագանքը, իրենց առողջական վիճակը և իրենց՝ թրաֆիքինգի ենթարկվելու մասին տեղեկությունների բացահայտման հետ կապված մտավախությունը:

Խիստ կարևոր է, որ զոհի նշած առաջնահերթությունները վերաձևակերպելուց հետո հարցազրույց անցկացնող անձն իր արձագանքով հաստատի առանձնացված խնդիրները: Շատ անգամ զոհի արտահայտած խնդիրները կարող են թվալ անտրամաբանական կամ ոչ կապակցված: Նման դեպքերում հարցազրույց անցկացնող անձը պետք է փորձի գտնել զոհի խնդրի գործնական բաղադրիչը՝ շարունակելով իր վերաբերմունքով արձագանքել զոհի արտահայտած զգացումներին:

Ճգնաժամային իրավիճակների և արտակարգ իրավիճակների տարբերակում

Զոհի անմիջական կարիքները վերհանելիս խիստ կարևոր է տարբերակել ճգնաժամային իրավիճակները և արտակարգ իրավիճակները: Թեև երկուսն էլ ունեն հրատապության բաղադրիչ և ուշադրության կարիք, այդ հրատապությունը հատկապես արտահայտված է արտակարգ իրավիճակներում, որոնք կարող են ներառել՝ հանկարծակի առաջացած վտանգի վիճակ կամ հիվանդություն, որը պահանջում է անհապաղ միջոցներ կամ անհետաձգելի բուժում:

Ֆիզիկական մնասվածքի ընդհանուր ախտանիշերի և առողջության արտակարգ իրավիճակների տարբերակումը

Շատ դեպքերում, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները և ապաստարանի տնօրենը ապահովում են, որ անհետաձգելի բուժօգնության կարիք ունեցող յուրաքանչյուր զոհ համապատասխան խնամք ստանա նախքան ապաստարան ընդունվելը: Այդուհանդերձ, ապաստարանի աշխատակիցները պետք է միշտ ուշադիր լինեն թրաֆիքինգի զոհերի մոտ սովորաբար դրսևորվող արտաքին ֆիզիկական նշանների, ինչպես նաև այնպիսի ախտանիշների նկատմամբ, որոնք անհետաձգելի բուժօգնություն են պահանջում:

Թրաֆիքինգի զոհերի մոտ դրսևորվող ախտանիշները ներկայացված են սույն ձեռնարկի 5-րդ գլխում: Թրաֆիքինգի զոհի հետ նախնական հարցազրույցն անցկացնող անձը պետք է կարողանա ճանաչել զոհի մոտ դրսևորվող ախտանիշները և նախնական գործում գրի առնի դրանք, ինչպես նաև պարզի զոհի ընդհանուր առողջական վիճակը: Եթե որևէ նշան վկայում է այն մասին, որ տվյալ անձն ունի անհետաձգելի բուժօգնության կարիք, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է նրան բացատրի իրավիճակը և դիմի ապաստարանի բժշկին կամ բուժաշխատողին:

Հոգեբանական ճգնաժամի և հոգեբանական արտակարգ իրավիճակի տարբերակում

Այն հարցը պարզելու համար, թե արդյոք նոր ժամանած թրաֆիքինգի զոհն ունի բնականոն բուժօգնության շրջանակներում հոգեբանական աջակցության կարիք, թե հրատապ հոգեբանական կամ հոգեբուժական օգնության կարիք, հարցազրույց անցկացնող անձը պետք է կարողանա տարբերակել հոգեբանական ճգնաժամը և հոգեբանական արտակարգ իրավիճակը, որը հրատապ բուժօգնություն է պահանջում:

Հոգեբանական ճգնաժամ: Ապաստարան ժամանող թրաֆիքինգի զոհերից շատերը գտնվում են հոգեբանական ճգնաժամի վիճակում, ինչը նրանց վերապրած սթրեսի և հոգեկան հավասարակշռության խանգարման արդյունք է, քանի որ նրանք չունեն արձագանքի բավարար մեխանիզմներ միայն սեփական ուժերով դժվարությունները հաղթահարելու համար կամ ունեն նման մեխանիզմներ, սակայն դրանք ճնշված են վերջին ապրումների հետևանքով: Նման հոգեվիճակը կարող է տևել մի քանի օրից մինչև մի քանի ամիս և պահանջում է շարունակական խնամք,

խորհրդատվություն և աջակցություն: Այն սովորաբար ուղեկցվում է ծայրաստիճան անհանգստության զգացումով և ջղագրգռությամբ կամ ընկճախտով և պարտվողականության զգացումով, ինչի արդյունքում զոհն ի վիճակի չէ բնականոն ձևով կամ առհասարակ լուծելու իր առօրյա խնդիրները: Հոգեբանական ճգնաժամի հաղթահարումը ենթադրում է լրացուցիչ գնահատումներ, խորհրդատվություն և այլ միջամտություն, որի նպատակն է հնարավորինս շուտ վերականգնել զոհի՝ հանգամանքներին հարմարվելու և գործելու կարողությունը:

Արտակարգ իրավիճակ: Ի տարբերություն ճգնաժամի՝ հոգեբանական արտակարգ իրավիճակը սրված հոգեվիճակ է, որն անհետաձգելի արձագանք է պահանջում՝ հնարավոր վնասից խուսափելու համար:

.....

Արտակարգ իրավիճակի բաղադրիչները.

- **Ինքնասպանություն գործելու վտանգ, երբ թրաֆիքինգի զոհն ակնարկում կամ արտահայտում է իրեն վնասելու ցանկություն,**
- **շրջապատող մարդկանց ֆիզիկական վնաս հասցնելու վտանգ, երբ թրաֆիքինգի զոհն ակնարկում կամ արտահայտում է իրեն շրջապատող մարդկանց վնասելու ցանկություն կամ կարողություն,**
- **Զոհի մոտ դրսևորվում են դատողությունների խախտում և այլ հոգեկան խանգարումներ (օրինակ՝ զառանցանք, մտագարություն և սուր պսիխոզային խանգարումներ):**

.....

Վերոնշյալ խանգարումներից որևէ մեկի դրսևորման կամ առկայության կասկածի պարագայում հարցազրույց անցկացնող անձը պետք է անմիջապես խորհրդակցի ապաստարանի հոգեբանի, հոգեբույժի և (կամ) տնօրենի հետ:

Հոգեբանական արտակարգ իրավիճակները կարգավորելու վերաբերյալ լրացուցիչ հրահանգները ներկայացվում են սույն ձեռնարկի 5-րդ գլխում, բաժին 5.12.2:

.....

Եթե ապաստարան ժամանած թրաֆիքինգի զոհն անչափահաս է, ապա անհրաժեշտ է անմիջապես դիմել օրինական խնամակալին կամ երեխաների պաշտպանության այլ համապատասխան պետական

հաստատության ներկայացուցիչներին արտակարգ իրավիճակում տրամադրվող խնամքի հարցով:

Եթե նախնական հարցազրույցի ընթացքում արտակարգ խնամքի անհրաժեշտություն չի բացահայտվում, կամ եթե անհրաժեշտ խնամքն արդեն տրամադրվել է, ապա զոհի հետ հարցազրույց վարող անձը պետք է անցնի նախնական հանդիպման եզրափակիչ փուլին:

4.5.10 ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Թրաֆիքինգի զոհի հետ առաջին հանդիպման ավարտին հարցազրույց անցկացնող անձը պետք է.

- զոհին տրամադրի ապաստարանի վերաբերյալ տեղեկատվության փաթեթը,
- զոհին խնդրի ստորագրել ապաստարանի կանոնների ծանոթանալու և ծառայություններից օգտվելու մասին համաձայնության փաստաթուղթը,
- նախանշի զոհի հետ տարվող աշխատանքի հաջորդ քայլերը:

Տեղեկատվական փաթեթ ապաստարանի վերաբերյալ

Ապաստարանի յուրաքանչյուր բնակիչ պետք է ստանա տեղեկատվական փաթեթ, որը պետք է պարունակի ապաստարանի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները տվյալ զոհին հասկանալի լեզվով: Նշված փաթեթը պետք է ներառի հետևյալ տվյալները.

- տեղեկություններ ծառայություններ մատուցող կազմակերպության մասին,
- տեղեկություններ հասանելի ծառայությունների մասին,
- ծառայություններից օգտվելու համաձայնության ձևի օրինակ,
- ապաստարանի կանոններ,
- անվտանգության կանոններ

Զոհին առաջարկել ստորագրել ապաստարանի կանոններին ծանոթանալու և ծառայություններից օգտվելու մասին համաձայնության փաստաթուղթը

Զոհին տեղեկատվական փաթեթը տրամադրելուց հետո հարցազրույց անցկացնող անձը պետք է նրանից վերցնի հետևյալ փաստաթղթերի ստորագրված օրինակները.

- ծառայություններից օգտվելու մասին համաձայնության փաստաթուղթ,
- ապաստարանի ընդհանուր կանոններն ամփոփոխ փաստաթուղթ,
- ապաստարանի անվտանգության կանոններն ամփոփոխ փաստաթուղթ:

Եթե թրաֆիքինգի զոհը հրաժարվում է ստորագրել նշված փաստաթղթերը, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է բացատրի, որ ապաստարանում մնալու համար անհրաժեշտ է տալ ծառայություններից օգտվելու մասին լիարժեք և իրազեկված համաձայնությունը՝ բոլոր նշված փաստաթղթերը ստորագրելու միջոցով: Եթե զոհը շարունակում է հրաժարվել, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է փորձի պարզել դրա պատճառը: Նման իրավիճակներում խորհուրդ է տրվում դիմել ապաստարանի տնօրենի կամ հոգեբանի օգնությանը՝ զոհի մտադրությունը և մերժման հիմքերը հաստատելու համար: Եթե տվյալ անձը հրաժարվում է ստորագրել փաստաթղթերը ապաստարանում բնակվելու ցանկություն չունենալու պատճառով, ապա աշխատակազմի անդամները չեն կարող և չպետք է անգամ փորձեն ստիպել նրան մնալ ապաստարանում և ստորագրել փաստաթղթերն իր կամքին հակառակ:

Յուրաքանչյուր ապաստարան պետք է մշակի և արձանագրի քաղաքականություն այն հարցի շուրջ, թե արդյոք ապաստարանում բնակություն հաստատելու ցանկություն չունեցող անձը կարող է օգտվել ապաստարանի այլ ծառայություններից և աջակցությունից ցերեկային խնամքի շրջանակներում՝ ապաստարանում չբնակվող անձանց համար նախատեսված ծառայությունների սկզբունքով: Նման հնարավորության պարագայում զոհին հարկավոր է տեղեկացնել ապաստարանի քաղաքականության և նման աջակցություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների մասին:

Եթե թրաֆիքինգի զոհը չի ցանկանում բնակվել ապաստարանում կամ

ստանալ ապաստարանում չբնակվող անձանց համար նախատեսված լրացուցիչ ծառայություններ, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է զոհին ներկայացնի հնարավոր աջակցության տարբերակների ցանկը, ներառյալ՝ գործընկեր միջազգային և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև պետական կառույցների կողմից տրամադրվող ծառայությունները: Եթե թրաֆիքինգի զոհը ցանկություն է հայտնում օգտվելու նշված կազմակերպություններից որևէ մեկի կամ մի քանիսի ծառայություններից, ապա ապաստարանի կամ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները պետք է կապ հաստատեն համապատասխան կազմակերպությունների հետ և կազմակերպեն զոհի ուղղորդումը՝ հնարավորինս օգտակար այլընտրանքային աջակցության տրամադրմանը նպաստելու համար:

Թրաֆիքինգի զոհի վերջանական որոշումը և ուղղորդումների կազմակերպման փորձերը պետք է գրանցվեն զոհի անձնական գործում:

Զոհի հետ տարվող աշխատանքի հաջորդ քայլերի նախանշում

Տեղեկատվական փաթեթը ստանալուց և անհրաժեշտ ձևաթղթերը ստորագրելուց հետո թրաֆիքինգի զոհը պետք է տեղեկություններ ստանա իր աջակցության գործընթացի հաջորդ քայլերի մասին: Հետագա գործողությունները հաճախ պայմանավորված են զոհի կողմից հայցվող աջակցությամբ և այն հանգամանքով, թե արդյոք զոհը գտնվում է իր ծագման երկրում, տարանցիկ երկրում թե նպատակակետ երկրում:

Պատասխանել զոհի հարցերին

Տեղեկատվական փաթեթը թրաֆիքինգի զոհին հանձելուց և ապաստարանի ծառայություններից օգտվելու մասին համաձայնության հետ կապված բոլոր հարցերը կարգավորելուց հետո հարցազրույց անցկացնող անձը պետք է իր կարողությունների սահմաններում պատասխանի զոհի բոլոր հարցերին ապաստարանի, դրա ռազմավարությունների և ծառայությունների վերաբերյալ: Եթե հարցազրույց անցկացնող անձը դժվարանա պատասխանել որևէ հարցի, նա պետք է գրի առնի այն և խորհրդակցի ապաստարանի իր գործընկերների հետ, իսկ հետո պատասխանը հայտնի թրաֆիքինգի զոհին:

4.5.11 ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՇՐՋԱՆ

Առաջին հանդիպումից հետո թրաֆիքինգի զոհին հարկավոր է ցույց տալ ապաստարանը, ինչպես նաև տրամադրել առաջին անհրաժեշտության պարագաներ (այդ թվում՝ անձնական հիգիենայի պարագաներ և ըստ անհրաժեշտության՝ տարվա եղանակին համապատասխան հագուստ) և հատկացնել քնելու տեղ: Հնարավորության դեպքում ցանկալի է նաև զոհին տրամադրել կողպվող դարակ (կամ կողպվող պահարան), որպեսզի նա այդտեղ պահի իր անձնական իրերը:

Զոհին պետք է թույլ տալ շուտ գնալ հանգստանալու իր քնելու տարածք: Թեև ապաստարանի աշխատակիցները պետք է միշտ հետևողականորեն պահպանեն ապաստարանի օրակարգը, սակայն պետք է նաև հաշվի առնեն այն հանգամանքը, որ նոր ժամանակացույցին հարմարվելու համար ապաստարան ժամանած թրաֆիքինգի զոհից կպահանջվի առնվազն մի քանի օր: Եթե տվյալ անձը նախկինում երբեք չի բնակվել ապաստարանում և սովոր չէ իր օրը ծրագրել կանոնավոր ժամերով, ապա նա ամենայն հավանականությամբ սովոր է գիշերն արթնանալուն և ցերեկվա անկանոն ժամերին քնելուն: Ուստի, հարկավոր է օգնել նրան կանոնավորել իր քնելու ժամերը՝ աստիճանաբար փոխելով նրա օրակարգը և առաջարկելով ամենօրյա վարժություններ կատարել:

Շատ դեպքերում նոր ժամանած թրաֆիքինգի զոհերը քնում են մի քանի հոգու համար նախատեսված սենյակում: Եթե տվյալ պահին կա մեկից ավելի ազատ անկողին, ապա նոր ժամանած անձը կարող է ինքն ընտրել իր քնելու տեղը: Ապաստարանի աշխատակիցները պետք է առնվազն մի քանի ժամ առաջ տեղեկացնեն մյուս բնակիչներին նոր անձի ժամանելու մասին:

Ապաստարաններում աշխատող մասնագետներից ոմանք կարծում են, որ եթե խնդրեն ապաստարանի մյուս բնակիչներին քնելու տեղ պատրաստել նոր ժամանող թրաֆիքինգի զոհի համար, ապա նրանց միջև կձևավորվեն ընկերակցության նմանվող կապեր և աջակցելու պատրաստակամություն: Տարբեր ազգերի ներկայացուցիչների պարագայում ապաստարանի բնակիչները նախընտրում են նույն սենյակում մնալ իրենց համազգիների հետ: Այդուհանդերձ, ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է հաշվի առնեն նաև բնակիչների՝ միմյանց հետ ընդհանուր լեզու գտնելու կարողությունը

և փորձեն նրանց տեղավորել հնարավորինս հարմարավետ պայմաններում:

Եթե ապաստարանն ունի բավարար թվով ազատ սենյակներ, ապա յուրաքանչյուր բնակչի կարելի է հատկացնել առանձին սենյակ, սակայն թրաֆիքինգի զոհերը հավանաբար սովոր չեն սենյակում մենակ մնալուն և ավելի պաշտպանված և հանգիստ կզգան իրենց, եթե մի քանի հոգով բնակվեն մեկ սենյակում: Հնարավորության դեպքում ապաստարանի աշխատակիցները պետք է այդ մասին զրուցեն ապաստարանի բնակիչների հետ:

4.6 Հատուկ նկատառումներ ապաստարանում բնակվող երեխաների վերաբերյալ

(Անչափահասների խնամքի և նրանց հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են 5-րդ գլխում, բաժին 5.6.):

Հնարավորության դեպքում թրաֆիքինգից տուժած երեխաներին պետք է տեղավորել նույն սեռին պատկանող հասակակիցների հետ, այլ ոչ թե՝ մեծահասակների հետ: Ապաստարանի աշխատակիցները պետք է հատուկ ուսուցում անցնեն՝ խոցելի վիճակում հայտնված, մասնավորապես՝ սեռական չարաշահումների ենթարկված երեխաների հետ աշխատելու համար: Ապաստարանի աշխատակիցները պետք է հաշվի առնեն նաև տեղական, ազգային և միջազգային չափանիշները թրաֆիքինգի զոհ դարձած և առանց ուղեկցության գտնվող անչափահասներին ապաստարանում տեղավորելու վերաբերյալ: Ամեն դեպքում, ապաստարանի աշխատակիցները պետք է առաջնորդվեն հանգամանքներով և յուրաքանչյուր երեխայի լավագույն շահերով:

4.7 Ապաստարանում մատուցվող ծառայություններ և աջակցություն

Ապաստարանում բնակվող թրաֆիքինգի զոհերը կարող են ունենալ նաև վերաինտեգրման ծառայությունների կարիք, որոնք մանրամասն ներկայացված են 3-րդ գլխում, բաժին 3.2.3: Եթե տվյալ ապաստարանը չի կարող մատուցել նման ծառայություններ, ապա զոհին հարկավոր է ուղղորդել համապատասխան կազմակերպություններ: Նման ծառայությունների ապահովման կարգի նկարագրության

կրկնությունից խուսափելու համար՝ հաջորդ բաժնում ներկայացվում են միայն ապաստարանների կողմից մատուցվող աջակցությունը և ծառայություններն ուղեկցող յուրահատուկ հանգամանքները: Ապաստարանի աշխատակիցներն աջակցություն ստացող յուրաքանչյուր անձի հետ համատեղ պետք է մշակեն անհատականացված խնամքի ծրագիր:

Ապաստարանում կարող են մատուցվել հետևյալ ծառայությունները.

- խորհրդատվություն,
- բուժօգնություն,
- հոգեբանական խնամք,
- հոգեբուժական խնամք,
- իրավական աջակցություն,
- ժամանցի կազմակերպում,
- վերաինտեգրման լրացուցիչ ծառայություններ (կրթություն, մասնագիտական ուսուցում, եկամուտի գոյացում, աշխատանքի տեղավորում, ֆինանսական աջակցություն),
- անձը հաստատող փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր և աջակցություն,
- մեկնումից առաջ մատուցվող աջակցություն:

Նշված ծառայությունները մանրամասն ներկայացվում են ստորև:

4.7.1 ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ապաստարանում մատուցվող առանցքային ծառայությունների շարքին է դասվում անհատական և խմբային խորհրդատվությունը: Անհատական խորհրդատվությունը մանրամասն ներկայացված է 3-րդ գլխում, բաժին 3.2.3.2: Թրաֆիքինգի զոհերին հոգեբանական օգնության տրամադրման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են նաև 5-րդ գլխում, բաժին 5.12.2: Բացի խորհրդատվության նշված տեսակներից, շատ ապաստարաններում պարբերաբար կազմակերպվում են նաև թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ խմբային հանդիպումներ և ուսուցողական քննարկում-վարժություններ: Խմբային խորհրդատվության նպատակն է զոհերի համար ստեղծել անվտանգ և աջակցող միջավայր, որտեղ նրանք կարող

են կատարելագործել իրենց անձնային և միջանձնային հմտությունները, մասնավորապես՝ ավելի պարզ արտահայտվելու կարողությունը:

Խմբային քննարկումների նպատակն է ապահովել ակտիվ իրազեկումը և խրախուսել զոհերի՝ խնդիրները հաղթահարելու և քննարկելու կարողությունների զարգացումը: Նման քննարկումները պետք է հնարավորություն տան զոհին՝ իմանալու, որ մնացածները նույնպես վերապրել են նման իրավիճակներ և բախվել նույն դժվարությունների, ինչպես նաև ավելի լավ ճանաչելու ինքն իրեն՝ տեսնելով, թե ինչպես են մնացածները լուծում իրենց խնդիրները:

Խմբային խորհրդատվական հանդիպումները պետք է կրեն խիստ կամավոր բնույթ և հարմարեցված լինեն թրաֆիքինգի զոհերի առանձին կարիքներին, տարիքային խմբերին և մշակութային պատկանելությանը:

Խմբի խորհրդատուի և (կամ) առաջնորդի դերը

Խմբի խորհրդատուն կամ առաջնորդը կոչված է խմբի անդամների միջև հաստատել հարգանքի վրա հիմնված արդյունավետ հաղորդակցում: Թեև խմբի խորհրդատու մասնագետը պետք է առաջարկի քննարկման ընթացքի որոշակի կառույց, օրինակ՝ ներկայացնի քննարկման առարկան և նպատակները, սակայն միևնույն ժամանակ պետք է թույլ է տա մասնակիցներին ուղղություն տալ քննարկմանը: Նա կարող է առանձնացնել ընդհանուր թեմաներ և ըստ անհրաժեշտության ապահովել հետադարձ կապ և աջակցություն:

Յուրաքանչյուր հանդիպման սկզբում խմբի խորհրդատու մասնագետը պետք է հիշեցնի մասնակիցներին, որ խմբային քննարկման ընթացքում փոխանակվող տեղեկությունները պետք է պահվեն գաղտնի: Այդուհանդերձ, հարկավոր է խուսափել այնպիսի հարցերի քննարկումից, որոնք ամենայն հավանականությամբ ենթադրում են նրբանկատ տեղեկություններ առանձին զոհերի մասին, հատկապես՝ անհատական իրավական հարցերի վերաբերյալ: Նման հարցերը հարկավոր է քննարկել անհատական կամ մասնավոր զրույցների ժամանակ:

Խմբային քննարկումների թեմաներ

Խմբային հանդիպումների ժամանակ կարող են քննարկվել թրաֆիքինգի զոհերին առնչվող մի շարք հարցեր: Խորհրդատու մասնագետները պետք է փորձեն կազմակերպել այնպիսի

հանդիպումներ, որոնց ընթացքում պետք է քննարկվեն առանձին ուսուցողական թեմաներ:

Քանի որ թրաֆիքինգի զոհերի մեծ մասը մտահոգություն են արտահայտում իրենց սոցիալական և ֆիզիկական բարեկեցության վերաբերյալ, խմբային հանդիպումների ժամանակ կարելի է քննարկել հետևյալ թեմաները.

- ընտանեկան հարաբերություններ,
- ինքնագնահատական,
- ընկճախտ,
- տագնապի զգացում,
- սթրեսի նվազեցում,
- սնուցում,
- անձնական հիգիենա,
- սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և ՄԻԱՎ/ՁԻԱՀ:

4.7.2 ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի զոհի վերականգնման գործում խիստ կարևոր դեր է կատարում նրա ֆիզիկական և հոգեկան բարեկեցությունը: Յուրաքանչյուր ապաստարան պետք է ապահովի թրաֆիքինգի զոհերի բուժօգնությունը տեղում կամ նրանց ուղղորդի համապատասխան բուժհաստատություն: Յուրաքանչյուր ապաստարանում առկա բժշկական սարքավորումները և (կամ) բուժաշխատողների թիվը պայմանավորված են ապաստարանի ռեսուրսներով:

Այն դեպքերում, երբ ապաստարանն իր բնակիչների բուժօգնությունը տեղում կամ համապատասխան հաստատություններում կազմակերպելու համար դիմում է ապաստարանի աշխատակազմի անդամ չհանդիսացող բժիշկներին, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս նրանց հետ կնքել ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր:

Անկախ այն բանից, թե բուժօգնությունը տրամադրում է պետական կամ մասնավոր բուժհաստատությունը, թե բժշկական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունը, ծառայությունների մատուցման պայմանագրում պետք է ամրագրվեն ծառայությունների մատուցման պայմանները, չափանիշները, գաղտնիությունը և մատուցվող բուժծառայությունների գնացուցակը:

Նախնական և աջակցության ծրագրի մշակման լրացուցիչ հանդիպումների ընթացքում ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է բուժման տարբերակներ մշակեն ապաստարանի յուրաքանչյուր բնակչի համար: Բացի այդ, ապաստարանի աշխատակիցները պետք է թրաֆիքինգի զոհին հասկանալի լեզվով տրամադրեն հետևյալ տեղեկությունները.

- տեղեկություններ բուժօգնության մասին ապաստարանի տեղեկատվական փաթեթի շրջանակներում,
- բուժզննում և բուժման ձևեր,
- բուժզննմանը նախորդող և հաջորդող խորհրդատվություն, ներառյալ՝ տեղեկություններ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների և ՄԻԱՎ-ի մասին,
- բուժման ժամանակացույց և նշանակված բուժման գրանցման թերթիկ,
- բուժզննման և ստացված բուժման մասին անհատական բժշկական փաստաթղթեր

Բուժօգնության տրամադրման հատուկ ուղեցույցը ներկայացված է սույն ձեռնարկի 5-րդ գլխում:

4.7.3 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է կազմակերպի հոգեբանական աջակցության կարիք ունեցող թրաֆիքինգի զոհերի հոգեկան առողջության գնահատումը տեղում կամ նրանց այլ հաստատություններ ուղղորդելու միջոցով: Ապաստարանի աշխատակազմում հոգեբանի հաստիքի առկայությունը պայմանավորված է տվյալ ապաստարանի ռեսուրսներից և կարիքներից:

Այն դեպքերում, թե ապաստարանը զոհերի բուժօգնությունը տեղում կամ համապատասխան հաստատություններում կազմակերպելու համար դիմում է ապաստարանի աշխատակազմի անդամ չհանդիսացող հոգեբաններին, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս նրանց հետ կնքել ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր: Անկախ այն բանից, թե բուժօգնությունը տրամադրում է պետական կամ մասնավոր բուժհաստատությունը, թե բժշկական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունը, ծառայությունների մատուցման պայմանագրում պետք է ամրագրվեն ծառայությունների մատուցման պայմանները, չափանիշները,

գաղտնիությունը և մատուցվող հոգեբանական ծառայությունների գնացուցակը:

Երեխաների հոգեբանական աջակցությունը պետք է մատուցեն այն մասնագետները, ովքեր ունեն համապատասխան հմտություններ և հուզական ցնցում վերապրած և խոցելի վիճակում հայտնված երեխաների հետ աշխատելու փորձ:

Թրաֆիքինգի զոհերի հոգեբանական աջակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար հարկավոր է անդրադառնալ նաև 5-րդ գլխի 5.12.2 բաժնին:

4.7.4 ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԽՆԱՄՔ

Յուրաքանչյուր ապաստարան պետք է մշակի հոգեբուժական աջակցության կարիք ունեցող թրաֆիքինգի զոհերի ուղղորդման կամ նրանց հոգեբուժական գնահատման և խնամքի ապահովման քաղաքականություն: Ապաստարանի աշխատակազմում հոգեբույժի հաստիքի առկայությունը պայմանավորված է տվյալ ապաստարանի ռեսուրսներով և կարիքներով: Այն հարցը, թե արդյոք որևէ մասնագետ, օրինակ՝ բժիշկը կամ հոգեբանը, պաշտոնապես իրավասու է զոհին ուղղորդել հոգեբույժի մոտ, որոշվում է տվյալ ապաստարանի գործելաոճով:

Այն դեպքերում, եթե ապաստարանը զոհերի բուժօգնությունը տեղում կամ համապատասխան հաստատություններում կազմակերպելու համար դիմում է ապաստարանի աշխատակազմի անդամ չհանդիսացող հոգեբույժներին, Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս նրանց հետ կնքել ծառայությունների մատուցման գրավոր պայմանագիր: Անկախ այն հանգամանքից, թե բուժօգնությունը տրամադրում է պետական կամ մասնավոր բուժհաստատությունը, թե բժշկական հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունը, ծառայությունների մատուցման պայմանագրում պետք է ամրագրվեն ծառայությունների մատուցման պայմանները, չափանիշները, գաղտնիությունը և մատուցվող բուժծառայությունների գնացուցակը:

Երեխաների հոգեբուժական խնամքի շրջանակներում խորհրդատվություն տրամադրելու և բուժում նշանակելու համար՝ ապաստարանի աշխատակիցները պետք է նախապես ստանան երեխայի խնամակալի կամ երեխաների շահերի պաշտպանությամբ զբաղվող այլ պետական մարմնի ներկայացուցչի համաձայնությունը:

Թրաֆիքինգի զոհերի հոգեբանական աջակցության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար հարկավոր է անդրադառնալ նաև 5-րդ գլխի 5.12.2 բաժնին:

4.7.5 ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շատ անգամ իրավական աջակցությունը կարելի է տրամադրել ապաստարանի տարածքում: Եթե ապաստարանը չունի իրավաբանի հաստիք, ապա պետք է պայմանավորվածություն ձեռք բերի իրավական ծառայություններ մատուցող կազմակերպության (մասնավոր, պետական կամ շահույթ չհետապնդող կազմակերպություն) հետ՝ ապաստարանի բնակիչներին իրավական աջակցություն տրամադրելու շուրջ: Բացի այդ, ապաստարանի աշխատակիցները պետք է զոհերին հասկանալի լեզվով տրամադրեն առնվազն հետևյալ տեղեկությունները.

- իրավական տեղեկատվություն ապաստարանի գտնվելու երկրում թրաֆիքինգի զոհերի կարգավիճակի վերաբերյալ («Տեղեկատվական փաթեթ ապաստարանի վերաբերյալ»),
- տեղեկություններ թրաֆիքինգի զոհերին առնչվող միջազգային չափանիշների մասին («Տեղեկատվական փաթեթ ապաստարանի վերաբերյալ»):

Անչափահասներին իրավական աջակցություն տրամադրելիս ապաստարանի աշխատակիցները պետք է միշտ հիշեն, որ անչափահասների պարագայում գործում է յուրահատուկ իրավական կարգ, և նրանք պետք է ստանան միջազգային նորմերին համապատասխան աջակցություն:

Թրաֆիքինգի զոհերին իրավական աջակցության տրամադրման վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս 3-րդ գլուխ, բաժին 3.2.3.4 և 6-րդ գլուխ, բաժին 6.5:

4.7.6 ԺԱՄԱՆՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ապաստարանների աշխատակիցները պետք է ծրագրեն ապաստարանի բնակիչների առօրյա ժամանցի գործողությունները, որոնց մասնակցությունը կրում է կամավոր բնույթ: Նման ժամանցային գործողություններն ապաստարանի բնակիչներին տալիս են հետևյալ հնարավորությունները.

- աշխատել ապաստարանում բնակվող այլ անձանց հետ,
- հաղթահարել ձանձրույթը և կենտրոնանալ այլընտրանքային կառուցվածքային հանձնարարությունների վրա,
- կանոնավորել քնելու ժամերը ֆիզիկական վարժությունների օգնությամբ՝ մեծացնելով էներգիայի պաշարը,
- մշակել համապատասխան հմտություններ և բարձրացնել ինքնագնահատականը ժամանցի կազմակերպման գործողությունների միջոցով:

Ժամանցի կազմակերպման գործողությունները կարող են ներառել գործնական հանձնարարություններ, ինչպիսիք են՝

- ճաշացանկի կազմում (սնունդ),
- գնումներ ցուցակ (բյուջետավորում),
- սեղան գցելը (կարգուկանոն և հպարտության զգացում վերջնական արդյունքի համար),
- խոհարարություն (սնունդ, հպարտության զգացում վերջնական արդյունքի համար, հոգատարություն այլոց և սեփական անձի նկատմամբ),
- մաքրման աշխատանքներ (տնտեսվարության հմտություններ):

Ժամանցի գործողությունները կարող են ներառել նաև այնպիսի ֆիզիկական վարժություններ, որոնք օգնում են վերականգնել առողջ ֆիզիկական վիճակը, սեփական մարմնին տիրապետելու կարողությունը և ինքնավստահությունը, օրինակ՝

- ռիթմիկ մարմնամարզություն,
- աէրոբիկա,
- յոգա,
- խմբային սպորտաձևեր:

Արվեստի և արհեստի հետ կապված գործողությունները բուժարար բնույթ են կրում և օգնում են ապաստարանում բնակվող անձանց զարգացնել իրենց հմտությունները և նվերներ պատրաստել երեխաների և ընտանիքի անդամների համար:

Թրաֆիքինգից տուժած երեխաների և պատանիների համար հարկավոր է մշակել ժամանցային և կրթական հատուկ գործողություններ, որպեսզի նրանք կարողանան մասնակցել իրենց բնականոն զարգացմանը նպաստող գործողություններին՝ իրենց տարիքին և զարգացման մակարդակին համապատասխան:

4.7.7 Լրացուցիչ վերաինտեգրման ծառայություններ

Ապաստարանում բնակվող անձինք կարող են ունենալ նաև այնպիսի լրացուցիչ վերաինտեգրման աջակցության կարիք, որը կարող է չմատուցվել ապաստարանի աշխատակիցների կողմից: Ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է աշխատանք տանեն թրաֆիքինգի զոհերի հետ նրանց կարիքները գնահատելու համար և պայմանավորվածություն ձեռք բերեն այլ կազմակերպությունների հետ՝ նման աջակցության տրամադրման շուրջ: Նման ծառայություններից են՝ վերականգնում կրթական համակարգում, մասնագիտական ուսուցում, աջակցություն փոքր ձեռնարկատիրության ոլորտում, եկամուտի գոյացման գործունեություն, աշխատանքի տեղավորում կամ ֆինանսական աջակցություն: Նման աջակցության մատուցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են 3-րդ գլխում, բաժին 3.2.3:

4.7.8 Աջակցություն տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող թրաֆիքինգի զոհերին անձը հաստատող փաստաթղթեր, ճամփորդական փաստաթղթեր ստանալու, ինչպես նաև աջակցված կամավոր վերադարձի ծրագրում ընդգրկվելու հարցերում

Շատ դեպքերում ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է օգնել թրաֆիքինգի զոհերին ստանալ անձը հաստատող փաստաթղթեր և անհրաժեշտ ճամփորդական փաստաթղթեր, ինչպես նաև նպաստել տարանցիկ և նպատակակետ երկրներում գտնվող ապաստարանի բնակիչների վերադարձի աջակցությանը: Նման դեպքերում ապաստարանի աշխատակազմի անդամներն ունեն հետևյալ դերակատարումը.

- պատասխանատու անձի հետ համատեղ համակարգել անհրաժեշտ ընթացակարգերը,
- համապատասխան տեղեկություններ ստանալ ապաստարանում բնակվող անձից,
- ապաստարանում բնակվող անձին տեղյակ պահել փաստաթղթերի ձևակերպման հետ կապված անհրաժեշտ աշխատանքի և այն ավարտելու մոտավոր ժամկետի մասին,
- ապահովել, որ անհատականացված խնամքի ծրագրերը մշակվեն աջակցության մատուցման ժամկետին և ապաստարանի բնակչի

ընդհանուր բարօրությանը համապատասխան,

- ապահովել մեկնումից առաջ խնամքի ծրագրումը և աջակցության մատուցումը, այդ թվում՝ ուղղորդումն այլ կազմակերպություններ՝ լրացուցիչ ծառայությունների համար:

4.8 Անհատականացված խնամքի ծրագրի մշակում

Ապաստարանի աշխատակազմի անդամները պետք է յուրաքանչյուր զոհի համար մշակեն անհատականացված խնամքի ծրագիր: Թրաֆիքինգի զոհի հետ նախնական հանդիպումից հետո հարցազրույց անցկացնող անձը պետք է հանդիպի ապաստարանի տնօրենի և աշխատակազմի այլ անդամների հետ՝ աջակցության առավել պատշաճ ուղիները քննարկելու համար: Յուրաքանչյուր զոհի խնամքի ծրագրի ծավալներն ու շրջանակները պայմանավորող գործոններն են՝ զոհի վիճակը, անմիջական կարիքները, ապաստարանի ռեսուրսները, ապաստարանում մնալու ակնկալվող տևողությունը և զոհի համաձայնությունը: Անհրաժեշտ է թրաֆիքինգի զոհի հետ վերանայել և քննարկել անհատականացված խնամքի ծրագրի մշակման հետ կապված նախնական առաջարկությունները:

Յուրաքանչյուր զոհի խնամքի ծրագիրը պետք է պարունակի հետևյալը.

- զոհին աջակցության առաջարկումը և տրամադրումը հիմնավորող փաստաթղթեր,
- զոհի կողմից աջակցության ընդունումը և ստացումը հիմնավորող փաստաթղթեր,
- ծառայություններից օգտվելու համաձայնության ստորագրված ձևեր,
- զոհի կարճաժամկետ նպատակների նախանշում, որոնք պետք է իրագործվեն ապաստարանում գտնվելու ընթացքում,
- ընթացիկ հաշվետվություններ թրաֆիքինգի ենթարկված անձի առջև դրված նպատակների և ամբողջ դեպքի վերաբերյալ,
- առօրյա գրառումներ զոհի ընդհանուր առաջընթացի վերաբերյալ,
- ապաստարանի փաստաթղթեր, որոնք պետք է լրացվեն նախքան թրաֆիքինգի զոհի մեկնումը,
- ընտանիքի անդամների կամ ընկերների հետ զոհի հաղորդակցման վերաբերյալ փաստաթղթեր,

- լրացուցիչ աջակցության համար ներկայացվող առաջարկություններ և ուղղորդումներ:

Երեխաների և պատանիների համար անհատականացված խնամքի ծրագիր կազմելիս հարկավոր է խորհրդակցել նրանց օրինական խնամակալի կամ երեխաների պաշտպանությամբ զբաղվող այլ պետական մարմնի ներկայացուցչի հետ: Ամեն դեպքում, հարկավոր է հաշվի առնել թրաֆիքինգի զոհ դարձած երեխայի տեսակետները և ցանկությունները՝ պատշաճ ուշադրություն դարձնելով նրա տարիքին և զարգացման մակարդակին: Որոշումների կայացման և աջակցության ծրագրի մշակման գործընթացներին երեխայի մասնակցության աստիճանը կախված է նրա ֆիզիկական և հոգեբանական տարիքից:

Աջակցության առավել պատշաճ ուղղությունը և արձանագրված առաջընթացը, որպես կանոն, քննարկվում են զոհի հետ անհատական խորհրդատվական հանդիպումներին:

4.9 Ապաստարանից մեկնելը

Շատ դեպքերում ապաստարանի տնօրենը պարտավոր է պատշաճ կարգով կազմակերպել ապաստարանում բնակվող անձանց անխափան մեկնումը ապաստարանից և համոզվել, որ մեկնումի հետ կապված համապատասխան ընթացակարգերը պահպանվել են: Բացի այդ, ապաստարանի տնօրենը կամ աշխատակազմի որևէ այլ անդամ պետք է լրացնի մեկնումի ստուգման ցանկը: Ստուգման ցանկի օրինակը ներկայացված է այս գլխի վերջում, «Մեկնումի ընթացակարգերի ձև», հավելված V:

Ապաստարանում աջակցություն ստացած թրաֆիքինգի զոհերին պետք է հնարավորություն տալ արտահայտելու իրենց կարծիքը ապաստարանում մատուցվող ծառայությունների որակի և իրենց կարիքներին համապատասխանության վերաբերյալ: Ապաստարանի բնակիչների հետ անհատական խորհրդատվության և անհատականացված խնամքի ծրագրերի մշակման քննարկումների ընթացքում ծառայությունների վերաբերյալ հարցումներից բացի՝ ապաստարանի աշխատակազմի անդամները կարող են նաև նախքան մեկնումը խնդրել նրանց գրավոր ներկայացնել իրենց կարծիքը: Այդ նպատակով մեկնումից մեկ կամ երկու օր առաջ ապաստարանի բնակիչներին կարելի է տալ նախքան մեկնումը լրացվող հարցաթերթիկ, որը պետք է հավաքել զոհերի մեկնումի օրը, պահել և դիտարկել

յուրաքանչյուր ամսվա վերջում անցկացվող աշխատակազմի անդամների հանդիպումներին: Ապաստարանում բնակվող անձի մեկնումի հարցաթերթիկի օրինակը ներկայացվում է սույն գլխի վերջում, VI Հավելված:

4.10 Փաստաթղթերի կառավարում

Յուրաքանչյուր ապաստարան պետք է հատուկ քաղաքականություն և հրահանգներ մշակի ապաստարանի փաստաթղթերի և բնակիչներին ու աշխատակիցներին վերաբերող բոլոր տվյալների հավաքագրման, պահպանման և օգտագործման վերաբերյալ:

Ապաստարանում պահվող բոլոր փաստաթղթերը պետք է պահվեն ծառայություն մատուցող կազմակերպության անվտանգության ընթացակարգերին, ինչպես նաև անձնական տվյալների հավաքագրման, պահպանման, օգտագործման և բացահայտման վերաբերյալ ազգային և միջազգային ուղեցույցներին համապատասխան:

Ապաստարանում բնակվող զոհերին և աշխատակազմի անդամներին առնչվող փաստաթղթերը, որոնք արդեն կորցրել են իրենց արդիականությունը, պետք է ոչնչացնել (անկախ այն բանից, թե դրանք պարունակում են անձնական տվյալներ, թե ոչ) գաղտնի տեղեկատվություն պարունակող թափոնների ոչնչացման կարգով թուղթ մանրացնող սարքի միջոցով: (Անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս 1-ին գլուխ, բաժին 1.2 և 5-րդ գլուխ, բաժին 5.17):

Նշում

[1] Վերցված և հարմարեցված է այստեղից՝ *S. Kahill, "Interventions for Burnout in the Helping Professions: A Review of the Empirical Evidence," Canadian Journal of Counseling Review, 22:3 (1988)*

Հավելված 1 Աշխատակազմի վարքագծի չափանիշների ուղեցույցներ

ՆԱԽԱԲԱՆ

Այս բաժնում կարող են ներկայացվել կազմակերպության ղեկավար սկզբունքները կամ առաքելությունը, ինչպես նաև՝ վարքագծի կանոնակարգ մշակելու անհրաժեշտությունը, որն ունի հետևյալ նպատակները՝ ապահովել, որ աշխատակազմի անդամների վարքագիծը նպաստի կազմակերպության նպատակների իրագործմանը, բարձր պահել կազմակերպության հեղինակությունը, միասնության մեջ ներկայացնել կազմակերպության աշխատակազմի անդամներից ակնկալվող վարքագծի և արհեստավարժության չափանիշները:

Հիմնական արժեքներ և ղեկավար սկզբունքներ

Այս բաժնում կազմակերպության աշխատակիցները կարող են ներկայացնել իրենց կազմակերպության կողմից պահպանվող արժեքները, օրինակ՝ մարդու հիմնարար իրավունքներ, սոցիալական արդարություն և հարգանք բոլոր անձանց արժանապատվության նկատմամբ, բոլոր գործողություններում ազնվություն, ճշմարտացիություն և անկեղծություն դրսևորելու պատրաստակամություն, հանդուրժողականություն խրախուսելու և դրսևորելու պատրաստակամություն, բոլորին հասկանալու և հարգելու պատրաստակամություն՝ անկախ ռասայական պատկանելիության, սեռի, դավանանքի, մաշկի գույնի, սեռական կողմնորոշման, տարիքի, հաշմանդամության կամ քաղաքական հայացքների հատկանիշից, և (կամ) կազմակերպության ռեսուրսներից հոգատարությամբ օգտվելու պատրաստակամություն:

Չափանիշների պահպանման պատրաստակամություն

Այս բաժինը կարող է ներառել այնպիսի հայտարարություն, որը պարտավորեցնի աշխատակազմի անդամներին հետևողականորեն պահպանել վարքագծի չափանիշները:

Խտրականությունից զերծ մնալը

Այս բաժնում կազմակերպությունը կարող է հայտնել իր աշխատակազմի անդամների՝ բոլոր անձանց

անհատականությունը, արժանապատվությունը և հավասարությունը հարգելու պատրաստակամությունը՝ անկախ ռասայական պատկանելիությունից, սեռից, դավանանքից, մաշկի գույնից, ազգային պատկանելությունից, ընտանեկան կարգավիճակից, սեռական կողմնորոշումից, տարիքից, հաշմանդամությունից կամ քաղաքական հայացքներից:

Ոտնձգություններից զերծ մնալը

Այս բաժնում կազմակերպությունը կարող է հայտարարել, որ աշխատակազմի անդամները պարտավորվում են խուսափել ոտնձգության որևէ դրսևորում կատարելուց և իրենց հերթին պարտավորեցնում են կազմակերպությանը ապահովել ոտնձգության դրսևորումներից զերծ աշխատանքային միջավայր: Կարելի է արգելել խտրականության կամ ոտնձգության բոլոր դրսևորումները, այդ թվում՝ ոտնձգություն սեռական կամ գենդերային պատկանելիության հատկանիշով, ինչպես նաև՝ աշխատավայրում կամ աշխատանքային միջավայրում ֆիզիկական չարաշահումը կամ խոսքով վիրավորանքը: Կարելի է զգուշացնել աշխատակազմի անդամներին զերծ մնալ սպառնալիքի, ահաբեկման կամ այլ միջոցներով դրսևորվող այնպիսի պահվածքից, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ճնշի իրենց գործընկերների՝ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու կարողությունները: Աշխատակազմի անդամներին կարելի է բացահայտորեն տեղեկացնել, որ նրանք չեն կարող չարաշահել իրենց պաշտոնական լիազորություններն ի շահ իրենց անձնական դրդապատճառների, այն է՝ իրենց մոտ հակակրանք առաջացնող գործընկերների դիրքերը խարխլելու համար:

Գենդերային հավասարություն

Այս բաժնում կազմակերպությունը կարող է արտահայտել իր պատրաստակամությունը՝ պահպանելու կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքը և նպաստելու գենդերային հավասարության բոլոր խոչընդոտների վերացմանը:

Շահերի բախում

Աշխատակազմի անդամներին հարկավոր է տեղեկացնել շահերի բախում առաջացնող իրավիճակների մասին և նման իրավիճակներում

անհրաժեշտ միջոցառումների մասին: Այդ կապակցությամբ հարկավոր է հստակեցնել այն միջոցառումները, որոնք պետք է ձեռնարկի աշխատակազմի անդամը, եթե նա ստիպված է ի պաշտոնե զբաղվել մի գործով կամ հարցով, որտեղ ինքն ունի ուղղակի կամ անուղղակի ֆինանսական շահ:

Հարկ է նաև հստակեցնել այն հանգամանքը, որ աշխատակազմի անդամները չպետք է իրենց գործընկերներին կամ որևէ երրորդ անձին առաջարկեն կամ խոստանան որևէ արտոնություն, նվեր, վարձատրություն կամ որևէ այլ անձնական շահ՝ դրդելով նրանց կատարել, չկատարել կամ ավելի ուշ կատարել իրենց պաշտոնեական պարտականություններից բխող որևէ գործողություն: Նմանապես, հարկավոր է զգուշացնել աշխատակազմի անդամներին որևէ գործընկերոջից կամ երրորդ անձից չպահանջել կամ չընդունել որևէ արտոնություն, նվեր, վարձատրություն կամ որևէ այլ անձնական շահ, որը նրանց դրդի կատարել, չկատարել կամ ավելի ուշ կատարել իրենց պաշտոնեական պարտականություններից բխող որևէ գործողություն:

Աշխատակազմի անդամներին կարելի է նաև զգուշացնել չկիրառել իրենց պաշտոնեական լիազորությունները կամ իրենց պաշտոնեական գործունեության արդյունքում ստացված գիտելիքները սեփական նյութական շահի կամ որևէ երրորդ անձի, այդ թվում՝ ընտանիքի անդամների, ընկերների և իրենց համակրանքին արժանացած անձանց նյութական շահի համար:

Գույքի և ակտիվների օգտագործում

Այս բաժնում կարելի է ներկայացնել կազմակերպության գույքի և ակտիվների օգտագործումը կարգավորող կանոնները:

Աշխատակազմի ղեկավարման ոլորտում ծագող հարաբերություններ

Այս բաժնում պետք է ընդգծել կազմակերպության աշխատակազմի ղեկավարման ոլորտում ծագող հարաբերություններին առնչվող հարցերը, օրինակ՝ նշել հարգանքի վրա հիմնված միջավայրի ստեղծման կարևորությունը, աշխատակիցների շահերի պաշտպանության ընկերակցություններ կամ միություններ կազմելու իրավունքը, ինչպես նաև աշխատակիցների լիարժեք մասնակցությունը և նրանց խորհրդատվությունն ապահովելու կարևորությունը:

Կապ լրատվամիջոցների հետ

Այս բաժնում կարելի է նշել կազմակերպության կանոնները և կանոնակարգերը լրատվամիջոցների հետ կապի վերաբերյալ, ասել է թե՝ ով կարող է ներկայացնել կազմակերպությունը լրատվամիջոցներին, ինչպիսի տեղեկություններ կարելի է հայտնել, ինչպիսի տեղեկություններ չի կարելի հայտնել և այլն: Այս բաժինը կարող է ներառել նաև լրատվամիջոցների հետ թրաֆիքինգի կանխման ծրագրի շահառուների հաղորդակցմանն առնչվող հարցերը:

Տեղեկատվության օգտագործում և պաշտպանություն

Այս բաժնում կարելի է ներկայացնել կազմակերպության՝ տեղեկատվության փոխանցման կանոնները և կանոնակարգերը, գաղտնի տեղեկատվության պահպանման և նմանատիպ այլ կանոնները: Այս բաժնում կարելի է նաև նշել աշխատակազմի անդամների դերի կարևորությունը և պատասխանատվությունը թրաֆիքինգի կանխման ծրագրի շահառուների տվյալների պաշտպանության համար:

Անվտանգության

Այս բաժնում կարելի է ներկայացնել անվտանգության կանոնները և կանոնակարգերը, որոնք պետք է պահպանեն աշխատակիցները, մասնավորապես՝ թրաֆիքինգի կանխման ծրագրի շահառուներին աջակցող անձինք: Անվտանգության կանոնների օրինակները ներկայացվում են սույն ձեռնարկի 4–րդ գլխի II, III և IV հավելվածներում:

Աշխատակազմի անդամների անհատական վարքագծի կանոնակարգ

Այս բաժնում կարելի է ներկայացնել կազմակերպության աշխատակազմի անդամներից ակնկալվող անհատական վարքագծի չափանիշները: Նման չափանիշներով արգելվող վարքագծի օրինակ է հանդիսանում այն անձանց հետ կապ հաստատելը, ովքեր կասկածվում են ազգային կամ միջազգային օրենքները կամ մարդու իրավունքների չափանիշները խախտող գործունեություն ծավալելու, օրինակ՝ մարդկանց թրաֆիքինգի իրականացման մեջ:

Ապաստարանից դուրս աշխատակիցների զբաղվածությունը և գործունեությունը կարգավորող կանոններ

Այս բաժնում կարելի է նշել կազմակերպության այն կանոնները, որոնցով կարգավորվում են ապաստարանից դուրս աշխատակիցների զբաղվածությունը և գործունեությունը, օրինակ՝ մանկավարժական գործունեություն, որևէ լսարանի առջև ելույթ ունենալու պարտավորություն կամ հրապարակման ենթակա գրքերի կամ հոդվածների պատրաստում, քաղաքական գործունեություն և այլն:

Կողմնակի անձանցից նվերներ, պարգևներ և վարձատրություն ստանալու կարգ

Այս բաժնում կարելի է նշել կազմակերպության աշխատակիցների կողմից նվերների և պարգևների ստացումը կարգավորող կանոնները և այն դեպքերը, երբ դրանց մասին պետք է զեկուցել, ինչպես նաև՝ զեկուցման կարգը:

Հավելված II. Աշխատակազմի անդամների գաղտնիության պահպանման համաձայնագիր

Ես գիտակցում են գաղտնիության պահպանման կարևորությունը ապաստարանի բնակիչների և աշխատակազմի անդամների անվտանգության նկատառումներով:

Պարտավորվում եմ գաղտնի պահել ապաստարանի յուրաքանչյուր բնակչին առնչվող տեղեկությունները և ոչ մեկին չբացահայտել նրա անձնական տվյալները առանց ստանալու նրա կամ արտակարգ իրավիճակներում՝ ինձ վերահսկող աշխատակցի թույլտվությունը:

Պարտավորվում եմ լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ չքննարկել ապաստարանի բնակչի կամ ապաստարանի աշխատանքային հարցերը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նախապես ստանամ անմիջական ղեկավարի միանշանակ թույլտվությունը լրատվամիջոցների հետ հաստատվող կապի բնույթի, նպատակների և սահմանափակումների վերաբերյալ:

Պարտավորվում եմ հանրային վայրերում չքննարկել ապաստարանում բնակվող անձանց գործերը:

Պարտավորվում եմ գաղտնի պահել ապաստարանի գտնվելու վայրը:

Պարտավորվում եմ հանրային վայրերում չքննարկել ապաստարանի աշխատանքին կամ անձնակազմին վերաբերող հարցերը:

Պարտավորվում եմ գաղտնիության պահպանման հետ կապված բոլոր հարցերով և խնդիրներով դիմել իմ անմիջական ղեկավարին:

Գիտակցում եմ, որ իմ կողմից գաղտնիության պահպանման քաղաքականության միտումնավոր խախտումը կարող է առաջ բերել կարգապահական պատասխանատվություն, ներառյալ՝ աշխատանքային պայմանագրի գործողության կասեցում կամ դադարեցում:

Աշխատակցի ստորագրություն	Ապաստարանի տնօրենի ստորագրություն

Հավելված III Ապաստարանում բնակվող անձանց իրավունքները

Այս ապաստարանում բնակվող բոլոր անձինք ունեն հետևյալ իրավունքները.

- արժանապատվության և հարգանքի վրա հիմնված վերաբերմունք,
- գաղտնիության իրավունք,
- մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք,
- ինքնորոշում ծառայությունների մատուցման ծրագրերի մշակման և նպատակների նախանշման հարցերում,
- անձի մշակութային պատկանելության վրա հիմնված վերաբերմունք,
- լիարժեք իրազեկված համաձայնությամբ ծառայություններ ստանալու իրավունք,
- առաջարկվող և մատուցվող ծառայությունների նպատակի վերաբերյալ հասկանալի լեզվով ստույգ տեղեկություններ ստանալու իրավունք,
- ողջամիտ սահմաններում անձնական փաստաթղթերը տեսնելու հնարավորություն:

Եթե որևէ հիմք կա ենթադրելու նշված իրավունքներից որևէ մեկի խախտման վերաբերյալ, կարելի է ապաստարանի տնօրենի հետ հանդիպելու դիմում ներկայացնել, ով անհապաղ կկարգավորի նման խնդիրները:

Հավելված IV Ապաստարանի ընդհանուր կանոններ.

- Հարգանքով և քաղաքավարությամբ վերաբերվել ապաստարանի մյուս բնակիչներին և աշխատակազմի անդամներին:
- Ընդունել և պարտավորվել կատարել ապաստարանի աշխատակազմի անդամների հանձնարարած կենցաղային առաջադրանքները:
- Կոկիկ և մաքուր պահել քնելու տարածքը:
- Հոգատարությամբ և նպատակային օգտագործել ապաստարանի գույքը և ռեսուրսները:
- Ապաստարանը պատասխանատվություն չի կրում այն անձնական իրերի համար, որոնք աշխատակազմի անդամների պահպանությանը չեն հանձնվել:
- Հարկավոր է պահպանել ապաստարանի օրակարգը, ներառյալ՝ արթնանալու և քնելու ժամերը:
- Ապաստարանից դուրս գալու և այդտեղ մուտք գործելու համար անհրաժեշտ է ստանալ աշխատակազմի անդամների թույլտվությունը:
- Հարկավոր է կատարել բժիշկների, հոգեբանների և ապաստարանի աշխատակազմի այլ անդամների նշանակումները:
- Հարկավոր է ընդունել դուրս գրված դեղորայքը նշանակված մասնաբաժիններով և հաճախականությամբ:
- Ապաստարանի բոլոր բնակիչները պետք է հետևողականորեն պահպանեն անձնական հիգիենայի կանոնները:
- Ապաստարանում արգելվում է աղմկել կամ բղավել:
- Ապաստարանում արգելվում է ծխել:
- Կողմնակի անձանց մուտքն արգելող տարածքներ (օրինակ՝ աշխատակազմի անդամների աշխատասենյակներ, բուժզննման համար նախատեսված սենյակ) կարելի է մտնել միայն աշխատակիցների միանշանակ թույլտվությամբ:

Թրաֆիքինգի ենթարկված երեխաների պարագայում հարկավոր է վերանայել ընդհանուր կանոնները՝ հաշվի առնելով նրանց տարիքը և հասունության մակարդակը: Ստորև ներկայացվում է ապաստարանում բնակվող անչափահասների համար նախատեսված կանոնների նմուշը.

- Հոգ տանել սեփական անձի համար և պահպանել անձնական հիգիենայի կանոնները:
- Կատարել կենցաղային աշխատանքներ (հավաքել անկողինը և այլն):
- Հարգանքով վերաբերվել այլ անձանց իրավունքներին, ինչպես նաև սեփական անձին, հոգատարությամբ օգտագործել ունեցվածքը:
- Սերտ համագործակցային հարաբերություններ հաստատել ապաստարանի մյուս բնակիչների, աշխատակազմի անդամների և այլ անձանց հետ:
- Մասնակցել բոլոր ծրագրված միջոցառումներին:

Հավելված V Աշխատակազմի անդամների՝ ապաստարանի բնակիչների մեկնումը կազմակերպելու պարտավորություն

Աշխատակազմի անդամ՝

Ապաստարանի բնակիչ՝

Մեկնումի ամսաթիվ և ժամ՝

Սույն փաստաթուղթը վկայում է ապաստարանի աշխատակիցների կողմից հետևյալ ընթացակարգերի պահպանման մասին:

Ապաստարանից մեկնող թրաֆիքինգի զոհին բացատրել են բոլոր անհրաժեշտ ճամփորդական ընթացակարգերը և մեկնումին հաջորդող գործողությունները, և նա հաստատել է, որ հասկացել է դրանք:

Ապաստարանից մեկնող թրաֆիքինգի զոհը ստորագրել և ստացել է Ապաստարանից մեկնելու ձևի օրինակը:

Ապաստարանից մեկնող թրաֆիքինգի զոհին խնդրել են նաև լրացնել անանուն հարցաթերթիկ ապաստարանի ծառայությունների վերաբերյալ:

Ապաստարանից մեկնող անձը ստացել է հետևյալ փաստաթղթերը.

- «ճամփորդելու կարողությունը» հաստատող փաստաթուղթ,
- անհատական բժշկական թերթիկ և ստացած բուժման մասին վկայող փաստաթղթեր,
- զոհի գործին առնչվող փաստաթղթեր (ներառյալ՝ ստորագրված համաձայնության ձևերը),
- լրացուցիչ ծառայություններ մատուցող կազմակերպությունների կոնտակտային տվյալներ:

Ապաստարանից մեկնող անձին վերադարձվել են նրա գումարը և բոլոր անձնական իրերը, որոնք ապաստարանում մնալու ընթացքում պահվում էին աշխատակազմի անդամների մոտ:

Ապաստարանից մեկնող անձը վերցրել է ապաստարանում պահվող իր ողջ հագուստը և մնացած անձնական իրերը:

Ապաստարանից մեկնող անձն ունի տվյալ եղանակային պայմաններին և ճամփորդությանը համապատասխանող հագուստ և կոշիկ:

Ապաստարանից մեկնող անձին տրամադրվել է(են) հարմար ճամփորդական պայուսակ(ներ) անձնական իրերի համար:

Ապաստարանից մեկնող անձն ստացել է ուղևորության ճաշի փաթեթ:

Ապաստարանից մեկնող անձը վերադարձրել է ապաստարանին պատկանող բոլոր իրերը:

_____	_____
Ապաստարանի աշխատակազմի անդամի ստորագրություն	Ամսաթիվ

Հավելված VI Ապաստարանից մեկնող անձանց հարցաթերթիկ

ԱՊԱՍՏԱՐԱՆԻՑ ՄԵԿՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆԱՆՈՒՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Այս հարցաթերթիկի նպատակն է ամփոփել ապաստարանի բնակիչների կարծիքները, տպավորությունները, գաղափարները և առաջարկությունները, որպեսզի ապաստարանի աշխատակիցները կարողանան ապաստարանի բոլոր բնակիչներին պատշաճ կարգով առաջարկել առավել որակյալ ծառայություններ:

Այս անանուն հարցաթերթիկը ներկայացվելու է այլ հարցաթերթիկների հետ միասին, որոնք հավաքվելու են ամսվա ընթացքում: Ամեն ամսվա վերջում ապաստարանի աշխատակազմի անդամներն աչքի են անցկացնում հարցաթերթիկները՝ ապաստարանում մատուցվող ծառայությունները գնահատելու, վերանայելու և ըստ անհրաժեշտության փոփոխելու համար:

Հետևյալ հարցերին Ձեր պատասխանները շատ կարևոր են մեզ համար.

Արդյո՞ք գտնում եք, որ ապաստարանում Ձեր նկատմամբ ցուցաբերել են ողջամիտ և արդար վերաբերմունք:

☐ միշտ ☐ սովորաբար ☐ հազվադեպ ☐ երբեք

Արդյո՞ք գտնում եք, որ ապաստարանի աշխատակազմի անդամները Ձեզ հաղորդել են պատշաճ տեղեկություններ հասանելի ծառայությունների մասին:

☐ միշտ ☐ սովորաբար ☐ հազվադեպ ☐ երբեք

Արդյո՞ք գտնում եք, որ ապաստարանի աշխատակազմի անդամները Ձեզ հաղորդել են պատշաճ տեղեկություններ Ձեր դեպքի կարգավիճակի մասին:

☐ միշտ ☐ սովորաբար ☐ հազվադեպ ☐ երբեք

Արդյո՞ք գտնում եք, որ աշխատակազմի անդամները պատշաճ կարգով հաշվի են առել Ձեր ցանկությունները և տեսակետները:

☐ միշտ ☐ սովորաբար ☐ հազվադեպ ☐ երբեք

Արդյո՞ք որևէ դիտողություններ ունեք ապաստարանում ստացած հետևյալ ծառայությունների վերաբերյալ.

- ապաստարանի բնակելի տարածք և (կամ) կացարան,
- սնունդ,
- բուժօգնություն,
- խորհրդատվություն
- իրավական աջակցություն,
- ժամանցի կազմակերպում և (կամ) մասնագիտական ուսուցում և (կամ) կրթական գործունեություն:

Արդյո՞ք գոհ եք ապաստարանում մատուցվող ծառայություններից:

Եթե ունենայիք ապաստարանի ծառայություններում որևէ փոփոխություն կատարելու հնարավորություն, ինչը կփոխեիք:

Արդյո՞ք ունեք ապաստարանի հետ կապված այլ դիտողություններ կամ առաջարկություններ:

5

Առողջություն և թրաֆիքինգ

Գլխի բովանդակություն

5.1. Ներածություն
5.2. Թրաֆիքինգի՝ մարդկանց առողջության վրա անդրադարձող հայեցակետեր
5.3. Խնամքի մատուցման էթիկայի և անվտանգության սկզբունքներ
5.4. Թրաֆիքինգի ենթարկված անձանց աշխարհայացքի ընկալում. խնամքի վրա անդրադարձող հարցեր
5.5. Հատուկ նկատառումներ
5.5.1 Մշակութային բանիմացություն
5.5.2 Տրավմա և հիշողություն
5.5.3 Սեռական և գենդերային պատկանելիություն
5.5.4 Խտրականություն և կնոջ ավանդական դերը
5.5.5 Սեռական և վերարտադրողական առողջություն
5.5.6 Սեռական փոքրամասնություններ
5.5.7 Թրաֆիքինգի ենթարկված կանանց երեխաներ
5.6. Երեխաներ և պատանիներ
5.6.1 Խնամքի մատուցում թրաֆիքինգի ենթարկված երեխաներին և պատանիներին
5.6.2 Երեխայի աճն ու զարգացումը, ինչպես նաև չարաշահումների հետևանքները
5.6.3 Երեխաների համար նպաստավոր միջավայր
5.7. Հոգեկան առողջության նկատառումներ թրաֆիքինգից տուժած անձանց խնամքի շրջանակներում
5.7.1 Հոգեկան հիվանդություններ
5.7.2 Հոգեբանական հարկադրում և չարաշահումներ թրաֆիքինգի համատեքստում
5.7.3 Հոգեներգործուն նյութերի չարաշահում և կախվածություն
5.7.4 Ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո գտնվելու ընթացքում սթրեսային իրավիճակների տարածված աղբյուրները
5.8. ՄԻԱՎ և ՁԻԱՀ
5.9. Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված բժշկական աջակցության դատաբժշկական հայեցակետերը
5.10. Բուժաշխատողի և հիվանդի փոխհարաբերությունները
5.11. Բժշկական միջամտության բաղադրիչների մշակումը թրաֆիքինգի հակազդման ծրագրերում
5.12. Դեպքի վարման ուղեցույցներ թրաֆիքինգով պայմանավորված ընդհանուր կլինիկական վիճակների վերաբերյալ
5.12.1 Սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ (սեռավարակներ)
5.12.2 Հոգեկան առողջություն
5.12.3 Սանիտարահիգիենիկ պայմաններ
5.12.4 Թոքախտ
5.12.5 Աշխատանքի անվտանգություն
5.12.6 Պատվաստման միջոցով կանխարգելվող հիվանդություններ

5.12.7 Մնուցում, վնասվածքներ, ատամների հիվանդություններ, քրոնիկ խանգարումներ
5.13. Թրաֆիքինգի ենթարկված անձանց բուժօգնության պլանավորում
5.14. Աջակցության ծրագրի շրջանակները լքող թրաֆիքինգի զոհերի բուժօգնության պլանավորում
5.15. Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների առողջական կարիքները
5.15.1 Հոգեկան ընկճվածություն (սթրես)
5.15.2 Աշխատակազմի անդամներին աջակցելու և սթրեսը նվազեցնելու միջոցներ
5.15.3 Աջակցության մատուցում և հյուծվածության նշանների ճանաչում
5.15.4 Մասնագիտական վտանգ. արյան միջոցով փոխանցվող ախտածին հարուցիչներ
5.15.5 Աշխատակազմի անդամների ուսուցում
5.16. Բուժծառայություններ մատուցող գործընկեր կազմակերպություններ
5.17. Առողջապահական տեղեկատվական համակարգերի կառավարում
5.17.1 Առողջապահական տվյալների կառավարում
5.17.2 Անձնական գործերի տեղեկատվական անվտանգության և գաղտնիության ուղեցույցներ
5.17.3 Տեղեկությունների փոխանակում ծառայություն մատուցողների միջև
5.17.4 Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց՝ իրենց բժշկական փաստաթղթերին մուտք ունենալու իրավունք
Հավելված 1. Բուդապեշտի հռչակագիր
Հավելված 2. Արևմտյան Եվրոպայի երկրներում ընդունված հոգեբանական աջակցության թերապիայի տարածված ձևերի նկարագիր

5.1 Ներածություն

Մինչև վերջերս թրաֆիքինգի հակազդման ոլորտում մատուցվող աջակցությունը հիմնականում կենտրոնացած է եղել տեղեկատվության փոխանակման, քրեագիտական և իրավագիտական համագործակցության, ինչպես նաև վերադարձի և վերաինտեգրման ոլորտներում: Այդուհանդերձ, վերջին մի քանի տարվա ընթացքում մի շարք արձանագրություններ,[1] հռչակագրեր[2] և հրապարակված ուսումնասիրություններ ուշադրությունը բևեռել են թրաֆիքինգի հետ կապված լուրջ առողջական խնդիրներին: Այս փաստաթղթերում ընդգծվում է բուժօգնության նվազագույն չափանիշներ մշակելու, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկված անձանց առողջական կարիքները բավարարելու և թրաֆիքինգից

տուժած համայնքներին համապատասխան մասնագիտացած ծառայություններ մատուցելու անհրաժեշտությունը:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք, անկախ այն բանից, թե արդյոք նրանց դեպքում թրաֆիքինգն իրականացվում է աշխատանքային, սեռական կամ շահագործման այլ ձևերի նպատակով, կանգնում են մի շարք առողջական խնդիրների առջև: Անազատության մեջ գտնվելու ընթացքում նրանք ենթարկվում են ֆիզիկական բռնության, սեռական շահագործման, հոգեբանական չարաշահումների, ապրում են վատ կենսապայմաններում և կարող են ձեռք բերել մի շարք հիվանդություններ, որոնք երկարաժամկետ հետևանքներ կունենան նրանց ֆիզիկական, վերարտադրողական և հոգեկան առողջության համար:[3]

Ճանաչելով այս առողջապահական խնդիրները՝ Բուդապեշտի հռչակագրում (Հավելված 1) նշվում է, որ «պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնել առողջության և հանրային առողջապահության այն հարցերին, որոնք կապված են թրաֆիքինգի հետ»: Մասնավորապես, խորհուրդ է տրվում թրաֆիքինգի զոհերին տրամադրել «համալիր, շարունակական, իրենց սեռին, տարիքին և մշակույթին համապատասխանող բուժօգնություն (...) որակավորված մասնագետների կողմից՝ ապահով և խնամատար միջավայրում»: Այս նպատակով Միգրացիայի միջազգային կազմակերպությունը մշակել է հոգեկան առողջության ծառայությունների մատուցման նվազագույն չափանիշներ:[4]

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ առողջությունը լիարժեք ֆիզիկական, հոգեկան և սոցիալական բարօրության վիճակ է, այլ ոչ թե պարզապես հիվանդության կամ տկարության բացակայություն, և առողջապահություն առավելագույն հասանելի չափանիշի իրականացումը յուրաքանչյուր մարդ արարածի հիմնարար իրավունքներից մեկն է առանց ռասայական պատկանելության, կրոնի, քաղաքական հայացքների, տնտեսական կամ սոցիալական պայմանների տարբերակման:[5]

Մարդու իրավունքների վերաբերյալ մի քանի փաստաթղթերում ընդգծվում է առողջապահության, մարդու իրավունքների և թրաֆիքինգի զոհ դարձած անձանց՝ հնարավորության դեպքում բուժօգնություն ստանալու իրավունքի միջև եղած կապը:[6,7,8,9] Մասնավորապես, «Մարդկանց և հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգը կանխելու, կասեցնելու և պատժելու մասին» 2000 թվականի ՄԱԿ-ի

արձանագրությամբ ճանաչվում են անհատի առողջության վրա անդրադարձող թրաֆիքինգի հետևանքները և դրանց բազում (օրինակ՝ ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական) հայեցակետերը, և հետևաբար առաջարկվում է վերականգնման հարցում որդեգրել բազում ոլորտների ծառայությունների վրա հիմնված մոտեցում:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք ունեն առողջության իրավունք: Համապատասխան քաղաքականություններում և ընթացակարգերում պետք է լիարժեք պահպանվեն անհատի իրավունքները, անխտրականական մոտեցումները և արտացոլվեն համապատասխան միջազգային կոնվենցիաներում և այլ փաստաթղթերում[10] ամրագրված սկզբունքները:

ԳԼԽԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն գլուխն իրենից ներկայացնում է ուղեցույց թրաֆիքինգի զոհ դարձած անձանց բուժօգնություն մատուցելու վերաբերյալ: Այստեղ ներկայացված են տեղեկություններ, որոնք հիմնված են չափանիշային բժշկական արձանագրությունների, գոյություն ունեցող հետազոտությունների, թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող կազմակերպություններում ընդունված ներկայիս ընթացակարգերի, ինչպես նաև հարակից ոլորտներում (օրինակ՝ ներգաղթյալների և փախստականների առողջություն, կանանց դեմ ուղղված բռնություն, չարաշահումներ երեխաների նկատմամբ) ընդունված բժշկական միջամտությունների ռազմավարությունների վրա:

Առողջապահական հարցերին նվիրված սույն գլուխը հարկ է ընթերցել սույն ձեռնարկի այլ գլուխների հետ միասին:

ԽՆԱՄՔԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Բազում երկրներում մարդկային, նյութատեխնիկական ռեսուրսների առկայության և մատչելիության նվազագույն մակարդակի ապահովումը կարող է ազգային առողջապահական մարմինների կարողություններից վեր լինել: Լավագույն ընթացակարգերին ձգտելով հանդերձ՝ անհրաժեշտ է մշակել թրաֆիքինգի ենթարկված անձանց բուժօգնության մատուցման չափանիշներ: Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց աջակցություն մատուցող կազմակերպությունները կարող են համագործակցել համապատասխան երկրների կառավարությունների հետ՝ թրաֆիքինգից տուժած անձանց բուժծառայությունների մատուցման նվազագույն չափանիշների մշակման նպատակով:

5.2 Թրաֆիքինգի՝ մարդկանց առողջության վրա անդրադարձող հայեցակետեր

Թրաֆիքինգի՝ առողջության վրա անդրադարձող հայեցակետերի ուսումնասիրության համաձայն՝ առողջական կարիքները դասակարգվում են երեք խմբի:[11] Այս դասակարգումը հիմնված է.

- թրաֆիքինգի իրականացման գործընթացի համապատասխան փուլերի վրա,
- մեկուսացման և խոցելիության համապատասխան ոլորտների վրա,
- ռիսկերի, չարաշահումների և առողջությանն անդրադարձող հետևանքների վրա:

ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց առողջական ռիսկերն ու կարիքները կարելի է նույնականացնել ըստ թրաֆիքինգ գործընթացի հինգ փուլերի:[12,13] Այս փուլերն են.

- մեկնումից առաջ,
- ճանապարհորդություն և տարանցիկ փոխադրում,
- նպատակակետ երկիր,
- կալանք, արտաքսում և վկայություններ քրեական գործի շրջանակներում,
- ինտեգրում և վերաինտեգրում:

Մեկնումին նախորդող փուլը վերաբերում է այն ժամանակահատվածին, երբ անձը ֆիզիկապես ընկնում է թրաֆիքինգի թակարդը: Այս փուլն արտացոլում է հավաքագրվելու նկատմամբ տվյալ անձի խոցելիությունը, ինչպես նաև մեկնման պահին նրա մոտ առկա հոգեկան և ֆիզիկական առողջության հատկանիշները, որոնք իրենց հերթին անդրադառնալու են տվյալ անձի առողջության և առողջությանն առնչվող վարքագծի վրա թրաֆիքինգի ողջ ընթացքում: Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք հաճախ ծագումով այնպիսի վայրերից են, որտեղ գործում են թերի առողջապահական համակարգեր, որոնք չունեն բավարար ռեսուրսներ և դժվար հասանելի են, ինչը բերում է նրան, որ առկա առողջական խնդիրներից շատ քչերն են ախտորոշվում (եթե առհասարակ ախտորոշվում են) և բուժվում: Այսպիսով,

համապատասխան բժշկական գնահատականներ իրականացնելիս և միջամտություններ պլանավորելիս կարևոր է հաշվի առնել տվյալ անհատի հիվանդության պատմությունը մեկնումից առաջ:

Ճանապարհորդության և տարանցիկ փոխադրման փուլը սկսվում է տվյալ անձի հավաքագրմամբ և ավարտվում նպատակակետ ժամանելու պահին: Այս փուլը հայտնի է որպես «նախնական տրավմայի» փուլ, քանի որ հենց այս փուլում է անհատը գիտակցում, որ խաբեության զոհ է դարձել, հայտնվել կյանքի համար վտանգավոր իրավիճակում և չի վերահսկում իրավիճակը՝ հաճախ ստիպված լինելով փոխադրվել վտանգավոր միջոցներով, ռիսկի դիմել պետական սահմանը հատելիս, ինչպես նաև ենթարկվել ձերբակալության վտանգի և դառնալ սպառնալիքների, ահաբեկման և բռնության, այդ թվում՝ բռնաբարության և սեռական բռնության այլ ձևերի առարկա:

Նպատակակետ երկիր ժամանելու փուլն այն ժամանակահատվածն է, երբ անհատին ստիպում են աշխատել, և նա դառնում է հարկադրման, բռնության, շահագործման, պարտքային ճորտության կամ չարաշահումների այլ տեսակների առարկա: Հազվադեպ երևույթ է, երբ թրաֆիքինգի ենթարկված անձը բուժօգնության կամ այլ աջակցության դիմելու հնարավորություն ունի նախքան թրաֆիքինգի իրավիճակից փրկվելը: Ոմանք թրաֆիքինգի իրավիճակից դուրս են պրծնում՝ ձեռք բերելով բազմաթիվ վարակներ, վնասվածքներ և հիվանդություններ, ինչպես նաև ստանալով պատշաճ բուժօգնության բացակայությամբ պայմանավորված բարդացումներ:

Կալանքի, արտաքսման և քրեական հետաքննության շրջանակներում վկայությունների փուլն իրենից ներկայացնում է այն ժամանակահատվածը, երբ անհատը գտնվում է ոստիկանության կամ ներգաղթային մարմինների հսկողության տակ՝ քրեական կամ ներգաղթային օրենքների ենթադրյալ խախտումների համար, կամ էլ համագործակցում է մարդավաճառի, շահագործող գործատուի կամ այլ չարաշահողի դեմ ուղղված հետաքննության կամ դատավարության շրջանակներում: Կալանքի կենտրոններում պայմանները խիստ ծանր են և լուրջ վտանգ են ներկայացնում ֆիզիկական առողջության համար: Բացի այդ, գրեթե բացառապես իշխանությունների հետ ունեցած շփումները (օրինակ՝ ձերբակալություն, վկայություններ նախաքննության ընթացքում, ցուցմունք քրեական դատավարության ընթացքում) կարող են այնպիսի հետևանքներ թողնել անձի հոգեկան առողջության վրա, որոնք հնարավոր կլինի թեթևացնել միայն հոգեբանական աջակցության միջոցով:

Ինտեգրման և վերաինտեգրման փուլն այն ժամանակահատվածն է, որն իրենից ներկայացնում է երկարատև և բազմակողմ գործընթաց և ավարտվում է այն ժամանակ, երբ տվյալ անհատը դառնում է իր երկրի տնտեսական, մշակութային, քաղաքացիական և քաղաքական կյանքի լիիրավ անդամ:[14] Թրաֆիքինգի թակարդից դուրս պրծնելն ինքնաբերաբար չի երաշխավորում շիտակ ճանապարհ դեպի վերականգնում: Թրաֆիքինգից տուժած անձինք հաճախ վերապրում են անհանգստություն, մեկուսացում, ագրեսիվ զգացումներ կամ վարքագիծ, ինքնախարանում կամ խարանավորում այլ անձանց կողմից, դժվարությամբ են օգտվում անհրաժեշտ ռեսուրսներից և հաղորդակցվում աջակցություն մատուցող անձանց հետ, ինչպես նաև դրսևորում են խնդիրների հաղթահարմանն ուղղված բացասական վարքագիծ (օրինակ՝ ծխախոտ և խմիչք են չարաշահում և թմրամիջոցներ օգտագործում): Այս խնդիրները կարող են էլ ավելի սրվել նախկինում եղած առողջական խնդիրների, ինչպես նաև ընտանիքում և (կամ) համայնքում վերաինտեգրման ընթացքում ակնկալվող դժվարությունների պատճառով:

ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ԵՎ ԽՈՑԵԼԻՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց առողջական կարիքները և ռիսկերը սահմանելու համար՝ կարելի է ուսումնասիրել այլ խոցելի խմբերը, ինչպիսիք են.

- միգրանտները ու փախստականները,
- բռնության, խոշտանգումների, սեռական չարաշահումների, մանկական տարիքում ֆիզիկական և (կամ) սեռական չարաշահումների ենթարկված անձինք,
- մարմնավաճառները, այդ թվում՝ մանկահասակ մարմնավաճառները,
- շահագործման ենթարկվող աշխատողները:

Ենթարկվելով չարաշահումների և շահագործման տարբեր ձևերի և իրենց ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական դրության պատճառով լինելով մեկուսացված՝ թրաֆիքինգի ենթարկված անձինք որոշ ընդհանրություններ ունեն նշված խմբերի հետ՝ խոցելիության և առողջության հետ կապված հատկանիշների առումով: Հաշվի առնելով առողջության և թրաֆիքինգի վերաբերյալ տեղեկատվության սակավությունը՝ օգտակար կլինի ուսումնասիրել գոյություն ունեցող գրականությունը և հետազոտությունները՝ նշված խմբերի առնչությամբ

դիտարկելով ծառայությունների մատուցման մոդելները, որոնք մշակել են նրանց աջակցելու համար:[15,16] Այս տեղեկությունները կարող են օգտագործվել թրաֆիքինգի ենթարկված անձանց պատշաճ բուժծառայությունների մատուցման հետ կապված խնդիրները հաղթահարելու համար:

ՌԻՍԿԵՐ, ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՂ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Թրաֆիքինգին առնչվող ռիսկերի, չարաշահումների և առողջության վրա անդրադարձող հետևանքների մեծ մասը կարող է ի հայտ գալ միաժամանակ կամ համընկնել: Դրանցից մի քանիսն են.

- ֆիզիկական չարաշահումներ կամ ֆիզիկական առողջություն,
- սեռական չարաշահումներ կամ վերարտադրողական առողջություն,
- հոգեբանական չարաշահումներ կամ հոգեկան առողջություն,
- թմրամիջոցների, ալկոհոլի, հոգեներգործուն նյութերի բռնի կամ հարկադրված օգտագործում,
- սոցիալական սահմանափակումներ կամ մանիպուլյացիա կամ սոցիալական բարօրություն,
- տնտեսական շահագործում և պարտքային ճորտություն կամ տնտեսական ապահովություն,
- իրավական անապահովություն կամ իրավական ապահովություն,
- չարաշահման աշխատանքային և կենսապայմաններ կամ մասնագիտական, շրջակա միջավայրի հետ կապված առողջական խնդիրներ,
- ռիսկեր, որոնք կապված են մեկուսացման կամ բուժծառայությունների օգտագործման և մատուցման հետ:

5.3 Խնամքի մատուցման էթիկայի և անվտանգության սկզբունքներ[17]

(Տե՛ս Հավելված 1. «Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ»): Հարկ է հաշվի առնել, որ այն դեպքերում, երբ ստորև բերված տեքստում օգտագործվում է «թրաֆիքինգի ենթարկված անձ» արտահայտությունը,

կամ այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձն անչափահաս է կամ օրինական խնամակալի կարիք ունեցող չափահաս, նշված արտահայտությունը պետք է ընթերցվի «թրաֆիքինգի ենթարկված անձ կամ նրա խնամակալ» իմաստով:

Բոլոր մասնագետները պարտավոր են սատարել իրենց խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգի ենթարկված անձանց և մատուցել նրանց բարօրությանը նպաստող ծառայություններ՝ մշտապես պահպանելով էթիկայի և անվտանգության տարրական սկզբունքները: Քանի որ յուրաքանչյուր մասնագիտական հանդիպում պետք է դիտարկվի որպես թրաֆիքինգի ենթարկված անձի վերականգնման գործընթացի մաս, ուստի և պահանջվում են հատուկ մասնագիտական հմտություններ: Դրական մասնագիտական հանդիպումները կարող են օգնել անհատի մոտ ձևավորել վստահություն այլոց նկատմամբ, մեծացնել նրա ինքնավստահությունը և ներշնչել նրան հույսեր ապագայի վերաբերյալ: Բացասական փորձը կարող է անհատների մոտ առաջացնել ամոթի, խարանավորման, անկարողության և հուսահատության զգացում:

- **Երեխաների (18 տարին չլրացած անձինք), ինչպես նաև այն անհատների պարագայում, ովքեր ունեն հատուկ աջակցության կարիք, օրինակ՝ մտավոր արատ ունեցող անձինք, ստորև բերված սկզբունքները պետք է դիտարկվեն այլ համապատասխան ընթացակարգերի (օրինակ՝ առանց ուղեկցության անչափահասների, խնամակալի կամ օրինական ներկայացուցչի կարիք ունեցող անձանց համար նախատեսված ընթացակարգեր) հետ միասին:**
- **Սույն գլխում բերված սկզբունքները և ուղեցույցները կարող են հավասարապես վերաբերել թրաֆիքինգի զոհ դարձած աշխատունակ անձանց (չափահաս անձինք, ովքեր ունեն հասկանալու, հաղորդակցվելու և սեփական կյանքի վերաբերյալ իրազեկված որոշումներ կայացնելու կարողություն), ինչպես նաև այն երեխաներին և մեծահասակներին, ովքեր ունեն վերոնշյալ հատուկ աջակցության կարիք:**
- **Բուժաշխատողները և այլ մասնագետները պետք է մշտապես գործեն ամենայն բարեխղճությամբ՝ ելնելով երեխայի կամ հատուկ կարիքներ ունեցող չափահաս անձանց լավագույն շահերից:**

ՎՆԱՍ ՄԻ ՊԱՏՃԱՌԵՔ

Վնաս չպատճառելը բժշկական էթիկայի կանոնների առաջնային սկզբունքն է: Հաշվի առնելով թրաֆիքինգի հետ կապված ծայրահեղ ռիսկերը, զոհերի խոցելի վիճակը և ավելի մեծ տրավմայի ենթարկվելու հնարավորությունը՝ այս տարրական կանոնը չի կարելի թերագնահատել: Յուրաքանչյուր բուժաշխատողի էթիկական պարտավորությունն է գնահատել վնասի ենթարկվելու հավանականությունը, և եթե կան որևէ հիմքեր կարծելու, որ հարցազրույցի կամ զննման անցկացումը կամ համապատասխան ընթացակարգը տվյալ անհատին վնաս կպատճառի, ապա նման գործողություն տվյալ պահին չպետք է ձեռնարկվի: Յուրաքանչյուր անհատի նկատմամբ կամ յուրաքանչյուր իրավիճակում հարկավոր է վարվել այնպես, կարծես կա վնասի ենթարկվելու լուրջ վտանգ այնքան ժամանակ, մինչև չապացուցվի հակառակը:

ԱՊԱՀՈՎԵԼ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի ենթարկված անձի հետ խոսելուց առաջ խիստ կարևոր է համոզվել, որ նա իրեն ապահով և անվտանգ է զգում: Նույնիսկ եթե անհատի անվտանգությանը սպառնացող ռիսկերն ուսումնասիրվել են նախկինում այլ նպատակներով, միևնույն է աջակցություն մատուցող անձինք պարտավոր են պարզել այն հարցը, թե արդյոք տվյալ անձն իրեն ապահով է զգում այդ պահին, և արդյոք կարելի է որևէ բան անել նրան ապահովության ավելի մեծ զգացում հաղորդելու համար:

Կարևոր է, որ թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հարց տրվի, թե արդյոք նրանք ունեն բուժօգնության անմիջական կարիք: Ֆիզիկական և հոգեբանական ախտանիշերը կարող են սրվել հատկապես այն ժամանակ, երբ անձը գտնվում է իր համար հոգեպես ճնշող իրավիճակում, օրինակ՝ հարցազրույցի ժամանակ կամ հայտնվում է որևէ ծառայություն մատուցող կազմակերպությունում: Աջակցություն մատուցող անձինք պետք է մասնավորապես տան հետևյալ հարցերը.

- «Ինչպիսի՞ն է այժմ Ձեր ինքնազգացողությունը»:
- «Արդյո՞ք ներկա պահին որևէ ցավ կամ գանգատ ունեք, կամ արդյո՞ք ունեք որևէ առողջական խնդիր, որի համար ցանկանում եք բժշկի կամ բուժքրոջ դիմել» (բուժաշխատողի պարագայում՝ «...գանգատներ կամ առողջական խնդիրներ, որոնց մասին ցանկանում եք պատմել ինձ նախքան մեր զրույցի սկիզբը»):

5.4 Թրաֆիքինգի ենթարկված անձանց աշխարհայացքի ընկալում. խնամքի վրա անդրադարձող հարցեր

Բուժաշխատողները պետք է հասկանան, որ նախկինում կրած չարաշահումներին, ինչպես նաև անցյալ և ապագա իրադարձություններին առնչվող սթրեսային ապրումները կարող են որոշակի ազդեցություն թողնել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց վրա: Չնայած նրան, որ բուժաշխատողը և կազմակերպության աշխատակազմի անդամները կարող են ունենալ բարի և մեծահոգի մտադրություններ, բայց և այնպես թրաֆիքինգի ենթարկված անձի պատասխան ռեակցիան կարող է նրանց թույլ չտալ իրականացնել իրենց աշխատանքը և խոչընդոտ դառնալ նրա վերականգնման համար:

Զգուշացում. թրաֆիքինգից տուժած անձի կողմից ցուցաբերած ամեն տեսակի վարքագիծն ու հույզերը որպես կրած տրավմայի դրսևորում դիտարկելուց առաջ հարկ է հաշվի առնել, որ որոշակի վարքագիծը կարող է ինքնապաշտպանական ռեակցիա հանդիսանալ ենթադրյալ կամ փաստացի վտանգի նկատմամբ: Խիստ կարևոր է անմիջապես պարզել այն հարցը, թե արդյոք նման անհանգստությունը, խոսելու դժկամությունը կամ սթրեսային պատասխան ռեակցիան կապված է ներկա և իրական սպառնալիքների հետ, ինչպիսիք են՝ մարդավաճառների կողմից պատժամիջոցների ենթարկվելու կամ այլ անձանց (օրինակ՝ ընտանիքի անդամների, ապաստարանի այլ բնակիչների կամ նախկին գործընկերների) կողմից վնաս կրելու և պարսավանքի արժանանալու մտավախությունը:

ԱՀԱԲԵԿՈՒՄ ՎԵՐԱՊՐԵԼԸ

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց վկայություններից երևում է, որ մարդավաճառների, գործատուների և կավատների կողմից օգտագործվող վերահսկման հնարքները նմանվում են խոշտանգումներ, ընտանեկան բռնություն կամ երեխաների չարաշահումներ իրականացնող հանցագործների կողմից կիրառվող հետևյալ հնարքներին.[18]

- **ահաբեկում՝** սերմանել շարունակական և անդադար վախ,
- **սուտ և խաբեություն՝** քայքայել անհատների մոտ ինքնաընկալման վստահությունը և շրջապատող աշխարհի ընկալումը,

- **ստեղծել և պահպանել անկանխատեսելի և անվերահսկելի պայմաններ՝** ապակայունացնել անհատներին, և քայքայել իրադարձությունները ծրագրելու և կանխատեսելու նրանց կարողությունը, որը հիմնված է աշխարհի վերաբերյալ նախկին գաղափարների վրա՝ այսպիսով ստիպելով նրանց հրաժարվել կյանքի նախկին ռազմավարություններից և փոխարինել դրանք արձագանքային և ինքնապաշտպանական գոյատևման ռազմավարություններով,
- **վերացնել որոշումներ կայացնելու բոլոր լիազորությունները՝** ստեղծել անհատի մոտ այն զգացումը, որ նրա բարօրությունը կամ բուն գոյատևումը կախված են հանցագործին գոհացնելուց և միշտ մնում են նրա հայեցողությանը,
- **հուզական մանիպուլյացիա՝** պահպանել վերահսկում և մտերմություն անհատի հետ՝ մանիպուլյացիայի ենթարկելով նրա զգացումները, ինչպիսիք են՝ սերն ու կախվածությունը (սա վերաբերում է այն անձանց, ովքեր գտնվում են հանցագործի հետ մտերիմ զուգընկերոջ հարաբերություններում): Այս մանիպուլյացիան սովորաբար ենթադրում է մարդավաճառների կողմից թրաֆիքինգի որոշ կեղծ դրական արժանիքներն ընդգծելու փորձ, որպեսզի դրանք թրաֆիքինգի զոհ դարձած անձանց մտածելակերպին համապատասխան՝ նրանց մոտ դրական արձագանք առաջացնեն, օրինակ՝ պատմելով, թե ինչպես ճանապարհորդությունն ու աշխատանքը նրանց հնարավորություն կտան ավելի շատ գումար ուղարկել իրենց ընտանիքի անդամներին, կատարել սոցիալական և կրոնական պարտավորություններ, իրագործել սեփական երազանքները և դեպի ավելի լավ կյանք ունեցած ձգտումները:

Բռնության, հարկադրման և հոգեբանական մանիպուլյացիայի այս ձևերի նպատակն է անձին դնել կախյալ և ստորադաս դիրքում՝ ոչնչացնելով նրա մոտ սեփական «Ես»-ի զգացումը և կապն այլ անձանց հետ:

Նախ և առաջ, անձը դրվում է «գոյատևման ծայրահեղ պայմաններում» և ստիպված է լինում առերեսվել մահվան իրական վտանգին:[19] Հանցագործը հայտնում է իր զոհին, որ վերջինս այլևս չի վերահսկում իր անվտանգությունը, փոխարենը՝ այն ամբողջությամբ հայտնվում է հանցագործի ձեռքերում:

Երկրորդ փուլը ներառում է «ֆիզիկական հյուծում»: Մարդկանց ստիպում են անընդհատ աշխատել առանց որևէ ազատ ժամանակի

կամ տրամադրելով նրանց միայն նվազագույն հանգստի հնարավորություն, ինչը հանցագործերին տալիս է զոհերին վերահսկելու զգալի կարողություն: Չունենալով վերականգնելու ժամանակ՝ անհատը հյուծվում է և այլևս ի վիճակի չէ մշակել կամ ծրագրել ինքնապաշտպանական ռազմավարություններ՝ ստիպված լինելով պարզապես կենտրոնանալ հրամաններին և ընկալվող սպառնալիքներին ըստ հարկի արձագանքելու վրա:

Կախվածություն առաջացնելու վերջնական տարրերն են՝ հսկողությունն ու մեկուսացումը:[20] Այն իրավիճակներում, երբ կա գերող և գերի, թրաֆիքինգի ենթարկված անձի միակ զգալի շփումը մարդավաճառի հետ է. արդյունքում աշխարհի և սեփական անձի ընկալումն արտացոլում է մարդավաճառի աղճատված և շեղված պատկերացումները: Այսպես, անձը զրկվում է իր անհատականությունից, որը պարզապես արտացոլում է հանցագործի պահանջները: Թրաֆիքինգին ի պատասխան բազում զոհերի դրսևորած ռեակցիաները կրում են հոգեբանական և ֆիզիոլոգիական բնույթ կամ իրենցից ներկայացնում են խնդիրների հաղթահարման այնպիսի մեխանիզմներ, որոնք տվյալ անհատն ի վիճակի չէ ոչ գիտակցել, ոչ էլ վերահսկել:

(Անձի հոգեկան առողջության վրա անդրադարձող թրաֆիքինգի հետևանքների մանրամասն քննարկումը կարելի է գտնել սույն գլխի ստորև բերված «Կլինիկական ուղեցույց» բաժնի 5.5 և 5.8 ենթակետերում՝ «Հատուկ նկատառումներ» և «Հոգեկան առողջություն»):

ՄՏԱՎԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեև թրաֆիքինգի ենթարկվելու ընթացքում վերապրած փորձի բազում արձագանքներ կարող են կապված լինել ի հայտ եկած գոյատևման ռազմավարությունների հետ, այլ ռեակցիաները կարող են վերագրվել տվյալ անհատի ունեցած մտահոգությանն իր ներկայի և ապագայի կապակցությամբ:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք իրենց հայրենիքից դուրս ամենայն հավանականությամբ կանգնում են բոլոր այն խնդիրների առջև, որոնք կապված են ներգաղթյալի կամ փախստականի կարգավիճակի հետ: Այս խնդիրների շարքում են՝ օտարացումը, լեզվական և մշակութային արգելքները, անհանգստությունը կացության, երկրում մնալու և վերադառնալու կապակցությամբ, ինչպես նաև ծառայություն մատուցող կազմակերպությունից կախվածության և նրան ավելորդ ապավինելու զգացումները:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք կարող են նաև բախվել հասարակության կողմից հնարավոր կամ փաստացի պարսավանքի կամ ստորացման արդյունքում առաջացած սթրեսային իրավիճակների, ինչը պայմանավորված է նրանց հետ պատահածով: Հազվադեպ երևույթ չէ, երբ թրաֆիքինգի զոհ դարձած անձին վանում կամ մեկուսացնում է հենց իր ընտանիքը կամ համայնքը, քանի որ նա ստիպված է եղել որպես մարմնավաճառ աշխատել, ենթարկվել է սեռական չարաշահումների, չի ուղարկել տուն խոստացած գումարը կամ չի մարել պարտքերը:

ԱՐՁԱԳԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾ ԵՎ ԱՋԱԿՑԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՌԵԱԿՑԻԱ

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հետ աշխատող բոլոր մասնագետները պետք է փորձեն հասկանալ այն պատճառները, որոնցով պայմանավորված է նրանց վարքագիծը: Նման իրողությունը կօգնի հասկանալ, թե ինչպես նրանց լավագույնս աջակցություն մատուցել և պարզել խնամքից հրաժարվելու, հետագա այցելությունների համար չներկայանալու կամ նշանակված դեղորայքը չընդունելու պատճառները: Ամեն մարդ յուրովի է արձագանքում թրաֆիքինգի ընթացքում ունեցած ապրումներին: Շատերը կարող են խոցված և վիատ տեսք ունենալ, մինչդեռ այլ մարդիկ կարող են դրսևորել ավելի մեծ անկախություն և ինքնավստահություն: Բոլոր դեպքերում կիրառվում են աջակցության նույն սկզբունքները: Հարկավոր է մշտապես հարգել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց իրավունքները, նրանց վերաբերել որպես անհատների և մատուցել հնարավորինս լավագույն խնամքը:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց մատուցվող ծառայությունների հետ կապված առավել զգալի բարդությունները պայմանավորված են այլ մարդկանց և սեփական անձի նկատմամբ վստահության պակասով, ինչպես նաև սեփական կյանքը վերահսկելու կարողության կորստի զգացումով: Սեփական մարմինը և դրա հետ պատահածը վերահսկելու կարողության կորուստը (օրինակ՝ սեռական չարաշահումներ, հարկադիր վտանգավոր աշխատանք և այլն) հատկապես վերաբերում է նրանց, ովքեր հայտնվում են բժշկական հաստատություններում, որտեղ էլ ստիպված են սեփական մարմնի հսկողությունը որոշ իմաստով հանձնել բուժաշխատողին:

Ծառայություն մատուցող կազմակերպության պայմաններում վստահությունը շատ կարևոր դեր ունի, սակայն թրաֆիքինգի ենթարկված անձի պարագայում մեկ ուրիշին վստահելը և նրա

աջակցությունն ընդունելը նշանակում է իր սեփական կյանքի նկատմամբ հսկողությունը հանձնել մեկ ուրիշին: Անշուշտ, տարօրինակ է, որ օգնությունից հրաժարվելու (շատ դեպքերում կործանելով ինքն իրեն) պարագայում նման անձանց մոտ այն տպավորությունն է ստեղծվում, որ նրանք վերահսկում են իրավիճակը, քանի որ հենց իրենք են որոշում կայացնում, այլ ոչ թե ուրիշները՝ նրանց փոխարեն:

Հետևյալ աղյուսակում ներկայացված են թրաֆիքինգի ենթարկված անձանց մոտ արձանագրվող առավել տարածված հույզերը, որոնք վկայում են այն պատասխան ռեակցիայի մասին, որը կարող է անդրադառնալ ծառայությունների մատուցման վրա: Աղյուսակում առաջարկվում են աջակցության եղանակներ, որոնցով կարող է առաջնորդվել ծառայություն մատուցողը:

Լրացուցիչ մանրամասներ կարելի է գտնել 5.5, 5.7.1 և 5.8 բաժիններում հետևյալ խորագրերով՝ «Հատուկ նկատառումներ», «Հոգեկան առողջություն», «ՄԻԱՎ/ՁԻԱՀ»:

Ծառայություն մատուցող կազմակերպության պայմաններում ձեռնարկվող աջակցային գործողություններ՝ ի պատասխան թրաֆիքինգի ընթացքում կրած ապրումներով պայմանավորված արձագանքին.[21]

Տարածված պատասխան ռեակցիա թրաֆիքինգին	Ինչպես են դրսևորվում պատասխան ռեակցիաները ծառայություն մատուցող կազմակերպության պայմաններում	Աջակցային պատասխան գործողություններ բացասական ռեակցիաների պարագայում
Վախ, անապահովության և տագնապի զգացում	Մարդկանց հանդիպելու, դուրս գալու կամ մենակ մնալու դժկամություն, դող, ցնցումներ կամ արագասրտություն, անքնություն, մղձավանջներ, տեղում նստելու կամ կենտրոնանալու դժվարություն	Անվտանգության միջոցառումների իրականացում, անվտանգության միջոցառումների նկարագիր և հաստատում, գաղտնիություն և ֆիզիկական վայրի անվտանգություն, ուղեկցում այցելությունների կամ այլ գործերով դուրս գալու ժամանակ
Անվստահություն այլոց նկատմամբ	Անվստահություն ծառայություն մատուցողի և նրա առաջարկած օգնության հանդեպ, տեղեկություններ հայտնելու դժկամություն, կեղծ տեղեկությունների հայտնում, դժվարություններ աջակցություն մատուցող անձանց, ապաստարանի այլ բնակիչների, ծրագրում ընդգրկված այլ անձանց, ընտանիքի անդամների և այլ անձանց հետ ունեցած փոխհարաբերություններում	Համբերություն և հետևողականություն հարաբերություններ ձևավորելիս, գործնական և բարոյական աջակցության անվերապահ մատուցում, հաճախակի զրույցներ թրաֆիքինգի զոհերի կարիքների և բարօրության վերաբերյալ:
Անվստահություն սեփական անձի նկատմամբ, ցածր ինքնագնահատական	Պասիվություն, որոշումներ կայացնելու կամ սեփական որոշումներով առաջնորդվելու դժվարություն, ապագա գործողություններ ծրագրելու դժվարություն, գերզգայունություն այլոց կամ արտաքին ազդակների նկատմամբ	Պարզ առաջադրանքների հանձնարարում, կարճաժամկետ նպատակների նախանշում, կարճաժամկետ ձեռքբերումների խթանում, նվաճումների հաստատում
Ինքնախարազանում, մեղքի և ամոթի զգացում	Տեսողական կոնտակտ հաստատելու կամ արտահայտվելու դժվարություն, դեպքերի և ապրումների մանրամասները բացահայտելու դժվարություն, բուժզննում կամ այլ բժշկական հետազոտություններ անցնելու դժկամություն	Հարկավոր է թրաֆիքինգի զոհերին հավաստիացնել, որ իրենք մեղք չունեն իրենց հետ պատահածի համար, հիշեցնել, որ թրաֆիքինգի հանցատեսակից տուժել են շատերը, և նրանք մենակ չեն, հիշեցնել ծայրահեղ պայմաններում նրանց դրսևորած համարձակության և հնարամտության մասին

Զայրույթ սեփական անձի և այլոց հանդեպ	Թշնամական կամ ագրեսիվ վերաբերմունք աջակցություն մատուցող անձանց կամ այլոց (օրինակ՝ ապաստարանի այլ բնակիչների և ընտանիքի անդամների) նկատմամբ, ինքն իրեն վնաս պատճառելու հակում, սեփական ապաքինման գործընթացի խափանում, չափից դուրս բուռն արձագանք, շրջապատող մարդկանց հետ հաղորդակցվելու դժկամություն, համագործակցությունից հրաժարվելը կամ անշնորհակալ վարքագիծ	Համբերատարություն և հանգստություն պահպանել ի պատասխան թշնամական վերաբերմունքի, զսպել զայրույթը կամ վրդովմունքը, ողջամիտ և համաչափ միջոցներ ձեռնարկել՝ թրաֆիքինգի զոհերի և այլոց անվտանգությունն ապահովելու համար
Հիշողության կորուստ, դիսոցիատիվ խանգարումներ	Անցյալի իրադարձությունների մանրամասները կամ ամբողջ միջադեպերը վերհիշելու անկարողություն, արձագանքելու կամ հարցերին պատասխանելու թվացյալ դժկամություն	Ձերծ մնալ դատողություններից, քննադատությունից, ճնշումից կամ ահաբեկումից, հասկանալ որոշ մարդկանց համար անցյալը մոռանալու կարևորությունը
Օտարացում, մեկուսացում	Վհատություն, ընկճախտ, մեկուսացում շրջապատից, անտարբերություն միջավայրի նկատմամբ, թվացյալ ինքնակենտրոնացում կամ եսասիրություն, համոզմունք, որ ոչ ոք չի կարող հասկանալ իրենց	Առաջարկել հեռախոսով (կամ կապի այլ միջոցներով) կապ հաստատել ընտանիքի, ընկերների և այլ անձանց հետ, անմիջական կամ խմբային միջոցառումներին մասնակցելու հնարավորություն, կազմակերպել համապատասխան միջոցառումներ կամ տալ հանձնարարություններ
Կախվածություն, հաճոյանալու ձգտում կամ պաշտպանական վարքագիծ	Որոշումներ կայացնելու անկարողություն կամ դժկամություն, հաճոյանալու ձգտում, ազդեցության տակ ընկնելու հակում, սեփական հայացքները կամ ցանկություններն արտահայտելու և հաստատելու անկարողություն, մշտապես գանգատվելու հակում, օգնություն կամ խորհուրդ ընդունելու դժկամություն	Տալ պարզ հանձնարարություններ, նախանշել իրագործելի նպատակներ, ամրապնդել անձանց կարողությունները և հմտությունները, չխրախուսել կախվածությունը՝ չստանձնելով անձի բարեկեցության համար ողջ պատասխանատվությունը (հնարավորություն տալ նրան ընտրելու աջակցության տեսակը և դրա մատուցման ժամանակը)

5.5 ՀԱՏՈՒԿ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

Այս բաժնում անդրադարձ է կատարվում առանձին ուշադրություն պահանջող հարցերին կամ թրաֆիքինգի ենթարկված անձանց աջակցության ընթացակարգերին: Այս բաժնի նպատակն է բնութագրել մշակութային բանիմացությունը (ասել է թե՝ մշակութային առումով նրբանկատ խնամք մատուցելը), ընդգծել գենդերային պատկանելիությամբ պայմանավորված առանձին խոցելի երևույթները և հատուկ կարիքները, պարզաբանել որոշ փաստեր ՄԻԱՎ/ՁԻԱՀԻ

վերաբերյալ, ուշադրություն հրավիրել հոգեներգործուն նյութերի չարաշահման հիմնախնդրին և քննարկել բուժաշխատողի և հիվանդի փոխհարաբերությունների որոշ բարդ կողմերը:

5.5.1 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՆԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ

«Մշակութային բանիմացություն» եզրույթը հաճախ է օգտագործվում բժշկական և ոչ բժշկական իրավիճակներում՝ անդրադառնալով բուժօգնության և հիվանդների ու բուժաշխատողների միջև հաստատված փոխհարաբերությունների վրա էթնիկական, ռասայական, ազգային, սոցիալական և լեզվական գործոնների ազդեցությանը: Մշակութային բանիմացության ձևավորումը ենթադրում է մշակութային տարբերությունների ընդունում և ընկալում բերված բոլոր իմաստներով: Նման տարբերություններին ըստ հարկի արձագանքելը ոչ միայն անհրաժեշտ է արդյունավետ խնամք մատուցելու համար, այլև իրենից ներկայացնում է պարտավորություն, որը սահմանված է միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների փաստաթղթերում, օրինակ՝ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում»:[22]

Մշակութային բանիմացությունը սահմանվել է որպես «գիտելիքների, մոտեցումների և հմտությունների բարդ համադրություն, որը նպաստում է այլոց հետ միջմշակութային հաղորդակցմանը և պատշաճ և (կամ) արդյունավետ փոխազդեցությանը»: Այն ներառում է.

- **այլ մարդկանց համոզմունքների և վարքագծի վրա մշակույթի ազդեցության իմացությունը,**
- **սեփական մշակութային առանձնահատկությունների և կանխակալ կարծիքների, ինչպես նաև այլոց վրա դրանց ազդեցության իմացությունը,**
- **սոցիալ-քաղաքական, բնապահպանական և տնտեսական համատեքստի ազդեցության ընկալումը որևէ կոնկրետ իրավիճակում:[23]**

Բուժաշխատողների, նրանց հաճախորդների և վերջիններիս խնամքի մատուցման պայմանների բազմազանության պատճառով մշակութային բանիմացության ձևավորումը պահանջում է ժամանակի և

ռեսուրսների լուրջ ներդրում: Այն ենթադրում է այնպիսի մոտեցումների, վարքագծի, գիտելիքների և հմտությունների ձեռքբերում, որոնք գրեթե միշտ պետք է ուսուցանվեն (կամ առնվազն պետք է յուրացվեն ուսումնական գործընթացի միջոցով) և անհերքելիորեն պահանջում են ինչպես ղեկավարության, այնպես էլ աշխատակազմի անդամների շահագրգռվածությունն ու պատրաստակամությունը:

Հոգեկան ընկճվածությունը դրսևորվում է տարբեր եղանակներով և կարող է գնահատման և ընկալման համար բարդ վարքագծի տեսք ստանալ: Թյուրիմացությունները կարող են սխալ ախտորոշման բերել:

Հոգեկան առողջության ոլորտում ախտորոշման և աջակցության ընթացքում հարկավոր է հաշվի առնել այն իրողությունը, որ հոգեբանական պատասխան ռեակցիաները պայմանավորված են մշակութային և սոցիալական առանձնահատկություններով: Անհատական ապրումները և տրավմատիկ իրադարձություններին արձագանքելու առանձնահատկությունները պայմանավորված են անձնական պատմությամբ և փորձով: Ընտանիքում, համայնքում և հասարակությունում որևէ տրավմատիկ իրադարձություն վերապրելու և դրան արձագանքելու ընդունված եղանակներն ամենայն հավանականությամբ անդրադառնում են թրաֆիքինգի ենթարկված անձի պատասխան ռեակցիայի վրա:

Մեկ հասարակությունում ընդունված գաղափարային մոդելները կարող են անբավարար կամ ոչ պատշաճ լինել մեկ այլ մշակույթում կամ միջավայրում ծագած խնդիրներին անդրադառնալու համար: Արևմտյան երկրներում ընդունված աջակցության ռազմավարությունները կարող են խորթ և նույնիսկ վիրավորական թվալ այլ մշակույթների ներքո տրավմատիկ իրադարձություններին անդրադառնալու եղանակների համեմատ: Օրինակ՝ քննարկումներ կամ անցած իրադարձությունների մասին պատմություններ խրախուսելը, որոնք կարող են թույլ մխիթարանք լինել այն անձանց համար, ովքեր մեծացել են այնպիսի մշակույթների ներքո, որոնցում որևէ բան մոռացության մատնելն անցած դժվարությունները հաղթահարելու ընդունված միջոց է, կամ էլ այնպիսի մշակույթների ներքո, որոնցում ինտիմ կամ ամոթալի մանրամասների բացահայտումը ընդունված չէ ընտանեկան միջավայրից դուրս:[24]

Մեծ թիվ են կազմում այն մշակույթները, որոնց ներկայացուցիչների

համար խորհրդատվության գաղափարն ինքնին բացասական է և նույնիսկ ենթադրում է վտանգավոր իրողություններ: Օրինակ, այն անձանց պարագայում, ովքեր ծագումով այնպիսի երկրներից են, որտեղ հոգեբուժությունն ասոցիացվում է հատուկ հաստատություններ տեղափոխվելու հետ, կամ էլ ովքեր մեծացել են այնպիսի մշակույթների ներքո, որոնցում որպես ոչ բնական իրողություն է դիտարկվում «որևէ մեկի գիտակցությանը միջնորդելը», կարող են խիստ առարկել, վախենալ կամ էլ ավելի մեծ հոգեկան ընկճվածություն ապրել խորհրդատվական միջոցառումներին մասնակցելուց հետո: Ուստի և, պատշաճ աջակցություն մատուցելու համար՝ բուժաշխատողները պետք է փորձեն տեղեկություններ ձեռք բերել իրենց հաճախորդների մշակույթի և կրոնի վերաբերյալ:

Այդ նպատակով բուժաշխատողները կարող են տալ հետևյալ հարցը. «Եթե հայրենիքում լինեիք, ինչպե՞ս կարծագանքեիք Ձեր խնդիրներին կամ ապրումներին»: Այսպիսով, աջակցություն մատուցող անձինք կարող են օգնել անհատներին օգտվել այնպիսի ռեսուրսներից, որոնք կարող են օգտակար լինել նրանց համար, օրինակ՝ այցելել կրոնական հաստատություններ, դիմել կրոնական առաջնորդներին կամ ավանդական բուժարարներին կամ էլ իրականացնել ծիսակատարություններ:

Իրենց աշխատանքի բերումով տարբեր ազգությունների թրաֆիքինգի զոհերի հետ առնչվող անհատներն անհրաժեշտ մշակութային բանիմացություն ձևավորելու համար պետք է քննադատաբար գնահատեն սեփական անձը՝ տարբեր ազգությունների և մշակույթների վերաբերյալ ունեցած կարծրատիպերը, նախապաշարմունքները և կանխակալ մոտեցումները ի հայտ բերելու և շտկելու նպատակով: Առավել տարածված նախապաշարմունքները վերաբերում են տնտեսական և սոցիալական խավին, ասել է թե՝ տարբերություն են դնում ֆինանսապես առավել և պակաս ապահով անձանց, ինչպես նաև առավել և պակաս կրթված անձանց միջև: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բուժաշխատողները և աջակցություն մատուցող մասնագետները պատկանում են իրենց հաճախորդների համեմատ առավել նպաստավոր դիրքում գտնվող տնտեսական կամ սոցիալական խավին, խիստ կարևոր է դիտարկել, թե նման առավելություններն ինչպես են անդրադառնում աղքատ և կրթություն չստացած խավին պատկանող հաճախորդների նկատմամբ նրանց վերաբերմունքի և բուժման վրա: Թրաֆիքինգի զոհ դարձած բոլոր անձինք պետք է արժանան հարգալից վերաբերմունքի, և նրանց հետ

խոսելիս հարկավոր է ապահովել պարզ հաղորդակցում և ընկալում, այլ ոչ թե ներողամիտ մոտեցում ցուցաբերել:

Մշակութային բանիմացության ձևավորման հաջորդ փուլում բուժաշխատողը պետք է ծանոթանա ավանդական բուժական համակարգերին և համոզմունքներին, հարգանք դրսևորի դրանց նկատմամբ և մասնավորապես այն մշակութային խմբերի նկատմամբ, որոնց հետ առնչվում է: Բուժաշխատողները պետք է այդ մոտեցումներն ընդգրկեն իրենց բուժման ծրագրերում՝ պատշաճ և հնարավոր լինելու դեպքում:

Բացի այդ, օգտակար կլինի հնարավորության դեպքում դիմել մշակութային միջնորդների: Մշակութային միջնորդը նա է, ով ընկալում է ինչպես միգրանտի, այնպես էլ գերակա մշակույթի շարժառիթները, սովորույթները և սահմանված կանոնները:[25] Նման անձը կարող է օգնել հաճախորդին ավելի լավ հասկանալ ծառայություն մատուցող կազմակերպության մասնագետին և հակառակը:

Մշակութային բանիմացության վրա հիմնված ծառայությունները պետք է դիտարկվեն որպես բոլոր անհատների բարօրության համար առանցքային նշանակություն ունեցող իրողություններ: Աշխատակազմի անդամներին խորհուրդ է տրվում ուսուցում անցնել և ձեռք բերել այնպիսի մոտեցումներ, վարքագիծ, գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են ինչպես թրաֆիքինգի ենթարկված անձանց, այնպես էլ միմյանց հետ մշակութորեն բազմազան միջավայրում պատշաճ հարգանքով և արդյունավետությամբ աշխատելու համար:

5.5.2 ՏՐԱՎՄԱ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Արտասովոր երևույթ չէ, որ թրաֆիքինգի հետ կապված տրավմաներ կրած անձինք ի վիճակի չեն վերհիշել իրադարձությունների մանրամասները, այդ թվում՝ անունները, ամսաթվերը և վայրերը: Արտասովոր չէ նաև այն, որ նման անձինք ժամանակի ընթացքում այլ կերպ են վերհիշում նման իրադարձությունները: Հիշողության կորուստը հատկապես սրվում է «նախնական տրավմայի»[26] ժամանակահատվածում, կամ երբ տվյալ անձն առաջին անգամ է գիտակցում վտանգը, ինչն էլ հաճախ համընկնում է այն ժամանակահատվածի հետ, որի առնչությամբ պաշտոնատար անձինք ցանկանում են տեղեկատվություն ստանալ (ասել է թե՝ իմանալ ճանապարհորդության պայմանները, թրաֆիքինգին մասնակցող գործակալների անունները, մուտքի կետերը և այլն):

Տրավմա կրելու պահին իրականությունն ընկալելու և մտապահելու կարողությունը խափանող ֆիզիոլոգիական և հոգեբանական արձագանքման մեխանիզմները կարող են թույլ չտալ նշված անհատներին վերհիշել նման իրադարձությունները և ճշգրիտ պատմել դրանց մասին: Վտանգավոր իրավիճակին ի պատասխան՝ մարդու մոտ գործի է դրվում պայքարելու կամ փախուստի դիմելու ֆիզիոլոգիական պատասխան ռեակցիան, երբ մարդու ուղեղում արտադրվում են այնպիսի քիմիական նյութեր, որոնք կանխում են ընտրողական ուշադրությունը կամ ընկալածը տարբերակելու կարողությունը:[27] Տրավմատիկ միջադեպի ընթացքում անհատն այլևս չի կենտրոնանում կամ դիտարկում, այլ փոխարենը դառնում է գերզգոն բոլոր գրգռիչների նկատմամբ, որպեսզի կարողանա արագ արձագանքել հաջորդ ընկալվող սպառնալիքին: Ավտոնոմ նյարդային համակարգի ֆիզիոլոգիական արձագանքի արդյունքում տեղեկությունների կորուստը, որը հաճախ ուղեկցվում է սեփական մեղքի զգացումով, կարող է հետագայում առաջացնել մոռացություն և զգալիորեն խափանել տվյալ անձի՝ իրադարձությունները և դրանց մանրամասները վերհիշելու կարողությունը:

Եթե թրաֆիքինգի ենթարկված անձը չի կարող վերհիշել վերապրած իրադարձությունները կամ փոփոխություններ է մտցնում դրանք պատմելիս, ապա այս իրողությունն ամենևին էլ չի նշանակում, որ նա ստում է կամ հրաժարվում է համագործակցելուց: Խիստ կարևոր է համբերություն ցուցաբերել հիշողության հետ կապված խնդիրների առնչությամբ և չարգելել նման անձանց հետագայում լրացնել կամ փոխել իրենց վերապրած իրադարձությունների նախնական ներկայացումը կամ մանրամասները, քանի որ հիշողությունները կարող են վերադառնալ:

5.5.3 ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Սեռական և գենդերային պատկանելիությունը կարող է մեծ դեր ունենալ առողջապահության և բուժօգնության հարցերում: Սեռական պատկանելիությունը, ասել է թե՝ այն փաստը, որ տվյալ անձը պատկանում է արական կամ իգական սեռին, կամ էլ նրա գենդերային պատկանելիությունը, ասել է թե՝ առնականության և կանացիության մշակութային սահմանումը, մեծ ազդեցություն ունեն

առողջության վրա, քանի որ հենց դրանցով է պայմանավորված առողջությանը նպաստող արդյունավետ գործողությունների նախագծումը:[28] Գենդերային պատկանելիությամբ պայմանավորված մոտեցումը նույնպես իրավունքների վրա հիմնված մոտեցում է և ճանաչում է անխտրականության սկզբունքները, ինչպես նաև՝ կանանց և տղամարդկանց հավասար վերաբերմունքի արժանանալու իրավունքը: Թեև թրաֆիքինգի զոհ դարձած անձանց շարքում կարող են մեծամասնություն կազմել կանայք, սակայն տղամարդիկ, պատանի կամ մանկահասակ տղաները նույնպես ենթարկվում են թրաֆիքինգի և դառնում սեռական բռնության, չարաշահումների և շահագործման առարկա՝ դրանց հետ կապված առողջական խնդիրներով հանդերձ:

Հնարավորության դեպքում՝ կարևոր է կանանց, ինչպես նաև երիտասարդ կամ մանկահասակ աղջիկներին հնարավորություն տալ ընդունվել և զննվել կին բուժաշխատողի կողմից: Եթե նման հնարավորություն չկա, ապա հարկավոր է ֆիզիկական զննման ընթացքում ապահովել կնոջ ներկայությունը: Նմանապես, կարևոր է տղամարդկանց և արական սեռի պատանիներին հնարավորություն ընձեռել ընդունվել և զննվել տղամարդ բուժաշխատողի կողմից:

Սոցիալական և քաղաքական շատ պայմաններում կանայք հաճախ զրկվում են իրենց իրավունքներից և անտեսության մատնվում:

Կանանց դեմ ուղղված բռնություն

Հայտնի փաստ է, որ կանանց թրաֆիքինգը կանանց դեմ ուղղված բռնության ծանր և տարածված ձև է հանդիսանում: «Կանանց դեմ ուղղված բռնություն» եզրույթը նշանակում է սեռական պատկանելիությամբ պայմանավորված ցանկացած բռնի գործողություն, որը բերում է կամ կարող է բերել ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք կանանց համար, այդ թվում՝ նման գործողությունների սպառնալիքներ, հարկադրում կամ ազատության (ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր կյանքում) կամայական սահմանափակում: Այս երևույթն ընդգրկում է, սակայն չի սահմանափակվում հետևյալով.

- ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն ընտանիքում, այդ թվում՝ ծեծ, իգական սեռի երեխաների սեռական չարաշահումներ տնային պայմաններում, օժիտի հետ կապված բռնություն, ամուսնական բռնաբարություն, կանացի սեռական օրգանների խեղանդամություն և կանանց համար վնասարար այլ

ավանդական սովորույթներ, բռնություն ամուսնությունից դուրս և բռնություն կապված շահագործման հետ,

- ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն համայնքում, այդ թվում՝ բռնաբարություն, սեռական չարաշահումներ, սեռական բնույթի ոտնձգություններ և ահաբեկում աշխատավայրում, կրթական հաստատություններում կամ այլուր, կանանց թրաֆիքինգ և հարկադրված մարմնավաճառություն,
- ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, որն իրականացվում կամ թույլատրվում է այն պետության կողմից, որտեղ այն տեղի է ունենում:[29]

Կանանց դեմ ուղղված բռնի գործողությունների շարքին են դասվում նաև՝ բռնի ստերջացումը, հղիության արհեստական բռնի ընդհատումը, հակաբեղմնավորիչ միջոցների հարկադրական կամ բռնի օգտագործումը, նորածին կամ մանկահասակ աղջիկների սպանությունը:

Շատ հաճախ կանանց դեմ ուղղված բռնությունն իրականացվում է իրենց հետ մտերմություն ունեցող որևէ մեկի կողմից: Հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ 10–ից 50 տոկոս կանայք հարված են ստացել կամ այլ ֆիզիկական բռնության են ենթարկվել իրենց մտերիմ զուգընկերոջ կողմից:[30] Ստեղծված իրավիճակի մասին պատկերացում կազմելու համար կարելի է ուսումնասիրել տվյալ կնոջ ընտանիքում տեղի ունեցած բռնության նախապատմությունը, այդ թվում՝ ընտանեկան բռնության դեպքերը՝ կնոջ ֆիզիկական և հոգեկան խնդիրները ճշգրտորեն գնահատելու և բուժելու և ամենակարևորը՝ վերաինտեգրման ապահով և անվտանգ ապագա տարբերակներ մշակելու նպատակով: Ընտանեկան բռնությունը խիստ նուրբ հարց է շատ կանանց համար: Նախկին չարաշահումները հաճախ լավագույնս ի հայտ են բերվում հոգեկան առողջության մասնագետների կամ փորձառու այլ բուժաշխատողների կողմից՝ կնոջ հիվանդության պատմությունը կազմելու ընթացքում: Բուժաշխատողները պետք է պատրաստ լինեն ըստ հարկի արձագանքելու այն հոգեկան ընկճվածությանը, որը բխում է նման հարցադրումներից:

Սեռական բռնություն

Սեռական բռնությունը սահմանվում է որպես ցանկացած սեռական հարաբերություն կամ սեռական հարաբերություն ունենալու փորձ, անցանկալի սեռական բնույթի մեկնաբանություններ կամ

ոտնձգություններ, կամ կնոջ սեռական գրավչությունն ի շահ օգտագործելու փորձ հարկադրման, վնասի կամ ֆիզիկական ուժի սպառնալիքով որևէ անձի կողմից՝ զոհի հետ նրա ունեցած փոխհարաբերություններից անկախ, ցանկացած պայմաններում, այդ թվում, սակայն չսահմանափակվելով տնային պայմաններում կամ աշխատավայրում:[31] Թրաֆիքինգի համատեքստում, սեռական չարաշահումները խիստ տարածված երևույթ են, այդ թվում՝ երբ խոսքը գնում է կանանց թրաֆիքինգի մասին նրանց հարկադիր աշխատանքի ենթարկելու նպատակով: Սեռական բռնությունը և առանց համաձայնության բռնի սեռական հարաբերությունները կարող են ներառել հարկադիր մարմնավաճառությունը, պոռնկագրական նյութերի ստիպողական ցուցադրումը, պարտադրված հղիությունը, բռնի ստերջացումը, հղիության արհեստական հարկադիր ընդհատումը, ստրկությունը կամ ստիպողական ամուսնությունը:[32]

Սեռական բնույթի հարձակումները ծանր սոցիալական և անձնական հետևանքներ ունեն, որոնք անդրադառնում են հոգեկան առողջության վրա: Սեռական բռնությանն ի պատասխան ձևավորվող հոգեբանական ռեակցիայի պարագայում պահանջվող միջամտությունները տարբերվում են ոչ սեռական բնույթի տրավմատիկ իրադարձությունների պարագայում պահանջվող միջամտություններից: Սեռական բռնության դեպքում նշանակվող միջամտությունների ժամանակ հարկ է հաշվի առնել հասցրած վնասի խիստ անձնական բնույթը և զոհի կրած իրական և ցավալի խարանը, որը բխում է նման ապրումներից, ինչպես նաև դրա կործանարար ազդեցությունը տվյալ անձի ինքնագնահատականի, վստահության և գոյատևման կամքի վրա:

Սեռական չարաշահումների և մարմնավաճառության հետ կապված խարանը բազում խոչընդոտներ է առաջացնում հոգեկան առողջության աջակցության և վերականգնման համար և արգելքներ է ստեղծում տեղեկությունների հաղորդման և բացահայտման, ինքնագնահատականի և ներողամտության առումով: Նման խարանը հաճախ առաջացնում է բացասական արձագանք և մերժում ընտանիքի և համայնքի անդամների կողմից: Թրաֆիքինգի ենթարկված կանանց հաճախ մեղադրում են իրենց նկատմամբ իրականացված սեռական բնույթի հարձակումների համար, մասնավորապես դա վերաբերում է այն կանանց, ում հարկադրում են զբաղվել մարմնավաճառությամբ: Սեռական չարաշահումներով և մարմնավաճառությամբ պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ խարանը նաև անդրադառնում է կանանց՝ օգնության դիմելու

պատրաստակամության վրա: Ծառայություն մատուցողները պետք է հաշվի առնեն անհատի սեփական անձի նկատմամբ հարգանքի և ինքնապաշտպանական բնազդի քայքայումը, ինչը պայմանավորված է սեռական բռնությամբ և չարաշահումներով: Բացի այդ, հարկավոր է մտապահել այն բացասական սոցիալական արձագանքը, որն ի հայտ է գալիս թրաֆիքինգի ենթարկված կանանց կողմից աջակցության և օգնության արտաքին աղբյուրներին դիմելիս, ինչպես նաև բնակարանային հարցերի կարգավորման ընթացքում:

Սեռական բռնություն զոհ դարձած անձանց հետ աշխատելը պահանջում է նրբանկատություն և փոխըմբռնում: Այն անձը, ով սեռական բռնության զոհ է դարձել, ստիպված է եղել հրաժարվել սեփական անձն ու կյանքը վերահսկելու բոլոր զգացումներից: Ոստիկանության կամ բուժաշխատողների հետ շփվելիս կանայք կարող են հսկողության կորստի նմանատիպ զգացում ունենալ: Հարցաքննության կամ զննման ընթացքում կնոջ մոտ կարող է սրվել ստորադասության, անօգնականության, ամոթի, ինքնախարազանման զգացումը, ինչը կարող է խորացնել տրավման: Ուստի, խիստ կարևոր է նման կանանց նկատմամբ կարեկցանք և բարություն ցուցաբերել՝ նրանց վստահությունը ձեռք բերելու նպատակով: Սեփական անձի նկատմամբ հարգանքն ու վստահությունը որոշակի չափով վերգտնելուց հետո զոհերը կկարողանան վստահություն ցուցաբերել իրենց աջակցություն տրամադրող անձանց նկատմամբ, իսկ նրանց բաժին ընկած փորձությունների վերաբերյալ ստացված տեղեկությունները կօգնեն բուժաշխատողներին ավելի ճիշտ ախտորոշում կատարել, բուժում նշանակել և վերջնական վերականգնում ապահովել:[33]

Հարգանք մասնավոր կյանքի իրավունքի և ամոթխածության զգացման նկատմամբ

Որոշ իրավիճակներում բուժաշխատողը պետք է ըմբռնում և հարգանք ցուցաբերի կնոջ ամոթխածության և բժշկական զննման ենթարկվելու, ինչպես նաև սեռական նախապատվությունների թեմայի շուրջ խոսելու հարցերում որոշակի զսպվածության վերաբերյալ: Հարկավոր է համբերություն ցուցաբերել և բացատրել թրաֆիքինգի ենթարկված կնոջը, որ գինեկոլոգիական զննումը սովորական ընթացակարգ է, իսկ նրան տրվող հարցերը սովորական հետազոտության մաս են կազմում: Հարկավոր է հանգստացնել թրաֆիքինգի զոհին՝ ասելով, որ նա որևէ կերպ չի առանձնանում կամ

այլ վերաբերմունքի արժանանում իր ունեցած փորձի պատճառով: Կարելի է ասել տուժած անձին, որ նրա դեպքն ամենևին էլ հազվագյուտ չէ, և բժշկական անձնակազմի անդամները բազում նմանատիպ դեպքերի են առնչվել՝ ցուցադրելով զոհի նկատմամբ ըմբռնում և օգնելով նրան հանգստանալ և պատասխանել այն հարցերին, որոնք պահանջվում են նրան աջակցություն մատուցելու համար: Երբ խոսքը գնում է նրբանկատ և գուցե ամոթխածություն առաջացնող օրգանիզմի գործառույթների և մարմնի մասերի վերաբերյալ, կարող են պահանջվել այնպիսի ձևակերպումներ և արտահայտություններ, որոնք ծանոթ են զոհին իր յուրահատուկ մշակութային համատեքստում:

5.5.4 ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՆՈՋ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԵՐԸ

Բուժաշխատողները պետք է պատրաստ լինեն ընդունելու սեփական կանխակալ պատկերացումները, ինչպես նաև հասարակությունում և մշակույթում տարածված կարծրատիպերը թրաֆիքինգի ենթարկված անձանց վերաբերյալ: Կանայք և հատկապես նրանք, ովքեր հայտնվել են զոհի կարգավիճակում, կարող են չհայտնել իրենց վերապրած իրադարձությունների կամ ունեցած առողջական խնդիրների մասին կամ էլ պատմել դրանց մասին շատ հպանցիկ՝ վախենալով, որ իրենց պարզապես չեն հավատա: Հնարավոր է, որ կանայք չօգտվեն տեղեկություններ ստանալու իրենց իրավունքից, կամ էլ բուժաշխատողի և հատկապես արական սեռի բուժաշխատողի դիրքի և գիտելիքների հանդեպ ունեցած հարգանքից դրդված՝ թերագնահատեն բժշկական տեղեկատվությունն ընկալելու սեփական կարողությունը կամ իրազեկված լինելու անհրաժեշտությունը:

Հարկավոր է առողջական հարցերի մասին պատշաճ տեղեկատվություն և կրթական նյութեր տրամադրել այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսիք են՝ սնունդն ու հիգիենան, վերարտադրողական համակարգի ընդհանուր աշխատանքն ու գինեկոլոգիան, սեռական առողջությունը, անվտանգ սեռական կյանք վարելու սովորույթները, հակաբեղմնավորիչ միջոցները և սեռավարակները (այդ թվում՝ դրանց ախտանիշերը և հնարավոր երկարաժամկետ ռիսկերը): Բուժաշխատողները պետք է աջակցություն ցուցաբերեն առողջությանը նպաստող պատշաճ գործողությունների զարգացման հարցում: Հարկավոր է իրականացնել տարբեր տեսակի գործողություններ կանանց, տղամարդկանց, սեռական փոքրամասնությունների և երեխաների համար:

Բուժաշխատողը պետք է համոզվի, որ առողջապահական ծառայությունները մատուցվում են առանց որևէ խտրականության կամ թրաֆիքինգի ենթարկված անձի առողջության և վերականգնման նկատառումներից բացի որևէ այլ նկատառումներով, ինչպես նաև այն հարցում, որ խորհրդատվության և բուժման ողջ ընթացքում ապահովվում է իրավունքների ամբողջական փաթեթը, այդ թվում՝ տեղեկատվություն ստանալու և իրազեկված որոշումներ կայացնելու իրավունքը:

Բազում երկրներում կանանց ցածր սոցիալական և տնտեսական կարգավիճակն էլ ավելի է նվազեցնում նորմալ մասնագիտական և քաղաքացիական կյանքին մասնակցելու նրանց հավանականությունը և սահմանափակում է գոյատևման համար անհրաժեշտ ռեսուրսներից օգտվելու նրանց հնարավորությունները: Բազում մշակույթներում ընդունված է այն սովորույթը, որ դուստրը խնամում է ծնողներին: Այն կանայք, ովքեր վերադառնում են առանց արտասահմանում խոստացած աշխատանքի դիմաց վաստակած գումարի, կարող են ունենալ խորը ամոթի և մեղքի զգացում: Նման կանայք կարող են դառնալ պարսավանքի, պատժի կամ հալածանքի առարկա իրենց ընտանիքի կողմից այն պատվազրկելու համար, մասնավորապես, երբ ընտանիքը որևէ գումար է վճարել ենթադրյալ աշխատանքը ստանալու համար:

Որոշ համայնքների մշակութային, սոցիալական և իրավական տեսանկյունից ընդունելի է համարվում, որ ընտանիքի անդամները խուսափեն այն կնոջից, ով խայտառակել է իրենց ընտանիքը, և անգամ սպանեն նրան: Եթե թրաֆիքինգի զոհը կասկածներ ունի (կամ կասկածելու այլ տեղիք կա), որ նման միջավայր վերադառնալու պարագայում իր նկատմամբ կարող են ձեռնարկվել բռնի գործողություններ, ապա հարկավոր է նրա հետ քննարկել այլընտրանքային տարբերակներ և նրա ցանկությամբ ձեռք բերել համապատասխան պայմանավորվածություններ:

5.5.5 ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Կանանց թրաֆիքինգը ծանր հետևանքներ է թողնում սեռական և վերարտադրողական առողջության վրա: Թրաֆիքինգի ենթարկված կանանց սեռական և վերարտադրողական առողջությանը հասցված վնասը սովորաբար բխում է նրանց կրած սեռական բնույթի

չարաշահումներից: Նույնիսկ այն կանայք, ովքեր թրաֆիքինգի են ենթարկվում ոչ թե մարմնավաճառությամբ զբաղվելու, այլ մեկ ուրիշ նպատակով, հաճախ նույնպես ենթարկվում են սեռական չարաշահումների կամ շահագործման: Սեռական և վերարտադրողական առողջության հետ կապված հիվանդությունները կարող են ունենալ սեռական, հոգեբանական կամ ֆիզիկական հետևանքներ, և դրանցից յուրաքանչյուրը պետք է արժանանա մասնագիտական բուժման և պատշաճ խնամքի: Թրաֆիքինգի և սեռական չարաշահումների ենթարկված կանայք հաճախ ձեռք են բերում սեռավարակներ, այդ թվում՝ ՄԻԱՎ: Նման կանանց հարկավոր է առաջարկել այս վարակների հայտնաբերման թեստեր հանձնել կամավոր հիմունքներով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տրամադրել խորհրդատվության հնարավորություն թեստերից առաջ և հետո (տե՛ս ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բաժինը): Նման թեստերի իրականացումը և դրանց արդյունքների հայտնումը պետք է լինի արագ և գաղտնի:

Բուժաշխատողները պետք է կանանց համար հասկանալի լեզվով և իրենց մշակույթին համապատասխան ձևով հայտնեն անհրաժեշտ տեղեկությունները հետևյալ հարցերի շուրջ.

- **սեռական առողջություն, անվտանգ սեռական վարքագիծ, հակաբեղմնավորիչ միջոցներ,**
- **սեռավարակներ, ախտանիշեր և հնարավոր հեռահար ռիսկեր, վերարտադրողական առողջություն, նախածննդյան և ծննդյան խնամք,**
- **ՄԻԱՎ/ՁԻԱՀ, այդ թվում՝ խորհրդատվություն թեստից առաջ և հետո,**
- **ընդհանուր վերարտադրողական համակարգի աշխատանք և գինեկոլոգիական խնամք,**
- **կանանց թլպատում (անհրաժեշտության դեպքում),**
- **առողջության և սեռական արտահայտման իրավունք**

Անհրաժեշտության դեպքում՝ հիմնական շահագրգիռ կողմերը պետք է համագործակցեն և ըստ հարկի հարմարեցնեն վերարտադրողական և սեռական առողջության վերաբերյալ կանանց գիտելիքների ընդլայնմանը և ինքնորոշմանն ուղղված տեղեկատվությունը: Գոյություն ունեն վերարտադրողական

առողջությանը վերաբերող մի քանի հիմնական կետեր, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն: Դրանք բերված են ստորև:

Հղիություն

Բուժաշխատողները պետք է հարգեն իրենց խնամքի ներքո գտնվող անհատների անձնական որոշումները՝ աջակցություն մատուցելով նրանց նախածննդյան, ծննդաբերական և հետծննդյան բուժօգնության շրջանակներում: Այս ծառայությունները պետք է մատուցվեն թրաֆիքինգի գործընթացի բոլոր փուլերում: Հարկավոր է թրաֆիքինգի հակազդման և աջակցության բյուջետային և տեղի իրավական սահմանափակումների շրջանակներում առավել բարձր մակարդակի աջակցություն մատուցել:

Թրաֆիքինգի ենթարկված հղի կանայք.

- պետք է արժանանան նրբանկատ և դատողություններից զերծ վերաբերմունքի,
- պետք է ժամանակին հետազոտվեն և պատշաճ խնամք ստանան,
- պետք է ստանան պատշաճ և բավարար խորհրդատվություն, խնամք և աջակցություն բժշկական միջամտությունից հետո,
- չպետք է հեռացվեն երկրի տարածքից, եթե ճանապարհորդությունը կամ վերադարձը նախածննդյան և վաղ հետծննդյան շրջանում վտանգ են ներկայացնում: Մասնավորապես, սա վերաբերում է այն դեպքերին, երբ ախտորոշվել են հղիության կամ ծննդաբերության հետ կապված բարդություններ, որոնց բուժման համար վերադարձի երկրում չեն մատուցվում անհրաժեշտ բուժծառայություններ:

Այն դեպքերում, երբ կինը պահանջում է իր հղիության արհեստական ընդհատում, նա պետք է տեղեկատվություն և խորհրդատվություն ստանա ընդունող երկրում իրեն հասանելի տարբերակների վերաբերյալ և անհապաղ ուղղորդվի համապատասխան բուժհաստատություն: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն աշխարհում արձանագրել է վտանգավոր պայմաններում հղիության ընդհատմամբ պայմանավորված մոտ 200 000 մահվան դեպք, ընդ որում՝ այդ ցուցանիշն ավելի բարձր է զարգացող, քան զարգացած երկրներում (100 000 հղիության արհեստական ընդհատումների կտրվածքով արձանագրվում է 330 մահվան դեպք):[34]

Հակաբեղմնավորիչ միջոցներ

Բուժաշխատողները պետք է թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խորհրդատվություն տան հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ, ինչպես նաև տրամադրեն տուժածներին իրենց մշակութային առանձնահատկություններին համապատասխան այնպիսի տեղեկատվական նյութեր, որտեղ կբացատրվեն հակաբեղմնավորիչ տարբերակները, մեթոդները և հնարքները՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հաստատված միջազգային չափանիշներին համապատասխան:

Բազում երկրներում կանայք որևէ ընտրություն չունեն հղիության հարցում, կամ այդ ընտրությունը խիստ սահմանափակ է: Ուստի, հարկավոր է հակաբեղմնավորիչ միջոցների հարցը արծարծել առանց հարկադրման կամ բռնության սպառնալիքի կնոջ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ավելի լայն շրջանակներում:[35]

Անպտղություն

Վերարտադրողական առողջության հետ կապված առավել տարածված մտահոգություններից է անպտղության հետ կապված մտավախությունը, որը բխում է թրաֆիքինգի ընթացքում կրած սեռական բռնությունից: Ստացված վարակների կամ վնասվածքների առնչությամբ բոլոր անհրաժեշտ բժշկական ընթացակարգերն իրականացելուց զատ կարևոր է պարզաբանել անպտղության վերաբերյալ առկա թյուր պատկերացումները և իրականությունը:

Թեև սեռական և վերարտադրողական առողջության խնդիրները հաճախ թրաֆիքինգին առնչվող ամենածանր հետևանքներից են, սակայն դա թրաֆիքինգի ենթարկված կանանց համար անհրաժեշտ բուժօգնության միակ ոլորտը չէ, և միշտ չէ, որ այդ հարցը գտնվում է կանանց համար առաջնահերթ խնդիրների շարքում: Թրաֆիքինգի՝ առողջության վրա անդրադարձող հետևանքները դիտարկելիս քաղաքականություն մշակողները և մասնագետները հակված են կենտրոնանալ սեռական և վերարտադրողական առողջության խնդիրների (օրինակ՝ սեռավարակներ, սեռական օրգանների վնասվածքներ) վրա՝ բացառելով կանանց առողջական վիճակի հնարավոր այլ բարդացումները:

5.5.6 ՍԵՌԱԿԱՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս կատեգորիայում ընդգրկված են տրանսգենդերները, այլ տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ, ինչպես նաև այլ կանանց հետ սեռական հարաբերություններ ունեցող կանայք: Քանի որ սեռական փոքրամասնությունները մեկուսացված և ավանդաբար հասարակության կողմից մերժված խումբ են կազմում, նրանք պահանջում են հատուկ ուշադրություն և այնպիսի ընթացակարգերի մշակում, որոնցով հաշվի կառնվեն նրանց խոցելի դիրքն ու առողջական կարիքները: Նման անձանց առջև ծառացած խտրականության և մեկուսացման խնդիրները կարող են բացասաբար անդրադառնալ նրանց հոգեկան առողջության վրա: Հարկավոր է հանդուրժողականություն, հարգանք և հոգատարություն ցուցաբերել՝ վստահեցնելով նման անհատներին, որ նրանց լսում են, այլ ոչ թե դատապարտում: Սեռական փոքրամասնությունների իրավունքները հիմնված են մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերում ամրագրված հիմնարար իրավունքների վրա:[36]

Սեռական փոքրամասնությունների համար սովորական երևույթ է խտրականության և հետապնդումների, այդ թվում՝ բռնության առարկա դառնալ, ինչպես նաև ենթարկվել իրենց սեռական ինքնությամբ պայմանավորված սեռական բռնության: Որոշ մշակույթներում լեսբուհի կանայք իրենց ընտանիքների համաձայնությամբ բռնաբարության են ենթարկվում «բուժման» նպատակով: Միասեռականները (կամ որպես այդպիսիք կասկածվող մարդիկ) հաճախ բռնաբարության զոհ են դառնում և ենթարկվում նվաստացնող մեկնաբանությունների, ժեստերի, ծեծի և նույնիսկ սպանվում են:

Չպետք է որևէ փորձ ձեռնարկվի անհատի ինքնությունը փոխելու համար: Ուստի, եթե որևէ անհատ կենսաբանորեն արական սեռի է, սակայն իրեն նույնացնում է որպես կին, ապա բուժաշխատողը պետք է բոլոր զրույցներում նման անհատին որպես կնոջ դիմի: Բուժում նշանակելու առումով անհրաժեշտ է անդրադառնալ տվյալ անձի ինչպես կենսաբանական, այնպես էլ տրանսգենդերային հատկանիշներին: Հնարավոր է, որ սեռական փոքրամասնություններին պատկանող տրանսգենդեր անձն ընդունի հորմոնային դեղորայք: Հնարավոր է նաև, որ նման անձինք չիմանան իրենց ընդունած դեղորայքի չափաբաժինները կամ անվանումները: Բուժաշխատողները պարտավոր են որոշել նման անհատների հատուկ կարիքները և ըստ անհրաժեշտության նրանց համար դուրս գրել հորմոնային միջոցների դեղատոմսեր:

5.5.7 ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Թրաֆիքինգի ենթարկված կանանց շրջանում մեծ թիվ են կազմում միայնակ մայրերը, ում երեխաները հաճախ ապրում են իրենց հայրենիքում: Այդուհանդերձ, կան նաև այնպիսի դեպքեր, երբ կանայք երեխա են ունեցել թրաֆիքինգի ենթարկվելուց հետո, և երեխաներն ապրում են այն երկրում, որտեղ նրանց մայրը փոխադրվել է թրաֆիքինգի ենթարկվելու համար: Սա առանձնապես լուրջ խնդիր է դառնում ինչպես մոր, այնպես էլ մանկան համար, եթե նման կանայք հայտնվում են ոստիկանությունում կամ ներգաղթի ծառայություններում, իսկ երեխաները մնում են առանց խնամքի: Հարկավոր է ընդունել իրենց երեխաների վերաբերյալ մայրերի մտավախությունները և մտահոգությունները, մասնավորապես՝ հաշվի առնելով, որ որոշ դեպքերում կան իրական հիմքեր մարդավաճառների կողմից իրենց երեխաների նկատմամբ պատժամիջոցների կիրառումից վախենալու համար: Եթե նման երեխաներն ապրում են իրենց հայրենիքում, ապա նրանց մայրը պետք է հնարավորություն ստանա կապվել հայրենիքում բնակվող իր ընտանիքի անդամների հետ: Եթե թրաֆիքինգի ենթարկված կինը և նրա երեխաներն ապրում են նույն երկրում, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է խորհրդակցի տվյալ կնոջ հետ ոստիկանություն կամ համապատասխան մարմիններ (օրինակ՝ սոցիալական ծառայություն) դիմելու վերաբերյալ, որոնք կարող են աջակցել երեխայի բարօրության ապահովման հարցում:

5.6 Երեխաներ և պատանիներ

Երեխաները և պատանիները թրաֆիքինգի են ենթարկվում հիմնականում նույն աշխատանքների կատարման և նույն կամ նմանատիպ նպատակների համար, ինչ մեծահասակները (օրինակ՝ աշխատանք արտադրամասերում, տնային ծառայություն, մարմնավաճառություն կամ թրաֆիքինգ ամուսնության նպատակով): Բացի այդ, երեխաներին շահագործում են նաև իրենց բնորոշ եղանակներով (օրինակ՝ մանկական պոռնկագրություն, ուղղերի մրցավազքի համար մանկահասակ տղաների թրաֆիքինգ, մուրացկանություն, աշխատանք հանքերում կամ օրգանների կորզում):[37] Թրաֆիքինգի ընթացքում երեխան հայտնվում է այնպիսի ֆիզիկական և հոգեբանական միջավայրում, որը ճնշում է նրա բնականոն և առողջ զարգացման ներուժը:

Երեխաները փոքրամարմին մեծահասակներ չեն

Թրաֆիքինգի մանկահասակ զոհերին աջակցող մասնագետները չպետք է նրանց վերաբերվեն որպես փոքր մեծահասակների, այլ փոխարենը պետք է նրբանկատ գտնվեն նման բարդ պայմաններում հայտնված երեխաների հատուկ կարիքների նկատմամբ:[38]

Թրաֆիքինգը կարող է կործանարար հետևանքներ ունենալ երեխայի առողջության համար, քանի որ նա չարաշահումների է ենթարկվում դեռևս ֆիզիկական, հոգեբանական կամ սոցիալական զարգացման փուլում: Պատանիների մոտ պատկերացում է ձևավորվում այս բարդ աշխարհում իրենց դերի և տեղի մասին: Պատանեկության տարիներին ձևավորված վարքագծային մոդելները գործում են ողջ կյանքի ընթացքում: Այսպիսով, պատանիները դեռևս լիարժեքորեն չեն ընկալում ռիսկի ենթարկվելու աստիճանը: Մասնավորապես, սա վերաբերում է թրաֆիքինգի ենթարկված երեխաների և պատանիների տրավմատիկ և կարողությունները ճնշող փորձին, որն էլ ավելի է սրում արդեն իսկ բարդ և դժվար զարգացման փուլը, որի ընթացքում նրանք սկսում են առնչվել իրենց սեփական ինքնությունը (սեռական և այլն) և ինքնագնահատականը որոշող հարցերին:

5.6.1 ԽՆԱՄՔԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԵՎ ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

Երեխաների և պատանիների առողջության և իրենց տարիքին և հատուկ պահանջներին համապատասխան բուժծառայություններից օգտվելու իրավունքը ոչ միայն խիստ կարևոր է նրանց գոյատևման և բարօրության համար, այլև հանդիսանում է մարդու հիմնարար իրավունք, որն ամրագրված է մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում, որտեղ նշվում է, որ երեխայի լավագույն շահերը պետք է հանդիսանան առաջնային նկատառում:[39] Բուժաշխատողները պետք է առաջնորդվեն այս կոնվենցիայում և այլ համապատասխան միջազգային փաստաթղթերում և ուղեցույցներում ամրագրված չափանիշներով, որոնք անդրադառնում են երեխայի իրավունքներին և մասնավորապես՝ թրաֆիքինգի ենթարկված երեխաների իրավունքներին:[40]

«Երեխաներ», «պատանիներ» և «երիտասարդներ» հասկացությունների սահմանում[41]

«Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ,

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ

Երեխաներ՝	**0-18 տարեկան**
Դեռահասներ՝	**10-19 տարեկան**
Պատանիներ՝	**15-24 տարեկան**
Երիտասարդներ՝	**10-24 տարեկան**

«Երեխաներ», «պատանիներ» և «մեծահասակներ» հասկացությունների սահմանումը կարող է տարբերվել՝ կախված մշակույթից: Այն հարցը, թե արդյոք պատանին ստանձնել է մեծահասակ մարդուն վերագրվող դերակատարումն ու պատասխանատվությունը, որպես կանոն, արտացոլում է նրա մշակույթը: Այդուհանդերձ, մանկաբուժության և պատանիների առողջության հետ կապված հարցերում հարկավոր է հաշվի առնել տվյալ երկրի կամ տարածաշրջանի մշակութային և իրավական սահմանումները, սակայն միայն այնքանով, որքանով դրանք չեն հակասում միջազգայնորեն ընդունված նորմերին՝ բուժման նշանակման, իրազեկված համաձայնության ստացման, բժշկական միջամտության կառավարման արձանագրությունների և խնամքի նմանատիպ չափանիշների վերաբերյալ: Մանկական կամ մեծահասակի դեղամիջոցի չափաբաժին նշանակելիս չի կարելի հաշվի առնել մշակութային հարաբերական տարբերությունները:

Թրաֆիքինգի ենթարկված երեխաների և պատանիների խնամքը պահանջում է.

- այնպիսի հարգալից մոտեցումների մշակում, որոնք խրախուսում են մասնակցությունը,
- նախկին իրադարձությունների արդյունքում կրած վնասի բարդ հետևանքների ընկալում,
- ծառայությունների հարմարեցում յուրաքանչյուր տարիքային խմբի կարիքներին և տվյալ երեխայի տարիքին և հատկանիշների տեսակետից պատշաճ եղանակներով, այլ ոչ թե պարզապես

հետևելով մեծահասակների համար նախատեսված առողջապահական ծրագրերին,

- այնպիսի ռազմավարությունների կիրառում, որոնք ուղղված են կրած տրավմայի հետևանքների մեղմացմանը կամ զարգացման ավելի առողջ օրինաչափությունների խթանմանը:

Մասնակցություն

Ըստ միջազգային չափանիշների՝ երեխան պետք է ունենա իրեն վերաբերող բոլոր հարցերի շուրջ սեփական կարծիքներն ազատորեն արտահայտելու իրավունք, և նրա հայացքների նկատմամբ պետք է «ցուցաբերվի նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն» (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, Հոդված 12):[42] Այս իրավունքները միշտ պետք է հարգվեն: Գործնականում դա նշանակում է, որ բժշկական զննումների կամ այլ ընթացակարգերի իրականացման պարագայում բուժաշխատողները պետք է լիարժեք տեղեկություններ տրամադրեն երեխային նրա ընկալման մակարդակին համապատասխան, որպեսզի նա կարողանա մասնակցել իր բարօրության վրա անդրադարձող որոշումների կայացմանը: Մասնագետները պետք է լսեն երեխաներին և ամենայն լրջությամբ վերաբերեն նրանց կարծիքներին և որոշումներին, այդ թվում՝ այն որոշումներին, որոնք վերաբերում են երեխաների՝ իրենց ընտանիք կամ ծագման երկիր հնարավոր վերադարձին:

.....

Երեխայի կամ պատանու շահերը ներկայացնելու համար կարող է նշանակվել օրինական խնամակալ:

.....

.....

Զգուշացում. որոշ դեպքերում երեխայի օրինական խնամակալը կարող է դառնալ նրան չարաշահման ենթարկած ծնողը կամ ազգականը կամ այն անհատը, ով «վաճառել է» նրան թրաֆիքինգ իրականացրած չարագործին: Հենց այս պատճառով էլ խիստ կարևոր է, որ նախքան երեխայի գործի հանգամանքները ընտանիքի անդամներին հայտնելը աջակցություն մատուցող անձինք նրբանկատորեն հարցուփորձ անեն երեխային նախկինում իր կրած չարաշահումների և թրաֆիքինգ իրականացրած անձի

հետ առնչվելու մանրամասների վերաբերյալ: Այն դեպքերում, երբ հիմք կա կասկածելու, որ ընտանիքի անդամների խնամքի ներքո (կամ նախկին բնակության վայր) վերադառնալուն պես երեխան կենթարկվի չարաշահումների, աջակցություն մատուցող անձինք պետք է իրավական խորհրդատվություն ստանան և դիմեն իրավասու սոցիալական աշխատողի կամ մանկական հոգեբանի:

(Տե՛ս նաև Գլուխ 3, բաժին 3.1 «Անչափահասների վերադարձի մասին»):

Երեխաների և պատանիների առողջության ոլորտի մասնագետներ

Թրաֆիքինգի ենթարկված երեխաները և պատանիները պետք է խնամք ստանան որակավորված մասնագետների կողմից, ովքեր իրազեկված են նրանց հատուկ կարիքների[43] մասին և հստակ տարբերում են դրանք մեծահասակների կարիքներից: Ուստի և, նման խնամքը պետք է տրամադրեն փորձված բուժաշխատողները, ովքեր համապատասխան գիտելիքներ ունեն երեխաների և պատանիների զարգացման տարիքային առանձնահատկությունների վերաբերյալ: Նման մարդկային ռեսուրսի բացակայության պարագայում հարկավոր է դիմել չարաշահումների ենթարկված երեխաների հետ աշխատելու ոլորտում վերապատրաստում անցած մասնագետներին:

Երեխաներին տեղեկություններ տրամադրելու և նրանց հետ հարցազրույցներ անցկացնելու կարգը

Չի կարելի որևէ բժշկական հետազոտություն կամ ընթացակարգ իրականացնել առանց երեխայի իրազեկված համաձայնության՝ բացառությամբ այն դեպքերի, երբ երեխայի կյանքին սպառնում է անմիջական վտանգ:

Բացի բոլոր հարցազրույցների անցկացման ընդհանուր ուղեցույցներից (օրինակ՝ անվտանգության ապահովում, իրազեկված համաձայնություն, գաղտնիություն, տե՛ս նաև Հավելված I

«Թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցի անցկացման էթիկական սկզբունքներ» և Հավելված II «Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ»)՝ գոյություն ունեն լրացուցիչ և մասնավոր սկզբունքներ և հնարքներ երեխաներին տեղեկատվություն տրամադրելու և նրանց հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ.

- Հարկավոր է հնարավորինս շատ բան **պարզել** երեխայի մասին նախքան հարցազրույցը՝ ներկայանալով պարզ և բարեհամբույր եղանակով (խոսելով երեխային ծանոթ բաների մասին՝ նրա հետ կապ հաստատելու նպատակով):
- **Ստեղծեք մի տարածք**, որն ապահով և հարմար կլինի զրույցի համար (դնել խաղալիքներ, գրքեր, խաղեր և այլն՝ երեխայի հետ կապ հաստատելու նպատակով):
- **Կապ հաստատեք** զրուցակցի հետ՝ խոսելով այնպիսի թեմաների շուրջ և անելով այնպիսի բաներ, որոնք կապված չեն թրաֆիքինգի արդյունքում ունեցած ապրումների հետ (օրինակ՝ քննարկեք երեխային ծանոթ հարցեր, խաղացեք խաղեր):
- Քննարկումների համար բավարար **ժամանակ հատկացրեք** և մի շտապեք:
- **Խոսեք** պատշաճ և երեխայի համար հասկանալի ձևակերպումներով (կրկնեք երեխայի օգտագործած արտահայտությունները):
- **Բացատրեք** իրողություններն այնպես, որ երեխան կարողանա դրանք հեշտությամբ ընկալել (հնարավորության դեպքում՝ օգտագործեք պատկերավոր միջոցներ):
- **Մթնոլորտը զրույցի ընթացքում** պետք է լինի պարզ և ոչ պաշտոնական (օրինակ՝ հարցաքննողի տեսք մի ընդունեք և մի պնդեք, որ Ձեզ անպայման պատասխանեն):
- **Զրույցը սկսեք** բաց հարցերից՝ թույլ տալով երեխային ներկայացնել իր պատմությունը: Խուսափեք ակնարկող հարցերից, օրինակ, «Արդյո՞ք տվյալ անձը բռնություն է գործադրել», և փոխարենը տվեք ավելի բաց հարցեր, օրինակ, «Ինչ է արել տվյալ անձը»:
- Մի փորձեք **մանրամասներ կորզել** երեխայից, եթե նրա վարքագծի նշաններից զգում եք, որ նա ասել է իրեն հայտնի ամեն բան: Այդուհանդերձ, հարկ է մտապահել, որ եթե երեխաներին չի

տրվում համապատասխան հարցը, նրանք հակված են տալու այն պատասխանը, որը, նրանց կարծիքով, ցանկանում է լսել հարցազրույց անցկացնող անձը:

- **Ավարտեք** հարցազրույցն այնպես, որ երեխան զգա, որ ինքը ճիշտ է վարվել, և հայտնեք նրան, որ պատրաստ կլինեք խոսել նրա հետ, եթե նա կրկին ունենա դրա կարիքը:[44]

5.6.2 ԵՐԵԽԱՅԻ ԱՃՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Երեխայի զարգացումը ենթադրում է նրա հասունության աստիճանը ֆիզիկական, ճանաչողական, լեզվական, սոցիալական, հուզական, խառնվածքային կամ մանր և խոշոր շարժական կարողությունների առումով: Չարաշահումը և քրոնիկական սթրեսն անդրադառնում են երեխայի ֆիզիկական վիճակի վրա՝ խանգարելով ուսմանը, դանդաղեցնելով նրա աճը և հոգեբանական զարգացումը:[45] Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաները շարունակաբար ենթարկվում են սպառնալիքների և վտանգների իրենց միջավայրում: Նման շարունակական չարաշահումների և սթրեսի պայմաններում հայտնված երեխաների և պատանիների մոտ ձևավորվում է մի անձնավորություն, որը հարմարեցված է վտանգավոր պայմաններում գոյատևման համար, սակայն որպես կանոն ի վիճակի չէ հարմարվել սովորական ոչ սպառնալի իրավիճակներին:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով՝ չարաշահումների ենթարկված երեխաները հաճախ իրենց ստիպված են զգում փոխհարաբերություններ ձևավորել իրենց խնամքը ստանձնած վտանգավոր անձանց հետ և վստահել նրանց: Այն երեխաները, ում վստահությունը չարաշահվում է, ամենայն հավանականությամբ կդժվարանան հաղթահարել իրենց խնդիրները, ձևավորել սեփական ինքնուրույնության զգացումը կամ հաստատել մտերմական հարաբերություններ: Հավատացած լինելով, որ իրեն լավ ծանոթ մեծահասակները պետք է հոգ տանեն իր համար և գտնեն լավագույն լուծումները՝ երեխան հաճախ ենթադրում է, որ ինչ-որ բան այնպես չէ հենց իր հետ, ուստի և հենց ինքն է պատասխանատու այն բոլոր չարիքների կամ վատ արարքների համար, որոնք տեղի են ունեցել իր կյանքում: Երեխաների և պատանիների զարգացման վրա ազդող չարաշահումների հետևանքները կարող են հանգեցնել հուզական կապվածության խզմանը, ինքնագնահատականի անկմանը, ինչպես

նաև սոցիալական հարաբերությունների քայքայմանը: Բացի այդ, կարող են նաև առաջանալ ընդգծված սեռական կամ խիստ ագրեսիվ վարքագծի հետ կապված խնդիրներ, հոգեներգործուն միջոցների չարաշահման հետ կապված խնդիրներ, ինչպես նաև՝ դիսոցիատիվ խանգարում, ինքն իրեն վնասելու վտանգ կամ սթրեսի ու տագնապի զգացումի հաղթահարման այլ կործանարար եղանակներ:[46]

Բուժաշխատողները պարտավոր են կիրառել առողջությանը նպաստող այնպիսի ռազմավարություններ, ծրագրեր կամ գործողություններ, որոնք հաշվի են առնում երեխայի զարգացման աստիճանը և օգնում են երեխաներին և պատանիներին վերագտնել և էլ ավելի զարգացնել սեփական կարողությունները՝ իրենց կյանքն ավելի ակտիվ և իմաստալից դարձնելու համար: Այդ նպատակով հարկավոր է նաև բավարարել նրանց կարիքները, այդ թվում՝ սնունդ, ֆիզիկական և հոգեբանական զարգացում և կրթություն:

Նախկինում ընտանեկան բռնությունների ու անուշադրության մատնելու փաստերը և թրաֆիքինգը

Թրաֆիքինգի ենթարկվող երեխաները հաճախ մեծանում են այնպիսի անկայուն միջավայրում, որտեղ բռնություն է տիրում, և կա ֆիզիկական կամ հոգեբանական վնասի ենթարկվելու վտանգ: Թրաֆիքինգի պայմաններում մոլորության մեջ ընկնելով և ենթարկվելով չարաշահումների՝ երեխան իր մոտ հաստատում է աշխարհի, այլոց և սեփական անձի հանդեպ ունեցած բացասական և կործանարար պատկերացումները:

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց համար նախատեսված ապաստարանների և աջակցության ծրագրերի փորձի վրա հիմնված տվյալները վկայում են այն մասին, որ գոյություն ունի երեխաների մեծ զանգված, ովքեր թրաֆիքինգի են ենթարկվում այնպիսի խախտված ընտանեկան միջավայրում մեծանալուց հետո, որտեղ տեղ են գտել չարաշահումներ, բացակայել է ամուսնալուծված, բաժանված կամ մահացած ծնողներից մեկը, ինչպես նաև որբանոցներում կամ երեխաների համար նախատեսված հանրային հաստատություններում, փախստականների կենտրոններում, կամ էլ երբ նրանք փախել են տանից և ապրել փողոցում: Որոշ դեպքերում հնարավոր է, որ երեխաները վաճառվել կամ թրաֆիքինգի են ենթարկվել ընտանիքի մտերիմ անդամների կողմից:

Տան պայմաններում երեխաներին սպառնացող վտանգների ճանաչումը խիստ կարևոր է առողջական կարիքների գնահատման, ղեկավար դիրք ունեցող անձանց վերաբերյալ ունեցած պատկերացումների ընկալման, ինչպես նաև ինտեգրման և վերաինտեգրման տարբերակների ուսումնասիրման համար: Պատերազմի, հանցավորության, քաղաքական հետապնդումների, բնական աղետների կամ համաճարակների հետևանքները դեռևս չհաղթահարած տարածաշրջաններում երեխայի ծնողները կարող են մահացած լինել կամ այլևս չկարողանալ նրան օգնել, այն է՝ հնարավոր է, որ թրաֆիքինգի ենթարկվող երեխան լինի որբ: Այն տարածաշրջաններում, որտեղ ՄԻԱՎ տարածման ցուցանիշը մեծահասակների մոտ կազմում է գրեթե 40 տոկոս, և բազմաթիվ վարակակիր մարդիկ արդեն սկսում են մահանալ ՁԻԱՀ-ից, մտահոգություն է առաջացնում այն հանգամանքը, որ մի ամբողջ սերունդ կարող է մնալ առանց ծնողական խնամքի՝ խոցելի դիրքում հայտնվելով թրաֆիքինգի նկատմամբ:

Երեխաների սեռական բռնություններ

Թրաֆիքինգի զոհ դարձած մեծահասակների օրինակով՝ որոշ երեխաներ կարող են ենթարկվել սեռական չարաշահումների թրաֆիքինգի թակարդն ընկելուց առաջ կամ դրանից հետո, կամ՝ երկուսն էլ: Երեխաների նկատմամբ սեռական չարաշահումների տարածման աստիճանի վերաբերյալ 20 երկրներում անցկացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ աղջիկների 7-ից 36 տոկոսը, իսկ տղաների 3-ից 29 տոկոսը ենթարկվել են սեռական չարաշահումների:[47] Թրաֆիքինգի թակարդն ընկնելուն պես սեռական չարաշահումները տարածված երևույթ են նույնիսկ այն երեխաների պարագայում, ովքեր ուղղակիորեն ներգրավված չեն մարմնավաճառության մեջ:

Երեխաների սեռական չարաշահումները բերում են երեխաների առողջության վրա անդրադարձող անմիջական և երկարաժամկետ բացասական հետևանքների, այդ թվում՝ սեռավարակներ, սեռական օրգանների վնասվածքներ, ապագայում ռիսկային սեռական կյանք և հոգեներգործուն նյութերի չարաշահում, առողջ սեռական հարաբերություններ ձևավորելու դժվարություններ, ընկճախտ և ինքնասպանություններ:[48] Երեխաների սեռական չարաշահումներն անդրադառնում են այն բանի վրա, թե ինչպես են նրանք, մասնավորապես

նախապատանեկան և պատանեկան տարիքում, ընկալում իրենց մարմինը, իրենց արժեքը և փոխհարաբերություններն այլոց հետ (տե՛ս «Հատուկ նկատառումներ հոգեկան առողջության վերաբերյալ», բաժիններ 5.5 և 5.8): Այն պատանիները, ովքեր դեռևս ուսումնասիրում և ձևավորում են իրենց գենդերային պատկանելիությանը և սեռական նախապատվություններին առնչվող ընկալումն ու վարքագիծը, սեռական կյանքի և հարաբերությունների բռնի և հարկադրական ներկայացման պատճառով ձևավորում են ապագա հարաբերությունների և գործելակերպի վնասարար օրինաչափություններ:[49]

Գոյություն ունեն երեխաների նկատմամբ իրականացված չարաշահումների բացահայտմանը խանգարող հանգամանքներ, այն է՝ մեղքի զգացում, սեփական մեղավորության համոզմունք, չարաշահողին պաշտպանելու անհրաժեշտություն, որևէ մեկին պատահածի մասին չպատմելու նախազգուշացում չարաշահողի կողմից, մերժվելու կամ պատժի ենթարկվելու հետ կապված մտավախություններ: Երեխաների հետ սեռական չարաշահումների թեմայի շուրջ անցկացվող քննարկումները լավագույնս իրականացվում են այն մասնագետների կողմից, ովքեր հատուկ պատրաստում են անցել և տիրապետում են չարաշահումների վերաբերյալ երեխաների հետ զրուցելու հնարքներին: Ռեսուրսների սակավության պայմաններում, երբ չկան փորձառու մասնագետներ, այս քննարկումները պետք է զգուշորեն անցկացվեն մի անձի կողմից, ում հետ տվյալ երեխան արդեն հաստատել է ամուր հուզական կապ:

5.6.3 ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՊԱՍՏԱՎՈՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Տարիքն առանցքային գործոն է հանդիսանում պատշաճ հոգեկան առողջության խնամքի և աջակցության որոշման համար: Չարաշահման վիճակում հայտնված երեխաներն իրենց ընկալման համակարգն ու վարքագիծը հարմարեցնում են իրենց միջավայրին: Ըստ տրավմատիկ ապրումների և բռնության ոլորտում մի փորձագետի՝ «երեխան չարաշահման վիճակում պետք է պահպանի վստահության զգացումը այն մարդկանց նկատմամբ, ովքեր վստահության արժանի չեն, պահպանի անվտանգության զգացումը մի իրավիճակում, որը վտանգավոր է, վերահսկի մի իրավիճակ, որը խիստ անկանխատեսելի է, ինչպես նաև կամք ու կարողություններ դրսևորի, երբ անօգնական է: Չկարողանալով հոգ տանել սեփական անձի մասին՝ նման երեխան պետք է փոխհատուցի մեծահասակների բացակայող խնամքն ու

պաշտպանությունն իր տրամադրության տակ եղած միակ միջոցով, ասել է թե՝ գործի դնելով հոգեկան պաշտպանական մեխանիզմների իր ոչ հասուն համակարգը»:[50]

Ուսումն ու կրթությունը երեխայի զարգացման հիմնաքարերից են: Հարկավոր է հնարավորինս սեղմ ժամկետներում սկսել երեխայի ուսուցման խթանումը՝ առաջարկելով կրթական հնարավորություններ, դասընթացներ կամ ընդգրկելով երեխային տեղի դպրոցական ծրագրերում (անվտանգ և պատշաճ լինելու պարագայում): Հնարավորության և անհրաժեշտության դեպքում հարկավոր է նկատի ունենալ հասակակիցների միջոցով խորհրդատվական և կրթական մեխանիզմների օգտագործումը:

5.7 Հոգեկան առողջության նկատառումներ թրաֆիքինգից տուժած անձանց խնամքի շրջանակներում

5.7.1 ՀՈԳԵԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգեկան առողջությունը և հոգեկան հիվանդությունները դժվար են սահմանվում, քանի որ դրանք լավագույնս դիտարկվում են որպես շարունակական պատկերի առանձին դրսևորումներ: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն առաջարկում է, որ «հոգեկան առողջություն» հասկացությունը ներառի հետևյալը.

> (…) բարօրության, ինքնավարության, ինքնուրույնության, գործունակության, միջսերնդային կախվածության և անձի մտավոր և հուզական ներուժի իրացման սուբյեկտիվ պատկերացումները: Մշակութային տեսակետից գրեթե անհնար է տալ հոգեկան առողջության համընդգրկուն սահմանումը:[51]

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը բնորոշել է հոգեկան առողջությունը լայն իմաստով, ասել է թե՝ այն պետք է ընկալվի ավելի լայն իմաստով, քան պարզապես հոգեկան խանգարումների բացակայությունը և չպետք է լինի «հոգեբուժական խնամք» արտահայտության հոմանիշ: «Հոգեբանասոցիալական մոտեցում» հասկացությունը բնորոշվել է որպես հոգեկան բարօրությունն ընկալելու և դրան անդրադառնալու յուրահատուկ մի եղանակ: Հոգեբանասոցիալական մոտեցում որդեգրելը նշանակում է կապ հաստատել մի կողմից սոցիալական և մշակութային գործոնների և մյուս կողմից «հոգեկանի», իսկ ավելի լայն իմաստով՝ հոգեկան բարօրության միջև: Դա նշանակում է, որ անձի գործելակերպն

ընկալելու համար նրան պետք է դիտարկել իր համատեքստում՝ անկախ այն բանից, թե այդ համատեքստն իրենից ներկայացնում է ընտանիք, համայնք, թե մշակույթ: Հոգեբանասոցիալական մոտեցումը նաև ենթադրում է, որ անհատի կամ խմբի հոգեկան բարեկեցությունը կարող է գտնվել շրջապատող սոցիալական գործոնների ազդեցության տակ:[52]

Ներկայումս, հոգեկան առողջությանը և թրաֆիքինգին նվիրված հետազոտությունները սակավաթիվ են: Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հոգեբանական պատասխան ռեակցիաների մասին մեզ հայտնի տեղեկությունների մեծ մասը հիմնված է թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող կազմակերպությունների, թրաֆիքինգի ենթարկված անձանց, ինչպես նաև որակական հետազոտություններ խիստ սակավաթիվ տվյալների վրա:

5.7.2 ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԱԴՐՈՒՄ ԵՎ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հոգեբանական հարկադրումն ու չարաշահումները մարդկանց թրաֆիքինգի հատկանշական տարրերն են և իրենցից ներկայացնում են այն հիմնական հնարքները, որոնց դիմում են մարդավաճառները զոհերին մանիպուլյացիայի ենթարկելու և նրանց անազատության մեջ արդյունավետ պահելու համար: Հոգեբանական վերահսկման հնարքները ներառում են ահաբեկում և սպառնալիքներ, սուտ և խաբեություն, հուզական մանիպուլյացիա և վտանգավոր, անկանխատեսելի և անվերահսկելի իրադարձությունների պարտադրում: Նման հոգեբանական չարաշահումները սովորաբար կրում են շարունակական և ծայրահեղ բնույթ և հաճախ օգտագործվում են անհատի հոգեբանական և ֆիզիկական պաշտպանական մեխանիզմները քայքայելու համար: Նախ և առաջ, անհատին գցում են «գոյատևման ծայրահեղ պայմանների» մեջ, երբ նրա մահվան վտանգը շատ իրական է դառնում, և նա գիտակցում է սեփական անվտանգության հարցում հսկողության կորուստը և մարդավաճառի նկատմամբ իր խոցելի դիրքը: Երկրորդ փուլը ներառում է «ֆիզիկական հյուծումը»: Անհատներին ստիպում են օր ու գիշեր աշխատել, ինչը շահագործողներին զգալի հսկողություն սահմանելու (ինչպես նաև՝ ավելի մեծ շահույթ ստանալու) հնարավորություն է տալիս: Չունենալով հանգստի ժամանակ՝ անհատը թուլանում է և այլևս ի վիճակի չէ մշակել կամ դիտարկել որևէ պաշտպանական ռազմավարություն: Հսկողությունն ու մեկուսացումը կախվածության ապահովման ավարտական տարրերն են: Գերող-

գերի իրավիճակում, երբ միակ նշանակալից շփումն ընթանում է մարդավաճառի հետ, զոհի աշխարհի և սեփական անձի ընկալումն արտացոլում է մարդավաճառի աղճատված աշխարհայացքը:[53]

5.7.3 ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ ԵՎ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի ենթարկված անձինք հաճախ բախվում են հոգեներգործուն նյութերի չարաշահման տարբեր ձևերի, և նրանց մոտ կարող է զարգանալ կախվածություն: Թմրամիջոցներն ու ալկոհոլը սովորաբար օգտագործվում են մարդավաճառների կողմից թրաֆիքինգի ենթարկված անձանց առևանգման և հսկողության համար: Կախվածություն առաջանցող հոգեներգործուն միջոցներն օգտագործվում են ոչ միայն նման անձանց առավել հնազանդ դարձնելու, այլև կախվածություն ստեղծելու և որպես այդ նյութերի մատակարար նրանց հսկելու համար: Թմրամիջոցները կարող են օգտագործվել նաև ստիպողաբար մարմնավաճառությամբ զբաղվող կնոջն իր առաջին հաճախորդին սպասարկելիս ավելի հնազանդ դարձնելու համար: Օրինական և ապօրինի թմրամիջոցները կարող են օգտագործվել հարկադրաբար կամ սեփական կամքով օր ու գիշեր աշխատող մարդկանց կողմից ծանր պայմաններում գոյատևելու (կամ մարմնավաճառության պարագայում թվով ավելի շատ հաճախորդների սպասարկելու), չարաշահման պայմաններին և վերաբերմունքին դիմանալու, նվաստացնող կամ նողկալի գործողություններին հարմարվելու կամ տրավմատիկ և սթրեսային իրավիճակում ցավային զգացումները բթացնելու համար:

Թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող անձինք պետք է իրազեկված լինեն նման անհատների մոտ քիմիական կախվածության առաջացման պատճառների մասին և պետք է հասկանան դրա հետ կապված նշաններն ու ախտանիշերը: Եթե թրաֆիքինգի ենթարկված անձը հայտնում է որևէ քիմիական կախվածության հետ կապված խնդիրների մասին, կամ եթե աշխատակազմի անդամը կասկածում է նման խնդիրների առկայությունը, ապա տվյալ անձին հարկավոր է ուղղորդել պատշաճ պատրաստում անցած բուժաշխատողի մոտ:

5.7.4 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՆԱՄՔԻ ՆԵՐՔՈ ԳՏՆՎԵԼՈՒ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԹՐԵՍԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Թեպետև զոհը դուրս է պրծել թրաֆիքինգի իրավիճակից և գտնվում է ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո, և դա կարող է նրան տարբեր առումներով հոգեբանական սփոփանք բերել, սակայն այս իրավիճակը նույնպես կարող է լարվածության մի շարք նոր աղբուրների տեղիք տալ: Սթրեսային իրավիճակների առավել տարածված աղբյուրները ներկայացված են ստորև.

Հարցաքննություն իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից. ոստիկանության և ներգաղթային ծառայությունների աշխատակիցների հետ բազում առումներով հանդիպումները սթրեսային են թրաֆիքինգի ենթարկված անձանց համար: Շատերը ողջամիտ մտավախություններ ունեն այն կապակցությամբ, որ նրանց կարող են կասկածել կամ ձերբակալել, որ նրանց չեն հավատա, անհանգստություն են զգում հարցաքննության կամ հետաքննության կոպիտ և աննրբանկատ բնույթի առնչությամբ, կարծում են, որ գոյություն ունեն ճիշտ և սխալ պատասխաններ, որոնք հիմնովին կանդրադառնան նրանց ապագայի վրա (օրինակ՝ ներգաղթյալի կարգավիճակ, պատժամիջոցներ մարդավաճառների կողմից և այլն), կարող են ունենալ հիշողության կորուստ և ի վիճակի չլինել վերհիշելու կարևոր մանրամասներ, որոնք գումարվում են իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ նախկինում արդեն եղած վախին և կասկածամտությանը (որոնք հաճախ հիմված են սեփական փորձի կամ կոռումպացված և վտանգավոր պաշտոնատար անձանց կերպարների վրա):

Ծառայություն մատուցողները պետք է պատրաստեն նշված անհատներին իրավապահ մարմինների հետ հանդիպումներին՝ բացատրելով դրանց նշանակությունը, տրվող հարցերի հավանական բնույթը և այն, թե ինչպես են դրանք անդրադառնալու նրանց ապագայի վրա:

Վկայություններ դատավարությունների և քրեական հետաքննության շրջանակներում. մարդավաճառի դեմ ցուցմունք կամ վկայություն տալը կամ դրան նախորդող ժամանակաշրջանը կարող է խիստ սթրեսային լինել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց

համար: Այս ապրումները կարող են նոր տրավմա պատճառել թրաֆիքինգի ենթարկված անձին՝ անկախ նրանից, թե վերականգնման որ փուլում է նա այժմ գտնվում: Թրաֆիքինգի ենթարկված անձանց գալիք դատավարությանը պատրաստելու համար հարկավոր է դիմել համապատասխան որակավորում ունեցող անձանց: Հնարավորության դեպքում և տեղի օրենքներով սահմանված կարգով՝ համապատասխան որակավորում ունեցող մասնագետը պետք է ուղեկցի նշված անձանց դատարան, որտեղ նրանք վկայություն կտան, և օգնի տուժածներին հասկանալ իրենց տրվելիք հարցերի բնույթը (մասնավորապես, խոսքը գնում է պաշտպանող կողմի ագրեսիվ և մեղադրական գործելակերպի մասին):

Ներգաղթային մարմիններ դիմումի ներկայացման գործընթաց. տվյալ երկրում որևէ իրավական կարգավիճակ չունենալը թրաֆիքինգի զոհ դարձած անձանց մոտ առաջացնում է լարված նյարդային վիճակ՝ թույլ չտալով նրանց ֆիզիկական և հոգեբանական առումով կառուցել իրենց ապագան: Այս իրողությունը նվազեցնում է անհատի կայունության զգացումը և մեծացնում է այն տպավորությունը, որ նա չի վերահսկում սեփական կյանքը:

Զրույցներ ընտանիքների կամ երեխաների հետ. հայրենիքում մնացած մտերիմ անձանց հետ հեռախոսով զրուցելը կարող է սփոփանք կամ հոգու հանգստություն բերել, սակայն այն կարող է առաջացնել նաև թախիծ, միայնակության կամ մեղքի զգացում տանից հեռու գտնվելու կապակցությամբ: Որոշ դեպքերում ընտանիքի անդամները կարող են կոպիտ և մեղադրական խոսքեր հնչեցնել: Աջակցություն մատուցող մասնագետները պետք է հասկանան, որ նման զրույցները կարող են կրել խիստ հուզական բնույթ, և պատրաստ լինեն օգնել նման անհատներին մտերիմների հետ ունեցած շփումներից հետո:

Բժշկական ընթացակարգեր և թեստերի արդյունքներ. բժշկական ընթացակարգերի ենթարկվելու և բժշկական թեստերի արդյունքները ստանալու կապակցությամբ կարող է որոշակի անհանգստություն առաջանալ, հատկապես այն անձանց պարագայում, ովքեր ծանոթ են արևմտյան երկրներում ընդունված բժշկական ընթացակարգերին, առողջապահական համակարգի գործելակերպին կամ կլինիկական հաստատության միջավայրին: Բուժհաստատության պայմանների և

այնտեղ տիրող իրավիճակի պաշտոնական բնույթը, ասվածը կամ պատահածը չհասկանալու վախը, կամ այն կասկածը, որ բժշկական թեստերը կունենան չարագուշակ հետևանքներ, պահանջում են աջակցություն մատուցող այնպիսի անձանց ներկայությունը, ովքեր ի վիճակի կլինեն մեկնաբանել պատահածը և մեղմացնել այս մտավախությունները:

Փախստականների կենտրոններում կամ ապաստարաններում հնարավոր ընդհարումները և ճանձրույթը. ապաստարանի պայմանները կարող են սթրեսային լինել շատ պատճառներով (տրավմա կրած, տարբեր էթնիկական և մշակութային ծագում ունեցող և կողք կողքի բնակվող անձինք, տեղաշարժի կամ վարքագծի սահմանափակումներ, ժամանակի դանդաղ ընթացք կամ ճանձրույթ և այլն): Նման անձինք կարող են դիմել իրենց ազատ ժամանակը լցնելու կամ անցումային վիճակի հետ կապված լարվածությունը թեթևացնելու ոչ առողջ միջոցների (ծխել, ընդհարումներ ստեղծել, լքել աջակցության ծրագիրը): Մասնագետները պետք է փորձեն կանխել նման խնդիրները՝ հնարավորության սահմաններում բնակիչներին ներգրավելով ֆիզիկական գործունեության մեջ (օրինակ՝ զբոսանք մաքուր օդին, մարմնամարզությունների համար նախատեսված տարածք)՝ միաժամանակ հաշվի առնելով անվտանգության հարցերը, ինչպես նաև՝ պարբերաբար նպաստելով մտավոր աշխատանքի խթանմանը և ժամանցի կազմակերպմանը (օրինակ՝ կրթական կամ ժամանցային միջոցառումներ, գրքեր, ռադիոհաղորդումներ, խաղեր): Ապաստարաններում առաջարկվող գործունեության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել 4–րդ գլխում:

Վերադարձ. հայրենիք վերադառնալու հետ կապված ակնկալիքները կարող են վախ, անհանգստություն, հոգեկան ընկճվածություն, թախիծ կամ զայրույթ առաջացնել թրաֆիքինգից տուժած այն անձանց մոտ, ովքեր ունեն մտավախություններ, ընտանիքի հույսերը չարդարացնելու հետ կապված մեղքի զգացում, մտահոգվածություն ընտանիքի և իրենց գոյատևման, աշխատանք կամ եկամուտ գտնելու առնչությամբ: Հայրենիք վերադարձող անձանց հոգեբանական աջակցություն տրամադրողները պետք է հնարավորինս շատ ժամանակ հատկացնեն վերադարձողներին այս հարցում օգնելու համար: Նման աջակցության շրջանակներում կարելի է ուսումնասիրել հայրենիք վերադարձող

անձանց հույզերը (երբեմն նման զգացումները կրում են հակասական բնույթ)՝ փորձելով օգնել նրանց պատկերացնել, թե որտեղ են նրանք ապրելու և ինչով են զբաղվելու: Թրաֆիքինգի զոհերից շատերի պարագայում նման աջակցությունը նշանակում է օգնել նրանց ընտրել այն օժանդակ ծառայությունները, որոնք անհրաժեշտ կլինեն նրանց հոգեկան և ֆիզիկական առողջության կարիքների բավարարման համար (տե՛ս նաև սույն գլխի բաժիններ 5.13 և 5.14):

Հայրենիք վերադառնալու հետ կապված սթրեսային ապրումները կարող են սրվել բուն փոխադրման ժամանակ՝ օդանավով կամ գնացքով կամ տարանցիկ գոտում սպասելիս: Արտասովոր երևույթ չէ, երբ նման անհատները փորձում են թեթևացնել կամ բթացնել իրենց սթրեսային ապրումները՝ պատվիրելով ալկոհոլ և հայտնվել գինովցած վիճակում: Կարևոր է զգուշացնել նշված անհատներին, որ օդանավում (և այլ փոխադրամիջոցներից օգտվելիս) ոգելից խմիչք օգտագործելը կարող է գայթակղիչ լինել, սակայն գինովցած վիճակը կարող է ավիաընկերությունների հետ խնդիրներ (որոշ դեպքերում կարող է քրեական մեղադրանք ներկայացվել վտանգավոր վարքի համար) առաջացնել, ինչը կբարդացնի նման անձին օգնություն մատուցելը վայրէջքից հետո:

5.8 ՄԻԱՎ և ՁԻԱՀ

ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ գոյություն ունեն բազում թյուր պատկերացումներ, որոնք դժվարացնում են բուժծառայությունների մատուցումը և ավելորդ ընկճվածություն առաջացնում ինչպես հիվանդների, այնպես էլ նրանց ծառայություններ մատուցող անձանց մոտ: Քանի որ թրաֆիքինգի ենթարկված անձինք խոցելի են ՄԻԱՎ-ի նկատմամբ, շատ կարևոր է խնամք մատուցող բոլոր անձանց տեղեկացնել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կենսաբանական, հոգեբանական և սոցիալական հետևանքների մասին (տե՛ս՝ «IOM's Position Paper on HIV/AIDS» փաստաթուղթը, որն ընդգրկված է սույն ձեռնարկի «Առողջություն» գլխում առաջարկվող լրացուցիչ գրականության ցանկում):[54]

ԻՆՉՈՒ՞ Է ՊԵՏՔ ԻՐԱԶԵԿՎԱԾ ԼԻՆԵԼ ՄԻԱՎ-ի ԵՎ ՁԻԱՀ-ի ՄԱՍԻՆ

ՄԻԱՎ-ով (որը հանգեցնում է ՁԻԱՀ-ի) վարակված մարդկանց թիվը շարունակ աճում է: ՄԻԱՎ-ով կարող է վարակվել յուրաքանչյուրը՝ անկախ սոցիալական, ազգային և ռասայական պատկանելությունից, դավանանքից կամ սեռական կողմնորոշումից: Ուստի և, յուրաքանչյուրը պետք է իրազեկված լինի ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վերաբերյալ, որպեսզի կարողանա պաշտպանել ինքն իրեն և ուրիշներին: Կարեկցանքի և փոխըմբռնման միջավայր ստեղծելու, ինչպես նաև խտրականությունը և վախը հաղթահարելու լավագույն միջոցը ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի մասին ստույգ տեղեկատվության տրամադրումն է:

ԻՆՉ Է ՄԻԱՎ-ը

- «ՄԻԱՎ» հապավումը բացվում է որպես մարդու իմունային անբավարարության վիրուս:
- ՄԻԱՎ-ը փոխանցվում է սեռական ճանապարհով և արյան միջոցով:
- ՄԻԱՎ-ով վարակված անձինք վարակակիր են մնում ամբողջ կյանքի ընթացքում: Նույնիսկ երբ նրանք առողջ տեսք ունեն և լավ են զգում իրենց, նրանք կարող են այլ անձանց փոխանցել վարակը:
- Ինչպես արդեն նշվել է, ՄԻԱՎ-ը մարդու օրգանիզմում մնում է նրա մնացած կյանքի ողջ ընթացքում, դեռևս անբուժելի է և չունի պատվաստանյութ:
- ՄԻԱՎ-ի վարակը դեռևս ՁԻԱՀ չէ, սակայն կարող է հանգեցնել դրա առաջացմանը:

ԻՆՉ Է ՁԻԱՀ-ը

- Մարդու մարմին ներթափանցելուց հետո ՄԻԱՎ-ը սկսում է քայքայել իմունային համակարգը, որը պաշտպանում է մեզ վարակներից:
- «ՁԻԱՀ» հապավումը բացվում է որպես ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ, որը ենթադրում է մի շարք (համախտանիշ) հիվանդություններ, որոնք կարող են զարգանալ ՄԻԱՎ վարակի հետևանքով:[55]

- Թեև շատ դեպքերում ՄԻԱՎ վարակակիր անձանց մոտ աստիճանաբար առաջանում է ՁԻԱՀ, սակայն լինում են նաև դեպքեր, երբ անձը տարիներ շարունակ ապրում է ՄԻԱՎ վարակով այնքան ժամանակ, մինչ նրա իմունային համակարգն այնպես է թուլանում կամ «քայքայվում», որ այլևս ի վիճակի չէ նախկինի նման պայքարել վարակների դեմ և արդյունքում հանգեցնում է ՁԻԱՀ-ի առաջացմանը:[56]

ԻՆՉՊԵՍ Է ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ՄԻԱՎ-Ը

- ՄԻԱՎ վարակը հիմնականում փոխանցվում է վարակակիր անձի հետ չպաշտպանված սեռական հարաբերությունների միջոցով:
- Այն փոխանցվում է նաև ներարկման միջոցով, օրինակ՝ նույն ներարկիչը մի քանի անգամ օգտագործելու պարագայում: ՄԻԱՎ-ը կարող է փոխանցվել նաև վարակված արյան կամ արյան բաղադրիչների փոխներարկման միջոցով, թեև փոխանցման այս ուղին գրեթե չի հանդիպում այն երկրներում, որտեղ կա դոնորի արյունը պարբերաբար ստուգելու հնարավորություն:
- Վարակակիր հղի կանայք կարող են ՄԻԱՎ-ը փոխանցել իրենց երեխաներին հղիության կամ ծննդաբերության և կրծքով կերակրելու ընթացքում:
- ՄԻԱՎ-ով կարելի է վարակվել նաև արյան հետ շփում ունեցող չմանրէազերծված կտրող գործիքների միջոցով, ինչպիսիք են՝ ասեղները, դանակները և ածելիները:

ՄԻԱՎ-ը չի փոխանցվում վարակակիր անձանց հետ առօրյա կենցաղային շփման միջոցով:[57] Այն չի փոխանցվում վարակակիրների հետ նույն սանհանգույցից կամ լոգարանից օգտվելու, ձեռքսեղմման ժամանակ, ինչպես նաև նույն ափսեներից, սպասքից կամ հեռախոսներից օգտվելու կամ նրանց հագուստը հագնելու միջոցով: ՄԻԱՎ-ը չի փոխանցվում քրտինքի, արցունքի, փռշտոցի, հազի կամ մեզի միջոցով: ՄԻԱՎ-ը չի փոխանցվում նաև միջատների, օրինակ՝ մոծակի խայթոցով: Դեռևս չի արձանագրվել նաև ՄԻԱՎ վարակակրին գրկելու միջոցով վարակվելու դեպք:

ԻՆՉՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՎԵԼ ՄԻԱՎ-ից

Սեռական ճանապարհով ՄԻԱՎ-ով չվարակվելու համար պետք է պահպանել հետևյալ կանոնները.

- զերծ մնալ ներթափանցող սեռական հարաբերություններից,
- սեռական հարաբերություններ ունենալ վարակակիր չհանդիսացող միայն մեկ հավատարիմ զուգընկերոջ հետ,
- պատշաճ կարգով օգտագործել պահպանակ,
- համոզվել, որ արյան հետ շփում ունեցող բոլոր ասեղները կամ այլ գործիքներն օգտագործված չեն կամ անցել են պատշաճ ախտահարում:

ՄԻԱՎ-ի ԹԵՍՏ

Անձի մոտ ՄԻԱՎ-ի առկայությունը կարելի է որոշել արյան թեստի միջոցով: Նրանք, ովքեր գիտեն իրենց ՄԻԱՎ կարգավիճակը, կարող են պաշտպանել իրենց և իրենց զուգընկերներին՝ պատշաճ կարգով հոգ տանելով իրենց առողջության համար և ավելի իրազեկված որոշումներ կայացնելով իրենց հետագա կյանքի վերաբերյալ:

ՄԻԱՎ վարակակրության մասին իմանալը կարող է ունենալ նաև այնպիսի բացասական հետևանքներ, ինչպիսիք են՝ սթրեսի և անորոշության ուժեղացող զգացում, դժվարություններ նոր մարդկանց հետ կապ հաստատելու և առկա կապերը պահպանելու հարցում, թեստի արդյունքներով ոչ մեկի հետ չկիսվելու պարագայում գաղտնիություն պահպանելու դժվարություն, իսկ կիսվելու պարագայում՝ հնարավոր խարանում և խտրականություն: Բացի այդ, ՄԻԱՎ վարակակրությունը կարող է ենթադրել մի շարք սահմանափակումներ, օրինակ՝ ներգաղթի և ազատ տեղաշարժման, զբաղվածության և առողջության ապահովագրման ոլորտներում:

Ոստի, ՄԻԱՎ-ի թեստ անցնելու որոշումը պետք է լինի մտածված և կամավոր: Միգրացիայի միջազգային կազմակերպության փորձը ցույց է տալիս, որ վերադարձի և վերաինտեգրման աջակցության շրջանակներում պատշաճ խորհրդատվություն ստանալուց հետո թրաֆիքինգի ենթարկված կանանցից և երեխաներից շատերն իրենք են խնդրել ուղղորդել իրենց ՄԻԱՎ թեստի, ինչպես նաև բուժզննման և հոգեբանասոցիալական խորհրդատվության:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունն աջակցում է թրաֆիքինգի ենթարկված անձանց կամավոր ՄԻԱՎ թեստի ուղղորդմանը

Որոշ ծագման երկրներում վերադարձող թրաֆիքինգի զոհերից պահանջվում է ներկայացնել ծանուցում իրենց ՄԻԱՎ կարգավիճակի վերաբերյալ: Նման դեպքերում Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս, որ անհատի վերադարձին աջակցող կազմակերպությունը միայն խորհրդատվություն տրամադրի նրան, իսկ ՄԻԱՎ-ի թեստի ուղղորդումը կատարի նրա վերադարձի հարցերով չզբաղվող որևէ այլ կազմակերպություն: Այդ պարագայում ծառայություն մատուցող կազմակերպությունը ստիպված չի լինի խախտել գաղտնիության իրավունքը բժշկական տեղեկությունները բացահայտելու միջոցով և չի ունենա ընդունող երկրի իրավասու մարմիններին վերադարձողի ՄԻԱՎ կարգավիճակի մասին հայտնելու պարտավորություն:

Նմանապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այլ երկրներում գործող կազմակերպությունները նույնպես պարտավոր են ծագման երկրի իրավասու մարմիններին տեղեկացնել տվյալ անձի ՄԻԱՎ կարգավիճակի մասին՝ Միգրացիայի միջազգային կազմակերպությունը խորհուրդ է տալիս նման դեպքերում ՄԻԱՎ թեստն անցկացնել ոչ թե տարանցիկ կամ նպատակակետ երկրներում, այլ ծագման երկրում: Ծագման երկիր վերադառնալուց հետո թրաֆիքինգի զոհը պետք է ստանա համապատասխան խորհրդատվություն ՄԻԱՎ թեստ անցնելուց առաջ:

ՄԻԱՎ ԹԵՍՏԻՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎ ՀԱՋՈՐԴՈՂ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի զոհին հարկավոր է տրամադրել մասնագիտական խորհրդատվություն նախքան ՄԻԱՎ թեստը: ՄԻԱՎ թեստից առաջ հարկավոր է ստանալ զոհի իրազեկված համաձայնությունը: ՄԻԱՎ թեստ անցած բոլոր անձանց, այդ թվում՝ թրաֆիքինգի զոհերին և ՄԻԱՎ վարակակիր չհանդիսացող անձանց պետք է տրամադրվի համապատասխան խորհրդատվություն: ՄԻԱՎ վարակակիր հանդիսացող անձանց հարկավոր է տրամադրել որակյալ և նրբանկատ խորհրդատվություն, ինչի համար կարող են պահանջվել այնքան հանդիպումներ, որքան անհրաժեշտ է:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի թեստին նախորդող և հաջորդող խորհրդատվության վերջնական նպատակն է ապահովել, որ.

- բոլոր միգրանտները և (կամ) թրաֆիքինգի զոհերը լիարժեքորեն հասկանան թեստի արդյունքների նշանակությունը,
- ՄԻԱՎ վարակակիրները լիարժեքորեն իրազեկված լինեն այլ անձանց վարակի փոխանցումը կանխելու անհրաժեշտության մասին,
- ՄԻԱՎ վարակակիրներն իրազեկված լինեն այլ անձանց վարակի փոխանցումը կանխելու միջոցների մասին:[lvii]

(Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ *IOM HIV/AIDS Counselling and Testing in the Context of Migration Health Assessment, Counsellor Guidelines,* հրապարակման ենթակա՝ 2006թ.):

ՄԻԱՎ-ի ԲՈՒԺՈՒՄ

ՄԻԱՎ վարակակիր անձինք կարող են տարիներ շարունակ ապրել առողջ առանց հատուկ բժշկական միջամտության՝ պարզապես հոգատարություն դրսևորելով իրենց առողջության նկատմամբ, օրինակ՝ օգտագործել առողջ սնունդ, բավարար ժամանակ հատկացնել հանգստին, հետևողականորեն պահպանել անձնական հիգիենայի կանոնները, վարել ակտիվ կենսակերպ: Եթե տվյալ անձը գիտի, որ ինքը ՄԻԱՎ վարակակիր է, ապա ինքը կարող է ստանալ համապատասխան բուժում վարակից և ՄԻԱՎ արդյունքում առաջացող այլ հիվանդություններից:

1996 թվականից գործող չափազանց արդյունավետ հակառետրովիրուսային բուժումը (ART) մեծապես փոխել է ՄԻԱՎ-ի հետագա ընթացքը, հատկապես՝ զարգացած երկրներում, և հույս կա, որ այն շուտով հասանելի կլինի նաև զարգացող երկրներում: Վերջերս կատարելագործվել են նաև բուժման նշանակման հետ կապված գիտելիքն ու փորձը: Բուժում նշանակելու համար անհրաժեշտ է անցկացնել մոնիթորինգ և հաշվի առնել, որ բուժումը կարող է ունենալ լուրջ կողմնակի ազդեցություն և որպես կանոն պետք է լինի երկարաժամկետ: Բացի այդ, սխալ բուժումը կարող է վտանգավոր լինել՝ հանգեցնելով դեղորայքի նկատմամբ կայունություն ձեռք բերած ՄԻԱՎ-ի շտամների զարգացմանը:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՈՑԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ՆԿԱՏՄԱՄԲ

Երեխաներն իրենց սոցիալական դրության բերումով խոցելի դիրքում են գտնվում բռնաբարության և սեռական չարաշահումների նկատմամբ, ինչի արդյունքում խոցելի են դառնում նաև ՄԻԱՎ վարակի նկատմամբ: Ամբողջ աշխարհում տարածված ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի մտավախությունը հանգեցրել է նրան, որ տղամարդիկ զուգընկերուհի են ընտրում իրենցից երիտասարդ կանանց, ում վարակված լինելու հավանականությունն իրենց կարծիքով ավելի փոքր է: Շատ երկրներում տարածում է գտել այն թյուր պատկերացումը, իբր ՄԻԱՎ-ը, ՁԻԱՀ-ը կամ սեռական ճանապարհով տարածվող այլ հիվանդությունները կարելի է բուժել կույս զուգընկերոջ հետ սեռական հարաբերություն ունենալու միջոցով: Սեռական շահագործման ենթակա երեխաների պարագայում ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգն ավելի մեծ է, հատկապես եթե նրանք ունեն նաև կրկնվող և (կամ) չբուժված սեռավարակներ:

Նման երեխաներին հարկավոր է առաջարկել իրենց տարիքին համապատասխան խորհրդատվություն երեխաների հետ աշխատելու հմտություններ ունեցող մասնագետների կողմից ՄԻԱՎ-ի թեստից առաջ և դրանից հետո: Ինչ վերաբերում է մեծահասակներին, ապա ՄԻԱՎ-ի հետ կապված բոլոր բժշկական թեստերը պետք է կրեն կամավոր բնույթ և ուղեկցվեն իրազեկված համաձայնության մասին պատշաճ ընթացակարգերով (տե՛ս այս գլխի բաժին 5.6):

ՄԻԱՎ-ի ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՄՈՐԻՑ ԵՐԵԽԱՅԻՆ

Այժմ հնարավոր է դարձել մեծապես նվազեցնել մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման վտանգը ծննդաբերությունից առաջ մորը համապատասխան բուժում նշանակելու միջոցով: Այդուհանդերձ, այն դեպքերում, երբ հղի կնոջ ՄԻԱՎ թեստի արդյունքները դրական են, բուժաշխատողները պետք է համապատասխան բուժում նշանակեն նրան: Գործնականում սա նշանակում է, որ եթե տվյալ կինը պետք է վերադառնա մի վայր, որտեղ բացակայում են անվտանգ ծննդաբերության համար անհրաժեշտ պայմանները, ապա ծառայություն մատուցողները պետք է որոնեն այլ տարբերակներ (այդ թվում՝ իրավական պաշտպանության միջոցներ), որպեսզի տվյալ կինը կարողանա ծննդաբերել այնպիսի վայրում, որտեղ ինքն ու իր երեխան կստանան պատշաճ բուժում:

5.9 Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված բժշկական աջակցության դատաբժշկական հայեցակետեր

Թրաֆիքինգի գործընթացի դատաբժշկական բաղադրիչն իրենից ներկայացնում է խիստ կարևոր հարց, որի մասին պետք է հիշեն թրաֆիքինգի զոհ դարձած անձանց աջակցություն մատուցող բոլոր բուժաշխատողները: Լրացուցիչ ուղեցույցները ներկայացվում են 6-րդ գլխում «Համագործակցություն իրավապահ մարմինների հետ թրաֆիքինգի զոհերի օրենքով սահմանված իրավունքների և իրավական պաշտպանության տարբերակների շուրջ»: Այս բաժինը նպատակ չունի խրախուսելու թրաֆիքինգի ենթարկված անձանց համագործակցել իրավապահ մարմինների հետ կամ դատի տալ իրենց թրաֆիքինգի ենթարկած չարագործներին: Դրա միակ նպատակն է առանձնացնել հիմնական սկզբունքները և բուժաշխատողի ակնկալվող դերակատարումը թրաֆիքինգի զոհին աջակցելու գործում, եթե վերջինս իր ազատ կամքով որոշի համագործակցել իրավապահ մարմինների հետ: Դատաբժշկական փորձաքննության ոլորտում իրենց դերը գիտակցելու և այն իրագործելու պարագայում բուժաշխատողները կարող են մեծապես նպաստել նման իրավական գործողություններին: Ուստի, նրանք պետք է տեղյակ լինեն թրաֆիքինգի դեպքի դատաբժշկական փորձաքննության արդյունքների ներկայացման հետևյալ սկզբունքների մասին.

- Բժշկական փաստաթղթերից (ներառյալ՝ հիվանդության պատմություն, բժշկական թեստեր, լաբորատոր հետազոտության, ռենտգենի կամ այլ ախտորոշման միջոցների արդյունքներ) ստացված բոլոր տվյալները պետք է պահպանել խիստ գաղտնի և տրամադրել միայն իրավապահ մարմինների ներկայացուցիչներին թրաֆիքինգի զոհի թույլտվությամբ:
- Բժշկական տեղեկատվությունը երբեմն կարող են պահանջել դատարանները, և ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամները կարող են ստիպված լինել նման տվյալները տրամադրել մեղադրանքի պետական քննիչներին կամ ենթադրյալ մարդավաճառի դատապաշտպանին: Հետևաբար, խիստ կարևոր է, որ բուժաշխատողը տեղյակ պահի թրաֆիքինգի ենթարկված անձին իր հիվանդության պատմության կամ բժշկական տեղեկությունների օգտագործման կարգի մասին, և այն դեպքում, եթե թրաֆիքինգի զոհը հրաժարվի դատաքննությանը մասնակցելուց, ինքն էլ հրաժարվի բժշկական

տեղեկությունները ներկայացնելուց և դրանք մարդավաճառի դեմ օգտագործելուց:

- Որոշ դեպքերում ծառայություն մատուցող բուժաշխատողներին կարող են դատարան կանչել՝ որպես փորձագետ վկաներ ցուցմունք տալու համար: Ծառայություններ մատուցող անձը կարող է խուսափել նման վտանգավոր ցուցմունքներ տալու պարտավորությունից և այդ նպատակով վարձել անկախ դատաբժշկական փորձագետ, որպեսզի վերջինս հավաքի անհրաժեշտ բժշկական տեղեկությունները (թրաֆիքինգի ենթարկված անձի համաձայնությամբ) և որպես փորձագետ վկա դրանք ներկայացնի դատարանում: Ծառայություն մատուցող բուժաշխատողները պետք է ներկա լինեն անկախ փորձագետի հետ թրաֆիքինգի զոհերի մասնակցությամբ բոլոր հանդիպումներին կամ նրանց բժշկական թեստերին՝ ինչպես փորձագետին, այնպես էլ թրաֆիքինգի զոհին աջակցելու համար, եթե, իհարկե, վերջինս ունի նման աջակցություն ստանալու ցանկություն:
- Նույնիսկ այն դեպքերում, երբ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները (նախընտրելի է, որ նրանք լինեն թրաֆիքինգի զոհի հետ կապհաստատած բուժաշխատողներ կամ սոցիալական աշխատողներ) դատարանում կամ իրավապահ կառույցներում անձամբ ցուցմունք չեն տալիս, միևնույն է նրանք պետք է թրաֆիքինգի զոհի համաձայնությամբ միշտ ուղեկցեն նրան դատարանում և իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին՝ նրան հոգեբանական աջակցություն տրամադրելու և նշված իրավասու մարմինների հետ արդյունավետորեն համագործակցելու վստահություն հաղորդելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատարանները կարող են հրահանգել ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցներին ներկայացնել համապատասխան տեղեկություններ, բուժաշխատողները պետք է տարրական գիտելիքներ և փորձ ունենան դատաբժշկական փորձաքննության ոլորտում: Բուժաշխատողները պետք է կարողանան բուժզննման ժամանակ ճանաչել տվյալ զոհի հետ պատահած դեպքերի (օրինակ՝ բռնաբարության, գերության մեջ պահվելու) նշանները (օրինակ՝ պատռված վերքի, փափուկ հյուսվածքների կամ ոսկորների վնասվածքների, թերսնուցման կամ

այլ նշաններ), ախտորոշումը հաստատելու համար թրաֆիքինգի զոհին ուղղորդեն ընդհանուր լաբորատոր կամ ռենտգեն հետազոտության և պահպանեն համապատասխան փաստաթղթերը (օրինակ՝ դեպքերի նյութեր, որոնք պարունակում են բժշկական ստուգման արդյունքները), այդ թվում՝ ախտահարումների, վերքերի, վնասվածքների և այլ արտաքին նշանների լուսանկարներ և համապատասխան փաստաթղթեր: Բուժաշխատողները պետք է նաև տարրական գիտելիքներ ունենան տվյալ դեպքի շրջանակներում լրացուցիչ հետազոտությունների համար կենսաբանական նմուշներ վերցնելու ոլորտում, եթե հետաքննության փուլում առաջանա նման անհրաժեշտություն: Կարելի է դիմել դատաբժշկական փորձագետներին թրաֆիքինգի զոհի անունից հետաքննության և դատավարության ընթացքին աջակցելու համար:

5.10 Բուժաշխատողի և հիվանդի փոխհարաբերությունները

Բուժաշխատողների (օրինակ՝ բուժքույր, բժիշկ հոգեբան կամ սոցիալական աշխատող) և հաճախորդների և (կամ) հիվանդների միջև ձևավորվում են խիստ անհավասարակշռված փոխհարաբերություններ: Այդ անհավասարակշռության պատճառով հիվանդներից շատերը կարող են դժկամություն ցուցաբերել հարցեր տալու, իրենց կարծիքն արտահայտելու, բուժաշխատողի կարծիքը պարզելու կամ իրենց առողջության վերաբերյալ սեփական որոշումը կայացնելու հարցերում: Բուժաշխատողներին նկատմամբ թրաֆիքինգի զոհերի տածածհարգանքի զգացումը կարող է ուժեղանալ այն վերաբերմունքի ազդեցությամբ, որը նրանք դրսևորել են իշխանավոր մարդկանց նկատմամբ իրենց շահագործողների հսկողության տակ գտնվելու ժամանակ: Բացի այդ, աջակցություն ստացող անհատներից ոմանք, մասնավորապես նրանք, ովքեր հավատացած են, որ իրենց բարեկեցությունը և անգամ կյանքը կախված են այլոց խորհուրդներին անվերապահորեն հետևելուց, իրենց առջև նպատակ են դնում հաճոյանալ բուժաշխատողին «խնդիր չառաջացնելու համար» և համոզված են, որ նրանց ասածների կատարումը և պատշաճ պահվածքը կապահովեն աջակցության շարունակականությունը:

Բուժաշխատողներն իրենց հերթին կարող են ղեկավար կամ խնամառու դիրք ստանձնել հիվանդների նկատմամբ և նրանց նման վերաբերմունքին արձագանքում են համապատասխանաբար՝ ընդգծելով իրենց լիազոր դիրքը և գիտելիքները: Բուժաշխատողները պետք է զերծ

մնան հրամայական հնչերանգից՝ փոխարենը խոսելով հուսադրող ձայնով և հաղորդելով տեղեկություններ: Բուժաշխատողները պետք է խոսեն հիվանդին հասկանալի լեզվով ու եզրույթներով և կանոնավոր կերպով խրախուսեն և ուժեղացնեն հիվանդի ինքնագնահատականը և սեփական կարծիքն արտահայտելու համարձակությունը: Բացի այդ, բժշկական զննման կամ ցանկացած այլ գործողության ընթացքում բուժաշխատողները պետք է աջակցեն և խրախուսեն հիվանդին՝ քայլ առ քայլ բացատրելով իրենց գործողությունները, ինչպես նաև դրանց նպատակները և տևողությունը: Առավել արդյունավետ աշխատանք են կատարում այն բուժաշխատողները, ովքեր կարողանում են օգնել իրենց հիվանդներին հասկանալ իրենց խնդիրը և նշանակված բուժումը:

Հիվանդների և բուժաշխատողների միջև ձևավորվող հարաբերություններին ներհատուկ մյուս խնդիրը կայանում է նրանում, որ թրաֆիքինգի զոհերից շատերը բուժզննումը համարում են վախենալի, ձանձրալի և անգամ ստորացուցիչ: Ամբողջ աշխարհում մեծ թիվ են կազմում այն մարդիկ, ովքեր երբեք չեն անցել բուժզննում: Կան երկրներ, որտեղ բուժաշխատողներն անգամ չեն դիպչում հիվանդին և դեղորայք կամ բուժում են նշանակում միայն ախտանիշների հիման վրա: Քիչ չեն նաև կանայք, ովքեր երբեք չեն անցել փոքր կոնքի օրգանների հետազոտում և անգամ տեղյակ չեն, որ նման հետազոտումը գինեկոլոգիական հետազոտության բաղադրիչն է: Մասնավորապես, սեռական շահագործման ենթարկված երեխաները, պատանիները և կանայք կարող են բուժաշխատողի անմիջական միջամտությամբ կատարվող նման հետազոտությունները համարել բռնության լրացուցիչ դրսևորում: Այդ իսկ պատճառով, կանանց և աղջիկներին հարկավոր է առաջարկել կին բուժաշխատողի մոտ հետազոտություն անցնելու հնարավորություն: Հարկավոր է ամեն ջանք գործադրել նման հնարավորություն ապահովելու համար:

.....

Խիստ կարևոր է, որպեսզի բուժաշխատողը (կամ անհատին առաջնային աջակցություն մատուցող անձը) որոշ ժամանակ հատկացնի՝ թրաֆիքինգի զոհին բոլոր ընթացակարգերի նշանակությունը և նպատակները ներկայացնելու համար: Ցանկալի է, որ յուրաքանչյուր ընթացակարգի փուլերը պարզաբանվեն բժշկական թեստից առաջ և դրա ընթացքում:

.....

5.11 Բժշկական միջամտության բաղադրիչների մշակումը թրաֆիքինգի հակազդման ծրագրերում

Ենթադրվում է, որ թրաֆիքինգի հակազդման շրջանակներում մատուցվող պաշտպանության և աջակցության բոլոր ծառայությունները պետք է ներառեն բժշկական միջամտության բաղադրիչ, որը պետք է մշակվի նախապես՝ սկսած ծրագրի առաջարկի նախագծի, ծրագրի մեկնարկի և իրագործման փուլերից: Այդուհանդերձ, յուրաքանչյուր բժշկական բաղադրիչի հետ կապված պահանջները կարող են տարբերվել ըստ ծրագրերի և, իհարկե, ըստ երկրների:

Ուստի, բժշկական ծրագրի մշակողը, ով, տվյալ գործունեության բնույթով պայմանավորված, պետք է լինի բավականաչափ գիտելիքներով զինված և հեղինակություն վայելող բուժաշխատող, պետք է կատարի հետևյալ ընդհանուր գործողությունները: Ստորև բերված ցանկը զուտ բացատրական բնույթ է կրում և կազմված է ողջ աշխարհում Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից վերաբնակեցվողների առողջության գնահատման պլանավորման գործընթացի համապատասխան մասերից:

Թրաֆիքինգի հակազդման շրջանակներում պաշտպանության և աջակցության ծրագրի բժշկական միջամտության բաղադրիչի մշակման և կենսագործման ստուգման ցանկ.

- հետազոտել և վերլուծել ժողովրդագրական իրավիճակը (այդ թվում՝ բնակչության բաշխումը ըստ տարիքային խմբերի և սեռական պատկանելության), թրաֆիքինգի զոհերի հավանական ծագման երկրների, ինչպես նաև տարանցիկ և նպատակակետ երկրների բնակչության շրջանում տարածված հիվանդությունների համաճարակաբանությունը (հատկապես՝ հանրային առողջապահության նշանակության հիվանդություններ, օրինակ՝ թոքախտ, հեպատիտ, դողէրոցք, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ և այլն),
- համոզվել, որ պատշաճ թույլտվություններն արդեն ստացվել են կամ շուտով ստացվելու են հետևյալ հաստատություններից, օրինակ՝ տվյալ երկրի առողջապահության նախարարություն (մասնագիտական գործունեություն ծավալելու վկայագիր), առողջապահության նախարարության տարածքային ծառայություններ (ճամբար, հիվանդանոց կամ պոլիկլինիկա կամ լաբորատորիա), հանրային առողջապահության ծառայություններ

(հանրային առողջապահության մասին զեկուցելու պահանջներ), ներգաղթի, անվտանգության և այլ հարցերով կառավարական գերատեսչություններ,

- գնահատել և (կամ) ընտրել ապաստարանի ներսում կամ դրա տարածքից դուրս անհրաժեշտ տեղական շինությունները և սարքավորումները՝ համոզվելու, որ բավարար տեղ կա տվյալ պահին ակնկալվող թվով թրաֆիքինգի զոհերին կացարանով և բուժօգնությամբ ապահովելու համար, ասել է թե՝ կլինիկական հետազոտությունների տարածքներ՝ բավականաչափ առանձին փակ տարածքներով և հագեցած սարքավորումներով, հիվանդության պատմություն և հարցազրույց, բժշկական հետազոտություն և ընթացակարգեր (օրինակ՝ հասակ, քաշ և արյունառություն), օդի ջերմաստիճանի տատանումների նկատմամբ զգայուն նյութերի պահպանում սառը պայմաններում (օրինակ՝ դեղորայք, պատվաստանյութեր, ռեակտիվ նյութեր և այլն) (տե՛ս նաև այս գլխի բաժինը աշխատանքային տարածքի կառավարման վերաբերյալ),
- վերհանել և գնահատել պատշաճ ուղղորդման տեղական ծառայությունները, կազմել ուղղորդման և (կամ) հիվանդների փոխադրման արձանագրություններ հիվանդանոցների, բուժարանների և բուժծառայություններ մատուցող այլ հաստատությունների հետ (այդ թվում՝ զեկույց կազմելու ուղեցույցներ, բյուջեի և աշխատավարձերի չափերի սահմանում, վարքագծի չափանիշներ, դեպքերի վարման ընթացակարգերի որակ),
- մշակել դեղորայքի և բժշկական պարագաների (այդ թվում՝ պատվաստանյութեր, անձնական հիգիենայի և ապաստարանի մաքրության համար անհրաժեշտ պարագաներ և այլն) գնման ծրագիր,
- վերհանել հիվանդության պատմությունների և բժշկական այլ փաստաթղթերի կառավարման հետ կապված պահանջները, ներառյալ՝ հաղորդակցում և էլփոստ, բժշկական տեղեկությունների պահպանում ապահով պայմաններում, տվյալների վերլուծություն և այլն,
- կապ հաստատել վերադարձի երկրում (սովորաբար տարանցիկ կամ ծագման երկիր) համապատասխան առողջապահական ծառայությունների հետ՝ ապահովելու ժամանելուց հետո թրաֆիքինգի զոհի անմիջական բժշկական կարիքների բավարարումը:

5.12 Դեպքի վարման ուղեցույցներ թրաֆիքինգով պայմանավորված ընդհանուր կլինիկական վիճակների վերաբերյալ

Թեև հետևյալ բաժնում ամփոփվում են համաշխարհային բժշկության պրակտիկայում սովորական դարձած հարցեր, այդուհանդերձ խիստ կարևոր է ընդգծել մեծ զգոնություն դրսևորելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով այն խոչընդոտները, որոնք կարող են խանգարել բուժաշխատողին պատկերացում կազմել նախքան թրաֆիքինգի ենթարկվելը տվյալ անհատի առողջական վիճակի մասին, ինչպես նաև հնարավոր փոփոխությունների վերաբերյալ դատողություն անելու համար բավարար տեղեկությունների պակասը և անձի առողջական վիճակի մասին առկա հնարավորինս շատ տվյալներ փաստագրելու անհրաժեշտությունը՝ նրա ապաքինման ընթացքում դրանց անդրադառնալու համար:

Բուժզննման շրջանակներում համապատասխան բուժաշխատողը պետք է կազմի հիվանդի մանրամասն պատմությունը (այդ թվում՝ տեղեկություններ նախքան թրաֆիքինգի ենթարկվելն ընտանեկան շահագործման կամ հիվանդությունների և (կամ) այլ հիրադարձությունների մասին), կատարի ամբողջական բուժզննում և հոգեկան վիճակի հետազոտություն: Հոգեբուժական փորձաքննությունը նշանակվում է միայն այն դեպքերում, երբ իսկապես կա դրա կարիքը:

Բուժաշխատողը պետք է քաջատեղյակ լինի այն ախտանիշերին և դրսևորումներին, որոնք նկատվում են սեռական չարաշահումների և բռնաբարության զոհ դարձած թրաֆիքինգի զոհերի մոտ, օրինակ՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, անցանկալի հղիություն և նախկինում կատարված հղիության արհեստական ընդհատման հետևանքով առաջացած բարդություններ:

(Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ «MHS Medical Manual» ձեռնարկը (2001թ. հրատարակություն), էջեր՝ 30–33):

Շատ խրախուսելի է, որ ընթերցողը հետևի Առողջապահության համաշխարհային կազմակերպության կայքում (www.who.int) դեպքի վարման ուղեցույցների վերաբերյալ նորացվող տվյալներին: Բացի մյուս բժշկական դասագրքերից, որտեղ մանրամասն ներկայացվում է դեպքի վարումը, ստորև ներկայացվում է երկու շատ օգտակար աղբյուր վարակիչ հիվանդությունների համաճարակաբանության և դեպքի կառավարման վերաբերյալ՝

- «WHO Recommended Strategies for the Prevention and Control of Communicable Diseases» («Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկած ռազմավարությունները վարակիչ հիվանդությունները կանխելու և դրանց տարածումը վերահսկելու վերաբերյալ»), WHO/UNAIDS, 2001թ, Ժնև,
- «Control of Communicable Diseases Manual» («Վարակիչ հիվանդությունների տարածման վերահսկողության ձեռնարկ»), American Public Health Association, (17-րդ հրատարակություն, 2000թ.):

5.12.1 ՍԵՌԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ՎԱՐԱԿՆԵՐ (ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐ)

Թրաֆիքինգի զոհերից մեծ մասի մոտ հանդիպում են սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ, օրինակ՝ գոնորեան և քլամիդիոզը, ինչը հիմնականում պայմանավորված է նրանց սեռական շահագործմամբ, որը հաճախ ուղեկցում է մարդկանց թրաֆիքինգը: Թրաֆիքինգի ենթարկված անձանց շրջանում հանդիպող սեռավարակներից առավել մտահոգիչը ՄԻԱՎ-ն է:

Սեռավարակների հետ կապված դեպքի կառավարման հիմքում պետք է ընկած լինեն ինչպես կանխարգելման, այնպես էլ բուժման սկզբունքները: Բացի այդ, հուսալի լաբորատորիայի առկայության պարագայում հարկավոր է կատարել սեռավարակների շճաբանական հետազոտություն: Այդուհանդերձ, սուղ ռեսուրսների պայմաններում, երբ չկան ախտորոշումը հաստատելու համար անհրաժեշտ լաբորատոր ծառայություններ, որոշ սեռավարակներ բուժելու համար անհրաժեշտ է որդեգրել համախտանիշի վրա հիմնված մոտեցում: Ելակետային չափանիշներն ամփոփված են երկու առանցքային փաստաթղթերում, որոնք պետք է տրամադրվեն թրաֆիքինգի հակազդման շրջանակներում կազմակերպվող պաշտպանության և աջակցության ծրագրեր մատուցող բոլոր կազմակերպություններում: Այդ փաստաթղթերն են՝ «Sexually Transmitted Diseases Treatment Guidelines» («Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման ուղեցույցներ»), 2002թ., Հիվանդացության և մահացության մասին շաբաթական հաշվետվություն (MMWR) «Հանձնարարականներ և զեկույցներ», 3 մայիսի, 2002թ./51 (RR06/) և «WHO Recommended Strategies for Prevention and Control

of Communicable Diseases» («Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկած ռազմավարությունները վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց տարածումը վերահսկելու վերաբերյալ», հեղինակային իրավունք 2001թ., Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, Ժնև):

5.12.2 ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հոգեկան առողջությունը պայմանավորված է մի շարք տարբեր գործոններով, մասնավորապես՝ անհատի անձնական պատմությունը, նախկինում տեղի ունեցած միջադեպերը և շատ անգամ՝ ներկա մտավախության և անորոշության արդյունքում առաջացած հոգեկան ընկճվածությունը: Խիստ կարևոր է հիշել, որ «նախկինում տեղի ունեցած միջադեպեր» ասելով՝ նկատի ունենք այն հանգամանքը, որ թրաֆիքինգի զոհ դարձած անձանցից շատերը վերապրել են հուզական ցնցում կամ չարաշահումներ նախքան թրաֆիքինգի ենթարկվելը: Մարդավաճառների ճանկերի մեջ ընկնելուց առաջ անձի կյանքում տեղի ունեցած նման միջադեպերը խորացնում են թրաֆիքինգի ընթացքում ի հայտ եկող հոգեկան ընկճվածության գործոնների ազդեցությունը և խիստ բացասաբար են անդրադառնում վերաինտեգրման փուլի վրա: Ծագման երկրից հեռացած անձանց պարագայում նման գործոնները, որպես կանոն, ներառում են միգրացիայի հետ կապված ապրումները և լարվածությունը (օրինակ՝ լեզվական և մշակութային արգելքներ, օտարացում, մենություն, նախկինում գործող աջակցության ցանցի կորուստ և այլն) և ներկա իրավիճակով պայմանավորված անորոշությունը (օրինակ՝ կացության կարգավիճակ, վարչական ընթացակարգեր): Նպատակակետ կամ ծագման երկրում գտնվող անհատների համար թրաֆիքինգից բխող հուզական ցնցման հետևանքներին միանում են նաև մտահոգություններն ընթացիկ խնդիրների վերաբերյալ, օրինակ՝ ընտանիքի անդամների արձագանքը նրանց վերադարձին, աշխատանք գտնելու խնդիրը կամ իրենց թրաֆիքինգի ենթարկած մարդավաճառների կողմից հնարավոր պատժամիջոցները՝ փախուստի դիմելու և պարտքերը չմարելու համար:

Թեև յուրաքանչյուր անհատ յուրովի է արձագանքում թրաֆիքինգի ենթարկվելու հետևանքով իր ապրումներին, սակայն տարածված են հետևյալ արձագանքի տեսակները.

Հոգեսոմատիկ պատասխան ռեակցիաներ.

- տկարություն, ցավեր, գլխացավ, ցավեր պարանոցի, մեջքի և որովայնի շրջանում, ստամոքսաաղիքային տրակտի հետ կապված խնդիրներ,
- դող, քրտնարտադրություն, ուժեղ սրտխփոց,
- վնասակար փոփոխություններ քնելու ժամերում կամ ախորժակի անկում,
- իմունային համակարգի քայքայում և դրանից բխող բարդություններ (օրինակ՝ ավելի մեծ հակվածություն մրսածության, հարբուխի կամ այլ հիվանդությունների նկատմամբ) և
- առավել ռիսկային վարքագիծ (օրինակ՝ ծխախոտ, ալկոհոլ, թմրամիջոցներ, ռիսկային սեռական վարքագիծ):

Զգուշացում. խիստ կարևոր է հիշել, որ սոմատիկ բնույթի գանգատները վկայում են ոչ միայն հոգեկան ընկճվածության մասին: Մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թրաֆիքինգի զոհ դարձած անձինք ամենայն հավանականությամբ կրել են ֆիզիկական զրկանքներ և ստացել դիտավորյալ պատճառված վնասվածքներ՝ ֆիզիկական ախտանիշերին պետք է լուրջ վերաբերվել և տալ համարժեք գնահատական:

Հոգեբանական պատասխան ռեակցիաներ.

- հուսահատության և վիատության զգացում, ինքնասպանություն գործելու սևեռուն գաղափար,
- բռնկվող բնավորություն կամ խիստ անզուսպ զայրույթ առանց որևէ ակնհայտ պատճառի,
- գիտակցության փոփոխություն, այդ թվում՝ գիտակցության կորուստ, անցողիկ դիսոցիատիվ խանգարումներ, անցած միջադեպերի վերապրում,
- փոփոխություններ այլոց հետ հարաբերություններում, այդ թվում՝ մեկուսացում և աուտիզմ, խոր անվստահություն:

Զգուշացում. թրաֆիքինգի ենթարկված անձանց շրջանում սովորական է թշնամական և ագրեսիվ վերաբերմունքը: Խիստ կարևոր է հաղթահարել զայրանալու, հուսահատվելու, տվյալ անձին մերժելու կամ վանելու բնական արձագանքը: Փորձեք հիշել, որ նման վերաբերմունքն անձնական վիրավորանք չի ենթադրում:

Թեև վերոնշյալ հոգեսոմատիկ և հուզական արձագանքները կարելի է համարել պատշաճ պատասխան ռեակցիա աննորմալ միջադեպին (թրաֆիքինգի դեպքից բխող հուզական ցնցում), սակայն նման արձագանքները պետք է արժանանան լուրջ ուշադրության, քանի որ դրանք կարող են լինել հոգեկան խանգարման ախտանիշներ, որոնք կարիք ունեն հատուկ ուշադրության և խնամքի:

Որոշ անհատներ կարող են ունենալ հոգեկան խանգարման լուրջ դրսևորումներ, օրինակ՝ տրամադրության տատանումներ, տագնապի զգացում, հարմարվողականության խանգարումներ, հետտրավմատիկ սթրեսային խանգարումներ և հոգեմետ նյութերի չարաշահման հետ կապված խանգարումներ:

Հոգեբուժական ախտորոշում և պիտակավորում

Հոգեբուժական ախտորոշման հարցում գոյություն ունի երկու տարբեր տեսանկյուն, մասնավորապես՝ երբ խոսքը գնում է կրած տրավմայով պայմանավորված ախտանիշների հիման վրա իրականացվող ախտորոշումների մասին: Նշված երկու տեսանկյուններից մեկն այն է, որ ճանաչված հիվանդության ախտորոշումը թույլ է տալիս համապատասխան անձին իրեն զգալ պակաս մեկուսացված կամ իր ունեցած հոգեբանական ապրումների առումով եզակի (այսինքն՝ աննորմալ կամ մեղավոր): Որոշ անհատների պարագայում ճանաչված ախտորոշման առկայությունը որոշ չափով թեթևացնում է մեղքի զգացումը կամ հուսահատությունը այն ապրումների և վարքագծի կապակցությամբ, որոնք նրանք գրեթե չեն կարողանում վերահսկել: Ըստ էության, մարդիկ կարող են հիվանդանալ՝ ենթարկվելով ծանր տրավմայի ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական առումով, և երկու դեպքերն էլ հավասար ուշադրության կարիք ունեն: Գործնական տեսակետից, որոշ երկրներում ճանաչված բժշկական ախտորոշման ստացումը թույլ է տալիս անհատին օգտվել նրան այնքան անհրաժեշտ հանրային ռեսուրսներից:

Մյուս կողմից, աննորմալ հանգամանքներում պատշաճ համարվող պատասխան ռեակցիաները որպես հիվանդագին երևույթներ բուժելը կարող է բերել նրան, որ տվյալ անհատները ենթարկվեն խարանավորման կարճատև կամ երկարատև հեռանկարում: Այս իրողությունը կարող է հանգեցնել մոլորեցնող ինքնագնահատականի կամ ինքնության սխալ մեկնաբանմանը և առաջացնել մեկուսացում, եթե տվյալ անհատն ընկալվում է որպես աննորմալ, ոչ հուսալի և այլոց պես գործելու անկարող:

Ինչ է իրենից ներկայացնում հոգեկան առողջության աջակցությունը

Հոգեկան առողջության աջակցությունը դրսևորվում է բազում ձևերով, փոխվում է ժամանակի ընթացքում և հաճախ կախված է առկա ռեսուրսներից, ինչպես նաև տվյալ երկրի մշակույթից և սովորույթներից: Աջակցության ռազմավարությունների արդյունավետությունն ապահովելու համար՝ դրանք պետք է հարմարեցնել անհատի կարիքներին, իրավիճակին (օրինակ՝ հասանելի աջակցության այլ աղբյուրներին, բնակության տևողությանը և այլն), անձնական տվյալներին (այն է՝ տարիք, գենդերային պատկանելիություն, մշակույթ և այլն), ինչպես նաև անձի անհատականության այլ առանձնահատկություններին: Բացի այդ, մատուցվող աջակցությունը պետք է լինի ամբողջական, դրանով պետք է ճանաչվի հոգեկան առողջության բազմաշերտ բնույթը (այն է՝ ֆիզիկական առողջություն, սոցիալական և տնտեսական բարեկեցություն), ինչպես նաև պետք է առաջարկվեն աջակցության բազմաբնույթ ձևեր (օրինակ՝ հուզական աջակցություն, աջակցություն կրթության և աշխատանքի տեղավորման հարցերում): Թեև անցյալում տեղի ունեցածը կարող է թրաֆիքինգից տուժած անձի ներկայիս տրավմայի հիմքում ընկած առանցքային պատճառը լինել, աջակցության մոտեցումները չպետք է որոշվեն բացառապես անցած ապրումներով և դրանց հետ կապված հիշողություններով, այլև պետք է օգնեն տվյալ անհատին վստահությամբ շարժվել առաջ դեպի առողջ և խոստումնալից ապագա:

Խիստ կարևոր է չենթադրել, որ արևմտյան երկրներում ընդունված կամ ժամանակակից հոգեբանական մոդելները միակն են կամ իրենցից ներկայացնում են հոգեբանական խանգարումներին արձագանքելու միակ կամ բարձրագույն չափանիշը: Թեև հոգեկան առողջության

աջակցությունը կարող է դրսևորվել հոգեթերապևտի կամ սոցիալական աշխատողի հետ հանդիպումների և քննարկումների տեսքով, այն կարող է հավասարապես ներառել մասնակցությունը համայնքային զարգացման ծրագրերին, դասընթացներին, կրթական կամ մշակութային կողմնորոշման ծրագրերին, որևէ աշխատանքի ստանձնում կամ նոր հարաբերությունների ձևավորում կամ էլ արդեն գոյություն ունեցող հարաբերությունների վերաձևակերպում:

Ֆորմալ բնույթի գործողություններից բացի, ապաստարաններում կամ թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող աջակցություն մատուցող անձանց փորձը վկայում է այն մասին, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց միջև ոչ պաշտոնական և արտահերթ հանդիպումները, երբ նրանք կարող են անմիջականորեն զրուցել և կիսվել իրենց զգացումներով և մտահոգություններով, կարող են կարևոր բուժարար ազդեցություն ունենալ:

Այդուհանդերձ, թրաֆիքինգի զոհերին աջակցություն տրամադրող մասնագետները միակարծիք են այն հարցի շուրջ, որ տվյալ անձանց դիմադրողականության բարձրացման առավել կարևոր գործոններն են հանդիսանում մտերիմների (ընտանիքի անդամներ, ընկերներ և համայնք) խնամքն ու ըմբռնումը: Թրաֆիքինգից բխող հոգեկան առողջության հետ կապված խնդիրները հաճախ կրում են շարունակական բնույթ, և առավել արդյունավետ աջակցությունն այն աջակցությունն է, որը մատուցվում է երկարատև հեռանկարով և հատկապես այն պահերին, երբ տվյալ անհատն ապրում է դժվար ժամանակներ: Այդուհանդերձ, նույնիսկ այն դեպքերում, երբ անհատները գտնվում են աջակցություն մատուցող ծրագրի կարճատև խնամքի ներքո (հայրենիք վերադառնալու կամ կացարանի բացակայության պատճառով), հնարավոր է նրանց հոգեբանական աջակցություն մատուցել:

Ո՞վ կարող է մատուցել հոգեբանական աջակցություն

Հենց որ ծառայություն մատուցող կազմակերպությունը հնարավորություն ունենա թրաֆիքինգի ենթարկված անձին տրամադրել համապատասխան որակավորում ունեցող բուժաշխատող, հարկավոր է ամեն ջանք գործադրել հոգեկան առողջության վիճակի ուսումնասիրություն անցկացնելու համար: Խիստ կարևոր է ճանաչել այն անհատներին, ում հոգեկան առողջությունը խիստ վնասված է (թրաֆիքինգի գործընթացի կամ նախկինում գոյություն

ունեցող հոգեկան խանգարման հետևանքով), և այն անձանց, ովքեր ունեն անմիջական մասնագիտացված ուշադրության կարիք: Մասնավորապես, այն անհատները, ովքեր վտանգ են ներկայացնում իրենց կամ այլոց վնասելու առումով կամ չեն կարող ըստ հարկի հոգ տանել սեփական անձի մասին իրենց հոգեկան վիճակի պատճառով (օրինակ՝ չեն հագնվում, չեն սնվում, դրսևորում են պսիխոտիկ բնույթի ռեակցիաներ), կարող են ունենալ դեղորայքի կարիք իրենց առողջական վիճակը կայունացնելու համար, իսկ որոշ դեպքերում՝ անգամ հիվանդանոց տեղափոխվելու կարիք: Ուստի, ճիշտ ախտորոշում իրականացնելու համար՝ խիստ կարևոր է, որ ծառայություն մատուցող կազմակերպության կողմից աջակցություն ստացող բոլոր թրաֆիքինգի զոհերը հետազոտություն անցնեն հոգեկան բուժօգնության ոլորտում համապատասխան ուսուցում ստացած բուժաշխատողի մոտ: Տվյալ հաստատության ռեսուրսներից կախված՝ դա կարող է լինել ընդհանուր ուղղվածության մասնագետ, ով համապատասխան ուսուցում է ստացել հոգեկան առողջության ոլորտում, հոգեբույժ, կլինիկական հոգեբան, հոգեբուժական ուղղվածությամբ բուժքույր կամ հոգեբուժության ոլորտում ուսուցում ստացած սոցիալական աշխատող: Եթե անհատների մոտ դրսևորվում են լուրջ խանգարումներ, ապա այս բուժաշխատողները պետք է դեպքն ուղղորդեն մասնագետին կամ բուժում նշանակեն: Նշում. Վերոնշյալ ոչ բոլոր բուժաշխատողներն են իրավասու դեղորայք նշանակել: Այն բուժաշխատողները, ովքեր չունեն նման լիազորություններ, պետք է հիվանդին ուղղորդեն այն մասնագետի մոտ, ով կարող է նրան դեղորայք դուրս գրել:

.....

Հոգեկան առողջության ոլորտում կարճաժամկետ կամ ոչ պաշտոնական դասընթացները (օրինակ՝ երեք շաբաթ տևողությամբ) կամ «խորհրդատվությունները» բավարար չեն աշխատակազմի անդամներին առաջնային ախտորոշում կատարելու կամ բուժում նշանակելու համար:

.....

Ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո գտնվող այն անձինք, ովքեր չունեն մասնագիտացված հոգեբուժական միջամտության (բուժման, հիվանդանոց տեղափոխման) անմիջական կարիք, կարող են օգտվել հոգեբանների, հոգեբույժների, բուժքույրերի կամ հոգեկան առողջության ոլորտում ուսուցում ստացած սոցիալական աշխատողների կողմից մատուցվող հոգեկան առողջության աջակցության ընթացիկ ծառայություններից: Բացի այդ, այն անձինք,

ովքեր ոչ պաշտոնական կամ կարճաժամկետ ուսուցում են ստացել հոգեկան առողջության կամ հոգեբանասոցիալական աջակցության ոլորտում, կարևոր դեր են խաղում բուժական (թերապևտիկ) միջավայր ձևավորելու առումով (օրինակ՝ իրազեկում են աշխատակազմի մնացած անդամներին) և առաջարկում են հոգեբանասոցիալական աջակցություն թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձանց:

Ցանկալի է, որ աջակցություն (հոգեբանական աջակցություն) ստացող յուրաքանչյուր թրաֆիքինգի զոհի համար նշանակվի նրա դեպքը վարող աշխատակից: Դեպքը վարող աշխատակիցը կարող է լինել սոցիալական աշխատող, հոգեբույժ, բուժքույր կամ հոգեբանասոցիալական խորհրդատվության ոլորտում ուսուցում ստացած անձ: Դեպքը վարող աշխատակիցը հանդիսանում է առողջական աջակցության թիմի անդամ և աշխատում է հիմնական առողջական աջակցություն մատուցող վերոնշյալ անձի ընդհանուր ղեկավարության ներքո: Դեպքը վարող աշխատակցի դերակատարումը կայանում է նրանում, որ նա ապահովվի հետևյալը.

- թրաֆիքինգի ենթարկված անձն իմանա՝ ում դիմել տեղեկատվություն ստանալու և համապատասխան խնդրանք ներկայացնելու համար,
- թրաֆիքինգի ենթարկված անձը չշփոթվի ծառայությունների և ընթացակարգերի խճճված կծիկում,
- տեղեկատվությունը չի կրում կցկտուր բնույթ կամ չի կորել,
- աշխատակազմի անդամները չեն կատարում այլ աշխատակիցների կողմից արդեն կատարվող գործառույթները,
- թրաֆիքինգի ենթարկված անձը ստիպված չէ շարունակաբար կրկնել նույն տեղեկությունները,
- խթանվում է վստահության և փոխհարաբերությունների ձևավորման գործընթացը:

Հոգեբանական աջակցության փուլեր

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հոգեբանական աջակցության հարցում գոյություն չունեն պատրաստի ձևաչափեր: Այդուհանդերձ, հոգեկան առողջության ոլորտում աշխատող, ինչպես նաև հուզական ցնցում վերապրած անձանց հետ առնչվող մասնագետներն առաջարկել են վերականգնման որոշ օրինաչափություններ և աջակցության մատուցման ռազմավարություններ: Վերջին հաշվով, թրաֆիքինգի զոհ դարձած անձանց մատուցվող հոգեբանական

աջակցության բոլոր միջոցառումների նպատակն է խթանել նրանց՝ սեփական կյանքը ձևավորելու կարողությունը թրաֆիքինգի թակարդից դուրս պրծնելուց հետո:

Վերականգնումն անհատական գործընթաց է: Ինչպես արդեն նշվել է, որևէ առանձին անձի դիմադրողականությունը և շրջապատող աշխարհին վերահարմարվելու առողջ կարողությունը պայմանավորված է բազում գործոններով (օրինակ՝ վերապրած հուզական ցնցման լրջություն և տևողություն, անձնական հատկանիշներ, մատուցվող աջակցության որակ և այլն): Հուզական ցնցում վերապրած անձանց աջակցության մատուցման ոլորտում սահմանվել են մի քանի ընդգրկուն փուլեր.

Փուլ 1. Ապահովության հաստատում. վերականգնման առաջնային նպատակն է հաստատել թրաֆիքինգի ենթարկված անձի ապահովությունը և վերականգնել նրա լիազորություններն ու հսկողության կարողությունը, այդ թվում՝ սեփական մարմնի, հույզերի և շրջակա միջավայրի նկատմամբ: Անհնար է ձեռնարկել մնացած գործողությունները, մինչև անհատն իրեն չզգա ապահովության մեջ:

Փուլ 2. Ցավագին հիշողություններ. տեսականորեն, այս փուլը սկսվում է այն ժամանակ, երբ թրաֆիքինգի ենթարկված անձինք պատմում են իրենց հետ պատահած իրադարձությունները և ցավով հիշում են այն, ինչ կորցրել են (հոգեբանական և ֆիզիկական առումով): Այդուհանդերձ, այս փուլին լիարժեք պատրաստվելու համար որոշ անհատներից կարող է ավելի երկար ժամանակ պահանջվել, քան ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո: Անցյալի սարսափելի իրադարձությունների մանրամասները վերհիշելու ժամանակի և միջոցների ընտրությունը պետք է միշտ թողնել տվյալ անհատի հայեցողությանը:

Փուլ 3. Բնականոն կյանքի վերականգնում. վերականգնման գործընթացի վերջնական նպատակն է ապահովել ինտեգրումը և վերականգնումը հասարակությունում, ինչպես նաև զարգացնել և վերաձևավորել այլոց հետ ունեցած փոխհարաբերությունները: Այս գործընթացի համար կարող է երկար ժամանակ պահանջվել, իսկ շատերի համար կարող է մի ամբողջ կյանք պահանջվել: Հոգեբանասոցիալական աջակցությունը, որը ներառում է կրթական, մասնագիտական և տնտեսական հայեցակետեր, հանդիսանում է անհատի առաջընթացի անբաժանելի մասը:

Հոգեբանական աջակցությանն ուղղված ռազմավարությունների ընդհանուր հատկանիշներ և դրանց շուրջ կայացվող որոշումներ

Կրած տրավմային ի պատասխան իրականացվող արդյունավետ միջամտությունների ընդհանուր հատկանիշները ներառում են հետևյալը՝

- թրաֆիքինգի զոհին զերծ պահել մեղքի զգացումից,
- ստեղծել աջակցային միջավայր,
- ճանաչել կրած չարաշահումները որպես քրեորեն պատժելի արարք, որի զոհ է դարձել տվյալ անձը,
- տեղեկատվություն հաղորդել տրավմատիկ ռեակցիաների վերաբերյալ և
- ակնկալիքներ արտահայտել, որ ժամանակի ընթացում առկա ախտանիշները կմեղմանան

Բուժման ռազմավարությունների վերաբերյալ որոշումներ կայացնելիս հարկավոր է առաջնորդվել թրաֆիքինգի ենթարկված անձի մասնակցելու ցանկությամբ և ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո մնալու տևողությամբ: Կարելի է հաշվի առնել նաև այլ գործոններ, ինչպիսիք են՝

- բուժման նպատակներ (օրինակ՝ ֆունկցիոնալ բարելավում, կործանարար վարքագծի կամ հարակից ծանր խանգարումների բուժում),
- հարակից հիվանդագին երևույթներ (նախկինում գոյություն ունեցող խանգարումների կամ լուրջ հիվանդագին վիճակների առկայություն),
- հոգեներգործուն միջոցների և (կամ) ալկոհոլի չարաշահում կամ կախվածություն,
- հոգեկան առողջության հետ կապված լուրջ խնդիրներ, օրինակ՝ վտանգ սեփական անձի կամ այլոց նկատմամբ,
- սեփական անձի մասին հոգ տանելու կարողություն և
- հարակից հիվանդություններ:

Հոգեբանական աջակցության տեսակի ընտրության առավել նպատակահարմար որոշումը կարող է կայացնել հոգեկան առողջության ոլորտում փորձառու բուժաշխատողը՝ խորհրդակցելով տվյալ անհատի հետ: Արևմտյան Եվրոպայի երկրներում ընդունված հոգեբանական

աջակցության թերապիայի տարածված ձևերի նկարագիրը բերված է II հավելվածում: Վերջին հաշվով, հոգեբանական աջակցության կարևորագույն հայեցակետերից է թրաֆիքինգի ենթարկված անձանց և նրանց ընտրության նկատմամբ դրսևորվող հարգալից վերաբերմունքը: [lviii]

5.12.3 ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց շրջանում հանդիպում են սանիտարահիգիենիկ վատ պայմանների հետևանքով առաջացած հիվանդություններ, որոնք պայմանավորված են աղքատությամբ և իրենց կացարանում առկա հակասանիտարական պայմաններով կամ անձնական հիգիենայի կանոնների խախտմամբ: Խիստ կարևոր է հատուկ ուշադրություն դարձնել նման անձանց մոտ մաշկի, ականջի, գլխամաշկի և աչքի վարակային հիվանդությունների (մանրէական, վիրուսային կամ սնկային) առկայության վրա և անհրաժեշտության դեպքում նշանակել համապատասխան բուժում: Թրաֆիքինգի ենթարկված անձանց մոտ կարող են նկատվել նաև հետևյալ խնդիրները՝ քոս, ոջլոտություն, սնկային ախտահարում, աչքի շաղկապենու բորբոքում (կոնյուկտիվիտ) և այլն: Բացի այդ, մարդաշատ կացարաններում, աղտոտված ջրում կամ սննդում առկա քիմիական կամ ֆիզիկական աղտոտիչ նյութերը, որոնք գերազանցում են մարդկանց համար թույլատրելի չափերը, կարող են հանգեցնել ստամոքսաաղիքային համակարգի հիվանդությունների առաջացմանը, օրինակ՝ որովայնային տիֆ, բակտերիալ դիզենտերիա (շիգելոզ), աղիքային մակաբույծներ և այլն: Բացի այդ, վատ սանիտարական պայմաններում և գերբնակեցված կացարաններում կարող են տարածվել նաև տրանսմիսիվ հիվանդություններ, ինչպիսիք են՝ դողէրոցքը (մալարիա), արևադարձային տենդը, դեղին տենդը և այլն:

«Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկած ռազմավարությունները վարակիչ հիվանդությունները կանխարգելելու և դրանց տարածումը վերահսկելու վերաբերյալ» (*WHO Recommended Strategies for Prevention and Control of Communicable*

Diseases, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2001թ.) փաստաթղթում ներկայացվում են հատուկ ուղեցույցներ վատ սանիտարահիգիենիկ պայմանների, անձնական հիգիենայի կանոնների խախտման, ինչպես նաև ջրի և սննդի աղտոտման հետևանքով առաջացած տարբեր հիվանդությունների հաղթահարման համար: Սանիտարահիգիենիկ չափանիշներն ամփոփված են նաև Հանրային առողջապահության ամերիկյան ասոցիացիայի հետևյալ

ձեռնարկում՝ «Մարդուն փոխանցվող վարակիչ հիվանդությունների տարածման հսկում» (*Control of Communicable Diseases in Man,* 17-րդ հրատարակություն, հեղինակային իրավունք, 2000թ., Հանրային առողջապահության ամերիկյան ասոցիացիա):

5.12.4 ԹՈՔԱԽՏ

Թեև մինչ այժմ կատարված հետազոտությունների արդյունքները բավարար չեն վերջնական կարծիք կազմելու համար, սակայն կարելի է ենթադրել, որ թրաֆիքինգի գործընթացի առավել տարածված վնասակար հետևանքը հանդիսանում է թոքախտը: Ամենայն հավանականությամբ նման եզրակացությունը համապատասխանում է իրականությանը՝ հաշվի առնելով, որ ի լրումն թրաֆիքինգի ընթացքում գերբնակեցման պայմաններին, թերսնուցմանը և հոգեներգործուն նյութերի չարաշահմանը՝ թրաֆիքինգի զոհերը հավանաբար ապրել են ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում նաև նախքան թրաֆիքինգի ենթարկվելը: Ավելին, թրաֆիքինգի զոհ դարձած անձանց պարագայում հարկավոր է հաշվի առնել նաև այն հայտնի հանգամանքը, որ ՄԻԱՎ-ը կարող է ուղեկցվել թոքախտով:

5.12.5 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվտանգության հետ կապված խնդիրները տարածված են աշխատանքային շահագործման կամ ժամանցի ոլորտում ներգրավման նպատակով թրաֆիքինգի դեպքերում, սակայն կարող են հանդիպել նաև այնպիսի դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձանց շրջապատող աշխարհում առկա են մասնագիտական կամ ոչ մասնագիտական բերումով նրանց առողջությունը վտանգող գործոններ: Չափանիշային բժշկական դասագրքերը, Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցները, ինչպես նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության հրապարակումները ներկայացնում են դեպքի վարման շրջանակներում նման հիվանդությունների մեծ մասի պատշաճ կանխարգելման և բուժման ռազմավարություններ:

Աշխատանքային անվտանգության պայմանների խախտումը կարող է հանգեցնել հետևյալ կատեգորիաների առողջական խնդիրներին և հիվանդություններին.

- փափուկ հյուսվածքների վնասվածքներ, օրինակ՝ կտրվածքներ, վերքեր, մաշկային շերտի ամբողջականության խախտում, կոնտուզիա, վնասվածքներ, քերծվածքներ, կապտուկներ, բռնաբարության և սադիստական բնույթի գործողությունների հետևանքով սեռական օրգանների վնասվածքներ և այլն),
- ոսկրային և մկանային վնասվածքներ, օրինակ՝ հոդախախտումներ, կոտրվածքներ, ջիլերի գերձգում, անդամահատում կամ մարմնի մասերի հեռացում և հենաշարժական համակարգի տարբեր խանգարումներ,
- մաշկի հիվանդություններ, այդ թվում՝ սանիտարահիգիենիկ վատ պայմանների հետևանքով առաջացող վերոնշյալ վարակիչ հիվանդությունները, ինչպես նաև՝ ոչ վարակիչ հիվանդություններ, օրինակ՝ քիմիական այրվածքներ և ցան, սպիներ (մարմնի մասերի, հատկապես՝ երիկամների կորզման հետևանքով որովայնի կողային հատվածում առաջացած սպիներ),
- լսողության կամ տեսողության խանգարում կամ կորուստ,
- արյան հիվանդություններ (օրինակ՝ սակավարյունություն (անեմիա), սպիտակարյունություն),
- որոշակի արտադրամասերում աշխատանքի հետ կապված շնչառական հիվանդությունների (օրինակ՝ թոքերի փոշեգարություն (պնևմոկոնիոզ) և թոքի քաղցկեղի որոշ տեսակներ),
- որոշակի վարակիչ հիվանդություններ ձեռք բերելու մեծ ռիսկ, օրինակ՝ բրուցերոզ, սալմոնելոզ և այլ հիվանդություններ, որոնցով թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են վարակվել ընտանի և (կամ) վայրի կենդանիների հետ առնչվելիս (օրինակ՝ սպանդանոց, թռչնաբուծություն, ոսկորների և (կամ) մսի վերամշակում, մսագործություն, կաշեգործություն և այլն):

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության գիրքը «Աշխատող երեխաների առողջության և անվտանգության ռիսկեր»

(Children at Work: Health and Safety Risks):[lix]

5.12.6 ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՎՈՂ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք ի սկզբանե ապրել են անապահով պայմաններում, բուժաշխատողը պետք է պատրաստ լինի նրան, որ նման անձինք կարող են կամ չունենալ պատվաստումների մասին վկայող փաստաթուղթ, կամ ստացած լինել ոչ բոլոր պատվաստումները, կամ չհիշել, թե երբ և ինչ պատվաստում են ստացել: Ուստի, թրաֆիքինգի ենթարկված անձանց համար նախատեսված բուժծառայությունների շրջանակներում հարկավոր է մատուցել նաև պատվաստումների հետ կապված ծառայություններ:

5.12.7 ՍՆՈՒՑՈՒՄ, ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ, ԱՏԱՄՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔՐՈՆԻԿ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐ

Վերոնշյալ հիվանդությունները, որոնք ընդունված է վերագրել թրաֆիքինգի հետևանքներին, արձանագրվել են Աշխատանքի միջազգային կազմակերպության և աշխարհի տարբեր մասերում գործընկեր կազմակերպությունների կողմից անցկացվող թրաֆիքինգի հակազդման տարբեր միջոցառումների շրջանակներում: Թրաֆիքինգի ենթարկված անձանց շրջանում նկատվում է նաև միգրանտներին բնորոշ հիվանդությունների մի մասը, թեև թրաֆիքինգի յուրահատուկ աշխատանքային պայմանների արդյունքում նման հիվանդություններն ավելի են սրվում: Օրինակ՝ թերսնուցումը, ըստ էության, բնորոշ է ինչպես թրաֆիքինգի ենթարկված անձանց, այնպես էլ միգրանտ աշխատողներին: Պատշաճ սննդի անհասանելիությունը, հյուծող աշխատանքը և սեռական չարաշահումը, հարակից հիվանդությունները և վարակները կամ հոգեներգործուն նյութերի չարաշահումը հանդիսանում են թրաֆիքինգի զոհ դարձած անձանց շրջանում թերսնուցման առաջացման գործոններ: Թերսնուցումը կարող է հանգեցնել թրաֆիքինգի ենթարկված երեխաների զարգացման խանգարումների, արյան հիվանդությունների (օրինակ՝ սակավարյունություն), ինչպես նաև մաշկի և ատամների հիվանդությունների:

Շահագործմամբ ուղեկցվող թրաֆիքինգի գործընթացի հարկադրական բնույթը հաճախ առաջացնում է հենաշարժական և ոսկրային համակարգի խանգարումներ (մասնավորապես՝ աշխատանքային շահագործման նպատակով թրաֆիքինգի ենթարկված անձանց պարագայում), փափուկ հյուսվածքների վնասվածքներ (այդ թվում՝ սեռական օրգանների վնասվածքներ)

և այլ տրավմաներ (այդ թվում՝ հրազենային կամ դանակահարման վերքեր, կապտուկներ, կոտրվածքներ, կիսահոդախախտ և այլն)՝ ի լրումն նյարդաբանական և այլ հետևանքների:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց մոտ հաճախ հանդիպում են նաև այլ քրոնիկ հիվանդություններ, օրինակ՝ շնչառական, ստամոքսաաղիքային կամ ներզատիչ համակարգի հիվանդություններ (օրինակ՝ շաքարախտ, վահանագեղձ աշխատանքի խանգարումներ), երիկամների կամ լյարդի ֆունկցիայի խանգարում կամ նյութափոխանակության այլ բնույթի խանգարումներ, ինչպես նաև մաշկային խնդիրներ: Նշված առողջական խնդիրները կարող են առաջանալ նախքան թրաֆիքինգի ենթարկվելը կամ սրվել շահագործման ընթացքում: Թրաֆիքինգի ընթացքում բուժօգնության անհասանելիության պատճառով անհնար է դառնում ժամանակին վերհանել թրաֆիքինգից տուժած անձանց քրոնիկ հիվանդությունները և ձեռնարկել երկրորդային կամ երրորդային կանխարգելման միջոցառումներ: Արդյունքում, այն ժամանակ, երբ տվյալ անձը հայտնվում է ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո, նրա հիվանդությունը կարող է բարդանալ և վատ կանխատեսումների տեղիք տալ:

Սույն ձեռնարկի շրջանակներում չի նախատեսվում մանրամասն քննարկել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց քրոնիկական հիվանդությունների բուժման հետ կապված դեպքի վարման սկզբունքները: Հարկավոր է մտապահել այն առանցքային սկզբունքները, որ ամենայն հավանականությամբ թրաֆիքինգի զոհերը նախկինում ի վիճակի չէին օգտվելու բուժօգնությունից, ուստի և, ծառայություն մատուցող կազմակերպության հոգատարության ներքո հայտնվելը կարող է դիտարկվել որպես նրանց ողջ կյանքում պատշաճ, նրբանկատ և աջակցային խնամք ստանալու առաջին հնարավորություններից մեկը:

5.13 Թրաֆիքինգի ենթարկված անձանց մատուցվող բուժօգնության պլանավորում

Այս բաժնի նպատակն է լրացնել ուղղորդման և աջակցության մասին 3-րդ գլուխը՝ ուղեցույցներ տրամադրելով աջակցության ծրագրում ընդգրկվող և ծրագրի շրջանակները լքող թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված բուժօգնության պլանավորման վերաբերյալ: Առողջապահության և բուժօգնության պլանավորման գծով՝ կլինիկական

գործընթացների և ենթակառուցվածքի (օրինակ՝ սարքավորումներ, անհրաժեշտ պարագաներ, ուղղորդման և (կամ) աջակցության ծառայություններ, բժշկական ուղեկցության պարագաներ և այլն) կայացման ծրագրերի համար անհրաժեշտ մանրամասն պահանջներին կարող եք ծանոթանալ սույն գլխում հաջորդիվ ներկայացված բժշկական ուղեցույցներին և ընթացակարգերին նվիրված բաժնի առաջին մասում:

Խիստ կարևոր է աջակցության ծրագրում ներգրավված յուրաքանչյուր թրաֆիքինգի զոհի համար մշակել ռազմավարական բուժօգնության մտածված ծրագիր՝ նրան բացատրելով, որ առկա բժշկական տեղեկությունների փոխանակումն աջակցություն տրամադրող կազմակերպության և նպատակակետ, տարանցիկ ու ծագման երկրներում գտնվող գործընկերների միջև կատարվում է պատշաճ կարգով: Նշված չափորոշիչները հարկավոր է հաշվի առնել և քննարկել թրաֆիքինգի ենթարկված անձի հետ տարվող աշխատանքի առաջին փուլից:

Թրաֆիքինգից տուժած անձի համար բուժօգնության ծրագիր կազմելիս հարկավոր է հաշվի առնել հետևյալ հիմնական քայլերը.

Նշանակել ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգի զոհին **հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատող** (ով պետք է զբաղվի նաև բժշկական փաստաթղթերի պահպանմամբ): Տվյալ մասնագետը պետք է համապատասխան որակավորում ունենա բժշկության, առողջապահության, հոգեբանության կամ առողջապահության հետ կապված սոցիալական աշխատանքի ոլորտում: Յուրաքանչյուր տարածքային գրասենյակ պետք է գրավոր տեսքով հստակ սահմանի տվյալ մասնագետի դերակատարման հետ կապված պարտականությունները (այդ թվում՝ պարտականությունների սահմանափակումներ): Եթե աջակցող բուժաշխատողը չի խոսում խնամք ստացող թրաֆիքինգի զոհի մայրենի լեզվով, ապա հարկավոր է վարձել որակավորված և նրբանկատ թարգմանիչ (տես՝ Հավելված I, 18, «Թարգմանչական ծառայությունների ապահովում»): Հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատողի առաջնային պարտականությունը պետք է լինի ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամների և այլ կազմակերպությունների, օրինակ՝ իրավապահ մարմինների աշխատակիցների միջև նախաձեռնողական կապերի հաստատումը՝ մասնավորապես թրաֆիքինգի զոհերի բժշկական, սոցիալական և իրավական աջակցության հետ կապված պահանջները քննարկելու նպատակով:

Անցկացնել խնամառության հարցազրույց և բուժօգնության նախնական պլանավորման քննարկում. առաջին իսկ հնարավորության դեպքում թրաֆիքինգի ենթարկված անձի հետ հարկավոր է անցկացնել նախնական հարցազրույց և բուժօգնության պլանավորման քննարկում: Նշված քննարկման նպատակն է՝

- վերհանել անմիջական կամ հրատապ առողջական կարիքները (ինչը պետք էր անել նաև նախնական խնամառության հարցազրույցի ժամանակ),
- տեղեկություններ հաղորդել հասանելի և ոչ հասանելի բժշկական և առողջապահական բոլոր ծառայությունների, այդ թվում՝ գործընկեր կազմակերպությունների աջակցության մասին, անպայման պարզաբանել ծառայությունների սահմանափակումները (տե՛ս՝ «Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ», 5, «Տեղեկությունների տրամադրում»), մանրամասն տեղեկություններ տրամադրել ֆիզիկական առողջության բուժծառայությունների, հասանելի բժշկական հետազոտությունների, հոգեկան առողջության բուժծառայությունների, սոցիալական աջակցության և այլ հարցերի մասին,
- հավաստիացնել թրաֆիքինգի զոհին, որ բոլոր ծառայությունները մատուցվում են անվճար և միայն իր համաձայնությամբ, իսկ բոլոր տվյալները պահվում են խիստ գաղտնիության պայմաններում,
- վարել յուրաքանչյուր դեպքի շրջանակներում անցկացվող այն վերաինտեգրման հարցազրույցները և գնահատումները, որոնք վերաբերում են բոլոր առողջապահական հարցերին (այդ թվում՝ այն հանդիպումներին, երբ անձին տալիս են նրբանկատ հարցեր բռնության, սեռական չարաշահումների կամ պահպանակի օգտագործման վերաբերյալ), կամ մասնակցել նման հանդիպումների, վերհանել անհատի հնարավոր ֆիզիկական և հոգեբանական առողջության խնդիրները, բժշկական հետազոտման ենթակա հնարավոր ոլորտները, սեփական բուժօգնության հետ կապված անձի ցանկությունները և հավանական ժամանակահատվածը, որի ընթացքում ակնկալվում է, որ նա կմնա համապատասխան տարածքային գրասենյակի խնամքի ներքո,
- հնարավորության դեպքում տեղեկացնել անձանց խնամքի

ժամանակաշրջանի հավանական տևողության մասին և տրամադրել գալիք բժշկական հետազոտությունների, կլինիկական զննումների և խորհրդատվությունների նախնական ժամանակացույցը:

Խորհրդակցել այլ մասնագետների հետ ժամանակացույց կազմելու հետ կապված հարցերով. հիմնական առողջական աջակցություն մատուցող մասնագետը պարտավոր է կապ հաստատել (հնարավորության դեպքում՝ համատեղ հանդիպման ժամանակ) աջակցություն տրամադրող այլ անձանց կամ կազմակերպությունների հետ՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց դեպքի մանրամասները փոխանցելու և նախնական խնամքի ծրագիր կազմելու համար: Ամենայն հավանականությամբ, նման «առողջապահության հարցերով կոմիտեի» հիմնական անդամները կլինեն՝ բժիշկներ, հոգեբաններ և սոցիալական աշխատողներ: Շատ անգամ, երբ թրաֆիքինգի ենթարկված անձանց հայրենադարձությունը նախատեսվում է իրականացնել կարճ ժամկետներում, պատշաճ խնամքի ընտրության առանցքային գործոն է դառնում ժամանակը: Լինում են նաև դեպքեր, երբ առողջապահության հարցերով կոմիտեն հանձնարարում է հետաձգել անհատի վերադարձը հայրենիք (օրինակ՝ բարդ հղիության, ՄԻԱՎ վարակակրություն, ընտանեկան բռնություն և այլն, տե՛ս ստորև): Հիմնական առողջական աջակցություն մատուցող մասնագետը նշանակում է բժշկական, կլինիկական և խորհրդատվական հանդիպումները՝ պահպանելով բժշկական հարցերի առաջնահերթությունը և խուսափելով հանդիպումների ժամերի համընկնումից:

.....

Զգուշացում. խիստ կարևոր է, որպեսզի այն դեպքերում, եթե անհատն ունի անհետաձգելի բժշկական միջամտության կարիք կամ այնպիսի առողջական խնդիրներ, որոնք չեն կարող պատշաճ կարգով լուծվել նրա ծագման երկրում (այդ թվում՝ համապատասխան բժշկական որակավորում ունեցող մասնագետների պակաս, սուղ ֆինանսական միջոցներ, խարանավորում և այլն), նրա առողջության համար պատասխանատու մասնագետները ողջամիտ դատողություններ անեն տվյալ իրավիճակում անհրաժեշտ աջակցության վերաբերյալ և համապատասխան հանձնարարականներ տան տվյալ անձի մեկնելու կամ վերադարձի ժամանակացույցը կազմող անձանց (այդ թվում՝ իրավապահ մարմիններ և ներգաղթի ծառայություններ): Հարկավոր է բացատրել իրավասու մարմինների ներկայացուցիչներին, որ

անհատի առողջության համար վտանգի առկայության պայմաններում նրան հայրենիք ուղարկելը հակասում է էթիկայի կանոններին և հիմնական մարդու իրավունքներին, և վերադարձի կամավոր բնույթն ու անվտանգությունը հանդիսանում են հիմնարար սկզբունքներ:

.....

Հարկավոր է թրաֆիքինգի ենթարկված անձի հետ անցկացնել բուժօգնության նախնական պլանավորմանը նվիրված ևս մեկ հանդիպում՝ նոր տեղեկություններ նրան տրամադրելու և բուժօգնություն ստանալու հարցում նրա համաձայնությունը պարզելու նպատակով: Թրաֆիքինգի զոհի հետ անցկացվող այս երկրորդ հանդիպման հիմնական նպատակն է ներկայացնել առաջարկվող խնամքի ծրագիրը և ստանալ նրա համաձայնությունը առաջարկվող խնամքը շարունակելու համար: Այդ հանդիպման ժամանակ հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատողը պետք է առաջնորդվի համաձայնության ընթացակարգով՝ համալիր տեղեկություններ տրամադրելով առաջարկվող ֆիզիկական և հոգեբանական խնամքի («Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ», 5, «Տեղեկատվության տրամադրում» և 6, «Իրազեկված համաձայնության ստացում») վերաբերյալ, ինչպես նաև պատասխանելով անհատին մտահոգող բոլոր հարցերին: Հարկավոր է զգուշացնել անհատներին, որ որոշ դեպքերում՝ գործընկեր կազմակերպության հաստատություն կամ այլ խնամքի կենտրոն (օրինակ՝ հիվանդանոց կամ պոլիկլինիկա) ժամանելուց հետո նրանք կարող են ստիպված լինել կրկին տալ ծառայություններից օգտվելու իրենց համաձայնությունը և լրացնել հատուկ ստուգումներին կամ ընթացակարգներին առնչվող փաստաթղթեր:

Հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում հայտնել բժշկական թեստերի արդյունքները: Բժշկական թեստերի կամ ընթացակարգերի արդյունքների պատրաստ լինելուն պես հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատողը պետք է մասնավոր հանդիպում նշանակի թրաֆիքինգի ենթարկված անձի հետ՝ դրանք քննարկելու համար:

5.14 Աջակցության ծրագրի շրջանակները լքող թրաֆիքինգի զոհերի բուժօգնության պլանավորում

Թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքը դադարեցնելուց առաջ հարկավոր է համոզվել, որ նրանք լիարժեք իրազեկված են իրենց առողջական վիճակի մասին և պատրաստ հետևողականորեն հաղթահարել խնամքի տրամադրման ընթացքում վերհանված առողջական խնդիրները: Թրաֆիքինգի զոհերի՝ հայրենիք վերադարձից և վերաինտեգրումից, ինչպես նաև մեկ այլ երկրում նրանց ինտեգրումից առաջ կարելի է ձեռնարկել հետևյալ գործողությունները.

թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքը դադարեցնելուց առաջ կազմակերպել քննարկում. առողջական խնդիրներն ամփոփելու համար՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքը դադարեցնելուց առաջ հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատողը պետք է ապահովի, որ տվյալ անձին տրամադրվեն իր առողջական վիճակին և բուժմանն առնչվող բոլոր փաստաթղթերը, ընդ որում՝ ցանկալի է, որ վերջնական ախտորոշում և հիմնական առողջական տեղեկություններ պարունակող փաստաթղթերը թարգմանվեն տվյալ անձի մայրենի լեզվով, և որ ծառայություն մատուցող մասնագետի կամ կազմակերպության խնամքի տակ գտնվելու ընթացքում ստուգվի անձի առողջական վիճակը և համապատասխան բուժումը:

Կարճ քննարկման ընթացքում հիմնական աջակցություն տրամադրող բուժաշխատողը պետք է.

- յուրաքանչյուր թրաֆիքինգի զոհի հետ քննարկի նրա նախկին և ներկա առողջական վիճակը և տեղեկություններ հաղորդի հետևյալ հարցերի շուրջ.
  - ծառայություն մատուցող կազմակերպության կամ գործընկեր կազմակերպության խնամքի ներքո գտնվելու ընթացքում վերհանված առողջական խնդիրներ և դրանց բարդության աստիճան,
  - ծառայություն մատուցող կազմակերպության և (կամ) գործընկեր կազմակերպության նշանակմամբ ստացած բուժում և այլ ընթացակարգեր,
  - թրաֆիքինգի զոհի խնամքը դադարեցնելուց հետո մնացած առողջական խնդիրներ, առաջարկվող բուժում և հիվանդությունները չբուժելու հետ կապված վտանգներ,

- տրամադրի բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև հետագա բժշկական միջամտության կամ ուղղորդման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններ,
- այն դեպքերում, երբ տվյալ անձինք արդեն սկսել են բուժման կուրսը, նրանց տա գրավոր և բանավոր ցուցումներ նշանակումները կատարելու ձևերի (և նպատակների) վերաբերյալ (ինչպես նաև բացատրի բուժման կուրսն անավարտ թողնելու վտանգը),
- այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձինք լրացուցիչ դեղորայքի կարիք ունեն, որը չեն ստացել ծառայություն մատուցող կազմակերպությունից, դուրս գրի անհրաժեշտ դեղորայքը կամ նրանց տրամադրի համապատասխան փաստաթղթեր այդ դեղորայքը ձեռք բերելու համար (օրինակ՝ դեղատոմս, ուղղորդում համապատասխան կազմակերպություն կամ խնամքի կենտրոն),
- ամփոփի զրույցը՝ համոզվելով, որ թրաֆիքինգի զոհ դարձած անձը ճիշտ է հասկացել ասվածը, և գնահատելով ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի դադարեցումից հետո նրա՝ սեփական առողջական խնդիրները լուծելու պատրաստվածության (այն է՝ գործնական, հոգեբանական և ֆինանսական) աստիճանը:

Դյուրացնել լրացուցիչ բժշկական խնամք և հոգեբանական աջակցություն ստանալու համար անձանց ուղղորդումը ծառայություն մատուցող այլ կազմակերպություն. ծառայություն մատուցող մեկ այլ կազմակերպություն թրաֆիքինգի զոհին ուղղորդելիս հարկավոր է **նախքան** նրա մեկնումը ծածկագրել բժշկական տեղեկությունները և էլեկտրոնային տարբերակով ուղարկել դրանք համապատասխան կազմակերպություն: (Այդուհանդերձ, այս ընթացակարգն ուղղորդող կազմակերպության աշխատակազմի անդամներին չի ազատում բոլոր նման անձանց բժշկական փաստաթղթերի պատճեններ տրամադրելու պարտավորությունից): Բացի այդ, տվյալ անհատի դեպքը վարող և նրան հիմնական բուժօգնություն տրամադրող մասնագետը պարտավոր է նամակագրական կապ պահպանել ընդունող կազմակերպության կամ բուժաշխատողների հետ և նրանց տրամադրել բոլոր տեղեկություններ անհատի առողջական վիճակի և հատուկ խնամքի կարիքների վերաբերյալ: Նման տեղեկությունները պետք է հաղորդվեն թրաֆիքինգի զոհի համաձայնությամբ նախքան նրա ժամանումը ուղղորդող կազմակերպություն՝ սույն ձեռնարկի մյուս գլուխներում ներկայացվող ընթացակարգերին համապատասխան:

Խնամքի դադարեցումից հետո դյուրացնել լրացուցիչ բժշկական խնամք և հոգեբանական աջակցություն ստանալու համար անձանց ուղղորդումն այլ կազմակերպություններ. ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր է կոնտակտային տեղեկություններ հավաքել ինչպես թրաֆիքինգի զոհերի վերադարձի երկրում, այնպես էլ տվյալ երկրում բուժօգնություն մատուցող կազմակերպությունների վերաբերյալ, եթե անհատները ստանան ժամանակավոր (կամ մշտական) կացության կարգավիճակ: Կոնտակտային տեղեկությունները պետք է հաղորդվեն տվյալ անձի մայրենի լեզվով: Նշված տեղեկությունները հավաքելուց և թրաֆիքինգի զոհին տրամադրելուց բացի խիստ կարևոր է, որպեսզի բուժաշխատողները դյուրացնեն թրաֆիքինգի զոհերի ուղղորդումն այլ կազմակերպություններ դրանց աշխատակիցների հետ անմիջական կապ հաստատելու (հեռախոսակապ կամ նամակագրություն) միջոցով: Նման կապ կարելի է հաստատել միայն թրաֆիքինգի ենթարկված անձի իրազեկված համաձայնությամբ:

Բացի այդ, մասնավորապես այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձը բնակություն է հաստատում իր ծագման երկրից բացի որևէ այլ երկրում, ցանկալի է, որ առաջին այցելության ընթացքում նրան ուղեկցի ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներից մեկը, որպեսզի նրան օգնի գտնել ընդունող կազմակերպությունը կամ կենտրոնը, աջակցի վարչական ընթացակարգերի հետ կապված հարցերում և նվազեցնի խոցելի դիրքում հայտնված անձի սթրեսը, որը նա կարող է ապրել անծանոթ կազմակերպություններին կամ անձանց օգնության դիմելից: Եթե այլ հաստատությունում (առողջապահական համակարգ) առաջարկվող ծառայությունները մատուցվում են անվճար, ապա անհատին հարկավոր է զգուշացնել այդ մասին:

Օգնել թրաֆիքինգի ենթարկված անձին հասանելի ռեսուրսների (այսինքն՝ փոխհարաբերություն ընտանիքի անդամների հետ կամ այլ կապեր արտաքին աշխարհի հետ) գնահատման հարցում. մարդու դիմադրողականության վրա ազդող առանցքային գործոններից է նրա աջակցային ցանցի առանձնահատկությունը: Անհատի խնամքի դադարեցումից հետո ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է օգնի նրան գտնել առավել նպաստավոր միջավայրը: Շատ անգամ թրաֆիքինգի ենթարկված անձի ռեսուրսները պետք է գնահատի այն աշխատակիցը (հոգեբան, թերապևտ, սոցիալական աշխատող),

ով նրան տրամադրել է առաջնային հոգեբանասոցիալական աջակցությունը, քանի որ շատ դեպքերում ռեսուրսների գնահատումը ենթադրում է տվյալ անձի ընտանիքի անդամների կամ մտերիմ զուգընկերոջ հետ հարաբերությունների գնահատում: Որոշ դեպքերում հարկավոր է վերհանել այն փոխհարաբերությունները, որոնց շրջանակներում գործադրվել է բռնությունը (ֆիզիկական բռնություն կամ հուզական ցնցում):

.....

Զգուշացում. ընտանիքի անդամների հետ փոխհարաբերությունների գնահատումը հատկապես կարևոր է երեխաների և երիտասարդների պարագայում: Թրաֆիքինգի ենթարկված երեխային հայրենիք վերադարձնելու վերաբերյալ որոշման հիմքում ընկած առաջնային նկատառումը պետք է լինի նրա բարօրությունը (այսինքն՝ «լավագույն շահը»): Կազմակերպության աշխատակազմի անդամները պետք է պարզեն, թե արդյոք նման միջավայրում երեխային կարող է որևէ վտանգ սպառնալ (օրինակ՝ թրաֆիքինգի կամ ֆիզիկական չարաշահումների կրկին ենթարկվելու վտանգ): Աշխատակազմի անդամները պետք է նաև ուղիներ գտնեն համոզվելու, որ երեխայի ընտանիքի անդամներն ի վիճակի կլինեն կամ բավարար պատասխանատվություն կդրսևորեն նրա պատշաճ խնամքն ապահովելու համար: Այդ նպատակով հարկավոր է կապ հաստատել նաև մանկաբույժների, սոցիալական աշխատողների կամ հոգեբանների հետ: Եթե պարզվի, որ տվյալ երեխան կամ երիտասարդը նախկինում ենթարկվել է բռնության, չարաշահումների կամ անուշադրության է մատնվել, ապա ծառայություն մատուցողները պետք է որոշակի աշխատանք տանեն երեխայի, պետական սոցիալական ծառայության և այլ հաստատությունների աշխատակիցների հետ երեխայի շահերից բխող առավել նպաստավոր գործելաոճ ընտրելու համար:

.....

Եթե ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցն ունի թրաֆիքինգի ենթարկված անձի՝ ընտանիքի անդամների հետ կապ հաստատելու թույլատվություն, ապա նա կարող է նախքան այդ անձի վերադարձը ծագման երկիր նրա կարիքները հայտնել աջակցության կարևոր աղբյուր հանդիսացող անձանց: Որոշ դեպքերում, կազմակերպության աշխատակիցը թրաֆիքինգի զոհի խնդրանքով կարող է կապվել նրա ընտանիքի անդամների կամ որևէ այլ անձանց հետ հետևյալ նպատակներով.

- օգնել նրանց հասկանալ տվյալ անձի ապրումները,
- բացատրել նրանց, որ նրա հետ կատարվածը հանցագործություն է, և նա մեղավոր չէ,
- խորհրդատվություն տրամադրել անհրաժեշտ անվտանգության միջոցառումների վերաբերյալ,
- բացատրել մոտակա ժամանակահատվածում անձի հնարավոր զգացումները և վարքագիծը և
- խորհրդատվություն տրամադրել այն աջակցության մասին, որը կարող են մատուցել ընտանիքի անդամները:

Թրաֆիքինգի ենթարկված անձի ընտանիքի անդամների, մտերիմ զուգընկերոջ կամ ընկերների հետ կարելի է կապ հաստատել միայն տվյալ անձի համաձայնությամբ՝ նրա հետ նախապես ճշտելով այն բոլոր տեղեկությունները, որոնք նա ցանկանում կամ չի ցանկանում հայտնել:

ՄԵԿՆԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՂԵԿՑՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի զոհի՝ ճամփորդելու կարողությունը հարկավոր է գնահատել տարանցիկ կամ նպատակակետ երկրում՝ վերադարձի նախապատրաստման փուլում և ծագման երկրում վերաինտեգրման հաջորդող փուլում: Նման գնահատումը հարկավոր է անցկացնել թրաֆիքինգի ենթարկված անձանց և այլ ուղևորների կանոնավոր և ապահով ճամփորդության սկզբունքներին համապատասխան: Առանց ուղեկցության անչափահասների վերադարձի հիմքում պետք է ընկած լինեն սույն գրքի 3-րդ գլխում («Ուղղորդում և վերաինտեգրում») բերված խնամակալության և էթիկական սկզբունքները, ինչպես նաև սույն գլխի նախորդ հատվածներում նշված սկզբունքները և զգուշացումները:

Հարկավոր է պարզել բժշկական ուղեկցության (մասնավորապես՝ թռիչքների պարագայում) կարիքը և ուղեկցող բուժաշխատող նշանակել սույն գլխի կլինիկական ուղեցույցի մասին հաջորդիվ բաժիններում մանրամասն ներկայացված չափանիշային ընթացակարգերին համապատասխան:

5.15 Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների առողջություն

Սույն բաժնում ներկայացվում են ծառայություն մատուցող կազմակերպության և գործընկեր կազմակերպությունների աշխատակիցների առողջության՝ մասնագիտությամբ պայմանավորված կարիքները: Այստեղ նաև նշվում է, որ աշխատակիցների առողջական վիճակը, վերաբերմունքը և հմտությունների մակարդակն ուղղակիորեն ազդում է նրանց խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգի ենթարկված անձանց բարօրության վրա: [ix]

Քննարկվող հարցերից են՝ աշխատակազմի անդամների անվտանգությունը, սթրեսը և աշխատանքայի գործունեությամբ պայմանավորված այլ առողջական ռիսկերը (այդ թվում՝ դրանց կրճատմանն ուղղված միջոցառումները), աշխատակիցների ընտրության և աջակցության հետ կապված հարցերը:

5.15.1 ՀՈԳԵԿԱՆ ԸՆԿՃՎԱԾՈՒԹՅՈՒՆ (ՍԹՐԵՍ)

Աշխատանքային գործունեությամբ պայմանավորված հոգեկան ընկճվածությունը բնորոշ է մեծ ռիսկեր և լարվածություն ենթադրող աշխատանք կատարող մասնագետներին, օրինակ՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց աջակցող աշխատակազմի անդամներին: Հոգեկան ընկճվածությունն իրենից ներկայացնում է այնպիսի հոգեբանական պատասխան ռեակցիա ընկալվող վտանգներին, որն անհատներին ստիպում է արագ փոխել իրենց վարքագիծը՝ տվյալ իրավիճակն արագ հաղթահարելու և ռիսկը նվազեցնելու համար: Պարբերական կամ երկարաժամկետ «սթրեսային գործոնների» կամ կուտակային սթրեսի ազդեցության պայմաններում վերոնշյալ փոփոխված վարքագիծը հիմնավորվում է և հաճախ դրսևորվում որպես ֆիզիկական կամ հոգեբանական ախտանիշ: Նման պատասխան ռեակցիաները կարող են օգտակար լինել և անգամ փրկարար միջոցի վերածվել վտանգավոր իրավիճակում, սակայն սպառնալիքի նվազելուց կամ վերանալուց հետո դրանք հաճախ դառնում են անառողջ և հյուծիչ:

Հոգեկան ընկճվածության աղբյուրները բազմաթիվ են և ազդեցիկ: Ստորև ներկայացված են թրաֆիքինգի ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագետների հոգեկան ընկճվածության հիմնական պատճառները՝

- անվտանգության հետ կապված մտահոգություն,
- թրաֆիքինգի զոհ դարձած անձանց կարիքներ, դրանց հրատապություն և հրատապության աստիճան,
- մասնավորապես ծանրաբեռնված կամ մարդկային ռեսուրսների պակաս ունեցող գրասենյակների անձնակազմի կողմից կատարվող աշխատանքի ընդհանուր ծավալ,
- որոշումների կայացման պատասխանատվություն, մասնավորապես՝ աջակցության ծրագրում ընդգրկվելու պահանջներին այս կամ այն անձի համապատասխանության վերաբերյալ որոշումներ, որոնք կարող են ունենալ կենաց-մահու նշանակություն,
- ինքնախարազանում, հիասթափության կամ զայրույթի զգացում այն դեպքերում, երբ, օրինակ, անհատները հրաժարվում են ծրագրից, անվճռականություն ցուցաբերում, բացասաբար արձագանքում ստացված աջակցությանը կամ չեն արդարացում իրենց ակնկալիքները,
- աջակցություն ստացող թրաֆիքինգի զոհերից հարձակողական, թվացյալ անշնորհակալ կամ վրդովված վերաբերմունք,
- հաճախ հակասական պարտավորություններ կատարելու անհրաժեշտություն, այն է՝ օգնել թրաֆիքինգի ենթարկված անձանց և միաժամանակ համագործակցել իրավապահ մարմինների հետ, աշխատել որոշակի իրավական և ֆինանսական սահմանափակումների շրջանակում,
- իրենց ջանքերի սահմանափակ ազդեցության և պետական համակարգերի, այն է՝ իրավապահ մարմինների կամ դատարանների գործունեության ձախողման գիտակցումը,
- իրենց խնդիրներով կամ ճնշող մտքերով այլոց հետ կիսվելու անկարողություն, քանի որ նրանք հավանաբար վախենում են թողնել աշխատանքի համար բավարար կարողություններ և հմտություններ չունեցող չկայացած մասնագետի տպավորություն կամ կարծում են, որ իրենց թերությունների բացահայտումը կարող է վտանգել իրենց աշխատանքը, կամ էլ հավատացած են, որ մասնագետը պետք է ի վիճակի լինի հաղթահարելու բոլոր դժվարությունները, կամ որ աշխատանքային խնդիրների բացահայտումը հակասում է մշակութային նորմերին[lxi],
- այն զգացումը, որ իրենց կողքին չկա մեկը, ում հետ կարելի է քննարկել խնդիրները կամ կիսել պատասխանատվության բեռը,

- գործընկերներից բացի իրենց շրջապատի բոլոր անձանց, այն է՝ ընտանիքի անդամների, ընկերների, համայնքի կամ ամբողջ հանրության դատապարտումը, ովքեր հակակրանք են զգում նրանց աշխատանքի կամ աջակցություն ստացող անձանց (օրինակ՝ մարմնավաճառներ, որոշ փոքրամասնությունների խմբեր) նկատմամբ:[lxii]

Հետազոտությունները վկայում են, որ հոգեկան ընկճվածությունը հիմնականում արտահայտվում է հետևյալ ֆիզիկական ախտանիշներով՝ հոգնածություն և քնի խանգարում: Այդուհանդերձ, նման հետազոտությունների արդյունքում ստացվող արդյունքները կարող են տալ համեմատաբար սուղ պատկերացում՝ «սթրես» եզրույթի և աշխատանքային գործունեության հետ կապված խնդիրների կամ բացասական զգացումների մասին, ինչը պայմանավորված է տարբեր մշակույթներում նշված հարցերի տարբեր ընկալմամբ:[lxiii]

Խոցելի վիճակում հայտնված անձանց հետ առնչվելիս աջակցություն մատուցող անձինք հաճախ գերագնահատում են իրենց՝ աջակցելու կարողությունները (ինչպես նաև թրաֆիքինգի զոհերի՝ նման աջակցությանն արձագանքելու կարողության սահմանափակումները) և միաժամանակ թերագնահատում են իրենց սեփական կարիքները: Գերծանրաբեռնված և մեծ դերակատարում ունեցող մասնագետները կարող են չզգալ՝ աշխատանքի բերումով հոգեբանական աջակցություն ստանալու իրենց սեփական կարիքը: Անգամ առավել փորձառու մասնագետները թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ աշխատելիս կարող են հուսահատություն և հիասթափություն ապրել, ինչպես նաև ունենալ ձախողման, տագնապի կամ զայրույթի զգացում: Կլինիկական հոգեբույժ՝ Ստյուրտ Թերները նշում է, որ խոշտանգման ենթարկված անձանց աջակցություն մատուցելիս հարկավոր է.

> «... ուշադրություն դարձնել առնվազն երկու կողմերի կարիքներին: Այսպես, հիվանդի կարիքներից բացի՝... հարկավոր է հաշվի առնել նաև բուժաշխատողի կարիքները ...: Առավել տարածված խնդիրներն առաջանում են այն ժամանակ, երբ բժիշկը կամ բուժաշխատողը սրտին մոտ է ընդունում խոշտանգման դեպքի տխուր մանրամասները և տուժող անձի ապրումները: Երբեմն նման մոտեցումը կարող է հանգեցնել խնդրահարույց և անգամ վնասակար արձագանքի»:[lxiv]

Ստյուրտ Թերներն առանձնացրել է բուժաշխատողների շրջանում տարածված զգացումները՝ հուսահատություն, ամենազորության զգացում, ինչպես նաև հաճախորդների խնդիրներն անտեսելու կամ դրանցից խուսափելու միտում: Այս ամենը կարող է խոչընդոտել բուժման հասանելիության ապահովմանը:[lxv]

Խիստ կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ աջակցություն ստացող անձը նախկինում կարող էր ենթարկել ֆիզիկական չարաշահումների և սեռական շահագործման կամ ներկայումս գտնվել շահագործման վիճակում: Բռնության ենթարկված անձինք մեծ թիվ են կազմում մասնավորապես հակամարտություն կամ դրան հաջորդող իրավիճակներ, քաղաքացիական կամ քաղաքական խռովություններ վերապրած երկրներում: Բացի այդ, աշխարհի գրեթե բոլոր երկրներում և մշակույթներում տարածված է ընտանեկան բռնությունը: Եթե աջակցություն մատուցող մասնագետը նույնպես չարաշահումների կամ խտրականության է ենթարկվել, ապա նրա ապրումները կարող են ազդել թրաֆիքինգի զոհի դեպքի ընկալման վրա և անգամ խոչընդոտել նրա աշխատանքը: Հնարավորության դեպքում նա կարող է ուղիներ փնտրել աջակցության մատուցող այլ մասնագետների հետ իր անցյալի ապրումներով կիսվելու համար: Տնօրենի կամ գործընկերների հետ իրենց անձնական ապրումներով կիսվելը կարող է սփոփել և թարմ ուժ հաղորդել որոշ աշխատակիցներին: Մինչդեռ ոմանք նման զրույցները համարում են իրենց մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում և անցանկալի միջամտություն իրենց անձնական գործերին:

Նույնիսկ եթե տվյալ անձն անմիջական աշխատանք չի տանում թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ, հարկավոր է պատշաճ ուշադրություն դարձնել պաշտոնից անկախ աշխատակազմի բոլոր անդամների պատասխան ռեակցիաներին և ձեռնարկել համապատասխան միջոցներ:

5.15.2 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՍԹՐԵՍԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող մասնագետները պետք է խիստ ընտրություն անցնեն, իսկ նրանց գործունեությունը պետք է վերահսկվի և աջակցության արժանանա: Ի թիվս նախորդ գլխում առանձնացված էթիկայի և անվտանգության սկզբունքների չափորոշիչների՝ նախքան թրաֆիքինգի զոհերին աջակցելու

թույլտվություն ստանալը բուժաշխատողը պետք է իր մեջ ձևավորի որոշակի հիմնական արժեքներ և վարքագծեր, ինչը ենթադրում է նրա նվիրվածությունը հարգանքի, գաղտնիության և արժանապատվության սկզբունքներին և շահառուների լավագույն շահերի պաշտպանությանը: Աշխատակազմի անդամների բարօրությունն ապահովելու և նրանց առողջական ռիսկերը նվազեցնելու համար՝ անհրաժեշտ է որդեգրել այնպիսի մոտեցում՝ որը կանխարգելիչ միջոցառումների հետ համադրի միջամտությունը ու պատասխան մեխանիզմները: Աշխատակազմի անդամների առողջության և սթրեսի վերաբերյալ վերջերս անցկացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ սթրեսի աղբյուր են հանդիսանում նաև աշխատանքային պայմանները:[lxvi] Ուստի, տնօրինությունը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ աշխատանքային գործունեությամբ պայմանավորված սթրեսը վերացնելու կամ նվազեցնելու համար: Նման միջոցառումները պետք է մշակել և իրագործել աշխատակազմի անդամների հետ համատեղ՝ հարմարեցնելով դրանք տվյալ իրավիճակին, աշխատակազմի անդամների կարիքներին և մշակութային բազմազանությանը:

Հոգեկան ընկճվածության կանխարգելում

Գոյություն ունեն մի շարք հիմնական միջոցներ, որոնք կարող են օգնել ինչպես ղեկավարներին, այնպես էլ աշխատակազմի անդամներին թուլացնել կամ կանխարգելել աշխատանքային գործունեությամբ պայմանավորված հոգեկան ընկճվածությունը և նպաստել աշխատակիցների ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությանը: Նման միջոցները ներկայացված են ստորև:

- Տնօրինությունը և աշխատակազմի անդամները պետք է ամեն ջանք գործադրեն՝ աշխատողների անվտանգությունն ապահովելու և նրանց մոտ պաշտպանվածության զգացում ձևավորելու համար: Հենց դա է հանդիսանում հոգեկան ընկճվածության կանխարգելման առանցքային միջոցը:
- Տնօրինությունը պետք է պարբերաբար խրախուսի աշխատակիցներին ըստ անհրաժեշտության կիսվելու իրենց առողջական խնդիրներով և հոգեկան ընկճվածության պատճառներով՝ կարևորելով աշխատակիցների մտահոգությունները:
- Տնօրինությունը պետք է ձեռնարկի ընթացակարգային և այլ միջոցներ՝ աշխատակազմի անդամներին դեպքերի

(օրինակ՝ աջակցության ծրագրում ներգրավվելու համար անհրաժեշտ պայմանների բավարարման) վերաբերյալ որոշում կայացնելու պատասխանատվությունից ազատելու համար, որպեսզի նրանք ստիպված չլինեն անձնական պատասխանատվություն ստանձնել և իրենց ուսերին կրել անհատական դեպքերի վերաբերյալ որոշումների կայացման ողջ բեռը: Նշված միջոցառումների շրջանակներում կարելի է վերանայել աշխատակազմի անդամների դերերի և պարտականությունների սահմանումները՝ կարևորելով նրանց պարտավորությունների սահմանափակումը:

- Աշխատակազմի անդամները պետք է գիտակցեն այն իրողությունը, որ իրենք ամենակարող չեն, և աջակցություն ստացող անձանց դիմադրողականության աստիճանը նույնպես անսահմանափակ չէ: Ուստի, որոշակի իրավիճակներում նրանք կարող են բախվել անհաղթահարելի դժվարությունների:
- Աշխատակազմի անդամները և տնօրինությունը պետք է համատեղ ջանքերով կարգավորեն տարբեր մշակույթներին պատկանող աշխատակիցների միջև հնարավոր խնդիրները:
- Աշխատակազմի անդամները և տնօրինությունը պետք է համատեղ ջանքերով նախագծեն գրասենյակի աշխատանքային տարածքը՝ ստեղծելով նպաստավոր միջավայր աշխատանքի խրախուսման և սթրեսի նվազեցման համար:
- Աշխատակազմի անդամները և տնօրինությունը պետք է այնպես կազմակերպեն աշխատանքը, որպեսզի կարողանան ունենալ ընդմիջում և արձակուրդ, և տնօրինությունը պետք է համոզվի, որ դրա համար հատկացված ժամանակը, ըստ էության, ծառայում է այդ նպատակին:

Հոգեկան ընկճվածության բուժում

Տվյալ դեպքում «բուժում» ասելով՝ հասկանում ենք աշխատանքային գործունեությամբ պայմանավորված հոգեկան ընկճվածությանն արձագանքելու կամ այն թուլացնելու միջոցներ: Հոգեկան ընկճվածության հաղթահարմանն ուղղված միջոցառումների գնահատմանը մասնակցող աշխատակիցների մեծ մասը նշել է, որ իրենք ապավինել են ինքնօգնությանը և աջակցություն ստացել հիմնականում ընկերներից, գործընկերներից և ընտանիքի անդամներից: Խիստ կարևոր է, որպեսզի ընթացիկ խնդիրները քննարկելու և աշխատանքով

պայմանավորված հոգեկան ընկճվածությունը հաղթահարելու համար աշխատակազմի անդամները ստիպված չլինեն հույս դնել միայն իրենց անձնական ռեսուրսների կամ գործընկերների հետ պատահական հանդիպումների վրա:

Խիստ սթրեսային գործունեությամբ զբաղվող աշխատակազմի վերադասները պետք է մշակեն «սթրեսի կառավարման» հատուկ ծրագրեր ու հնարքներ և աջակցեն դրանց իրագործմանը: Հոգեկան ընկճվածության թուլացմանն ուղղված ծրագրերի հիմքում պետք է ընկած լինի այն առաջնային նկատառումը, որ **սթրեսը հանդիսանում է բնական պատասխան ռեակցիա գերլարված աշխատանքային պայմաններին և միջավայրին**, ուստիև ոչ մի դեպքում պետք չէ անհարմար զգալ աշխատանքային ճնշող պայմաններին արձագանքելիս կամ դժկամություն դրսևորել աշխատանքային պայմաններում դրանք քննարկելիս: Սթրեսի կառավարման ծրագրերի իրագործումը օգնում է ընդգծել այս ուղերձը և ազատել մարդկանց աշխատանքային գործունեության հետ կապված հոգեկան ընկճվածությունը թաքցնելու անհրաժեշտությունից: Նշված ծրագրերի արդյունավետությունն ապահովելու համար՝ անհրաժեշտ է հաշվի առնել մշակութային արժեքները և առանձնահատկությունները: Սթրեսի կառավարման ծրագրեր մշակելիս աջակցող կազմակերպությունների աշխատակիցները պետք է խորհրդակցեն աշխատանքի անվտանգության գծով փորձագետների հետ՝ ապահովելու, որ սթրեսի նվազեցման համար առաջարկվող միջոցառումները, աշխատանքի կազմակերպման ձևերը և քաղաքականությունները համապատասխանեն աշխատակազմի կարիքներին և իրավիճակին:

5.15.3 ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՅՈՒԾՎԱԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄ

Ապաստարանի տնօրենի առաջնային պարտավորությունն է ապահովել աշխատակիցներին անհրաժեշտ ռեսուրսներով և աջակցային ցանցերով՝ թրաֆիքինգի զոհերի հետ նրանց աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Հարկավոր է խրախուսել աշխատակազմի անդամներին խնայել իրենց ուժերը և ապահովության համար սահմանափակել հուզականության այն աստիճանը, որով նրանք կատարում են իրենց աշխատանքը: Ապաստարանների տնօրենները պետք է հաշվի առնեն, որ հուզական ցնցում վերապրած անձանց, օրինակ՝ թրաֆիքինգի զոհերի հետ առնչվող աշխատողների վրա

ազդող սթրեսը հանգեցնում է զանազան հոգեբանական հետևանքների, որոնք կարող են առաջացնել երկրորդային սթրեսային խանգարումներ և երկրորդային հուզական ցնցում:[lxvii]

Եթե շարունակական բնույթ կրող սթրեսը կուտակվի, ժամանակի ընթացքում այն կարող է հանգեցնել «հյուծվածության»: Հյուծվածությունը ֆիզիկական, հոգեկան և մտավոր հոգնածության վիճակ է, որն առաջանում է ծանր հուզական իրավիճակների հետ երկարաժամկետ առնչության արդյունքում:

Աշխատակազմի անդամների մոտ հյուծվածության նշանները ճանաչելու համար՝ տնօրենները կամ վերադաս աշխատողները պետք է տարբերեն հետևյալ հինգ կատեգորիաների ախտանիշերը.

- Ֆիզիկական ախտանիշներ՝ հոգնածություն և ֆիզիկական հյուծում, ուժասպառություն, քնի խանգարում, սոմատիկ բնույթի որոշակի խնդիրներ, օրինակ՝ գլխացավ, մրսածություն և հարբուխ,
- հուզական բնույթի ախտանիշեր՝ դյուրագրգռություն, տագնապի զգացում, մեղքի զգացում, ընկճախտ, անօգնականության զգացում,
- վարքագծային ախտանիշեր՝ ագրեսիա, կոպտություն, հոռետեսություն, ցինիզմ,
- աշխատանքային գործունեությամբ պայմանավորված ախտանիշեր՝ աշխատանքի ցածր արտադրողականություն, առանց վերադասի թույլտվության աշխատանքի չներկայանալու կամ ուշանալու դեպքեր,
- միջանձնային փոխհարաբերություններում արձանագրվող ախտանիշեր՝ թերի հաղորդակցում՝ կենտրոնանալու անկարողությամբ, օտարացում գործընկերներից կամ ապաստարանի բնակիչներից:

Նշված ախտանիշները ճանաչելուց հետո ապաստարանի տնօրենը կամ աշխատակազմի վերադասը պետք է հաշվի առնի դրանք և ձեռնարկի հետևյալ միջոցառումները՝

- Աշխատակազմի անդամներին մատուցել այնպիսի աջակցություն, որը վերջիններս մատուցում են ապաստարանի բնակիչներին, այն է՝ հոգեբանական խնամք, սփոփանք, խրախուսանք, խորհուրդ և գործնական աջակցություն,

- հիշեցնել նրանց իրենց պարտավորությունների սահմանափակման և իրական ակնկալիքների մասին, համապատասխան փոփոխություններ կատարել աշխատակիցների օրակարգերում և պարտավորություններում,
- կազմակերպել հոգեբանական խորհրդատվություն,
- անձնակազմի շաբաթական հանդիպումներին խրախուսել աշխատակիցներին կիսվել իրենց մտահոգության և հուսահատության պատճառներով:

5.15.4 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎՏԱՆԳ. ԱՐՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱԽՏԱԾԻՆ ՀԱՐՈՒՑԻՉՆԵՐ

Արյունը հանդիսանում է ՄԻԱՎ-ի, ինչպես նաև B և C հեպատիտների (HBV և HCV) փոխանցման միակ հիմնական աղբյուրը: Միգրացիայի միջազգային կազմակերպության աշխատակիցները կարող են շփում ունենալ այն անձանց արյան կամ մարմնական հեղուկների հետ, ում արյան մեջ փոխանցվող ախտածին հարուցիչների առկայության հարցը դեռևս անհայտ է: Թեև հեպատիտ B վիրուսի փոխանցման հավանականությունն ավելի մեծ է ՄԻԱՎ-ի համեմատ, սակայն աշխատավայրում նշված վիրուսները փոխանցվում են նույն ձևով, այսինքն՝ երկուսն էլ փոխանցվում են աշխատանքային պայմաններում մաշկային պատվաստումների ժամանակ՝ ասեղի վնասվածքներ և շփում բաց վերքերի կամ վնասված (օրինակ՝ ճաքճքած, քերթված, խոնավ կամ բորբոքված) մաշկի կամ լորձաթաղանթի հետ: Թեև C հեպատիտի (HCV) փոխանցման արձանագրված դեպքերն ավելի քիչ են, այդուհանդերձ, աշխատավայրում վարակի փոխանցման հիմնական աղբյուրը հանդիսանում է պատվաստումը:

Արյան միջոցով փոխանցվող ախտածին վարակների տարածման կանխման շրջանակներում առանցքային նշանակություն ունի արյան հետ շփման կանխումը, ինչպես նաև B հեպատիտի դեմ պատշաճ պատվաստումը: Աշխատանքային գործունեության հետ կապված վտանգներին ենթարկված բոլոր աշխատակիցներին հարկավոր է տրամադրել անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներ:

5.15.5 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ծառայությունների մատուցման հիմնական բաղադրիչն է հանդիսանում ուսուցումը: Բարձրագույն չափանիշներին համապատասխան ծառայություններ մատուցելու համար՝ բոլոր աշխատակիցները պետք է անցնեն համապատասխան ուսուցում: Հարկավոր է ուշադրություն դարձնել ուսուցման հետ կապված որոշակի առանցքային ոլորտներին.

- թրաֆիքինգ՝ բնույթ, շարժառիթներ, սահմանում, դրսևորումներ, պատճառներ, բռնության և շահագործման ձևեր, հետևանքներ (մասնավորապես՝ առողջական խնդիրներ), թրաֆիքինգի զոհեր, հանցագործներ, խարան,
- անվտանգության միջոցառումներ,
- աշխատակազմի անդամների դերեր և պարտավորություններ, այդ թվում՝ դերերի և պարտավորությունների սահմանափակումներ,
- մարդու իրավունքներ, առողջություն, խտրականություն, վերարտադրողական առողջություն, աշխատանք, միգրացիա և այլն,
- կանանց դեմ ուղղված բռնություն,
- տրավմա և դրա հետևանքները,
- մշակույթ, սովորույթներ և կենսակերպ (ազգային պատկանելության և ծառայություններ ստացած թրաֆիքինգի զոհերի թվի համամասնություն):

Որքան իրազեկված լինեն անձնակազմի անդամներն իրենց աշխատանքի մասին, այնքան ավելի մեծ վստահություն կզգան իրենց և մատուցված ծառայությունների նկատմամբ և կկարողանան ավելի որակյալ աջակցություն տրամադրել թրաֆիքինգի ենթարկված անձանց:

5.16 Բուժծառայություններ մատուցող գործընկեր կազմակերպություններ

Եթե թրաֆիքինգի զոհերին հիմնական աջակցություն մատուցող կազմակերպությունը չունի բավարար սեփական կարողություններ, ապա հարկավոր է դիմել բուժծառայություններ մատուցող մեկ այլ կազմակերպության: Այս բաժնում ներկայացվում են որոշ բժշկական տեղեկություններ, որոնք կարող են օգնել ծառայություններ

մատուցող կազմակերպության աշխատակիցներին թրաֆիքինգի ենթարկված անձանց լրացուցիչ բուժծառայություններ տրամադրող գործընկեր կազմակերպություններ ընտրելու, դրանք գնահատելու և համագործակցություն հաստատելու հարցերում: Հարկավոր է հնարավորինս արագ գտնել որակավորված գործընկեր կազմակերպություններ՝ ապահովելու բոլոր անհրաժեշտ բժշկական ռեսուրսների հասանելիությունը և ծառայություն մատուցող մեկ այլ կազմակերպության աշխատակիցների պատշաճ իրազեկվածությունը, ինչպես նաև հիվանդ ընդունելու և առաջին բուժօգնություն տրամադրելու պատրաստականությունը: Հնարավոր լրացուցիչ բուժծառայությունները կարող են ենթադրել առնվազն հետևյալ ծառայությունները տրամադրելու կարողություն.

Նախնական բժշկական հետազոտության նվազագույն պահանջներ.

- **հիվանդության պատմության և ընտանեկան անամնեզ**ի ընթացակարգերը պետք է համապատասխանեն սույն գլխի նախորդ բաժիններում ներկայացված բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցառումներին, լավագույն ընթացակարգերին և ուղեցույցներին,
- **բուժզննումը պետք է անցկացվի** սույն գլխում ներկայացված ուղեցույցներին համապատասխան,
- **հոգեկան առողջություն.** կատարել հոգեկան վիճակի հետազոտություն, անհետաձգելի մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող անձանց վերհանելու համար:

Նշված բուժզննման արդյունքում կարող է առաջանալ լրացուցիչ բժշկական հետազոտության կարիք.

1. **Լաբորատոր կամ ռենտգենաբանական հետազոտություններ**, այդ թվում՝ կրծքավանդակի ռենտգեն հետազոտություն, արյան և մեզի անալիզ, այլ լաբորատոր թեստեր (այդ թվում՝ ՄԻԱՎ-ի թեստ, եթե թրաֆիքինգի ենթարկված անձը նախապես իրազեկված համաձայնություն է տվել և հետազոտությունից առաջ ստացել կամավոր խորհրդատվություն): Շատ դեպքերում, նախնական բուժզննման շրջանակներում գործընկեր կազմակերպությունը կարող է իր հայեցողությամբ մատուցել կամ չմատուցել լաբորատոր և (կամ) ռենտգենաբանական հետազոտության ծառայությունները՝ կախված իր ֆինասական միջոցներից և նշված ծառայությունների հասանելիությունից, կամ

մատուցել որոշ ծառայություններ անհետաձգելի բուժօգնության անհրաժեշտության դեպքում:

2. **Մասնագիտացված ուղղորդում.** մասնագիտացված ուղղորդմանը դիմում են այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում դիտարկել, հաստատել կամ անդրադառնալ հիվանդության պատմության, բուժզննման կամ լաբորատոր հետազոտությունների գրառումներում պարունակվող որևէ կարևոր տեղեկություններին՝ հոգեբուժական, վերարտադրողական առողջության, վիրահատական կամ այլ ուղղորդումների վերաբերյալ,
3. **Բժշկական տեղեկատվություն.** հարկավոր է հետադարձ կապ հաստատել ծառայություն մատուցող կազմակերպության հետ և նրան փոխանցել վերոնշյալ բժշկական տեղեկությունները, այն է՝ ախտորոշում (կամ նախնական ախտորոշում), առաջարկվող լրացուցիչ հետազոտություններ կամ դիտարկումներ, առաջարկվող բուժում և մոնիթորինգ, ինչպես նաև հիվանդության ելքի կանխատեսում,
4. **Պարբերական այցեր ապաստարան կամ տնայցեր (ըստ անհրաժեշտության).** հարկավոր է պարբերաբար այցեր կատարել յուրաքանչյուր դեպքի շրջանակներում բժշկական հետազոտությունների, մոնիթորինգի, լրացուցիչ բժշկական միջոցառումների (օրինակ՝ ներարկումներ, ֆիզիոթերապիա, խորհրդատվություն և այլն) և հետագա բժշկական հսկողության ուղղորդման նպատակներով:

Ծառայություն մատուցող այլ կազմակերպություններ ընտրելու և դրանց հետ արդյունավետ համագործակցություն հաստատելու համար հարկավոր է հաշվի առնել մի քանի հիմնական բաղադրիչ: Դրանք են.

1. **Կատարել մատուցվող ծառայությունների գնահատում**. կազմակերպության ծառայությունների պատշաճության և համապատասխանության աստիճանը գնահատելու համար՝ հարկավոր է տեղեկություններ հավաքել նշված ծառայությունների մասին, այդ թվում՝ բացահայտել հետևյալ բաղադրիչները տարբեր աղբյուրների միջոցով, օրինակ՝ քննարկումներ, խնամքի մատուցման ընթացակարգերի դիտարկում, զրույց տվյալ ոլորտի այլ մասնագետների կամ նախկին հիվանդների հետ.

- **Մատուցվող ծառայությունների ամբողջական ցանկ.** ինչպիսի՞ ծառայություններ է առաջարկում կազմակերպությունը, և արդյո՞ք դրանք նախատեսված են թրաֆիքինգի ենթարկված անձանց կարիքների բավարարման համար,
- **Կարողություն.** յուրաքանչյուր տեսակի ծառայություն մատուցող աշխատակիցների թիվը, նրանց աշխատանքային ժամերը, օրական կամ շաբաթական կտրվածքով բուժօգնություն ստացած հիվանդների թիվը,
- **Որակ.** որքա՞ն ժամանակ է գործում կազմակերպությունը, արդյո՞ք այն հագեցած է ժամանակակից սարքավորումներով, արդյո՞ք հիվանդների բուժման և կլինիկական կառավարման չափանիշները համապատասխանում են միջազգային չափանիշներին (այդ թվում՝ գաղտնիության պահպանման չափանիշներ, էթիկական փոխհարաբերություններ հիվանդների հետ, տվյալ երկրի առողջապահության հաստատությունների և դրանց աշխատակիցների գործունեությունը կարգավորող մարմինների կողմից տրված հաստատության պետական հավատարմագրման վկայականի և աշխատակիցների արտոնագրերերի առկայություն և այլն),
- **Աշխատակազմ.** պարզել աշխատակազմի անդամների կրթության կամ վերապատրաստման հետ կապված հարցերը, աշխատանքային փորձը տվյալ ոլորտում, ճշտել, թե աշխատակիցներից ով է առաջնային պատասխանատվություն կրելու ծառայություն մատուցող կազմակերպության հաճախորդների աջակցության համար,
- **Վերապատրաստման հետ կապված կարիքներ.** որքանո՞վ է իրագործելի (այդ թվում՝ նաև ժամանակի, ջանքերի և ֆինանսական ծախսերի տեսակետից) ծառայություն մատուցող կազմակերպության կողմից նշված գործընկեր հաստատության աշխատակիցների վերապատրաստումը կազմակերպելու հնարավորությունը՝ սույն ձեռնարկի չափանիշներին նրանց մատուցած բուժծառայությունների մակարդակը համապատասխանեցնելու նպատակով,
- **Սահմանափակումներ.** արդյո՞ք կա առողջապահություն տվյալ ոլորտի հետ կապված որևէ ծառայություն, որը նրանք չեն մատուցում, արդյո՞ք կան որևէ անհաղթահարելի դժվարություններ

կամ սահմանափակումներ (ֆինանսական, գենդերային պատկանելիության, տարիքային, էթնիկական և այլն):

- **Վստահելիություն.** արդյո՞ք պահպանվում են աշխատանքային և ընդունելության սահմանված ժամերը: Արդյո՞ք հարկավոր է թողնել «լրացուցիչ» կամ «գաղտնի» վճար՝ բացի պայմանագրում նշված գումարից (այն վայրերում, որտեղ կաշառակերությունը համատարած բնույթ է կրում), արդյոք գործընկեր կազմակերպությունն իսկապես կարող է մատուցել այն բոլոր ծառայությունները, որոնք խոստանում է:
- **Ժամանակի գործոն.** որքա՞ն ժամանակ կպահանջվի թրաֆիքինգի ենթարկված անձանց համապատասխան ծառայություններ նշանակելու համար, որքա՞ն ժամանակում են սովորաբար պատրաստ լինում բժշկական հետազոտությունների արդյունքները:
- **Լեզու և մշակույթ.** արդյո՞ք գործընկեր կազմակերպությունը կարող է ապահովել մասնագիտացված թարգմանիչների և մշակութային միջնորդների ծառայություններ (նման ծառայություններն առավել ընդունված են սոցիալական ուղղվածությամբ առողջապահական համակարգ ունեցող զարգացած երկրներում):

1. **Ստուգել կազմակերպության և աշխատակիցների դիրքորոշումը.** անընդունելի է, որ ծառայություն մատուցող կազմակերպությունը գործընկերություն հաստատի այնպիսի կազմակերպությունների հետ, որոնք դրսևորում են խտրականական քաղաքականություն կամ գործելակերպ, որը կարող է ազդել թրաֆիքինգի ենթարկված անձանց մատուցվող խնամքի վրա: Շատ դեպքերում անհրաժեշտ է համապատասխան դասընթացներ կազմակերպել գործընկեր կազմակերպությունների աշխատակիցների համար և նրանց իրազեկել մասնավորապես՝ կանանց դեմ ուղղված բռնության և սեռական չարաշահումների հետ կապված հարցերի վերաբերյալ (տե՛ս նախորդ հատվածները):
2. **Սահմանել գաղտնիության պահպանման խիստ չափանիշներ**. հաշվի առնելով գաղտնիության պահպանման կարևորությունը՝ ընտրված գործընկեր կազմակերպությունը պետք է իր պաշտոնական քաղաքականության և գործելակերպի շրջանակներում ձեռնարկի համապատասխան միջոցառումներ՝

ապահովելու հիվանդների անձնական գործերի և տվյալների գաղտնիությունը: Հարկավոր է անցկացնել մոնիթորինգ՝ համոզվելու, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքները չեն խախտվում, մասնավորապես՝ այնպիսի երկրներում, որտեղ նախկինում պահանջվում էր ՄԻԱՎ վարակակիր լինելու փաստը հայտնել հանրային մարմիններին, նման անձանց հարկադրել անցնել ստացիոնար բուժում և որոշել նրանց շփման շրջանակը: Գաղտնիության պահպանման չափանիշները հարկավոր է ներառել ծառայությունների մատուցման պայմանագրերում (ըստ կիրառելիության): Գաղտնիության պահպանման կարգը խախտելու պարագայում կարող է անհրաժեշտություն առաջանալ դադարեցնելու գործընկերության մասին պայմանագիրը:

3. **Ապահովել դասընթաց և իրազեկում.** բոլոր գործընկեր կազմակերպությունների աշխատակիցներին հարկավոր է հրավիրել մասնակցելու ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցների համար նախատեսված վերապատրաստման և իրազեկության մակարդակի բարձրացման դասընթացների:

4. **Մշակել տեղեկությունների փոխանակման միջոց.** թրաֆիքինգի ենթարկված անձինք իրավունք ունեն տեսնել իրենց բժշկական փաստաթղթերը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանք պահվում են ծառայություն մատուցող կազմակերպության թե գործընկեր կազմակերպության տարածքում: Ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները կարող են մուտք ունենալ անհատի բժշկական տեղեկություններին միայն ըստ անհրաժեշտության, կամ երբ նրանցից պահանջվում է համապատասխան տեղեկություններ հայտնել համապատասխան անձին:

5.17 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Թրաֆիքինգի զոհերին առնչվող անձնական տվյալների կառավարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները կարող եք գտնել 1-րդ գլխի 1.2 բաժնում:

Այս բաժնում շեշտը դրվում է առողջապահական ոլորտին հատուկ տեղեկատվական համակարգի և թրաֆիքինգի զոհ դարձած

անձանց ծառայություններ մատուցելիս դրա կառավարման վրա: Առողջապահական և բժշկական բնույթի տեղեկությունների մշակման եղանակները կարևոր են թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնդիրների ճշգրիտ ախտորոշման և բուժման, ծառայություն մատուցողների միջև առողջապահական տվյալների փոխանակման, թրաֆիքինգի ենթարկված անձանց առողջական վիճակի և կարիքների վերաբերյալ իրազեկման ապահովման, իրենց բժշկական և առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական գրառումների պատճենների ստացման, ինչպես նաև հավաքագրված տեղեկությունների գաղտնիության պահպանման համար:

Սույն բաժնի նպատակն է ներկայացնել ծառայություն մատուցող կազմակերպությունների խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգի զոհերի առողջությանը վերաբերող տվյալների կառավարման որոշ հայեցակետերը:

5.17.1 ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Առողջապահական տվյալների սահմանում

Առողջապահական տվյալները ներառում են թրաֆիքինգի ենթարկված անձանց ֆիզիկական, հոգեկան և սոցիալական առողջությանը վերաբերող բոլոր գրառումները: Առողջական տեղեկատվական համակարգն իրենից ներկայացնում է առողջապահական տեղեկատվության հավաքագրման, կազմակերպման, պահման և հաղորդման միջոց:

Առողջապահական տեղեկատվական համակարգի ստեղծում և շահագործում

Առողջապահական տեղեկատվական համակարգը պետք է ստեղծվի հարկավորինս սեղմ ժամկետներում, նախընտրելի է՝ դեռևս ծրագրի կառավարման տեղեկատվական համակարգերի մշակման փուլում և նախքան ծրագրի գործունեության փաստացի սկիզբը: Տվյալները հավաքագրելու, մուտքագրելու և կառավարելու նպատակով աշխատանքի ընդունված անձինք պետք է համապատասխան ուսուցում ստանան համակարգի օգտագործման վերաբերյալ:

Անձնական գործերի անվտանգություն՝ ծածկագրում և գաղտնիություն

Անվտանգության և գաղտնիության նկատառումներով, ինչպես նաև կենսական կարևորություն ունեցող տեղեկությունների կորստից կամ սխալ օգտագործումից զերծ մնալու համար հարկավոր է փաստաթղթերի հետ վարվելիս մշտապես ցուցաբերել շրջահայեցողություն:

Մարդկանց անունները պետք է օգտագործել միայն ծածկագրման ելակետային թերթիկի վրա, որտեղ տվյալ անձին հատկացվում է թվային ծածկագիր, և որը պահվում է գաղտնի և հայտնի է միայն համապատասխան ծառայության մեկ աշխատակցին:

Մնացած բոլոր փաստաթղթերի վրա հարկավոր է անհատներին նշել համապատասխան թվային ծածկագրերով: Թվային ծածկագրերը պետք է դրվեն անձնական գործի բոլոր էջերի վերևում այն դեպքերի համար, եթե դրանք մեկը մյուսից առանձնացվեն:

5.17.2 ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

- Անձնական գործերը պետք է նույնականացվեն միայն համապատասխան թվային ծածկագրերով: Մարդկանց անունները և նրանց տրված նույնականացման թվային ծածկագրերի ելակետային թերթիկները պետք է պահվեն ապահով վայրում, որտեղ պետք է մուտք ունենա միայն հիմնական աջակցություն մատուցող անձը:
- Ծածկագրված անձնական գործերը (առանց անունների) պետք է պահվեն ապահով վայրում, որտեղ մուտքի իրավունք պետք է ունենան միան տվյալ գործով զբաղվելու թույլտվություն ստացած աշխատակազմի անդամները:
- Տեղեկությունների փոխանակումը աշխատակազմի անդամների կամ նրանց և գործընկեր կազմակերպությունների միջև պետք է իրականացվի միայն ըստ անհրաժեշտության տեղեկություններ հայտնելու սկզբունքով և թրաֆիքինգի ենթարկված անձի համաձայնությամբ:
- Անձնական գործերը չի կարելի թողնել առանց հսկողության (աշխատասեղանների, սեղանների վրա կամ ընդհանուր օգտագործման տարածքներում և այլն):

- Անձնական գործերի վերաբերյալ տեղեկությունները չպետք է հայտնվեն կազմակերպության աշխատակազմում չընդգրկված անձանց, բացառությամբ այն դեպքերի, երբ նման թույլտվություն է ստացվել թրաֆիքինգի ենթարկված համապատասխան անձից:
- Տեղեկությունների փոխանակումն աշխատակազմի անդամների կամ նրանց և գործընկեր կազմակերպությունների միջև երբեք չպետք է իրականացվի հանրային վայրում (օրինակ՝ միջանցքներում, ապաստարաններում, բաց դռնով աշխատասենյակում, ապաստարանի այլ բնակիչների ներկայությամբ, ռեստորանում կամ սրճարանում և այլն):
- Թրաֆիքինգի զոհի անձնական գործի մանրամասները չպետք է երբևէ քննարկվեն մեկ այլ թրաֆիքինգի զոհի հետ: Եթե որոշ դեպքերում և թերապևտիկ նկատառումներով օգտակար է որևէ թրաֆիքինգի զոհի համար մեջբերել մեկ այլ նմանատիպ դեպքից քաղված օրինակներ, ապա անհրաժեշտ է փոխել անունները և բավարար չափով ձևափոխել անձնական մանրամասները այնպես, որ քննարկվող դեպքը լինի անճանաչելի:
- Աշխատակազմի անդամները կարող են քննարկել թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ իրենց կողմից տարվող աշխատանքի մանրամասները (գործընկերների մասնակցությամբ անցկացվող) վերահսկիչ և աշխատանքային հանդիպումներին: Բավականին տարածված (հոգեկան առողջության ոլորտում) երևույթ է, երբ բուժաշխատողների թիմն առօրյա աշխատանքի վերահսկման նպատակով հանդիպումներ է անցկացնում վերադաս և ավագ գործընկերների թիմի կամ նույնիսկ այս նպատակով նշանակված անկախ մասնագետի հետ (հատկապես հոգեբուժության ոլորտում վերահսկումը նախընտրելի է իրականացնել թիմում չընդգրկված մասնագետների կողմից): Պետք է որպես սովորական գործելակերպ ընդունել այն ընթացակարգը, որ բուժանձնակազմը որոշակի հաճախականությամբ կազմակերպի «աշխատանքային հանդիպումներ», «կլոր սեղաններ» կամ «վերահսկիչ ժողովներ», որտեղ աշխատակազմի անդամները կկարողանան կիսվել իրենց գործընկերների հետ այն հարցերով ու խնդիրներով, որոնք ի հայտ են եկել իրենց աշխատանքում: Վերահսկումն ու հանդիպումները բուժանձնակազմի տարբեր անդամների մասնակցությամբ կարող են բարձրացնել աշխատանքի որակը, խթանել տարբեր ծառայությունների համատեղ հետևողական մոտեցումը և

նվազեցնել աշխատանքի հետ կապված խնդիրները: Նման վերահսկիչ կամ աշխատանքային հանդիպումներին փոխանակվող ցանկացած տեղեկություններ պետք է գաղտնի պահվեն:

- Աշխատակազմի անդամներին արգելվում է քննարկել անձնական գործերը կամ դրանց մանրամասները թրաֆիքինգի ենթարկված անձի ընտանիքի անդամների և ընկերների հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասի անձնական գործը փոխանցվում է ընտանիքի այն անդամին, ով նաև հանդիսանում է նրա պաշտոնական օրինական խնամակալը, ընդ որում՝ հարկավոր է հարցնել երեխայի կարծիքը՝ պարզելու, թե արդյոք նրա վերաբերյալ տեղեկությունների բացահայտումը կարող է նրան վտանգի ենթարկել կամ վնաս պատճառել:
- Վերոնշյալ նույն սկզբունքները կիրառվում են նաև թարգմանիչների պարագայում և պետք է շեշտակիորեն ընդգծվեն (այդ թվում՝ ծառայության մատուցման պայմանագրերում) այն անձանց հետ ունեցած հարաբերություններում, ովքեր պայմանագրով կամ առանց պայմանագրի հանդես են գալիս որպես ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամներ ամբողջ դրույքով:

5.17.3 ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Անձնական գործերում ընդգրկված տեղեկությունների փոխանակման առումով գոյություն ունեն մի շարք ռիսկեր, սակայն եթե նման տեղեկատվությունը փոխանցվում է անվտանգության և գաղտնիության պատշաճ ընթացակարգերի պահպանմամբ թրաֆիքինգի զոհին աջակցություն մատուցող թվով սահմանափակ հիմնական անձանց, ապա դրանցից քաղվող օգուտը գերազանցում է հնարավոր ռիսկերը: Տեղեկատվության փոխանակումը սոցիալական աշխատողների, հոգեբանների, բժիշկների և ուղղորդման ծառայությունների միջև նվազեցնում է թրաֆիքինգի զոհ դարձած անձի կողմից արդեն ներկայացված տեղեկությունները կրկնելու անհրաժեշտությունը (որոշ դեպքերում դա կարող է խիստ ծանր հույզեր առաջացնել) և դյուրացնում է համագործակցությունը և նախաձեռնողական աջակցությունն այն անհատների կողմից, ովքեր թրաֆիքինգի զոհ դարձած անձանց աջակցություն են մատուցում առողջապահության, սոցիալական ապահովության և իրավաբանական հարցերում: Թրաֆիքինգից տուժած

անձը պետք է տեղյակ պահվի նման ընթացակարգերի նպատակների մասին և տա իր համաձայնությունը: Կազմակերպությունները պետք է թրաֆիքինգի զոհերին աջակցություն մատուցող տարբեր անհատների և կազմակերպությունների միջև տեղեկատվության փոխանակման համապատասխան չափորոշիչներ և ընթացակարգեր մշակեն:

Զգուշացում. **նույնիսկ ծածկագրման օգտագործման պարագայում, երբ տվյալ անհատի անունը փոխարինվում է թվերով, նրան կարելի է հաճախ նույնականացնել իր հիմնական տվյալներով (խավային և սոցիալական պատկանելիություն, էթնիկական պատկանելիություն, ազգություն, ծննդյան ամսաթիվ, տվյալներ ընտանիքի անդամների մասին, թրաֆիքինգի գործընթացի տարրերի նկարագիր և այլն): Քանի որ բոլոր նման հիմնական տվյալները տեղ են գտնում անձնական գործում, իսկ աջակցություն մատուցող անձանց հասանելի են նման գործի տվյալները, ուստի ավելորդ է և ոչ խելամիտ կրկնել այս մանրամասները տվյալ անձին վերաբերող առողջապահական գրառումներից յուրաքանչյուրում:**

Էլեկտրոնային հաղորդակման միջոցներով (էլեկտրոնային համակարգ կամ համացանց) տվյալների փոխանակման կամ նյութերի փոխանցման համար պետք է օգտագործվեն ծածկագրման համակարգեր: Արդեն վաճառքում հայտնվել և լայն տարածում են ստացել համեմատաբար պարզ և հուսալի համակարգեր:

5.17.4 ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ԱՆՁԱՆՑ՝ ԻՐԵՆՑ ԲԺՇԿԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻՆ ՄՈՒՏՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձինք պետք է տեղեկացվեն իրենց բոլոր բժշկական փաստաթղթերի պատճենները ստանալու իրավունքի մասին: Նրանք պետք է նման պատճեններ ստանան նախքան իրենց աջակցություն մատուցած ծառայության խնամքից դուրս գալը: Այն դեպքերում, երբ բժշկական գրառումները գտնվում են բժշկական կազմակերպությունից դուրս (օրինակ՝ հանրային հիվանդանոցում, մասնավոր ծառայություն մատուցողի մոտ և այլն), ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամները պետք է աջակցեն նման անձանց բոլոր գրառումների

պատճենները ստանալու հարցում: Նման անձինք ունեն նաև դատաբժշկական եզրակացության պատճենը ստանալու իրավունք՝ իրենց չարաշահումների և շահագործման ենթարկած մարդավաճառի դեմ քրեական դիմում կամ քաղաքացիական հայց ներկայացնելու համար: Բացի այդ, հայրենիք վերադարձող անձանց պարագայում, ինչպես նաև բուժօգնության պատշաճ շարունակությունն ապահովելու նպատակով՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է օգտվի իր տրամադրության տակ եղած թարգմանչական ռեսուրսներից՝ համոզվելով, որ յուրաքանչյուր անհատ ստացել է իր մայրենի լեզվով կազմված բուժող բժշկի տեղեկանք:

Նշումներ

1 Միավորված ազգերի կազմակերպություն, 2000թ., «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող Մարդկանց և հատկապես՝ կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն», G.A. Res. 55/25, Annex II, 55 U.N. GAOR, Supp. (No. 49) at 60, U.N. Doc. A/45/49, (Vol. I):

2 «Բրյուսելյան կոնվենցիա մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և հակազդման մասին», հղում՝ http://www.belgium.iom.int/STOPConference/Conference%20Papers/brudeclaration.pdf, «*Սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի հակազդման Եվրոպայի խորհրդի հանձնարարականներ», R(2000) 11* (19/5/2000), Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայում առողջապահության և մարդկանց թրաֆիքինգի հարցերով տարածաշրջանային համաժողով, Բուդապեշտ, Հունգարիա, 19-21 մարտի 2003թ., *Բուդապեշտի հռչակագիր* (2002թ.), *http://www.iomskopje.org.mk/CT/pdf/budapest_dec.pdf* Բուդապեշտի հռչակագիրը նախանշում է թրաֆիքինգի զոհերի առողջական խնդիրների կարգավորման բազմաբնույթ մոտեցում և կոչ է անում կազմել չափանիշային արձանագրություն, որտեղ կտարբերակվեն թրաֆիքինգի զոհերի փրկության սկզբնական փուլին և վերականգնման փուլին բնորոշ առաջնահերթությունները:

3 Zimmerman, C., K. Yun, I. Shvab, et al. 2003. The Health Risks and Consequences of Trafficking in Women and Adolescents: Findings from a European Study. London: London School of Hygiene and Tropical Medicine. http://www.lshtm.ac.uk/hpu/new_papers.htm

4 Այս նյութը կարելի է գտնել Միգրացիայի միջազգային կազմակերպության հետևյալ երկու հրատարակումներում՝ *The Mental Health Aspects of Trafficking in Human Beings, Training Manual* (Budapest, 2004) and *The Mental Health Aspects of Trafficking of Human Beings, A Set of Minimal Standards* (Budapest, 2004):

5 Առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանադրություն՝ http://policy.who.int/cgibin/om_isapi.dll?hitsperheading=on&infobase=basicdoc&record={9D5}&softpage=Document42

6 Միավորված ազգերի կազմակերպություն, 2000թ. «Մարդկանց, հատկապես՝ կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն»:

7 European Union.1997. *The Hague Ministerial Declaration on European Guidelines for*

Effective Measures to Prevent and Combat Trafficking in Women for the Purpose of Sexual Exploitation Section III.

8 September 2002 Brussels Declaration on Preventing and Combating Trafficking in Human Beings Section 13.

9 United Nations Office of the High Commissioner for Human Rights International Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking Guide line 6.

10 Հնարավոր օրինակներն են՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, Մարդկանց թրաֆիքինգի և այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կասեցնելու մասին կոնվենցիա, և Աշխատանքի միջազգային կազմակերպության բազում փաստաթղթեր միգրանտ աշխատողների վերաբերյալ:

11 Zimmerman, C., K. Yun, I. Shvab, et al. 2003. “Health risks and consequences of trafficking in women and adolescents. Findings from a European study”. London: London School of Hygiene and Tropical Medicine. Այս հատվածի մեծ մասը շտկումներով վերցված է հետևյալ հետազոտությունից՝ LSHTM study. http://www.lshtm.ac.uk/hpu/new_papers.htm

12 Zimmerman, C., K. Yun, I. Shvab, et al. (2003). “Health risks and consequences of trafficking in women and adolescents. Findings from a European study”. London: London School of Hygiene and Tropical.

13 Gushulak, B. and D. MacPherson (2000). “Health issues associated with the smuggling and trafficking of migrants”. *Journal of Immigrant Health,* Vol. 2, No. 2, 2000.

14 Վերցված է շտկումներով հետևյալ աղբյուրից՝ The European Council on Refugees and Exiles (ECRE) ECRE Task Force, Gaunt, S., et al. (խմբագրված) (1999) *Good Practice Guide on the Integration of Refugees in the European Union:* http://www.ecre.org/erfproject/good_ practice/intro.pdf

15 Bollini, P. and H. Siem (1995). “No real progress towards equity: Health of migrants and ethnic minorities on the eve of the year 2000”. *Social Science & Medicine* 41(6), 819–828.

16 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2003). *International Migration, Health, and Human Rights*. http://www.who.int/hhr/activities/en/intl_migration_hhr.pdf

17 Zimmerman, C. and C. Watts (2003). *WHO Ethical and Safety Recommendations for Interviewing Trafficked Women*. London School of Hygiene and Tropical Medicine and World Health Organization: London.

18 Zimmerman, C. (2004). “Trafficking in women: Conceptualizing and measuring health risks and consequences.” Dissertation for PhD, in Health Policy Unit. London School of Hygiene and Tropical Medicine: London.

19 Tchomarova, M. (2001). “Trafficking in women – personal, psychological and social problems in (non)-united Europe”, in *Trafficking in Women*, Animus Association Foundation/La Strada, Editor. 2001. Sofia, Bulgaria.

20 Tchmorova, M. (2000). *Trafficking in Women: Questions and Answers*. Sofia: Animus Foundation/La Strada.

21 Zimmerman, C. (2004). “Trafficking in women: Conceptualizing and measuring health risks and consequences”. Dissertation for PhD, in Health Policy Unit. London School of Hygiene and Tropical Medicine: London.

22 Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին

միջազգային դաշնագրի 2-րդ հոդված՝ ընդունված և բաց է ստորագրության, վավերացման և միացման համար, Գլխավոր Ասամբլեայի 2200A (XXI) բանաձևով, 16 դեկտեմբեր 1966թ., *ուժի մեջ է մտել* 3 հունվարի 1976 թ., 27-րդ հոդվածին համապատասխան:

23 Lipson, J. G., et al. (1995). *Promoting Cultural Competence in and through Nursing Education: A Critical Review and Comprehensive Plan for Action* (Lenburg, C.B., Ed.) Washington, D.C.: American Academy of Nursing.

24 Summerfield, D. (1999). "A critique of seven assumptions behind psychological trauma programmes in war-affected areas". *Social Science and Medicine 42*, 1465-1471.

25 Brussa, L. (ed.) (1999). *Health Migration Sex Work: The Experience of TAMPEP*. Amsterdam: Tampep International Foundation.

26 Zimmerman, C., K. Yun, C. Watts, I. Shvab, L. Trappolin, M. Treppete, F. Bimbi, S. Jiraporn, L. Beci, M. Albrecht, J. Bindel, and L. Regan, 2003. The Health Risks and Consequences of Trafficking in Women and Adolescents: Findings from a European study". London School of Hygiene and Tropical Medicine and the Daphne Programme of the European Commission: London

27 Skosnik, P. (2000). "Modulation of attentional inhibition by norepinephrine and cortisol after psychological stress". *International Journal of Psychophysiology,* 36 (1) 24 59 -68

28 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, (2002). "WHO gender policy: Integrating gender perspectives in the work of WHO". [On-line document] URL http://www.who.int/gender/mainsteaming/ ENGwhole.pdf

29 Declaration and Platform for Action of the Fourth World Conference on Women in Beijing (1995).

30 Watts, C., and C. Zimmerman (2002). "Violence against women: Global scope and magnitude". *Lancet, 359*, 1232-37.

31 Jenkins et al.

32 Coomaraswamy R. Preliminary report submitted by the Special Rapporteur on violence against women: its causes and consequences. New York, NY, United Nations, 1997 (report number E/CN.4/1997/47).

33 Kelly, L. (2000). "VIP guide: Vision, innovation and professionalism in policing violence against women and children". Produced for the Council of Europe Police and Human Rights 1997-2000 Programme. Strasbourg: Council of Europe. http://www.cwasu.org/resources.htm

34 Տարեկան կտրվածքով հղիության արհեստական ընդհատում կատարող 46 միլիոն կանանց 76 տոկոսն ապրում է զարգացող երկրներում, իսկ 22 տոկոսը՝ զարգացած երկրներում: Աշխարհի կտրվածքով հղիության արհեստական ընդհատման առավել բարձր թիվն (78-83 հղիության արհեստական ընդհատման դեպք 1000 կնոջ հաշվարկով) արձանագրվել է Ռումինիայում, Կուբայում և Վիետնամում: 1000 կնոջ հաշվարկով 50-ից ավել դեպք է արձանագրվել նաև Չիլիում և Պերուում: Աղբյուր՝ The Alan Guttmacher Institute (2003). Induced abortion world wide, առցանց տեղեկատվական թերթիկ՝ http://www.agi-usa.org/pubs/fb_0599.html#13

35 United Nations. Department for Economic and Social Information and Policy Analysis. Population and Development: Programme of Action Adopted at the International Conference on Population and Development, Cairo, 5-13 September 1994. New York: United Nations, 1995. Par 96.

36 Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, G.A. res. 217A (III), U.N. Doc A/810 at 71 (1948). Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր, G.A. res. 2200A (XXI), 21 U.N. GAOR Supp. (No. 16) at

52, U.N. Doc. A/6316 (1966), 999 U.N.T.S. ուժի մեջ է մտել 1976թ. մարտի 23-ին, Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, G.A. res. 44 (25) 24 44 15 GAOR Supp. (No. 49) at 167, U.N. Doc. ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերի 2-ին: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, G.A. res. 34/180, 34 U.N. GAOR Supp. (No. 46) at 193, U.N. Doc. ուժի մեջ է մտել 1981թ. սեպտեմբերի 3-ին:

37 *Trafficking in Unaccompanied Minors for Sexual Exploitation in the European Union,* May 2001, IOM-Stop Programme 2000.

38 Տե՛ս՝ "The trafficked children and associated health issues", Regional Conference on Public Health and Trafficking in Human Beings in Central, Eastern and South-eastern Europe, Budapest, Hungary, 18-20 March 2003.

39 Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (ընդունված և բաց է ստորագրության, վավերացման և միացման համար Գլխավոր Ասամբլեայի 44/25 բանաձևով, 20 նոյեմբերի 1989թ., ուժի մեջ է մտել 1990թ. սեպտեմբերից), հոդվածներ 3 և 24 http://www.unhchr.ch/html/menu2/6/crc/treaties/crc.htm

40 United Nations High Commissioner for Human Rights. Recommended Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking. UNICEF, (2003). Guidelines for the Protection of the Rights of Children Victims of Trafficking in South-eastern Europe.

41 Աղբյուրը՝ United Nations High commissioner for Refugees (1999). *Reproductive Health in Refugee Situations. An Interagency Field Manual*:

42 UNICEF (2003), *State of the World's Children 2003*. [On-line report] URL: www.unicef.org/sowc03/

43 Unicef (2003), Guidelines for protection of the rights of children victims of trafficking in South-eastern Europe, չհրատարակված նախագիծ:

44 Home Office, Crown Prosecution Service, et al. (2001). *Achieving Best Evidence in Criminal Proceedings: Guidance for Vulnerable or Intimidated Witnesses, Including Children.* London, թագավորական հեղինակային իրավունք:

45 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2003), "A critical link. Interventions for physical growth and psychological developments: A review". URL: http://www.who.int/child-adolescent-health/New_Publications/IMCI/WHO_CHS_CAH_99.3.pdf

46 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (1997), "Child abuse and neglect", առցանց տեղեկատվական թերթիկ՝ URL: http://www.who.int/inf-fs/en/fact150.html :

47 Watts, C. and C. Zimmerman (2002). "Violence against women: Global scope and magnitude". *Lancet, 359*, 1232-37.

48 Zickler, P. (2002). "Childhood sex abuse increases risk for drug dependence in adult women". Research Findings, National Institute of Drug Abuse. NIDA Notes Vol. 17, No. 1 http://www.nida.nih.gov/NIDA_Notes/NNVol17N1/ Childhood.html

49 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2003թ., *փաստաթղթի նախագիծ*), "Sexual relationship violence in adolescents: A review on the impact of sexual relationship violence on health and opportunities for prevention". Draft, August 2003.

50 Herman, J. L. (1997). *Trauma and Recovery*. New York: Basic Books.

51 Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (2001թ.), *Mental Health: New Understanding, New Hope.* Geneva, WHO.

52 Միգրացիայի միջազգային կազմակերպություն, "Psychosocial and mental well-being of migrants". Conference Room Paper, 99th Session of the Executive Committee, IOM, Geneva,4 July 2002.

53 Zimmerman, C., K. Yun, I. Shvab, et al. (2003). "Health risks and consequences of trafficking in women and adolescents. Findings from a European study". London: London School of Hygiene and Tropical Medicine.

54 Միգրացիայի միջազգային կազմակերպություն (2002) Position paper on HIV/AIDS and Migration. http://www.iom.int//DOCUMENTS/GOVERNING/EN/Mcinf252.pdf

55 Division of HIV/AIDS prevention, Questions and Answers: HIV is the Cause of AIDS. http://www.cdc.gov/hiv/pubs/cause.htm

56 BBC World Service (2003). What is HIV and AIDS [On-line fact sheet]. URL:http://www.bbc.co.uk/worldservice/sci_tech/features/health/sexualhealth/aids/what.shtml

57 Pennsylvania Prevention Project (2003). Stophiv.com. HIV myths and facts. [On-line fact sheet] URL: http://www.stophiv.com/facts_myths/

58 Տե՛ս՝ IOM HIV/AIDS Counselling and Testing in the Context of Migration Health Assessment – Counsellor Guidelines, Revised version, 2004.

59 Koss, M. P., L. A. Goodman, A. Browne, L. Fitzgerald, G. P. Keita, N. F. Russo (1994). *No Safe Haven: Male Violence Against Women at Home, at Work, and in the Community.* Washington, D.C.: American Psychological Association.

60 Forastieri, V. (1997) *Children at Work: Health and Safety Risks*. Geneva, ILO Child Labor Collection.

61 Աշխատակազմի անդամների առողջական վիճակի և սթրեսի վերաբերյալ տեղեկությունների մեծ մասը շտկումներով վերցված է հետևյալ աղբյուրից՝ Annie Halle, IOM (2001) "Stress. Analysis of stress amongst IOM employees", Geneva: IOM, Migration Health Services, Occupational Health:

62 Օրինակ, որոշ մշակույթներում ընդունելի է համարվում ապրումներով կիսվել միայն մտերիմ մարդկանց, այսինքն՝ ընտանիքի անդամների հետ: Իսկ որոշ մշակութային համատեքստերում էլ ընդունված է այն կարծիքը, որ որևէ մեկի հետ խնդիրներով կիսվելը նշանակում է նրանց ուսերին տեղափոխել սեփական խնդիրների բեռը: Տե՛ս՝ Halle, A. (2001):

63 Կամբոջայում իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, որն աջակցություն էր մատուցում վիետնամցի կանանց, քննադատության և սպառնալիքների է ենթարկվել տեղական տպագիր մամուլում: Արդյունքում աշխատակիցներից մի քանիսը հրաժարվել են աշխատել ծագումով վիետնամցի թրաֆիքինգի զոհերի հետ:

64 Տե՛ս՝ Halle A., *IOM Counter-trafficking Projects: Some reflections on the psychological dimensions.* Այդուհանդերձ, նման արձագանքները համեմատաբար փոքր թիվ են կազմում՝ հաշվի առնելով Միգրացիայի միջազգային կազմակերպության աշխատակազմի անդամների էթնիկական, ազգային և մշակութային մեծ բազմազանությունը: Սթրեսը հաճախ համարվում է մշակութային պատկանելությամբ պայմանավորված երևույթ, որը չի կարող նույն կերպ ընկալվել տարբեր համատեքստերում գտնվող անհատների կողմից: Տե՛ս՝ Summerfield, D. (2001). The invention of posttraumatic stress disorder and the social usefulness of a psychiatric category. *British Medical Journal,* 322, 95-98:

65 Turner, S. (2000). Psychiatric help for survivors of torture. *Advances in Psychiatric Treatment, 6*, 295-303.

66 Տե՛ս նույն տեղում:

67 Halle A (2001) "Stress. Analysis of stress amongst IOM employees", Geneva: IOM, Migration Health Services, Occupational Health.

68 Սույն ձեռնարկի «Աջակցություն և հյուծվածության նշանների ճանաչում» բաժինը շտկումներով վերցված է հետևյալ աղբյուրից՝ S. Kahill, "Interventions for burnout in the helping professions:*A review of the empirical evidence", Canadian Journal of Counseling Review, 22:3 (1988):*

Հավելված 1 Բուդապեշտի հռչակագիր

2003 թվականի մարտի 19-ից 21-ը Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայում Հանրային առողջության և մարդկանց թրաֆիքինգի խնդրին նվիրված տարածաշրջանային համաժողովի մասնակիցները՝

- **Հաստատելով,** որ մարդկանց թրաֆիքինգը հանդիսանում է մարդու իրավունքների ոտնահարում,
- **Մտահոգված լինելով**, որ Կենտրոնական, Արևելյան և Հարավարևելյան Եվրոպայում թրաֆիքինգի ենթարկված անձինք ունեն առողջության հետ կապված մի շարք խնդիրներ, այդ թվում առանց սահմանափակման՝ ֆիզիկական և հոգեբանական չարաշահումներ և տրավմա, սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ և այլ վարակներ, ինչպես նաև ոչ վարակիչ հիվանդություններ և բարդացումներ, այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ և թոքախտ.
- **Ճանաչելով այն հանգամանքը**, որ որոշ երկրներում ՄԻԱՎ-ի և թոքախտի և մասնավորապես դեղորայքային բուժմանը դիմադրող թոքախտի տարածումը ներկայումս հասնում է համաճարակային մակարդակի,
- **Համոզված լինելով**, որ կարիք կա անդրադառնալ մարդկանց թրաֆիքինգի առողջության և հանրային առողջության վրա ազդող հայեցակետերին,

Համաձայնության են եկել և պարտավորվել հետևյալի շուրջ.

- Չնայած այն հանգամանքին, որ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ուղղությամբ մեծ ջանքեր են կենտրոնացվել, և առաջընթաց է գրանցվել տարածաշրջանային և համաշխարհային մակարդակով, այնուամենայնիվ հարկավոր է ավելի մեծ ուշադրություն դարձնել և ռեսուրսներ հատկացնել թրաֆիքինգի հետ կապված առողջապահական և հանրային առողջության խնդիրներին:
- Թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է կարողանան օգտվել համալիր, կայուն, ինչպես նաև գենդերային պատկանելիությանը, տարիքին և մշակույթին համապատասխանող բուժծառայություններից, որոնց հիմնական շեշտը կդրվի ընդհանուր ֆիզիկական, հոգեկան և

սոցիալական բարօրության ապահովման վրա:

- Բուժօգնությունը պետք է մատուցվի համապատասխան ուսուցում ստացած մասնագետների կողմից ապահով և հոգատար միջավայրում՝ էթիկայի մասնագիտական կանոններին համապատասխան, ինչպես նաև հետևելով այն սկզբունքին, որ զոհը պետք է լիովին իրազեկված լինի իրեն առաջարկվող խնամքի բնույթի մասին, տա իր իրազեկված համաձայնությունը և օգտվի լիարժեք գաղտնիության իրավունքներից:
- Հարկավոր է մշակել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց մատուցվող բուժօգնության նվազագույն չափանիշները: Այս չափանիշները պետք է մշակվեն կառավարությունների, միջկառավարական և հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ակադեմիական հաստատությունների միջև եղած գործընկերության միջոցով և պետք է հիմնված լինեն համալիր հետազոտությունների և լավագույն ընթացակարգերի վրա:
- Միջամտությունների տարբեր փուլերում զոհերին մատուցվող բուժօգնության առումով դրվում են տարբեր առաջնահերթություններ:

  Առաջնային օգնության փուլում, որը սկսվում է զոհի և բուժաշխատողի առաջին շփումից և հաճախ տեղի է ունենում նպատակակետ և (կամ) տարանցիկ երկրում, խնամքի կենտրոնում պետք է լինեն ստացված վնասվածքների և կրած տրավմայի բուժումը, ճգնաժամային միջամտությունը և առաջին բուժօգնությունը, այդ թվում՝ խորհրդատվությունը:

  Վերականգման փուլում, որը հաճախ տեղի է ունենում ծագման երկրում, խնամքի հիմնական շեշտը պետք է դրված լինի զոհի երկարաժամկետ առողջական կարիքների և վերաինտեգրման վրա: Զոհերը պետք է ստանան իրենց անհատական կարիքներին և հանգամանքներին հարմարեցված բուժօգնություն:

  Երկարատև առողջական կարիքների օրինակների ոչ սպառիչ և ոչ վերջնական ցանկը ներառում է՝ խորհրդատվություն, շարունակական խնամք, սեռական ճանապարհով փոխանցվող վարակների թեստեր և (կամ) բուժում, ՄԻԱՎ/ՁԻԱՀ, թոքախտ, ֆիզիկական և հոգեբանական տրավմա, հոգեներգործուն միջոցների չարաշահում և դրա հետ կապված այլ խնդիրներ:
- Թրաֆիքինգի ենթարկված երեխաներն ու պատանիները

հատկապես խոցելի խումբ են, որոնք ունեն հատուկ առողջական կարիքներ: Բուժօգնության մատուցումն այս խմբին պետք է իրականացվի երկարաժամկետ, կայուն մոտեցմամբ՝ հաշվի առնելով հոգեկան և հոգեբանասոցիալական հեռահար հետևանքների հնարավորությունը:

Ավելին, երեխաների և պատանիների թրաֆիքինգի երևույթից բխում են մի շարք բարդ իրավական հարցեր, այդ թվում՝ խնամակալության հետ կապված խնդիրներ, որոնք պետք է լուծվեն խնամքի և բուժման նվազագույն չափանիշների ապահովման համար:

Բոլոր դեպքերում որպես որոշիչ գործոն և առաջնային մտահոգություն պետք է հանդես գան երեխայի լավագույն շահերը:

- Ապաստարանները և վերականգման կենտրոնները կարևոր դերակատարում ունեն զոհերի պաշտպանության, աջակցության, բուժօգնություն և անվտանգության գործում: Ապաստարանների և վերականգման կենտրոնների շահագործումն ու կառավարումը պետք է իրականացվի արհեստավարժ և չափանիշների վրա հիմնված մոտեցմամբ:
- Տարբեր ոլորտների մասնագետներից բաղկացած առողջապահական թիմերի մասնագիտացված վերապատրաստման ծրագրերը պետք է մշակվեն թրաֆիքինգի զոհերի հատուկ կարիքների մասին բուժաշխատողների իրազեկման շեշտադրմամբ:
- Հոգեբանասոցիալական խորհրդատվությունն առանցքային դեր ունի վստահության ձևավորման, զոհի կարիքների որոշման, բուժօգնության մատուցման համար նրա համաձայնության ստացման, վերականգման նպատակների իրականացման հարցում տվյալ անձի ներգրավման, ինչպես նաև վերականգնման և կարողությունների ձևավորման հեռահար նպատակների իրականացման համար:
- Սոցիալական, ժամանցային, կրթական և ուսումնական գործողությունները, որոնք կազմակերպվում են ապաստարաններում և վերականգման կենտրոններում, կարևոր դերակատարում ունեն զոհերի ինքնագնահատականի վերականգնման հարցում և հետևաբար պետք է դրական ազդեցություն գործեն զոհերի առողջության վրա:

- Հարկավոր է ավելի լավ պատկերացնել թրաֆիքինգի հետ կապված հանրային առողջության խնդիրները: Խարանավորումից զերծ և մշակույթին համապատասխան իրազեկման բարձրացման արշավներ՝ ուղղված ռիսկային խմբերին ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի մասով, պետք է իրականացվեն ողջ տարածաշրջանում:
- Կառավարությունները պետք է իրենց վրա պատասխանատվություն վերցնեն թրաֆիքինգի կանխարգելման, ինչպես նաև թրաֆիքինգի ենթարկված անձանց և հատկապես երեխաների ու պատանիների անվտանգության, օրինական իրավունքների, պաշտպանության և խնամքի ապահովման համար՝ ապահովելով ազգային առողջապահական կառույցների և հաստատությունների հասանելիությունը:
- Կառավարությունները, միջկառավարական և հասարակական կազմակերպությունները պետք է ընդլայնեն իրենց միջազգային համագործակցությունը՝ համակարգելով և ինտեգրելով նպատակակետ, ծագման և տարանցիկ երկրներում առաջարկվող բուժծառայությունները: Բժշկական տվյալների փոխանակումը՝ զոհի իրազեկված համաձայնությամբ և գաղտնիության ու տեղեկատվության պաշտպանության առավելագույն մակարդակի պահպանմամբ, կարևոր է խնամքի շարունակականության ապահովման, դեպքերի արդյունավետ կառավարման, ինչպես նաև վերականգնման և վերաինտեգրման համար:

  Մասնակիցները սույնով պարտավորվում են խթանել և իրագործել սույն փաստաթղթում զետեղված հանձնարարականները:

Հավելված 2 Արևմտյան երկրներում ընդունված հոգեբանական աջակցության մի քանի տարածված թերապևտիկ մոտեցումների նկարագրեր

Հոգեբանասոցիալական վերականգնումը կարող է ընդգրկել այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ առողջական հարցերի շուրջ իրազեկումը, հոգեբանակրթական միջոցառումները, անկախ կենսական հմտությունների դասավանդումը, սոցիալական հմտությունների դասավանդումը և մասնագիտական ուսուցումը: Այս գործունեության տեսակները սովորաբար օգտագործվում են թերապիայի այլ ձևերի հետ համատեղ:

Ստեղծագործական աշխատանքի, այն է՝ նկարչության, երաժշտության, պարի, թատերական բեմադրումների օգտագործումը հոգեբանական բուժման, խորհրդատվության, հատուկ կրթության և վերականգնման շրջանակներում: Այս մոտեցումները նախատեսված են ինքնագնահատականը, լավատեսությունը և առավել առողջ սոցիալական վարքագիծը խթանելու, ինչպես նաև անհատի մոտ ամոթի կամ մեղքի զգացումը թուլացնելու համար: Ենթադրվում է, որ այս թերապևտիկ մոտեցումները նպաստում են թաքնված (ի տարբերություն բացահայտ) հիշողության համակարգերի վերհանմանը և կարող են մեծացնել այլ թերապևտիկ գործընթացների ազդեցությունը:

Խմբային թերապևտիկ մոդելներն առաջարկում են սոցիալական համակեցություն, խրախուսում և աջակցություն խմբի այն անդամների կողմից, ովքեր ունեցել են նմանատիպ փորձ: Խմբային հանդիպումները կարող են օգնել անհատներին ինքնահաստատվել, բարձրացնել ինքնագնահատականը, ձևավորել հաղորդակցման և ընդհարումների հաղթահարման հմտություններ: Նման պայմաններում անհատները կարող են նաև սովորել վերահսկել ագրեսիվ վերաբերմունքը և կիսվել ապագայի վերաբերյալ ունեցած իրենց մտահոգություններով:

Անհատական թերապիայի ժամերը կարող են օգտակար լինել մասնակցել ցանկացող անձանց համար: Հաշվի առնելով յուրաքանչյուր իրավիճակում առկա ռեսուրսներն ու համատեքստը՝ անհատական թերապևտիկ գործողություններում առաջնահերթ պետք է համարվեն կարճաժամկետ, ընտրողական մոտեցումները, այլ ոչ թե որևէ տեսակի հոգեբանական վերլուծություն նախաձեռնելու փորձերը:

Երեխաների աջակցության աշխատանքում շեշտը պետք է

դրվի անչափահասների (18 տարին չլրացած անձանց) հատուկ կարիքների ապահովման վրա: Անչափահասների կարիքները և հոգեբանական խնդիրները չի կարելի շփոթել կամ համատեղել մեծահասակների նմանատիպ խնդիրների հետ: Անչափահասների հոգեբանասոցիալական աջակցության կամ բուժման (խմբային կամ անհատական) շրջանակներում պետք է կիրառվեն իրենց տարիքին հատուկ գործիքներ, թեմաներ և կրթական հնարքներ: Երեխաների ընտանիքի անդամների կամ խնամողների ներգրավումը (նույնիսկ հեռախոսով, եթե հանդիպումները հնարավոր չէ կազմակերպել) կարող է դառնալ վերականգնման հաջողության հիմնական տարրը: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ այն դեպքերում, երբ հիմք կա կարծելու, որ երեխան մեծացել է չարաշահումներով ընտանիքում, հարկավոր է նման շփումները կազմակերպել մեծ արհեստավարժությամբ կամ նույնիսկ խուսափել դրանցից:

6

Համագործակցություն իրավապահ մարմինների հետ

Գլխի բովանդակություն

6.1 Ներածություն
6.2 Նախապատմություն
6.3 Համագործակցությունը՝ իրավապահ մարմինների տեսանկյունից
6.4 Համագործակցությունը՝ ծառայություն մատուցող կազմակերպության տեսանկյունից
6.4.1 Ծառայություն մատուցող կազմակերպությունների ռազմավարական բնույթի ռիսկեր
6.4.2 Ծառայություն մատուցող կազմակերպությունների գործառնական ռիսկեր
6.4.3 Համագործակցության առավելությունների որոշում
6.5 Քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված հնարավորությունների և իրավունքների հասանելիություն
6.5.1 Ներածություն
6.5.2 Քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված իրավունքներ և հնարավորություններ
6.5.3 Օրենքով նախատեսված իրավական պաշտպանության տարբերակների վերաբերյալ խորհրդատվության ժամանակացույց
6.5.4 Իրավական խորհրդատվություն
6.5.5 Զոհերի իրավական պաշտպանության միջոցներ՝ վկաներ
6.6 Համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր
6.6.1 Համագործակցության աստիճան
6.6.2 Փոխըմբռնման հուշագրեր կնքելու առավելությունները
6.6.3 Հիմնարար սկզբունքներ
6.6.4 Համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի բովանդակություն
6.6.5 Ռիսկեր
6.7 Կապ թրաֆիքինգի հակազդմամբ զբաղվող մարմինների հետ
6.8 Տեխնիկական համագործակցություն և կարողությունների ձևավորում
6.9 Տեղեկատվության կառավարում և տարածում
6.9.1 Թրաֆիքինգի հակազդման վերաբերյալ օպերատիվ տվյալներ՝ սահմանում և աղբյուրներ
6.9.2 Օպերատիվ տվյալների և դրանց օգտագործման տեսակները
6.9.3 Երկկողմ փոխանակման գործընթաց
6.9.4 Այլ զոհերի և հնարավոր զոհերի վերաբերյալ օպերատիվ տվյալների բացահայտման պարտականություն
6.9.5 Զոհի կողմից օպերատիվ տվյալներ ոստիկանությանն ուղղակիորեն հայտնելու կարգ
6.9.6 Հատուկ օպերատիվ տվյալների բացահայտման ռիսկի գնահատում
6.9.7 Փոխանցված օպերատիվ տվյալների գաղտնիություն
6.9.8 Մոնիթորինգ և վերահսկողություն

6.1 Ներածություն

Սույն ձեռնարկի այս գլխի նպատակն է ներկայացնել քրեական արդարադատության համակարգի շրջանակներում թրաֆիքինգի զոհերի իրավունքները և հնարավորությունները, ինչպես նաև ծառայություն մատուցող կազմակերպության և ազգային ու միջազգային իրավապահ մարմինների միջև հաստատվող փոխհարաբերությունները թրաֆիքինգի հակազդմանն ուղղված գործողությունների շուրջ:

Սույն ձեռնարկում նպատակ չի դրվում խրախուսել ծառայություն մատուցող կազմակերպություններին համագործակցել իրավապահ մարմինների հետ կամ զերծ մնալ նման համագործակցությունից: Այդուհանդերձ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց աջակցող կազմակերպությունների աշխատակիցները վաղ թե ուշ ստիպված կլինեն կանգնել նման հարցի առջև, խիստ կարևոր է տրամադրել համապատասխան տեղեկատվություն:

Որպես կանոն, ծառայություն մատուցող կազմակերպությունները պարտավոր չեն աջակցել իրավապահ մարմինների աշխատակիցներին կամ համագործակցել նրանց հետ թրաֆիքինգի հակազդման հետ կապված հարցերի շուրջ: Այդուհանդերձ, ազգային օրենսդրությունը տարբերվում է երկրից երկիր, ուստի և ցանկալի է, որ ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցները պարզեն տվյալ երկրի օրենսդրությամբ սահմանված իրենց պարտավորությունները: Բացի այդ, իրավապահ մարմինների հետ համագործակցությունը ենթադրում է ռազմավարական և գործառնական զգալի ռիսկեր: Սույն գլխում նպատակ չի դրվում առաջարկելու, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է ոստիկանների փոխարեն կատարեն նրանց աշխատանքը: Փոխարենը, այս գլխի առանցքն է փոխադարձ համագործակցության հնարավորությունը, որի պարագայում գործընկերներից յուրաքանչյուրը կատարում է իր պարտականությունները:

6.2 Նախապատմություն

Թրաֆիքինգի ենթարկված անձինք ունեն դատական կարգով փոխհատուցում պահանջելու իրավունք իրենց դեմ ուղղված հանցագործությունների շրջանակներում: Ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է թրաֆիքինգի զոհերի հետ քննարկեն

այդ իրավունքը՝ համոզվելու, որ նրանք ընդունակ են ինքնուրույն իրազեկված որոշում կայացնել իրենց հետագա քայլերի վերաբերյալ:

Բացի այդ, ողջ աշխարհում վերջերս արձանագրվել է մարդկանց թրաֆիքինգի հանցատեսակի շարունակական աճ, քանի որ այն հանդիսանում է փոքր ռիսկերով ուղեկցվող եկամտաբեր միջազգային կազմակերպված հանցավոր գործունեություն, որը մեծ վնաս է պատճառում թրաֆիքինգի զոհի ֆիզիկական, հոգեկան և սեռական առողջությանը: Ծառայություն մատուցող կազմակերպությունները թրաֆիքինգից տուժած անձանց աջակցության մատուցման ոլորտում իրենց զբաղեցրած շահեկան դիրքի և մեծ փորձի շնորհիվ՝ գնալով ավելի մեծ ներգրավում են ունենում իրավապահ մարմինների օպերատիվ աշխատանքի շրջանակներում ծավալվող ռազմավարական և գործնական փոխհարաբերություններում, ինչը կարող է դրական անդրադարձ ունենալ հանցավորության դեմ մղվող պայքարի վրա:

6.3 Համագործակցությունը՝ իրավապահ մարմինների տեսանկյունից

Իրավապահ մարմինների տեսանկյունից՝ զոհերի հետ համագործակցությունը, ինչպես նաև՝ ծառայություն մատուցող կազմակերպությունների փորձը և գործառնական կարողությունները խիստ կարևոր են հետևյալ տարբեր հայեցակետերից.

- նախնական պատկերացում տալ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին, ովքեր ձգտում են անմիջապես ապահովել թրաֆիքինգի ենթարկված անձանց անվտանգությունը,
- նպաստել թրաֆիքինգի զոհերին կացության և աջակցության տրամադրմանը, ովքեր դատավարության ընթացքում ցուցմունք տալու միջոցով իրենց հերթին կարող են աջակցել հանցագործության հետաքննությանը,
- տրամադրել թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ տվյալներ, որոնք սովորաբար հասանելի չեն ոստիկանության աշխատակիցներին, քանի որ թրաֆիքինգի զոհերը հրաժարվել են նրանց հետ համագործակցելուց՝ վստահության պակասի պատճառով (նշում. թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ տվյալների տրամադրումը հղի է ռիսկերով, որոնք մանրամասն ներկայացվում են սույն գլխում),
- տրամադրել տեխնիկական օգնություն և աջակցություն

իրավապահ մարմիններին՝ թրաֆիքինգի հակազդման կարողությունները մեծացնելու համար:

6.4 Համագործակցությունը՝ ծառայություն մատուցող կազմակերպության տեսանկյունից

Քանի որ ծառայություն մատուցող կազմակերպությունները կոչված են պայքարել թրաֆիքինգի դեմ և պաշտպանել այդ հանցատեսակից տուժած անձանց, թրաֆիքինգի զոհերը կամ նրանց ազգականները և ընկերները նման կազմակերպություններին կարող են հայտնել օպերատիվ տվյալներ թրաֆիքինգի դեպքի վերաբերյալ: Նման տվյալները կարող են կենսական նշանակություն ունենալ իրավապահ մարմինների համար՝ թրաֆիքինգի զոհ դարձած անձանց փնտրելու և գտնելու հարցում: Օպերատիվ տվյալները կարող են նպաստել նաև մարդավաճառների նույնականացմանը և դատական կարգով հետապնդմանը: Թրաֆիքինգի զոհերի փրկությունը և մարդավաճառների նույնականացումը հանդիսանում են թրաֆիքինգի հակազդման համալիր ռազմավարության երկու հիմնական բաղադրիչները: Ծառայություն մատուցող կազմակերպությունների և իրավապահ մարմինների աշխատակիցների համագործակցությունը կարող է նպաստել նշված նպատակների իրագործմանը:

Բացի այդ, ընթացիկ փորձը վկայում է այն մասին, որ ծառայություն մատուցող կազմակերպությունների խնամքի ներքո գտնվող թրաֆիքինգի զոհերի շրջանում բավականին մեծ թիվ են կազմում նրանք, ովքեր ցանկանում են թրաֆիքինգի դեպքին վերաբերող գաղտնի տեղեկությունները փոխանցել իրավապահ մարմինների աշխատակիցներին: Որոշ դեպքերում, երբ իրավապահ մարմիններն իրենց աշխատանքում դրսևորում են արհեստավարժ և անվտանգության ապահովմանն ուղղված մոտեցում, թրաֆիքինգի զոհերը կարող են նման տեղեկությունները հայտնել ոստիկանության աշխատակիցների հետ առերես հանդիպումներին: Պատահում է նաև այնպես, որ թրաֆիքինգի զոհերը չեն ցանկանում զրուցել ոստիկանության աշխատակիցների հետ և օպերատիվ տվյալները փոխանցում են ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով: Թրաֆիքինգի դեպքի վերաբերյալ օպերատիվ տվյալները ոստիկանությանը պատշաճ կարգով փոխանցելով՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը կկարողանա.

- հաղորդել թրաֆիքինգի զոհին այն զգացումը, որ նա իր դեպքի մասին հայտնել է համապատասխան իրավասու մարմիններին, և որ օպերատիվ տվյալների օգնությամբ հնարավոր կլինի մարդավաճառին ենթարկել օրենքով նախատեսված պատժի, աջակցություն մատուցել այլ հնարավոր զոհերին,
- արդյունավետ միջոցներ ձեռնարկել մարդավաճառների նույնականացման և (կամ) դեռևս նրանց ձեռքերում գտնվող թրաֆիքինգի զոհերի փրկության ուղղությամբ:

Ինչպես բոլոր նման դեպքերում, օպերատիվ տվյալներ փոխանցելու համար անպայման հարկավոր է ստանալ թրաֆիքինգի զոհի իրազեկված գրավոր համաձայնությունը և ապահովել, որ տվյալ կազմակերպությունը միշտ առաջնորդվի նրա լավագույն շահերով:

6.4.1 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՌԻՍԿԵՐ

Ռազմավարական մակարդակով իրավապահ մարմինների հետ համագործակցությունը կարող է դառնալ համեմատաբար նոր դաշտ ծառայություն մատուցող շատ կազմակերպությունների համար, ինչի արդյունքում կարող են ի հայտ գալ քաղաքականությունների հետ կապված նրբանկատ հարցեր և ռիսկեր: Ուստի, համագործակցության բնույթն ու ծավալը և կազմակերպության մատուցած աջակցությունը հարկավոր է խիստ հավասարակշռության մեջ պահել: Նման աջակցության և համագործակցության ծավալը պայմանավորված է տվյալ երկրի քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված մոտեցման բնույթով և պաշտպանության որակով, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանության աստիճանով: Թրաֆիքինգի զոհերի նկատմամբ մոտեցման ոլորտում մարդու իրավունքներից բխող հիմնական միջազգային չափանիշները ներկայացված են հետևյալ փաստաթղթերում՝ ՄԱԿ-ի Պալերմոյի արձանագրություն մարդկանց թրաֆիքինգի մասին և Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի կողմից ձևակերպված «Մարդու թրաֆիքինգի վերաբերյալ ուղեցույցներ և սկզբունքներ»: Կարելի է առաջնորդվել նաև տարածաշրջանային մակարդակով ստորագրված փաստաթղթերով, օրինակ՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (ուժի մեջ մտնելուն պես):

Բոլոր այն դեպքերում, երբ տվյալ երկրի քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված մոտեցումը և պաշտպանությունը չեն համապատասխանում միջազգային չափանիշներին, նման համակարգ կիրառող ոստիկանության հետ համագործակցությունը կարող է հակասել կազմակերպությունների՝ թրաֆիքինգի զոհերին աջակցություն և պաշտպանություն տրամադրելու պարտականությանը: Եվ հակառակը, կարող է այնպես ստացվել, որ որոշակի ժամանակահատվածում սահմանափակ աստիճանի համագործակցությունը կարող է ծառայել որպես զոհերի նկատմամբ իրավապահ մարմինների վերաբերմունքի բարելավմանը նպաստելու առավել գործնական միջոց: Վերջին հաշվով, հարկավոր է որդեգրել հավասարակշռված մոտեցում, ինչը տվյալ երկրում ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներից պահանջում է սթափ դատողություն և կառավարում:

Իրավապահ մարմինների հետ համագործակցության հնարավոր զարգացումներն ամենայն հավանականությամբ չեն սահմանափակվի կազմակերպության և իրավապահ մարմինների աշխատակիցների միջև ձևավորված փոխհարաբերություններով: Բոլոր միջամտությունների ժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև պետական, միջպետական և հասարակական կազմակերպությունների հետ տվյալ կազմակերպության փոխհարաբերությունների տարբեր կողմերը: Շատ դեպքերում հնարավոր ռիսկերը կարելի է կանխել նախնական խորհրդակցություններով և բանակցություններով փոխադարձաբար շահավետ գործընկերության հիման վրա:

Այդուհանդերձ, անկախ այն հանգամանքից, թե որքանով է իրավապահ մարմինների հետ համագործակցությունն արդարացված տվյալ հանգամանքներով և որոշակի հարցերով, այն երբևէ չպետք է հարվածի տակ դնի թրաֆիքինգի զոհերի աջակցությանը նվիրված կազմակերպության անաչառությունը: Այս վտանգը նվազեցնելու հիմնական միջոցը իրավապահ մարմինների հետ փոխհարաբերությունների մասնագիտական կառավարումն է՝ մարդու իրավունքներին, թրաֆիքինգի զոհի շահերի առաջնահերթության վրա կենտրոնացած փիլիսոփայությանն անմնացորդ նվիրվածության որպես թրաֆիքինգի երևույթին կազմակերպության հակազդման միջոց:

6.4.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց համար շարունակական ծառայություններ մշակելիս ծառայություն մատուցող կազմակերպությունները ստիպված են գնալով ավելի շատ առնչվել տվյալ երկրի քրեական արդարադատության համակարգի հետ: Որքան ընդլայնվում է թրաֆիքինգից տուժած անձանց մատուցվող աջակցության շրջանակը, այնքան ավելի է մեծանում տվյալ կազմակերպության դերն ու նշանակությունը, ինչպես նաև ոստիկանության տեղական բաժնի աշխատակիցների ցանկությունը սերտ համագործակցություն հաստատել կազմակերպության հետ՝ մարդավաճառներին նույնականացնելու և դատական կարգով հետապնդելու հնարավորություն ստանալու համար:

Նման սերտ համագործակցությունը հղի է մեծ ռիսկերով ինչպես թրաֆիքինգի զոհերի, այնպես էլ կազմակերպության աշխատակազմի անդամների համար: Բոլոր ռիսկերն ունեն մեկ աղբյուր՝ անխիղճ մարդավաճառների կազմակերպված հանցավոր խմբի կողմից թրաֆիքինգի զոհերին և կազմակերպության աշխատակիցներին ներկայացվող վտանգ: Մարդավաճառների տեսակետից՝ «բիզնեսը տուժում է» ամեն անգամ, երբ թրաֆիքինգի ենթարկված որևէ անձ փրկվում կամ վերականգվում է, և երբ դա անպատիժ է անցնում թրաֆիքինգի զոհի, ընտանիքի անդամների կամ այլ մտերիմների համար, քանի որ նման դեպքերը նվազեցնում են մարդավաճառների ազդեցությունն այլ զոհերի վրա և մեծացնում նրանց փախուստի դիմելու փորձի հավանականությունը: Ավելին, երբ փրկված թրաֆիքինգի զոհը վկայություն է տալիս դատարանում, թրաֆիքինգի «բիզնեսն» էլ ավելի է վտանգվում, քանի որ մեծանում է մարդավաճառների ազատազրկվելու և եկամուտից զրկվելու վտանգը:

Հայտնի է, որ մարդավաճառները պատժամիջոցներ են գործադրել իրենց ճանկերից ազատված և հետագայում դատարանում իրենց դեմ ցուցմունք տված զոհերի նկատմամբ, և հավանաբար նույն կերպ կվարվեն, եթե միջազգային կազմակերպությունների միասնական ջանքերով ձեռնարկված միջոցառումները մեծապես վտանգեն իրենց գործը:

Ընդ որում, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամները նույնպես ավելի մեծ ռիսկի են ենթարկվում, քանի որ մարդավաճառները քաջատեղյակ են թրաֆիքինգի զոհերի փրկության և վերաինտեգրման գործընթացում

կազմակերպության դերի մասին: Մասնավորապես, որպես վկա հանդես եկող թրաֆիքինգի զոհերի անվտանգությունը և տեղեկատվության հասանելիությունն ապահովելու նպատակով ոստիկանության հետ սերտ համագործակցության արդյունքում ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներին սպառնացող վտանգն անխուսափելիորեն աճում է: (Ռիսկերի գնահատման և կառավարման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են սույն ձեռնարկի 1-րդ գլխում):

6.4.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ

Հաշվի առնելով ոստիկանության հետ համագործակցելուց բխող ռազմավարական և գործառնական ռիսկերի աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները, որպես կանոն, իրավապահ մարմինների հետ համագործակցելու պարտավորություն չեն կրում, հարց է ծագում, թե արդյոք նման համագործակցությունն առհասարակ անհրաժեշտ է:

Այս հարցի պատասխանի հիմքում ընկած առանցքային գործոնը թրաֆիքինգի զոհի դիրքորոշումն է: Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված աջակցության կարևորագույն հայեցակետն է ապահովել նրանց լիարժեք իրազեկվածությունը, ինչպես նաև իրենց հիմնական իրավունքներից զրկված և ծանր հանցագործություններից տուժած անձանց քրեական արդարադատության համակարգով նախատեսված հնարավորություններից օգտվելու կարողությունը: Շատ դեպքերում թրաֆիքինգի զոհերը ոչ միայն շահագործվում են մարդավաճառների կողմից, այլև հետագայում խտրականության ենթարկվում և զրկվում քաղաքացիական և քրեական արդարադատության համակարգով իրենց վերապահված իրավունքներից, որոնք կոչված են օգնել խոցելի վիճակում հայտնված տուժողներին:

Թրաֆիքինգի զոհերին տրամադրվող աջակցության առանցքային բաղադրիչն է իրավական աջակցությունը և խորհրդատվությունը, որի օգնությամբ նրանք կարող են իրենց առնչվող հարցերի շուրջ կայացնել մտածված և իրազեկված որոշումներ, ինչպես նաև օգտվել օրենքով նախատեսված իրավունքներից և հնարավորություններից: Փորձը ցույց է տալիս, որ շատ դեպքերում թրաֆիքինգի զոհերը ցանկանում են որոշ չափով համագործակցել ոստիկանության հետ՝ ձգտելով վերականգնել

արդարությունը և ստանալ իրենց պատճառված չարիքի հատուցումը: Այս հարցով թրաֆիքինգի զոհերին աջակցելու համար կարելի է սերտ համագործակցություն հաստատել իրավապահ մարմինների հետ:

6.5 Քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված հնարավորությունների և իրավունքների հասանելիություն

6.5.1 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ներկայացվում են.

- քրեական արդարադատության համակարգով թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված չորս հնարավորությունները,
- ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից տրամադրվող

  խորհրդատվություն,
- ոստիկանության աշխատակիցների հետ կապի հաստատում և պայմանավորվածության ձեռք բերում այն զոհերի համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ քրեական դատաքննության շրջանակներում վկայի ցուցմունք տալու տարբերակին:

Թրաֆիքինգի զոհերի համար նախատեսված աջակցության մնացած ձևերի նմանությամբ տվյալ գործընթացի յուրաքանչյուր փուլի հիմքում պետք է ընկած լինի զոհի կամավոր և իրազեկված համաձայնության սկզբունքը:

Այդ կապակցությամբ, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները և թրաֆիքինգի զոհերը քննարկելու են խիստ նրբանկատ հարցեր, որոնց պատասխանելու համար զոհը պետք է կշռադատված որոշումներ կայացնի: Այդ իսկ պատճառով խիստ կարևոր է զոհի հետ զրուցել իր մայրենի լեզվով կամ անհրաժեշտության դեպքում՝ ապահովել թարգմանչի ծառայություններ:

6.5.2 ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թրաֆիքինգի զոհերի հիմնարար իրավունքներից է արդարադատության և սեղմ ժամկետում վնասի փոխհատուցման մեխանիզմների հասանելիությունը: Ստորև ներկայացվում են հասանելի չորս իրավունքները և տարբերակները.

.....

Առհասարակ ոչինչ չասել իրավապահ մարմինների աշխատակիցներին:

.....

Սա պարզագույն և առավել տարածված տարբերակն է, ինչը պայմանավորված է թրաֆիքինգի զոհի՝ իր ընտանիքի անդամների, հարազատ մարդկանց կամ իր սեփական անձի անվտանգության համար վախի և ոստիկանության նկատմամբ անվստահության զգացումների համադրությամբ: Այս իրավունքի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ ոչ մի զոհի չի կարելի ստիպել վկայություն կամ գրավոր ցուցմունք տալ քրեական արդարադատության համակարգի ներքո:

.....

Ոստիկանությանը հայտնել գաղտնի տեղեկություններ հանցագործության և այն կատարած անձանց վերաբերյալ՝ խիստ պայմանով և համաձայնությամբ, որ զոհը չպետք է հանդես գա որպես վկա կամ հարկադրաբար ցուցմունք տա:

.....

Թրաֆիքինգի զոհերից շատերն են ընտրում այս տարբերակը, քանի որ այն նրանց թույլ է առանց անմիջական ներգրավման միջոցներ ձեռնարկել իրենց շահագործողների դեմ և զերծ մնալ ցուցմունք տալու հետ կապված ռիսկերից: Այս տարբերակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են ստորև, բաժին 6.9:

.....

Դիտարկել թրաֆիքինգ իրականացող անձի (անձանց) դեմ դատաքննության ընթացքում վկայություն տալու տարբերակը

.....

Փորձը ցույց է տալիս, որ առաջին բուժօգնություն և անկախ մասնագետների խորհրդատվություն ստանալուց և իրենց դրության շուրջ որոշ ժամանակ խորհելուց հետո թրաֆիքինգի զոհերից շատերն իրենց ազատ կամքով որոշում են կայացնում մարդավաճառին պատասխանատվության հրավիրելու մասին:

.....

Տեղեկություններ ստանալ կրած վնասի դիմաց փոխհատուցում ստանալու օրենքով նախատեսված իրավական պաշտպանության տարբերակների մասին և աջակցություն ստանալ այդ տարբերակներից օգտվելու հարցում

.....

Թրաֆիքինգով զբաղվող չարագործները զգալի շահույթ են ստանում զոհերին հանցավոր ճանապարհով շահագործելու և չարաշահելու հաշվին, ուստի և վերջիններիս հարկավոր է իրազեկել վնասի փոխհատուցման իրենց իրավունքի մասին և հնարավորինս աջակցել նման պահանջների ներկայացմանը:

6.5.3 ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

.....

Անչափահասների նկատմամբ որդեգրվող մոտեցման և նրանց հետ անցկացվող հարցազրույցների վերաբերյալ ուղեցույցները ներկայացված են 5-րդ գլխում, բաժին 5.6:

.....

Ուղղորդող կազմակերպություններ տարանցիկ և նպատակակետ երկրներում

Հարց է ծագում, թե արդյոք ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է թրաֆիքինգի զոհերին խորհրդատվություն տրամադրեն նրանց օրենքով սահմանված իրավունքների և հնարավորությունների վերաբերյալ տարանցիկ կամ նպատակակետ երկրներում ուղղորդման կամ մեկնումին նախորդող փուլերում: Որպես կանոն, ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է նպատակակետ

կամ տարանցիկ երկրներում գտնվող թրաֆիքինգի զոհերին առաջին իսկ հնարավորության դեպքում տեղեկատվություն տրամադրեն նրանց օրենքով նախատեսված իրավունքների և քրեական արդարադատության համակարգի ներքո հասանելի հնարավորությունների վերաբերյալ: Եթե թրաֆիքինգի զոհը ծառայություն մատուցող կազմակերպություն է ուղղորդվել որևէ այլ հաստատության կողմից միայն հայրենիք վերադառնալու հետ կապված աջակցություն ստանալու համար, ապա ամենայն հավանականությամբ նա արդեն ստացել է խորհրդատվություն օրենքով նախատեսված իրավունքների և քրեական արդարադատության համակարգի ներքո հասանելի հնարավորությունների վերաբերյալ: Այդուհանդերձ, այդ հարցում համոզվելու համար՝ տվյալ կազմակերպությունը պետք է ճշտի այդ հարցն ուղղորդող կազմակերպության հետ:

Իրավիճակն ավելի է բարդանում, երբ խոսքը գնում է անմիջական ուղղորդման մասին, այսինքն՝ երբ տվյալ թրաֆիքինգի զոհին չի ուղղորդել որևէ կազմակերպություն, օրինակ՝ իրավապահ մարմինները, գործընկեր միջկառավարական կամ հասարակական կազմակերպությունները: Տվյալ փուլում զոհին խորհրդատվություն տրամադրելու մասին որոշման կայացումը ենթադրում է որոշ բարդություններ և կախված է մի շարք գործոններից: Թրաֆիքինգի զոհին համալիր խորհրդատվություն տրամադրելու համար՝ հարցազրույց անցկացնող անձը պետք է հիմնավոր գիտելիքներ ունենա ընդունող երկրի քրեական արդարադատության համակարգի մասին: Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե ինչպիսի մոտեցում է տվյալ պետությունը դրսևորում թրաֆիքինգի զոհերի նկատմամբ: Եթե կասկածներ կան, որ թրաֆիքինգի զոհերը կարող են դատական կարգով հետապնդվել զոհի կարգավիճակում իրենց կատարած իրավախախտումների համար, ապա որպես վկա հանդես գալու տարբերակը միշտ չէ, որ կբխի զոհի շահերից: Այդուհանդերձ, եթե զոհը որոշի վերադառնալ հայրենիք, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է նրան հայտնի իրավական պաշտպանության առկա բոլոր տարբերակների մասին և տա նրան ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն:

Հարկավոր է զոհին խորհուրդ տալ որոշ ժամանակ ուշադիր ուսումնասիրել տարբերակները: Ցանկալի է, որ տարբերակների ներկայացումից առաջ հոգեբանը կատարի թրաֆիքինգի զոհի վիճակի

գնահատում: Ցանկացած առողջական, այդ թվում՝ հոգեբանական անհետաձգելի խնդրի առկայության պարագայում թրաֆիքինգի զոհը պետք է ստանա բուժում, իրեն զգա պաշտպանված և նշված տարբերակների մասին տեղեկություններ ստանա միայն այն ժամանակ, երբ հոգեբանը հաստատի, որ նման տեղեկատվությունը մեծ վնաս չի հասցնի նրան:

Շատ բարդ է հավասարակշռված մոտեցում որդեգրել այս հարցի նկատմամբ: Ուստի և, ծառայություն մատուցող կազմակերպությունը ստիպված է յուրաքանչյուր դեպք դիտարկել իր առանձնահատկություններով: Լավագույն գործելաոճի սկզբունքներով՝ առանց միջնորդ կազմակերպության ուղղորդված զոհի՝ քրեական արդարադատության համակարգի իրավունքները և հնարավորությունները հարկավոր է իրագործել այն երկրում, որտեղ նրան նույնականացրել են որպես զոհ, եթե նման գործելակերպն անվտանգ է և բխում է զոհի շահերից: Հակառակ դեպքում, եթե թրաֆիքինգի զոհը որոշում է վերադառնալ հայրենիք կամ երրորդ երկիր, ապա կարելի է նրա իրավական պաշտպանության տարբերակների մասին խոսել նրա վերադարձից հետո: Սա չի նշանակում, որ զոհը զրկվելու է իր օրենքով սահմանված իրավունքներից: Պարզապես գործընթացը փոքր-ինչ հետաձգվելու է: Եթե որևէ օպերատիվ տվյալ կամ ցուցմունք կարևոր նշանակություն ունի տարանցիկ կամ նպատակակետ երկրում, և զոհը ցանկանում է հայտնել այն, ապա տեղական ոստիկանությունը միշտ կարող է այն փոխանցել տվյալ երկրում իրենց գործընկերներին:

Ընդունող կազմակերպություններ ծագման երկրում

Եթե թրաֆիքինգի զոհին պետք է բնակեցնել տվյալ կազմակերպության կողմից ղեկավարվող կացարանում, ապա իրավական աջակցության տրամադրման ժամանակի որոշումը պայմանավորված է զոհի առողջական վիճակով, ընդ որում՝ առաջնահերթությունն ըստ անհրաժեշտության տրվում է ֆիզիկական, հոգեբանական և աջակցության այլ տեսակներին: Նախքան զոհի հետ նշված հարցերի քննարկումը խորհրդատուն պետք է խորհրդակցի ապաստարանի սոցիալական աշխատողի, հոգեբույժի կամ հոգեբանի հետ, քանի որ ծանր հոգեկան ցնցում վերապրած անհատների պարագայում հոգեբանը կարող է խորհուրդ տալ դեռևս չխոսել նման հարցերի և հնարավոր իրավական տարբերակների մասին լրացուցիչ

տրավմայի վտանգից խուսափելու համար: Նման դեպքերում իրավական խորհրդատվությունը կարելի է հետաձգել:

Եթե զոհը վերադառնում է տուն կամ որևէ այլ կացարան, ապա նրան աջակցություն տրամադրող կազմակերպությանը հարկավոր է խնդրել առաջին իսկ հնարավորության դեպքում նրան իրազեկել իր՝ օրենքով սահմանված իրավունքների և հնարավորությունների մասին:

6.5.4 ԻՐԱՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի զոհին մատուցվող ծառայության վերաբերյալ որոշում կայացնելիս շատ օգտակար է հաշվի առնել հետևյալ գործոնները՝ կապված գաղտնի տեղեկությունների տրամադրման, ցուցմունք տալու տարբերակի և վնասի հատուցման հետ.

- Արդյո՞ք ընդունող երկրում գործում է թրաֆիքինգի հակազդման որևէ մասնագիտական հաստատություն:
- Եթե չի գործում, ապա ինչպիսի՞ այլընտրանքային կազմակերպություններ կան:
- Երկու դեպքում էլ պարզել, արդյո՞ք տվյալ կազմակերպությունն արդեն կապ է հաստատել ոստիկանության հետ, և եթե հաստատել է, ապա ինչպիսի գործողություններ է այն ձեռնարկել:
- Ինչպիսի՞ն է տվյալ հաստատության աշխատակիցների արհեստավարժության աստիճանը:
- Հաշվի առնելով կուտակված փորձը՝ արդյո՞ք կարելի է վստահել ոստիկանությանը:
- Ինչպիսի՞ն է կոռուպցիայի ռիսկի աստիճանը:
- Արդյո՞ք ոստիկանության բաժինը ցուցաբերում է մասնագիտական մոտեցում օպերատիվ տվյալների նկատմամբ, որի միջոցով պետք է պահպանվի զոհի ինքնության գաղտնիությունը, եթե նա որոշի հայտնել նման տեղեկություններ:
- Արդյո՞ք ընդունող երկրում գործում է իրավապահ մարմինների հետ համագործակցող և վկայություն տվող զոհի ֆիզիկական և դատական պաշտպանության համապատասխան ծրագիր:
- Արդյո՞ք թրաֆիքինգի զոհն ունի բավականաչափ դիմադրողականություն հոգեկան ընկճվածությունը հաղթահարելու համար և տվյալ գործով վկայություն տալու համար:

- Արդյո՞ք տվյալ երկրի քրեական արդարադատության համակարգով նախատեսված են փոխհատուցման ընթացակարգեր, և եթե այո, ապա ինչպե՞ս կարող է զոհն օգտվել դրանցից. արդյո՞ք նա ստիպված կլինի նախևառաջ վկայություն տալ քրեական դատաքննության ընթացքում, թե՞ կարող է վնասի փոխհատուցում պահանջել պարզապես քաղաքացիական հայցի հիման վրա:

Հոգեբանի համաձայնությամբ իրավական խորհրդատուն պետք է զոհին հայտնի իրավական պաշտպանության հասանելի տարբերակները: Թրաֆիքինգի զոհին հարկավոր է տալ հետևյալ խորհուրդները.

- նախքան որոշում կայացնելը ուշադիր լսել բոլոր չորս տարբերակի բացատրությունը,
- կարիք չկա անհապաղ որոշումներ կայացնել,
- զոհը կարող է իր հետագա գործողությունների մասին մտածել այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է,
- հավաստիացնել թրաֆիքինգի զոհին, որ նա կարող է ամեն պահի հարցնել որևէ լրացուցիչ խորհուրդ կամ ճշտել որևէ հարց,
- հայտնել իր կայացրած որոշումը ցանկացած պահի փոխելու հնարավորության մասին:

Թեև իրավախորհրդատուն կոչված չէ համոզել զոհին համագործակցել իրավապահ մարմինների հետ, սակայն նա պետք է ապահովի, որ զոհը քաջատեղյակ լինի իր ընտրության հնարավոր հետևանքներին: Կարող է կարիք առաջանալ հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի վրա:

- Իրավապահ մարմինների հետ համագործակցությունը ցուցմունք տալու կամ որևէ այլ տեղեկություն հաղորդելու միջոցով կարող է առաջացնել տարբեր աստիճանի ռիսկեր, որոնք չի կարելի անտեսել:
- Թեև թրաֆիքինգի զոհերը համագործակցելու պարտավորություն չեն կրում, սակայն եթե զոհերից շատերը չհամաձայնվեն համագործակցել իրավապահ մարմինների հետ օպերատիվ տվյալներ հայտնելու կամ թրաֆիքինգ իրականացնող անձանց դեմ ցուցմունք տալու միջոցով, ապա չափազանց բարդ կլինի հակազդել թրաֆիքինգին և կանխարգելել այլոց դեմ նմանատիպ հանցագործությունների կրկնությունը:

- Ինչ վերաբերում է «որպես վկա հանդես գալու» տարբերակին, ապա թեև նրանք կարող են այդ որոշման շուրջ խորհել այնքան ժամանակ, որքան պահանջվի, սակայն պետք է իրազեկված լինեն, որ որքան երկար ժամանակում որոշում կայացնեն, այնքան ավելի շատ դժվարությունների կբախվի ոստիկանությունը՝ թրաֆիքինգ իրականացնող անձանց տեղը հայտնաբերելու և համապատասխան ապացույցներ ստանալու համար, քանի որ վերջիններս թրաֆիքինգի զոհի փախուստից անմիջապես հետո սկսում են ձեռնարկել նախազգուշական միջոցներ:
- Եվ վերջապես, զոհին հարկավոր է լիարժեք իրազեկել իրավական պաշտպանության հասանելի հնարավորությունների վերաբերյալ, որոնք ներկայացված են վերոնշյալ 6.5.2 բաժնում:

Խորհրդատուն պետք է ներկայացնի թրաֆիքինգի զոհին հասանելի իրավական պաշտպանության բոլոր տարբերակները և ընդգծի, որ իրեն ոչ ոք չի կարող հարկադրել ցուցմունք տալ, և որ ինքը պետք է ինքնուրույն որոշումներ կայացնի, ինչպես նաև հիշեցնի զոհին, որ ինքը կարող է ամեն պահի փոխել իր որոշումը:

6.5.5 ԶՈՀԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ՝ ՎԿԱՆԵՐ

Օպերատիվ աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ սովորաբար նախքան որպես վկա հանդես գալու որոշում կայացնելը զոհերը կենտրոնանում են երեք առանձին հարցերի վրա: Այս հարցերը կարելի է ամփոփ ներկայացնել որպես վկաների ֆիզիկական և դատական պաշտպանությանը վերաբերող խնդիրներ, որոնք համառոտ բերված են ստորև.

- Զոհի, նրա ընտանիքի անդամների և մտերիմների անձնական անվտանգություն
- Գաղտնիություն և այն ռիսկը, որ իրականությունը հայտնի կդառնա զոհի ընտանիքի անդամներին և նրա մտերիմներին: Խարանավորման հետ կապված այս մտավախությունը սեռական շահագործման դեպքերում միշտ մեծ ազդեցություն է գործում զոհի կայացրած որոշումների վրա:
- Վախ մարդավաճառ(ներ)ի ֆիզիկական ներկայությունից: Զոհերի համար դա իրական և երբեմն ինքնատիրապետումը քայքայող վախ է, մասնավորապես այն անձանց համար, ովքեր ենթարկվել են սեռական չարաշահումների:

Հենց այս նկատառումներից ելնելով՝ զոհը պետք է տեղեկացվի այս մտահոգիչ հարցերին անդրադառնալու համար պատշաճ ընթացակարգերի առկայության կամ բացակայության մասին՝ կախված տվյալ երկրի պայմաններից: Հարկ է նշել հետևյալ հիմնական կետերը.

Վկաների ֆիզիկական պաշտպանություն

Բոլոր այն դեպքերում, երբ զոհը հանդես է գալիս որպես վկա՝ ցուցմունք տալով մարդավաճառների դեմ, միշտ գոյություն ունի մնացորդային ռիսկի գործոն, որը չի կարելի լիովին բացառել: Բազում երկրներում գոյություն ունեն վկաների պաշտպանության վերաբերյալ օրենքով սահմանված դրույթներ, սակայն դրանք իրագործելու համար անհրաժեշտ ռեսուրսները կարող են բացակայել, այլ երկրներում էլ թեպետև կան օրենքով սահմանված նման դրույթներ, և առկա են դրանց իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսներ, սակայն դրանք անհասանելի են թրաֆիքինգի զոհերի համար, քանի որ վերջիններս չեն բավարարում նման ծրագրերում ընդգրկվելու համար անհրաժեշտ պայմանները: Ուստի, կարևոր է տվյալ անձին ներկայացնել առավել ճշգրիտ և իրատեսական տեղեկություններ նրան, նրա ընտանիքի անդամներին և մտերիմներին ֆիզիկական վնասից պաշտպանելու պատշաճ միջոցների առկայության վերաբերյալ:

Հետևյալ պաշտպանիչ միջոցները կարող են վերաբերել զոհերին և նրանց ընտանիքի անդամներին.

- Բնակության վայրի փոփոխություն,
- Նոր բնակարան,
- Ինքնության փոփոխություն,
- Ֆիզիկական պաշտպանություն

Վկաների դատական պաշտպանություն

Քրեական արդարադատության համակարգերի մեծ մասը նախատեսում է գաղտնիության պահմանման և իրավական պաշտպանության տարբեր դրույթներ հետաքննության հետ համագործակցող և որպես վկա հանդես եկող զոհերի համար: Այդ դրույթները բավականին բարդ են և տարբերվում են կախված տվյալ երկրից, սակայն հաջորդիվ ներկայացված հարցերը մեծ նշանակություն ունեն զոհի համար.

- Գաղտնիության պահպանման երաշխիքով քրեական գործ հարուցելու օրենքով նախատեսված հնարավորություն, օրինակ՝ անանուն կամ կեղծանունով վկայություն տալու կամ զոհի ինքնությունը մարդավաճառին կամ նրա փաստաբաններին չհայտնելու մասին օրենքով սահմանված դրույթներ,
- Կեղծանվան տակ զոհից ցուցմունք վերցնելու կամ նրա ինքնությունը մարդավաճառին և նրա իրավաբաններին չհայտնելու օրենքով նախատեսված հնարավորություն: (Խիստ կարևոր է ընդգծել, որ նույնիսկ կեղծանվան տակ կամ վկայության փաստաթղթերում չնշելով վկայի իրական անունը, ցուցմունքում ընդգրկված պարտադիր մանրամասնները գրեթե միանշանակ մարդավաճառին հնարավորություն կտան եզրակացնել, թե ով է հանդիսանում տվյալների աղբյուրը: Ուստի, հարկավոր է տեղեկացնել զոհին այս հանգամանքի մասին):
- Նախաքննության շրջանակներում մարդավաճառի հետ ուղղակի առերեսումից ազատվելու օրենքով նախատեսված հնարավորություն:
- Միակողմանի հայելու հետևից մարդավաճառին մատնացույց անելու օրենքով նախատեսված և գործնականում կիրառվող հնարավորություն:
- Լրատվամիջոցներում զոհի ինքնության լուսաբանումն արգելող օրենքով նախատեսված հնարավորություն:
- Կենդանի տեսագրման կամ ձայնագրման միջոցով, ապակու հետևից կամ մարդավաճառի (բայց ոչ նրա իրավաբանի) բացակայությամբ նախնական դատական լսումներին կամ դատավարությանը ցուցմունք տալու կամ նախաքննության շրջանակներում արդեն տրված ցուցմունքի հիման վրա դատավարությանը վկայություն տալու պարտականությունից ազատվելու հնարավորություն:
- Ընթացակարգային փուլերում զոհին սատարելու նպատակով անկախ խորհրդատուի ներկայությունը թույլատրելու կամ յուրաքանչյուր ընթացակարգային փուլում զոհին ուղեկցողներ տրամադրելու օրենքով նախատեսված և գործնականում կիրառվող հնարավորություն:
- Համաձայնություն ոստիկանության և դատախազության մարմինների հետ առ այն, որ զոհն օրենքով չի պարտադրվի

ցուցմունք տալ, եթե վերոնշյալ դատական պաշտպանության միջոցներից որևէ մեկը չիրականացվի քրեական ընթացակարգերի շրջանակներում, ասել է թե՝ եթե գործը վարող դատավորը հրահանգի բացահայտել վկաների ինքնությունը կամ կարգադրի զոհին վկայություն տալ մարդավաճառի ներկայությամբ, այլ ոչ թե տեսագրությամբ:

6.6 Համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագրեր

Ինչպես արդեն նշվել է վերևում՝ արդարադատության մարմինների հետ համագործակցելու ցանկություն ունեցող զոհերին մատուցվող աջակցությունը կարող է դյուրացվել, եթե ծառայություն մատուցող կազմակերպությունները լավ փոխհարաբերություններ ունենան իրավապահ մարմինների հետ: Դրանից բացի, ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են էլ ավելի նպաստել թրաֆիքինգի հակազդմանը՝ համագործակցելով իրավապահ մարմինների հետ, ինչը արդյունքում կբերի մարդավաճառների պատժին քրեական օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Իրավապահ մարմինների հետ ունեցած համագործակցության շնորհիվ ստացված արդյունքների աստիճանն ու բնույթը կախված է մի շարք գործոններից.

- այն հանգամանքը, թե արդյոք տվյալ երկիրը հանդիսանում է ծագման, տարանցիկ կամ նպատակակետ երկիր,
- թրաֆիքինգի զոհ դարձած անձանց թիվը,
- տեղի քրեական արդարադատության համակարգի համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
- թրաֆիքինգի հակազդման հարցերով զբաղվող իրավապահ մարմինների կարողություններն ու արհեստավարժ գործունեությունը,
- զոհերի ֆիզիկական և դատական պաշտպանության օրենսդրական հարթակը,
- համապատասխան պետական գերատեսչությունների կարիքներն ու ձգտումները,

- նման գործունեությունը սատարող դոնոր կազմակերպությունների պատրաստակամությունն ու ֆինանսական կարողությունները:

6.6.2 ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունը որոշում է որևէ համագործակցություն հաստատել, ապա խորհուրդ է տրվում փոխըմբռնման հուշագրում հստակ նշել գրավոր տեսքով յուրաքանչյուր կողմի հետ համաձայնեցված կետերը՝ հետագայում հնարավոր թյուրիմացություններից զերծ մնալու նպատակով: Իրավապահ մարմինների օպերատիվ աշխատակիցների վրա ճնշում է գործադրվում հետաքննության շրջանակներում արդյունքներ ստանալու համար, ուստի միշտ կա այն վտանգը, որ նրանք կարող են փորձել շրջանցել այն համագործակցային ընթացակարգերը, որոնք ըստ նրանց խոչընդոտում են հետաքննության ընթացքը, եթե դրանք հստակ չեն ամրագրվել:

Օրինակ, կարող է իրավիճակ ստեղծվել, երբ ծառայություն մատուցող կազմակերպությունը որոշի չբացահայտել խիստ նրբանկատ տեղեկություններ զոհի անվտանգությունն ապահովելու համար, մինչդեռ օպերատիվ աշխատակիցները փորձեն ճնշում գործադրել՝ իրենց հետաքննչական գործունեության համար լրացուցիչ տեղեկություններ ստանալու նպատակով: Նման իրավիճակները պակաս հավանական են, եթե բարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով հաստատված փոխըմբռնման հուշագրի դրույթներով ամրագրվում է ծառայություն մատուցող կազմակերպության՝ իր խնամքի ներքո գտնվող զոհերի անվտանգությունն ապահովելու պարտավորությունը: Բացի այդ, գրավոր համաձայնության սատարումը նախարարությունների և ոստիկանության բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ոչ միայն ապահովում է դրա դրույթների ավելի լավ կատարումը, այլև խթանում է իսկապես օպերատիվ համագործակցությունը:

Թեև իրավապահ մարմինների աշխատակիցների մեծամասնությունը ողջունում է ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ հաստատվող համագործակցությունը և գիտակցում է դրանից բխող առավելությունները, սակայն ոմանց մոտ կարելի է ակնկալել որոշակի կասկածներ և հնարավոր դժգոհություն, քանի որ վերջիններս չեն կարող հեշտությամբ համակերպվել այն իրողության հետ, որ միայն իրավապահ մարմինների գործունեությունը բավարար չէ այս խնդիրը լուծելու և թրաֆիքինգի զոհերին պատշաճ աջակցություն մատուցելու համար:

Այն դեպքերում, երբ նշված համագործակցության հիմքում ընկած է վերադաս մարմինների աջակցությունը, նման խմբերի ազդեցությունը կարելի է նվազագույնի հասցնել:

6.6.3 ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Խորհրդատվության գործընթացին հաջորդող առաջին իսկ հնարավորության դեպքում, հարկավոր է համապատասխան նախարարության և ծառայություն մատուցող կազմակերպության միջև կնքվելիք պաշտոնական հուշագրում հստակ սահմանել համագործակցության շրջանակների հիմնական սկզբունքներն ու գործնական մանրամասները: Հաշվի առնելով ոստիկանության հետ համագործակցության նրբանկատ բնույթը՝ անհրաժեշտ է լինելու պաշտոնական փաստաթղթում սահմանել կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածությունների հիմնական սկզբունքները և հստակ դրույթները՝ ի ապացույց ունեցած համագործակցությունների: Ծառայություն մատուցող կազմակերպությունների և իրավապահ մարմինների միջև փոխըմբռնման տիպային հուշագրում պետք է ամրագրվի համագործակցությունը հետևյալ հիմնական սկզբունքների վերաբերյալ.

- Հուշագրի նպատակն է ծառայություն մատուցող կազմակերպության և իրավապահ մարմնի միջև արդյունավետ համագործակցության միջոցով նպաստել մարդկանց թրաֆիքինգի կրճատմանն ու կանխարգելմանը:
- Այն, որ ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավորվում է պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ, պաշտպանել թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքները և ամեն ջանք գործադրել՝ ապահովելու իր յուրաքանչյուր թիրախային խմբի (միգրանտների, կանանց, երեխաների և այլն) արժանապատվությունն ու բարօրությունը:
- Երկու կողմերի համար պետք է մշտապես գերակա նկատառում համարվեն զոհերի և հնարավոր զոհերի անվտանգությունը, պաշտպանությունը և մարդու իրավունքները:
- Համագործակցության շուրջ ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնված են կիրառելի միջազգային մարդու իրավունքների չափանիշների և ուղեցույցների վրա, որոնք զետեղված են Մարդկանց

թրաֆիքինգի վերաբերյալ ՄԱԿ-ի Պալերմոյի արձանագրությունում, ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի մարդկանց թրաֆիքինգի և մարդու իրավունքների վերաբերյալ ուղեցույցում:

- Եթե խոսքը չի գնում մեկ այլ զոհի անվտանգության մասին, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունը պարտավոր չէ բացահայտել որևէ տեղեկատվություն առանց զոհի համաձայնության կամ այնպիսի հանգամանքներում, որոնք չեն բխում զոհի լավագույն շահերից:

Այս հինգ հիմնական սկզբունքները կարող են ներառվել իրավապահ մարմինների հետ կնքվող ցանկացած համագործակցության համաձայնագրում՝ անկախ համագործակցության ոլորտից: Այս սկզբունքները վերաբերում են նաև օպերատիվ տվյալների փոխանակմանը, ինչպես նաև տեխնիկական համագործակցության և կարողությունների ձևավորման մեխանիզմներին, ինչպիսիք են՝ սեմինարները, իրավապահ մարմինների աշխատակիցների վերապատրաստումը կամ համագործակցությունը զանգվածային լրատվամիջոցներին հաղորդվող տեղեկատվության և իրազեկման բարձրացման արշավների շուրջ:

6.6.4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համագործակցության հիմնարար սկզբունքների նախնական հայտարարագրումից հետո փոխըմբռնման հուշագրում պետք է մանրամասն սահմանվեն համապատասխան դերերը, պարտականությունները և համագործակցության իրականացման մեթոդները: Կարելի է փոխըմբռնման հուշագիրը հարմարեցնել այնպես, որ դրանում ներառվի հարցերի մի լայն շրջանակ: Գոյություն ունեն իրավապահ մարմինների հետ փոխըմբռնման հուշագրում ներառման ենթակա մի քանի բնորոշ համագործակցության ոլորտներ.

- Իրավապահ մարմինների և ծառայություն մատուցող կազմակերպության միջև համագործակցության ոլորտները, ինչպես նաև նրանց միջև կապի միջոցները:
- Աջակցություն տեխնիկական համագործակցության և կարողությունների ձևավորման գծով, օրինակ՝ մասնագետների վերապատրաստում կամ օժանդակ տեխնիկական միջոցների մատակարարում:

- Կանխարգելման կամ հետաքննության նկատառումներով օպերատիվ տվյալների փոխանակում:
- Աջակցություն որպես վկա հանդես եկող զոհերի փոխադրման հարցում:
- Ծառայություն մատուցող կազմակերպության խնամքի ներքո գտնվող զոհերին հանդիպելու հնարավորություն:

Առանձնապես կարևոր են օպերատիվ տվյալների տարածման և փոխանակման վերաբերյալ իրավապահ մարմինների հետ ունեցած համագործակցության համաձայնագրերը:

Մարդավաճառները խիստ վտանգավոր հանցագործներ են, և գաղտնի քրեական օպերատիվ տվյալների ցանկացած տարածում կամ փոխանակում, որն ըստ հարկի չի տնօրինվում համաձայնեցված ցանցի շրջանակներում, կարող է ծայրաստիճան կործանարար հետևանքներ ունենալ ինչպես մարդկային, այնպես էլ կազմակերպչական մակարդակով: Համապատասխան ռիսկային գործոնները մանրամասն քննարկվում են սույն գլխի 6.9.6 բաժնում:

Օպերատիվ տվյալների փոխանակման վերաբերյալ փոխըմբռնման հուշագրի համապատասխան դրույթներում պետք է հստակ ամրագրել հետևյալ կետերը:

- Օպերատիվ տվյալների աղբյուրների և բովանդակության խիստ գաղտնիություն, Միայն թույլատրված նյութերի տարածում, եթե տեղեկությունների մասնակի բացահայտումը չի պահանջվում զոհերին փրկության կամ հնարավոր զոհերին թրաֆիքինգի սպառնալիքից զերծ պահելու համար,
- Խիստ գաղտնիություն նման օպերատիվ տվյալների բացահայտման հարցում ծառայություն մատուցող կազմակերպության դերակատարման վերաբերյալ,
- Տեղեկությունների տարածում միայն նշված չափով,
- Դատավարության շրջանակներում տեղեկությունների աղբյուրների կամ դրանց առնչությամբ կազմակերպության դերակատարման վերաբերյալ ոչ մի բացահայտում առանց նախնական համաձայնության,
- Զոհերի՝ իրենց վերաբերող գործերով գրանցված առաջընթացի կամ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու իրավունք:

Կազմակերպությունները կարող են բախվել մի իրավիճակի, երբ որոշ երկրներում իրավապահ մարմինները չհամաձայնվեն ընդունել փոխըմբռնման հուշագրի դրույթները, եթե հնարավոր է խուսափել դրանցից: Ոստիկանության որոշ մարմիններ դժկամություն կդրսևորեն, քանի որ կդիտարկեն նման նախաձեռնությունները որպես իրենց լիազորությունների թուլացում: Այդուհանդերձ, գոյություն ունեն համաձայնության այս բանաձևի վրա պնդելու լուրջ հիմքեր, քանի որ կազմակերպության և իրավապահ մարմինների միջև նրբանկատ օպերատիվ տվյալների տարածումն ու փոխանակումը ենթադրում են իրական վտանգներ, իսկ փոխըմբռնման հուշագրի դրույթները կոչված են հնարավորինս նվազեցնելու այդ վտանգը:

Այն դեպքերում, երբ իրավապահ մարմինները դիմադրություն են ցուցաբերում, հարկավոր է հիշեցնել նրանց, որ կազմակերպությունը որևէ պարտավորություն չի կրում այս տեսակի օպերատիվ տվյալներ տարածելու համար, այլ պատրաստ է դիմել այդ քայլին իր խնամքի ներքո գտնվող զոհերին իրենց համաձայնությամբ օգնելու համար՝ համագործակցության ոգով, ինչպես նաև ճանաչելով ոստիկանության նշանակությունը և այդպիսով ունենալով իր յուրովի ներդրումը:

Հարկ է նաև մատնանշել իրավապահ մարմիններին, որ կազմակերպության գերակա պարտավորությունն է ապահովել իր աջակցությունից օգտվող զոհերի և իր աշխատակազմի անդամների անվտանգությունն ու բարօրությունը, իսկ նման գրավոր փաստաթուղթը և դրանում զետեղված երաշխիքները կոչված են ապահովելու կազմակերպության ստանձնած պարտականությունների կատարումը: Իրավապահ մարմինների աշխատակիցները բոլորից առաջ պետք է գիտակցեն այս հանգամանքը: Նրանց մերժումը կարող է որոշիչ գործոն դառնալ ոստիկանության հետ համագործակցության համաձայնագիր չկնքելու համար:

6.6.5 ՌԻՍԿԵՐ

Հաճախ ոստիկանության օպերատիվ աշխատակիցներն արդեն համագործակցում են ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ ոչ պաշտոնական հիմքերով և աջակցում են թրաֆիքինգի զոհերին, և սովորաբար նման պայմանավորվածությունները բնորոշվում են երկու տարրերով. առաջին՝ դրանք ձևավորվել են զոհերին մարդասիրական օգնություն մատուցելու համար, և երկրորդ՝ դրանց գործելակերպն այնքան էլ չի համապատասխանում պաշտոնական ընթացակարգերին:

Օրինակ, դա պատահում է, երբ զգուշավոր և իրատես օպերատիվ աշխատակիցը թրաֆիքինգի զոհերին ուղղորդում է ծառայություն մատուցող կազմակերպություններ հայրենիք վերադառնալու հարցում աջակցություն ստանալու համար այն դեպքերում, երբ օրենքի խիստ մեկնաբանությունն ու կիրառումը պահանջում է հետապնդել զոհին դատական կարգով երկիր ապօրինաբար ներթափանցելու և այլ գործողությունների համար:

Ուստի, կա վտանգ, որ ոչ պաշտոնական համագործակցության շրջանակներում գոյություն ունեցող պայմանավորվածությունները փոխըմբռնման հուշագրի վերածելը հարվածի տակ կդնի ծառայություն մատուցող կազմակերպության և իրավապահ մարմինների աշխատակիցների միջև ունեցած և ի շահ զոհերի ծառայած ոչ պաշտոնական համագործակցության միջոցառումների իրականացվելիությունն ու արդյունավետությունը: Գոյություն չունեն այս տարաձայնությունները լուծելու հեշտ տարբերակներ:

Կազմակերպությունները պետք է ձգտեն հավասարակշռության բերել մի կողմից իրավապահ մարմինների հետ իրենց համագործակցությունը պաշտոնական հիմքերի վրա դնելու միջոցով իրենց պաշտպանելու անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից զոհերին աջակցելու ոչ պաշտոնական հնարավորությունների շնորհիվ ունեցած առավելությունների կորուստը:

6.7 Կապ թրաֆիքինգի հակազդմամբ զբաղվող մարմինների հետ

Իրավապահ մարմինների հետ ծառայություն մատուցող կազմակերպությունների համագործակցելու անհրաժեշտությունը սովորաբար ի հայտ է գալիս հետևյալ գործունեության ոլորտներից մեկի առնչությամբ.

- Տեխնիկական համագործակցություն կամ կարողությունների ձևավորում, օրինակ՝ սեմինարներ, մասնագետների վերապատրաստում և օրենսդրական դաշտի ուսումնասիրություններ:
- Զոհերի փրկության միջոցառումների, զոհերի հետ անցկացվող հարցազրույցների կամ ուղղորդմանն առնչվող օպերատիվ տվյալների փոխանակում:

Նման ոլորտներում համագործակցությունն ապահով և

հետևողականորեն տնօրինելու համար անհրաժեշտ է գտնել և սահմանել կապի համաձայնեցված մեթոդ ծառայություն մատուցող կազմակերպության և իրավապահ մարմնի միջև:

Կապի միջոցների վերաբերյալ գործնականում ունեցած պայմանավորվածությունները պետք է ամրագրվեն փոխըմբռնման հուշագրում: Խորհուրդ է տրվում, որ իրավապահ մարմնի հետ կապը պահպանելու համար կազմակերպության կողմից նշանակվի կոնտակտային անձ: Այնուհետև փոխըմբռնման հուշագրում պետք է պարզ ամրագրվի այն հանգամանքը, որ իրավապահ մարմինների աշխատակիցները պետք է ծառայություն մատուցող կազմակերպության հետ կապը պահպանեն միայն նշված կոնտակտային անձի կամ ներկայացուցչի միջոցով:

Նման կոնտակտային անձ ունենալը, որին կարող են դիմել իրավապահ մարմինների աշխատակիցները, թույլ կտա կազմակերպությանը հետևողական մոտեցում դրսևորել և սահմանափակել հնարավոր թյուրիմացությունների շրջանակը, որոնք կարող են ի հայտ գալ, երբ աշխատակազմի տարբեր անդամներ տալիս են իրարամերժ կամ ոչ ճշգրիտ խորհրդատվություն կամ պարտավորություն են վերցնում կազմակերպության անունից սխալ գործողությունների վերաբերյալ: Փորձ չանելով խոչընդոտել կազմակերպության անձնակազմի և տեղի իրավապահ մարմինների աշխատակիցների միջև աշխատանքային հարաբերությունները՝ խորհուրդ է տրվում անհրաժեշտ շարունակականությունն ու հետևողականությունն ապահովելու համար օպերատիվ և տեխնիկական համագործակցության բոլոր կապերը համակարգել նշված կոնտակտային անձի միջոցով:

Նշանակված կոնտակտային անձինք ինչպես ծառայություն մատուցող կազմակերպության, այնպես էլ իրավապահ մարմնի կողմից պետք է գործեն շուրջօրյա: Թրաֆիքինգի դեմ պայքարն ընթանում է շուրջօրյա, և փորձը ցույց է տալիս, որ համագործակցության հրատապ հարցերը, մասնավորապես զոհերի փրկության կամ աջակցության առնչությամբ, կարող են ի հայտ գալ ցերեկային և գիշերային տարբեր ժամերին: Ուստի, ծառայություն մատուցող կազմակերպության և իրավապահ մարմինների կապի ապահովման մեխանիզմն առավել արդյունավետ կգործի, եթե ունենա շուրջօրյա աշխատանքի հնարավորություն:

Ինչպես ծառայություն մատուցող կազմակերպությունը, այնպես էլ իրավապահ մարմինները պետք է նշանակեն մի աշխատակից, ում հնարավոր կլինի դիմել գիշերային կամ ցերեկային ցանկացած ժամի, և ով կունենա այդ նպատակով հատկացված հատուկ բջջային հեռախոսահամար:

6.8 Տեխնիկական համագործակցություն և կարողությունների ձևավորում

Համագործակցությունն իրավապահ մարմինների հետ տեխնիկական համագործակցության և (կամ) ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման շրջանակներում սովորաբար չի ենթադրում բարդության կամ նրբանկատության նույն աստիճանը, ինչ օպերատիվ տվյալների փոխանակման կամ զոհերի աջակցության պարագայում:

Այդուհանդերձ, համագործակցությունն այն իրավապահ մարմինների հետ, որոնց թրաֆիքինգի հակազդման ուղղությամբ ձեռնարկվող գործողությունները չեն համապատասխանում այս ոլորտում սահմանված միջազգային չափանիշներին, կարող է կապված լինել որոշ ռիսկերի հետ: Մասնակցությունը տեխնիկական համագործակցության կամ կարողությունների ձևավորման ուսումնական ծրագրերին այն իրավապահ մարմինների հետ համատեղ, որոնք զոհերի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի կամ պաշտպանության միջազգային չափանիշներին հետևելու քիչ կամ առհասարակ որևէ փորձեր չեն ձեռնարկում, կարող է կազմակերպությունը դարձնել քննադատության առարկա:

Մյուս կողմից՝ սահմանափակ և պարբերաբար վերահսկվող համագործակցությունն ընդունված չափանիշներին չհետևող իրավապահ մարմինների հետ, կարող է կազմակերպությանը հնարավորություն տալ որոշակի ազդեցություն գործել՝ դրդելով նրանց վերանայել և բարելավել համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Նման հանգամանքներում սահմանափակ համագործակցությունը կարող է հիմնված և արդարացված լինել որպես զոհերի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի բարելավումն ապահովելու հնարավորություն՝ սահմանված հիմնարար սկզբունքների պահանջներին համապատասխան:

6.9 Տեղեկատվության կառավարում և տարածում

Այս բաժնի նպատակն է ուսումնասիրել այն հարցը, թե ինչպես է ծառայություն մատուցող կազմակերպությունը տնօրինում զոհերից, նրանց ընտանիքի անդամներից և մտերիմներից ստացված տեղեկությունները, ինչպես նաև այն հարցը, թե արդյոք կազմակերպությունը պետք է տարածի այս տեղեկատվությունը՝ փոխանցելով այն իրավապահ մարմիններին:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ծառայություն մատուցող կազմակերպությունների դերակատարումը թրաֆիքինգին վերաբերող տեղեկությունների գրանցման, կառավարման և տարածման, ինչպես նաև առհասարակ իրավապահ մարմինների հետ համագործակցելու առումով, մտահոգիչ և վիճահարույց ոլորտ է համարվում թրաֆիքինգի հակազդմամբ զբաղվող մասնագետների շրջանում:

Հասկանալի է, որ որոշ ուժեր անհանգստացած են այն հնարավորության կապակցությամբ, որ ծառայություն մատուցող կազմակերպությունները կարող են ոստիկանության գործակալները դառնալ, ինչի արդյունքում կտուժի կազմակերպության անկողմնակալությունը: Ավելին, կա հասկանալի մտահոգություն առ այն, որ նման հարցերում աշխատակազմի անդամներից կպահանջվեն լրացուցիչ պարտականություններ և հմտություններ:

Հաջորդիվ ներկայացված են որոշ հարցեր, որոնք կազմակերպությունները պետք է հաշվի առնեն թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ տվյալներն իրավապահ մարմիններին փոխանցելու առնչությամբ սեփական դիրքորոշումները և քաղաքականությունները մշակելիս:

- Թրաֆիքինգի իրական և հնարավոր զոհերի պաշտպանությունը, անվտանգությունը և մարդու իրավունքների ապահովումը պետք է մշտապես պահպանվի որպես ղեկավար սկզբունք:
- Համագործակցությունն իրավապահ մարմինների հետ կարող է օգնել կազմակերպությանը հասնել թրաֆիքինգի զոհ դարձած անձանց իրավունքների պաշտպանության, մարդկանց թրաֆիքինգի նվազեցման և վերջին հաշվով վերացման նպատակներին:
- Մարդու հիմնարար իրավունքների շրջանակներում զոհերն իրավասու են օգտվել դատական պաշտպանության և կրած

վնասի փոխհատուցման իրավունքից: Այն դեպքերում, երբ զոհերն իրենց ունեցած մտավախությունների պատճառով կամ այլ նկատառումներով ի վիճակի չեն օգտվել իրենց չարաշահումների և շահագործման ենթարկված անձանց դեմ որպես վկա հանդես գալու իրավունքից, նրանց կարելի է տալ մարդավաճառների, այլ զոհերի և թրաֆիքինգի գործելակերպի վերաբերյալ ոստիկանությանն օպերատիվ տվյալներ տրամադրելու հնարավորություն: Փորձը ցույց է տվել, որ զոհերը կարող են օգտվել ոստիկանությանն օպերատիվ տվյալներ փոխանցելու այս տարբերակից որպես իրենց թրաֆիքինգի ենթարկած անձանց դեմ արդարադատության հասնելու միջոց՝ չենթարկվելով որպես վկա հանդես գալու հետ կապված վտանգներին: Որպես քրեական արդարադատության համակարգի ներքո թրաֆիքինգի ենթարկված բոլոր զոհերին հասանելի տարբերակ՝ կազմակերպությունները պետք է փորձեն իրավախորհրդատվություն տրամադրել այս հարցի շուրջ որպես ընդհանուր աջակցության փաթեթի մաս՝ թրաֆիքինգից տուժած անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով:

- Աշխատակազմի անդամները չպետք է ձգտեն զոհերի հետ համագործակցություն ձևավորել ստացված տեղեկատվությունը ոստիկանությանը հետագայում հայտնելու նկատառումով:
- Փոխարենը՝ հարկավոր է մշակել մի քաղաքականություն այն դեպքերի համար, երբ զոհը, կազմակերպության կողմից ստանալով խորհրդատվություն օրենքով սահմանված իր իրավունքների և տարբերակների վերաբերյալ, որոշում է կայացնում իրացնել օպերատիվ տվյալներ տրամադրելու իրեն ընձեռած հնարավորությունը:

6.9.1 ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ՝ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ոչ մասնագիտական լեզվով «թրաֆիքինգի հակազդման վերաբերյալ օպերատիվ տվյալներ» արտահայտությունը պարզապես վերաբերում է այն տեղեկություններին, որոնք առնչվում են թրաֆիքինգի հանցատեսակին:

Իրավապահ մարմինների տեսակետից՝ թրաֆիքինգի հակազդման օպերատիվ տվյալներն իրենցից ներկայացնում են մարդավաճառների,

թրաֆիքինգի ենթարկված զոհերի, երթուղիների և հանցավոր գործելակերպի վերաբերյալ զանազան աղբյուրներից ստացված և տարբեր տեսակի տեղեկությունների խորը վերլուծության արդյունքներ:

Ծառայություն մատուցող կազմակերպությունները թրաֆիքինգի վերաբերյալ օպերատիվ տվյալներ ստանում են մի շարք աղբյուրներից.

- Բաց աղբյուրներ՝ լրատվամիջոցներ, կապեր լրագրողների հետ, ակադեմիական հետազոտություններ ի թիվս այլոց,
- Նույն կազմակերպության այլ գրասենյակներ,
- Իրավապահ մարմիններ՝ ոստիկանություն, ներգաղթային մարմիններ, սահմանապահ զորքեր,
- Միջկառավարական և հասարակական գործընկերներ,
- Թրաֆիքինգի զոհեր, ընտանիքի անդամներ և նրանց մտերիմ այլ անձինք, ընկերներ և այլն:

6.9.2 ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Օպերատիվ տվյալները կարելի է պայմանականորեն բաժանել երկու կարգի.

- **Թեմատիկ օպերատիվ տվյալներ**, այն է՝ օպերատիվ տվյալների այնպիսի տեսակ, որի օգնությամբ չի կարելի նույնականացնել որևէ առանձին անհատի կամ փաստացի իրադարձությունը, օրինակ՝ ներկայիս թրաֆիքինգի միտումները, քաղաքական, սոցիալտնտեսական և մշակութային առանձնահատկությունները, որոնք կարող են նպաստել զոհերի հոսքին, պահանջարկի մակարդակին կամ այլ թեմատիկ գործոններին, որոնք կարող են իրենց հերթին անդրադառնալ հանցավորության և հանցավոր գործելակերպի վրա:
- **Հատուկ օպերատիվ տվյալներ**, այն է՝ այնպիսի օպերատիվ տվյալներ, որոնց օգնությամբ կարելի է նույնականացնել որևէ առանձին անհատի կամ փաստացի իրադարձություն, օրինակ՝ կոնկրետ հանցավոր գործողությունների մանրամասներ, ամսաթվեր, վայրեր, փաստաթղթեր կամ կոնկրետ անձնական տվյալներ, օրինակ՝ անուն, տարիք, ֆիզիկական նկարագիր, հասցե, որոնք թույլ կտան նույնականացնել թրաֆիքինգի զոհերին կամ մարդավաճառներին:

Թեմատիկ և հատուկ օպերատիվ տվյալները կարող են իրենց հերթին բաժանվել հետևյալ ենթատեսակների.

- **Հավաքագրման մեթոդներ**, այն է՝ խոցելի դիրքում գտնվող թիրախների նույնականացում, ուժի գործադրում, կեղծ հայտարարություններ կամ անձնական հավաքագրման ցանցեր, ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի ձեռքբերման մեթոդներ, մուտքի և ելքի արտոնագրեր:
- **Երթուղիներ**, այն է՝ ելքի կետեր, բացահայտ և թաքուն ճամփորդության մեթոդներ, փոխադրման միջոցներ, տարանցիկ փուլերի մատնանշում, կոնկրետ և սովորական սահմանի հատման կետեր, թրաֆիքինգին նպաստող կոռումպացված պաշտոնատար անձանց դերակատարումը:
- **Ընդունման մեթոդներ**, այն է՝ ժամանման կետեր, ընդունման մեթոդներ, փաստաթղթերի բռնագրավում և թաքստոցների գտնվելու վայրը:
- **Շահագործում և չարաշահումներ**, այն է՝ շահագործական նպատակների ձևը և վայրը, ստացված շահույթի չափը, շահագործման տնօրինման մեթոդը, հարկադրում և վերահսկման մեթոդներ, ինչպես նաև ֆիզիկական, սեռական և հոգեբանական չարաշահումներ:

Թրաֆիքինգի հակազդման վերաբերյալ օպերատիվ տվյալների հավաքագրումն ու փոխանակումը կարող է օգտագործվել մի շարք եղանակներով ինչպես ծառայություն մատուցող կազմակերպությունների, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից:

Դրանք են.

- Զոհերի նույնականացում և հայտնաբերում՝ մարդավաճառների ճիրաններից նրանց փրկելու նպատակով,
- Զոհերի ծանուցում և ուղղորդում՝ աջակցություն մատուցելու նպատակով,
- Մարդավաճառների նույնականացում և հայտնաբերում հետաքննությունը դյուրացնելու նպատակով,
- Ռազմավարության և աշխատանքային հնարքների մշակում,
- Ռեսուրսների հատկացում,
- Կանխարգելիչ գործողությունների, օրինակ՝ իրազեկվածության

բարձրացման արշավների ճշգրտություն, բովանդակություն և ուղղություն,

- Թրաֆիքինգի թեմային նվիրված հետազոտություններ և վերլուծություններ:

6.9.3 ԵՐԿԿՈՂՄ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Հարկավոր է միշտ հիշել, որ օպերատիվ տվյալների փոխանակումն իրավապահ մարմինների հետ չպետք է իրենից ներկայացնի միակողմ գործընթաց, փոխարենը՝ այն պետք է իրականացվի որպես փոխանակման գործընկերություն երկու այնպիսի կազմակերպությունների միջև, որոնք հետապնդում են թրաֆիքինգը նվազեցնելու և վերջին հաշվով կանխելու ընդհանուր նպատակ:

Ոստիկանության օրինակով՝ ծառայություն մատուցող կազմակերպությունները կարևոր դերակատարում ունեն թրաֆիքինգի կանխարգելման և թրաֆիքինգի զոհերի աջակցության գործում: Հենց այս պատճառով է, որ ոստիկանությունը գնալով ավելի լայն համագործակցության է ձգտում ծառայություն մատուցող կազմակերպությունների հետ և ստանում է նրանց աջակցությունը: Ուստի, թեև ծառայություն մատուցող կազմակերպությունները հաճախ հենց այն գործընկերներն են, որոնք ունեն բարձրակարգ օպերատիվ տվյալներ (քանի որ զոհերը սովորաբար խոսում են ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամների, այլ ոչ թե ոստիկանության աշխատակիցների հետ, ում նրանք դեռևս լիովին չեն վստահում), սակայն համագործակցության այս ձևը պետք է միշտ փոխանակման տեսքով ընթանա, իսկ ոստիկանությունը պետք է տրամադրի իր աղբյուրներից ստացված այնպիսի օպերատիվ տվյալներ, որոնք կարող են օգտակար լինել ծառայություն մատուցող կազմակերպությունների համար կանխարգելիչ արշավների ուղղվածության և բովանդակության, հետազոտությունների, վերլուծությունների և ռազմավարական արձագանքի համար:

Բացի այդ, խիստ կարևոր է, որ զոհերն իրազեկված լինեն այն զարգացումների մասին, որոնք բխում են իրենց տրամադրած տեղեկություններից: Զոհերը պետք է տեղեկացվեն իրենց գործով որևէ անձանց ձերբակալության կամ դատապարտման մասին և հատկապես պետք է տեղեկացվեն, երբ հարցաքննված կամ ձերբակալված անձինք հետագայում ազատ են արձակվում, որպեսզի համապատասխան քայլեր ձեռնարկվեն զոհին նման անձանցից պաշտպանելու համար:

6.9.4 ԱՅԼ ԶՈՀԵՐԻ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԶՈՀԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աջակցության մատուցման ընթացքում զոհը, նրա ընտանիքի անդամը կամ ընկերը կարող է տեղեկություններ ունենալ այլ զոհերի մասին, ովքեր դերևս գտնվում են մարդավաճառների վերահսկողության և շահագործման ներքո, կամ այլ հնարավոր զոհերի մասին, ում սպառնում է թրաֆիքինգի ենթարկվելու վտանգը: Այս հնարավորությունը լուրջ տարակուսանքի աղբյուր է հանդիսանում բազում ծառայություն մատուցող կազմակերպությունների համար, քանի որ շատ դեպքերում նշված տեղեկությունները բացահայտվում են հարցազրույցի շրջանակներում, որի հիմքում ընկած է հարցազրույց տվողի և հարցազրույց անցկացնողի միջև գաղտնիության պահպանման սկզբունքը: Այսպիսով, կազմակերպության առջև խնդիր է ծառանում, թե արդյոք խախտել գաղտնիությունը պահպանելու պարտավորությունը և բացահայտել թրաֆիքինգի այլ կամ հնարավոր զոհի մասին տեղեկություններ իրավապահ մարմիններին: Սա խիստ նրբանկատ հարց է բոլոր կողմերի համար, սակայն այն նաև նրբանկատ է տվյալ կազմակերպությունների համար, որոնց խորհուրդ է տրվում այս առնչությամբ ունենալ պարզ և միանշանակ քաղաքականություն:

Խորհուրդ է տրվում, որ կազմակերպությունը մշակի մի քաղաքականություն, որով մարդավաճառների հսկողության տակ դեռևս գտնվող զոհերի կամ թրաֆիքինգի այլ հնարավոր զոհերի վերաբերյալ տեղեկությունները մասնակիորեն բացահայտվեն իրավապահ մարմիններին՝ նրանց հնարավորություն տալով կամ փրկել զոհերին, կամ առհասարակ կանխել թրաֆիքինգի դեպքը: Անկախ այն հանգամանքից, որ բազում դեպքերում նման տեղեկությունները կազմակերպությանը հայտնի են դարձել գաղտնի հարցազրույցի շրջանակներում, միևնույն է քաղաքականության մեջ պետք է պարզ սահմանվի, որ տեղեկությունները պետք է հայտնվեն այնքանով, որքանով դա անհրաժեշտ է ոստիկանությանը համապատասխան քայլեր ձեռնարկելու համար: Որոշ իրավասությունների ոլորտներում գոյություն ունի նման տեղեկությունները բացահայտելու օրենքով սահմանված պարտավորություն:

Նման քաղաքականություններ մշակելիս կազմակերպությունները պետք է պատրաստ լինեն բացառություններ անել այն դեպքերում, երբ հիմք կա կարծելու, որ նման տեղեկատվության բացահայտումը կարող

է վնասել զոհին, նրա ընտանիքի անդամներին կամ ընկերներին, կամ էլ կազմակերպության աշխատակազմի անդամներին: Այն դեպքերում, երբ թրաֆիքինգի հակազդմամբ զբաղվող տեղի իրավապահ մարմինների արձագանքը համարվում է ոչ բավարար կամ ոչ արհեստավարժ, կազմակերպությունը կարող է որոշել, որ տեղեկությունների մասնակի բացահայտումը կարող է վտանգի ենթարկել զոհին կամ տեղեկատվության աղբյուրը: Նման հանգամանքներում կազմակերպությունները պետք է փնտրեն տեղեկությունների մասնակի բացահայտման ուղիներ:

Հարցազրույց տվող անձի նկատմամբ արդարացի լինելու համար հարկավոր է նախքան որևէ հարցազրույց սկսելը տեղեկացնել նրան՝ անկախ այն բանից, թե նա զոհ է, զոհի ընտանիքի անդամ, մտերիմ կամ ընկեր, որ այն դեպքերում, երբ հարցազրույց տվող անձը բացահայտում է տեղեկություններ դեռևս մարդավաճառների հսկողության տակ կամ թրաֆիքինգի սպառնալիքի ներքո գտնվող այլ թրաֆիքինգի զոհերի վերաբերյալ, ապա կազմակերպությունն իրեն իրավունք է վերապահում մասնակիորեն հայտնել այդ փաստերի մասին՝ ոստիկանությանը հնարավորություն տալով ձեռնարկել փրկարար միջոցառումներ կամ զերծ պահել հնարավոր զոհերին իրենց սպառնացող վտանգից:

Վտանգ կա, որ հարցազրույց տվող անձն անմիջապես կհրաժարվի բացահայտել որևէ նման տեղեկություններ, հենց որ իրազեկվի նշված հնարավորության մասին, սակայն նման գործելակերպն արդարացի կլինի երկու կողմերի համար: Կազմակերպությունը կարող է կարծել, որ չի կարող ընդունելի համարել մի իրավիճակ, երբ նման զոհերին վնասից զերծ պահելու համար անհրաժեշտ տեղեկությունները մնում են չբացահայտված, ուստի և հարցազրույց տվող անձին չպետք է որևէ հարցեր տրվեն՝ առանց հայտնելու նրան կազմակերպության քաղաքականությունը:

6.9.5 ԶՈՀԻ ԿՈՂՄԻՑ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻՈՐԵՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ԿԱՐԳ

Ինչպես արդեն նշվել է սույն ենթաբաժնի սկզբում, թրաֆիքինգի զոհերին ամբողջական խորհրդատվության և օրենքով սահմանված իրենց իրավունքների և քրեական արդարադատության համակարգով նախատեսված իրավական պաշտպանության տարբերակների հասանելիությունն ապահովելու համար՝ նրանց հարկավոր է

տրամադրել իրավական խորհրդատվություն, այդ թվում՝ նաև ոստիկանությանը օպերատիվ տվյալներ տրամադրելու տարբերակի վերաբերյալ: Այն դեպքերում, եթե զոհը ցանկություն է հայտնում հանդիպելու ոստիկանության քննիչների հետ՝ նրանց ընդհանուր օպերատիվ տեղեկություններ տրամադրելու համար, նրան աջակցող կազմակերպությունը պետք է կարողանա խորհուրդ տալ նրան, թե արդյոք դա ճիշտ քայլ է՝ հիմք ընդունելով ոստիկանության տվյալ բաժնի աշխատակազմի կարողությունների, արհեստավարժության և անվտանգության գնահատումը:

Նման գնահատման ընթացքում հարց է առաջանում, թե արդյոք ոստիկանության բաժինը կարող է պատշաճ կարգով պահպանել օպերատիվ տվյալները և երաշխավորել թրաֆիքինգի զոհի ինքնության գաղտնիությունը նման տեղեկությունների փոխանցման արդյունքում սկսած քրեական դատավարությանը նախորդող բոլոր փուլերում կամ դրա ընթացքում: Թրաֆիքինգի զոհին առաջնային խորհրդատվություն տրամադրելիս իրավախորհրդատուն պետք է նախապես պարզի վերոնշյալ հարցերի պատասխանները: (Իրավական խորհրդատվության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս վերոնշյալ 6.5.4 ենթաբաժինը):

Այն դեպքերում, երբ գնահատման արդյունքում պարզվում է, որ ոստիկանությունն ի վիճակի է գործել արհեստավարժ և գաղտնիություն պահպանել, հաջորդ քայլը միանշանակ պարզ է, ասել է թե՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է հանդիպում կազմակերպի ոստիկանության թրաֆիքինգի հակազդման կամ որևէ այլ համապատասխան բաժնի աշխատակցի հետ, որպեսզի թրաֆիքինգի զոհն իր հայեցողությամբ նրանց փոխանցի օպերատիվ տվյալներ: Նման հանդիպմանը ցանկալի է հրավիրել տվյալ կազմակերպությունում ճանաչված քննիչին, ընդ որում՝ հանդիպումը պետք է անցկացվի ապահով և չեզոք վայրում: Հանդիպումը չի կարելի անցկացնել ապաստարանում 1-ին գլխում բերված նկատառումներով:

Հարկավոր է նախապես հարցնել զոհին, թե արդյոք նա ցանկանում է, որ զրույցին ներկա լինի նաև իրավախորհրդատուն: Եթե զոհը նման ցանկություն չհայտնի, ապա կազմակերպությունը պետք է այլևս չմասնակցի գործընթացին: Եթե թրաֆիքինգի զոհը հայտնի իր համաձայնությունը, ապա ցանկալի է, որ խորհրդատուն ներկա գտնվի հանդիպմանը, սակայն ակտիվ չմասնակցի դրան, այլ պարզապես մնա դիտորդի կարգավիճակում՝ համոզվելու, որ զոհի նկատմամբ

դրսևորվում է նրա իրավունքների վրա հիմնված վերաբերմունք: Թրաֆիքինգի զոհի և քննիչի զրույցի բովանդակությունը պետք է խիստ գաղտնի մնա:

Իրավիճակն էլ ավելի է բարդանում այն երկրներում, որտեղ իրավապահ մարմինների աշխատակիցների ազնվության և թրաֆիքինգի հակազդման կարողությունների գնահատումը թույլ չի տալիս խորհուրդ տալ թրաֆիքինգի զոհերին համագործակցել նրանց հետ և օպերատիվ տեղեկություններ տրամադրել նրանց: Օրինակ՝ եթե հայտնի դառնա այն հանգամանքը, որ նախկինում ոստիկանության մեղքով զոհի ինքնությունը հայտնի է դարձել լրատվամիջոցներին, ապա պարզ է դառնում, որ զոհին հարկավոր է զգուշացնել նման դեպքերի և նման հանգամանքներում ոստիկանության աշխատակիցների հետ զրուցելու հետ կապված ռիսկերի վերաբերյալ:

Զոհին հարկավոր է խորհրդատվություն տրամադրել հնարավոր ռիսկերի հաղթահարման վերաբերյալ: Եթե զոհը, քաջատեղյակ լինելով նմանօրինակ բոլոր փաստերի մասին, չի մտափոխվում, ապա կազմակերպության աշխատակիցները չպետք է անգամ փորձեն խանգարել նրան, սակայն պետք է համոզվեն, որ զոհն իր տրամադրության տակ ունի բավարար տեղեկություններ ոստիկանության թրաֆիքինգի հակազդման բաժնի կամ որևէ այլ իրավասու բաժնի հետ կապ հաստատելու համար: Ինչպես վերոնշյալ դեպքում, այս դեպքում նույնպես թրաֆիքինգի զոհի համաձայնությամբ զրույցին կարող է մասնակցել իրավաբանական խորհրդատուն:

6.9.6 ՀԱՏՈՒԿ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Եթե իրավապահ մարմինները գիտակցեն տրամադրված տվյալների ողջ կարևորությունը և դրանք օգտագործեն առավել արդյունավետ միջոցով, ապա հարկավոր է ըստ հարկի գնահատել օպերատիվ տվյալների տարածման հետ կապված ռիսկի աստիճանը: Ամենայն հավանականությամբ, այդ վտանգը կարող է իրականություն դառնալ այն դեպքում, եթե թրաֆիքինգի զոհը կամ հարցազրույցի որևէ այլ մասնակից բացահայտի հետևյալ երեք կատեգորիաների փաստացի տվյալները.

- գաղտնի տեղեկատվություն նրբանկատ դեպքի վերաբերյալ,
- անձնական տվյալներ,

- բուն հանցագործությանը, այլ զոհերին կամ մարդավաճառներին առնչվող այնպիսի տեղեկություններ, որոնք կարող են հայտնի լինել միայն տվյալ զոհին կամ հարցազրույցի մյուս մասնակցին:

Ստորև բերված տեղեկությունները որոշակի ուղեցույց են հանդիսանում այն հարցերի շուրջ, թե ինչու և ինչպես է որոշակի օպերատիվ տվյալների տարածումը հանգեցնում ռիսկի աստիճանի բարձրացմանը:

Օպերատիվ տվյալներ զգայուն դեպքի վերաբերյալ

Թրաֆիքինգի բնույթին և գործառնական հատկանիշներին առնչվող օպերատիվ տվյալները հանգեցնում են որոշակի հատկանշական խնդիրների: Այն դեպքերում, երբ զոհը պատրաստ է մանրամասն պատմել իր հետ պատահածը, վտանգ է առաջանում, որ նա կարող է հայտնել նաև այն տեղեկությունները, որոնք կարող են մատնել իրավասու մարմինների հետ իր համագործակցության փաստը մարդավաճառին՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նրա անձնական տվյալները բացահայտվել են, թե ոչ: Օրինակ, եթե թրաֆիքինգի զոհը մանրամասն տեղեկություններ հայտնի կեղծված ճամփորդական փաստաթղթերի, երթուղային գրառումներ ամսաթվերի և ուղղությունների, ինչպես նաև շահագործման ժամանակի և վայրի վերաբերյալ, ապա մարդավաճառը կարող է բավականին արագ բացահայտել նման տեղեկատվությունը տրամադրած անձին: Թրաֆիքինգի զոհերից շատերը հավանաբար տեղյակ են նման ռիսկի մասին և օպերատիվ տվյալներ տրամադրելիս որոշ փաստեր կարող են համարել համեմատաբար ավելի զգայուն: Նման պարագայում նրանք կարող են թույլատրել անգամ հստակ նշել, թե որ տվյալները կարելի է հրապարակել, իսկ որ տվյալները՝ չի կարելի: Թրաֆիքինգի զոհերից ոմանք կարող է տեղյակ չլինեն իրենց գաղտնի տեղեկությունների տրամադրման հետ կապված ռիսկի մասին: Ուստի և, նրանց աջակցող կազմակերպության աշխատակիցները պետք է նրանց ուշադրությունը հրավիրեն այդ հարցերին՝ նրանց հետ միասին ռիսկի գնահատում կատարելու համար:

Անձնական տվյալներ

Խիստ անհավանական է, որ թրաֆիքինգի ենթարկված անձը խնդրի իր անձնական տվյալները տրամադրել իրավապահ մարմիններին, ուստի և ծառայություն մատուցող կազմակերպությանը խորհուրդ չի տրվում

խրախուսել նրան դիմել նման քայլի: Այդուհանդերձ, որոշ դեպքերում թրաֆիքինգի զոհերը կարող են ցանկություն հայտնել իրենց անձնական տվյալները ոստիկանություն փոխանցելու մասին՝ ապագայում իրավապահ մարմինների հետ համագործակցելու նկատառումով: Նման դեպքերում ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամները պետք է թրաֆիքինգի զոհին հայտնեն անձնական տվյալների բացահայտման հետ կապված հնարավոր ռիսկերը՝ համոզվելով, որ վերջինս ճիշտ է պատկերացնում իրավիճակը և գիտակցում է, որ անձնական տվյալների բացահայտումը մեծապես բարձրացնում է իրավապահ մարմինների հետ իր համագործակցության փաստի բացահայտման հավանականությունը հանգամանքների բերումով կամ կոռումպացված աշխատակիցների մեղքով:

Միայն թրաֆիքինգի զոհին կամ հարցազրույցի մեկ այլ մասնակցին հայտնի օպերատիվ տվյալներ

Երրորդ կատեգորիայի ռիսկերը կարող են ի հայտ գալ այն պարագայում, եթե օրինակ՝ թրաֆիքինգի զոհը կամ հարցազրույցի մեկ այլ մասնակից մանրամասն նկարագրում է մարդավաճառին, այդ թվում՝ նրա հատուկ նշանները, օրինակ՝ սպի, նշան կամ դաջվածք, կամ հայտնում է նրա հեռախոսահամարը կամ բանկային գործարքները, որոնք հայտնի են միայն տվյալ զոհին կամ հարցազրույցի մեկ այլ մասնակցին, ընդ ուրում՝ եթե մարդավաճառն ինքը տեղյակ է, որ նման մանրամասները հայտնի են միայն տվյալ զոհին կամ հարցազրույցի մյուս մասնակցին:

Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունը նման օպերատիվ տվյալները հայտնի ոստիկանության աշխատակիցներին, ովքեր դրա հիման վրա համապատասխան միջոցներ կձեռնարկեն մարդավաճառի դեմ, ապա վերջինս կարող է պարզ հասկանալ, թե ով է հայտնել նման տվյալները, և որ դրանց վրա հիմնված ոստիկանության միջոցառումները ձեռնարկվել են զոհի կամ հարցազրույցի այլ մասնակցի կողմից ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցներին և նրանց միջոցով ոստիկանությանը հայտնած տվյալների հիման վրա:

Գնահատման հետ կապված այլ նկատառումներ

Գաղտնի տեղեկությունների տարածման արդյունքում ի հայտ եկած ռիսկերի գնահատման ժամանակ հարկավոր է հաշվի առնել նաև հետևյալ հարցերը.

- Առկա օպերատիվ տվյալների հիման վրա հարկավոր է որոշել տվյալ զոհին թրաֆիքինգի ենթարկած անձանց վտանգավորության աստիճանը: Առկա օպերատիվ տվյալների հիման վրա նման գնահատում կատարելու համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ, որոնցից շատերը հավանաբար նշվել են թրաֆիքինգի զոհի կողմից, օրինակ՝
  - մարդավաճառների կողմից դրսևորվող բռնության աստիճանը,
  - մարդավաճառների թիվը և հանցավոր խմբի կազմակերպվածության աստիճանը,
  - նրանց մոտ զենքերի առկայությունը,
  - այլ անձանց նկատմամբ նախկինում գործադրված բռնության որևէ հիշատակում,
  - հարցազրույցի մասնակցին ուղղված սպառնալիքները փախչելու և իր ապրումներով կիսվելու պարագայում,
  - այլ տեղեկություններ, որոնք կարող են նպաստել ռիսկերի գնահատմանը:
- Այնուհետև կազմակերպության անդամները պետք է վերանայեն հարցազրույցի բովանդակությունը, քննարկեն բոլոր փաստացի տվյալները և տան հետևյալ հարցերը.
  - Հարցազրույցի մասնակցից և մարդավաճառից բացի՝ էլ ո՞վ կարող է իմանալ տվյալ փաստի մասին: Կազմակերպությունը երբեք չպետք է անտեսի այն հանգամանքը, որ ռիսկերի գնահատումը կարելի է կատարել միայն հասանելի օպերատիվ տվյալների հիման վրա, կամ որ նույնիսկ սակավաթիվ թրաֆիքինգի հանցավոր ցանցում ամենայն հավանականությամբ ընդգրկված են մեծ թվով մարդավաճառներ, զոհեր և միջնորդներ, օրինակ՝ վարորդներ, կոռումպացված պաշտոնյաներ, փաստաթղթեր կեղծողներ և այլն, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ ամենի արդյունքում շատ փաստեր հայտնի են դառնում ոչ միայն հարցազրույցի մասնակցին, այլև՝ կողմնակի անձանց:
  - Արդյո՞ք այս տվյալները կրում են առանձնապես նրբանկատ բնույթ: Հաճախ ակնհայտ է դառնում, որ որոշ տվյալներ կրում են ավելի նրբանկատ բնույթ, քան մյուսները: Նման տվյալների ակնհայտ օրինակ են ծառայում՝ կեղծ ճամփորդական փաստաթղթերում գրված անունները կամ անձնական կյանքի մանրամասները և այլ տեղեկություններ:

Հաշվի առնելով իրական վտանգի առկայությունը՝ ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է ամեն ջանք գործադրի օպերատիվ տվյալները թրաֆիքինգի զոհի հետ միասին գնահատելու համար նախքան դրանց փոխանցումը ոստիկանություն: Հարկ է նաև հիշել, որ նրբանկատ բնույթի գաղտնի տեղեկություններն իրավապահ մարմիններին բացահայտելուց հետո ոչ ծառայություն մատուցող կազմակերպությունը և ոչ էլ թրաֆիքինգի զոհն այլևս ի վիճակի չի լինի հսկելու իրավապահ մարմինների գործելաոճը կամ որևէ կերպ ազդելու դրա վրա: Վերջնական վերլուծության արդյունքում կարելի է հրաժարվել օպերատիվ տվյալները ոստիկանությանը հայտնելու մտքից այն դեպքերում, եթե նման տվյալների նրբանկատ բնույթը կամ մարդավաճառի (մարդավաճառների) կողմից ներկայացվող վտանգը կամ երկու նշված գործոնը, միասին վերցված, իրական վտանգ են ներկայացնում թրաֆիքինգի զոհի, հարցազրույցի մասնակցի, նրա ընտանիքի անդամների, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների և այլոց համար անգամ այն դեպքերում, երբ զոհը կամ հարցազրույցի մասնակիցը գրավոր համաձայնությամբ թույլատրել են նշված տվյալները փոխանցել իրավապահ մարմիններին:

Հարկ է նաև հիշել, որ ցանկալի է իրավապահ մարմինների ներկայացուցիչներից ստանալ գրավոր երաշխիքներ օպերատիվ տվյալները գաղտնի պահելու և դրանց աղբյուրը չբացահայտելու համար (փոխըմբռնման հուշագրում ընդգրկվող դրույթների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունները ներկայացված են վերոնշյալ 6.6 բաժնում):

6.9.7 ՓՈԽԱՆՑՎԱԾ ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Ցանկալի է իրավապահ մարմիններին չհայտնել զգայուն բնույթի տվյալներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս պայմանագրով պարտավորվել են նման օպերատիվ տվյալները պահպանել և օգտագործել խիստ գաղտնի պայմաններում և առանց դրանք հայտնած անձին և ծառայություն մատուցող կազմակերպությանը նախապես դիմելու և նրանց գրավոր համաձայնությունը ստանալու որևէ երրորդ անձի չբացահայտել դրանք տրամադրած անձի ինքնությունը կամ ծառայություն մատուցող կազմակերպության դերակատարումը այդ անձի հետ կապ հաստատելու հարցում:

Ոստիկանության կողմից նշված տեղեկությունների կիրառումը սահմանափակվում է ոչ թե գաղտնիության երաշխիքով, այլ՝ ոստիկանության և կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի դրույթներով: Նշված դրույթներով իրավապահ մարմինների աշխատակիցներին արգելվում է բացահայտել տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձի ինքնությունը կամ նրա հետ կապ հաստատելու հարցում տվյալ կազմակերպության ունեցած դերակատարումը:

Գաղտնիության պահպանման երաշխիքը պարտադրվում է երեք հիմնական նկատառումներով:

- Ինչպես թրաֆիքինգի զոհը, այնպես էլ նրանց մտերիմները պատրաստ չեն լինի օպերատիվ տվյալներ տրամադրել, եթե պաշտպանված չլինեին նման դրույթով:
- Տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձի և աշխատակիցների մասին հոգ տանելու պարտավորության շրջանակներում ծառայություն մատուցող կազմակերպությունը պետք է սահմանի նման երաշխիք:
- Եթե ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով ստացված օպերատիվ տվյալները ոստիկանության կողմից գործածվում են որպես քրեական դատավարություն սկսելու հիմք, ապա դատի ժամանակ կարող է խախտվել տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձի ինքնության և նրա հետ կապ հաստատելու հարցում կազմակերպության դերակատարման գաղտնիությունը:

Առաջին նկատառումը լրացուցիչ բացատրության կարիք չունի, բացի այն փաստից, որ ծառայություն մատուցող կազմակերպության միջոցով նույնականացված թրաֆիքինգի զոհի ոստիկանությանը տրամադրած տեղեկությունների հիման վրա մարդավաճառների նկատմամբ ձեռնարկվող միջոցների թվի աճի պայմաններում մեծանում է նաև տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձանց և (կամ) ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների դեմ պատժամիջոցների կիրառման վտանգը:

Ծառայություն մատուցող կազմակերպությանը սպառնացող ռիսկեր

Նույնը կարելի է ասել նաև երկրորդ կետի մասին: Սակայն ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի անդամների պարագայում հարկավոր է հաշվի առնել ևս մեկ նկատառում: Տեղեկությունների ստացման և տարածման գործում կազմակերպության աշխատակիցների ունեցած դերակատարման բացահայտումը հանդիսանում է նույնիսկ ավելի նրբանկատ հարց, քանի որ դրա արդյունքում աշխատակիցներին կարող են ստիպել ցուցմունք տալ մարդավաճառների դեմ քրեական դատաքննության ընթացքում, ինչն էլ իր հերթին կարող է մի շարք հարցերի տեղիք տալ տվյալ կազմակերպության և դրա աշխատակիցների իրավական կարգավիճակի, իսկ դիվանագիտական կազմակերպության պարագայում՝ նաև անձեռնմխելիության վերաբերյալ:

Նման իրավիճակ կարող է առաջանալ այնպիսի օպերատիվ տվյալների փոխանցման արդյունքում, որոնք թրաֆիքինգի զոհը հայտնում է ծառայություն մատուցող կազմակերպությանը, որն էլ իր հերթին զոհի համաձայնությամբ փոխանցում է ոստիկանությանը, և որոնք հիմք են ծառայում հանցագործներին ձերբակալելու և համապատասխան մեղադրանք ներկայացնելու համար: Հետագայում, ոստիկանության աշխատակիցները կարող են դիմել ծառայություն մատուցող կազմակերպությանը գործ հարուցելու համար տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձից սկզբնական վկայություն ստանալու համար, քանի որ նման հիմնավորված ապացույցը կարող է առանցքային դեր խաղալ քրեական դատաքննության մեջ: Նման պահանջը կարող է հարվածի տակ դնել կազմակերպության աշխատակազմի անդամների ֆիզիկական անվտանգությունը և խնդիրներ առաջացնել՝ կապված տվյալ իրավասությունների ներքո կազմակերպության անձեռնմխելիության հետ, ինչը պահանջում է մանրակրկիտ գնահատում և խորհրդատվություն: Նման իրավիճակներում որևէ քայլ ձեռնարկելուց առաջ կազմակերպությունները պետք է խորհրդակցեն իրենց իրավական ներկայացուցիչների հետ:

Դատավորության ընթացքում օպերատիվ տվյալների բացահայտման կազմակերպչական բնույթի ռիսկ

Դատավարության ընթացքում օպերատիվ տվյալների բացահայտման ռիսկին վերաբերող երրորդ նկատառումը բխում է պատասխանող կողմի փաստաբանների մոտ տարածվող մարտավարությունից, որի շրջանակներում նրանք դիմում են դատավորին օպերատիվ տվյալների մանրամասները և սկզբնաղբյուրը բացահայտելու համար: Այս հարցը շատ բարդ է, քանի որ այն ավելի մեծ վտանգ է ներկայացնում և կարող է գնալով ավելի հաճախ ի հայտ գալ, քանի որ օպերատիվ տվյալների հոսքը ոստիկանությանը թույլ է տալիս ավելի շատ անձանց մեղադրանք ներկայացնել:

Նման տվյալների բացահայտման պահանջը հաճախ արդարացվում է այն հայտարարությամբ, որ մեղադրյալը հանդիսանում է արդարադատության ընթացքը խոչընդոտող դավադրության զոհը, և նրա արդար դատական քննության իրավունքն ապահովելու համար անհրաժեշտ է օպերատիվ տվյալների աղբյուր հանդիսացող անձի բացահայտման միջոցով հաստատել կամ մերժել ենթադրյալ հանցագործության մեղադրանքը: Մարտավարությունների տեսակից անկախ՝ դրանք կարող են բավականին հաջողված լինել և դրդել դատավորին պահանջելու օպերատիվ տվյալների աղբյուր հանդիսացող անձի բացահայտումը: Ոստիկանությունն իր հերթին կկատարի դատավորի պահանջը դատավարության և հետաքննության ընթացքում տարված աշխատանքը չտապալելու համար: Արդյունքում, կարող է վտանգվել տվյալ կազմակերպության աշխատակիցների և օպերատիվ տվյալներ հայտնած անձի անվտանգությունը, և հրապարակայնորեն բացահայտվել թրաֆիքինգի զոհի անունը: Տվյալ երկրի օրենսդրությունից կախված՝ կազմակերպության աշխատակիցները և թրաֆիքինգի զոհը կարող են հարկադրվել վկայություն տալ կամ ենթարկվել իրավական պատժամիջոցների:

Ուստի, խիստ կարևոր է համոզվել, որ ոստիկանությունը և մեղադրանքը ներկայացնող կողմը գիտեն և գիտակցում են, որ իրենք լիազորված չեն առանց տվյալ կազմակերպության նախնական զգուշացման բացահայտելու տեղեկատվության աղբյուր հանդիսացող անձին կամ նրա հետ կապ հաստատելու

գործում կազմակերպության ունեցած դերակատարումը, և որ այդ պարտավորությունը նշված է փոխըմբռնման հուշագրում: Եթե ոստիկանությունն այդ հարցով դիմի տվյալ կազմակերպությանը, ապա վերջինս պետք է իր հերթին խորհրդակցի օպերատիվ տվյալների աղբյուր հանդիսացող անձի հետ, քանի որ նման տվյալների բացահայտումից վտանգ է սպառնում երկու կողմերին էլ: Այդուհանդերձ, հարկավոր է նշել, որ նույնիսկ եթե ոստիկանությունը պահպանի փոխըմբռնման հուշագրի դրույթները և նախապես տեղյակ պահի կազմակերպությանը, դատարանն ամեն դեպքում կարող է պահանջել բացահայտել օպերատիվ տվյալների աղբյուր հանդիսացող անձի ինքնությունը:

Կազմակերպության աշխատակիցները չեն ցանկանա ներկայանալ քրեական արդարադատության համակարգի աշխատանքը խոչընդոտողի դերում: Այդուհանդերձ, հարկավոր է որպես առաջնահերթություն դիտարկել հարցազրույցի մասնակցի, նրա ընտանիքի անդամների, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցների և այլ մարդկանց համար նման բացահայտումից բխող վտանգը: Եթե հայտնի է, որ տվյալ գործով մեղադրվող մարդավաճառներն ունեն պատժամիջոցներ գործադրելու կարողություն կամ հնարավորություն, ապա հարկավոր է առաջնություն տալ անվտանգությանը և մերժել տվյալների աղբյուր հանդիսացող անձին բացահայտելու դիմումը, նույնիսկ եթե դա բացասաբար անդրադառնա պետական մարմինների հետ տվյալ կազմակերպության հարաբերությունների վրա: Եթե մերժումը նախատեսված չէ իրավական պաշտպանության տարբերակների շարքում, ապա ծառայություն մատուցող կազմակերպությունները պետք է հաշվի առնեն դա նախքան համաձայնվեն տարածել շահառուների կամ այլ երկրորդական աղբյուրների տրամադրած օպերատիվ տվյալները:

6.9.8 ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հարկավոր է պարբերաբար կատարել օպերատիվ տվյալների փոխանակման հետ կապված պայմանավորվածությունների մոնիթորինգ և վերանայում: Խիստ կարևոր է ապահովել փոխըմբռնման հուշագրի դրույթների կատարումը, սակայն միաժամանակ հարկավոր է ուշադրություն դարձնել նաև այն փաստին, թե արդյոք թրաֆիքինգի զոհի հայտնած օպերատիվ

տվյալների փոխանակումն իրականում կատարում են երկու կողմերը, թե հիմնականում՝ միայն կազմակերպությունը:

Ավելին, հարկավոր է մոնիթորինգ անցկացնել՝ համոզվելու, որ կազմակերպությունը պատշաճ հետադարձ կապ է հաստատել տվյալների փոխանակման հետ կապված բոլոր զարգացումների վերաբերյալ: Ոստիկանությունը տխրահռչակ համբավ ունի հետադարձ կապ չպահպանելու առումով, ինչը բացասաբար է անդրադառնում օպերատիվ տվյալներ հայտնող անձանց վրա, ովքեր, ենթարկվելով անվտանգության և գաղտնիության պահպանման հետ կապված սահմանափակումների, նշված համագործակցության զարգացումների մասին տեղեկացված լինելու իրավունք ունեն:

Համաձայնագրի կատարման հետ կապված նշանակալի թերություններ հայտնաբերելու պարագայում կազմակերպությունը պետք է դիմի այն ստորագրած իրավապահ մարմինների ներկայացուցչին:

Հավելվածներ

Հավելված 1

Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքները[1]

Պարտավորություններ և հմտություններ

Ստորև ներկայացվում են թրաֆիքինգի զոհերին աջակցություն մատուցող անձանց մասնագիտական պարտավորությունները: Ստորև բերված սկզբունքների կատարումն ապահովելու համար նորավարտ կամ անփորձ աշխատակիցներից կարող է պահանջվել որոշակի ժամանակ և ջանք: Նշված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ հմտությունները ձևավորելու նպատակով անհրաժեշտ է դրսևորել հաղորդակցվելու, լսելու և խոցելի դիրքում գտնվող անձանց արձագանքելու պատրաստակամություն:

Անհատի դիմադրողականության աստիճանը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ միայն ստանձնել հիմնական պարտավորությունները, այլև դրանք կատարել հմտորեն և նրբանկատ եղանակով: Իրականում աջակցություն մատուցող անձանց հետ բոլոր առնչությունները կարելի է դիտարկել որպես վերականգնման գործընթացի մաս: Դրական մասնագիտական հանդիպումները կարող են օգնել անհատի մոտ ձևավորել վստահություն այլոց նկատմամբ, մեծացնել նրա ինքնավստահությունը և ներշնչել նրան հույսեր ապագայի վերաբերյալ: Մյուս կողմից՝ բացասական փորձը կարող է անհատների մոտ առաջացնել ամոթի, խարանավորման, անկարողության և հուսահատության զգացում: Սառը կամ անտարբեր հաղորդակցումը հավանաբար կհանգեցնի հակառակ արդյունքի ինչպես հարցազրույց անցկացնող անձի նպատակների, այնպես էլ թրաֆիքինգի զոհի բարեկեցության տեսանկյունից:

Ամեն դեպքում, նշված սկզբունքները պահպանելիս հարկավոր է հաշվի առնել ճնշող հանգամանքները, խոչընդոտները, բարդությունները և յուրաքանչյուր իրավիճակում հասանելի ռեսուրսները: Նման

[1] Հավելվածը վերցված է այստեղից՝ Zimmerman, C. and C. Watts (2003). WHO ethical and safety recommendations for interviewing trafficked women. London School of Hygiene & Tropical Medicine and World Health Organization

սկզբունքները պարունակում են թրաֆիքինգի ենթարկված անձանց նկատմամբ էթիկական վերաբերմունքի ձևավորման ուղեցույցներ, սակայն ընդհանուր առմամբ, բարոյական և էթիկական վերաբերմունք դրսևորելու համար նախևառաջ անհրաժեշտ է առաջնորդվել տվյալ հանգամանքներում յուրաքանչյուրի շահերով: Ստորև մանրամասն ներկայացված հիմնական սկզբունքներից են.

1. Վնաս մի՛ պատճառեք:
2. Ապահովեք անվտանգություն, ապահովություն և հարմարավետություն:
3. Ապահովեք մասնավոր կյանքի իրավունքը:
4. Ապահովեք գաղտնիությունը:
5. Ապահովեք տեղեկությունների տրամադրումը:
6. Ապահովեք իրազեկված համաձայնությունը:
7. Հարցերը տվեք նրբանկատ և խելամիտ կերպով:
8. Լսեք ուշադիր և արձագանքեք զրուցակցի ասածին:
9. Ուշադիր հետևեք այն նշաններին, որոնք վկայում են, որ զրուցակիցը պետք է դադար անի հարցազրույցի կամ ընթացակարգի ժամանակ:
10. Հաշվի առեք Ձեր նախապաշարմունքները և կանխակալ մոտեցումները:
11. Հավատացեք ասածին և զերծ մնացեք դատողություններից:
12. Պահպանեք արհեստավարժ մոտեցում՝ միաժամանակ մարդկանց վերաբերելով հարգանքով և կարեկցանքով:
13. Համոզվեք, որ թրաֆիքինգի ենթարկված անձը վերահսկում է իր շարժումները և հաղորդած մտքերը կամ ցանկությունները:
14. Հավաստիացրեք թրաֆիքինգի ենթարկված անձանց, որ նրանք չունեն որևէ մեղավորություն:
15. Հայտնեք թրաֆիքինգի ենթարկված անձանց դատաբժշկական զննում անցնելու և համապատասխան եզրակացություն ստանալու իրավունքի մասին:
16. Հայտնեք թրաֆիքինգի ենթարկված անձին բոլոր առողջապահական և բժշկական գրառումների պատճենները ստանալու իրավունքի մասին:
17. Հիշեցրեք թրաֆիքինգի ենթարկված անձին նրա ուժեղ կողմերի մասին:
18. Թարգմանչական ծառայությունների ապահովում:

Երեխաների (18 տարին չլրացած անձինք) պարագայում, ինչպես նաև այն անհատների պարագայում, ովքեր ունեն հատուկ աջակցության կարիք, օրինակ, մտավոր արատ ունեցող անձինք, ստորև բերված սկզբունքները պետք է դիտարկվեն այլ համապատասխան ընթացակարգերի (օրինակ՝ առանց ուղեկցության անչափահասների, նշանակված խնամակալի կամ օրինական ներկայացուցչի կարիք ունեցող անձանց համար նախատեսված ընթացակարգեր) հետ միասին:

Հարկ է հաշվի առնել, որ այն դեպքերում, երբ ստորև բերված տեքստում օգտագործվում է «թրաֆիքինգի ենթարկված անձ» արտահայտությունը, և կամ այն դեպքերում, երբ թրաֆիքինգի ենթարկված անձն անչափահաս է կամ օրինական խնամակալի կարիք ունեցող չափահաս, նշված արտահայտությունը պետք է ընթերցվի «թրաֆիքինգի ենթարկված անձ կամ նրա խնամակալ» իմաստով:

1. ՎՆԱՍ ՄԻ ՊԱՏՃԱՌԵՔ

Հաշվի առնելով թրաֆիքինգի հետ կապված ծայրահեղ ռիսկերը, զոհերի խոցելի վիճակը, ավելի մեծ տրավմայի ենթարկվելու հնարավորությունը՝ այս տարրական կանոնը չի կարելի թերագնահատել: Եթե կան որևէ հիմքեր կարծելու, որ հարցազրույցի կամ զննման անցկացումը կամ համապատասխան ընթացակարգը տվյալ անհատին վնաս կպատճառի, ապա նման գործողություն տվյալ պահին չպետք է ձեռնարկվի: Թրաֆիքինգի զոհերի հետ աշխատող բոլոր անձանց էթիկական պարտավորությունն է խորապես գնահատել առաջարկված գործողություններին դիմելու դեպքում վնասի ենթարկվելու հավանականությունը: Յուրաքանչյուր անհատի նկատմամբ կամ յուրաքանչյուր իրավիճակում վարվեք այնպես կարծես կա վնասի ենթարկվելու լուրջ վտանգ այնքան ժամանակ, մինչև չապացուցվի հակառակը:

2. ԱՊԱՀՈՎԵՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Նախքան թրաֆիքինգից տուժած անձի հետ խոսելը համոզվեք, որ նա իրեն զգում է անվտանգ և հարմարավետ: Որևէ էական երկխոսություն չի կարող տեղի ունենալ, եթե տվյալ անձն իրեն անհանգիստ է զգում:

Նույնիսկ եթե անհատի անվտանգությանն սպառնացող ռիսկերն ուսումնասիրվել են նախկինում այլ նպատակներով, միևնույն է աջակցություն մատուցող անձիք պարտավոր են պարզել այն հարցը, թե արդյոք տվյալ անձն իրեն ապահովության մեջ է զգում տվյալ պահին, և արդյոք կարելի է որևէ բան անել նրան ապահովության ավելի մեծ զգացում հաղորդելու համար:

Միաժամանակ պարտադիր պահանջ է թրաֆիքինգի զոհ դարձած անձանց հարց տալ, թե արդյոք նրանք ունեն բուժօգնության անմիջական կարիք (այլ ոչ թե պարզապես հարցնել «Ինչպե՞ս եք Ձեզ զգում»): Չի կարելի որևէ մեկի հետ հարցազրույց կամ այլ գործողություն անցկացնել, կամ էլ սպասեցնել նրան, քանի դեռ նա ցավ, անհանգստություն կամ անհապաղ բժշկական օգնության կարիք է զգում: Կենտրոնանալով ընթացիկ խնդիրների (օրինակ՝ տեղեկատվության հավաքագրում, աջակցության մատուցում) վրա՝ աջակցություն մատուցող անձինք կարող են ժամանակավորապես մոռանալ, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք կրել են ֆիզիկական և հոգեբանական տրավմա, որը կարող է բերել շարունակական առողջական խնդիրների: Նման ֆիզիկական և հոգեբանական ախտանիշերը կարող են հատկապես սրվել, երբ անձը գտնվում է նրա համար հոգեպես ճնշող իրավիճակում, օրինակ՝ հարցազրույցի ժամանակ կամ հայտնվելով որևէ ծառայություն մատուցող կազմակերպությունում: Աջակցություն մատուցող անձինք պետք է մասնավորապես տան հետևյալ հարցերը.

- Ինչպիսի՞ն է այժմ Ձեր ինքնազգացողությունը:
- Արդյո՞ք Դուք ներկա պահին որևէ ցավ կամ գանգատներ ունեք, կամ արդյո՞ք ունեք որևէ առողջական խնդիրներ, որոնց համար ցանկանում եք բժշկի կամ բուժքրոջ դիմել (բուժաշխատողի պարագայում՝ «...գանգատներ կամ առողջական խնդիրներ, որոնց մասին ցանկանում եք պատմել ինձ նախքան մեր զրույցի սկիզբը»):
- Արդյո՞ք Դուք հիմքեր ունեք կարծելու, որ Ձեր մասնակցությունն այս հարցազրույցին, ընթացակարգին կամ գործողությանը տվյալ պահին կարող է Ձեզ համար խնդիրներ առաջացնել կամ անհանգստացնել Ձեզ:

Պակաս հրատապ առողջական խնդիրները նույնպես կարևոր են:

Օրինակ, գլխացավերը խիստ տարածված երևույթ են թրաֆիքինգի զոհ դարձած անձանց շրջանում, և կարող է պահանջվել դիմել բժշկի անվտանգ ցավազրկող նշանակելու կամ այլ անհրաժեշտ դեղորայք

զոհին տալու համար, որպեսզի նա ի վիճակի լինի մասնակցելու տվյալ գործողությանն առանց ցավի:

Հրատապ և այլ առողջական խնդիրների մասին հարցեր տալուց հետո կարևոր է տվյալ անձի համար ստեղծել հնարավորինս հարմարավետ պայմաններ: Կարելի է նրան մի բաժակ ջուր կամ թեյ առաջարկել, հրավիրել օգտվել զուգարանից կամ հատկացնել նրան հարմար աթոռ կամ այլ նստելու տեղ: Նստելու տեղերը պատրաստելիս կարևոր է համոզվել, որ հարցազրույցը վարող անձը կանգնած չէ իր զրուցակցի գլխավերևում կամ նստած չէ սեղանի հետևում (ասել է թե՝ ղեկավար և օտարացած կեցվածքով), և աթոռների դասավորվածությունը նպաստում է մեկը մյուսին լսելուն (օրինակ՝ թրաֆիքինգի ենթարկված անձը ստիպված չլինի չափազանց բարձր ձայնով հայտնել իր անձնական տվյալները): Առողջության, բարօրության և հարմարավետության հետ կապված հարցերը կարող են անդրադառնալ այն բանի վրա, թե ինչպես է տվյալ անձը շփվում աջակցություն մատուցող անձանց հետ և արձագանքում նրանց գործողություններին:

Զգուշացում.

Կարող են լինել դեպքեր, երբ թրաֆիքինգի ենթարկված անձը հայտարարի, որ իրեն զգում է բավականին լավ հարցազրույց տալու կամ ծրագրի գործողություններին մասնակցելու համար, սակայն աջակցություն մատուցող անձը կարող է նկատել այնպիսի նշաններ, որոնք վկայում են տվյալ անհատի անբավարար վիճակի մասին (օրինակ՝ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, ծայրահեղ անհանգստություն, հյուծում և այլն): Նման դեպքերում աջակցություն մատուցող անձը պետք է անմիջապես խորհրդակցի բուժաշխատողի հետ, ով կկարողանա տվյալ անձի վիճակի առավել խորը զննում իրականացնել:

3. ԱՊԱՀՈՎԵՔ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ բոլոր հարցազրույցները և ընթացակարգերը պետք է անցկացնել անվտանգ և առանձին տարածքում՝ գաղտնիության պահպանման պայմաններում: Անգամ այն դեպքերում, երբ գրասենյակը փոքր է և գերբնակեցված, կամ երբ թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ հանդիպումներն անցկացվում

են այլ տարածքներում, անհրաժեշտ է ապահովել գաղտնիությունը: Եթե առանձին տարածք գտնելն անհնար է, ապա հարցազրույցը (միջոցառումը կամ ընթացակարգը) հարկավոր է հետաձգել այնքան ժամանակով, մինչև գտնվի հարմար վայր: Թրաֆիքինգի զոհերի հետ հանդիպումների վայրն ընտրելիս հարկավոր է բացառել մարդաշատ վայրերը կամ այնպիսի տեղերը, որտեղ կարող են մուտք գործել կողմնակի անձինք՝ պատահաբար ընդհատելով հարցազրույցի ընթացքը, անհարմար դրության մեջ դնելով հարցազրույցի մասնակցին և կտրելով նրա մտքի թելը: Նույնիսկ նախնական հիմնական տվյալները կամ առաջին հայացքից հասարակ թվացող տեղեկությունները չի կարելի հավաքել այնպիսի վայրերում, որտեղ կարող են ներկա լինել կողմնակի անձինք, օրինակ՝ ընդունարան, միջանցք կամ բազմամարդ գրասենյակ:

.....

Հարցազրույցի ընդհատումներից խուսափելու համար՝ դռան վրա կարելի է փակցնել «Չխանգարե՛լ» ցուցանակ (կամ այլ նմանատիպ գրառում), որով նշվում է, որ տվյալ սենյակում անցկացվում է հարցազրույց, բուժզննում կամ խորհրդատվական հանդիպում: Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ հանդիպելիս նույն նկատառումներով հարկավոր է անջատել բջջային հեռախոսները, քանի որ նման կարգի ընդհատումները կարող են թվալ անքաղաքավարի ու անտեղի և կարող են խանգարել նրբանկատ կամ հուզական հարցերի քննարկումը կամ վհատեցնել թրաֆիքինգի ենթարկված անձին, ում մոտ կարող է սխալ պատկերացում առաջանալ հեռախոսազրույցի բովանդակության մասին կամ որոշակի կասկած:

.....

4. ԱՊԱՀՈՎԵՔ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ աշխատող անհատների և կազմակերպությունների առանցքային պարտավորություններից է գաղտնիության պահպանումը: Գաղտնիության պահպանումը խիստ կարևոր է ոչ միայն թրաֆիքինգի ենթարկված անձանց, ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակազմի և ներկայացուցչության անդամների անվտանգության և բարօրության համար, այլև ուղղակիորեն առնչվում է թրաֆիքինգից տուժած անձի՝ իրական տեղեկություններով և զգացումներով կիսվելու

պատրաստակամությանը: Հարկավոր է լուրջ վերաբերվել գաղտնիության ընթացակարգերին և հետևողականորեն պահպանել դրանք:

Գաղտնիություն պահպանել նշանակում է ապահովել, որ թրաֆիքինգի զոհի հայտնած և նրա մասին առկա բոլոր տեղեկությունները պաշտպանված են, և տվյալ անհատն իրազեկված է իր տվյալների գաղտնիության պահպանման համար ձեռնարկվող հատուկ միջոցների մասին:

Գաղտնիություն պահպանելու համար՝ հարկավոր է միշտ նախազգուշական միջոցներ ձեռնարկել թրաֆիքինգի ենթարկված անձանց առնչվող գրավոր, բանավոր, էլեկտրոնային, հեռախոսային, տեսագրային, կամ այլ տեսքով պահվող տեղեկությունների և լուսանկարների պահպանման համար: (Լրացուցիչ տեղեկություններ ներկայացված են նաև սույն ձեռնարկի 1-ին գլխում, բաժիններ՝ 1.2 և 1.5.5):

Թրաֆիքինգի ենթարկված անձանց մեծ մասը, որպես կանոն, այնպիսի ծագման երկրներից է, որտեղ բժիշկները, պետական պաշտոնյաները և այլ ոլորտների մասնագետները չեն հետևում գաղտնիության պահպանման չափանիշներին: Ուստի, թրաֆիքինգի ենթարկված անձանց հարկավոր է վստահեցնել, որ նրանց հայտնած տեղեկությունները չեն փոխանցվի այնպիսի անձանց, ովքեր կարող են վնաս պատճառել նրանց, խուսափել նրանց հետ հաղորդակցվելուց, մերժել նրանց կամ օգտվել նրբանկատ բնույթի տվյալներից՝ նրանց շփոթեցնելու, հարկադրանքի կամ մանիպուլյացիայի ենթարկելու համար:

.....

Թրաֆիքինգի ենթարկված անձանց առնչվող տեղեկություններին չի կարելի վերաբերել անլրջորեն: Հարկավոր է փոխանցել միայն անհրաժեշտ տեղեկությունները միայն այն անձանց, ովքեր անմիջապես առնչվում են տվյալ գործին: Տեղեկություններ փոխանցելիս հարկավոր է զգուշություն պահպանել, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ դրանք փոխանցվում են ծառայություն մատուցող կազմակերպության ցանցի անդամ չհանդիսացող երրորդ անձանց, օրինակ՝ այլ բուժաշխատողներ, աջակցություն մատուցող հասարակական կազմակերպություններ, պետական հաստատություններ: Տեղեկատվության կառավարման ընթացակարգերը չպահպանելու դեպքում նույնիսկ թրաֆիքինգի զոհի ուղղորդման բարի նպատակներով փոխանցվող

տեղեկությունները կարող են ընկնել չար մարդկանց ձեռքը: Եթե ծառայություն մատուցող կազմակերպությունները կամ նրանց գործընկեր կազմակերպություններն առանց անհատի միանշանակ համաձայնության՝ նրան առողջական վիճակին առնչվող տեղեկությունները փոխանցեն պետական մարմիններին, օրինակ՝ ոստիկանություն, ներգաղթի ծառայություն կամ մարդավաճառների դեմ հարուցված դատական գործերում ներգրավված փաստաբաններին, ապա նրանք կխախտեն նման անհատի իրավունքները:

.....

Բացի այդ, գաղտնիության պահպանման սկզբունքով արգելվում է թրաֆիքինգի զոհերի դեպքերը ներկայացնել հանրամատչելի նյութերում, հրապարակումներում կամ զեկույցներում՝ բացի այն դեպքերից, երբ դրանց մանրամասները բավարար չափով ձևափոխվել են՝ բացառելով իրական անհատին ճանաչելու հավանականությունը:

Շատ բարդ է որոշում կայացնել լրագրողների և թրաֆիքինգի զոհերի խնդիրները բարձրաձայնող այլ անձանց՝ թրաֆիքինգի զոհերի հետ հարցազրույց անցկացնելու խնդրանքների վերաբերյալ: Թրաֆիքինգի զոհի՝ կողմնակի անձի հետ զրուցելու ցանկությունը պարզելու մասին որոշում կայացնելիս հարկավոր է հաշվի առնել նշված խնդրանքի դերն ու նշանակությունը, տվյալ անհատի վստահելիությունը և բնավորությունը, և ամենակարևորը՝ հարցազրույցի հետևանքները թրաֆիքինգի զոհի համար: Հարցազրույց տալու հնարավորության մասին թրաֆիքինգի զոհին հայտնելու վերաբերյալ վերջնական որոշում կայացնելիս հարկավոր է հաշվի առնել նրա շահի և առողջության (տվյալ անձի սեփական գնահատման և բժշկական փաստաթղթերի հիման վրա) գերակայությունը կողմնակի անձի հետ հաղորդակցումից բխող բոլոր մնացած նկատառումների կամ ընկալվող առավելությունների նկատմամբ:

5. ԱՊԱՀՈՎԵՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հիմնարար իրավունքներից է իրազեկված լինելու իրավունքը: Իրենց առողջության, բարօրության և ապագայի վերաբերյալ ողջամիտ որոշումներ կայացնելու, ինչպես

նաև ծառայություն մատուցող որևէ կազմակերպության մասին իրական պատկերացում կազմելու համար՝ թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է հնարավորինս շատ տեղեկություններ ստանան բոլոր հնարավոր տարբերակների վերաբերյալ: Լիարժեք իրազեկումը կարողությունների զարգացման ձևերից է, որի միջոցով վերականգնվում է թրաֆիքինգի ենթարկված անձի վերահսկողությունը սեփական մարմնի և որոշումներ նկատմամբ: Այսպես, ցանկացած ընթացակարգեր կամ գործողություններ ձեռնարկելուց, ինչպես նաև հարցեր տալուց առաջ թրաֆիքինգի զոհերին հարկավոր է տեղեկություններ հաղորդել առաջարկվող աջակցության հնարավոր ծավալների, խնամքի սահմանափակումների, հնարավոր ռիսկերի և առավելությունների վերաբերյալ: Այս սկզբունքով խիստ կարևոր է նաև չտալ անիրագործելի խոստումներ կամ չանել ոչ ստույգ կանխատեսումներ: Բացի այդ, տեղեկատվության հաղորդումը կազմում է իրազեկված համաձայնություն ստանալու գործընթացի (տե՛ս ստորև) հիմնական բաղադրիչը :

Նախնական ընդհանուր տեղեկություններ ծառայությունների մատուցման վերաբերյալ

Ծառայություն մատուցող կազմակերպությունում առաջին անգամ հայտնված անձինք մատուցվող ծառայությունների վերաբերյալ հստակ նախնական տեղեկատվություն ստանալու կարիք ունեն և շատ են կարևորում այն: Նման տեղեկատվությունը պետք է հաղորդել ոչ թե պաշտոնական, հրամայական կամ ներողամիտ հնչերանգով, այլ՝ պարզ և աջակցային հնչերանգով (և հնարավորության դեպքում՝ գրավոր տեսքով): Ծառայությունների մատուցման վերաբերյալ ընդհանուր տեղեկատվության շրջանակներում հարկավոր է հաղորդել հետևյալ տեղեկությունները.

- ծանոթացում (այդ թվում՝ անհատական աջակցություն մատուցող անձի անուն, պաշտոն, նրա առնչությունը հիմնական աջակցություն մատուցող կազմակերպության հետ և այլն),
- անցկացվող ընթացակարգեր և գործողություններ, հնարավորության դեպքում տեղեկություններ տրամադրել դրանց ժամանակացույցի, տևողության, վայրի և ընդգրկված աշխատակազմի անդամների վերաբերյալ,
- հասանելի ծառայություններ և հաստատություններ, ինչպես նաև

անհատի նկատմամբ տվյալ կազմակերպության կամ գործընկեր կազմակերպության ստանձնած պարտավորություններ,

- կազմակերպության կողմից մատուցվող աջակցության, ծառայությունների կամ խնամքի սահմանափակումներ, կազմակերպության կամ ապաստարանի ծառայություններից օգտվելու սահմանափակում (այն է՝ «ապաստարանի կանոններ», տեղաշարժի և վարքագծի սահմանափակումներ և այլն) և թրաֆիքինգի զոհերի պարտավորություններ,
- թրաֆիքինգի զոհերի վրա այլոց (օրինակ՝ ոստիկանություն, դեսպանություն, ներգաղթի ծառայություն) կողմից դրված սահմանափակումներ և պարտավորություններ այլոց նկատմամբ,
- կազմակերպության կողմից ձեռնարկվող գաղտնիության և անվտանգության նախազգուշական միջոցներ, ծրագրի որևէ հատվածին, ընթացակարգերին կամ գործողություններին մասնակցելու վերաբերյալ ինքնուրույն որոշում կայացնելու անհատի իրավունք:

Անհատի իրազեկված լինելու իրավունքը ենթադրում է նաև իրեն առնչվող տեղեկությունները ժամանակին ստանալու իրավունք: Մասնավորապես բժշկական թեստերի արդյունքների պարագայում խիստ կարևոր է ապահովել, որ արդեն իսկ հոգեկան ընկճվածության վիճակում գտնվող անձը ստիպված չլինի չափից ավելի երկար սպասել և անհանգստանալ իր առողջական խնդիրների վերաբերյալ: Ցանկալի է, որպեսզի բժշկական թեստերի արդյունքները (ինչպես դրական, այնպես էլ բացասական) թրաֆիքինգի զոհին հայտնի այն բժիշկը, ով ի սկզբանե պատասխանատու էր տվյալ անհատի առողջական հետազոտության համար (այսինքն՝ այն բժիշկը, ով ահազանգել է բժշկական թեստ կամ որևէ այլ ընթացակարգ կատարելու անհրաժեշտության մասին, կամ ինքն է նման հետազոտություն կատարել) կամ տվյալ անհատին առաջնային աջակցություն տրամադրող անձը, այլ ոչ թե նրանց անծանոթ որևէ անձ (այդ թվում՝ լաբորատորիայի աշխատողներ կամ տվյալ անհատի բուժօգնությանը ավելի քիչ առնչվող այլ բուժաշխատողներ, ովքեր ամենայն հավանականությամբ անհատի հետ հաղորդակցվել են միայն շատ կարճ ժամանակահատվածում բժշկական թեստի համար արյուն կամ կենսաբանական նյութի նմուշ վերցնելիս, ռենտգեն կամ այլ ախտորոշիչ հետազոտություն կատարելիս):

Բժշկական թեստերի կամ ընթացակարգերի արդյունքները հայտնելը

Բժշկական թեստերի կամ ընթացակարգերի արդյունքները հայտնելիս հարկավոր է հետևել ներքոհիշյալ կանոններին.

- **Հիշեցրեք հիվանդին կատարած թեստերի կամ ընթացակարգ(երի) և դրանք կատարելու պատճառների մասին:**
- **Արագ հայտնեք արդյունքները, այսինքն՝ մի հետաձգեք զրույցը, ինչը կարող է հանգեցնել սպասման արդյունքում առաջացող սթրեսի:**
- **Եթե հավանականություն կա, որ արդյունքները կարող են հիվանդի մոտ առաջ բերել հուզական արձագանք, ապա բուժաշխատողը պետք է պատրաստ լինի կարեկից և նրբանկատ վերաբերմունք դրսևորել և ժամանակ տալ տվյալ անձին իրեն հայտնած տեղեկությունների շուրջ խորհելու համար:**
- **Անհրաժեշտության դեպքում հարկավոր է պատրաստ լինել անհատին ուղղորդել որակավորված աջակցող մասնագետի կամ հոգեբանի մոտ:**
- **Բացատրեք բժշկական թեստերի արդյունքների նշանակությունը և հետևանքները (այսինքն՝ դրանց ազդեցությունը ներկայումս և հետագայում անհատի առողջական վիճակի վրա և այլն) և առաջարկեք նրանց ուշադիր կարդալ 5-րդ գլխում ներկայացված բաժինները՝ բժշկական թեստերին նախորդող և հաջորդող ՄԻԱՎ/ՁԻԱՀ հարցերով խորհրդատվության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, բոլոր այն բժշկական թեստերը, որոնց արդյունքները կարող են մնասակար լինել անհատի ֆիզիկական կամ հոգեկան առողջության համար, պետք է բացատրել նախապես (նախքան բժշկական թեստի անցկացումը), իսկ թեստի արդյունքները հայտնելուց հետո հարկավոր է տրամադրել խորհրդատվություն:**
- **Մանրամասն նկարագրեք բոլոր հետագա ընթացակարգերը, նշանակումները կամ միջոցառումները:**
- **Խրախուսեք անհատին հարցեր տալ:**
- **Հիշեցրեք անձին, որ ինքը կարող է դիմել նաև մեկ այլ բժշկի:**
- **Հիշեցրեք անձին, որ իրեն կարող են տրամադրվել բժշկական թեստի արդյունքների պատճենները:**

6. ՀԱՅՑԵՔ ՀԻՎԱՆԴԻ ԻՐԱԶԵԿՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց՝ իրենցից հայցվող համաձայնության վերաբերյալ լիարժեք իրազեկումը, ինչպես նաև իրենց համաձայնությունը տալու կամ չտալու իրավունքը հանդիսանում է նրանցից յուրաքանչյուրի հիմնարար իրավունքը և ծառայություն մատուցող կազմակերպության պայմաններում ձևավորվող մասնագիտական աջակցային հարաբերությունների հիմնական հայեցակետը:

Իրազեկված համաձայնությունն անհրաժեշտ է ստանալ բոլոր ծառայությունների մատուցման համար, այդ թվում՝

- բժշկական զննում և ընթացակարգեր, ներառյալ՝ բուժում, ախտորոշում (այդ թվում՝ հոգեբանական վերլուծություն, արյան թեստ, ռենտգեն հետազոտություն, ինչպես նաև հիվանդից կենսաբանական նյութի նմուշառում),
- առողջական վիճակի գնահատում, կամավոր վերադարձի աջակցված ծրագրեր,
- հետազոտություններ, անհատի անձնական գործի տեղեկությունների տրամադրում աշխատակազմի մնացած անդամներին կամ գործընկեր կազմակերպության աշխատակիցներին (այդ թվում՝ կազմակերպություններ, որտեղ ուղղորդվում է թրաֆիքինգի ենթարկված անձը, իր համաձայնությամբ լրացուցիչ բժշկական թեստեր հանձնելու, այլ մասնագետների կողմից բժշկական եզրակացություն և բուժում ստանալու համար և այլն),
- վերաինտեգրման աջակցություն:

Իսկապես **իրազեկված** համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ է հաղթահարել բազմաթիվ արգելքներ, այդ թվում՝ լեզվական, մշակութային և սոցիալական տարբերություններ, թրաֆիքինգի ենթարկված անձանց վախը կամ չափից մեծ հարգանքը ղեկավար դիրք զբաղեցնող անձանց նկատմամբ, նրանց համոզմունքը, որ աջակցություն ստանալու պայմանն է խորհուրդներին անվերապահորեն հետևելը, հաճոյանալու ցանկությունը, իրենց հաղորդվող տեղեկությունները չհասկանալու մասին հայտնելու, որևէ նյութ պարզաբանելու կամ հարցեր տալու դժկամությունը, ինչպես նաև անհարմար կամ լարված զրույցն ավարտելու ցանկությունը:

Բացի այդ, հարկավոր է հաշվի առնել նաև անձի տարիքը, ֆիզիկական և մտավոր կարողությունները, ֆիզիկական կամ հոգեբանական տրավմայի բարդության աստիճանը, ինչպես նաև իրական և ընկալվող սպառնալիքները: Հարկավոր է պատշաճ միջոցներ ձեռնարկել՝ որոշելու, թե արդյոք տվյալ անձը բավարարում է իրազեկված համաձայնություն հայտնելու հիմնական չափանիշները:

Իրազեկված համաձայնություն ստանալու համար հաղորդվող տեղեկություններ

Իրազեկված համաձայնություն հայցելիս խիստ մեծ նշանակություն ունեն համապատասխան տեղեկությունները և դրանք հաղորդելու միջոցը:

Թեև տարբեր գործողությունների (օրինակ՝ զրույց բժշկի հետ, բուժզննում կամ խորհրդատվություն) պարագայում համաձայնություն հայցելու համար կարող են պահանջվել տարբեր տեղեկություններ, դրանք որպես կանոն պետք է ներառեն հետևյալ առանցքային հարցերը.

- **ծանոթություն, այդ թվում՝ բուժաշխատողի անունը, պաշտոնը և աջակցության մատուցման գործում ունեցած դերակատարումը (եթե նշված տեղեկությունները դեռևս չեն հաղորդվել),**
- **իրազեկված համաձայնություն հայցելու նպատակի մանրամասն նկարագիր (օրինակ՝ հարցազրույց, բուժզննում կամ բժշկական ընթացակարգ), այդ թվում՝ նշված գործողությունների և դրանց կատարման ժամանակացույցի քայլ առ քայլ նկարագիր,**
- **հարցազրույցի, ծառայությունների, ընթացակարգի և այլ գործողությունների (երկարաժամկետ կամ կարճաժամկետ) հիմքում ընկած պատճառներ կամ առավելություններ,**
- **հարցազրույցի, ծառայությունների, ընթացակարգի և այլ գործողությունների հետ կապված ռիսկեր և վտանգներ (երկարաժամկետ կամ կարճաժամկետ),**
- **հաշվի առեք բժշկական զննման կամ ընթացակարգի այն բոլոր չափազանց նրբանկատ հարցերը և հայեցակետերը, որոնք կարող են վիատեցնել թրաֆիքինգի զոհին,**
- **թրաֆիքինգի զոհին հայտնեք, թե երբ են պատրաստ լինելու բոլոր բժշկական հետազոտությունների կամ ընթացակարգերի արդյունքները,**

- **իրազեկեք անհատին իր փաստաթղթերի, բժշկական գրառումների կամ անձնական և այլ փաստաթղթերի հասանելիության հետ կապված իրավունքների մասին,**
- **անընդհատ հավաստիացրեք անհատին, որ նրա բժշկական փաստաթղթերը կպահվեն գաղտնի, միշտ հասանելի կլինեն իրեն, և ինքը կկարողանա որոշում կայացնել այն մասին, թե արդյոք տվյալ կազմակերպությունը կարող է դրանք օգտագործել իր գործը ծառայություն մատուցող այլ կազմակերպություններին կամ իր գործով հետաքննություն վարող իրավապահ մարմիններին ուղղորդելու կամ հետազոտություն անցկացնելու նպատակով:**

Բացի այդ, շատ անգամ հարկավոր է հավաստիացնել անհատներին, որ գոյություն չունեն ճիշտ կամ սխալ պատասխաններ, ոչ էլ ճիշտ կամ սխալ պատասխան ռեակցիաներ: Նրանց տրվող հարցերն ընդունված հարցեր են, որոնք նախատեսված են բոլորի համար: Խոցելի դիրքում հայտնված անձինք, ովքեր հստակ չեն պատկերացնում իրենց հետագա ճակատագիրը, հակված են չափից շատ կարևորելու յուրաքանչյուր հարց կամ խնդրանք և երկար խորհելու «ճիշտ» պատասխանի շուրջ: Հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք ստիպված էին ապրել այնպիսի իրավիճակներում, երբ «սխալ» կամ վերահսկող չարագործների մոտ զայրույթ առաջացնող պատասխանները կարող էին հանգեցնել մեծ վնասի, հարկավոր է նրանց շարունակաբար հիշեցնել, որ ճիշտ կամ սխալ պատասխաններ գոյություն չունեն:

Իրազեկված համաձայնություն ստանալն իրենից ներկայացնում է մի գործընթաց, այլ՝ ոչ թե հարցեր, որոնք ենթադրում են պարզ պատասխաններ՝ «այո» կամ «ոչ»:

Ստորև ներկայացված են այդ գործընթացի ընդհանուր քայլերը.

- **Դրսևորեք չեզոք և մասնագիտական մոտեցում, սակայն միաժամանակ նաև՝ կարեկցող վերաբերմունք և խոսեք աջակցող ձայնով:** Անձի համաձայնությունը հայցելիս անընդունելի է ճնշում գործադրել նրա վրա կամ անգամ ակնարկել նրա համար լավագույն տարբերակը: Խիստ կարևոր է, որ համաձայնության ստացման հետ կապված տեղեկությունները և խնդրանքները ներկայացվեն չեզոք ձևով, ինչը նշանակում է, որ տվյալ անհատն ունի ազատ ընտրության իրավունք, և իր ցանկացած որոշում կընդունվի առանց կողմնակալության:

- **Խոսեք պարզ:** Թրաֆիքինգի զոհ դարձած անձին հասկանալի լեզվով բացատրեք, որ բժշկական թեստերը և ընթացակարգերը խիստ կարևոր են նրա բարօրության համար և թույլ կտան նրան ավելի ճիշտ հոգ տանել իր առողջության համար թրաֆիքինգի հետևանքներից հետո վերականգնվելու ընթացքում:
- **Խրախուսող հարցեր:** Համաձայնության ստացման գործընթացի սկզբում աշխատակազմի անդամները թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ զրուցելիս պետք է շեշտեն ամեն պահի, անգամ տեղեկատվության հաղորդման ընթացքում հարցեր տալու և պարզաբանումներ խնդրելու կարևորությունը, անգամ եթե դրանով ընդհատեն հարցազրույցն անցկացնող անձին: Համաձայնության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելուց հետո աշխատակազմի անդամները պետք է կրկին համբերատար հարցնեն թրաֆիքինգի զոհին, թե արդյոք նա ունի որևէ հարց:
- **Պարզաբանում և վերաձևակերպում:** Համաձայնության ստացման ողջ գործընթացում աշխատակազմի անդամները պետք է ուշադիր լինեն թրաֆիքինգի ենթարկված անձանց վարքագծում այնպիսի նշանների բացահայտմանը, որոնք վկայում են այն մասին, որ նրանք լավ չեն հասկացել իրենց ասածը: Աշխատակազմի անդամները պետք է պատրաստ լինեն համբերատար կրկնելու, պարզաբանելու և վերաձևակերպելու հաղորդվող տեղեկությունները: Հաշվի առնելով սթրեսային ապրումները և մասնավորապես՝ լեզվական, սոցիալական կամ մշակութային արգելքները՝ թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են սխալ ընկալել իրենց հաղորդվող տեղեկությունները կամ առհասարակ անտեսել որոշ տեղեկություններ:
- **Տեղեկատվության ըմբռնման ապահովում:** Համոզվեք, որ թրաֆիքինգի զոհը ճիշտ է ըմբռնել հաղորդված տեղեկությունները: Այդ նպատակով ձևակերպեք մի քանի հարց՝ ինչպես ընդհանուր («Արդյո՞ք բոլոր ասածներս հասկանալի են», «Արդյո՞ք կա մի անհասկանալի հարց, որ կցանկանայիք կրկնեմ»), այնպես էլ կոնկրետ բնույթի հարցադրումներ: Կոնկրետ բնույթի հարցերով կարելի է փորձել պարզել որոշակի հարցերի ըմբռնումը, որոնք կարող են բարդ կամ շփոթեցնող թվալ:
- **Հավաստիացրեք տվյալ անձին, որ իրեն ասվածը կամ առաջարկվածը մասամբ կատարելը կամ առհասարակ**

չկատարելը բացասաբար չի անդրադառնա նրա վրա: Թրաֆիքինգի ենթարկված անձինք սովոր են բացասական հետևանքների: Խիստ կարևոր է, որ աշխատակազմի անդամները հստակ ասեն, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են ազատ ընտրություն կատարել, և այս կամ այն հարցի կապակցությամբ իրենց համաձայնությունը չհայտնելու պարագայում նրանց չեն պատժի կամ արհամարհի:

- **Համաձայնության ձևերի կիրառում:** Խիստ կարևոր է դրսևորել ողջամիտ և ճկուն մոտեցում՝ համաձայնության ձևերն ըստ անհրաժեշտության հարմարեցնելով տարբեր պայմանների լեզվական, սոցիալ-մշակութային, գործառնական և իրավական իրողություններին:

Համաձայնության հաստատում

Համաձայնության ձևը կարդալուց առաջ համաձայնություն հայցող անձինք պետք է վերանայեն հետևյալ հարցերը.

- այն ծառայությունները, որոնց մատուցման համար հարկավոր է ստանալ թրաֆիքինգի զոհի համաձայնությունը (օրինակ՝ հարցազրույցներ, հիմնական հարցերի ցանկ, բժշկական և այլ բնույթի ընթացակարգեր, ընդ որում՝ բոլոր ընթացակարգերը պետք է ներկայացվեն մեկ առ մեկ, և համաձայնություն հայտնելու դեպքում զոհը պետք է ստորագրի յուրաքանչյուրի տակ),
- գաղտնիության ապահովման նպատակով ձեռնարկված միջոցառումներ,
- ներկայացված ռիսկեր և առավելություններ,
- ճիշտ կամ սխալ պատասխաններ գոյություն չունեն, և համաձայնություն չհայտնելը ոչ մի դեպքում բացասաբար չի անդրադառնա այլ ծառայությունների և խնամքի վրա:

Համաձայնության արձանագրումը

Որպես կանոն, թրաֆիքինգի ենթարկված անձն իր համաձայնությունը հայտնում է ստորագրության տեսքով: Այդուհանդերձ, դա ամենևին էլ պարտադիր պայման չէ: Այն անձինք, ովքեր գրաճանաչ չեն, կամ ում ծագման երկրում պաշտոնական փաստաթղթեր ստորագրելը կարող է ունենալ լուրջ հետևանքներ (այն է՝ ճնշող ռեժիմներ), կարող են հայտնել բանավոր համաձայնություն, որը պետք է գրի առնեն աշխատակազմի անդամները:

Զգուշացում. Անչափահասները, ինչպես նաև այն անհատները, ովքեր ունեն մտավոր կամ հոգեկան արատ կամ այլ պատճառներով ի վիճակի չեն լիարժեք մասնակցել իրազեկված համաձայնություն հայտնելու ընթացակարգին, հատուկ աջակցության կարիք ունեն, որը հաճախ դրսևորվում է օրինական խնամակալի կամ իրավաբանական խորհրդատվություն նշանակման միջոցով: Օրինական խնամակալն այն անձն է, ով տվյալ անհատի կողմից օժտված է ամբողջական լիազորագրով, կամ էլ տվյալ անհատի իրավախորհրդատուն, ով նույնպես օժտված է նման լիազորագրով: Անչափահասների կամ այն անձանց համաձայնության ստացման անհրաժեշտության պարագայում, ովքեր ֆիզիկական կամ մտավոր առողջության պատճառով ի վիճակի չեն հայտնել իրավազոր համաձայնություն, կազմակերպությունները պետք է դիմեն փաստաբանին:

7. ՏՎԵՔ ՆՐԲԱՆԿԱՏ ԵՎ ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՑԵՐ

Օգտակար տեղեկություններ ստանալու, ինչպես նաև անձի՝ ընկճվածության կամ վիրավորելու ռիսկը նվազեցնելու համար՝ խիստ կարևոր է հարցերի ճիշտ ձևակերպումը, հերթականությունը և հարց տվողի ինչերանգը: Նույնը վերաբերում է նաև հարցազրույցներին, անամնեզին, բժշկական հետազոտությանը և խորհրդատվությանը:

- **Խուսափեք կրկնվող հարցերից:** Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ առնչվող աշխատակազմի անդամները պետք է ամեն ջանք գործադրեն, որպեսզի չստիպեն նրանց ավելորդ անգամ կրկնել այն, ինչ նրանք արդեն ասել են (և հավանաբար արդեն շատ անգամ): Համապատասխան գաղտնիության չափանիշների պայմաններում խիստ կարևոր է, որ աշխատակազմի անդամները թրաֆիքինգի զոհին հանդիպելուց առաջ ծանոթանան նրա անձնական գործին՝ այդտեղ առկա տեղեկությունների մասին ավելորդ հարցեր տալուց խուսափելու համար: Եթե ձևերի որոշ բաժիններում պահանջվող տեղեկությունները հայտնի են դարձել նախքան տվյալ անձի հետ անցկացվող հանդիպումը կամ զրույցը, ապա ցանկալի է լրացնել դրանք:
- **Հարցերի հերթականություն:** Հարցերն առավել լավ են ընկալվում այն դեպքում, եթե ուղղվում են ճիշտ հերթականությամբ, այն է՝ սկզբից ուղղվում են պակաս

նրբանկատ հարցերը: Հնարավորության դեպքում՝ վստահություն վրա հիմնված հարաբերություններ ձևավորելու նպատակով հարկավոր է զրույցը սկսել տվյալ անձի բարեկեցության մասին հոգատարության դրսևորող հարցերով (այն է՝ առողջական կարիքներ, անհատական կարիքների, անվտանգություն, հարմարավետություն)՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք նման հարցերն ընդգրկված են տվյալ հարցազրույցում կամ ընթացակարգում: Այնուհետև հարցազրույց անցկացնող անձինք պետք է տան չեզոք կամ ընդհանուր բնույթի հարցեր (անուն, ծննդավայր, նախկին զբաղմունք և այլն): Թրաֆիքինգի ենթարկված անձինք ավելի վստահելի պատասխաններ են տալիս նրբանկատ հարցերին, եթե դրանք հաջորդում են ընդհանուր հարցերին, այսինքն՝ երբ աշխատակազմի անդամների և թրաֆիքինգի ենթարկված անձի միջև հարաբերությունները որոշ ժամանակի ընթացքում ավելի են սերտացել: Թեև առանձին դեպքերում դժվար է որոշել, թե որ հարցերն են նրբանկատ (այսինքն՝ այն, ինչ կարող է վիատեցնել թրաֆիքինգի զոհերից ոմանց, կարող է չանհանգստացնել կամ չմտահոգել մյուսներին), սակայն փորձը ցույց է տալիս, որ որոշ հարցեր հավասարապես վիատեցնում և անհանգստացնում բոլորին: Նրբանկատ հարցերի շարքին են դասվում՝ սեռական չարաշահումները (մասնավորապես՝ այն դեպքերը, երբ թրաֆիքինգի զոհերը չարաշահումների են ենթարկել տանը՝ նախքան թրաֆիքինգի ենթարկվելը), երեխաներ, ընտանիքի անդամներ, բնակության հասցե, իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներ և ապօրինի գործունեություն, որի հանցակիցն են իրենց համարում թրաֆիքինգի զոհերը (օրինակ՝ փաստաթղթերի կեղծում, «մարմնավաճառություն», պետական սահմանի ապօրինի հատում, հոգեներգործուն նյութերի չարաշահում և այլն):

Շատ կարևոր է հարցազրույցներն ավարտել պակաս նրբանկատ հարցերով, որպեսզի տվյալ անձն իրեն չզգա ընկճված կամ հիասթափված: Հնարավորության դեպքում ցանկալի է հարցազրույցն ավարտել այպիսի հարցերով, որոնք ի հայտ են բերում անձի ուժեղ կողմերը և համարձակությունը:

- **Հարցերի երանգավորում:** Հարցի երանգավորումը գրեթե նույնքան կարևոր է, որքան բովանդակությունը: Հոգատարությամբ և հետաքրքրությամբ ձևակերպված հարցերին տրվում են ավելի անկեղծ պատասխաններ, քան հարցաքննող և մեղադրող հարցադրումների պարագայում: Հարկ է խուսափել նաև այնպիսի հարցադրումներից, որոնք կարող են տվյալ անձի մոտ կասկած առաջացնել, որ նրան չեն հավատում: Նման անհատների նկատմամբ դրսևորած դաժան վերաբերմունքի, ինչպես նաև ծանր հիշողությունները կամ զգացումները վերապրելու հարցում նրանց վարանման ըմբռնումը ոչ միայն կարեկցանք է արտահայտում, այլև՝ օգնում է թրաֆիքինգի զոհին վերականգնել վստահությունը այլ անձանց մարդկային հատկանիշների նկատմամբ: Շատ դեպքերում կարող է օգտակար լինել, եթե հարցազրույցն անցկացնող անձը հիշեցնի թրաֆիքինգի զոհին, որ նա կարող է որոշակի ժամանակ խորհել հարցերի մասին կամ բարդ հարցերին անդրադառնալ ավելի ուշ:

8. ԼՍԵՔ ՈՒՇԱԴԻՐ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔԵՔ ԶՐՈՒՑԱԿՑԻ ԱՍԱԾԻՆ[2]

Ուշադիր լսել նշանակում է ողջ ուշադրությունը կենտրոնացնել զրուցակցի և նրա ասածների վրա և գիտակցել, որ դիմացինը լսում և ընկալում է իր ասածները: Զրուցակցին ուշադիր լսելու և նրա ասածին արձագանքելու համար կիրառեք հետևյալ հնարքները.

- **Մի խոսեք:** Անհնար է միաժամանակ խոսել և լսել:
- **Հարցեր տվեք և պարզաբանումներ մտցրեք:** Եթե վստահ չեք, որ զրուցակցի ասածը ճիշտ եք հասկացել, կրկին տվեք հարցը կամ վերաձևակերպեք այն՝ առանց վրդովվելու կամ այնպես անելու, որ անձն իրեն զգա անհասկացողի կամ տգետի նման:
- **Ժամանակ տվեք զրուցակցին, որպեսզի պատասխանելիս չշտապի:** Թույլ տվեք զրուցակցին արտահայտել իր հույզերը և շարադրել իրադարձություններն իր նախընտրած հերթականությամբ: Լռությունն ամենևին էլ վատ նշան չէ: Երկար դադարները կարող են վկայել այն մասին, որ տվյալ անձը մտածում է՝ ինչպես հնարավորինս ճիշտ բացատրել որևէ բարդ

[2] Global Alliance Against Traffi cking in Women (GAATW). (1997). *Practical guide to assisting traffi cked women.* Bangkok: GAATW.

իրավիճակ, փորձում է կառավարել իր հույզերը կամ վերհիշել որևէ դեպքի հատուկ մանրամասները: Պետք չէ դատողություններ անել հաղորդած տեղեկությունների արժանահավատության վերաբերյալ, եթե զրուցակիցը լռում է կամ կմկմում:

- **Կենտրոնացեք զրույցի վրա:** Մի փորձեք զրույցի ընթացքում կատարել այլ փոքր առաջադրանքներ, մտածել այլ դեպքերի մասին, առանձնացնել այլ խնդիրներ կամ ձևակերպել Ձեր հաջորդ ասելիքը:
- **Եղեք զգոն:** Ուշադիր հետևեք զրուցակցի դեմքի արտահայտությանը, ձեռքերի և մարմնի շարժումներին և ասելիքի հնչերանգին: Երբեմն գործողությունները կամ խոսելու ձևն ավելի լավ են արտահայտում անձի ասելիքը, քան պարզապես խոսքերը: (Այդուհանդերձ, համոզվեք, որ անձն իրեն անհարմար չի զգում նման ուշադրությունից): Փորձեք լսել այն, ինչ **չի** ասվում: Հատկապես հուզական ցնցումների կամ ապրումների մասին խոսելիս անձը խուսափում է հենց այն հարցերից, որոնք հաճախ նույնքան (կամ ավելի) կարևոր են, որքան նրա ասածները: Եթե հնարավոր է, փորձեք անդրադառնալ այն հարցերին, որոնք անտեսվել են:
- **Հաստատեք, որ լսում եք զրուցակցին:** Խիստ կարևոր է, որ զրուցակիցն իմանա, որ դիմացինը լսում և հասկանում է իր ասածը և ապրումակցում է իրեն: Այդ նպատակով զրուցակիցը կարող է փոխել դեմքի արտահայտությունը, ի նշան համաձայնության գլխով անել կամ ասել փոքր ձայնարկություններ («ահա՛», «պարզ է», «այո՛», «հասկանում եմ») և կրկնել կամ հաստատել դիմացինի ասածը: Այդուհանդերձ, զգոն եղեք, որպեսզի հանկարծ չընդհատեք զրուցակցին, չավարտեք նրա նախադասությունը կամ մեկ այլ նախադասություն չավելացնեք նրա ասածին: Թույլ տվեք, որ տվյալ անձն ինքը որոշի տեղեկություններ հայտնելու ձևը:

9. ՈՒՇԱԴԻՐ ՀԵՏԵՎԵՔ ԱՅՆ ՆՇԱՆՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՎԿԱՅՈՒՄ ԵՆ, ՈՐ ԶՐՈՒՅԱԿԻՑԸ ՊԵՏՔ Է ԴԱԴԱՐ ԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ

Աջակցության մատուցման ընթացակարգով կամ սեփական կամքով հարցերին պատասխանելը կամ թրաֆիքինգի դեպքի հետ կապված

մանրամասներ վերհիշելը ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական բնույթի մեծ ջանքեր է պահանջում թրաֆիքինգի ենթարկված անձանցից, ովքեր արդեն իսկ գտնվում են սթրեսային վիճակում: Նրանց հույզերի և հյուծվածության նկատմամբ նրբանկատ վերաբերմունքը ոչ միայն մարդկային մոտեցման դրսևորում է, այլև՝ դյուրացնում է տեղեկություններ հավաքելու գործընթացը և աջակցության նպատակների իրագործումը: Նրանք, ովքեր հյուծված են, ահաբեկված, գտնվում են գերլարված հուզական վիճակում կամ շփոթված են անցյալի կամ ապագայի մասին իրենց մտքերի կծիկում, դժվարանում են վերհիշել կամ հաղորդել տեղեկություններ: Բացի այդ, նշված զգացումների ազդեցությամբ թրաֆիքինգի ենթարկված անձինք կարող են վրդովվել և թշնամաբար տրամադրվել աջակցող անձի և ամբողջ աջակցության գործընթացի նկատմամբ: Խիստ կարևոր է լինել զգոն և հասկանալ զրուցակցի վարքագծից, որ նա կարիք ունի ընդմիջման, զրույցի թեմայի փոփոխության կամ իր հույզերը կառավարելու և մտքերն ի մի բերելու համար որոշակի ժամանակի, կամ պարզապես արդեն ժամանակն է դադարեցնելու զրույցը: Մյուս կողմից, թրաֆիքինգի զոհերը, ովքեր որոշ ժամանակ (կամ անգամ կարճ ժամանակահատվածում) իրենց ապրումներով ոչ ոքի հետ կիսվելու հնարավորություն չեն ունեցել, որպես կանոն, իրենց հետ պատահածը պատմելուց հետո որոշակի թեթևություն կամ բուժարար ազդեցություն են զգում: Խիստ կարևոր է, որ աջակցող անձը նման մարդկանց հնարավորություն տա մանրամասն պատմելու իրենց հետ պատահածի մասին և արտահայտելու իրենց կարծիքն՝ առանց միջամտելու կամ ընդհատելու նրանց զրույցի թեմայից շեղվելու կամ իր հագեցած օրակարգի պատճառով:

10. ՀԱՇՎԻ ԱՌԵՔ ՁԵՐ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱԿԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Թրաֆիքինգի ձևերից շատերի դեպքում թրաֆիքինգի զոհերը ներգրավվում են այնպիսի գործողություններում, որոնք համարվում են սոցիալական տեսանկյունից անընդունելի կամ բարոյական տեսանկյունից վիճահարույց: Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց շրջանում հանդիպում են էթնիկական, մշակութային, սոցիալ-տնտեսական և անհատական բազմաթիվ տարբերություններ ունեցող անձինք: Ուստի, խիստ կարևոր է, որ աջակցող անձը պարզի՝ արդյոք ինքը կանխակալ կարծիք ունի իր խնամքին հանձնված մարդկանց մասին կամ երբևէ կարող է նրանց նկատմամբ դրսևորել կողմնակալ

կամ ռասիստական մոտեցումներ: Աջակցող անձինք պետք է պարզեն իրենց վերաբերմունքը աշխատանքային շահագործման (օրինակ՝ մարմնավաճառություն, մուրացկանություն, տնային ծառայություն) նպատակով թրաֆիքինգի տարածված տեսակներում ներգրավված անձանց նկատմամբ, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ովքեր ենթարկվել են չարաշահումների (օրինակ՝ սեռական չարաշահում) կամ խարանավորման, ակնհայտորեն տառապում են հիվանդություններով կամ ստացել են վնասվածքներ (օրինակ՝ ՄԻԱՎ, վնասվածքի հետևանքով ստացված խեղանդամություն, պոլիոմելիտի կամ հակահետևակային ականների հետևանքով ստացված այլ վնասվածքներ), ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ում սոցիալական, մշակութային կամ կրոնական հայացքները կամ սովորույթները տարբերվում են իրենց հայացքներից կամ սովորույթներից:

Բացի այդ, շատերը կարող են ունենալ նաև նվազ արտահայտված նախապաշարմունքներ՝ անձի սոցիալ-տնտեսական կարգավիճակի նկատմամբ: Մասնավորապես՝ աջակցող անձանցից շատերը, ովքեր ունեն մասնագիտական որակավորում, մշտական աշխատանք և բարձր կենսամակարդակ, կարող են ունենալ գերազանցության զգացում գյուղական համայնքների անապահով կամ պակաս կրթված բնակիչների նկատմամբ: Թեև նման կողմնապահ վերաբերմունքը կարող է ունենալ դրական դրսևորումներ (այն է՝ ծնողական հոգատարություն, խնամակալություն), խիստ կարևոր է վերհանել և հսկել սեփական անձի այդ զգացումները, որպեսզի դրանց ազդեցությամբ աջակցություն ստացող անձինք երբեք իրենց չդասեն ստորադաս շարքին:

11. ՎՍՏԱՀԵՔ ԵՎ ՋԵՐԾ ՄՆԱՑԵՔ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Աջակցության մատուցման ոլորտում ձևավորվող փոխհարաբերությունների հիմքում ընկած է վստահությունը: Վստահության աղբյուրը պետք է լինի աջակցող անձը: Աջակցող անձինք պետք է պատրաստակամ լինեն հավատալու, որ իրենց աջակցության ներքո գտնվող թրաֆիքինգի զոհն անկեղծ է, և չպետք է անգամ թույլ տան, որ կործանարար կասկածամտությունը ներթափանցի աջակցային փոխհարաբերություններ: Թրաֆիքինգի զոհ դարձած անձինք պետք է համոզված լինեն, որ իրենց ասածների արժանահավատությունը կասկածի տակ չի առնվում, իսկ աջակցությունը մատուցվում է պատշաճ կարգով, այսինքն՝ ոչ միայն իրենցից որևէ օգուտ (օրինակ՝

տեղեկություններ) ստանալու նպատակով: Աջակցողի դերում հանդես եկող մասնագետը կարող է համապատասխան դատողություններ անել տվյալ անձի ստելու վերաբերյալ միայն փաստացի ապացույցների առկայության դեպքում:

Նմանապես, խիստ կարևոր է նաև հիշել, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք իրական հիմքեր ունեն այլոց չվստահելու, նրանց մոլորության մեջ մտցնելու, ինչպես նաև անցած իրադարձությունների իրենց վարկածը թաքցնելու կամ փոխելու համար:

Նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ անձը երբեմն ստում է կամ հրաժարվում որոշակի տեղեկություններ բացահայտելուց, մոռանում կամ փոփոխում է իր պատմության որոշ մասերը, չի կարելի կասկածի տակ առնել նրա հայտնած բոլոր տեղեկությունների արժանահավատությունը:

12. ՊԱՀՊԱՆԵՔ ԱՐՀԵՍՏԱՎԱՐԺ ՄՈՏԵՑՈՒՄ՝ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՄԱՐԴԿԱՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԼՈՎ ՀԱՐԳԱՆՔՈՎ ԵՎ ԿԱՐԵԿՑԱՆՔՈՎ

Մասնագիտական մոտեցումը ենթադրում է հարգանքի և հավասարության սկզբունքի վրա հիմնված վերաբերմունք: Քիչ չեն այն դեպքերը, երբ վերահսկիչ դիրքում (այն է՝ տեղեկատվություն, ծառայություններ կամ ապրանքներ) գտնվող մասնագետները որդեգրում են ծնողական հոգատարության մոտեցումը և նույնիսկ անցնում մի ոճի, որը ենթադրում է մտավոր կամ մասնագիտական գերակայություն՝ դրանով իսկ աջակցություն ստացող անձին դնելով անօգնական ստորադաս վիճակի մեջ: Նման անհավասարակշռությունը վնասարար է օգնության տրամադրման ընթացքում ձևավորվող փոխհարաբերությունների համար, մասնավորապես՝ այն անձանց համար, ովքեր նախկինում արդեն հարկադրվել են հնազանդության: Տրավմա վերապրած անձինք շատ արագ են ընդունում իրենց թերարժեքությունը կամ կախվածությունը և իրենց զգում են թույլ և ստորացված: Աջակցող անձինք պետք է պահպանեն իրենց մասնագիտական դիրքին վայել կեցվածք և պահվածք՝ միաժամանակ դրսևորելով կարեկցանք և սփոփանք: Աջակցություն ստացող անձինք պետք է զգան, որ իրենք հաստատել են հավասարության սկզբունքի վրա հիմնված փոխհարաբերություններ, և մյուս կողմը կհարգի նրանց անձը և իրավունքները: Նրանք պետք է նաև ընկալեն այն փաստը, որ աջակցող անձը հոգ է տանում նրանց մասին և միշտ առաջնորդվում է նրանց շահերով:

13. ՀԱՄՈԶՎԵՔ, ՈՐ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԸ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ Է ԻՐ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԾ ՄՏՔԵՐԸ ԿԱՄ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տարբեր մակարդակներով կազմակերպվող աջակցության գործընթացը պահանջում է, որ մեկ անձ ստանձնի առաջատար դերը և ուղղորդի ողջ գործընթացը: Այդուհանդերձ, խիստ կարևոր է, որ աջակցություն ստացող անձը զգա, որ ինքը վերահսկում է իր հետ կատարվող բոլոր իրադարձությունները և ապագայում կարող է ինքնուրույն որոշումներ կայացնել: Ինչպես արդեն նշվել է, թրաֆիքինգի զոհերն իրենց բաժին ընկած փորձությունները հաղթահարել են՝ այլոց պահանջների նկատմամբ խիստ նրբանկատ և (կասկածամիտ) մոտեցում դրսևորելով և գիտակցելով իրենց ստորադաս դերը: Մասնավորապես՝ ֆիզիկական և հոգեկան առողջության ոլորտում ընդունված ընթացակարգերը և հարցերը կարող են կրել կոպիտ և աննրբանկատ բնույթ՝ դիտվելով որպես նոր խախտումներ: Հարկավոր է ամեն ջանք գործադրել՝ ապահովելու, որ աջակցություն ստացող անհատն իրեն ստիպված կամ հարկադրված չզգա մասնակցել որևէ հանդիպման, հասկանա նման հանդիպումների նպատակը և տա դրանց մասնակցելու իր համաձայնությունը: Աջակցող անձը կարող է խրախուսել թրաֆիքինգի զոհերին ստանձնել և իրենց ձեռքում պահել աջակցության գործընթացի հսկողությունը, օրինակ՝ համբերատար ներկայացնել հասանելի տարբերակների հստակ նկարագիրը, հիշեցնել նրանց, որ միայն նրանք կարող են կայացնել իրենց առնչվող հարցերով որոշումները, և ոչ ոք դա չի անի նրանց փոխարեն կամ նրանց չի պարտադրի որևէ որոշում, բավարար ժամանակ հատկացնել նրանց՝ առկա տարբերակները դիտարկելու համար և աջակցել նրանց վերջնական որոշումների կայացմանը:

14. ՀԱՎԱՍՏԻԱՑՐԵՔ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ՈՐ ՆՐԱՆՔ ՉՈՒՆԵՆ ՈՐԵՎԷ ՄԵՂԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց բնորոշ է մեղքի զգացումը: Խիստ կարևոր է թրաֆիքինգի զոհերին հասկացնել, որ նրանք ոչ մի մեղք չունեն պատահածի համար: Կարելի է նշել, որ թրաֆիքինգը հանցագործության տեսակ է, որն անդրադառնում է ամբողջ աշխարհում բազում մարդկանց վրա, ընդ որում՝ նրանցից ոչ ոք

որևէ քրեական կամ բարոյական պատասխանատվություն չի կրում խաբեության կամ հարկադրանքի զոհ դառնալով շահագործման վայր ուղևորվելու կամ հետագայում որոշ արարքներ գործելու համար: Նման հավաստիացումները հնարավորություն կտան աջակցություն մատուցող անձին մեղմացնել այն մեղքի զգացումը, որը թույլ չի տալիս զոհին ներել ինքն իրեն և կանգնել բուժման ճանապարհին: Այսպիսով, աջակցություն մատուցող անձը հաղորդում է զոհին այն ուղերձը, որ նրան ոչ ոք չի դատապարտում կամ մեղադրում:

15. ՀԱՅՏՆԵՔ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ՁՆՆՈՒՄ ԱՆՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձինք պետք է իրազեկված լինեն մարդավաճառների կամ իրենց շահագործման կամ չարաշահումների ենթարկած այլ անձանց դեմ քրեական կամ քաղաքացիական հայց ներկայացնելու նպատակով դատաբժշկական փորձաքննություն անցնելու իրավունքի մասին: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը կարող է խիստ կարևոր ապացույց համարվել, մասնավորապես՝ սեռական չարաշահումների գործով դատավարության պարագայում:

«Դատաբժշկական փորձաքննություն» եզրույթով նշվում է հանցագործությունից տուժած անձի բժշկական զննումը հատուկ մասնագիտացում ունեցող բուժաշխատողների կողմից, ովքեր այնպիսի տեղեկություններ են հավաքում, որոնք կարելի է օգտագործել դատարանում: Սեռական չարաշահումներ կրած անձի դատաբժշկական փորձաքննության պարագայում զննման ընթացքում հարկավոր է կատարել հետևյալ գործողությունները.

1. ֆիզիկական տրավմայի զննում,
2. ներթափանցման կամ ուժի որոշում,
3. հարցազրույց հիվանդի հետ և
4. փորձագիտական տեղեկությունների հավաքում և գնահատում:[3]

[3] Office on Violence Against Women, US Department of Justice. (site visited in August 2003). Frequently Asked Questions Regarding STOP Formula Grant Programme Forensic Exam Payment Requirement [On-line fact sheet] URL: http://www.ojp.usdoj.gov/vawo/faqforensic.htm

Տեղեկություններ ստանալու կամ բուժում նշանակելու համար լրացուցիչ ընթացակարգեր (օրինակ՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների ստուգում) ներառելու հարցը պետք է որոշվի գործող օրենքներին, քաղաքականություններին և ընթացակարգերին համապատասխան:[4] Բժշկական տեղեկություններ հավաքելիս գրեթե միշտ էական նշանակություն ունի ժամանակի գործոնը: Խիստ կարևոր է, որպեսզի ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակիցներն անմիջապես (այսինքն՝ առաջին իսկ հանդիպման ժամանակ) տեղեկացնեն թրաֆիքինգի ենթարկված անձանց իրենց՝ դատաբժշկական փորձաքննություն անցնելու իրավունքի մասին և վերջիններիս կողմից նման փորձաքննություն անցնելու դիմումի ներկայացումից անմիջապես հետո հնարավորինս արագ պայմանավորվածություն ձեռք բերեն մասնագետների կողմից անցկացվող դատաբժշկական փորձաքննության վերաբերյալ: Խիստ կարևոր է նաև ապահովել, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք ժամանակին՝ հատկապես ծրագրի շրջանակները լքելուց առաջ, ստանան փորձաքննության հետ կապված բոլոր բժշկական տեղեկանքների պատճենները:

16. ՀԱՅՏՆԵՔ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ԲՈԼՈՐ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ և ԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Թրաֆիքինգի ենթարկված բոլոր անձանց հարկավոր է հայտնել իրենց բժշկական կամ առողջական վիճակին առնչվող բոլոր փաստաթղթերի (այդ թվում՝ ախտորոշիչ հետազոտությունների արդյունքներ, ռենտգենային և լաբորատոր հետազոտության արդյունքներ, բուժման նշանակում) պատճենները ստանալու իրավունքի մասին: Հնարավորության դեպքում թրաֆիքինգի ենթարկված անձին պետք է նաև տրամադրվի իր մայրենի լեզվով բուժող բժշկի կազմված բժշկական տեղեկանք: Բժշկական փաստաթղթերի հասանելիությունը այն հիմնական իրավունքն է, որի ապահովումը պետք է մշտապես խրախուսել, մասնավորապես հետևյալ դեպքերում՝ ա) եթե թրաֆիքինգի զոհն ուղղորդվում է մեկ այլ բուժհիմնարկ, այլ բուժաշխատողների կամ համակարգող ծառայությունների գործընկերների մոտ, բ) թրաֆիքինգի

[4] Նույն տեղում:

զոհի վերաինտեգրման փուլում, գ) բուժման որոշակի ուղենիշային փուլերի ավարտին՝ հիվանդների բուժումը հաստատելու շրջանակներում և դ) թրաֆիքինգի զոհի պահանջով:

17. ՀԻՇԵՑՐԵՔ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԻՆ ՆՐԱ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Խիստ կարևոր է գիտակցել, որ թրաֆիքինգի յուրաքանչյուր զոհ վերապրել է սարսափելի պահեր՝ ենթարկվելով մարդավաճառների և այլ անձանց դաժան և անարդար վերաբերմունքի: Ուստի և, հարկավոր է նրանց հիշեցնել, թե ինչ համարձակությամբ է նա հաղթահարել դժվարությունները: Թրաֆիքինգի զոհի ուժեղ կողմերը և հնարամտությունը մատնանշելու համար՝ աջակցություն մատուցող անձինք կարող են որոշակի օրինակներ քաղել իր իսկ պատմությունից:

18. ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Թարգմանիչը հիմնական կապող օղակի դեր է կատարում թրաֆիքինգի զոհերի և նրանց աջակցող աշխատակիցների միջև: Թարգմանիչները պարտավոր են ոչ միայն թարգմանել հաղորդակցվող անձանց ասելիքը, այլև փոխանցել այդ ասելիքի իմաստը և նշանակությունը: Տեղեկությունների փոխանցման եղանակը կենսական նշանակություն ունի թրաֆիքինգի զոհերի առողջության և բարեկեցության համար: Որակյալ թարգմանությունը կարող է մեծապես նպաստել աշխատանքային փոխհարաբերությունների բարելավմանը: Եվ հակառակը, վատ որակի թարգմանությունը կարող է կործանել (և հաճախ՝ անդառնալիորեն) նշված փոխհարաբերությունները: Հարկավոր է հաշվի առնել թարգմանիչների ընտրության և աշխատանքի ընդունելության հիմնական ուղեցույցները: Նման ուղեցույցների մեծ մասի առանցքը կազմում է այն գաղափարը, որ **թարգմանիչները մարդ էակներ են, և ոչ բոլորն են, որ չեզոք դիրքորոշում ունեն:** Նրանք սովորական մարդիկ են, ունեն սեփական կարծիքներ, տեսակետներ, նախապաշարմունքներ, ընկերներ, շրջապատ և մասնավոր կյանք՝ այլ անձանց մտքերն արտահայտող «խոսնակի» մասնագիտական կյանքից բացի: Ուստի և, աշխատանքի ընդունվելու համար թարգմանիչը պետք է անցնի պատշաճ նախնական ստուգում: Նման ստուգում չանցած վատ թարգմանիչը լավագույն դեպքում չի կարողանա ապահովել կարևոր տեղեկությունների ճիշտ փոխանակումը, իսկ վատագույն դեպքում՝

կարող է վտանգի ենթարկել թրաֆիքինգի զոհերին, աշխատակազմի անդամներին կամ կազմակերպության բոլոր ներկայացուցիչներին:

Անկախ այն բանից, թե արդյոք տվյալ թարգմանիչը կազմակերպության աշխատակազմի անդամ է, թե պայմանագրային աշխատող, հարկավոր է հաշվի առնել հետևյալ հարցերը:

Առաջին հարցը **անվտանգության** ապահովումն է: Հարկավոր է մանրազնին ստուգել թրաֆիքինգի զոհերի համար վարձվող թարգմանիչների բարեհուսությունն անվտանգության տեսակետից: Նույնիսկ այն դեպքերում, երբ կա թարգմանիչների խիստ հրատապ կարիք, չի կարելի աշխատանքի ընդունել «կամավոր» թարգմանիչների, ովքեր անծանոթ են կազմակերպության աշխատակիցներին և անվտանգության նախնական ստուգում չեն անցել:

Թարգմանչի արդյունավետ ընտրության հիմքում ընկած երկրորդ գործոնը ենթադրում է այն հարցի պարզում, թե արդյոք տվյալ անձը հոգու խորքում **խտրական վերաբերմունք** է դրսևորում աշխատանքի բերումով իր հետ առնչվող անձանց, այսինքն՝ թրաֆիքինգի զոհերի կամ բուժաշխատողների նկատմամբ, թե ոչ: Թարգմանիչների դիրքորոշումը կարող է այդպես էլ չբացահայտվել, եթե նրանք չանցնեն համապատասխան նախնական ստուգում: Մասնավորապես այն երկրներում, որտեղ վերջերս ծավալվել են կամ դեռևս շարունակում են ծավալվել էթնիկական կամ ազգային ընդհարումներ, մեծ ռիսկերից խուսափելու համար՝ հարկավոր է պարզել տվյալ թարգմանչի մոտ նման նախապաշարմունքների առկայությունը: Թարգմանչի կանխակալ դիրքորոշումը կարող է դրսևորվել անվնաս կանխակալ պատկերացումների կամ ծայրահեղ ատելության տեսքով: Շատ անգամ տեղեկատվության հաղորդման որակը պայմանավորված է հենց այդ դիրքորոշմամբ: Եթե նախնական զննման ընթացքում տվյալ թարգմանչին չտրվեն որոշակի հարցեր կամ չպարզվեն նրա տեսակետերը, ապա բուն թարգմանության ընթացքում շատ բարդ կլինի հայտնաբերել նման դիրքորոշումները:

Թարգմանչի ընտրության մյուս՝ երրորդ գործոնը պայմանավորված է **տվյալ անձի ծագման երկրով և շրջապատով**: Թարգմանիչները հաճախ ծագումով նույն տարածաշրջանից են, անգամ՝ նույն գյուղից, ինչ նրանց ծառայություններից օգտվող անձինք: Թեև թրաֆիքինգի զոհերից ոմանք կարող են դրական արձագանք տալ նման հանգամանքին, մյուսները կարող են թաքցնել անձնական բնույթի մանրամասները՝ վախենալով, որ դրանք կտարածվեն իրենց ընտանիքում և համայնքում:

Բացի այդ, այն դեպքերում, եթե թարգմանիչը և թրաֆիքինգի զոհը նույն երկրից են, որտեղ վերջերս տեղի է ունեցել ընդհարում, շատ հնարավոր է, որ նրանցից մեկը հիշի, որ դիմացինը ժամանակին վնաս է պատճառել իրեն կամ իր ընտանիքին, սակայն մի շարք պատճառներով ստիպված կլինի ոչինչ չասել այդ մասին: Նշված դեպքերում թրաֆիքինգի ենթարկված անձինք չեն ցանկանա բացահայտել իրենց կամ իրենց պատահած դեպքերին առնչվող տեղեկությունները և չեն կարողանա բացատրել դրա պատճառը:

Նախնական ստուգման պատշաճ ընթացակարգերով թարգմանիչներին ընտրելուց հետո խիստ կարևոր է նրանց համար անցկացնել համապատասխան իրազեկման դասընթաց նախքան թրաֆիքինգի զոհերի հետ աշխատանքների սկիզբը: Նման դասընթացի և ընդհանուր իրազեկման ընթացքում թարգմանիչներին տեղեկություններ են տրամադրվում հետևյալ հարցերի և եզրույթների մասին.

- Թրաֆիքինգ
- Կանանց դեմ ուղղված բռնություն (թրաֆիքինգի ենթարկված կանանց հետ աշխատող թարգմանիչների համար), երեխաների չարաշահումներ (թրաֆիքինգի ենթարկված երեխաների հետ աշխատող թարգմանիչների համար)
- Առողջապահության կամ բժշկության համապատասխան ոլորտ, օրինակ՝ ֆիզիկական առողջություն, վերարտադրողական առողջություն կամ հոգեբանություն

Նշված դասընթացների նպատակն է օգնել թարգմանիչներին որոշ եզրույթներ և հասկացություններ (մասնավորապես բժշկական եզրույթներ) թարգմանելու հարցում, որոնք կարող են անծանոթ լինել նրանց, և իրազեկել նրանց թարգմանվող նյութի նրբանկատ և մասնավոր բնույթի (այսինքն՝ շփոթմունք առաջացնող) հարցերի վերաբերյալ: Թարգմանչին ներկայացվող հիմնական պահանջներից է իր ծառայություններից օգտվող անձանց նկատմամբ կարեկից և համբերատար մոտեցման դրսևորումը:

.....

Ինչպե՞ս հասկանալ, որ թրաֆիքինգի զոհն իրեն անհարմար է զգում թարգմանչի ներկայությամբ, հակակրանք է զգում նրա նկատմամբ կամ չի վստահում նրան

Տվյալ թարգմանչի ներկայությամբ թրաֆիքինգի զոհի

ինքնազգացողությունը պարզելու խնդիրը շատ բարդ է և միաժամանակ խիստ կարևոր: Հարցազրույցի մեկնարկից հետո ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցը կարող է որոշակի դժվարությունների հանդիպել: Տվյալ թարգմանչի նկատմամբ թրաֆիքինգի զոհի վերաբերմունքը կարելի է ճշտել ստուգումների միջոցով, որոնք կարող են փոքր-ինչ ժամանակատար լինել կարճաժամկետ առումով, սակայն ժամանակ և ջանք խնայել (ինչպես նաև կանխել հնարավոր խնդիրները) երկարաժամկետ առումով: Եթե թրաֆիքինգի զոհը գրաճանաչ է, ապա կարելի է թղթի վրա նրա մայրենի լեզվով գրել «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալող հարցեր, որոնց նպատակն է պարզել՝ արդյոք թրաֆիքինգի զոհն իրեն հանգիստ է զգում և ցանկանում է խոսել տվյալ թարգմանչի ներկայությամբ կամ համակրում է նրան: Նախնական զրույցից հետո հարցազրույց անցկացնող անձը կարող է խնդրել թարգմանչին դուրս գալ սենյակից և թրաֆիքինգի զոհին փոխանցել նշված թուղթը: Թրաֆիքինգի զոհին նման թուղթ կարելի է տրամադրել հարցազրույցի սկզբում և ընթացքում՝ ըստ անհրաժեշտության:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հարցազրույցների անցկացման ստուգման ցանկ

Թրաֆիքինգի զոհի կարգավիճակում աջակցության դիմած անձանց, ինչպես նաև՝ որպես թրաֆիքինգի զոհ նույնականացված և աջակցություն ստացող անձանց հետ հարցազրույց անցկացնող մասնագետները պետք է անդրադառնան նաև I հավելվածին՝ «Թրաֆիքինգի զոհ դարձած անձանց խնամքի և նրանց հետ հարցազրույցների անցկացման էթիկայի սկզբունքներ»:

Ստորև բերված հիմնական ստուգման ցանկը ծառայություն մատուցող կազմակերպությունների աշխատակազմի անդամներին տրամադրում է հարցազրույցների անցկացման հնարքների ամփոփ ուղեցույցներ:

Պայմաններ

- Հնարավորության դեպքում՝ ապահովեք, որ հարցազրույցն անցկացվի առանձին փակ տարածքում, որտեղ կողմնակի անձինք չեն կարող պատահաբար լսել խոսակցությունը կամ ընդհատել այն:
- Թույլատրվում է միայն զոհի, հարցազրույց անցկացնող անձի (անձանց), ըստ հարկի՝ թարգմանչի և որակավորված աջակցող անձի (օրինակ՝ իրավախորհրդատուի կամ հոգեբանի) ներկայությունը՝ անհրաժեշտության դեպքում:
- Եթե կասկածներ կան, որ անհատը չի հասկանա հարցազրույցի անցկացման լեզուն, ապա հարկ է ամեն ջանք գործադրել թարգմանչի ծառայություններ ապահովելու համար:
- Հարկավոր է անջատած պահել բջջային հեռախոսները:
- Փակ տարածքի առկայության դեպքում դռան վրա հարկավոր է փակցնել «Չխանգարե՛լ» կամ նմանատիպ բովանդակությամբ մի ցուցանակ՝ հարցազրույցի ընդհատումներից խուսափելու համար:
- Եթե հնարավոր չէ առանձին փակ տարածք գտնել, ապա հարցազրույց անցկացնող անձը պետք է փորձի գտնել

հնարավորինս փակ տարածք, որտեղ կողմնակի անձինք չեն կարող պատահաբար լսել խոսակցությունը:

- Հարցազրույց անցկացնելիս զերծ մնացեք դատողություններից կամ հարցական ոճից:
- Փորձեք այնպիսի կապ հաստատել անհատի հետ, որ ինքն իրեն զգա հարգված, քանի որ իր ասածներն արժանահավատ են:

Ներածություն

- Հարցազրույց անցկացնող անձը պետք է ներկայանա թրաֆիքինգի զոհին և պատմի տվյալ կազմակերպությունում իր դերակատարման մասին:
- Համոզվեք, որ թրաֆիքինգի զոհն իրեն զգում է անվտանգ և հարմարավետ:
- Պարզեք՝ արդյոք նա քաղցած չէ կամ ծարավ կամ չի ցանկանում օգտվել զուգարանից:
- Համոզվեք, որ տվյալ անձը լավ է զգում իրեն, հանգիստ է և չունի շտապ բուժօգնության կարիք:
- Եթե անձը հայտնի, որ ինքն ունի անհետաձգելի բուժօգնություն պահանջող խնդիր, ապա հարցազրույցը պետք է ընդհատել և շարունակել միայն բուժաշխատողի այցից և անձի բուժզննումից հետո:
- Թեթև տկարության, օրինակ՝ գլխացավի դեպքում կարելի է առաջարկել առանց բժշկի դեղատոմսի տրամադրվող դեղորայք (օրինակ՝ պարացետոմոլ, ասպիրին և իբուպրոֆեն):

Բացատրություն

- Համառոտ ներկայացրեք հարցազրույցի նպատակը և տվյալ կազմակերպության դերը թրաֆիքինգի ենթարկած անձանց աջակցության կազմակերպման և տրամադրման գործում:
- Բացատրեք թրաֆիքինգի զոհին, որ զրույցի ընթացքում կարող են տրվել հարցեր իր հետ պատահածի վերաբերյալ, իսկ որոշ թեմաներ կարող են վիատություն և ցավ պատճառել կամ արթնացնել տհաճ հիշողություններ:
- Ասեք հարցազրույց անցնող անձին, որ նա կարող է որոշ

ժամանակ մտածել նախքան հարցերին պատասխանելը և անհրաժեշտության դեպքում ցանկացած պահի ընդմիջում խնդրել:

- Այդուհանդերձ, բացատրեք նրան, որ որքան շատ տեղեկություններ տրամադրվեն, այնքան ավելի մեծ օգնություն կկարողանա ցուցաբերել կազմակերպությունը:

  Հայտնեք ծառայություն մատուցող կազմակերպության հնարավոր աջակցության սահմանափակումների մասին (օրինակ՝ եթե աջակցությունը նախատեսված է միայն թրաֆիքինգից տուժած անձանց, ապօրինի միգրանտների, երեխաների համար և այլն):
- Բացատրեք այն իրողությունը, որ եթե կազմակերպությունն ի վիճակի չլինի տրամադրել ուղղակի աջակցություն, քանի որ տվյալ անձը չի բավարարում սահմանված պայմանները, ապա կազմակերպությունը կօգնի գտնել որակավորված անհատի կամ մի խումբ մարդկանց, ովքեր կկարողանան մատուցել անհրաժեշտ աջակցությունը:

Նախքան հարցազրույցի սկիզբը պարզաբանվող վերջնական հարցեր

- Տեղեկացրեք թրաֆիքինգի զոհին, որ բոլոր պատասխանները կպահվեն խիստ գաղտնի:
- Հասկացրեք նրան, որ ինքը կարող է ցանկացած պահի հարցեր տալ կամ խնդրել պարզաբանել կամ կրկնել ցանկացած պահի ներկայացված որևէ հարց:
- Համոզվեք, որ նա պարզ հասկացել է այն ամենը, ինչ բացատրվել է:
- Հարցրեք թրաֆիքինգի զոհին, թե արդյոք նա ունի հարցեր տվյալ փուլում:
- Հարցրեք թրաֆիքինգի զոհին, թե արդյոք նա համաձայն է մասնակցել հարցազրույցին:

ՀԱՎԵԼՎԱԾ 3

Բառացանկ[5]

Առևանգում

Որևէ մեկին ուժի գործադրմամբ կամ խաբեությամբ տանելու գործողություն.[62]

Տես նաև՝

Հափշտակում, Հավաքագրում, Բռնի:

Երեխա

18 տարին չլրացած անձ, եթե երեխայի նկատմամբ կիրառելի օրենքով, երեխան չափահաս չի համարվում ավելի վաղ տարիքում (Հոդված 1, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.): Երեխաները պաշտպանվում են թրաֆիքինգից մի քանի միջազգային փաստաթղթերով և համարվում են հատուկ դեպք. «Շահագործման նպատակով երեխա հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, պարտակելը կամ ստանալը «մարդկանց թրաֆիքինգ» է համարվում» («Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը:):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.hrw.org/children/childlegal.htm; http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html

Տես նաև

Մանկական աշխատանք, Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը

Մանկական աշխատանք

Ցանկացած աշխատանք, որը կատարվում է երեխայի կողմից և վնասում է նրա առողջությանը, կրթությանը, ինչպես նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական կամ սոցիալական զարգացմանը (Հոդված 32, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.):

---

[5] Սույն բառացանկը վերցված է ՄՄԿ-ի 2005թ. Թրաֆիքինգի հակազդման ուսուցողական մոդուլներից: Return and Reintegration. International Organization for Migration: Washington, DC and IOM (2004). *Glossary on Migration.* International Organization for Migration: Geneva.

[6] 2 Garner, B. (ed.), *Black's Law Dictionary* (7th Edition), West Group, St. Paul, 1999 (տե՛ս նաև՝ *Black's Law Dictionary.*)

Պետությունները պարտավոր են սահմանել զբաղվածության նվազագույն տարիքը և կարգավորել աշխատանքային ժամերը և պայմանները:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝http://www.hrw.org/children/childlegal.htm

Տե՛ս նաև՝

Մանկական աշխատանք, Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը

Մանկահասակ զինվոր

Մի քանի միջազգային փաստաթղթերով արգելվում է երեխաների օգտագործումը զինված հակամարտություններում: Ժնևի չորս կոնվենցիաների 1977 թվականի Լրացուցիչ արձանագրություններով զինված հակամարտություններում մասնակցության նպատակով հավաքագրման նվազագույն տարիք է սահմանված 15 տարին: Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացմանն ուղղված անմիջական գործողությունների մասին 1989 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածով երեխաները պաշտպանվում են բռնի կամ հարկադիր զորակոչումից զինված հակամարտություններում օգտագործվելու նպատակով:

2000 թվականի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտրական արձանագրությունով արգելվել է երեխաների ներգրավումը զինված հակամարտություններում (Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտրական արձանագրություն զինված հակամարտություններում երեխաների ներգրավման վերաբերյալ):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.hrw.org/children/childlegal.htm; http://www.unhchr.ch/html/menu2/6/protocolchild.htm

Տե՛ս նաև

Մանկական աշխատանք, Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը

Հարկադրում

Ֆիզիկական ուժի գործադրմամբ կամ ֆիզիկական ուժի գործադրման սպառնալիքով ստիպելը:[73]

Տես նաև

Հսկողություն, Պարտապանի ստրկացում, Մեկուսացում

Հսկողություն

Սահմանափակող կամ ղեկավարող ազդեցություն ունենալ:[84] Մարդկանց թրաֆիքինգի հիմնական բաղադրիչ. Մարդավաճառներն օգտագործում են իրենց զոհերին վերահսկելու և հարկադրելու բազում մեթոդներ, այդ թվում՝ պարտքային ճորտություն, մեկուսացում (օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթերի կամ ճամփորդական փաստաթղթերի խլում), ահաբեկում և բռնություն (հոգեբանական և ֆիզիկական):

Տես նաև

Հարկադրում, Պարտապանի ստրկացում, Մեկուսացում

Նպատակակետ երկիր

Երկիր, որտեղ ուղևորվում է միգրանտը, երկիր, որը հանդիսանում է (օրինական և ապօրինի) միգրացիոն հոսքերի նպատակակետ:

Հոմանիշ՝

Ընդունող երկիր

Տես նաև՝

Ծագման երկիր, տարանցիկ երկիր

Ծագման երկիր

Երկիր, որտեղից ժամանում է միգրանտը, երկիր, որը հանդիսանում է միգրացիոն հոսքերի (օրինական և ապօրինի) աղբյուր:

Հոմանիշ՝

Աղբյուր երկիր

Տես նաև

Նպատակակետ երկիր, տարանցիկ երկիր

---

7 3 *Black's Law Dictionary*.

8 4 Merriam-Webster Online Dictionary, www.m-w.com, 2004 թվականի հոկտեմբերի դրությամբ (տե՛ս լրացուցիչ՝ Merriam-Webster Online):

Տարանցիկ երկիր

Երկիր, որի տարածքով ուղևորվում է միգրանտը, երկիր, որի տարածքով տեղաշարժվում են միգրացիոն հոսքերը (օրինական և ապօրինի):

Տե՛ս նաև

Ծագման երկիր, Նպատակակետ երկիր

Պարտապանի ստրկացում

Պարտատուի կողմից ի ապահովություն պարտքի իր կամ իր հսկողության տակ գտնվող անձի ծառայությունների գրավադրումից առաջացած կարգավիճակ կամ դրություն, եթե այդ ծառայությունների արժեքը ողջամիտ գնահատականով չի կիրառվում պարտքի մարման համար, կամ էլ նշված ծառայությունների տևողությունը և բնույթը համապատասխանաբար չեն սահմանափակվում և ամրագրվում (Ստրկության, ստրկավաճառության, ինչպես նաև ստրկությանը նմանվող հաստատությունների և սովորույթների վերացման մասին 1956 թվականի լրացուցիչ կոնվենցիայի 1-ին հոդված): Երբեմն օգտագործվում է որպես մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց վերահսկելու և հարկադրելու մեխանիզմ:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/intlinst.htm

Տե՛ս նաև

Հսկողություն, Հարկադրում

Տնային ծառայություն

Ծառայությունը կարելի ընկալել որպես «կախյալ, տնտեսապես չարաշահական աշխատանքային հարաբերություն», որտեղ «չկա փախուստի դիմելու որևէ ողջամիտ հնարավորություն»: Որոշ դեպքերում «միգրանտ տնային աշխատողների չարաշահական աշխատանքային պայմանները կարելի է ճշգրտորեն բնութագրել որպես ճորտություն»:[9]

Տե՛ս նաև

Շահագործում, Պարտապանի ստրկացում

---

[9] Human Rights Watch, *Hidden in the Home: Abuse of Domestic Workers with Special Visas in the United States առցանց այստեղ՝* http://www.hrw.org/reports/2001/usadom/index.htm#TopOfPage, 2004 թ. հոկտեմբերի դրությամբ:

Շահագործում

Որևէ բանից կամ որևէ մեկից օգտվելու գործողություն, մասնավորապես մեկ ուրիշից անարդարացիորեն օգտվելը սեփական շահի համար:[10] Մարդկանց թրաֆիքինգի հիմնական բաղադրիչ. «Շահագործումը նվազագույնը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ստրկության և համանման սովորույթները, անազատ վիճակը կամ մարմնի մասերի կորզելը» («Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 200 թ. արձանագրությունը): Մարդավաճառները փոխադրում են իրենց զոհերին անձնական շահի միակ նպատակով՝ շահագործումից մեծ գումար վաստակելու կամ անվճար ծառայություններից կամ աշխատուժից օգտվելու համար:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html

Տե՛ս նաև

Հարկադիր աշխատուժ, Տնային ծառայություն, Սեռական շահագործում, Հավաքագրում, Փոխադրում

Հարկադիր աշխատանք

Բոլոր աշխատանքներն ու ծառայությունները, որոնք կորզվում են որևէ անձից պատժի սպառնալիքով, կամ էլ որոնք կատարելու համար տվյալ անձը սեփական կամքով ցանկություն չի հայտնել (Հարկադիր աշխատանքի մասին 1930 թվականի կոնվենցիա, հոդված 2): Պետության այլ պարտականությունները ներառված են 1957 թվականի Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիայում:

Հումանիշ՝

Բռնի աշխատանք

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/intlinst.htm

Տե՛ս նաև

Շահագործում

---

10 *Black's Law Dictionary*:

Բռնի ամուսնություն

Ամուսնություն, որը չի կնքվում սեփական կամքով: Ամուսնության համաձայնության, ամուսնության և ամուսնության գրանցման համար նվազագույն տարիքի վերաբերյալ 1962 թվականի կոնվենցիայի համաձայն. «Ամուսնությունը կնքվում է միայն համապատասխան մտադրություն հայտնած ամուսինների ազատ և լիարժեք համաձայնությամբ»: Բռնի ամուսնությունը ճանաչվում է որպես ստրկությանը նմանվող գործողություն, երբ. «Կնոջն առանց հրաժարվելու իրավունքի խոստանում են կամ տալիս ամուսնության նրա ծնողներին, խնամակալին կամ որևէ այլ անձին կամ խմբին վճարվող գումարի կամ բնամթերքի դիմաց»,

«Կնոջ ամուսինը, նրա ընտանիքը կամ տոհմն իրավունք ունեն փոխանցել նրան մեկ այլ անձին ստացված գումարի դիմաց կամ այլ կերպ», կամ կինը ամուսնու մահվանից հետո պարտավոր է դառնալ մեկ այլ անձի ժառանգություն» (Հոդված 1 (c) Ստրկության, ստրկավաճառության, ինչպես նաև ստրկությանը նմանվող հաստատությունների և սովորույթների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա): Բռնի ամուսնությունը նույնպես արգելվում է 1979 թվականի Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին 1979 թվականի կոնվենցիայում:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/menu3/b/63.htm; http://www.unhchr.ch/html/menu3/b/e1cedaw.htm; http://www.unhchr.ch/html/menu3/b/30.htm

Տե՛ս նաև՝ Շահագործում, Սեռական շահագործում

Հարկադիր զինվորական զորակոչ

Զինված հակամարտությունների իրավիճակներում քաղաքացիականներին պաշտպանող Ժնևի չորրորդ կոնվենցիայի համաձայն՝ «Օկուպացիոն ուժերն իրավասու չեն հարկադրել պաշտպանված անձանց ծառայել զինված կամ օժանդակ ուժերում» (Պատերազմի ժամանակ քաղաքացիական անձանց պաշտպանության մասին կոնվենցիա):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/menu3/b/92.htm

Տե՛ս նաև

Մանկահասակ զինվոր, Շահագործում

Մարդու իրավունքներ

Այն ազատությունները և արտոնությունները, որոնց ընդունված ժամանակակից արժեքներով պետք է կարողանան հավակնել բոլոր մարդ արարածները այն հասարակությունում, որտեղ ապրում են: Այս իրավունքներն ամրագրվել են Իրավունքների մասին միջազգային փաստաթղթում, որն ընդգրկում է 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրերը, ինչպես նաև դրանց հիման վրա մշակված այլ համաձայնագրերը (օրինակ՝ Կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, Ռասայական խտրականության դեմ ուղղված կոնվենցիան):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝ /www.unhchr.ch/udhr/index.htm

Անձը հաստատող փաստաթուղթ

Փաստաթուղթ, որը կոչված է ապացուցել այն կրող անձի ինքնությունը:

Տե՛ս նաև՝

Անձնագիր, Ճամփորդական փաստաթղթեր

Ծառայություն պարտքի դիմաց

Ծառայություն, որը կարող է ընկալվել որպես «կախյալ, տնտեսապես չարաշահական աշխատանքային փոխհարաբերություններ, որոնք «չեն ենթադրում փախուստի որևէ ողջամիտ հնարավորություն»:[11] Ծառայությունը երբեմն ի հայտ է գալիս պարտքային ճորտություն դեպքերում, երբ պարտքերն օգտագործվում են թրաֆիքինգի զոհերին վերահսկելու համար:

Տե՛ս նաև՝

Շահագործում, Պարտապանի ստրկացում, Տնային ծառայություն

Իրազեկված համաձայնություն

Որևէ բան անելու կամ թույլատրելու համաձայնություն, որը

[11] Human Rights Watch, *Hidden in the Home: Abuse of Domestic Workers with Special Visas in the United States,* առցանց այստեղ՝ http://www.hrw.org/reports/2001/usadom/index.htm#TopOfPage

տրվում է համապատասխան փաստերի, օրինակ՝ դրա հետ կապված համապատասխան ռիսկերի կամ որևէ առկա այլընտրանքային տարբերակների լիարժեք իմացությամբ: Օրինակ, հիվանդը կարող է իրազեկված համաձայնություն տալ բժշկական միջամտությանը միայն այն բանից հետո, երբ համապատասխան բուժաշխատողը ներկայացրել է նրան բուժումն ընդունելու կամ մերժելու հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը:[12]

Ներքին թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգ, որը տեղի է ունենում երկրի ներսում:

Ապօրինի միգրացիա

Մարդկանց տեղաշարժում, որը տեղի է ունենում աղբյուր, տարանցիկ և ընդունող երկրների կարգավորիչ դաշտից դուրս: Գոյություն չունի որևէ պարզ և բոլորի կողմից ընդունված ապօրինի միգրացիայի սահմանում: Նպատակակետ երկրների տեսակետից՝ խոսքը գնում է որևէ երկիր ապօրինի մուտքի, կացության կամ աշխատանքի մասին, ինչը նշանակում է, որ միգրանտը չունի անհրաժեշտ թույլտվություն կամ փաստաթղթեր, որոնք պահանջվում են ներգաղթային օրենսդրությամբ որևէ երկիր մուտք գործելու, այնտեղ բնակվելու կամ աշխատելու համար: Աղբյուր երկրի տեսակետից՝ ապօրինության փաստը, օրինակ, դրսևորվում է այն դեպքերում, երբ որևէ անձ հատում է միջազգային սահմանն առանց վավերական անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի կամ չի կատարում երկիրը լքելու վարչական պահանջները:

Հոմանիշներ՝

Ընդհատակյա միգրացիա

Հականիշներ՝

Կանոնավոր միգրացիա, Օրինական միգրացիա

Տե՛ս նաև

Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով

Մեկուսացում

Մարդավաճառները հաճախ օգտագործում են մեկուսացումը որպես հսկողության և հարկադրման միջոց: Մեկուսացումը կարող է ընդգրկել (առանց սահմանափակման) անձը հաստատող կամ

[12] www.nolo.com, 2006 թվականի հունվարի դրությամբ:

ճամփորդական փաստաթղթերի խլում, ինչպես նաև զոհերի լեզվական կամ սոցիալական մեկուսացում:

Տե՛ս նաև՝

Հսկողություն, Հարկադրում, Անձը հաստատող փաստաթղթեր, Ճամփորդական փաստաթղթեր

Հափշտակում

Բռնի ուժի գործադրմամբ անհատի կամ խմբի ապօրինի առևանգում կամ կալանք, որին սովորաբար ուղեկցում են տնտեսական կամ քաղաքական օգուտներ, որոնք կարելի է ստանալ հափշտակման զոհից կամ որևէ երրորդ կողմից: Հափշտակումը սովորաբար պատժվում է առանձին պետությունների ազգային քրեական օրենսդրությամբ, այդուհանդերձ կան հափշտակման որոշակի տեսակներ, որոնք դասվում են միջազգային իրավունքի ոլորտին (օրինակ՝ ծովահենություն):[13]

Տե՛ս նաև

Առևանգում, Հավաքագրում, Բռնի ուժի գործադրմամբ

Միգրանտ աշխատող

Այն անձը, ով զբաղված է, պետք է զբաղված լինի կամ զբաղված է եղել վարձատրվող աշխատանքով այն պետությունում, որի քաղաքացի նա չի հանդիսանում (Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին 1990 թվականի կոնվենցիա, հոդված 2):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/menu3/b/m_mwctoc.htm

Տե՛ս նաև

Միգրացիա

Միգրացիա՝ մարդկանց տեղաշարժի գործընթաց՝ հատելով միջազգային սահմանը կամ նույն պետության ներսում: Միգրացիան ազգաբնակչության տեղաշարժումն է, որն ընդգրկում է մարդկանց որևէ տեղաշարժում՝ անկախ դրա տևողությունից, բաղադրությունից և պատճառներից: Այն ներառում է փախստականների միգրացիա, տեղահանված անձանց և տնտեսական միգրանտների շարժեր:

[13] Feinrider, M., Kidnapping, in *Encyclopedia of Public International Law*, No. 8, *Human Rights and The Individual In International Law*, International Economic Relations, North-Holland, Elsevier Science Publishers B.V., 1985, p. 355.

Տե՛ս նաև՝
Ապօրինի միգրացիա, Կանոնավոր միգրացիա

Կազմակերպված հանցավորություն

Տարածված քրեական գործողություններ, որոնք համակարգվում և վերահսկվում են կենտրոնական որևէ հանցավոր կազմակերպության կողմից:[14]

Տե՛ս նաև՝
Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով, Մարդկանց թրաֆիքինգ

Կանխարգելում

Կանխարգելիչ գործողություններ (կանխել կամ կասեցնել):[15]

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համալիր ռազմավարության մաս: Կանխարգելումը կարող է ընդգրկել (առանց սահմանափակման) տեղեկատվական և իրազեկման բարձրացման գործողություններ, հետազոտություններ, սեմինարներ և դասընթացներ, ինչպես նաև համագործակցություն և ցանցերի ձևավորում (տեղական, ազգային, տարածաշրջանային և միջազգային մակարդակով):

Տե՛ս նաև՝
Հետապնդում դատական կարգով, Պաշտպանություն

Քրեական հետապնդում

Քրեական ընթացակարգ, որի շրջանակներում մեղադրյալի գործը քննվում է դատական կարգով: Որպես մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համալիր ռազմավարության մաս դատական կարգով հետապնդումը կարող է ընդգրկել (սակայն առանց սահմանափակման) օրենսդրության և քաղաքականության ամրապնդում, քրեական պատիժների խստացում, կարողությունների ձևավորում, ինչպես նաև ազգային և անդրազգային համագործակցություն (օրինակ՝ հասարակական կազմակերպությունների և իրավապահ մարմինների միջև):

Տե՛ս նաև՝
Կանխարգելում, պաշտպանություն

[14] *Black's Law Dictionary.*
[15] Merriam-Webster Online.

Մարմնավաճառություն

Սեռական հարաբերություններ ունենալը, սովորաբար ոչ ամուսնու (կնոջ) կամ զուգընկերոջ հետ, գումարի կամ այլ արժեքների անմիջական վճարի դիմաց:[16]

Պաշտպանություն

Պաշտպանության գաղափարն արտացոլում է բոլոր այն կոնկրետ միջոցառումները, որոնք վտանգի ենթարկվող անհատներին հնարավորություն են տալիս օգտվել այն իրավունքներից և աջակցությունից, որոնք վերապահված են իրենց համար միջազգային կոնվենցիաներով: Պաշտպանել նշանակում է ճանաչել, որ բոլոր անհատներն ունեն իրավունքներ, և նրանց նկատմամբ լիազորություններ ունեցող իշխանություններն ունեն պարտավորություններ: Դա նշանակում է պաշտպանել անհատների ոչ միայն իրավական, այլև ֆիզիկական գոյությունը:[17]

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համալիր ռազմավարության մաս: Զոհերի պաշտպանությունը կարող է ներառել (առանց սահմանափակման), ապաստարան, բժշկական և հոգեբանական աջակցություն, մուտքի արտոնագրերի տրամադրման տարբերակներ, կամավոր վերադարձ և վերաինտեգրում, անվտանգություն և ազգային և անդրազգային համագործակցություն:

Տե՛ս նաև

Կանխարգելում, Քրեական հետապնդում

Հավաքագրում

Մարդկանց թրաֆիքինգի հիմնական բաղադրիչ: Հավաքագրումը կարող է բաժանվել ամբողջությամբ խաբեության վրա հիմնված, մասամբ խաբեության վրա հիմնված և բռնի ուժի գործադրմամբ (առևանգում) տեսակների:

Տե՛ս նաև՝

Մարդկանց թրաֆիքինգ, Փոխադրում, Շահագործում

---

[16] Encyclopedia Britannica Online, http://www.britannica.com 2006 թվականի հունիսի դրությամբ:

[17] *The Practical Guide to Humanitarian Law* Francoise Bouchet-Saulnier, Rowman & Littlefi eld Publishers, Inc. 2002.

Հավաքագրում բռնի ուժի գործադրմամբ

Թրաֆիքինգի զոհերին ներգրավում են բռնի ուժի գործադրմամբ:
Հոմանիշ՝
Առևանգում
Տե՛ս նաև՝
Առևանգում, Հափշտակում

Հավաքագրում՝ լիովին հիմնված խաբեության վրա

Թրաֆիքինգի զոհերը հրապուրվում են աշխատանքի և ֆինանսական շահի խոստումներով, և լիովին խաբված են լինում մարդավաճառների իրական մտադրությունների վերաբերյալ:

Հավաքագրում՝ մասամբ հիմնված խաբեության վրա

Թրաֆիքինգի զոհերը կարող են տեղյակ լինել, որ իրենք զբաղվելու է տվյալ գործունեությամբ, սակայն չիմանան, թե ինչ պայմաններում:

Կանոնավոր միգրացիա

Միգրացիա, որը տեղի է ունենում ճանաչված, իրավական ուղիներով:
Հոմանիշ՝
Օրինական միգրացիա, Կանոնակարգված միգրացիա
Հականիշ՝
Ապօրինի միգրացիա
Տե՛ս նաև
Միգրացիա

Ռիսկերի գնահատում

Տվյալ իրավիճակի կամ իրադարձության հետ կապված ռիսկերի որոշման և գնահատման գործընթաց:

Ռիսկերի կառավարման ծրագիր

Ծրագիր, որով իրականացվում են միջոցառումներ՝ որևէ իրավիճակի կամ իրադարձության հետ կապված ռիսկերը մինչև ընդունելի մակարդակ նվազեցնելու համար:

Սեռական շահագործում

Թրաֆիքինգի համատեքստում սեռական շահագործումն ստանում է բազում ձևեր, այդ թվում՝ մարմնավաճառություն, պոռնկագրություն, մերկապար, սեռական զբոսաշրջություն կամ հարկադրված ամուսնություն: Զոհ կարող են դառնալ տղամարդիկ, կանայք կամ երեխաները: Սեռական շահագործումն արգելվում է մի շարք տարբեր միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ Ժնևի կոնվենցիաներով և Կանանց դեմ բռնության բոլոր ձևերի վերացման մասին 1993 թվականի հռչակագրով:

Տե՛ս նաև՝

Շահագործում

Ստրկություն

Անձի այնպիսի կարգավիճակ կամ դիրք, որով նրա նկատմամբ իրացվում են սեփականության իրավունքին բնորոշ բոլոր լիազորությունները (1926 թվականի Ստրկության մասին կոնվենցիա՝ 1953 թվականի Արձանագրության լրամշակմամբ): Ստրկությունը բնորոշվում է որպես մեկ ուրիշի կյանքի նկատմամբ սեփականության կամ հսկողության, հարկադրման և տեղաշարժման սահմանափակման տարրերի առկայությամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ որևէ մեկը չի կարող թողնել կամ փոխել իր գործատուին (օրինակ՝ ավանդական ստրկություն որպես շարժական գույք, պարտադիր աշխատանքային պարտավորություն, ճորտություն, բռնի աշխատանք և ստրկություն ծիսակատարական կամ կրոնական նպատակներով):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unhchr.ch/html/menu3/b/f2sc.htm

Տե՛ս նաև

Պարտապանի ստրկացում

Մարդկանց մաքսանենգությամբ զբաղվող անձ

Միջնորդ, ով նախնական պայմանավորվածությամբ մարդկանց տեղափոխում է միջազգայնորեն ճանաչված պետական սահմանով:

Տե՛ս նաև

Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով

Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով

Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով՝ «ուղղակի կամ անուղղակի ֆինանսական շահի ստացում որևէ անձի ներթափանցումից Մասնակից պետության տարածք, որի քաղաքացի կամ մշտական բնակիչ նա չի հանդիսանում («Ցամաքով, օդով և ծովով միգրանտների անօրինական ներմուծման դեմ» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html

Տե՛ս նաև

Ապօրինի միգրացիա, («Ցամաքով, օդով և ծովով միգրանտների անօրինական ներմուծման դեմ» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը):

Մարդավաճառ

Անձ, ով խաբեության, հարկադրման և (կամ) շահագործման այլ միջոցներով տեղաշարժում է մարդկանց տնտեսական կամ այլ տեսակի շահույթ ստանալու համար: Մարդավաճառն ունի որևէ անձին շահագործելու և դրանից օգուտ կամ առավելություն ստանալու մտադրություն:

Տե՛ս նաև

Մարդկանց թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգ

«Մարդկանց թրաֆիքինգ՝ շահագործման նպատակով իրականացվող մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, պարտակելը կամ ստանալը ուժի սպառնալիքով կամ դրա կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու, կամ ուրիշ անձին վերահսկող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով» («Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը:):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html

Տես նաև՝

(«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը:):

Փոխադրում

Ապրանքների կամ անձանց փոխադրում մի վայրից մյուսը որևէ փոխադրամիջոցով: Մարդկանց թրաֆիքինգի հիմնական բաղադրիչը՝ տեղաշարժումը, կարող է կրել միջազգային բնույթ (ընդգրկելով երկու կամ ավելի երկիր) կամ էլ կարող է իրականացվել երկրի մի մասից մյուսը (այն է՝ ներքին թրաֆիքինգ): Փոխադրումը կարող է տեղի ունենալ օրինական կամ ապօրինի ուղիներով՝ օդով, ցամաքով կամ ծովով:

Տես նաև՝

Հավաքագրում, Շահագործում, Մարդկանց թրաֆիքինգ

Ճամփորդական փաստաթղթեր

Ընդհանրական եզրույթ, որն ընդգրկում է բոլոր այն փաստաթղթերը, որոնք հանդիսանում են անձը հաստատող ընդունելի փաստաթղթեր մեկ այլ երկիր մուտք գործելու համար: Անձնագրերը և մուտքի արտոնագրերն առավել տարածված ճամփորդական փաստաթղթերի ձևերն են: Որոշ պետություններ կարող են նաև ընդունել անձը հաստատող որոշակի քարտեր կամ այլ փաստաթղթեր:

Տես նաև՝ Անձը հաստատող փաստաթղթեր

Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա

Անդրադառնում է առհասարակ կազմակերպված հանցավորության դեմ ուղղված պայքարին, ինչպես նաև որոշ հիմնական գործողություններին, որոնցում սովորաբար ներգրավված է անդրազգային կազմակերպված հանցավորությունը, ինչպիսիք են՝ փողերի լվացումը, կոռուպցիան, հետաքննության կամ դատական կարգով հետապնդման ընթացքի խոչընդոտումը: Լրացնելով կոնվենցիան՝ երկու արձանագրություններ ևս անդրադառնում են անդրազգային կազմակերպված հանցավորության հատուկ ոլորտներին, որոնք առանձնապես մտահոգիչ են (մարդկանց թրաֆիքինգ և միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝
http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html
Տես նաև
(«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը:):

(«Ցամաքով, օդով և ծովով միգրանտների անօրինական ներմուծման դեմ» Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը):

Անդրադառնում է մաքսանենգ ճանապարհով միգրանտների երկիր ներմուծմամբ զբաղվող կազմակերպված հանցավոր խմբերի աճող խնդրին, որը հաճախ վտանգ է ներկայացնում է միգրանտների համար և մեծ շահ է բերում հանցագործներին:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝
http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html
Տես նաև
Միգրանտների ներմուծում երկիր մաքսանենգ ճանապարհով, Միավորված ազգերի կազմակերպության Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա:

Կազմակերպված անդրազգային հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող մարդկանց թրաֆիքինգը կանխելու, կասեցնելու և պատժելու մասին 2000 թվականի արձանագրություն

Անդրադառնում է ժամանակակից ստրկության խնդրին, երբ ավելի լավ կյանք փնտրելու մարդկանց ցանկությունը շահագործվում է կազմակերպված հանցավոր խմբերի կողմից: Միգրանտները հաճախ հարկադրվում են զբաղվել շահագործական կամ ծանր աշխատանքի ձևերով, հաճախ սեռական ծառայությունների ոլորտում կամ վտանգավոր մասնագիտություններում, ընդ որում՝ այս գործունեությունից գոյացած ապօրինի եկամուտը գնում է կազմակերպված հանցավորությանը:

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝ http://www.unodc.org/unodc/en/crime_cicp_convention.html

Հոմանիշ՝

Պալերմոյի արձանագրություն

Տես նաև՝

Մարդկանց թրաֆիքինգ, Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիա:

Զոհ

Անձ, ով ենթարկվում է տարբեր գործողությունների և սովորաբար տուժում է որևէ ուժից կամ այն գործադրող անձից, անձ, ով ստանում է վնասվածքներ, ոչնչացվում է կամ զոհաբերվում տարբեր պայմաններում (դժբախտ պատահարներ, հանցագործություններ և այլն), անձ, ով ենթարկվում է ճնշումների, զրկանքների կամ վատ վերաբերմունքի, անձ, ով դառնում է ստի և խաբեության առարկա:[18]

Մարդկանց թրաֆիքինգի զոհեր

Տղամարդիկ, կանայք և երեխաներ, ովքեր հանդիսանում են մարդկանց թրաֆիքինգի հանցատեսակի զոհեր

Հոմանիշ՝

Թրաֆիքինգի ենթարկված անձինք

Տե՛ս նաև

Երեխա, Մարդկանց թրաֆիքինգ

Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևեր

Ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են՝ երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար, երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար, երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակաիրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում, աշխատանք, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը: (Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և վերացմանն ուղղված անմիջական գործողությունների մասին կոնվենցիա, հոդված 3):

Ամբողջ փաստաթուղթը կարելի է գտնել այստեղ՝

http://www.hrw.org/children/childlegal.htm Տե՛ս նաև

---

[18] Merriam-Webster Online.

Երեխա, Երեխայի աշխատանք, Մանկահասակ զինվոր, Շահագործում

Միգրացիայի միջազգային կազմակերպության թրաֆիքինգի հակազդման աշխատակազմի տեսլական

Մենք պայքարում ենք միգրանտների շահագործման բոլոր ձևերի, հատկապես թրաֆիքինգի ենթարկված անձանց մարդու իրավունքների կոպիտ խախտումների դեմ: Հիմք ընդունելով մեր անհատական նվիրվածությունը և ներկայությունն ամբողջ աշխարհում՝ մենք ամրապնդում ենք մեր գործընկեր պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կարողությունները՝ սահմանելով կայուն արդյունքների համար անհրաժեշտ աշխատանքային չափանիշներ, որոնք

- կապահովեն թրաֆիքինգից տուժած կանանց, տղամարդկանց, աղջիկների և տղաների պաշտպանությունը և նրանց մոտ կձևավորեն անհրաժեշտ կարողություններ,
- կբարձրացնեն այս հարցի շուրջ իրազեկվածությունն ու ըմբռնումը,
- կապահովեն արդարադատություն թրաֆիքինգի զոհ դարձած անձանց համար:

Միգրացիայի միջազգային կազմակերպություն

ՄՄԿ ՁԵՌՆԱՐԿ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԶՈՀԵՐԻՆ ՈՒՂՂԱԿԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրատարակության պատրաստեց՝ ՄՄԿ Հայաստանի առաքելության ծրագրերի մշակման և իրականացման բաժինը

Թարգմանիչ՝ Արմեն Այվազյան

International Organization for Migration (IOM)
Organisation Internationale pour les Migrations (OIM)
Organización Internacional para las Migraciones (OIM)

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

Ձեռնարկի հայերեն տարբերակը հրատարակվել է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ ՄՄԿ-ի կողմից իրականացվող «Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում կրթության միջոցով թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ամրապնդում» ծրագրի շրջանակներում:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում